Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ

Ա.Վ. Ֆելցերաերեն

ԵՐԵՎԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ս. Վ. ԳՅՈՒԼԲՈՒԴԱՂՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

(պարզ նախադասություն)

Ձեռնարկ բանասիրական ֆակուլտետների կրեկոյան և հեռակա բաժինների համար

Թույլատրված է ՀՍՍՀ բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրության կողմից որպես ուսումնական ձեռնարկ բուհերի բանասիրական ֆակուլտետների հեռակա և երեկոյան բաժինների ուսանողների համար

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ — 1988

ԳՄԴ 81.22.2
Գ 674

Գրախոս՝ բանաս. գիտ. դոկ., պրոֆ. Վ. Ա. ՔՈՍՅԱՆ

29075

БИБЛИОТЕКА
Степанакертского
педагогического
института

Գյուլբուդաղյան Ս. Վ.

Գ674 Ժամանակակից հայերենի շարահյուսություն (պարզ նախադասություն)/Երևանի պետ. համալս. Եր.։ Երևանի համալս. հրատ., 1987.—292 էջ.

Ձեռնարկն ընդգրկում է շարահյուսության ներածություն, բառակապակցության և պարզ նախադասության շարահյուսություն։ Գրված է ժամանակակից հայոց լեզվի բուհական ծրագրի համաձայն։ Հեղինակն աշխատել է շարահյուսության հարցերը շարադրել ժամանակակից շարահյուսության նվաճումները նկատի ունենալով, շատ հարցեր նորովի են մեկնաբանված։

Գ $\frac{4602010000-41}{704\ (02)-1988}$ 7—88 ԳՄԴ 81.22-2

ГЮЛБУДАГЯН СИРАК ВАГАРШАКОВИЧ

СИНТАКСИС СОВРЕМЕННОГО
АРМЯНСКОГО ЯЗЫКА (простое предложение)
(учебное пособие)

(На армянском языке)
Издательство Ереванского университета
Ереван—1988

© Երևանի համալսարանի հրատարակչություն, 1988

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Քերականությունն իբրև գիտություն բաղկացած է երկու բաժնից՝ ձևաբանությունից և շարահյուսությունից։ Այս երկուսը կազմում են լեզվի քերականական կառույցի տարբեր, բայց միմյանց հետ փոխադարձաբար կապված կողմերը։ Ձևաբանությունն ուսումնասիրում է բառաձևերն ու նրանց քերականական իմաստները, կարգերը, իսկ շարահյուսությունը՝ շարահյուսական կառույցում բառերի ունեցած հարաբերությունները, շարահյուսական կարգերը, շարակարգերը։

Քերականական կարգ։ Բառը շարահյուսական կառույցում ունի բառային իմաստ և քերականական իմաստ։ Լեզվի համար դրանք հավասարապես կարևոր են։ Բառային իմաստը տվյալ բառի մասնավոր իմաստն է, բառարանային իմաստը։ Օրինակ՝ աթոռ բառի բառային իմաստն այն է, որ նա մի մարդու նստարան է՝ թիկնակով կամ առանց թիկնակի, սղոց բառի բառային իմաստն այն է, որ պողպատյա ատամնավոր գործիք է փայտ կամ այլ բան սղոցելու համար և այլն։ Քերականական իմաստն այն ընդհանուր, վերացարկված իմաստն է, որ ունեն բառախմբերը։ Օրինակ՝ աթոռ, մարդ, բանվոր, սեղան, գրիչ, գիրք, մեքենա, ատաղձ, նայր բառերի ընդհանուր իմաստն այն է, որ բոլորն էլ առարկա են ցույց տալիս՝ անկախ նրանից, թե նրանցից որը ինչ առարկայի անուն է, ունեն հոլովի, թվի, առկայության կարգեր։ Այս ընդհանուր նշանակությամբ էլ դրանք միավորվում են մի բառախմբի մեջ, որ կոչվում է գոյական անուն։ Կամ՝ վազել, գրել, խոսել, գնալ, սեանալ, խաղալ, կարմրել բառերի ընդհանուր իմաստն այն է, որ բոլորն էլ գործողություն են ցույց տալիս՝ անկախ նրանից, թե դրանցից յուրաքանչյուրն ինչ գործողություն է արտահայտում, ունեն եղանակի, ժամանակի, թվի, դեմքի, սեռի կարգեր։ Այս ընդհանուր նշանակությամբ, իմաստով էլ սրանք միավորվում են մի խմբի մեջ և կոչվում են բայ։

Քերականական կարգը բառի քերականական ընդհանրացված իմաստի և ձևի միասնությունն է։ Արտահայտելով ընդհանուր իմաստ՝ քերականական կարգը տարածվում է բառերի որոշակի խմբերի վրա։

Օրինակ՝ ժամանակի կարգը ընդհանուր է բոլոր բայերի համար, հոլովի կարգը՝ գոյականների։ Քերականական կարգերը որոշվում են ձևերի հակադրությամբ։ Օրինակ՝ ժամանակակից հայերենի հոլովի կարգը ներկայացնում է հինգ ձևի հակադրություն։ Եթե ժամանակակից հայերենում գոյականը միայն մի ձևով հանդես գար, հոլովի կարգ չէր ունենա։

Քերականական կարգերը, իմաստները (առարկայի, գործողության, հոլովի, թվի, դեմքի, եղանակի, ժամանակի, խնդրառության, առդրության և այլն) և նրանց արտահայտության միջոցները (վերջավորություն, շաղադասություն և այլն) կազմում են լեզվի քերականական համակարգը։

Բառը իբրև լեզվական միավոր ուսումնասիրվում է բառային, ձևաբանական և շարահյուսական մակարդակներում։ Բառային մակարդակում ուսումնասիրվում են բառիմաստները, բառի ծագումը, տեսակները, կազմությունը, ձևաբանության մակարդակում՝ բառի ձևափոխությունները, ձևաբանական կառուցվածքները, ձևույթները, խոսքիմասային խմբերը, իսկ շարահյուսական մակարդակում՝ բառերի գործառույթները շարահյուսական կառույցում, նրանց զանազան հարաբերությունները միմյանց նկատմամբ։ Բառային մակարդակն ուսումնասիրում է բառագիտությունը, ձևաբանական մակարդակը՝ ձևաբանությունը, իսկ շարահյուսական մակարդակը՝ շարահյուսությունը։

Ձևաբանության մեջ ուսումնասիրվում են հարացույցները։ Այս դեպքում մենք գործ ունենք համեմատության հետ, ընդ որում առկա են համեմատվողներից մեկը և համեմատիչ հատկանիշը։ «Շարակարգի դեպքում մենք գործ ունենք հարաբերության հետ, որի երկու եզրերն էլ առկա են»[1]։

Սակայն լեզվի մեջ այդ մակարդակները միմյանցից անկախ չեն։ Նրանք հանդես են գալիս միասնաբար, փոխկապակցված։ Բառը մի կողմից բառային միավոր է, մյուս կողմից՝ ձևաբանական և շարահյուսական միավոր, իբրև խոսքի մաս և նախադասության անդամ։ Սրանով էլ արտահայտվում է այդ մակարդակների փոխադարձ կապն ու պայմանավորվածությունը։

Շարահյուսական կարգերը (որոշչի, խնդրի, պարագայի և այլն) ունեն իրենց արտահայտության ձևերը, որ ձևաբանության հարց է։ Շարահյուսական այս կամ այն կարգը բնութագրելիս դիմում ենք նրա արտահայտության ձևին։ Օրինակ, տեղի պարագան բնութագրելիս որոշում ենք նրա արտահայտության ձևը՝ ի՞նչ խոսքի մասով, ո՞ր հոլովով է արտահայտվում, այսինքն դիմում ենք ձևաբանությանը։ Ուրեմն, բառի ձևը ձևաբանության քննության հարց է, իսկ նախադասության մեջ նրա գործառությունը՝ շարահյուսության։ Շարահյուսության մեջ բառի պաշտոնները որոշելիս, նշվում է, թե ինչով է արտահայտված այդ պաշտոնը։

Շարահյուսությունը, իբրև քերականության մի բաժին, ուսումնասիրում է կապակցված շարակարգի քերականական կառուցվածքը։ Շարահյուսության բովանդակությունն են կազմում բառակապակցությունների, իբրև նախադասության կազմիչների, ուսումնքը և նախադասության, նրա կառուցվածքի, բաղադրիչների կապակցման ուսումնքը։ Բայց շարահյուսության ուսումնասիրության հիմնական առարկան նախադասությունն է՝ իր պարզ և բարդ տեսակներով։ Շարահյուսության նվազագույն միավորը բառն է, իսկ առավելագույն միավորը՝ նախադասությունը։ Նախադասության շարահյուսական վերլուծությունը հասնում է բառին, իբրև նվազագույն միավորի, որը համառոտագրվում է ՇՆՄ ձևով։

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐ

«Լեզվական կաղապարները բառաձևերի որոշակի կարգերի հետևողական շարքեր են, որոնք միմյանցից տարբերվում են այդ կարգերի քանակով, դիրքով և պարտադրականությամբ»[2]։ Լեզվի ամբողջ համակարգում հանդես են գալիս կաղապարներ։ Բառային մակարդակում մենք գործ ունենք բառակազմական կաղապարների հետ, ձևաբանության մակարդակում՝ ձևաբանական, իսկ շարահյուսական մակարդակում՝ շարահյուսական։ Բառակազմական կաղապարները ենթակաղապարներ են ձևաբանական կաղապարների համար, իսկ ձևաբանական կաղապարները՝ շարահյուսական կաղապարների համար։ Բառակազմական կաղապարները կազմվում են արմատներից, հոդակապից ու ածանցներից։ Օրինակ՝ առուագրություն, դժկամորեն, արտասահմանյան, բացականչություն, համակարծիք, գեղարվեստական բառերը բաղկացած են ածանցներից, հոդակապից և արմատներից։ Եթե բաղադրիչները նշանակենք Ած (ածանց), Հ (հոդակապ) և Ար (արմատ) պայմանական նշաններով, վերևում բերված շարքը կունենա Ած+Հ+ +Ար+Ած կաղապար։ Վերցնենք մի ուրիշ շարք՝ համակարգություն, դատավարական, դատաքննիչ, կապակցություն, անդամահատիչ, ենթասենյակային, այգեգործական և այլն։ Այս շարքն էլ վերն ընդունված պայմանական նշաններով կունենա հետևյալ կաղապարը՝ Ար+Հ+Ար+ +Ած։ Այս երկու շարքն էլ քառանդամ կաղապարներ են։ Սակայն բա-

[1] Գ. Բ. Ջանուկյան, ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 43—44։

[2] Գ. Բ. Ջանուկյան, ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 11։

ոերն ունենում են նաև երկանդամ, եռանդամ և բազմանդամ կազմապարներ։ Ինչպես՝ վարիչ, ճառու, տնակ, ջրային, ինչույթ, կաթնեղեն, որոնց կազմապարն է[3] Ար+Աժ, իսկ սարալանջ, գործակից, մանրաթելկար, ջրահեղձ, հացատուն շարքը ունի եռանդամ Ար+Հ+Ար կազմապարը։ Մի շարք էլ բերենք բազմանդամ կազմապարով՝ ցանճաշրջանություն՝ Ար+Աժ+Հ+Ար+Աժ+Ար+Աժ, ջրանցքաշինարարություն՝ Ար+Ար+Աժ+Հ+Ար+Աժ+Աժ, գյուղատնտեսություն, խաղատնտեսություն՝ Ար+Հ+Ար+Ար+Աժ, դպրոցաշինություն, ցանճաշրջան, շարքացանային՝ Ար+Աժ+Հ+Ար+Աժ և այլն։

Ձևաբանական կազմապարները կազմվում են հիմքերից և վերջավորություններից։ Օրինակ՝ երգեմ, խաղամ, գնամ, նկարեմ, մարեմ, կարեմ շարքը ունի ԲՀ+ԲՎ կազմապարը, ուր ԲՀ-ն բայահիմքն է, ԲՎ-ն բայական վերջավորությունը։ Սակայն բայահիմքը կարող է ածանցավոր լինել, ունենալ բայածանց, օրինակ՝ թաքցնեմ, թռչեմ, գտնեմ, հեռանամ, վախենամ և այլն։ Այս դեպքում շարքը կունենա ԲՀ (Ար+Աժ)+ +ԲՎ կազմապարը։ Սենյակներից, գյուղերով, խաղաքներում, սեկանններին, տներում շարքը ունի ՀմԺ+ՀգՎ+ՀՎ կազմապարը, ուր ՀմԺ-ն հիմքն է, ՀգՎ-ն հոգնակերտ վերջավորությունը, իսկ ՀՎ-ն հոլովական վերջավորությունը։ Այստեղ էլ կարող է հիմքը բաղադրյալ լինել (բարդ կամ ածանցավոր), ինչպես՝ գրախանութում, ճաշասենյակից, հացատներ, լուսամուտով և այլն։ Այս դեպքում շարքն ունի ՀմԺ(Ար+Հ+Ար)+ՀՎ կազմապարը, իսկ՝ դպրոցներ, գրիչներ, ամանեղեններ, շինարարներ, խաղաքներ, նկարիչներ շարքն ունի ՀմԺ(Ար+Աժ)+ՀգՎ կազմապարը, տրակտորներ, գրիչով, խաղաքայինից, գրիչն շարքն ունի ՀմԺ(Ար+Աժ)+ՀՎ կազմապարը և այլն։

Շարահյուսական կազմապարներն էլ կազմվում են բառաձևերից։ Այսպես՝ ջուր խմել, նամակ գրել, գիրք կարդալ, շենք կառուցել, հող մշակել շարքի մասնակազմապարն է Խ-Բ, ուր Խ-ն նշանակում է խնդիր, Բ-ն՝ բայ։ Կապույտ երկինք, սիրուն աղջիկ, խաղալ ժպիտ, հնչ բնավորություն, առատ բերք շարքի կազմապարն է Ոշ+Ոշ (որոշիչ+որոշյալ)։ Արևի ճառագայթներ, ծովի մակերեսը, գրքի էջերը, կոլտնտեսության նախագահը, ձեռքի մատները շարքը կազմված է Հտ+Հլ կազմապարով (հատկացուցիչ+հատկացյալ), սարերն սպիտակել են, գնացքը հեռացավ, մեքենան սլանում է, քարն ընկավ, հողը խոնավացել է, հարևանը հեռացել է շարքը ստորոգումային շարք է՝ Ե+Ստ կազմապարով (ենթանա+ստորոգյալ)։

Նախադասությունը շարահյուսական առավելագույն միավորն է, իսկ բառը՝ նվազագույն։

Ցուրաքանչյուր նախադասություն ներկայացնելով մի ստորոգական կազմապար՝ ունի իր ենթակազմապարը (մասնակազմապար)։ Այսպես՝ «Լենինական մեկնող գնացքը փնչալով շարժվեց տեղից» նախադասությունը բաղկացած է հետևյալ ենթակազմապարներից՝ Լենինական մեկնող գնացքը, սա էլ իր հերթին՝ Լենինական մեկնող, մեկնող գնացքը, փնչալով շարժվեց տեղից, սա էլ իր հերթին՝ փնչալով շարժվեց և շարժվեց տեղից։ Եթե այս կազմապարն էլ անդամատենք, կհասնենք բառաձևերին, այսինքն շարահյուսական նվազագույն միավորներին։ Այսպիսով, շարահյուսական առավելագույն միավորը նախադասությունն է, իսկ նվազագույնը՝ բառը։ Եթե բառն էլ անդամատենք, կըստանանք բառակազմական կամ ձևաբանական կազմապարներ։ Այսպես՝ փնչալով բառաձևի ձևաբանական կազմապարն է ԲՀ+ԲՎ+ՀՎ։ Գնացքը բառի բառակազմական կազմապարն է Ար+Հա+Աժ+Ավ, ուր Ար-ն՝ արմատն է, Հա-ն՝ հիմքի ածանցը, Աժ-ն՝ ածանցը, Ավ-ն՝ առկայական վերջավորությունը։

Շարահյուսագիտության մեջ նշվում է երկու շարահյուսություն՝ ներքին և նախադասության։ Ներքին շարահյուսության խնդիրն է բարդ բառերի բաղադրիչների շարահյուսական հարաբերությունների կազմապարների ուսումնասիրությունը։ Այդ հարաբերությունները կամ մթագնված են լինում, ինչպես իսկական բարդություններում (ծովափ՝ ծովի ափ, մարդամոտ՝ մարդու մոտեցող, մարդասիրություն՝ մարդուց խուսափող, մարդասեր՝ մարդ սիրող, մատիտանկար՝ մատիտով նկարած, խավարաբնակ՝ խավարում բնակվող և այլն), կամ բացարձակ, ինչպես անիսկական բարդություններում (հորեղբայր, այսօր, քսանհինգ, հինգ-հինգ, աչքով անել և այլն)։

Մանրագրություն.—Գ. Ջահուկյանը բարդ բառերը (բարդությունները) դիտում է որպես նախադասությունների, դերբայական դարձվածների հետագա փոխակերպման արդյունք՝ բերելով հետևյալ օրինակները՝ «տունը պատած է պարսպով» և «տունը քաղաքի ծայրին է»→«տունը, որ պատած է պարսպով, քաղաքի ծայրին է»→«պարսպապատ տունը քաղաքի ծայրին է»→«պարսպապատ տունը քաղաքի ծայրին է»։ «Մարդ, որ շատ է խոսում, ձանձրացնում է»→«շատ խոսող մարդը ձանձրացնում է»→«շատախոս մարդը ձանձրացնում է»։ Իհարկե, ոչ բոլոր դեպքերում է փոխակերպմամբ ստացվում բարդ բառ, եթե ձյունով պատած-ը կփոխակերպվի ձյունապատ, փոստ տանող-ը՝ փոստատար, հաց թխող-ը՝ հացթուխ, ապա սայլ հրողը կապակցությունը չի վերածվի բարդ բառի։ Այդպես էլ արտալեզվական սահմանափակման պատճառով չունենք դաշտավաճառ, լեռնավաճառ, թեև ունենք հացավաճառ, լրագրավաճառ (անդ, էջ 564—565)։

Նախադասության շարահյուսությունը, ինչպես արդեն ասվել է, ուսումնասիրում է բառակապակցություններն ու նախադասությունը։ Սա էլ բաժանվում է երկու մասի՝ փոքր շարահյուսություն, որի ուսում-

[3] Այստեղ և այսուհետև կազմապարը մասնակազմապարի իմաստով է գործածված։

նասիրության առարկան բառակապակցություններն են, և մեծ շարահյուսություն, որի առարկան նախադասությունն է։ Վերջինս էլ իր հերթին է ներկայացվում երկու բաժնով՝ պարզ նախադասության շարահյուսություն և բարդ նախադասության շարահյուսություն։ Առաջինն զբաղվում է պարզ նախադասության կառուցվածքի, նրա միավոր բառերի գործառության, իսկ երկրորդը բարդ նախադասության կառուցվածքի բաղադրիչ ստորոգումային կառույցների գործառության ուսումնասիրությամբ։

ԼԵԶՈՒ ԵՎ ԽՈՍՔ

Լեզուն նշանային համակարգ է, որ կատարում է հաղորդակցական գործառություն մարդկանց միջև։ Լեզուն հաղորդակցության հիմնական միջոց է, հիմնականում նրանով են մարդիկ մտքեր փոխանակում, հաղորդակցվում։ Լեզուն ունի որոշակի համակարգ, կառուցվածք, առանց որի այն անհասկանալի է։ Լեզվով են արձանագրվում ու պահպանվում մարդկության դարերով կուտակած փորձն ու գիտելիքները և հաղորդվում սերնդե-սերունդ։ Լեզուն մտածողության գոյության և այն արտահայտելու ձև է։ Այն էական դեր է խաղում մտածողության ձևավորման գործում։ Լեզվական թաղանթից դուրս մտածողություն գոյություն չունի։ Լեզուն նույնքան հին է, որքան մտածողությունը։

Մտածողության արդյունքը մտածությունն է, որ արտահայտվում է խոսքի միջոցով, լեզուն ձևն է, մտածողությունը՝ բովանդակությունը։

Ինչպես որ լեզուն մտածողության գոյության, նրա արտահայտման միջոցն է, ձևը, այդպես էլ խոսքը մտածության ձևն է, նրա արտահայտության միջոցը։ Լեզուն և մտածողությունը նույնական չեն, տարբեր են նրանց օրենքները, այդպես էլ տարբեր են մտածությունն ու խոսքը։ Առաջինը բովանդակությունն է, երկրորդը՝ ձևը։

Խոսքը մարդու այն գործունեությունն է, որով նա հաղորդակցվում է ուրիշ մարդկանց հետ, արտահայտում և նրանց է հաղորդում իր մտքերը այս կամ այն լեզվով։ Խոսքը անմիջական պրոցես է։ Լեզուն խոսքային միջոցների պահեստավորված վիճակն է։ Լեզվականը խոսքային է պահեստավորված վիճակում, իսկ խոսքայինը լեզվականն է, առնված գործողության մեջ[4]։

Մտածության միավորը միտքն է, որ արտահայտվում է նախադասության միջոցով, իսկ վերջինս խոսքի միավորն է։ Ուրեմն կարելի է այսպիսի զուգահեռ անցկացնել՝ մտածողություն-լեզու, մտածություն-խոսք, միտք-նախադասություն։ Խոսքը կազմվում է նախադասություն-

[4] Ֆ. Ի. Ջանիկյան, Հայոց լեզվի տեսության հիմունքները, էջ 20։

ներից, նրա կարևոր առանձնահատկությունը ամբողջականությունն է և անկախությունը, ինքնուրույն կիրառությունը։ Խոսքը կարող է լինել համառոտ և ծավալուն։ Շիրվանզադեի «Քառասը» ծավալուն խոսք է, իսկ եթե նրանից առանձնացնենք «Ճիպոտդ քոլիցդ կորիր» նախադասությունը և նրան անկախություն տանք, իբրև առած գործածենք, կդառնա մի համառոտ խոսք։ Այդպիսի համառոտ խոսքեր են՝ խաղաղություն խրճիթներին՝ պատերազմ պալատներին։ Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք։ Լավ է մեռնել կանգնած, քան ապրել ծնկած։ Մարդը մահկանացու է և այլն։ Խոսքը լինում է բանավոր, որ ասվում է ու լսվում, և գրավոր, որ գրվում է ու կարդացվում։ Խոսքի զանազան տեսակներ կան։ Դրանցից են՝ արտաքին խոսք, որն ունի հնչյունային արտահայտություն, ասվում և լսվում է, ներքին խոսք, որ չունի հնչյունային արտահայտություն, մարդն իր մտքում է ասում, գրական խոսք, գեղարվեստական խոսք, ճարտասանական խոսք, պատկերավոր խոսք, ուրիշի բաղվածքային խոսք, ուղղակի, անուղղակի խոսքեր և այլն։

ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Բառակապակցություն կամ նախադասություն կազմելու համար բառերը կապակցում ենք իրար հետ որոշ հարաբերությամբ։ Շարահյուսական կառույցում բառերը միմյանց հետ կապվում են իրենց իմաստով ու գործառությամբ։ Այդ կապն իրականացվում է քերականական վերջավորությունների, հերթագայությունների, կապերի, շաղկապների, բառերի դասավորության (շարադասություն) և հնչերանգի միջոցով։ Ահա շարահյուսական կառույցի բաղադրիչների այդ կապը, արտահայտված կապակցման միջոցներով, կոչվում է կապակցություն։ Կապակցությունը շարահյուսության այն բաժինն է, որն ուսումնասիրում է շարահյուսական միավորների կապակցման եղանակները, բնույթը, միջոցները և տեսակները։

Լեզվի համակարգում բառերի միջև գոյանում են քերականական մի քանի հարաբերություններ։ Շարահյուսական կառույցի մի բաղադրիչ մի դեպքում քերականորեն կախված է լինում մյուս բաղադրիչից, մի այլ դեպքում կախված չի լինում։ Առաջին դեպքում կազմվում է լրացում-լրացյալի հարաբերություն, երկրորդ դեպքում՝ հավասարաոր անդամների հարաբերություն։ Ըստ այդմ էլ բաղադրիչների հարաբերությունները լինում են ստորադասական, համադասական և ստորոգումային։

ա) Ստորադասական.—Շարահյուսական կառույցի մի բաղադրիչի քերականական կախվածությունը մյուս բաղադրիչից կոչվում է ստորադասություն, ստորադասությամբ կապված կապակցությունը՝ ստո-

բազմասական կապակցություն, որը բաղկացած է լրացումից ու լրացյալից կամ ստորադաս ու գերադաս անդամներից։ Օրինակ՝ կանաչ տերև, հոտավետ ծաղիկ, գրքի կազմ, նամակ գրել, արագ վազել, գնացքով գնալ կապակցություններում կանաչ, հոտավետ, գրքի, նամակ, արագ, գնացքով բառերը լրացումներ են, ստորադաս անդամներ, իսկ տերև, ծաղիկ, կազմ, գրել, վազել, գնալ բառերը՝ լրացյալներ, գերադաս անդամներ։

Պարզ նախադասության մեջ ստորադասության բաղադրիչները միմյանց հետ կապակցվում են առանց շաղկապի։

(բ) Համադասական.—Ստորադասական կապակցություններում լրացումները կարող են լինել սահմանափակ կամ անսահմանափակ։ Այսինքն միևնույն գերադաս անդամը կարող է ունենալ մեկ լրացում կամ մեկից ավելի լրացումներ։ Այդ մեկից ավելի լրացումները լինում են համասեռ և տարասեռ։ Համասեռ են երկու և ավելի այն լրացումները, որոնք վերաբերում են միևնույն բառին, միևնույն լրացումն են, միևնույն ներքոսքիմասային իմաստն ունեն և պատասխանում են միևնույն հարցին։ Օրինակ՝ «Այս երեք կապույտ, կանաչ ու սպիտակ մեքենաների դիմապակիները կոտրված են» նախադասության ընդգծված բառերը մեքենաների համասեռ որոշիչներն են։ Համասեռ անդամները կազմում են համադաս շղթա, համադասություն։ Ուրեմն համադասություն է կոչվում այն կապակցությունը, որի բաղադրիչները համասեռ են, քերականորեն իրար համազոր, իրար չեն լրացնում, իրար միանում են համադասական շաղկապներով կամ անշաղկապ, թվարկման հնչերանգով, տրոհվում ստորակետով, պատասխանում են միևնույն հարցին։ Համադասական շղթան շարահյուսական կառույցում ինքնուրույն հանդես չի գալիս, միշտ լրացնում է մի այլ անդամի՝ կազմելով համաստորադասական կապակցություն։ Շղթայի յուրաքանչյուր անդամ գերադասի միևնույն լրացումն է։

Համաստորադասությունն ունի հետևյալ գծապատկերը.



Օրինակ՝ փոքրամարմին, գանգրահեր և սևաչյա աղջիկ կամ՝ վերցնել թուղթ, մատիտ և քանոն։ Առաջին կապակցության ընդգծված բառերը աղջիկ բառի համասեռ լրացումներն են՝ համադաս (բազմակի) որոշիչներ, իսկ երկրորդ կապակցության ընդգծված բառերը՝ վերցնել բառի համասեռ լրացումները՝ համադաս (բազմակի) խնդիրներ։ Ահա նրանց գծապատկերները.



Համադասական կապակցության միջոցներն են համադասական շաղկապները, շարահարությունը (հնչերանգ), իսկ ստորադասական կապակցության միջոցները՝ քերականական վերջավորությունները, կապերը, շարադասությունը։

Տարասեռ են միևնույն անդամի մեկից ավելի այն լրացումները, որոնք քերականորեն իրար համազոր չեն, տարաբնույթ են, պատասխանում են տարբեր հարցերի, կամ եթե միևնույն լրացումն են, ապա տարբեր անդամների են լրացնում։

Նրանց գծապատկերն ունի հետևյալ տեսքը.



Օրինակ՝ Փրկության օղակով խեղդվելուց ազատել տղային։ Կանչել այս երեք չար նիլխաներին։ Սրանց կաղապարն ունի հետևյալ տեսքը.



Տարասեռ լրացումները շաղկապներով չեն միանում, չունեն թվարկման հնչերանգ։ Տարասեռ լրացումներով կապակցությունը կոչվում է տարասեռ ստորադասական կապակցություն։

Հաճախ ստորադաս անդամն իր հերթին ունենում է լրացումներ, հանդես է գալիս լրացյալի դերում, որով ստացվում է աստիճանական ստորադասություն՝ երկրորդական կարգի, երրորդական կարգի, չորրորդական և այլ կարգի ստորադասներ։ Այդ կառույցը կոչվում է ենթաստորադասություն, իսկ բառերի միջև եղած հարաբերությունը՝ ենթաստորադասական։ Այդ կառույցն ունի հետևյալ գծապատկերը.



Օրինակ՝ այս դռների բռնակների գույնը կապակցության գույնը գերադաս անդամին լրացնում է բռնակների բառը, սրան՝ դռների, իսկ սրան էլ՝ այս բառը։ Գծապատկերը կլինի.



Կան շարահյուսական կառույցներ, որոնցում հանդես են գալիս բաղադրիչների համակցված հարաբերություններ՝ ստորադասական, ենթաստորադասական, համաստորադասական, անհամասեռ ստորադասական։ Այդ կառույցը կունենա, օրինակ, այսպիսի գծապատկեր.



Օրինակ՝ Ընկերոջս նվիրած այս փոքրիկ, բայց հետաքրքիր ու արժեքավոր գիրքը.



Այս կառույցում համակցված են ստորադասական, ենթաստորադասական, համաստորադասական և տարասեռ ստորադասական կապակցությունները։

գ) Ստորոգումային.—Այս հարաբերությամբ կապակցվում են ենթական ու ստորոգյալը, որոնք կազմում են նախադասություն, նրա հիմքն են։ Խոսքային կառույցում (իմաստի տեսակետից), ենթակայի հատկանիշը ցույց տալով, ստորոգյալը լրացնում է նրան, նրա իմաստի լրացումն է, մակերեսային կառույցում (կապակցության տեսակետից) ենթական բայի դեմքի լրացումն է։

Մանրագր.—Մ. Աբեղյանն ընդունում է ստորադասության երկու տեսակ՝ կախում և ներունակություն։ Կախման հարաբերությամբ լրացումը ենթարկվում է լրացյալին, որն իր նշանակությամբ իշխում է լրացումին՝ պահանջելով, որ այն դրվի քերականական այս կամ այն ձևով։ Օրինակ՝ ընկերոջս տրական հոլովը կախված է օգնեցի բայի բայիմաստից (ընկերոջս օգնեցի), կարդացի բայն իր նշանակությամբ խնդրում է հայցական (ուղղական) հոլով՝ գիրք (գիրք կարդացի), իսկ Տիգրանի գոյականը սեռական է դրվում գիրքը գոյականի պահանջով (Տիգրանի գիրքը)։ Այնուհետև բացատրում է, որ ներունակության հարաբերության մեջ լրացումի ցույց տված գաղափարը մտածվում է իբրև լրացյալի մեջ արդեն պարունակած և նրա հետ միանում է, համաձուլվում իբրև մի գաղափար, կամ թե լրացումն ըմբռնվում է իբրև իր լրացյալի երկրորդ անգամ կրկնությունն ուրիշ բառով։ Այնպես որ լրացումն իր լրացյալին ստորադասվելով հանդերձ՝ խոսքի մեջ մի տեսակ նրան հավասար պաշտոն է վարում, կամ թե լծորդվում, զուգորդվում է նրան և իր հոլովական ձևով կախված չէ նրանից։ Մինչդեռ կախման հարաբերության դեպքում, ընդհակառակն, լրացումը բոլորովին տարբեր պաշտոն է վարում, քան իր լրացյալը, իր հոլովական ձևով կախված է լրացյալից։ Ներունակությամբ զուգորդվում է բացահայտիչն իր բացահայտյալին։ Նմանապես ենթական ներունակ է բային։ Ստորոգյալն ու ենթական, ինչպես խոսքի երկու հավասար եզրեր կամ մասեր զուգորդվում են իրար[5]։

Կապակցության բնույթը որոշվում է նրանով, թե ստորադասը քերականական ի՞նչ իմաստով է լրացնում գերադասին՝ որոշի՞չ է, խնդի՞ր, պարագա՞, թե՞ մի այլ անդամ։ Ըստ այդմ էլ կապակցությունը լինում է ենթակայական, ստորոգելիական, որոշչային, խնդրային և պարագայական։ Ենթակայականն արտահայտում է ենթակայի ու ստորոգյալի հարաբերություն, ստորոգելիականը՝ ստորոգելիի (ստ. վերադիր) և բայ-հանգույցի հարաբերություն, որոշչայինը՝ գոյականի ու նրա լրացումների, խնդրայինը՝ բայի (նաև ածականի, մակբայի) և նրա խնդիր լրացումների, պարագայականը՝ բայի (նաև ածականի, մակբայի) և նրա՝ հանգամանքներ ցույց տվող լրացումների հարաբերություն։

[5] Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 397—398։

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հայերենի շարահյուսական կապակցության միջոցները երկուսն են՝ ա) հնչութային (հոլովման, խոնարհման վերջավորություններ, հերթագայություն, հոգնակերտ և առկայության վերջավորություններ, կապեր, շաղկապներ), բ) վերհնչութային (շարադասություն, հնչերանգ)։ Վերջավորություններով ու կապերով կապակցվում է ստորադաս անդամը հիմնադասին, շաղկապներով՝ համադասական անդամները միմյանց հետ, իսկ շարահարությամբ՝ թե՛ համադասական, թե՛ ստորադասական կապակցությունները։ Այսպես, օրինակ, հեռանալ ծառից կապակցության բացառական հոլովի վերջավորությունը (ից) ծառ-ը կապում է հեռանալ բային, եթե ից-ը հանենք, կստացվի անկապակցություն (հեռանալ ծառ)։ Եթե զբոսնել փողոցում կապակցության ներգոյական հոլովի վերջավորությունը (ում) հանենք, կստացվի զբոսնել փողոց անկապակցությունը։ Քարերը խոսեցին կապակցության բաղադրիչներից մեկնումեկի վերջավորությունը հանենք, կստացվի քար խոսեցին կամ քարերը խոսեց անկապակցություն։ Այսպես էլ՝ եթե պայքարել հանուն հայրենիքի կապակցության կապը (հանուն) հանենք, կստացվի՝ պայքարել հայրենիքի անկապակցությունը։ Դու կարդացիր կապակցության իր դիմային վերջավորությունը հանենք, կստացվի դու կարդաց անկապակցությունը և այլն։

Շարահյուսական կառույցում բաղադրիչները իրար հետ կապակցվում են՝ ա) շաղկապով, այս դեպքում կապակցությունը կոչվում է զուգադրական կամ շաղկապական։ Օրինակ՝ Մանուշակներ ոտքերիս ու շուշաններ ձեռքերիս, Ու վարդերը այտերիս, ու գարունը կրծքիս տակ, Ու երկինքը հոգուս մեջ, ու արևը աչքերիս, Ու աղբյուրները լեզվիս՝ սարերից իջա ես քաղաք (ՀՇ)։ Բայց երբ նայում եմ խաղաղ մորս դեմքի դալուկին, Ինձ թվում է, թե մի պաղ Վիշտ է եղել կյանքը հին (ՀՇ)։ Շիրազը երեկ, այսօր, վաղը և հավիտյան եղել է, կա ու մնալու է հայ ժողովրդի ամենաժամանակակից, ամենաժողովրդական բանաստեղծներից մեկը («Գարուն»)։ Խելացի, բայց չարաճճի Արամը վերցրեց պայուսակն ու դիմարկը և դուրս եկավ սենյակից։ Դրսում նրան սպասում էին Աշոտն ու Արսենը (Սգր)։ Ոչ երեկ և ոչ այսօր չեմ քնել կամ, ավելի ճիշտ, չեմ կարողացել քնել (Նդ)։

բ) Առանց շաղկապի, այդ դեպքում կապակցությունը կոչվում է անշաղկապ կամ շարահարությամբ։ Օրինակ՝ Մեկից մի սոխ, մեկից մի հաց գողանում, Գնում էինք Արփալյը լողանում։ Սոված, ծարավ, բոկոտն ընկնում սար ու ձոր՝ Շրջում էինք անգիտությամբ բախտավոր (ՀՇ)։ Ջյուն է իջնում կուտակվում Մորս վրա վերևից, Ասես փետուր է թափվում Հրեշտակի թևերից (ՀՇ)։

Հայերենի շարադասության հարցի մանրամասն քննությունը թողնելով հետագային՝ այժմ միայն այն մասին, թե շարադասությունը ինչ քերականական նշանակություն ունի իբրև կապակցության միջոց։

Շարադասությունը շարահյուսական կառույցում բառերի դասավորության ընդունված կարգն է։ Ժամանակակից հայերենում լրացումը դրվում է լրացյալից առաջ, սա է ընդունված կարգը։ Բայց լրացման տեղափոխությունից նրա գործառությունը չի փոխվում։ Այսպես՝ ջուրը հոսում է, թե հոսում է ջուրը, քաղցր խոսքը, թե խոսքը քաղցր, ջուրը խմեց, թե խմեց ջուրը, զուգահեռ ձևերում բառի գործառությունը չի փոխվում, երկու դեպքում էլ առկա են ենթական ու ստորոգյալը, որոշիչն ու որոշյալը, խնդիրն ու ստորոգյալը։ Ուրեմն մեր շարադասությունը ազատ շարժական է և մեծ մասամբ քերականական նշանակություն չունի, եթե նկատի չունենանք առանձին դեպքերը։

Մեր լեզվում շարադասությունը քերականական իմաստ է ստանում բացահայտիչ-բացահայտյալ կապակցությունում։ Բացահայտիչի նում բացահայտիչ-բացահայտյալ կապակցությունում։ Բացահայտիչի տեղը կայուն է, միշտ դրվում է բացահայտյալից հետո, ետադաս է։ Եթե բացահայտիչը առաջ տանենք, կփոխվի բացահայտյալի։ Այսպես՝ «Իմ ազգականը՝ Արմենը մաթեմատիկոս է» նախադասության ազգականը բացահայտյալ է, Արմենը՝ բացահայտիչ, իսկ «Արմենը՝ իմ ազգականը, մաթեմատիկոս է» նախադասության մեջ փոխվել են նրանց պաշտոնները, բացահայտյալը Արմեն-ն է, իսկ՝ բացահայտիչը՝ ազգականը։

Շարադասությունը քերականական նշանակություն է ստանում նաև այն դեպքում, երբ ենթական և ուղիղ խնդիրն արտահայտված են լինում միևնույն ուղիղ ձևով ու հոլովով։ Այսպես՝ «Խոսքը զարգացնում է լեզուն» նախադասության ենթական խոսքն է, իսկ «Լեզուն զարգացնում է խոսքը» նախադասության մեջ՝ լեզուն։

Որոշ դեպքերում շարադասությամբ է որոշվում նաև բառերի պաշտոնը։ Օրինակ՝ «Աշակերտը խելոք է պատասխանում» նախադասության մեջ խելոք բառը ձևի պարագա է, իսկ «Խելոք աշակերտը պատասխանում է» նախադասության մեջ նույն խելոք բառը որոշիչ է։ Առաջին դեպքում դրված է բայի վրա, երկրորդ դեպքում՝ գոյականի։

Կապակցության միջոց է նաև հնչերանգը։ Ինչպես հետո կտեսնենք, սա ամենից առաջ նախադասության ձևավորման վերհնչութային միջոց է։ Ամեն մի նախադասություն արտահայտում է ամբողջական ու ավարտուն միտք, իսկ այդ ավարտունության և ամբողջականության արտահայտման միջոցը հնչերանգն է։

Բանավոր խոսքում հնչերանգով է որոշվում նախադասության պավարտվածությունը, որը գրավորում արտահայտվում է վերջակետով։

Հնչերանգը անդեմ նախադասության ձևավորման միջոց է խոսքային համապատասխան միջավայրում։ Օրինակ՝ Երեխան, երեխան բառերը սոսկ անվանողական նշանակություն ունեն, բայց եթե մայրին

կանգնած երեխան վազում է դեպի տրամվայ, և մեկը բացականչում է՝ Երեխա՜ն, երեխա՜ն... այդ դեպքում այդ բառերը հաղորդում են կատարում և նախադասություն են դառնում։

Երբեմն հնչերանգով որոշվում է նաև բարդ նախադասության տեսակը՝ համադասակա՞ն է, թե՞ ստորադասական։ Օրինակ՝ «Կմեծանաս, դպրոց կգնաս, աշխարհ կճանաչես» նախադասությունը թվարկման հնչերանգով համադասական բարդություն է, իսկ պայմանի հնչերանգով՝ ստորադասական (որ մեծանաս, դպրոց գնաս, աշխարհ կճանաչես)։

Հնչերանգով որոշվում է նաև խոսողի նպատակը՝ հարցո՞ւմ է անում, հաղորդո՞ւմ, հորդո՞ր է արտահայտում։ Այսպես՝ «Գնացքը եկավ. Գնացքը եկա՞վ, Գնացքը եկա՜վ» նախադասություններից առաջինում հաղորդում է կատարվում, երկրորդում արտահայտվում է հարցում, իսկ երրորդում՝ զգացմունք (ուրախություն), թեև երեք դեպքում էլ նախադասության կազմը նույնն է։

ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Կապակցությունը հայերենում ունի երեք եղանակ (կազմվում է երեք եղանակով)՝ կառավարում (խնդրառություն), առդրություն և համաձայնություն։

Կառավարումը[6] կապակցության այն եղանակն է, երբ ստորադաս անդամը (լրացումը) դրվում է այս կամ այն հոլովով կամ կապային կապակցությամբ՝ գերադաս անդամի թելադրանքով, պահանջով։ Օրինակ՝ մոտենալ բայը պահանջում է, որ լրացումը դրվի տրական հոլովով (մոտենալ ընկերոջը), հեռանալ բայը պահանջում է, որ լրացումը դրվի բացառական հոլովով (հեռանալ ընկերոջից), իսկ հպարտանալ բայը պահանջում է լրացում գործիական հոլովով (հպարտանալ ընկերոջով), հարձակվել բայը պահանջում է վրա կապով լրացում (հարձակվել թշնամու, քաղաքի վրա), մասին կապի պահանջով խնդիրը դրվում է սեռական հոլովով (գրքի մասին), ճանգերձ կապի պահանջով՝ գործիական հոլովով (գրքերով հանդերձ), բացի կապի պահանջով՝ բացառական կամ ուղղական հոլովով (գրքերից բացի, բացի գրքերը) և այլն, և այլն։

Լրացյալին կառավարման եղանակով են կապակցվում բայերի, ածականների, մակբայների, գոյականների, կապերի՝ հոլովներով կամ կապային կապակցությամբ արտահայտված լրացումները։ Ինչպես, օրինակ, ծառը ջրել, մեղուներին նայել, մեղուների հետ զգույշ վարվել,

[6] Տե՛ս Հ. Հարությունյան, Կառավարումը ժամանակակից հայերենում, Երևան, 1983։

փաստին անտեղյակ, դեպքին ականատես, գնացքից արագ, կրիայի պես դանդաղ, քրոջից խելացի, արտաքինով գեղեցիկ, հանդիպում լուսաբացին, ելույթ բանվորների ժողովում, զեկուցում Բաֆֆու մասին և այլն։

Գոյական անվան լրացումներն արտահայտվում են թեքվող ու չթեքվող խոսքի մասերով։ Գոյական լրացումը լրացյալի հետ կապակցվում է ուղղական, սեռական (տրական), բացառական, գործիական, ներգոյական հոլովներով, ինչպես և հոլովակապային կապակցությամբ (աշակերտի գրիչը, կոլտնտեսության այգին, բրդից վերարկու, բեղերով երիտասարդը, կարապի նման աղջիկը, մետրի չափ հասակը և այլն)։

Ի՞նչ եղանակով են կապակցվում հիշյալ գոյականական կառույցների բաղադրիչները։ Քերականների մի մասի[7] կարծիքով հատկացուցիչն ու որոշիչը, անկախ նրանից՝ հոլովվա՞ծ են, թե՞ ոչ, լրացյալին են կապվում առդրությամբ, իսկ մյուս մասի կարծիքով բոլոր այն լրացումները, որոնք արտահայտված են հոլովաձևերով կամ հոլովակապային կապակցությամբ, լրացյալին կապվում են կառավարումով, այդ թվում նաև գոյական որոշիչն ու հատկացուցիչը։

Մ. Աբեղյանը առաջինը գոյական+գոյական կաղապարում կառավարման եղանակ է տեսնում, «Տիգրանի գոյականը սեռական է դրվում,— գրում է նա,— գիրքը գոյականի պահանջով (Տիգրանի գիրքը)[8]։

Կառավարման լայն ըմբռնումով՝ բոլոր այն լրացումները, որոնք արտահայտված են հոլովված բառերով կամ հոլովակապային կապակցությամբ, լրացյալին են կապվում կառավարման եղանակով, անկախ նրանից՝ գոյականի՞ն են լրացնում, թե՞ մի այլ խոսքի մասի։ Ճիշտ է, հոլովական ձևերով արտահայտված որոշիչը (քար սիրտ, աղյուսից մի՛ջնապատ, մսով կարկանդակ) իմաստով (խորքային պլանում) ածականին է հարում, բայց ձևով (մակերեսային պլանում) հոլովով է կապվում լրացյալին, կախման հարաբերությունը հոլովով է արտահայտվում։ Բրդից գուլպաներ, բրնձով փլավ կապակցություններում գործում է կառավարման եղանակը, իսկ բրդյա գուլպաներ, բրնձե փլավ կապակցություններում՝ առդրության։ Սա շարահյուսական հոմանիշություն է, որ բնորոշ է բոլոր լեզուներին։ Կառավարման եղանակով են կապվում մանավանդ բայանուն գոյականների լրացումները՝ հանդիպում գնատփին, զեկուցում վեպի մասին, գրույց բարոյականությունից,

[7] Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Ենանյան, Խ. Գ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հատ. 3, 1976, էջ 407։

[8] Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 397։

БИБЛИОТЕКА
Степанакертского
педагогического

վերաբերմունք ընկերոջ նկատմամբ, ներում տոնի առթիվ, հարձակում թշնամիների վրա և այլն։

Կառավարման արտահայտվում է՝ ա) հոլովներով և կոչվում է անմիջական կապակցություն, ինչպես՝ թերթից արտագրել, գնացքով գնալ, մանկությունից խելոք, դպրոցի շենքը և այլն, բ) հոլովակապային կապակցությամբ և կոչվում է միջնորդված, ինչպես՝ ընկերոջ միջոցով լուր ուղարկել, սեղանի վրա դնել, ջրի մեջ լողալ, տոնի առթիվ զեկուցումը, Բաֆֆու մասին հոդվածը, ներկայանալ վկայականով հանդերձ և այլն։

Կառավարման համար հիմունք են ծառայում ա) բառի քերականական իմաստը, գերադաս անդամի ընդհանրացված, խոսքիմասային իմաստը։ Օրինակ՝ գոյականով արտահայտված գերադաս անդամը սովորաբար առնում է որոշչային լրացումներ, իսկ բայով արտահայտված գերադաս անդամը՝ խնդիրներ ու պարագաներ։ Դերանունները սովորաբար լրացում չեն ընդունում, լրացյալի դերում հանդես չեն գալիս։ Ներգործական սեռի բայերն ընդունում են ուղղականաձև կամ տրականաձև ուղիղ խնդիր, իսկ կրավորականի բայերը՝ բացառական (քիչ դեպքերում՝ նաև տրական ու գործիական) հոլովով կամ կողմից կապով ու նրա խնդրով ներգործման անուղղակի խնդիր։ Ածականները, թվականները սովորաբար որոշչային լրացում են լինում, մակբայները՝ պարագայական և այլն։

Կառավարման գործում բառի խոքսիմասային դերը երևում է նաև նրանից, որ նույնարմատ տարբեր խոսքի մասեր տարբեր ձևի լրացում են ընդունում։ Այսինքն բառի խոսքիմասային իմաստը փոխվելիս փոխվում է նաև նրա լրացման ձևը։ Օրինակ՝ գիրքն ընթերցել, բայց գրքի ընթերցումը, հողը վարել, բայց հողի վարը, ցորեն ցանել—ցորենի ցանքը, երեխային (ծառը) խնամել—երեխայի (ծառի) խնամքը, վազն էտել—վազի էտը, տնկիները ծերատել—տնկիների ծերատումը և այլն։ Այս զուգահեռ ձևերը ցույց են տալիս, որ լրացման քերականական ձևը կախված է լրացյալի քերականական, խոսքիմասային իմաստից։

բ) Բառի բառային իմաստը։ Լրացման (ստորադաս անդամ) այս կամ այն ձևով արտահայտվելը կախված է նաև լրացյալի (գերադաս անդամ) բառիմաստից, որը մասնավոր, միայն տվյալ բառին է վերաբերում, առարկայի, հատկության կոնկրետ անվանումն է, նրա բառարանային իմաստը։ Այս բանը պարզ երևում է՝ 1. բառի բազմիմաստությունից։ Միևնույն բառը տարբեր իմաստներով գործածվելիս տարբեր ձևի լրացում է ընդունում, թեև նրա խոսքիմասային իմաստը չի փոխվում։ Բաժանել բայը իրարից ջոկելու, առանձնացնելու իմաստով գործածվելիս առնում է բացառական և հայցական հոլովներով լրացումներ (երեխաներին իրարից բաժանեցին, կովող աքաղաղներին միմյանցից բաժանեցին), իսկ բաշխելու, հանձնելու իմաստով գործածվելիս՝ հայցական և տրական հոլովներով լրացումներ (խնձորը բաժանեցին երեխաներին, աշակերտներին գիրք բաժանեցին և այլն)։ Ապրել բայը ապրումներ ունենալու, զգացվելու իմաստով առնում է հայցականով ուղիղ խնդիր (վիշտը ծանր ապրել), իսկ բնակվելու իմաստով՝ տրականով, ներգոյականով կամ հոլովակապային կապակցությամբ տեղի պարագա (ապրել սարի գագաթին, ջրում, անտառի մեջ, ծառի վրա), աշխատել-ը գործ կատարելու իմաստով առնում է հիմունքի պարագա իբրև, որպես կապերով (աշխատել իբրև հավաքարար, որպես տնտեսվար), իսկ վաստակելու իմաստով՝ ուղիղ խնդիր (փող աշխատել), սովորել-ը վարժվելու իմաստով առնում է տրականով անուղղակի խնդիր (կլիմային սովորել, բնավորությանը սովորել), իսկ մի բան յուրացնելու, իմանալու իմաստով՝ հայցականով ուղիղ խնդիր (դասը սովորել, ժամագործություն սովորել, հողագործություն սովորել և այլն)։ Պարզել-ը պարզվելու իմաստով գործածելիս շեղոք սեռին է պատկանում, խնդիր չի պահանջում (եղանակը պարզել է, աչքերը պարզել են), իսկ մեկնաբանելու, պարզաբանելու իմաստով գործածվելիս՝ հայցականով և տրականով (կամ կապերով) լրացումներ (հարցը պարզեց ինձ համար, լրացումը պարզեց խնդրի էությունը, պարզել մտքերը և այլն)։ 2. Այն բանից, որ միևնույն արմատից կազմված տարբեր խոսքի մասեր երբեմն միևնույն ձևով լրացում են առնում։ Օրինակ՝ ազատել-ազատ-ազատություն բանտից, դժգոհել-դժգոհ-դժգոհություն վիճակից, ծանոթանալ-ծանոթություն տեղանքին և տեղանքին ծանոթ, տեղեկանալ-տեղյակ-տեղեկություն հրամանին, մոտենալ-մոտ-մոտիկություն մարդկանց, բարեկամանալ-բարեկամ-բարեկամություն մեկին (մեկի հետ), խռովել-խռովություն-խռով մեկից և այլն։ Այսպես էլ զրկել և զուրկ մի բանից, լիանալ և լի մի բանով (մի բանից), զեկուցել-զեկուցում մի բանի մասին, զրուցել-զրույց մի բանի մասին (մի բանից), այցելել-այցելություն մեկին, ընդհարվել-ընդհարում մեկին, մեկի հետ և այլն։

3. Ներխոսքիմասային իմաստից։ Թեև բայերն առնում են խնդիր, պարագա, ստորոգելի, բայց նրանց իմաստային տարբեր խմբեր քերականական տարբեր ձևի լրացումներ են առնում, որը բխում է արդեն ոչ թե բայի խոսքիմասային իմաստից, այլ՝ բառային տվյալ իմաստից։ Բայը իր խոսքիմասային իմաստով առնում է խնդիրներ ու պարագաներ, բայց թե այդ խնդիրները կամ պարագաները ո՞ր հոլովով կամ կապով են արտահայտվում, բխում է բառիմաստից։ Օրինակ՝ հեռանալու իմաստ արտահայտող բայերն առնում են բացառական հոլովով լրացում (խուսափել, բաժանվել, փախչել, զատվել, հեռանալ մեկից, մի բանից), իսկ մոտենալու, հանգելու իմաստ արտահայտող բայերը՝ տրականով լրացում (մոտենալ, հանգել, նայել, դիպչել, կպչել,

անդրադառնալ—մեկին, մի բանի), ասացական բայերը պահանջում են հայցական և տրական հոլովով լրացում (ասել, պատմել, առաջարկել, զեկուցել, հայտնել, տեղեկացնել մեկին մի բան)։ Եթե ուղիղ խնդիրը իրի անուն է, նման է ուղղականին (ջուր խմել, հողը վարել, շենք կառուցել), եթե անձի անուն է, նման է տրականին (ընկերոջը հարգել, երեխային ճամբար ուղարկել) և այլն։ Այսպիսով, ներխոսքիմաստային իմաստը բառիմաստն է, որով խմբավորվում են բայերը։

4. Բառակազմությունից։ Լրացման քերականական ձևը երբեմն բխում է նաև լրացյալի կազմությունից։ Արմատական բառը լրացում է առնում ըստ իր տվյալ իմաստի, բայց երբ այդ արմատին նոր արմատ է ավելանում կամ ածանց, և փոխվում է բառի իմաստը, նոր բառ է կազմվում, այդ նոր բառն էլ ըստ իր նոր իմաստի է լրացում առնում։ Օրինակ՝ գրել բայն առնում է ուղղականաձև ուղիղ խնդիր, որը պատասխանում է ի՞նչ հարցին (գրել ի՞նչ՝ դիմում, շարադրություն), իսկ արտագրել բայը ուղիղ խնդրի հետ նաև բացառականով լրացում, որը պատասխանում է ի՞նչ, ինչի՞ց հարցերին (արտագրել շարադրությունը գրքից), նույնը և նկարել, արտանկարել բայերը։ Համ- ածանցով բայերը պահանջում են տրական հոլովով լրացում՝ համաձայն, համամիտ, համակարծիքի, համախոհ, համատեղ (մի բանի), -կից արմատով վերջացող բառերը առնում են նույնպես տրականով լրացում՝ բախտակից, մասնակից, կողմնակից, հարակից, վշտակից (մեկին, մի բանի) և այլն։ Գրավել մի բան, իսկ ներգրավել մեկին մի բանի մեջ և այլն։ Միանալ մի բանի, միացնել մի բան մի բանի, կարդալ մի բան, կարդացնել մեկին մի բան։ Խաղալ-ը չեզոք է, խաղացնելը՝ ներգործական, պահանջում է ուղիղ խնդիր (երեխային խաղացնել), աշխատել-ը չեզոք է, աշխատեցնել-ը՝ ներգործական, պահանջում է ուղիղ խնդիր (երեխային աշխատեցնել), խմել-ը ներգործական բայ է, պահանջում է ուղիղ խնդիր (ջուր խմել), իսկ խմեցնել-ը՝ պատճառական, պահանջում է և՛ ուղիղ խնդիր, և՛ անուղղակի խնդիր (երեխային ջուր խմեցնել)։

Առհասարակ չեզոք սեռի բայերը պատճառականի փոխվելիս առնում են նաև ուղիղ խնդիր, իսկ ներգործական սեռի բայերը պատճառականի փոխվելիս առնում են ուղիղ խնդրի հետ նաև անուղղակի խնդիրներ։

Լեզվաբանական գրականության մեջ իբրև կառավարման հիմունք նշվում է նաև խոսողի նպատակը, այսինքն այն, թե խոսողը հնարավոր լրացումներից ո՞ր տարբերակն է օգտագործում։ Հայտնի է, որ լրացումներն ունենում են տարբերակներ, միևնույն իմաստն արտահայտվում է երկու, երբեմն էլ երկուսից ավելի ձևերով։ Ինչպես՝ ժամացույցը կախել պատից և պատին, հարցնել մորից և մորը, խոսել հերոսությունից և հերոսության մասին, դիմավորել գնացքը և գնացքին, գիրքը դնել սեղանին և սեղանի վրա, բժիշկ կանչել և բժշկին կանչել, սոխակը վարդ է սիրում և վարդին է սիրում և այլն։ Այս տարբերակները, ինչպես երևում է օրինակներից, բխում են բայիմաստից, լրացման ձևը լրացյալի թելադրանքից է բխում և խոսողը դեր չունի, նրան մնում է միայն որևէ մեկը ընտրել, որն, իհարկե, կառավարման հիմունք չէ։ Միևնույն լրացյալը կարող է տեսականորեն մեկից ավելի լրացումներ առնել, բայց խոսողը օգտագործում է դրանցից մեկը կամ երկուսը։ Օրինակ՝ ուղարկել բայը կարող է ունենալ ուղիղ խնդիր, մատուցման խնդիր, միջոցի խնդիր (գիրքը փոստով ուղարկեցի ընկերոջս)։ Եթե խոսողը դրանցից մեկն է օգտագործում (գիրքն ուղարկեցի), դա չի նշանակում, թե խոսողի նպատակը կառավարման հիմունք է դառնում։ Հիշյալ կառույցում կառավարման հիմունք է ուղարկել բայի բառիմաստը։

Ուժեղ և թույլ (պարտադիր, ոչ պարտադիր, հատուկ և ընդհանուր) կառավարում։ Լրացումներից ոչ բոլորն են միևնույն ուժով ու անհրաժեշտությամբ կապվում լրացյալին։ Կան լրացումներ, որ պարտադիր չեն տվյալ կառույցում, տվյալ լրացյալի համար, նրանց կապը լրացյալի հետ թույլ է, կան լրացումներ էլ, որոնց առկայությունը տվյալ լրացյալի համար պարտադիր է, նրանց կապը լրացյալի հետ ուժեղ է։ Կան լրացումներ, որոնք բնորոշ են տվյալ խոսքի մասի բոլոր բառերին, կան լրացումներն էլ, որ բնորոշ են ներխոսքիմաստային այս կամ այն խմբի բառերին միայն։ Օրինակ՝ ձևի պարագա, ներգոյականով տեղի պարագա կարող են առնել բոլոր բայերը, իսկ, ասենք, հանգման, անջատման (բացառման) խնդիրները կարող են առնել այդ խոսքի մասի մի խումբ բայեր միայն։ Այս հիմքով էլ ընդունված է կառավարման երկու տեսակ՝ ուժեղ և թույլ, կամ պարտադիր և ոչ պարտադիր, մասնավոր (հատուկ) և ընդհանուր։

Ուժեղ (պարտադիր, հատուկ) կառավարման դեպքում լրացումը լրացյալի թելադրանքով պարտադրաբար արտահայտվում է այս կամ այն հոլովով կամ կապային կապակցությամբ։ «Ուժեղ է կոչվում այն կառավարությունը, որի դեպքում լրացյալը պահանջում է որոշակի հոլովով կամ կապով ձևավորված խնդիր («Դիմանալ վշտերին», «Ակնածել ավագներից»)[9]։ Գ. Ջահուկյանը նշում է նաև պարտադիր և ոչ պարտադիր կառավարում։ Պարտադիր կառավարումն ուժեղ է, ոչ պարտադիրը՝ թույլ։ Օրինակ՝ ներգործական սեռի բայերը պարտադրաբար առնում են ուղղականաձև կամ տրականաձև ուղիղ խնդիր, իսկ կրավորական սեռի բայերը՝ պարտադրաբար ներգործող խնդիր՝ բացառական (երբեմն էլ տրական, գործիական) հոլովով կամ կողմից կապով արտահայտված։ Օրինակ՝ հարգել խոսքը, ուսուցչին, ընդունել առա-

[9] Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 424—425։

չարկը, աշակերտին, սիրվել մորից (մոր կողմից), ծածկվել ձնով, տրվել երգին, հեռանալ ընկերոջից, մոտենալ ընկերոջը, մասնակցել ընտրությանը, ուրախանալ երեխայով, պարտեզով, կարդացնել աշակերտին, խաղացնել երեխային, թոցնել գնդակը և այլն։

Ուժեղ կառավարման դեպքում հոլովով կամ հոլովակապային կապակցությամբ արտահայտված տվյալ լրացումը հատուկ է միայն որոշ խմբի բառերի։ Օրինակ, տրականով անուղղակի խնդիր առնում են միայն առանձին խմբի բայեր, իսկ բացառականով՝ մի այլ խմբի։ Կարելի է կազմել այդ խմբերի բայերի ցուցակը։

Ուրեմն տրականով, բացառականով անուղղակի խնդիրները հատուկ են միայն առանձին խումբ բայերի, միայն նրանք կարող են առնել այդ լրացումները, դրա համար էլ այդ դեպքում կառավարումը կոչվում է ուժեղ (պարտադիր կամ հատուկ)։

Թույլ կառավարման դեպքում, ինչպես ասվեց, տվյալ լրացումը հատուկ կամ պարտադիր չէ իր լրացյալին, կարող է և չլինել։ Այդ լրացումը կարող են առնել տվյալ խոսքի մասին պատկանող բոլոր բայերը, ուստի ընդհանուր լրացում է։ Օրինակ՝ չափի (շատ, քիչ), ձևի (արագ, դանդաղ), ներգոյականով տեղի (գյուղում), ժամանակի (այսօր) պարագաները, միջոցի անուղղակի խնդիրը կարող են ստանալ բոլոր բայերը՝ անկախ բառային և քերականական իմաստից*։ Ուրեմն դրանց կապը լրացյալի հետ թույլ է, պարտադիր չէ, դրանք ընդհանուր լրացումներ են։ Երբ ասում ենք՝ Նա գնաց, պարտադիր չէ, որ նշենք, թե ինչով գնաց, ուր գնաց, խոսողը կարող է նույնիսկ չիմանալ։ Կամ՝ Նա վերադարձավ, կարող է նշվել, թե ե՞րբ, ինչո՞վ, որտեղի՞ց, ո՞ւր, ինչպե՞ս։ «Թույլ կառավարման դեպքում լրացումների հոլովական ձևավորումը ավելի շատ կախված է նրանց գործառույթներից, շարահյուսական ձևից ու պաշտոնից, այսինքն՝ լրացյալի և լրացման զուգորդումը աղատ բնույթ է կրում, և լրացյալը կարող է զուգակցվել տարբեր հոլովներով ու կապերով խնդիրների հետ (Գնալ ընկերներով, տուն, քաղաքից)[10]։

Ուժեղ (պարտադիր) կառավարումը լինում է միակի և բազմակի։ Միակի է այն ուժեղ կառավարումը, որի դեպքում լրացյալը պահանջում է մեկ լրացում, օրինակ՝ զժգոհել հարցի լուծումից, հպարտանալ ունեցածով, ընտելանալ ցրտին, վախենալ հետևանքից և այլն։ Բազմակի է այն ուժեղ կառավարումը, որի դեպքում լրացյալը պահանջում է մեկից ավելի լրացում, օրինակ՝ գիրքը հանձնել աշակերտին, մարդիկին գնացքով ուղարկել մրցման և այլն։

* Միշտ չէ, որ սրանք թույլ խնդրառություն են կազմում, որոշ դեպքերում նրանց կապն ուժեղ է լրացյալի հետ։

[10] Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 424, 425։

Արժույթ։ Վերը նշված միակի և բազմակի կառավարումով էլ բնորոշվում է գերադաս անդամի արժույթը։ Սովորաբար արժույթը վերագրվում է բային, թեև ածականը, մակբայը, բայանունը նույնպես ունեն արժույթի քերականական կարգը։ [«Արժույթը բայի կապակցելիությունն է ենթակայի, խնդիրների ու պարագաների հետ»[11]։ Արժույթը կարող է հանդես գալ որպես՝ ա) ենթակառություն (ենթակա ստանալը կամ չստանալը), բ) խնդրառություն (տարբեր տիպի խնդիրներ ստանալը կամ չստանալը), գ) պարագառություն (տարբեր տիպի պարագա ստանալը կամ չստանալը)։]

Հայերենում ենթակա չեն առնում միայն անենթակա նախադասություն կազմող մի քանի բայեր, որոնց երբեմն անվանում են միադիմի, ինչպես՝ անձրևել, նստվել, խոսվել, երեկոյանալ, լուսանալ, ձնել և այլն։

Ստորոգառու բայերը լինում են՝ ա) անանցողական՝ դառնալ, եմ, երևալ, թվալ, հանդես գալ, ձևանալ, մնալ և այլն։ Օրինակ՝ քարը հող դարձավ, թուփը նրա աչքին շուն երևաց (գայլ թվաց), նա միամիտ էր ձևանում, նա հանդիսանում էր իրենց խմբի առաջնորդը և այլն։ բ) Անցողական՝ անվանել, առաջադրել, դարձնել, ընտրել, նշանակել, օծել, կարգել և այլն։ Օրինակ՝ մեկին պաշտպան նշանակել, դեպուտատ առաջադրել, նախագահ ընտրել (նշանակել) և այլն։ Մնացած բայերը կարող են լինել թե խնդրառու, թե պարագառու։

Պարտադիր խնդիր առնելու (ուժեղ խնդրառություն) հատկությամբ բայերը լինում են զրոարժույթ, միարժույթ, երկարժույթ, եռարժույթ և բազմարժույթ։

Զրոարժույթ բայեր են համարվում միադիմի բայերը՝ ամպել, անձրևել, ձնել, ցրտել, երեկոյանալ, լուսանալ, մթնել և այլն։

Միարժույթ են՝ ա) անանցողական ստորոգառու բայերը՝ եմ, դառնալ, հանդիսանալ, ձևանալ, մնալ, լինել, երևալ, կտրել և այլն։ Օրինակ՝ միամիտ ձևանալ, քար կտրել, հող դառնալ (դարձնել), առաջնորդ հանդիսանալ, գայլ թվալ, խելոք լինել և այլն։

բ) Մի շարք անանցողական (չեզոք սեռի) բայեր՝ բայ+տրական մասնակաղապարով՝ հնազանդվել, վարժվել, ընտելանալ, ենթարկվել, սովոր լինել մի բանի, մեկի և այլն։ Լրացումը պատասխանում է ո՞ւմ, ինչի՞ հարցերին։ Օրինակ՝ ընտելանալ ցրտին, հնազանդվել ծնողներին (բախտին), վարժվել մի բանի, սովոր լինել շոգին և այլն։ Բայ+բացառական մասնակաղապարով՝ զլխանալ, հեռանալ, տուժել, զժգոհել, զրկվել, ամաչել, խռովել և այլն։ Լրացումը պատասխանում է ումի՞ց, ինչի՞ց հարցերին։ Օրինակ՝ հեռանալ դպրոցական ընկերներից,

[11] Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 466—467։

զարմանալ համարձակությունից, դժգոհել պատասխանից (քրոջից), խռովել եղբորից և այլն։ Բայ+գործիական մասնակաղապարով՝ հրապարականալ, զբաղվել, հարստանալ, պարծենալ, սքանչանալ, ուրախանալ, լիանալ, հրճվել և այլն։ Բայ+ներգոյական մասնակաղապարով՝ առաջադիմել, թերանալ, դեգերել, թափառել, հմտանալ, խարխափել և այլն։ Օրինակ՝ գրավորում հմտանալ (թերանալ), անտառում դեգերել (թափառել), խավարում խարխափել և այլն։ Բայ+տրական+ենթ մասնակաղապարով՝ համաձայնել, հաշտվել, ամուսնանալ, վիճաբանել, մրցել, կատակել, բարեկամանալ և այլն։ Օրինակ՝ հաշտվել մեկի հետ, ամուսնանալ մեկի հետ, մրցել, վիճաբանել մեկի հետ և այլն։ Բայ+տրական+վրա մասնակաղապարով՝ ծիծաղել, ազդել, բարկանալ, հարձակվել, ներգործել և այլն։ Օրինակ՝ ծիծաղել մեկի վրա, ազդել մեկի վրա, բարկանալ, հարձակվել, ներգործել մեկի վրա և այլն։ Բայ+տրական++դեմ մասնակաղապարով՝ ապստամբել, ըմբոստանալ, ընդվզել, մաքառել, ծառանալ, պայքարել և այլն։ Օրինակ՝ ապստամբել, ըմբոստանալ տիրող կարգի դեմ, մաքառել, ընդվզել, ծառանալ տերերի դեմ և այլն։

գ) Մի շարք ներգործական սեռի բայեր՝ բայ+ուղիղ խնդիր (ուղղականաձև կամ տրականաձև) մասնակաղապարով՝ մթերել, առել, անիծել, հաղթել, մեծարել, ձերբակալել, հասկանալ, շռայլել, առել, սիրել, օրհնել և այլն։ Լրացումը պատասխանում է ո՞ւմ, ի՞նչ հարցերին։ Օրինակ՝ մթերել միս, առել գառդությունը, թշնամուն, անիծել բախտը, շար մարդուն, հաղթել թշնամուն, մեծարել արվեստը, արվեստագետին, ձերբակալել հանցագործին, հասկանալ խնդիրը և այլն։

Երկարժույթ են 1. անանցողական (չեզոք սեռի) բայերը՝ արժանանալ, դիմադրել, օգնել, հանդել, պառկել, անդրադառնալ, դիմել և այլն։ Կառույցն ունի բայ+գործիական+տրական մասնակաղապար։ Լրացումները պատասխանում են ինչո՞վ, ինչի՞ն հարցերին։ Օրինակ՝ իր վեպով պարգևի արժանանալ, վերարկուով պառկել մահճակալին, նոր առաջարկով անդրադառնալ նախորդ հարցին, շարադրանքով հանդել նոր եզրակացության և այլն։ Բայ+բացառական+գործիական կաղապարով՝ հեռանալ, փախչել, խուսափել։ Պատասխանում են ինչո՞վ, ինչի՞ց հարցերին, ինչպես՝ նամակով խուսափում էր հանդիպելուց։ 2. Անցողական ստորոգաու բայերը՝ անվանել, համարել, առաջադրել, օծել, կարգել, ընտրել, կոչել և այլն։ 3. Անցողական (ներգործական սեռի) բայերը՝ ա) բայ+ուղիղ խնդիր+տրական մասնակաղապարով՝ հասցնել, բաժանել, հանձնել, ավորեցնել, ակնարկել, ավերել, բացատրել, պատմել, կամենալ, նվիրել, ընծայել, մերժել, վստահել, հանձնել և այլն։ Օրինակ՝ նամակը հասցնել հասցեատիրոջը, գիրքը նվիրել (ընծայել) աշակերտին, աղջկան իր սերն ակնարկել, խնդրի լուծումը բացատրել աշակերտներին, երեխային առողջություն ցանկանալ (կամենալ, մաղթել և այլն։ բ) Բայ+ուղիղ խնդիր+բացառական մասնակաղապարով՝ փրկել, աղերսել, խնդրել, պահանջել, գրավել, արտագրել, գրկել, իմանալ, խլել, շեղել, վտարել, արձակել, հափշտակել և այլն։ Օրինակ՝ երեխային խեղդվելուց փրկել, մորից թույլտվություն աղերսել (խնդրել, պահանջել), անծանոթից լուր իմանալ, մարդուն գրկել ազատությունից, մարդուց խլել (հափշտակել, վերցնել) ազատությունը և այլն։ գ) Բայ+ուղիղ խնդիր+գործիական մասնակաղապարով՝ պատել, օծել, փաթաթել, սքողել, շրջապատել, շարդել, ուտել, հյուրասիրել, դիտել, հրդեհել, վառել, խուզել, ընդծել, նվագել, նկարել և այլն։ Օրինակ՝ արծաթով գդալը պատել, շիշը թղթով փաթաթել, լեռան գագաթը ամպերով սքողել (ծածկել), մազերը մկրատով խուզել, սարը մատիտով նկարել, նախադասությունը մատիտով ընդգծել և այլն։ դ) Բայ+ուղիղ խնդիր+ներգոյական (մեջ կապով) մասնակաղապարով՝ ապրել, արծարծել, զետեղել, թաղել, խորասուզել, հորել, տեղավորել։ Օրինակ՝ գյուղում խոր վիշտ ապրել, ժողովում հարց արծարծել, ամանում պանիր զետեղել (տեղավորել), հորթը դաշտում խոտ է արածում և այլն։ Երկարժույթ բայերը կարող են ունենալ բայ+ուղիղ խնդիր++որեէ կապով լրացում մասնակաղապարը։ Օրինակ՝ գրքերը բաժանել ընկերների վրա, պանիրը տեղավորել ամանի մեջ, նամակը ընկերոջ միջոցով ուղարկել, գործը մինչև ավարտը վարել, կրակն ուղղել թշնամու դեմ և այլն։

Եռարժույթ անցողական (ներգործական) սեռի բայեր են ա) բայ++ուղիղ խնդիր+տրական+բացառական մասնակաղապարով՝ հանձնել, տրամադրել, ուղարկել։ Օրինակ՝ դեկավարությունը մեկից հանձնել մյուսին, դիմումը կոմիտեից ուղարկել սկզբնական կազմակերպությանը (դիրեկտորին)։ բ) Բայ+ուղիղ խնդիր+տրական+գործիական մասնակաղապարով՝ գցել, բռնել, գամել, շղթայել, մատուցել և այլն։ Օրինակ՝ նամակը փոստով ուղարկել բարեկամին, ապրանքը ձեռքով բարձել ուղտին, մեխը մուրճով գամել պատին, ճաշը մատուցարանով մատուցել պատվիրատուներին, փախստականին պարանով կապել, շղթայել ծառին և այլն։ գ) Բայ+ուղիղ խնդիր+բացառական+գործիական մասնակաղապարով՝ անջատել, գնել, զատել, սրբել, բեռնաթափել, բաժանել, պաշտպանել, ջնջել, թեքել և այլն։ Օրինակ՝ ձեռքով լարը անջատել շղթայից, գործակատարից փողով գնել գլխարկը, մեքենայից շորով հեռացնել փոշին, փայտով գլուխն ազատել հարվածներից, ձեռքով մեքենան շեղել ճանապարհից, ռետինով թվերը ջնջել տետրակից և այլն։

Բազմարժույթ անցողական (ներգործական սեռի) բայեր են՝ տանել, ուղարկել, բերել, առաքել, լցնել, պատմել։ Օրինակ՝ մեքենայից խնձորը ձեռքով բաժանել երեխաներին, հավաքվածներին բարձրախոսով հայտնել մրցման արդյունքները, պարտեզից միրգը մեքենայով տանել բարեկամներին, քաղաքից գնացքով շինանյութ բերել գյուղա-

ցիներին, ինքնաթիռով Մոսկվայից խաղալիք բերել երեխային (երեխայի համար), հեռախոսով ընկերոջից լուր ստանալ մրցման արդյունքների մասին, նամակներն ու թերթերը ինքնաթիռով Սիբիրից առաքել բարեկամներին, մեքենայով շտապօգնել հիմքը և այլն։

Ինչպես տեսնում ենք, բազմարժույթ բայերն ունենում են բայ+ +ուղիղ խնդիր+բացառական+գործիական կամ բայ+ուղիղ խնդիր+ +բացառական+գործիական+կապային լրացում կաղապարները։

Առդրություն։ Առդրությունը ստորադասական կապակցության այն եղանակն է, որի դեպքում լրացումը լրացյալին է կապակցվում չհոլովված ձևով կամ առանց կապի միջնորդության։ Առդրական կապակցությունում լրացումն արտահայտվում է չթեքվող խոսքի մասերով (ածական, թվական, մակբայ, չհոլովվող դերանուն, դերբայ, վերաբերական)։ Առդրական կապակցության մեջ կարևոր դեր է խաղում շարադասությունը, այսինքն լրացման տեղը։ Եթե խնդրառության համար շարադասությունը նշանակություն չունի, քանի որ լրացումը լրացյալին է կապակցվում իր քերականական ձևով, ինչպես՝ «Նոր գնած հեծանիվով մոտեցավ բնկերոջը» և «Ընկերոջը նոր գնած հեծանիվով մոտեցավ», ապա առդրության դեպքում լրացման տեղը կարևոր է, որովհետև ո՞ր բառի կողքին դրվեց, նրան էլ կվերաբերի։ Օրինակ՝ «Գեղեցիկ շենքեր են կառուցվում» և «Շենքերը գեղեցիկ են կառուցվում» նախադասություններից առաջինում գեղեցիկը շենքեր գոյականի որոշիչն է, քանի որ նրա վրա է դրված, իսկ երկրորդում կառուցվում են բայի ձևի պարագան է, քանի որ նրան է վերաբերում։ Այդպես էլ՝ մաքուր սենյակի հատակը և սենյակի մաքուր հատակը, երեք գրքի հատորները և գրքի երեք հատորները, փափուկ մահճակալին անկողին գցել և մահճակալին փափուկ անկողին գցել և այլն։

Ուրեմն առդրական կապակցության դեպքում լրացումը ո՞ր բառի կողքին դրվեց, նրան էլ կվերաբերի։

Ինչպես ասվեց, լրացյալին առդրության եղանակով են կապակցվում չթեքվող խոսքի մասերը՝ ածական անունը (բարձրահարկ շենք, կարմիր կտոր, մայրական խնամք, քաղաքային երթևեկություն, երկաթե դռան, ապակեպատ պատշգամբ, բամբակյա կտոր և այլն), թվական անունը (հինգ գիրք, տասը աթոռ, հինգերորդ դասարան, առաջին շարքում, ութական խնձոր և այլն), մակբայը (արագ ընթանալ, վաղուց երազել, տեղ-տեղ մաքրել, խստորեն պատժել և այլն), ենթակայական դերբայը (նամակ գրող երեխան, փողոցով վազող տղան, արագ ընթացող մեքենան, երգող աղջիկը և այլն), հարակատար դերբայը (նստած մարդը, կանգնած մեքենան, ընկած գնդակը և այլն), ածականին, մակբային, թվականին առնչակից (չթեքվող) դերանունները՝ այս, այդ, այն, այսպիսի, այդպիսի, այնպիսի, այսքան, այդքան, այնքան, այսպես, այդպես, այդպես, ինչ-ինչ, ինչ-որ և այլն (այս գիրքը, այսպիսի մարդիկ, այսքան մեքենա, այսքան դրել, այսպես աշխատել, ինչ-ինչ մարդիկ, ինչ-որ մեքենա և այլն), վերաբերական բառերը՝ գոնե (բարի), նույնիսկ (շռայլ), խսկապես (խելոք), կարծես (տղան), երևի (երեխան) և այլն, հաստատական դերբայը՝ բայլելիս (կաղալ), խոսելիս (կմկմալ) և այլն։

Առդրական լրացում կարող են առնել եղանակի իմաստ ունեցող խոսքի մասերից՝ ա) գոյականը՝ խելոք երեխա, համբերատար ուսուցիչ, արագ ընթացք, գեղեցիկ քաղաք, շորս մատիտ, հինգերորդ մարզիկը, կանգնած գնացքը, երգող աղջիկը, բ) ածականը՝ շատ բարի, շափազանց քնքուշ, ավելի զգաստ, ֆիզիկապես առողջ, միշտ ուրախ, երբեմն անհանգիստ, քաջ հայտնի, հիշտ հասկանալի, բոլորովին մերկ և այլն, գ) բայը՝ տեղնատեղը բռնվել, շատ կարդալ, քիչ խոսել, դանդաղ ընթանալ և այլն, դ) մակբայը՝ շափազանց արագ, փոքրիշատե բարեխղճորեն, բոլորովին մոտ, բավական դանդաղ և այլն, ե) որոշ դերանուններ՝ այս բոլորը, այդ ամենը և այլն, զ) որոշ թվականներ՝ միայն հինգ, մոտ հազար, երևի տասը և այլն։

Համաձայնություն։ Համաձայնությունը ստորադասական կապակցության այն եղանակն է, որի դեպքում ստորադաս անդամն ընդունում է գերադաս անդամի քերականական ձևը, այսինքն լրացումը գրվում է այն հոլովով, դեմքով ու թվով, որով արտահայտված է լրացյալը։ Օրինակ՝ գրաբարում նատաղաս գործածությամբ ածականները հոլովվում են՝ թվով ու հոլովով համաձայնելով գոյականին։ Ուրեմն տվյալ դեպքում որոշիչը համաձայնում է որոշյալին։ Այսպես՝ տուն մեծ, տան մեծի, ի տանէ մեծէ, տունք մեծք, տանց մեծաց և այլն, կամ՝ եղբայր (եղբօր) հարազատի, յեղբարէ հարազատէ, եղբարք հարազատք, յեղբարց հարազատաց, եղբարբք հարազատաւք և այլն։ Մ. Արեղյանը ստորադասական կապակցության երկու տեսակ առանձնացնելով (կախում և ներունակություն), մեկնաբանում է. «Ներունակության հարաբերության մեջ լրացումի ցույց տված գաղափարը մտածվում է իբրև իր լրացյալի մեջ արդեն պարունակված և նրա հետ միանում, համաձուլվում է իբրև մի գաղափար. կամ թե լրացումն ըմբռնվում է իր լրացյալի երկրորդ անգամ կրկնությունն ուրիշ բառերով, այնպես որ լրացումն իր լրացյալին ստորադասվելով հանդերձ՝ խոսքի մեջ մի տեսակ նրան հավասար պաշտոն է վարում, կամ թե լծորդվում, զուգորդվում է նրան և իր հոլովման ձևով կախված չէ նրանից, մինչդեռ կախման մեջ, ընդհակառակն, լրացումը բոլորովին տարբեր պաշտոն է վարում, քան իր լրացյալը, և իր հոլովական ձևով կախված է լրացյալից։ Այսպես զուգորդվում է բացահայտիչն իր բացահայտյալին։ «Նմանապես ենթական ներունակ է բայի դեմքին, այսինքն դեմքի լրացում լինելով հանդերձ՝ միանգամայն և զուգադրվում է նրան, երկրորդ անգամ նույն գաղափարն արտահայտելով, ինչ որ բայի դեմքը։ Ենթական ուրեմն

մի տեսակ բացահայտիչ է բայի դեմքի, նրա հոլովը ևս բայի դեմքից չի կախված»[12]։

Ուրեմն Մ. Աբեղյանը ենթակայի և ստորոգյալի հարաբերությունը համարելով ներունակություն՝ նրանց միջև եղած ստորադասությունը տարբերում է այլ անդամների միջև եղած ստորադասությունից, որ անվանում է կախում։ Կախման հարաբերությունում լրացյալն ու լրացումը միանգամայն տարբեր պաշտոններ են վարում, իսկ ներունակական հարաբերությունում ենթական բայ-ստորոգյալի դեմքի արտահայտած գաղափարն է կրկնում, նրա հոլովը բայի դեմքից չի կախված։ Ինչպես ամեն մի ենթակա խնդրում է բայ-ստորոգյալ, այնպես էլ բայ-ստորոգյալը՝ ենթակա։ Այսպես էլ բացահայտիչն ու բացահայտյալը միևնույն առարկան են ցույց տալիս տարբեր բառերով, և բացահայտիչի հոլովը բացահայտյալից չի կախված։

Ուստ քերականները նույնպես, տարբերելով ենթակայի ու ստորոգյալի համաձայնությունը նախադասության մյուս անդամների համաձայնությունից, այն անվանում են արտաքին (ձևային) նմանեցում, հարմարում (уподобление)։

Ենթակայի ու ստորոգյալի, բացահայտիչի ու բացահայտյալի համաձայնության մանրամասն քննությունը թողնելով իրենց տեղում՝ անցնենք շարահյուսության մյուս հարցերին։

[12] Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 298։

ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բառակապակցությունները երկու կամ ավելի բառերի ստորադասական կապակցություն են և արտահայտում են մեկ հասկացություն։ Նրանք միայն անվանողական նշանակություն ունեն, հաղորդակցման դեր չեն կատարում, դրանով էլ տարբերվում են նախադասությունից։ Մյուս կողմից՝ նախադասությունը մեկ բառով էլ կարող է արտահայտվել, իսկ բառակապակցության համար պետք է առնվազն երկու բառ։ Բառակապակցությունը նախադասության շինանյութն է, աղյուսը, բայց տարբերվում է բառից։ Բառը կառույցի նվազագույն միավորն է, իսկ բառակապակցությունը՝ ոչ, նա կազմվում է նվազագույն միավորներից[13]։

Բառակապակցությունները դասակարգվում են՝ ա) ըստ բաղադրիչների կապակցվածության աստիճանի (կայուն՝ շտապ օգնություն, և ազատ՝ սարի ծաղիկ), բ) ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության (գոյականական, ածականական, մակբայական, բայական), գ) ըստ կազմության (պարզ և բարդ)։

Պարզ բառակապակցություններն ըստ բաղադրիչների քանակի լինում են՝ ա) երկանդամ (գիրք կարդալ, պարզ խոսք, խաղողի տերև, արագ վազել և այլն), բ) եռանդամ (գիրքը տալ աշակերտին, գնդակը գցել ցանցը, մեքենայով գնալ գյուղ և այլն)։ Բարդ բառակապակցությունները կազմվում են մեկից ավելի բառակապակցություններից, բայց ունեն մի կենտրոնական անդամ։ Օրինակ՝ ոգևորված լսել Խաչատրյանի երաժշտությունը, նորոգել գրքի մաշված կազմը, գեղեցիկ կառուցել դպրոցի նոր շենքը և այլն։ Առաջին բառակապակցությունը կազմված է ոգևորված լսել, լսել երաժշտությունը, Խաչատրյանի երաժշտությունը բառակապակցություններից, նրանց կենտրոնական անդամն է լսել բայը։ Մյուս բառակապակցությունը բաղկացած է նորոգել կազմը, գրքի կազմը, մաշված կազմը բառակապակցություններից, կենտրոնական անդամն է նորոգել բայը և այլն։

Ինչպես տեսնում ենք, բառակապակցության ստորադաս անդամը

[13] Տե՛ս Վ. Ա. Քոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975, Ս. Աբրահամյան և ուրիշներ, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Երևան, 1976։

կարող է մեկից ավելի լինել՝ արտահայտված թե՛ բառով, թե՛ բառակապակցությամբ։ Այդ ստորադաս անդամները կարող են միմյանց նկատմամբ լինել՝ ա) համադասական հարաբերության մեջ։ Օրինակ՝ մեռնողի չոր, սառած ձեռքը, բուսականությունից զուրկ, անհրապույր քաղաք, խիստ մաքուր և խիստ փայլուն, օսլայած վերնաշապիկը, միշտ կարմիր, ուռած ու տգեղ թշերով (Ա. Շ.) և այլն։ բ) Ստորադասական հարաբերության մեջ։ Օրինակ՝ նեղբնահարկում պահվող ոսկով լի տոպրակները։ Այստեղ նեբբնահարկում-ը պահվող բառի լրացումն է, իսկ ոսկով-ը՝ լի բառի։ Կամ՝ հասարակական շահերի անկեղծ նախանձախնդիր կապակցության գերադաս անդամը նախանձախնդիր բառն է, որոնց լրացնում են անկեղծ և շահերի բառերը, շահերի բառի լրացումն է հասարակական բառը։ Այսպիսին են՝ կանչի հրաշքին հլու (Վ. Տ.), արագ անցած օրերը հիշելով, չափազանց կասկածելի հայացքով կապակցությունները։ գ) Կարող են իրար նկատմամբ քերականական կապի մեջ չլինել։ Օրինակ՝ գիրքը սեղանից շտապ վերցնել, փոստով նամակն ընկերոջն ուղարկել, լուրը ընկերոջը հայտնել, հույզերը թղթին հանձնած, ծաղիկ ու կանաչ մեղմիվ շոյելով (Տերյան) և այլն։

Բազմանդամ բառակապակցություններն ունեն հետևյալ կազմակերները. ա) բառակապակցություն ստորադաս անդամ+գերադաս անդամ, օրինակ՝ մազը (երկար) աղջիկը, ճանչորս օր արձակուրդ, հինգ կտոր հաց, մի տաշտ խմոր, հինգ պարկ ցորեն, սև թասակը գլխին, թավիշե խալաթը հագին, կամ գերադաս անդամ բառակապակցություն+ +ստորադաս անդամ, օրինակ՝ խեղճ հանձնած երկաբե սնդուկին, մարդը զինվորական համազգեստով (ԱՇ), դուրթերում (Զեր) մաքուր ու բուրյան, (Զեր) պարում հեզանազ ու նկուն, ծաղիկներին դեռ չբացված (ՎՏ) և այլն։

բ) Ստորադաս անդամ+բառակապակցություն գերադաս անդամ, օրինակ՝ անծանոթի սպիտակ մազերը, չքնաղ Մասիս սարը, պատմական Դավիթ հսկան, ըմբոստացած բանվոր մարդիկ, շենքի ութերորդ հարկը, հավի թոռրած թևը, համալսարանի գեղեցիկ մասնաշենքը և այլն։ Կամ բառակապակցություն գերադաս անդամ+ստորադաս անդամ։ Օրինակ՝ ողբաձայն երգերը մեր, վիշապաձայն բուքը վսեմ, ծաղկավառեալ պատանին աննկուն։ Լրացումը կարող է արտահայտվել համադաս բառակապակցություններով, ասենք՝ անսպասելի հայտնված և վեճի մեջ մտած երիտասարդը, մեղմ խոխոջալով և արտերը ջրելով անցնող (գետը)։

դ) Միմյանց քերականորեն չկապվող ստորադաս անդամներ+գերադաս անդամ։ Այս դեպքում լրացումներից մեկը կարող է որոշչային հարաբերության մեջ լինել գերադասի հետ, մյուսը խնդրային, երրորդը՝ պարագայական և այլն։ Օրինակ՝ բեմի լույսը ասոիճանաբար մարելուց հետո, գիրքը սեղանից կամաց վերցնելով, ընկերոջը փոստով

շտապ նամակ ուղարկել, գնացքով երեկ երևան ժամանած (բժիշկը), հատակին դանդաղ գլորվող (գնդակը) և այլն։

Կայուն բառակապակցությունները անվանողական նշանակություն ունեն, անվանում են առարկան, երևույթը։ Դրանք բաղադրյալ ձևեր են, որոնք մեկ բառի դեր են կատարում և ուսումնասիրվում են բառագիտության համակարգում։ Օրինակ՝ համաշխարհային շուկա, հավերժյալ արժեք, կոմունիստական աշխատանքի բրիգադ, շտապ օգնություն, Սևանա լիճ, Վահան Տերյան, Պարույր Սևակ, միայնակ մայր, գառան դմակ (խաղող), կարմիր անկյուն և այլն։ Կայուն բառակապակցությունը սովորաբար նախադասության մեկ անդամի պաշտոն է վարում, օրինակ՝ «Գառան դմակ խաղողից լավ գինի է ստացվում» նախադասության ընդգծված բառակապակցությունը խաղողից գոյականի որոշիչն է։ Որոշ կայուն բառակապակցություններ առաջացել են ոչ կայուն բառակապակցություններից։ Ժամանակի ընթացքում նրանք ստացել են փոխաբերական իմաստ և դարձել դարձված։ Օրինակ՝ կոզը հասա, գլուխը կախ, աչքը դուրս, ձեռքը պակաս, ատամին տալ և այլն։

Բառակապակցության մի ուրույն տեսակ է համարվում կապի և նրա խնդրի կապակցությունը, քանի որ կապը հոլովական վերջավորության դեր կատարելով՝ ինքնուրույն անդամ չի լինում։ Կապ+կապի խնդիր կապակցությունն է նախադասության անդամ։

Շարահյուսության համակարգում ոչ կայուն, ազատ բառակապակցություններն են ուսումնասիրվում։

Ազատ բառակապակցությունների բաղադրիչները միմյանց հետ կապվում են ստորադասական կապակցությամբ, արտահայտում են լրացում-լրացյալի հարաբերություն։ Բաղադրիչներից մեկը լրացյալ է, գերադաս անդամ, մյուսը՝ լրացում, ստորադաս անդամ։ Օրինակ՝ խաղաղ կյանք, բուսականությունից զուրկ, մեղմիվ շոյելով, բավական արագ բառակապակցություններում ընդգծված բառերը լրացյալներ են, գերադաս անդամներ, իսկ մյուսները՝ լրացումներ, ստորադաս անդամներ։

Որոշ բառակապակցություններ ունեն իրենց հոմանիշ բարդ բառերը, օրինակ՝ հողի տաքածություն—հողատաքածություն, սարի լանջ—սարալանջ, խոր թափանցող—խորաթափանց, անուշ բույր—անուշաբույր, արագ ընթացող—արագընթաց, բերք տվող—բերքատու և այլն։ Բառակապակցություններում ստորադաս անդամները կարող են լինել՝ ա) մասնատունակ, այսինքն շարահյուսորեն մասնատվող, օրինակ՝ ճանապարհին հանդիպել եղբորը, արտը ժամանակին ջրել։ Այստեղ լրացումները՝ ճանապարհին և եղբորը մասնատվող անդամներ են, առաջինը տեղի պարագա է, երկրորդը՝ խնդիր։ բ) Անմասնատունակ, այսինքն բաղադրիչները տվյալ կառույցում չեն մասնատվում, միասին են

դիտվում իբրև մեկ անդամ, օրինակ՝ մազերը երկար աղջիկը, մարումը երկարած երիտասարդը, թեը կոտրած հավը, բանը ուսին մտնել ներս, հինգ տարի սովորել և այլն։ Այստեղ ընդգծված կապակցությունները չեն մասնատվում, միասին են նախադասության մեկ անդամ՝ որոշիչներ, ձևի պարագա, ժամանակի պարագա։

Բաղադրյալ թվականները (հազար ինն հարյուր քսանմեկ, հարյուր տասնհինգ և այլն) հարադրավոր բարդություններ են, ուստի բառակապակցություններ չեն։

Բառակապակցությունների կառուցվածքը բխում է գերադաս անդամի խոսքիմասային պատկանելությունից և բառիմաստից։ Օրինակ՝ գրի ընթերցումը և գիրք ընթերցելը, շենի կառուցումը և շենք կառուցելը, արագ վազք և արագ վազել, հիվանդի բուժումը և հիվանդ բուժելը բառակապակցությունների ստորադաս անդամը բխում է գերադաս անդամի խոսքիմասային պատկանելությունից, հիշյալ դեպքերից առաջիններում լրացումը գոյականի հետ կազմում է որոշչային բառակապակցություն, իսկ երկրորդներում բայի հետ՝ խնդրային, պարագայական։ Բայը՝ զգացմունքներով ճարտանալ և զգացմունքներով ճարուտ, մեղքերից ազատվել և մեղքերից ազատ, գրքերով զոհանալ և գրքերով զոհ, գնահատականով ուրախանալ և գնահատականով ուրախ բառակապակցությունների կառուցվածքը բխում է գերադաս անդամի բառիմաստից, ուստի թե՛ բայական, թե՛ ածականական բառակապակցությունները միևնույն կառուցվածքով են, միևնույն խնդրային, պարագայական կաղապարն ունեն։

Բառակապակցությունների բաղադրիչները կապակցվում են երկու եղանակով՝ կառավարումով՝ խնձոր հավաքել, ընկերոջը օգնել, գնացքով գնալ, կյանքից քաղցր, ունեցածով զոհ, դեպի դպաթը, գնացքից արագ և այլն, և առդրությամբ՝ կանաչ տերև, բրդե շալ, հինգ շենք, նստած խոսել, արագ վազել և այլն։

Բառակապակցությունները նախադասության մեջ ունեն զանազան գործառություններ, կիրառվում են զանազան պաշտոններով՝ ենթակա, որոշիչ, հատկացուցիչ, խնդիրներ, պարագաներ և այլն։ Օրինակ՝ «Ձեր սիրում արագ կարդալ»։ «Արագ կարդալով գիրքը վերջացրեց»։ «Արագ կարդալուց գլուխը ցավեց» նախադասություններում ընդգծված բառակապակցություններից առաջինը ուղիղ խնդիր է, երկրորդը՝ ձևի պարագա, երրորդը՝ պատճառի։ Իսկ «Լսել կանաչ անտառի խշշոցը»։ «Կանաչ անտառով տարվել»։ «Հիանալի է կանաչ անտառը»։ «Դուրս եկանք կանաչ անտառ տեղամասից»։ «Ապրում ենք կանաչ անտառում» կառույցների ընդգծված բառակապակցություններից յուրաքանչյուրը մի պաշտոն է կատարում՝ հատկացուցիչ, անուղղակի խնդիր, ենթակա, որոշիչ, տեղի պարագա։

Բառակապակցություններն ունեն ընդհանրապես կայուն շարադասություն՝ ստորադաս անդամ+գերադաս անդամ կաղապարով, այսինքն լրացումը դրվում է նախադաս, լրացյալը՝ ետադաս։ Օրինակ՝ մոայլ ծերունին, հոգին գրպանը դրած, արևի վերջին ճառագայթները, հանգուցյալի մահվան երկրորդ օրը (Շիրվանզադե), հովի պես թեթև (Տերյան), ջուր տալ, գիրք գնել, ուրագով տաշել, աթոռին նստել, առավոտյան թեյել, վերջին անգամ տեսնել, զգալի չափով գրգռված, ընտանեկան կյանքից բավական ձանձրացած, մի կտոր հացից զրկել (Շիրվանզադե) և այլն։ Սակայն նախադասության կազմում ոճական նպատակով, հատկապես բանաստեղծություններում, այս կարգը կարող է փոխվել։ Օրինակ՝ ջրերը ջինջ, լիճը լուսե, արևն ամռան, բուքը վսեմ (Չարենց), ցրել շարքերը, թափառել սարերում, հանդիպել կնոգիշերին, խավարում անծայր, գնդերը ցրիվ, երազ մի վառ (Տերյան), ապրել միայն կարմիր գարնան (Հակոբյան), խնդրել տատիկին և այլն։

Բառակապակցություններն անվանվում են գերադաս անդամի խոսքիմասային պատկանելությամբ։ Գերադաս անդամ կարող են լինել գոյականը, ածականը, բայը, մակբայը, մասամբ նաև թվականն ու դերանունը։ Ըստ այդմ էլ բառակապակցությունները լինում են՝ գոյականական, ածականական, բայական, մակբայական, մի երկու առանձին տեսքերում՝ նաև թվականական և դերանվանական։

Գոյականական բառակապակցություններ։ Գոյական գերադաս անդամով բառակապակցությունները կարող են ունենալ հետևյալ կառուցվածքը.

1) Ուղղական հոլովով գոյական+գոյական՝ հետևյալ կաղապարներով, ուր լրացումն ունի որոշչային իմաստ. ա) հատուկ անուն+հասարակ անուն (Արշակ թագավորը, «Արարատ» թիմը, «Վարդան զորավար» գնացքը, Շիրվանզադե վիպասանը և այլն),

բ) հասարակ անուն+հատուկ անուն (նախագահ Դերասիմը, բանաստեղծ Սևակը, վարսավիր Հակոբը, հարեան Ռուբենը և այլն),

գ) հասարակ անուն+հասարակ անուն (արև աղջիկ, արծաթ ձայն, վարդ այտեր, ոսկի ավազ, լույս դաշտեր, արև օր, ցորեն հաց, քար լռություն և այլն)։

2) Տրական (սեռական) հոլովով գոյական+գոյական։ Այս կաղապարում լրացումն արտահայտում է հետևյալ իմաստները.

ա) Պատկանելության։ Լրացումն այն առարկան է, որին պատկանում է լրացյալով արտահայտված առարկան. օրինակ՝ Աբու Հասանի մաշիկները, Եղբոր տնտը (վերարկուն), մարդիկի իրանը, Կիկոսի գլխարկը, երեխայի խելքը, հոր կամքը, մազերի երկարությունը և այլն։ Երբեմն այս կաղապարում լրացումն արտահայտում է նաև վերաբերություն, օրինակ՝ աշակերտի գրիչ կարող է նշանակել նաև աշակերտական գրիչ, հոր կամք՝ հայրական կամք, մոր սեր՝ մայրական սեր և այլն։

բ) Մասի և ամբողջի։ Այս դեպքում լրացումն այն առարկան է, որի մի մասն է կազմում լրացյալի արտահայտած առարկան, օրինակ՝ գրքի թերթը, ծառի ճյուղը, ձեռքի մատները, հացի կտորը, կշեռքի լծակը, տրակտորի թրթուրները և այլն։

գ) Ծագման, պատճառի։ Այս կաղապարում լրացումը ցույց է տալիս այն առարկան, որից ծագում, սերում է լրացյալով արտահայտված առարկան, օրինակ՝ ծաղկի բույրը, օծանելիքի հոտը, ճաշի համը, գընացքի վերադարձը, խարույկի ծուխը, արևի ճառագայթները, Ալիմյանի կտակը, քամու սուլոցը, տերևների խշշոցը, պատերազմի արհավիրքները, վշտի ծիծաղը, Թումանյանի «Անուշը», Տերյանի «Մթնշաղի անուրջները», լրատնկման արդյունքը, ջրհեղեղի ավերածությունները, գնացքի սուլոցը, արևի ջերմությունը, Շահյանի նամակը, երեխայի ճչոցը և այլն։

դ) Նյութի, բաղկացության։ Լրացումն այն առարկան է, որից բաղկացած, կազմված է լրացյալ առարկան, օրինակ՝ փայտի գդալ, գարու հաց, երկաթի դուռ, ձկան ապուր, ծաղիկների փունջ, գայլերի ոհմակ, աստղերի բույլ, թռչունների երամ, բանվորների կոլեկտիվ և այլն։ Այստեղ տրականով (սեռական) արտահայտված լրացումները հոմանիշ են նույնանուն ածականներին։ Այսպես՝ փայտի գդալ—փայտյա գդալ, գարու հաց—գարե հաց, երկաթի դուռ—երկաթյա դուռ, գայլերի ոհմակ—գայլային ոհմակ և այլն։

ե) Հատկացման, նպատակի։ Լրացումն այն առարկան է, որին հատկացված, որի համար նշանակված է լրացյալի արտահայտած առարկան, օրինակ՝ շախմատի տուն, թատրոնի շենք, խմորի տաշտ, մատաղի գառ, ֆուտբոլի դաշտ, թեյի գդալ, ճաշի ափսե, մրգի մատուցարան, երևանի գնացքը, ճաշի գդալ, համերգի դահլիճ, կարի մեքենա և այլն։

զ) Ժամանակի և տեղի։ Լրացումը ցույց է տալիս լրացյալի տեղը և ժամանակը, օրինակ՝ ձեռքի (պատի, սեղանի) ժամացույց, գլխի սանր, մատի մատանի, սեղանի (պատի) օրացույց, աշնան քամի, ամռան արև, կեսօրվա տապ, կովի տարի, արձակուրդի ամիս և այլն։

Այս կաղապարներում երբեմն կարող է լրացման լրացումն արտահայտվել ստացական հոդով, օրինակ՝ բակիս տղաները, դիմացիդ շենքը և այլն։

է) Չափի, միջոցի։ Լրացումը ցույց է տալիս լրացյալի չափը, միջոցը։ Օրինակ՝ մի ռուբլու խաղող, քսան կոպեկի տետր, նավթի լամպ, ածուխի վառարան, ոտքի մեքենա, ձեռքի գնդակ և այլն։

3) Բացառական հոլովով գոյական+ գոյական։ Այս կառուցվածքում լրացումը արտահայտում է հետևյալ իմաստները.

ա) մասնական, համեմատական, օրինակ՝ շաքարից մի կտոր, շատերից մեկը, գյուղերից երկուսը, տղաներից խելոքը, աղջիկներից գեղեցիկը, երդողներից երեքը, խելոքներից խելոքը, դաժանից դաժանը, ճաշից մի գդալ, մեղրից մի կաթիլ, փողից մի ռուբլի և այլն։

բ) Նյութի, բաղկացության, օրինակ՝ կաշվից գլխարկ, աղյուսից միջնապատ, քարից հիմնապատ, փայտից գդալ, թիթեղից տանիք և այլն։

4) Գործիական հոլովով գոյական+գոյական։ Այս կաղապարում լրացումը ցույց է տալիս.

ա) այն առարկան, որ ունի, որով օժտված է լրացյալը, օրինակ՝ վերարկուով երեխան, ծամով աղջիկ, պայուսակով տղա, հրացանով մարդ և այլն,

բ) այն նյութը, որով պատրաստված է լրացյալը, օրինակ՝ ձավարով փլավ, կրով շաղախ, մսով ճաշ, կարտոֆիլով կարկանդակ, թանով ապուր և այլն։

Վերոհիշյալ բոլոր բառակապակցություններում կապակցության եղանակը կառավարումն է (խնդրառությունը)։

5) Ածական+գոյական՝ առդրական կապակցությամբ։ Այս կառույցում ածական լրացումը ցույց է տալիս գերադաս անդամ գոյականի ինչից լինելը, ինչին վերաբերելը, որակային հատկանիշը, ինչպես՝ հրաշալի գիշեր, ամենաերջանիկ մարդը, խաղաղ աշխատանք, ամենամոտ գյուղը, կանաչ դաշտ, ձյունապատ լեռներ, խոշոր իրադարձություն, գեղեցիկ նկար, դպրոցական ծրագիր, աստղային համակարգ, պողպատե կացին, աղյուսե միջնապատ, բամբակյա գործվածք, փայտե ձի և այլն։

Այս կառույցի ստորադաս և գերադաս անդամները արտահայտվում են բառով կամ բառակապակցությամբ, կամ էլ բառով ու բառակապակցությամբ։ Բառակապակցությամբ գերադաս անդամ ունեցող կառույցում որակական ածականը կարող է լրացնել նաև հարաբերական ածական+գոյական կաղապարին։ Օրինակ՝ հոյակապ տուֆակերտ շենք, հրաշալի գարնանային առև, հնագույն պարային արվեստ, անհոգ երիտասարդական զույգ, նորակազմ երգչային խումբ, դուրեկան ձմեռային եղանակ, արտակարգ աղմկոտ ժողով, անսպասելի ջերմ սիրով և այլն։

Ամենա- ածանցով ածականի հետ լրացյալը դրվում է որոշյալ առումով, օրինակ՝ ամենագեղեցիկ աղջիկը, ամենահոտավետ ծաղիկը, ամենախելոք տղան, ամենամոտ գյուղը, ամենահամեղ միրգը և այլն։

6) Թվական+գոյական՝ առդրական կապակցությամբ։ Այս բառակապակցության թվականով արտահայտված լրացումը ցույց է տալիս գերադաս անդամ գոյականի քանակը (հինգ գետ, երկու ճանապարհ) և դասը (հինգերորդ մարզիկը, վեցերորդ դպրոցը, տասնմեկերորդ հանրապետությունը)։ Երկուսից բարձր թվականների հետ գերադաս անդամը կարող է լինել թե՛ որոշյալ, թե՛ անորոշ առումով, թե՛ եզակի,

թե՛ հոգնակի թվով։ Օրինակ՝ քանհինգ ուսանողներ և ուսանող, երեք ընկեր և երեք ընկերներ։ Երկու ընկերներ հրացանն առած անտառ գընացին (ՂԱՂ)։

Երկարության, ծանրության, ժամանակի, տարածական ու հատաքանակի միավորները թվականի հետ դրվում են եզակի թվով, օրինակ՝ քսան տարի, հինգ մետր, երկու կիլոգրամ, երեք տուփ, հազար թև (հավ), հինգ հարյուր գլուխ (ոչխար), տասը լիտր, երկու ձեռք (անկողին) և այլն։ Այս միավորները թվականի հետ կազմում են շարահյուսորեն անմասնատունակ կապակցություն, այսինքն միասին դառնում են նախադասության մեկ անդամ, պատասխանում են մեկ հարցի։ Այսպես՝ ինչքա՞ն՝ երկու ժամ, ե՞րբ՝ անցյալ տարի, քանիսո՞վ՝ երկու ռուբլով, ինչքա՞ն՝ հազար թև (հավ) և այլն։

7) Դերանուն + գոյական։ Լրացումն արտահայտում է հատկանիշ, պատկանելություն։ Գերադաս անդամը դրվում է թե՛ որոշյալ, թե՛ անորոշ առումով, թե՛ եզակի թվով, թե՛ հոգնակի (իմ գիրքը, այս գրքերը, ինչ-որ գյուղեր, ինչ-ինչ հնարքներ, քո աշխատանքները և այլն)։ Սակայն բոլոր, որոշ դերանունների հետ գերադաս անդամը դրվում է միայն հոգնակի թվով (որոշ մարդիկ, բոլոր գյուղերը), իսկ ոչ, ամբողջ, յուրաքանչյուր, ամեն մի դերանունների հետ՝ եզակի (ոչ գյուղը, ամբողջ ուսանողությունը, յուրաքանչյուր ուսանող և այլն)։

Սովորաբար դերանուն ստորադաս անդամը ծավալուն չի լինում, արտահայտվում է մեկ բառով, որովհետև դերանունները սովորաբար լրացումներ չեն ընդունում։ Գոյականի հետ բառակապակցություն չեն կազմում, այսինքն գոյականի լրացում չեն լինում այսպես, այդպես, այնպես, նույնպես ցուցական, երբ, որտեղ հարցա-հարաբերական դերանունները, ինչպես նաև անձնանիշ դերանունների ուղիղ ձևերը (ես, դու, նա, ով, ոչ ոք, սա, դա, նա և այլն)։

8) Դերբայ + գոյական։ Գոյականին լրացում կարող են լինել անկախ դերբայները, որոնք նախադասության մեջ ինքնուրույն կիրառություն ունեն։ Դրանք են անորոշը, հարակատարը և ենթակայականը։ Ըստ այդմ էլ դրանցով կազմվում են հետևյալ կաղապարները.

ա) տրական հոլովով անորոշ դերբայ + գոյական։ Լրացումը ցույց է տալիս, թե ինչի է հատկացվում, ինչի համար է գերադաս անդամառարկան (խմելու ջուր, ուտելու միրգ, գրելու թուղթ)։ Գրեթե նույն իմաստն է արտահայտում երկրորդ ապառանի դերբայը (հագնելիք վերարկու, կարդալիք գիրք և այլն),

բ) ենթակայական դերբայ + գոյական։ Լրացումը ցույց է տալիս մի բան անող կամ լինող առարկան, օրինակ՝ վազող ձի, երգող տղա, ներկող վարպետ, արտասանող, ասմունքող դերասան, ծածանվող դրոշակ, ալեկոծվող ծով և այլն,

գ) հարակատար դերբայ + գոյական։ Լրացումը ցույց է տալիս, թե

ինչ վիճակում է գերադաս անդամ գոյականը, օրինակ՝ քնած երեխա, նստած ուսանող, պառկած շինական, կանգնած պահակ, կոտրած աթոռ, աշխարհ տնսած մարդ և այլն։

Անորոշ դերբայը խնդրառական, իսկ մյուսները առդրական կապակցությամբ են կապվում լրացյալին։

Բայանուն գոյականներով բառակապակցություններ։ Բայանուն գոյականը, ի տարբերություն անձ, իր ցույց տվող գոյականների, արտահայտում է գործողության առարկայացված հասկացություն և, որքանով էլ նա գոյական է, իր մեջ պահպանում է գործողության իմաստ։ Հանդիպում, կառուցում, խոսք, կոիվ, բաժանություն, զեկուցում բառերը գոյականներ են, բայց պահպանել են հանդիպելու, կառուցելու, խոսելու, կռվելու, բաժանվելու, զեկուցելու բայական իմաստները։ Այդ է պատճառը, որ բայանունը բառակապակցության մեջ այնպիսի լրացումներ է ընդունում, որ հատուկ են բային, և բառակապակցությունն էլ բայական կապակցության կաղապար է ունենում։

Բայանուն գոյականով կապակցություններն ունեն հետևյալ կաղապարները.

1. Բայանուն + ուղղական (հայցական) հոլովով լրացում։ Լրացումը ցույց է տալիս ուղղորման տեղը և ժամանակը։ Օրինակ՝ մուտքը թատրոն, ժամանումը Մոսկվա, մեկնումը արտասահման, վերադարձը հայրենիք, հանդիպում ցերեկը, հարձակում գիշերը և այլն։

2. Բայանուն + տրական (սեռական) հոլովով լրացում։ Ստորադաս անդամ գոյականն արտահայտում է հետևյալ իմաստները՝

ա) հանգման, մատուցման. օրինակ՝ նվեր, պարգև, խոսք, խորհուրդ (որդուս), ճիմում, առաջադրանք, խնդրանք (բանվորներին), հանդիպում ընկերոջը և այլն,

բ) տեղի և ժամանակի. օրինակ՝ հանդիպում աշնանը Արագածի զագաթին, ընդունելություն կեսօրին գրողների տանը, հանգիստ լեռան կատարին յուսաբացին, խորհրդակցություն գարնանը արվեստի աշխատողների տանը և այլն,

գ) գործողության առարկայի. օրինակ՝ շենքի կառուցումը, գինու արտահանությունը, ժողովի բացումը, սահմանի խախտումը, բնակարանի վերանորոգումը և այլն։ Այս կաղապարներում լրացումը կարող է նաև գործողությունը կատարողի իմաստ ունենալ։ Սահմանի խախտումը կարող է նշանակել թե՛ սահմանը խախտելը և թե՛ սահմանի խախտվելը,

դ) վերաբերության. օրինակ՝ պատերազմի (մասին) որոշումը, մահվան (մասին) լուրը, աշնան երգը (երգ աշնան մասին), հարսանիքի պատմությունը, ուղղագրության, երթևեկության կարգավորումը, ընության պահպանության որոշումը։ Այս իմաստով լրացումը կարող

է նաև կապային լինել (երգ ընտանիքի մասին, տրակտորիստի մասին պոեմը, հայրենիքի վերաբերյալ զեկուցումը) և այլն։

3. Բայանուն+բացառական հոլովով ստորադաս անդամ։ Լրացումն արտահայտում է հետևյալ իմաստները.

ա) տեղի և անջատման. օրինակ՝ ելք ստեղծված դրությունից, փախուստ բանտից, հիասթափություն ընկերոջից, մեկուսացում հասարակությունից, ազատագրում ստրկությունից, վերադարձը Հալեպից, ողջույնը գյուղից և այլն,

բ) պատճառի. օրինակ՝ տանջանք ցավից, մահ կաթվածից, լաց ուրախությունից, դժգոհություն բացատրությունից, հուզումներ բռնություններից, դող ցրտից և այլն,

գ) վերաբերության. օրինակ՝ զրույց անցյալից, նոր լուր հեղափոխությունից, տեղեկություն բարեկամից (իմա՝ բարեկամի մասին), պատմություն կենդանիների կյանքից և այլն։

4. Բայանուն+գործիական հոլովով ստորադաս անդամ։ Լրացումն արտահայտում է՝

ա) տեղի և ժամանակի իմաստ. օրինակ՝ գիշերով երթևեկություն խճուղով, անցում կամուրջով, հարձակում սարերով, օրերով շրջագայություն փողոցներով և այլն,

բ) միջոցի. օրինակ՝ հարձակում ինքնաթիռներով, մենամարտ սրերով, զեկուցում կոնսպեկտով, փորձ փորձանոթներով, վար գութանով և այլն,

գ) ձևի. օրինակ՝ կառուցում հատուկ մեթոդներով, բացատրություն նոր սկզբունքներով, մոտեցում ուրույն ձևով, խնդրի լուծում նոր տարբերակով և այլն։

5. Բայանուն+ներգոյականով ստորադաս անդամ, որի լրացումը արտահայտում է տեղի և ժամանակի իմաստ. օրինակ՝ վաճառք խանութում, ներկայացում ֆուտբոլի դաշտում, ջրհեղեղ Թուրքիայում, երթ փողոցում, զեկուցում Երևանում, աշխատանքի ավարտումը մեկ օրում, անցումը մի ժամում, կսկիծը սրտում, մահն աչքերում, ափսոսանքը սրտի խորքում, պլանների կատարումը տասնմեկ ամսում և այլն։

Վերոհիշյալ բոլոր կառույցներում, ինչպես երևում է կաղապարներից, բայանուն գերադաս անդամը նախադաս է։ Բառակապակցությունները մեծ մասամբ վերնագրային գործառություն ունեն։ Նրանց կազմիչների կապակցման եղանակը կառավարումն է։

6. Մակբայ ստորադաս անդամ+բայանուն գերադաս անդամ։ Այս կառույցում երբեմն լրացում գերադանցապես հանդես են գալիս ձևի և ժամանակի մակբայները։ Օրինակ՝ դանդաղ քայլ, արագ կառուցում, շտապ վերադարձ, շուտ-շուտ հաճախում, ուշ-ուշ հանդիպում, ուժգին հարված, երևկոյան ադոթք, ներքուստ հուզմունք, հապճեպ որոշում, անվերջ կասկածներ, փոքր ի շատե հաջողություն, կամաց-կամաց կառուցում, քայլ առ քայլ մոտեցում և այլն։ Կապակցության եղանակը առդրությունն է։

7. Կապական լրացում+գերադաս անդամ։ Այս դեպքում ստորադաս անդամի իմաստը բխում է կապից, իսկ կապերի իմաստները բազմազան են։ Լրացյալին կապակցվում են խնդրառությամբ։ Նշենք մի քանիսը։

ա) Համապատասխանության իմաստ. օրինակ՝ հանցանքի չափ, համապատասխան վճիռ, ճշմարտությանը մոտիկ կարծիք, երգի նման ապրուստ, իրադրության համաձայն որոշում, ուղտի չափ համբերություն և այլն,

բ) տեղի և ժամանակի իմաստ. օրինակ՝ խոովություն ընկերների մեջ, խղում ընկերուհիների միջև, ծառատնկում դպրոցի շուրջը, ուղևորություն դեպի Երուսաղեմ, վազք մինչև ավարտագիծ, զրույց մինչև լուսաբաց, խրախճանք ծովի մեջ, ծառի տակ, մինչև կես գիշեր և այլն,

գ) վերաբերության իմաստ. օրինակ՝ զեկուցում ատոմի մասին, բացատրություն արարքի վերաբերյալ, ցուցում տոնի առթիվ, ցուցմունք հանցագործի մասին, զրույց արդի բանաստեղծության շուրջը, երգ գինվորի մասին, Հիբանի որդիների մասին խոսքը (Բակունց), գյուղի հիմնադրման մասին Ավան ամու և Տեր Նորընծայի վեճը (Բակունց) պոեմ սիրո մասին, բանավեճ հոլովների շուրջը և այլն,

դ) պատճառի, ձևի, հիմունքի իմաստներ. օրինակ՝ նկատողություն ուշացման համար, ուշացում փոխադրականի պատճառով, նախատինք առանց իմանալու, ուսուցում առանց դասագրքի, հրաման օրենքի համաձայն, վերաբերմունք ըստ հրամանի, ժամանումը թիկնապահով հանդերձ, առաջխաղացում ընկերոջ շնորհիվ և այլն։

Այս բառակապակցություններն ունեն հետևյալ ընդհանուր կաղապարը՝ կապի խնդիր+կապ+գերադաս անդամ գոյական (հայրենիքի համար կռիվը), կապ+կապի խնդիր+գերադաս անդամ գոյական (հանուն ճշմարտության պայքարը), գերադաս անդամ գոյական+կապ+ +կապի խնդիր (հաղթանակ շնորհիվ հերոսամարտի), գերադաս անդամ+կապի խնդիր+կապ (պլանների կատարումը բարեխիղճ աշխատանքի՝ շնորհիվ)։ Ինչպես երևում է օրինակներից, կապի խնդիրը կարող է նաև լրացումներ ունենալ։

Ածականական բառակապակցություններ։ Ածական անունը հայտնի է արտահայտում, ուստի նրանով կազմված բառակապակցությունների կաղապարները նման են բայական բառակապակցությունների կաղապարներին։ Հաճախ միևնույն արմատից կազմված ածականի ու բայի լրացումները բառիմաստի թելադրանքով, ինչպես ասվել է վերևում, նույն ձևն ունեն, օրինակ՝ պատասխանատվությունից ազատ և պատասխանատվությունից ազատվել, հաջողությամբ ուրա-

խանալ և հաջողությամբ ուրախ, ոտքերից խեղճանալ և ոտքերից խեղճ, ընկերոջից դժգոհել և ընկերոջից դժգոհ, դեպքին տեղեկանալ և դեպքին տեղյակ և այլն։

Ածական դերազան անդամին լրացում կարող են լինել գոյականը, դերանունը, դերբայը, մակբայը և կապը իր խնդրով։ Ըստ այդմ էլ այս բառակապակցություններն ունենում են հետևյալ կազմությունները՝ խնդրառական կապակցությամբ՝

1. Ուղղական հոլովով լրացում+ածական. օրինակ՝ հասակը բարձրը, ճակատը բաց, սիրտը սև, ոտքերը բորիկ, ձեռքերը ներկոտ, մազերը երկար, կուրծքը մագոտ, «աչքերդ կապույտ և հոգիդ շուշան» (Հակոբյան), ձայնը խռպոտ, մի ոտքը կարճ, օձիքը մաքուր, «քայլվածքը մոլոր», «աչքը փակ», «բերանն արնոտ» (Թումանյան), «մազերն արձակ, հայացքը շեղ» (Զարյան) և այլն։

Այս բառակապակցությունների ստորադաս անդամները դրվում են որոշյալ առումով, կապակցությունը կարող է արտահայտել թե՛ պարագայական՝ մազերն արձակ, քայլերը մոլոր, ոտքերը բորիկ (գնալ), թե՛ որոշչային իմաստներ՝ ձայնը խռպոտ (ծերունին), ձեռքերը նեղկոտ (վարպետը), օձիքը մաքուր, հասակը բարձր (ուսուցիչը) և այլն։

Լրացումը ցույց է տալիս, թե ինչին է վերագրված հատկանիշը։ Այս առումով էլ հիշյալ բառակապակցություններում վերադրյալ ձևով առկա է ստորոգման գաղափարը։ Մի ոտքը կարճ, նշանակում է նա, որի մի ոտքը կարճ է, օձիքը մաքուր՝ որի օձիքը մաքուր է։ Սրանց հոմանիշ են շրջուն ձևերը, ուր գոյականը գործիական հոլովով գերազան անդամ է, ածականը՝ ստորադաս։ Օրինակ՝ մազերը երկար-երկար մազերով, ճակատը բաց-բաց ճակատով, քայլերը մոլոր-մոլոր քայլերով և այլն։ Սրանք հաճախ ունենում են իրենց հոմանիշ բարդ բառերը՝ հասակը բարձր-բարձրահասակ, քայլերը մոլոր-քայլամոլոր, սիրտը սև-սևասիրտ, ձայնը խռպոտ-խռպոտաձայն և այլն։

2. Տրական հոլովով լրացում+ածական. օրինակ՝ ինձ անհաս (երազ), գործին անգիտակ, ցավին անտարբեր, դավին անտեղյակ (Թումանյան), միշտ նույն խոհերի շշուկին հլու (Տերյան), գործին ծանոթ, շարին ու բարուն հետամուտ, ժողովականներին հայտնի, դիրքին վայել, կոչումին համապատասխան, դասին պատրաստ, տարիքին մատչելի, երեխային հասկանալի, ընկալելի, ցավերին դավակից, հոգուն խորթ, տարիքին, տոնին վայել և այլն։

Այսպես տրականով լրացում են առնում հետևյալ ածականները՝ արժանի, վայել, պարտական, հատուկ, հարմար, համեմատ, մոտ, կարոտ, նման, մերձավոր, պիտանի, անընտել, համաչափ, պատրաստ, հավասար, մատչելի, համապատասխան, ներդաշնակ, մտերիմ, կարեկից, հասակակից, հմուտ, վրեժխնդիր, անտարբեր, սիրահար, հայտնի, հարկավոր, անհրաժեշտ, ցանկալի, սիրելի, իրազեկ, համակրելի,

գիտակ, հնազանդ, հոժար, վարժ, օտար, խորթ, հարմար և այլն։ Ավելացրած նաև այս ածականների ժխտական ձևերը՝ անծանոթ, անցանկալի, անհարմար, ոչ հնազանդ, ոչ մտերիմ և այլն։ Սրանցից որոշ ածականներ կարող են բացառական հոլովով լրացում էլ ընդունել՝ գործից անտեղյակ, բանից անգիտակ։

3. Բացառական հոլովով լրացում+ածական։ Լրացումն արտահայտում է հետևյալ իմաստները.

ա) համեմատության, բաղդատման. օրինակ՝ ապրելուց քաղցր, սիրուց, երգից, բախտից անուշ, բոլորից տաքարյուն, գնացքից արագ, հին էվերեստից բարձր ու սեպ, բրոնզից խելոք, կրիայից դանդաղ, մայիսից վառ, բարեկամից հարուստ և այլն,

բ) բացառման. օրինակ՝ ունեցվածքից զուրկ, ընկերներից անջատ, շրջապատից հեռու, հսկողությունից ազատ, ծնողներից գաղտնի և այլն,

գ) պատճառահետևանքային. օրինակ՝ ծխից ու մրից սև (պատերը), ուրախությունից խելակորույս, ամոթից լուռ, պատասխանից գրժգոհ, բարեկամից գոհ և այլն,

դ) սահմանափակման. օրինակ՝ մարմնամարզությունից նշանավոր, քիմիայից ուժեղ, լսողությունից թույլ և այլն։

4. Գործիական հոլովով լրացում+ածական։ Այս բառակապակցության լրացումն արտահայտում է հետևյալ իմաստները.

ա) սահմանափակման. օրինակ՝ մտքով պայծառ, հիշատակով տխրալի, հասակով կարճ (բարձր, երկար), տարիքով մեծ (փոքր), արտաքինով գեղեցիկ (տգեղ, գրավիչ, վանող), բնավորությամբ կենսուրախ (սիրելի), զգացմունքներով հարուստ, գործերով հայտնի (նշանավոր) և այլն,

բ) պարունակության, միջոցի. օրինակ՝ գինով լի (բաժակը), եռանդով, գարուններով լի (հոգին), ոսկով լի (տոպրակը), հուզումներով հղի (տարիներ), երեխաներով երջանիկ, թոռներով ուրախ, բարեկամներով հպարտ, բերքով առատ (տարի), խնդությունով լիքը (սիրտ), սիրով լեցուն և այլն։

5. Ներգոյական հոլովով լրացում+ածական։ Լրացումն արտահայտում է հատկանիշի սահմանափակ վերագրում։ Օրինակ՝ աշխատանքում եռանդուն, կռվում վախկոտ, պայքարում համարձակ, թոիչքում վստահ, սովորելում ընդունակ, վագրում ծույլ և այլն։

6. Կապական լրացում+ածական։ Լրացումն արտահայտում է հետևյալ իմաստները.

ա) բաղդատության, որն ունի խնդիր+պես (նման, չափ)+ածական կազմությունը՝ հոգու չափ անհուն, աստղերի պես հեղանագ գիշերի պես խորհրդավոր, փրփուրի պես ճերմակ, «շիրիմի նման մութ, սառը որպես գերեզման, թեթև որպես վիթ» (Տերյան), հողի չափ բեղուն, մոր

նման նվիրական, մանկան չափ սիրելի, «բարձր ու վճիտ Արարատի սուրբ ձյունի պես» (Կապուտիկյան) և այլն,

բ) վերաբերություն, որն ունի խնդիր+կապ+ածական կազմավորը (ընկերոջ վերաբերյալ հոգատար, երեխայի հետ նուրբ, սիրալիր, շըրջապատի նկատմամբ խիստ, թշնամու հետ դաժան), կամ՝ կապ+խընդիր+ածական կազմավորը (դեպի հարևանը բարի, սառնասիրտ հանդեպ բարեկամը և այլն),

գ) ժամանակի և չափի, որն ունի հետևյալ կազմավորները.

1) կապ+խնդիր+ածական (մինչև մահ երազկոտ, մինչև ծընկները թաց, մինչև ամուսնությունը ջերմ, մինչև լույս արթուն, մինչև կեսօր ցուրտ և այլն),

2) խնդիր+կապ+ածական (ամուսնությունից հետո անտարբեր, կռվից հետո համարձակ, դասերից հետո ազատ, ամուսնությունից առաջ խաղաղ, ճակատամարտից առաջ հանդիստ և այլն)։

Կապական լրացումներին հոմանիշ են համապատասխան հոլովաձևերով լրացումները, օրինակ՝ կարդալու մեջ վարժ և կարդալում վարժ, վազելու մեջ տկար և վազելում տկար, ընկերների համար սիրելի և ընկերներին սիրելի, ըստ արտաքինի գեղեցիկ և արտաքինով գեղեցիկ և այլն։

Առդրական կապակցությամբ՝

7. Ածական+ածական։ Այս կառուցում լրացումը ցույց է տալիս լրացյալի արտահայտած հատկանիշի աստիճանը, չափը, օրինակ՝ անսահման ուրախ, արտակարգ աշխույժ, բացառիկ հիշաչար, խիստ կարգապահ, ծայրահեղ բծախնդիր, բացարձակ գեղեցիկ, անտանելի զոռող, դժվար իրագործելի, քաջ տեղյակ, հաղվագյուտ բարի, կատարյալ խելառ, շատ ճարպիկ, լավ գիտակ, անսպասելի բարի (երկար, չար, խելոք, դաժան) և այլն։

Ծանոթություն—Որոշ քերականներ ածականին ինչպես և բային ու մակբային լրացնող ածականը համարում են մակբայ։

8. Մակբայ+ածական։ Այս բառակապակցության լրացումները ցույց են տալիս գերազանց անգամ ածականի արտահայտած հատկանշի

ա) չափն ու քանակը. օրինակ՝ (մարդու հասակից) հաղիվ բարձր, չափից դուրս ճարպիկ, չափազանց հետաքրքիր, վերին աստիճանի գրգռեցուցիչ, մի փոքր խոնավ, բավական մեծ (ականավոր, տաղանդավոր), հազիվ լսելի, կրկնակի ուշադիր, կիսով չափ մերկ, բոլորովին մերկ, չափազանց ամուր, երիցս նեղվյալ, խիստ մաքուր (փայլուն), հիմնովին նորոգ, ամբողջովին թաց և այլն,

բ) ժամանակը. օրինակ՝ դեռ միամիտ (թույլ, բարակ), տակավին մոտիկ (երեխայական), արդեն անհետաքրքիր (պարզ, ջերմ), միշտ հարուստ (օտար, ուժեղ), հավիտյան երախտապարտ, նորից անբախտ

ու մենակ, այլևս անզոր, առայժմ թեթևսոլիկ, երբեմն խոր ու մթին (աշխույժ, պայծառ), հավետ բարեկամ ու ընկեր և այլն,

գ) սահմանափակումը. օրինակ՝ ֆիզիկապես ուժեղ, ներքուստ հուզված, տեսականորեն ճիշտ, արտաքուստ խաղաղ և այլն։

9. Թվական+ածական։ Առհասարակ թվական անունը գոյականի հետ է գործածվում, ածականի հետ շատ քիչ է հանդիպում։ Այդ հանդիպող բառակապակցություններից են՝ հինգ օրական, քառասուն տարեկան, քսան զույգ, հինգ հարկանի, յոթ գլխանի, չորս ոտանի և այլն, որոնք չեն մասնատվում, բարդությունների հոմանիշներ են, ինչպես՝ յոթգլխանի, չորքոտանի, հինգհարկանի և այլն։

10. Դերբայ+ածական։ Իբրև ածականի լրացում հանդես է գալիս անորոշ դերբայը թեք ձևերով։ Օրինակ՝ գովելու արժանի, ցատկելու պատրաստ, խնդրելուն համամիտ, կամ՝ վազելում ուժեղ, գրելում վարժ, կռվելում վախկոտ, երգելում անփոխարինելի և այլն։ Առաջին օրինակներում արտահայտում են նպատակի, վերջին օրինակներում՝ սահմանափակման իմաստներ։ Լրացյալին կապակցվում են խնդրառությամբ։

11. Դերանուն+ածական։ Իբրև ածականի լրացում հանդես են գալիս այսքան, այդքան, այնքան, նույնքան, այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի ցուցական և որքան, որչափ, ինչքան հարաբերական դերանունները, որոնք ցույց են տալիս գերազանց անգամի հատկանշի չափը։ Օրինակ՝ այնքան բերկրալի, այդքան չքավոր, այսքան ցածր, այդպիսի խեղդուկ, այդչափ վտանգավոր, այնպիսի փափուկ, որքան դյուրին, որքան դառը, որչափ խեղճ ու անօգնական և այլն։ Սրանք կապակցվում են առդրությամբ։

12. Եղանակավորող բառ+ածական։ Այս կառույցով միայն մի քանի կազմավորներ են հանդիպում։ Օրինակ՝ նույնիսկ բարի, գրեթե մերկ, համարյա խելառ, գեթ լսելի, անշուշտ խելոք, երևի համեստ և այլն։

Թվականի բառակապակցություններ։ Թվական անունը շարակարգում առհասարակ գերազանց անգամ չի լինում, լրացում չի ընդունում։ Բացառություն են կազմում մի քանի բառեր, որոնք դրվելով թվականի վրա, ցույց են տալիս թվականի արտահայտած քանակության համապատասխանություն, մոտավորություն։ Օրինակ՝ գրեթե տասնհինգ տարի, մինչև մի շաբաթ, ճիշտ երեք ամիս, համարյա երկու տարի, ընդամենը քսան ռուբլի, շուրջ հինգ ամիս, գոնե մի երկու շաբաթ։ Գործածական են նաև հինգից չորսը, երկուսից մեկը, տարվա վերջին քսանհինգ օրը, կյանքի վերջին հինգ օրը և այլն։ Վերջին կառույցներում գոյականը դրվում է որոշյալ առումով։

Պետք է նկատել, որ լրացում հանդիսացող առաջին, վերջին բառերը վերաբերում են ոչ միայն թվականին, այլև նրա հետ գործած-

ված գոյականին։ Երբ ասում ենք՝ Երևան ժամանելու առաջին հինգ օրը, առաջինը վերաբերում է ոչ այնքան հինգ թվականին, որքան հինգ օրը բառակապակցությանը։

Դերանվանական բառակապակցություններ։ Քերականության մեջ նշվում են դերանվանական հետևյալ բառակապակցությունները՝ այս բոլորը, այդ ամենը, այն ամբողջը և այլն։

Բայական (դերբայական) բառակապակցություններ։ Լրացումը բայի հետ կապվում է երկու եղանակով՝ խնդրառությամբ և առդրությամբ։ Բառակապակցության բաղադրիչների շարադասությունն ազատ է, լրացումը դրվում է թե՛ նախադաս, թե՛ ետադաս։

Խնդրառությունը պայմանավորված է բայի սեռով և իմաստով։

Բայական բառակապակցություններն ունենում են հետևյալ կառուցվածքները։

Խնդրառական կապակցությամբ (կառավարումով). Գոյական+բայ, որն ունենում է այսպիսի կաղապարներ.

1. Ուղղական (հայցական) հոլովով գոյական+բայ։ Լրացումը ցույց է տալիս՝

ա) գործողության օբյեկտ. օրինակ՝ տեսնել, դիտել, զննել, սիրել, ուսումնասիրել (նկարը), հարգել, գնահատել (աշխատանքը), գուրգուրել, համբուրել (երեխային),

բ) գործողությունից փոփոխվող առարկան. օրինակ՝ վառել, ջարդել, ծռել, կտրատել, ներկել (փայտը), փշրել (ապակին), նենգափոխել, ձևափոխել (մտքերը) և այլն,

գ) գործողության հետևանք. օրինակ՝ նկարել, կառուցել (շենք), գրել, արտագրել, ստեղծել, հրատարակել (բանաստեղծություններ), կազմել, ծածագրել (նախագիծ) և այլն,

դ) այն առարկան, որը տեղաշարժ է արվում. օրինակ՝ տեղափոխել, փոխադրել (պահարանը), գցել, շպրտել, նետել (փայտը), բաց թողնել, արձակել (շունը), հրել գնդակը, շարժել գլուխը և այլն,

ե) այն տեղը, ուր ուղղված է գործողությունը. օրինակ՝ մեկնել մայրաքաղաք, վերադառնալ տուն, ուղևորվել Եվրոպա, գնալ թատրոն, անցնել դահլիճ, վազել, ներխուժել հրապարակ, խցկվել շարքերը և այլն,

զ) գործողության կատարման ժամանակը. օրինակ՝ գիշերն աշխատել, ցերեկը քնել, ցերեկը ոտքի վրա մնալ, հինգ րոպե կանգնել, 24 ժամ քայլել և այլն։ Այստեղ արտահայտված է նաև գործողության ժամանակի տևողությունը, օրինակ՝ երկու տարի նկարել, ինն ամիս սովորել, մեկ ամիս քննություն հանձնել, երկու ամիս հանգստանալ և այլն։

2. Տրական (սեռական) հոլովով լրացում+բայ։ Այս կաղապարում լրացումը կարող է լինել խնդիր և արտահայտել հետևյալ իմաստները.

ա) մատուցման. օրինակ՝ մատուցել, տալ, հրամցնել, մատակարարել, հանձնել, պարգևել, նվիրել (գիրքը քրոջը),

բ) հանգման. օրինակ՝ նայել, կպչել, հպվել, մոտենալ, հանդիպել (ընկերոջը), կցել (գործերին), առաջարկել (որդուն), անդրադառնալ, վերադառնալ (տպագրվածին) և այլն։

Հանգման իմաստ է արտահայտում նաև այն առարկան, անձը՝ ա) որին պատմվում, ասվում է մի բան, դրվում է ասացական բայերի հետ. օրինակ՝ ասել, մեկնաբանել, պատմել, պատասխանել, դիմել, բացատրել (աշակերտներին),

գ) որին մեկնում, պարզում են մի բան, օրինակ՝ ձեռքը մեկնել երեխային, ձեռքերը մորը պարզած, խոսքն ուղղել, հայացքն ուղղել աղջկան, երեսը դարձնել նախագահին և այլն։ Բոլոր այս կառուցներում բայը, երբ ներգործական սեռի է, ունենում է երկու խնդիր՝ ուղիղ (հայացքը, ձեռքը) և անուղղակի (աղջկան, երեխային), այդպես էլ նամակը հանձնել հասցեատիրոջը, հիվանդին դեղ հասցնել և այլն,

դ) որի օգտին կամ ի վնաս արվում է մի բան. օրինակ՝ մնում է յարին, երեխային խաղալիք բերել, գնել, պատրաստել, հայրենիքին ծառայել, երթևեկությանը կարգ սահմանել, ուսուցչին սպասել, պատասխանի ակնկալել, խաղը վերջանալ, հօգուտ մեկին, ի վնաս մյուսին և այլն,

ե) որին վերածվում, համապատասխանում է մի այլ առարկա. օրինակ՝ ռուբլին կոպեկների վերածել, հեղուկը գազի վերածել, քսանը հինգի բաժանել, վեպը ռուսերենից հայերենի թարգմանել, պայմաններին հարմարվել, պաշտոնին համատեղել, մեծերին համեմատվել (նմանվել), ծանոթանալ, ընկերակցել մեծերին, երգերին ձայնակցել, խմբին միանալ, տարիքին համապատասխանել և այլն,

զ) որին մի բան է անել տրվում. օրինակ՝ երեխային կաթ խմեցնել, մեքենավարին մեքենան նորոգել տալ, նրան պարկը շալակել տալ, աշակերտին գրավորն արտագրել տալ, փայտը կոտրել տալ և այլն։

Բայական բառակապակցության տրական հոլովով արտահայտված լրացումը կարող է պարագայական իմաստ ունենալ և ցույց տալ.

ա) նպատակ. օրինակ՝ քեֆի նստել, գնալ ջրի, հացի, վազել գընդակի, շտապել ժողովի, ժամանել նստաշրջանի, իջնել փայտի, մեքենան տանել ավազի և այլն,

բ) տեղ. օրինակ՝ նստել աթոռին, պառկել, ընկնել, փռվել, փուլ դալ, նետվել, ձգվել բազմոցին, մատանին մատին դնել, ձեռքը գլխին, դեպքը ծանրացել է սրտին, նստել է խղճին և այլն, նաև ձեռքը ծոցին, ժպիտը դեմքին, արցունքն աչքերին, թախիծը դեմքին, մատը բերանին, ոտքը ոտքին և այլն։ Վերջին կապակցությունները նաև դարձվածքներ են՝ ձեռքը ծոցին՝ նշանակում է անօգնական, արցունքն աչ-

քերին՝ տխուր, ոտը ոտին՝ հանգիստ, մատը բերանին՝ միամիտ և այլն,

գ) ժամանակ. օրինակ՝ լուսաբացին տուն հասնել, լուսադեմին քընել, արձակուրդներին հանգստանալ, գատկին ձու ներկել, ջրօրհնեքին գնալ, շոգին, կեսօրին, ցրտին, գարնանը, ձմռանը, ամռանը, աշնանը, տաք եղանակին աշխատել և այլն,

դ) ձև ու վիճակ. օրինակ՝ քթի տակին փնթփնթալ, մեջքին, կողքին, փորին պառկել, (օձը) պոչին կանգնել, աչքը ճամփին և այլն,

ե) պատճառ և հիմունք. օրինակ՝ դանգի ձայնին հավաքվել, մեղրի հոտին (արջի) գալը, ձվածեղի սիրուն թավի պոչը պաչել, հայրենիքի կանչին մեկնել (ռազմաճակատ) և այլն։

3. Բացառական հոլովով լրացում+բայ։ Լրացումը ցույց է տալիս այն առարկան՝ ա) որը ելակետային է. օրինակ՝ հեռանալ, անջատվել, բաժանվել, խուսափել, փախչել (գոռոզից), գրկել (հացից), պահանջել (պաշտպանից), ժառանգել, ստանալ (հորից), հաց քամել (քարից, հողից), իմանալ, լսել, հեռացնել (քրոջից) և այլն։ Ելակետային է նաև ծագման, սերման իմաստ արտահայտող լրացումը, օրինակ՝ ծնողներից սերել, ծուլությունից ծագած, առաջացած աղքատությունը, մի հորից, մի մորից լինել, գայլի ցեղից ծնված, ծաղկից մեղր քամել, մեղվից օգուտ ստանալ և այլն,

բ) որը նյութն է, բաղադրիչը. օրինակ՝ կավից, քարից, ցեխից շարված (պատ), տախտակից (պատշգամբ) կապել, փայտից (ման) պատրաստել, ծաղիկներից (փունջ) կապել, կոմերիտականներից (խմբակ) կազմել և այլն,

գ) որի մի մասն է վերցվում (մասնական առարկան). օրինակ՝ խմել ջրից, գրքերից ունենալ, երգերից երգել, հացից ուտել, ծառերից տնկել, աթոռներից գնել և այլն,

դ) որի մասին խոսվում է. օրինակ՝ աշխատանքից, հերոսությունից, երկրաշարժից պատմել, ձեզնից պատմել, հարսանիքից խոսել, կինոնկարից, թատրոնից հարցնել, առողջապահությունից դրուցել, սրբանից-նրանից գրել, գեսից-դենից խոսել և այլն,

ե) որին կառչում, կպչում է մի բան. օրինակ՝ կառչել, կպչել, կախվել ծառից, մնխել, սոսնձել, փակցնել, կախել պատից, կախվել փեշից և այլն,

զ) որը ներգործում է լրացյալի արտահայտած առարկայի վրա. օրինակ՝ քամուց ծածանվել, սիրվել եղբորից, քանդվել երկրաշարժից, հրապուրվել համեստությունից, գովերգվել բանաստեղծից, գովաբանվել դիրեկտորից, ուսուցչից և այլն։ Այս դեպքում բայը միշտ լինում է կրավորական սեռի, քանի որ ներգործման անուղղակի խնդիրը կրավորական սեռի խնդիր է։

է) որը գործողության պատճառն է, հիմունքը. օրինակ՝ մահից

վախենալ, ցրտից դողալ, հիվանդությունից նիհարել, ահից գոմատվել, շտապելուց սխալվել, անքնությունից շշմել, փոշուց խեղդվել, արյունից մուգ դառնալ, հիվանդությունից դեղնել, հարվածից ապշել և այլն, աչքերից գլխի ընկնել, ձայնից, ձեռագրից, հագուստից ճանաչել, քամու ուղղությունից գուշակել, մագաղաթի գույնից ու որակից որոշել (ձեռագրի ժամանակը) և այլն,

ը) տեղն ու ժամանակը. օրինակ՝ Երևանից մեկնել, կեսօրից սպասել, լուսաբացից աշխատել, արտասահմանից վերադառնալ, նաև՝ ժամը հինգից աշխատել, անցյալ տարվանից սովորել և այլն,

թ) սահմանափակման առարկան. օրինակ՝ հորից որբանալ, խելքից թեթևանալ, արտաքինից դուր գալ, արտաքինից ժպտալ և այլն։

4. Գործիական հոլովով լրացում+բայ։ Լրացումը ցույց է տալիս այն առարկան, որը՝ ա) գործողության հիմունքն է. օրինակ՝ մեծի խոսքով շարժվել, կուսակցության կոչով գյուղ մեկնել, հոր կամքով գործել, համագումարի որոշումով ղեկավարվել, գատարանի վճռով առաջնորդվել և այլն,

բ) միջոցը. օրինակ՝ կացնով կոտորել, ատամով կոտրել, աչքով տեսնել, ականջով լսել, ձեռքով գրել, աքցանով հանել, նավով դրոսնել, սուսերով մրցել, վրձինով նկարել և այլն,

գ) որով սահմանափակվում է գործողությունը. օրինակ՝ մտքով սլանալ, զգացմունքներով բավարարվել, եղանակով հիանալ, հոգով արիանալ, բնավորությամբ չարանալ, միտքարել որդիներով, հպարտանալ գործերով, լեզվով հաղթել և այլն։

Այս կապակցություններում առկա է նաև միջոցի իմաստը, օրինակ՝ գործերով հպարտանալ։

դ) Գործող առարկան. օրինակ՝ ծխով լցվել, ձյունով ծածկվել, ծաղիկներով ծածկվել, երեխայով տարվել, ջրով ողողվել (արտերը), շոգերով ողողվել (սենյակը), դրավվել աչքերով, տեսքով տարվել, գեղեցկությամբ հրապուրվել և այլն։ Այս դեպքում նույնպես բայը լինում է անպայման կրավորական սեռի։

ե) Քանակ ու միասնություն. օրինակ՝ ընկերներով հավաքվել (խընջույքի), հարևաններով գնալ (դաշտ), աշակերտներով գնալ (էքսկուրսիա), ընտանիքով մեկնել (ծովափ), սիրով գնալ (դաշտ), սիրով կարդալ (գիրքը), ամոթով մնալ, հաճույքով ընդառաջել, (իր) կամքով համաձայնել և այլն,

զ) գործողության տեղը. օրինակ՝ սարերով ու լայն դաշտերով սլանալ, կամրջով, ջրանցքով անցնել, անցնել ծովերով, դետերով ու լեռներով, փողոցով և այլն,

է) գործողության չափն ու ժամանակը. օրինակ՝ հեռանալ մեկ ժամով, տեղ հասնել գիշերով, թալանել տարիներով, տնից օրերով խուսափել, շարաթներով անհետանալ, ցերեկով ճամփորդել, օրերով թա-

փառել, լույսով ճանապարհվել, դարերով պայքարել, ժամերով սպասել, մթնով հեռանալ, հացը մի ռուբլիով առնել, մի փութ ծիրանով մի տոննա ցորեն առնել, մի մեքենայով մի տուն առնել և այլն,

ը) պատճառը. օրինակ՝ եղբորով երես առնել, փողով հղփանալ, հաջողություններով գոռոզանալ, հարստությունով երես առնել, կեղծիքներով պատժվել, խարդախությունով աչքից ընկնել և այլն։

5. Ներգոյական հոլովով լրացում+բայ։ Լրացումը ցույց է տալիս՝

ա) տեղ. օրինակ՝ ծովում լողալ, բաղնիքում լողանալ, դահլիճում նստել, ճաշարանում ճաշել, օդում տավառնել և այլն,

բ) ժամանակ և ժամանակի տևողություն. օրինակ՝ ժամում հինգ կիլոմետր անցնել, հիշելով անցյալում կատարած գործերը, ապագայում գործելու նոր ծրագրեր, մի օրում 50 մետր փորել, ներկայում խելոքանալ, հնում միամիտ լինել և այլն,

գ) ձև. օրինակ՝ քթում խոսել, երազում տեսնել, աչքում վատ երևալ, մտքում որոշել, հոգու խորքում վիրավորվել և այլն։

6. Կապի խնդիր+կապ+բայ կամ կապ+կապի խնդիր+բայ։ Կապական լրացման գործառությունը բխում է կապի իմաստից, ուստի կարող են արտահայտել զանազան՝ ա) պարագայական իմաստներ.

1) տեղի (մեջ, վրա, առաջ, ուղղությամբ, մինչև, վերև, ներքո, դեմ, տակ). օրինակ՝ հողի մեջ պահել, ձյան մեջ խրվել, անիրավության մեջ ընկնել, մինչև հրապարակ ձգվել, դազանների մոտ քնել, գնալ տրակտորիստի մոտ, լարերի վրա կուչ գալ, խղճի վրա ծանրանալ, պատերի տակ նստել և այլն,

2) ժամանակի (հետո, նախքան, առաջ, մինչև, ժամանակ, ընթացքում). օրինակ՝ դասերից հետո շտապել (տուն), ժողովից առաջ (ստորագրություններ հավաքել), մինչև երեկո, սպասելուց հետո, ընթացքի ժամանակ, ուսման ընթացքում, վազքի ընթացքում և այլն,

3) միասնության (հետ, հանդերձ). օրինակ՝ միմյանց հետ (պայմանագիր կնքել), հոր հետ (թատրոն գնալ), գրքերով հանդերձ վերադառնալ, ընտանիքով հանդերձ հրավիրվել և այլն,

4) հիմունքի, դիջման, պատճառի, նպատակի (ըստ, համաձայն, շնայած, շնայելով, հետևանքով, հակառակ, հանդերձ, պատճառով, շնորհիվ, համար, հանուն). օրինակ՝ ըստ օրենքի առաջնորդվել, ըստ նախագծի կառուցել (շենքը), կողմնորոշվել սկզբունքի համաձայն, կառուցել հակառակ նախագծի, սխալն իմանալով հանդերձ շեղվել (պլանից), խմած լինելով հանդերձ նստել (մեքենայի դեկի մոտ), խմելու պատճառով վթարի ենթարկվել, կռվել հանուն հայրենիքի և այլն,

5) պայմանի (դեպքում, պայմանով, պարագայում). օրինակ՝ հակառակ դեպքում, նման պարագայում, ջերմությունը բարձրանալու դեպքում դիմել (թաղային բժշկին), փոխադրվել նոր աշխատանքի՝ աշ-

խատավարձը բարձրացնելու պայմանով, արտասահման աշխատանքի գնալ բնակարան ստանալու պայմանով և այլն։

բ) խնդրային իմաստներ՝ 1) միջոցի (միջոցով, հետ, կողմից, ձեռքով), օրինակ՝ ոտքի հետ ուղարկել (մի գույգ գուլպա), նամակն ուղարկել ընկերոջ միջոցով, փոքրիկ ծանրոց ուղարկել հարևանի ձեռքով, կրակից շագանակ հանել ուրիշի ձեռքով և այլն,

2) վերաբերության (մասին, վերաբերյալ, առթիվ, նկատմամբ, հանդերձ, շուրջը, կապակցությամբ). օրինակ՝ տոնի կապակցությամբ կազմակերպել (երեկույթ), տոնի առթիվ զեկուցել, պաշտպանության մասին խոսել, ընկերոջ նկատմամբ (հանդեպ) հոգատար լինել, զեկուցել բայի սեռի շուրջը, ուշադիր լինել (երեխայի առողջության նկատմամբ) և այլն,

3) բացառման (զատ, բացի, առանց, չհաշված). օրինակ՝ քայլել ընկերներից զատ, բացի օճառից ու ատամի խոզանակից, ունենալ նաև սրբիչ, դասարան մտնել առանց վերարկուի ու գլխարկի, ունենալ 50 ռուբլի, չհաշված հոնորարի 100 ռուբլին և այլն,

4) նպատակի, սահմանափակման (գծով, տեսակետից, ուղղությամբ). օրինակ՝ դիրեկտորի տեղակալ երեխաներին դաստիարակելու ուղղությամբ, առևտուրը կազմակերպելու գծով (հրահանգիչ), տնտեսական գծով աշխատել, բուժական գծով տեղակալել և այլն,

5) ներգործման (կողմից, ձեռքով). օրինակ՝ դիրեկտորի ձեռքով հեռացվել, շրջկոմի կողմից նկատողություն ստանալ, խնամիների կողմից ուղարկվել և այլն։

Ինչպես ցույց են տալիս օրինակները, բայը կարող է նաև կապական լրացումից առաջ ընկնել։

Գործածական է նաև թվական+կապ+բայ կառույցը, որտեղ լրացումը ցույց է տալիս գործողության չափը։ Օրինակ՝ հաղար անգամ ասված ու լսված բան, քսան անգամ գնալ գալ, հարյուր տարին մեկ երևալ։ Երբեմն կարող է անգամ կապը զեղչվել, օրինակ՝ հարյուր ասել, հաղար ասած և այլն։

Առդրուելիամբ կապակցվող. մակբայ+բայ. մակբայ լրացումները ցույց են տալիս գերազաս անդամով արտահայտված գործողության ժամանակը, տևողը, չափն ու քանակը և ձևը։ Լրացյալի հետ կազմում են հետևյալ կաղապարները.

ա) տեղի մակբայ+բայ. օրինակ՝ ամենուրեք ծաղկել, դեմուդեմ գտնվել, աջ ու ձախ երևալ, ելնել դեմդիմաց, փողոց առ փողոց փնտրել, տեղ-տեղ մաշվել և այլն,

բ) ժամանակի մակբայ+բայ. օրինակ՝ վաղուց հնացած (մաշիկները), այլևս չսպասել (պատասխանի), հավիտյան կապվել, այժմ տեսնել (իր հարազատ երեխաներին), դեռ չլրացրած, արդեն հոգի տեր

գարձած, մանկուց սովորել (երգել), երեկոյան տեսնել, առավոտյան մոռանալ և այլն,

գ) ձևի մակբայ+բայ. օրինակ՝ ակամա շնորհակալ լինել, ենթակաների հետ ընկերաբար վարվել, հազիվ տեղ հասնել, արագ, շտապ, դանդաղ պատմել, հանգամանորեն բացատրել (անելիքները), կուրորեն մոռանալ (հարցին), հանկարծակի հղանալ (միտք), ակամա հրապուրվել և այլն,

դ) չափի ու քանակի մակբայ+բայ. օրինակ՝ յոթնապատիկ խոցված (տիրամայր), երիցս անիծված (մարդիկ), բազմիցս կրկնված, բացատրված (հարցեր), կրկնակի վճարված, չափազանց թուլացած (մարմին), բոլորովին սուզվել (գրի հատակը), զգալի գրգռված, քիչ թե շատ տեսած ու լսած (մարդ) և այլն։

Ածական+բայ։ Բային միայն որակական սահմանափակ ածականներն են լրացում լինում։ Դրանցից են մեղմ, գեղեցիկ, զգույշ, քաղցր, լավ, վատ, խելոք, բարձր, ցածր, երկար, կարճ, խոր, դիպ, ուժեղ, խաղաղ, ծույլ, անզոր, տգեղ, չար, բարի և այլն։ Օրինակ՝ մեղմ սվավալ (արտերը), խաղաղ նայել, համարձակ մոտենալ, անապատելի վրա տալ, ծույլ օրորվել, գեղեցիկ հագնվել, խելոք խոսել, բարձր ու գիլ կանչել, անզոր հեծկլտալ, անզոր վար թեքել գլուխը, գլուխն անուշիկ շարժել, խորունկ սիրել, կարճ կտրել, երկար լռել, դառը կսկծալ և այլն։

Այս բոլոր օրինակներում ածական լրացումը ցույց է տալիս գերադաս անդամի գործողության ձևը, չափը, աստիճանը և սովորաբար լինում է նախադաս։

Դերբայ+բայ։ Այս կառույցում լրացման գործառույթն ունեն անկախ դերբայները անորոշը, հարակատարը և համընթացականը (հարակատարը)։ Այստեղից էլ երանց երեք կազմավորները՝ 1. անորոշ դերբայն իր հոլովներով+բայ. օրինակ՝ մեկնել, գնալ, ժամանել մասնակցելու (գիտաժողովին), երգելով աշխատել, աշխատել դնդնալով, լսելուց ձանձրանալ, մրսելուց դողալ, երգելում հաճույք ստանալ և այլն։

Օրինակներից երևում է, որ անորոշ դերբայ լրացումները ցույց են տալիս գերադաս անդամով արտահայտված գործողության նպատակ (ժամանել մասնակցելու), պատճառ (լսելուց ձանձրանալ), սահմանափակում (երգելում հաճույք ստանալ) և այլն։ Կապակցվում են խնդրառությամբ։

2. Հարակատար դերբայ+բայ։ Լրացումը ցույց է տալիս գերադաս անդամով արտահայտված գործողության ձևը, օրինակ՝ գրկած մրբամրնջալ, նստած պատմել (դասը), կանգնած դիմավորել (դերասանին), սպառկած կարդալ և այլն։

3. Համընթացական դերբայ+բայ. օրինակ՝ տուն մտնելիս գըլ-

խարկը հանել, ընկերոջը հանդիպելիս բարևել, մեծին հանդիպելիս ճանապարհ տալ, հիվանդին վիրահատելիս քրտնել, նկարելիս մտածել և այլն։

Այս կառույցում լրացումն արտահայտում է գերադաս անդամի գործողության ժամանակը, կապակցության եղանակը առդրությունն է։

Մակբայական բառակապակցություն։ Մակբայ գերադաս անդամին լրացում կարող են լինել ձևի, չափի, ժամանակի որոշ մակբայներ, գոյականներ, ածականներ, թվականով կապակցություններ և կապական լրացումներ։ Բուն այդմ էլ ունենում են հետևյալ կառուցվածքի կազմավորները.

1. մակբայ+մակբայ. օրինակ՝ չափազանց արագ, բոլորովին անգիտակցաբար, ներքուստ թշնամաբար, չափազանց դաժանորեն, արտաքուստ ուշադիր, արդեն կոպտաբար, անհեմեմատ դանդաղ, քիչ թե շատ կամովին, փոքր-ինչ արագ և այլն։

Այս կառույցներում լրացում մակբայները ցույց են տալիս գերադաս անդամ (լրացյալ) մակբայի արտահայտած հատկանիշի չափը, ժամանակը, ձևը։ Լրացումը դրվում է գերադաս անդամից առաջ։

2. Դերանուն+մակբայ։ Իբրև լրացում հանդես են գալիս այսքան, այդքան, այնքան, այսպես, այդպես, այնպես, ինչքան, որքան գերանունները, որոնք նույնպես ցույց են տալիս գերադաս անդամ մակբայի արտահայտած հատկանիշի չափը, ձևը։ Օրինակ՝ այնքան արագ, նույնչափ մեքենայաբար, այնքան մանրամասն, այդքան առաջ (գնալ), ինչո՞ւ այդպես շուտ, այդպես հանկարծակի, որքա՞ն կուրորեն, որքան դանդաղ, այդչափ վստահ, այնպես միամտորեն, այնպես արագ և այլն։

3. Թվական+գոյական+մակբայ։ Լրացումը ցույց է տալիս գերադաս անդամ մակբայի արտահայտած ժամանակի տևողությունը։ Օրինակ՝ հինգ օր հետո, երկու օր առաջ, երեք ժամ շարունակ, մեկ տարի անընդմեջ, մեկ անգամ ընդմիշտ և այլն։

4. Ածական+մակբայ։ Այս կառույցում լրացումը ցույց է տալիս հատկանիշի հատկանիշ։ Օրինակ՝ փոքր առաջ, անսահման արագ, բացարձակ վստահորեն, զարմանալի դաժանորեն, անսպասելի մանրամասնությամբ, աներևակայելի արագ-արագ, արտակարգ բարեկամաբար, աններելի կոպտաբար, զարմանալի շտապ և այլն։

5. Բացառական հոլովով լրացում+մակբայ։ Այս կառույցում լրացումը ցույց է տալիս հատկանիշի բաղդատական աստիճանը, դրվում է նախադաս։ Օրինակ՝ բոլորից դանդաղ, նրանից արագ, սովորականից շատ, գնացքից շուտ, կայարանից հեռու, կրիայից դանդաղ, մտքից արագ (դեռ դանդաղ, ծուլորեն), ամենից ավելի (սիրելով) և այլն։ Կապակցման եղանակը՝ խնդրառություն։

6. Խնդիր+կապ+մակբայ։ Այս կառույցում կապական լրացումը

ցույց է տալիս գերադաս անդամ մակբայի հատկանիշի չափը, բաղդատական աստիճանը։ Օրինակ՝ տասն անգամ արագ, լավորակագույն պես ընկերաբար, ինքնաթիռի պես սրընթաց, գիշատիչի չափ դաժանորեն, մոր պես քնքշորեն, քամու չափ մոլեգնորեն և այլն։

Այս երկու կառույցներում ևս լրացումը մյուսների նման նախադաս է, լրացյալի հետ կապվում է խնդրառությամբ։

Շարույթ։ Ասացվածքը անդամատվում, հատուածավորվում է չորս միավորի՝ վանկ, բառ, շարույթ, նախադասություն։ Առաջին երկուսը ուսումնասիրվում են հնչյունաբանության և բառագիտության կողմից, վերջին երկուսը՝ շարահյուսության։ Շարույթը շարահյուսական իմաստակիր միավոր է։ Շարույթի հասկացությունը կապվում է Ֆ. Սոսյուրի անվան հետ, առաջին անգամ նա է սահմանել շարահյուսական այդ հասկացությունը, ըստ որի շարույթը երկու կամ մի քանի իմաստակիր նշանների կապակցությունն է։ Սոսյուրը տարբերում է արտաքին և ներքին շարույթ։ Արտաքինը երկու բառերի կամ բարդ նախադասության բաղադրիչ ստորոգումային կապակցությունների կապակցումն է, իսկ ներքինը՝ բարդ կամ ածանցավոր բառերի բաղադրիչների կապակցումը։ Այստեղից էլ ներքին և արտաքին շարահյուսություն հասկացությունները։ Սոսյուրի շարույթի ուսմունքը հետագայում հիմք դարձավ լեզվի կառուցվածքային ուսումնասիրության։ Հետագայում շարույթին անդրադարձան նաև ռուս քերականները (Շչերբա, Ռեֆորմատսկի, Վինոգրադով) և սոսյուրյան բնութագիրը խմբագրելով սահմանեցին շարույթը։ Վ. Վինոգրադովը, օրինակ, ընդունելով սոսյուրյան սահմանումը, գրում է, թե շարույթային բաժանմամբ արտահայտվում են իմաստային և ոճական նրբերանգներ, թե շարույթի առանձնացումը կապված է հաղորդման ճիշտ իմաստավորման և շարադասության հետ։ Միևնույն կառույցը կարելի է շարույթային տարբեր բաժանումների ենթարկել։ Շարույթը նախադասության անդամ չէ, թեև կարող է համընկնել նրան։

Հայ քերականներից շարույթին անդրադարձել են Գ. Սևակը, Վ. Քոսյանը։ Սևակը միանգամայն այլ բնութագիր է տալիս շարույթին՝ շարույթ համարելով այն կապակցությունը, որը տվյալ կառույցում անբաժանելի է և դիտվում է իբրև նախադասության մեկ անդամ։ Օրինակ՝ մազերը երկար աղջիկ, ինձ տարի սովորել, թեր կոտրված հավ, սպիտակ կովից կաթնատու սև կով, ներս մտավ վերարկուն ուսերին և այլ կառույցներում ընդգծված կապակցությունները շարույթներ են ըստ Գ. Սևակի։

Գ. Ջահուկյանը շարույթը բնութագրում է սոսյուրյան սկզբունքով, սակայն ավելի պարզ ու որոշակի է դարձնում շարահյուսական այդ կարգի սահմանումը՝ այն կապելով հնչերանգի, արտասանական տակտի հետ։ Նախադասության անդամատումը կատարվում է աստիճանաբար՝ մեծ հատվածից փոքրը։ Նախադասությունը բաժանվում է ենթակայի և ստորոգյալի խմբերի, իսկ սրանք՝ ավելի փոքր խմբերի, մինչև անդամներին հասնելը։ Նախադասության նվազագույն միավորները բառերն են։ Անդրադառնալով շարույթի բնութագրին՝ Ջահուկյանը գրում է.

«Նախադասության այն հատվածները, որոնք բաղկացած են մեկ բառից, բառախմբից կամ բառակապակցությունից, և որոնք հանդես են գալիս որպես որոշակի դադարներով և հնչերանգով առանձնացվող միավորներ, կոչվում են շարույթներ։ Շարույթները երկպլանային միավորներ են, որոնց արտահայտության (հնչական) պլանում համապատասխանում են հնչատակտերը (որպես միապլանային միավորներ)։ «Ես Գրիգորի հետ ոչ մի կերպ գյուղ չեմ գնա» նախադասությունը բաժանվում է չորս շարույթի և համապատասխանաբար, եթե իմաստը հաշվի չառնենք, չորս հնչատակտի 1) ես, 2) Գրիգորի հետ, 3) ոչ մի կերպ, 4) գյուղ չեմ գնա։ Սրանցից առաջին շարույթը արտահայտված է մեկ բառով, երկրորդը՝ երկու, երրորդը երեք բառով (բառախմբով), չորրորդը նույնպես երեք բառով (բառախմբով)»[14]։ Այսպիսով, շարույթը տարբերվում է բառից, բառախմբից, բառակապակցություններից, նախադասության անդամից, թեև երբեմն կարող է համընկնել նրանց։ Ուրեմն շարույթը նախադասության՝ որոշակի դադարով, հնչերանգով առանձնացող հատվածն է, որ արտաբերվում է առանձին հնչատակտով։ Օրինակ՝ «Արձակ դաշտերի ամայության մեջ նա մեղմ շշնջաց» նախադասությունը արտասանվում է երեք տակտով, երեք դադարով, ուստի բաղկացած է երեք շարույթից (արձակ դաշտերի—ամայության մեջ—նա մեղմ շշնջաց), «Կարծես թե սիրտ քնքուշ խոսք ասաց նիրհող դաշտերին» նախադասությունը՝ երեք դադարով, ուստի բաղկացած է երեք շարույթից (կարծես թե սիրտ—քնքուշ խոսք ասաց—նիրհող դաշտերին), «Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին» նախադասությունը՝ դարձյալ երեք դադարով, բաղկացած երեք շարույթից (Եվ ծաղիկները—այդ սուրբ շշուկով—իմ սիրտը լցրին)։ Այս օրինակները ցույց են տալիս, որ շարույթը և նախադասության անդամը տարբեր բաներ են, տարբեր են նաև շարույթն ու բառակապակցությունը, բառը, նախադասությունը, բառախումբը։ Ահա մի ընդարձակ նախադասության անդամատումն ըստ շարույթների. «Բնակարանային պայմաններում բույսերի վնասատուների և հիվանդությունների դեմ քիմիական միջոցներով պայքարելիս անհրաժեշտ է խիստ կերպով կիրառել անվտանգության բոլոր կանոնները»։ Այս նախադասությունը, կարելի է ասել, արտասանվում է ութ դադարով, ուստի բա-

[14] Գ. Բ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, էջ 354։

ժանվում է ութ շարույթի՝ 1. բնակարանային պայմաններում—2. բույսերի վնասատուների—3. և հիվանդությունների դեմ—4. քիմիական միջոցով պայքարելիս—5. անհրաժեշտ է—6. խիստ կերպով կիրառել—7. անվտանգության—8. բոլոր կանոնները։ Ասում ենք կարելի է, որովհետև, ինչպես Վինոգրադովն է ասում, միևնույն նախադասությունը կարելի է տարբեր շարույթային բաժանումների ենթարկել, նայած իմաստավորմանն ու շարադասությանը։

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ, ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԼԵԶՎԱԿԱՆ ՄԻԱՎՈՐ

Նախադասությունը լեզվական հաղորդակցման նվազագույն միավոր է, մտքի ձևավորման, արտահայտման և հաղորդման կարևորագույն միավոր։ Որքանով որ մտածողությունը ձևավորվում է լեզվի միջոցով (մարդը լեզվով է մտածում), այնքանով էլ միտքը ձևավորվում է նախադասության միջոցով։ Նախադասությունը միտք է արտահայտում։ Մտածողությունը օբյեկտիվ աշխարհի արտացոլման ակտիվ գործընթաց է, որի արդյունքը միշտ լինում է որևէ միտք։ Մտածողության գործընթացում առաջանում է միտքը, ուրեմն միտքը օբյեկտիվ աշխարհի որևէ երևույթի արտացոլումն է, նրա հաստատումը կամ ժխտումը։ Օրինակ՝ «Արևն այրում է վերևից»։ «Լուսինը դուրս եկավ ամպի տակից»։ «Գյուղացին ավարտել է իր վար ու ցանքը» և այլն։ Սակայն նախադասության բովանդակությունը միայն մտքի արտահայտումով չի սահմանափակվում, նրանում արտահայտվում են նաև խոսողի զգացմունքներն ու հույզերը («Երանի՜ ես երիտասարդ լինեի» (Սգր)։ «Վո՜ւշ, վո՜ւշ, Անուշ, վո՜ւշ, վո՜ւշ, քույրիկ, վո՜ւշ բո սերին, բո յարին» (ՀԹ)։ «Ախ, ո՞ւր է թե այդպես լիներ»։ «Ինչքա՜ն ծաղիկ պիտի բուսներ, որ չբուսավ էս հողին» (ՀԹ), կամային վերաբերմունքը («Եկե՛ք, քույրեր, սեգ սարերի Զքնաղագեղ ոգիներ, Եկե՛ք ջահել սիրահարի Սերը ողբանք վաղամեռ։ Ուրախ անցի՛ր, զվարթ անցիր երկու օրվա էս ճամփեդ» (ՀԹ)։ Նախադասությունը շարահյուսության միջուկն է։ Նախադասության մեջ հանդես են գալիս լեզվի բոլոր մակարդակները՝ բառային, ձևաբանական և շարահյուսական, որոնք փոխադարձաբար կապված են իրար հետ, պայմանավորված միմյանցով։

Նախադասությանը լեզվաբանները զանազան սահմանումներ են տվել։ Նայած թե սահմանողը լեզվաբանական ո՞ր դպրոցին է հարել, ըստ այդմ էլ բնութագրել է նախադասությունը։ Այսպես՝ տրամաբանական դպրոցի ներկայացուցիչները (Ֆ. Ի. Բուսլաև, Գ. Սևակ և ուրիշներ) նախադասությունը նույնացնում են դատողությանը։ Դրանով մի կողմից՝ անտեսվում են հուզական-զգացական և կամային բնույթի նախադասությունները, մյուս կողմից՝ նույնանում են քերականական և տրամաբանական կարգերը, ուստի և՝ լեզուն ու մտածողությունը։ Դա-

տողությունը տրամաբանական միավոր է, նախադասությունը՝ լեզվական։ Ճիշտ է, դրանք փոխադարձաբար կապված են իրար հետ. լեզուն և մտածողությունը, մտածությունն ու խոսքը, միտքն ու նախադասությունը, հասկացությունն ու բառը փոխադարձաբար պայմանավորում են միմյանց իբրև ձև և բովանդակություն, բայց դրանք չեն նույնանում։ Յուրաքանչյուր դատողություն նախադասություն է, բայց ոչ բոլոր նախադասություններն են դատողություն։ Ձևական տրամաբանության հիմնադիր Արիստոտելը ոչ բոլոր նախադասություններն է դատողություն համարում, նրա բնութագրմամբ դատողություն են այն նախադասությունները, որոնք իրականության մեջ մի բան հաստատում կամ ժխտում են։ Նշանակում է զգացական, կամային երանգ ունեցող նախադասությունները դատողություն չեն։ Մանավանդ որ դատողությունը երկանդամ կապակցություն է՝ ենթակա+ստորոգյալ կազապարով, իսկ նախադասությունն ունի նաև երկրորդական անդամներ։ Նույնական չեն նաև դատողության և նախադասության անդամները։ Վերջապես տրամաբանության օրենքները ազգային սահմանափակումներ չունեն, ընդունվում կամ մերժվում են անկախ ազգային պատկանելությունից, որովհետև այդ օրենքները բնորոշում են առհասարակ մարդու տրամաբանելու, մտածելու գործունեությունը, իսկ լեզուն խիստ ազգային երևույթ է։ Այս կամ այն ազգի լեզվական կարգերը տարբերվում են մյուս ազգերի լեզվական կարգերից։ Հայերենի քերականությունը տարբերվում է ռուսերենի քերականությունից, գերմաներենի քերականությունը՝ անգլերենի քերականությունից, որքանով որ դրանք տարբեր լեզուների քերականություններ են։

Հոգեբանական դպրոցի ներկայացուցիչները (Հ. Պաուլ) նախադասության հիմքում դնելով հոգեբանական պատկերացումները՝ այն բնութագրում են իբրև հոգեբանական գործունեության լեզվական արտահայտություն։ Ա. Ա. Շախմատովը հիմք դրեց նախադասության հոգեբանական-տրամաբանական գործոնին։ Կան լեզվաբաններ էլ, որ շարահյուսական կարգերը բնութագրում են ձևաբանական տեսակետից։ Քննադատելով հոգեբաններին՝ նրանք անտեսում են բովանդակությունը և նախադասությունը բնութագրում են իբրև բառերի մի շարք, որի մեջ բառերը ձևական տարրերի միջոցով հարաբերակցվում են միմյանց։

Մ. Աբեղյանը, բնութագրելով հոգեբանական դատողությունը իբրև հոգեբանական պատկերացումների միացում, սահմանում է հոգեբանական ենթական ու ստորոգյալը և բացատրում նրանց և քերականական ենթակայի ու ստորոգյալի տարբերությունը։ Քերականական ենթական ու ստորոգյալը, հակառակ հոգեբանականի, հաստատուն են՝ անկախ նրանից, թե որն է մտքում առաջ պատկերվել, որը՝ հետո։ «Լեզվի ուսումնասիրության գործն է ոչ թե վերլուծել հոգեբանական դատողությունը և որոշել նրա անդամները, այլ բացատրել խոսքի կազմությունը»[15]։ Անդրադառնալով նախադասության բնութագրին՝ նա գրում է. «Խոսքը կամ նախադասությունը բառերով արտահայտված մտածողությունն է, որի մեջ մի ստորոգում է լինում, մի առարկայի վերագրվում է մի հատկանիշ։ Խոսքն, ուրեմն, պարունակում է ամենաքիչը երկու գաղափար՝ ա) մի առարկայի գաղափար, որի վրա մի ստորոգում է լինում, բ) մի հատկանիշի գաղափար, որ ստորոգվում է առարկայի վրա։ Երբ մտքով առարկան բաժանում ենք իր անքաժանելի հատկանիշից (կատարելով օտարում) և հետո այդ հատկանիշը վերագրում ենք տվյալ առարկային, ստացվում է նախադասություն»[16]։ Ինչպես տեսնում ենք, Աբեղյանը նկատի է ունեցել նախադասության թե՛ բովանդակությունը, թե՛ ձևը, բայց այստեղ էլ անտեսված են հաղորդակցական դերը և զգայական, կամային վերաբերմունք արտահայտող նախադասությունները։ «Նախադասությունը,— գրում է Վ. Վինոգրադովը,— խոսքի տվյալ լեզվի օրենքներով քերականորեն ձևավորված ամբողջական միավոր է, որ հանդիսանում է մտքի ձևավորման, արտահայտման և հաղորդման գլխավոր միջոցը»[17]։ Է. Աղայանի սահմանումով «Նախադասությունը քերականական ձևավորումով առարկայի և հատկանիշի ստորոգումն է, որը արտահայտում է ինչպես օբյեկտիվ իրականությունը, այնպես էլ խոսողի վերաբերմունքը այդ իրականության վերաբերյալ»[18]։ Ավելի կարճ է Ս. Աբրահամյանի տված բնութագիրը. «Նախադասությունը ստորոգումով և հնչերանգային ավարտվածությամբ ձևավորված լեզվական հաղորդակցման հիմնական նվազագույն միավոր է»[19]։

Այս սահմանումներում ընդհանուրն այն է, որ առաջին հերթին նշվում է, թե նախադասությունը մտքի միավոր է, միտք է արտահայտում, դրան իրավացիորեն ավելացվում է նաև նախադասության հաղորդակցության դերը, խոսողի զգայական, կամային վերաբերմունքի արտահայտությունը։ Սա է կազմում նախադասության բովանդակությունը։

Նախադասության գործառությունը (ֆունկցիան) հաղորդում կատարելն է, նրա միջոցով մարդիկ հաղորդակցվում են միմյանց հետ, մտքեր են փոխանակում։ Հաղորդակցման այլ միջոցներ էլ կան, սակայն լեզուն, ուստի և նրա հաղորդակցական նվազագույն միավոր նախադասությունը, ամենագլխավոր, հիմնական միջոցն է։

---

[15] Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 354, 359։

[16] Նույն տեղը, էջ 360։

[17] Р. Н. Попов и др., Современный русский язык, М., «Просвещение», 1978, стр. 286.

[18] Է. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1976, էջ 420։

[19] Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, էջ 128։

Մտքի, զգացմունքի արտահայտությունը նախադասության բովանդակությունն է, բայց նա իբրև լեզվական միավոր, քերականական կառույց ունի իր արտահայտության ձևը, լեզվական միջոցը։ Արդ ի՞նչ քերականական ձև, բնորոշ հատկանիշներ ունի նախադասությունը[20],

1. Նախադասությունն արտահայտվում է բառով կամ բառերով ու բառակապակցություններով, որոնք ընդունված որոշակի ձևերի միջոցով հարաբերության մեջ են մտնում միմյանց հետ և կազմում նախադասություն։ Ըստ որում նախադասության յուրաքանչյուր անդամ ավելի բարձր աստիճանի վերացարկում է, քան խոսքի մասը։ Օրինակ՝ վազք, գեղեցկություն, ուսմունք, աթոռ, աշակերտ բառերը, առարկայի իմաստ արտահայտելով ,ընդգրկված են մի խմբի մեջ, մի խոսքի մաս են՝ գոյական, աշխատել, խաղալ, զեկուցել, գնալ բառերը, գործողության իմաստ արտահայտելով, ընդգրկված են մի այլ խմբի մեջ, մի այլ խոսքի մաս են՝ բայ և այլն։ Մինչդեռ շարահյուսության մեջ դրանցից յուրաքանչյուրը զանազան գործառություններ կարող է ունենալ, զանազան կիրառություններ, պաշտոններ և հնարավոր չէ շարահյուսական միայն մի կարգի մեջ ընդգրկել։ Մի ծաղիկ բառը տեսակտեսակ պաշտոններ կարող է կատարել՝ ենթակա, ստորոգելի, որոշիչ, հատկացուցիչ, խնդիր, պարագա։

2. Նախադասությունն ունի իր առանձնահատուկ կառուցվածքը, գրծապատկերը, որը ընդունված է տվյալ լեզվի համակարգում։ Հայերենում ընդունված է ենթակա+ստորոգյալ կամ ենթակա՝ իր լրացումներով+ +ստորոգյալ՝ իր լրացումներով կառուցվածքը, կաղապարը։ Այսպես 1. Ծառերը կանաչել են։ 2. Մեր դպրոցի շենքը նոր է կառուցվել։ 3.—Արամը ո՞ւր գնաց։ 4.—Տուն։ 5.—Դու ի՞նչ ես կարդում։ 6.—«Սամվելը»։ 7.—Հայրդ որտե՞ղ է աշխատում։ 8.—Դպրոցում։ 9. Առաքելը տղային մեքենա է առել, իսկ 10. աղջկան՝ տիկնիկ։ Այս բոլոր կառույցներն էլ հաղորդակցական դեր են կատարում, հաղորդում են անում, ուստի նախադասություններ են։ Սակայն 1, 2, 3, 5, 7, 9 նախադասություններն ունեն հայերենում ընդունված կառուցվածք, կաղապար, ուստի և՝ անկախություն, արտահայտում են ամբողջական, ավարտուն միտք, կարող են առանձին, անկախաբար գործածվել, մինչդեռ 4, 6, 8, 10 նախադասությունները չունեն այդ կառուցվածքը, կաղապարը, թերի են և նախադասություն են դարձել նախորդող նախադասությունների շնորհիվ, նրանք անկախ, առանձին գործածվել չեն կարող, եթե նրանց կտրենք շարահյուսական տվյալ միջավայրից, կդադարեն հաղորդելու ունակությունից, ուստի և՝ նախադասություն լինելուց։ Ուրեմն նախադասությունն արտահայտում է ամբողջական, ավարտուն բովանդակություն,

[20] Ն. Պառնասյան, Նախադասության քերականական կարգերը ժամանակակից հայերենում, Երևան, 1986։

նա անկախ միավոր է, ունի ընդունված կառուցվածք, կաղապար և կարող է ինքնուրույն հանդես գալ։

3. Նախադասության մյուս առանձնահատկությունը եղանակավորությունն է, որով արտահայտվում է նախադասության բովանդակության հարաբերությունը իրականության հետ և խոսողի վերաբերմունքը հաղորդվածի նկատմամբ։ Սովորաբար հաղորդման բովանդակությունը մտածվում, ըմբռնվում է կամ իբրև ռեալ, գոյություն ունեցող իրականություն (Ձին վազում է։ Արտը կանաչել է։ Մեքենան նոր է և այլն), կամ՝ ոչ ռեալ, այսինքն գոյություն չունեցող, բայց ցանկալի, անհրաժեշտաբար կամ պարտադիր կերպով գոյություն ունենալիք իրականություն (Երանի՜ հիմա սարում լինեի։ Թո՛ւյլ տվեք առաջ անցնել։ Բա՛ց թողնք ձին։ Զգուշացե՛ք, հեղեղը կտանի և այլն)։ Այս օրինակներում արտահայտված է եղանակավորում։ Ըստ որում առաջին դեպքում մենք գործ ունենք օբյեկտիվ եղանակավորման հետ, որը ցույց է տալիս հաղորդման բովանդակության հարաբերությունը իրականության հետ, երկրորդ դեպքում՝ սուբյեկտիվ եղանակավորման, որը ցույց է տալիս խոսողի վերաբերմունքը հաղորդման բովանդակության նկատմամբ։

Եղանակավորման արտահայտության շարահյուսական միջոցներն են հնչերանգը, շարադասությունը, ձևաբանական միջոցներն են բայի խոնարհման եղանակները, ձայնարկությունները, վերաբերական բառերը, մակբայները։

Պետք է տարբերել բայի ձևաբանական եղանակը շարահյուսական եղանակից։ Ձևաբանական եղանակը միանշանակ է. գրում եմ-ը սահմանական եղանակի բայ է, գրելի-ն՝ ըղձական, կգրեմ-ը՝ ենթադրական, պիտի գրեմ-ը՝ հարկադրական, գրի՛ր-ը՝ հրամայական։ Իսկ շարահյուսական եղանակը ձևաբանականի կիրառությունն է, որը կարող է իմաստով չհամընկնել ձևաբանականին։ Օրինակ՝ «— Այս բոպեին տրակտորը դաշտ ես տանում,— չոր կարգադրեց նախադահը» նախադասության տանում ես սահմանականի ներկան հրամայականի իմաստով է ասված։ Կամ՝ «— Շուտով պատերազմը կվերջանա, և ես տուն կգնամ,— բացականչեց Արտեմը» նախադասության կվերջանա, կգնամ ենթադրական եղանակի բայերը սահմանականի իմաստով են։

4. Ստորոգում[21]։ Ստորոգումը նախադասության ամենակարևոր քերականական կառուցվածքային հատկանիշն է։ Առանց ստորոգման նախադասություն չկա։ Ըստ հայ (և ոչ միայն հայ) լեզվաբանության մեջ ընդունված կարծիքի՝ ստորոգումը հատկանիշի վերագրումն է առարկային (ենթակային) որոշ ժամանակում։ Օրինակ՝ «Այս երեխան խելոք

[21] Դ. Ջանուկյան, Ստորոգումը և նրա արտահայտության միջոցները («Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում»), 1985, 1։

է» նախադասության մեջ խելոք հատկանիշը երեխան ենթակային է վերագրված եմ բայի եղակի 3-րդ դեմքի ներկա ժամանակով (է), իսկ «Աշակերտները կարդում էին» նախադասության մեջ կարդալու հատկանիշը աշակերտներին է վերագրված եմ բայի հոգնակի 3-րդ դեմքով, անցյալ ժամանակով (էին)։ Որոշիչ-որոշյալ կապակցությունում նույնպես հատկանիշը վերագրվում է առարկային (խելոք աշակերտ), սակայն այս դեպքում բացակայում է վերագրման ժամանակը (այլև դեմքն ու թիվը), վերագրումը ժամանակից անկախ է։

Այս սահմանումը, սակայն, վերաբերում է դիմավոր նախադասություններին, նրանց, որոնք ունեն դիմավոր բայ։ Բայց մենք ունենք նաև անդեմ նախադասություններ, որոնք չունեն դիմավոր բայ, նրանց գլխավոր անդամն արտահայտվում է անդեմ բայով կամ գոյականով։ Այս նախադասությունների ձևավորման լեզվական միջոցը հնչերանգն է և խոսքային միջավայրը։ Հնչերանգի և համապատասխան խոսքային միջավայրի շնորհիվ բառը կամ բառակապակցությունը ստանում են հաղորդակցական արժեք, հաղորդում կատարելով՝ դառնում են նախադասություն։ Ծաղիկները շառուել-ը բայական բառակապակցություն է, հաղորդում չի կատարում, բայց երբ այդում տախտակի վրա կարդում ենք՝ ծաղիկները շառուել կապակցությունը հատուկ շեշտով, այդ դեպքում կապակցությունը հաղորդման դեր է կատարում, արգելում է մեզ ծաղիկները տրորել։

Ստացվում է երկու տարբեր կառուցվածքի նախադասությունների համար տարբեր բնույթի ստորոգում։ Իրականում, սակայն, ստորոգումը մեկ է, միևնույն բովանդակությունն ունի։ Անհրաժեշտ էր ստորոգման ընդհանուր սահմանում գտնել։

Ժամանակակից ռուս լեզվաբանները (Օ. Ս. Ախմանովա, Ն. Յու. Շվեդովա, Ա. Կ. Ֆեոդորով) այլ բնութագիր են տալիս ստորոգմանը, բուստ այդ բնութագրի՝ ստորոգումը հաղորդման բովանդակության հարաբերությունն է իրականության հետ։ Այսպես, օրինակ՝ «Շոգենավը մեկնում է առավոտյան», «Գիրքն օգտակար է», «Կայարան, զորքե՞ր, զորքե՞ր, զորքե՞ր» նախադասություններում հաղորդման բովանդակությունը հարաբերում է իրականությանը իբրև իրական փաստ, գոյություն ունեցող երևույթ, իսկ՝ «Կլսեմ ես հեքիաթային առօրյադ», «Պրտտվի՛ր, պտտվի՛ր կարուսել», «Լինեի չորան սարերում հեռու» (Վ.Տ), «Ծաղիկները չտրորե՛ր», «Զծխե՛ր» նախադասություններում հաղորդման բովանդակությունը հարաբերում է իրականությանը արդեն ոչ որպես իրական, գոյություն ունեցող փաստ, այլ՝ իբրև չեղած փաստ, որի իրականանալը ցանկալի է, անհրաժեշտ։

Ստորոգման արտահայտության տարրերից մեկը շարահյուսական ժամանակի կարգն է։ Յուրաքանչյուր ստորոգում կատարվում է այս կամ այն ժամանակում, ժամանակից դուրս ստորոգում չկա։ Ժամանակի կարգն արտահայտվում է բայի ժամանակներով, ժամանակ ցույց տվող գոյականներով (լուսաբաց, գիշեր, տարի, ձմեռ և այլն), ժամանակի մակբայներով (հիմա, այժմ, վաղուց, մանկուց և այլն)։

Պետք է տարբերել շարահյուսական ժամանակը ձևաբանական ժամանակից։ Ձևաբանական ժամանակը, արտահայտված բայի ժամանակի հարացուցային ձևերով, միանշանակ է, մենիմաստ. Գրում եմ-ը ներկա ժամանակի բայ է, գրում էի-ն՝ անցյալի անկատար, գրեցի-ն՝ անցյալ կատարյալ, գրել եմ-ը՝ վաղակատար և այլն։ Իսկ շարահյուսական ժամանակը ձևաբանականի կիրառությունն է, որն իմաստով կարող է չհամընկնել ձևաբանականին։ Օրինակ՝ «— Վաղը գնում եմ քննության» նախադասության գնում եմ ներկա ժամանակաձևը ապառնիի իմաստով է օգտագործված, ապառնիի իմաստ ունի (գնալու եմ)։ «Անցյալ օրը փողոցով անցնում եմ, մեկ էլ դեմս է դուրս գալիս ընկերս» նախադասության անցնում եմ ներկայի ժամանակաձևն օգտագործված է անցյալ անկատարի իմաստով (անցնում էի), իսկ դուրս է գալիս-ը՝ անցյալ կատարյալի իմաստով (դուրս եկավ)։ «Թոմանյանն այդ մասին գրում է» նախադասության գրում է ներկան արտահայտում է վաղակատար ժամանակի իմաստ (գրել է) և այլն։

Ստորոգման կառուցվածքային տարրերից մեկն էլ դեմքի կարգն է, դեմքի արտահայտությունը։ Քանի որ նախադասությամբ հարաբերության մեջ են մտնում խոսողն ու խոսակիցը, խոսողը հաղորդում է, խոսակիցը ընդունում է (լսում կամ կարդում), ինքնըստինքյան առկա է լինում դեմքի կարգը, որն արտահայտվում է բայի դեմքով և անձնական դերանուններով։

Եղանակի, ժամանակի, դեմքի կարգերը ստորոգման բաղադրիչ տարրերն են։ Դիմավոր նախադասություններում ստորոգումն արտահայտվում է բայի եղանակով, ժամանակով, դեմքով (նաև թվով), իսկ անդեմ նախադասություններում՝ հնչերանգով և խոսքային միջավայրով։

5. Նախադասության մյուս հատկանիշը հնչերանգային ավարտվածությունն է։ Յուրաքանչյուր նախադասություն, ինչպես ասվել է, ունի բովանդակության ամբողջականություն, ավարտվածություն, որոնցով նախադասությունը ձեռք է բերում ինքնուրույնություն, անկախություն, առանձին օգտագործվելու հնարավորություն։ Այդ ավարտվածությունն ու անկախությունը բանավոր խոսքում արտահայտվում են ավարտուն հնչերանգով, որին հաջորդում է դադարը, գրավոր խոսքում դա արտահայտվում է վերջակետով։ Հնչերանգը հաղորդակցային երևույթ է։ Նրանով ձևավորվում է նախադասությունը. խոսքը բաժանվում է ավելի փոքր միավորների (շարույթ, հնչաբառ, վանկ), և այդ փոքր միավորները միանալով կազմում են ավելի մեծ միավոր։ Եթե կապակցությունը չունի հնչերանգային ավարտվածություն, ուրեմն բովանդակությունը, հաղորդումն էլ թերի է, ավարտուն չէ, ուստի և նախադասություն

չէ, թեկուզ և ունենա ենթակա ու ստորոգյալ։ Օրինակ՝ բարդ նախադասությունների բաղադրիչ նախադասությունները առանձին-առանձին չունեն հնչերանգային ավարտվածություն, ուստի և՝ մտքի ավարտվածություն, ամբողջականություն, նրանք հաղորդում չեն կատարում, հաղորդում կատարում է ամբողջ բարդությունը, և քերականության մեջ այդ բաղադրիչների «նախադասություն» անվանումը խիստ պայմանական է։ Վերջին շրջանում ռուս քերականները դրանց անվանում են ստորոգումային կազմիչներ, բաղադրիչներ, ստորոգումային միավորներ։ Բերենք այդ կարծիքներից մեկը.

«Բարդ նախադասության ստորոգում ունեցող միավորները կոչվում են նրա ստորոգելիական մասեր և ոչ թե նախադասություններ, քանի որ նրանք չունեն իմաստային ու հնչերանգային ավարտվածություն, իսկ այդ հատկանիշները ստորոգումի հետ նախադասության որոշող հատկանիշներն են»[22]։ «Նա գնաց, որ ջուր բերի» կառույցը մեկ նախադասություն է, ունի մեկ հնչերանգային ավարտվածություն, ամբողջ կառույցն ունի բովանդակության ամբողջականություն ու անկախություն, կառույցն է հաղորդում կատարում և ոչ թե նրա բաղադրիչները։ Կարելի է նմանակությամբ հիշել բարդ բառերի կառուցվածքը։ Օրինակ՝ «Նրա հոր եղբայրը մեքենավար է» և «Նրա հորեղբայրը մեքենավար է»։ Առաջին կառույցում հոր-ը առանձին բառ է, եղբայր-ը՝ առանձին, ունեն իրենց անկախ կիրառությունը բառային առանձին շեշտի շնորհիվ, իսկ երկրորդ կառույցում հորեղբայրը մեկ բառ է, ունի բառային շեշտ, նրա բաղադրիչները բառեր չեն, այլ ձևույթներ, և եթե բառ էլ անվանենք, ապա դա կլինի խիստ պայմանական։ Ինչ դեր որ ունի այստեղ բառային շեշտը, նույն դերը նախադասության համար ունի հնչերանգը։

Ընդունված է հնչերանգի երկու ըմբռնում, երկու սահմանում։ Ըստ մի սահմանման (ամերիկյան լեզվաբանություն) հնչերանգը միայն հիմնական տոնի փոփոխությունն է։ Հր. Աճառյանը ընդունում է այս սահմանումը՝ հնչերանգը (իր տերմինով՝ ելևէջը) համարելով նախադասության արտասանության ժամանակ ձայնի բարձրության զանազանությունը։ Աճառյանը տարբերում է հնչերանգի երեք տեսակ՝ զգացական, տրամաբանական և լեզվական։ Ըստ մյուս սահմանման՝ հնչերանգը բարդ երևույթ է՝ բաղկացած ձայնի հիմնական տոնից, տևողությունից, ուժգնությունից, դադարից և տեմբրից։ Մ. Աբեղյանը, Գ. Ջահուկյանը ընդունում են հնչերանգի այս սահմանումը՝ հնչերանգը դիտելով մի շարք բաղադրիչների (հիմնական տոնի բարձրության, ուժգնության, տևողության) համագործակցություն։

[22] **Р. Н. Попов** и др., Современный русский язык. М., «Просвещение», 1978, стр. 380.

Հնչերանգի բաղադրիչ մասերն են տոնը, ձայնի ուժգնությունը, տևողությունը, ռիթմը, դադարը։ **Տոնը** ձայնի բարձրությունն է։ Գոյություն ունի բարձրացող, իջնող և հավասար տոն։ **Ուժգնությունը** ձայնը հեռուն հասցնելու կարողությունն է, արտահայտվում է շեշտով։ Կա երաժշտական շեշտ և ուժգնության շեշտ։ Հայերենում գործում է ուժգնության շեշտը, որից բխում է հնչյունափոխությունը։ **Տևողությունը** խոսքի արագությունն է, **ռիթմը** արտասանության ուժգնության, տևողության և բարձրության պարբերական կանոնավոր դրսևորումն է։ Ռիթմը ստեղծվում է շեշտված և անշեշտ վանկերի որոշակի հաջորդականությամբ։ **Դադարն** առաջանում է բնախոսական, հոգեբանական տրամաբանական պատճառներով։

Հնչերանգն ունի առոգանական և քերականական նշանակություն։ Առոգանությամբ արտահայտվում է խոսողի հուզական, զգացական, կամային վերաբերմունքը հաղորդման նկատմամբ։ Ըստ այս հնչերանգի նախադասությունները լինում են պատմողական, հրամայական, հարցական, բացականչական։

Հնչերանգի քերականական նշանակությունը։ Ինչպես ասվեց, հնչերանգով է ձևավորվում, ամբողջական դառնում նախադասությունը։ Առանձին բառեր, բառակապակցություններ հաղորդման դեր են ստանձնում հնչերանգի շնորհիվ։ Դա ամենից շատ երևում է երկխոսությունների ժամանակ։ Օրինակ՝ «— Մատիան ինձ տուր։ — Կարմի՞ր» կառույցում **կարմիր** բառը հաղորդման դեր է կատարում, ուստի նախադասություն է հարցական հնչերանգի շնորհիվ։ Իսկ «— Ջո՞ւր,— կանչեց հիվանդը» կառույցում **ջուրը** հաղորդման դեր է կատարում, ուստի նախադասություն է բացականչական հնչերանգի շնորհիվ։

Հնչերանգով երբեմն զանազանում ենք բարդ համադասական և ստորադասական նախադասությունները։ Օրինակ՝ եթե «Կմեծանաս, դպրոց կգնաս, կճանաչես աշխարհի չարն ու բարին» նախադասության բաղադրիչները արտասանենք թվարկման հնչերանգով, կստացվի բարդ համադասական նախադասություն, իսկ եթե նրա առաջին երկու բաղադրիչը արտասանենք պայմանի հնչերանգով, կստացվի ստորադասություն, պայմանի պարագա երկրորդական նախադասություններով։

Հնչերանգով երբեմն տարբերում ենք ժխտական նախադասությունը հաստատականից։ Օրինակ՝ «Ինձ շատ են պետք ձեր իրերը» հաստատական նախադասությունը ժխտական իմաստ է ստանում, երբ շատ բառը բացականչական հնչերանգով արտասանելով՝ հեգնական երանգ ենք տալիս նախադասությանը՝ «ինձ շա՜տ պետք են ձեր իրերը», ուզում է ասել՝ պետք չեն։

Հնչերանգի բաղադրիչ տարր շեշտը իմաստային փոփոխություններ է մտցնում միևնույն նախադասության մեջ։ Օրինակ՝ Կնոջ համբույրին է՛լ չեմ հավատա (այլևս չեմ հավատա), կնոջ համբույրի՛ն էլ

չեմ հավատա (նույնիսկ համբույրին չեմ հավատա)։ Ղեկավարը գրում է Մոսկվայից՝ գնում ենք Իտալիա (գրելու տեղը Մոսկվան է), խմբի ղեկավարը գրում է՝ Մոսկվայից գնում ենք Իտալիա (գրելու տեղն ուրիշ է, Մոսկվայից են գնում), Մենա՛կ ես մնացի (միայնակ է մնացել), Մենակ է՛ս մնացի (միայն ինքն է մնացել, մնացածները գնացել են)։ Տղան, հիշում է դայակը, լավ էր երգում (տղան է երգողը), Տղան հիշում է՝ դայակը լավ էր երգում (դայակն է երգողը)։ Վարպե՞տ, Կարապետը եկավ (վարպետը կոչական է), Վարպետ Կարապետը եկավ (վարպետը որոշիչ է)։ Բոլոր այս օրինակներում միևնույն բառաքերականական կազմով ու շարահյուսական կառուցվածքով նախադասությունների հակադրությունն արտահայտված է հնչերանգային շեշտով ու դադարով։

6. Նախադասություն կազմելու համար վերը նշված քերականական կարգերից (ստորոգում, հնչերանգ, դեմք, ժամանակ և այլն) բացի, անհրաժեշտ է, որ բառերը դասավորվեն տվյալ լեզվում ընդունված շարադասությամբ։ Այսպես՝ ես բառը եմ Հայաստանի արևանամ սիրում իմ բառերի շարքը միտք չի արտահայտում, նախադասություն չի կազմում, որովհետև բառերը դասավորված չեն հայերենում ընդունված կարգով, շարադասությամբ, իսկ՝ ես իմ անուշ Հայաստանի արևանամ բառն եմ սիրում միտք է արտահայտում, հաղորդում է կատարում, ուստի նախադասություն է։ Ուրեմն նախադասության կառուցվածքային հատկանիշներից մեկն էլ շարադասությունն է։

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՀՆՉԵՐԱՆԳԻ

Նախադասությունը բնութագրելիս մենք տեսանք, որ նրա հատկանիշներից մեկն էլ եղանակավորումն է, որով արտահայտվում է խոսողի վերաբերմունքը հաղորդվող բովանդակության նկատմամբ, ինչպես և այդ բովանդակության հարաբերումը իրականության հետ։ Խոսողի այդ վերաբերմունքն էլ նրա նպատակի արտահայտությունն է։ Խոսողը նպատակ է ունենում մի դեպքում օբյեկտիվորեն հաղորդել որևէ իրողություն, դատողություն, փաստ, մյուս դեպքում՝ հարցում անել որևէ իրողության, փաստի մասին, մի այլ դեպքում՝ արտահայտել իր հույզերը, զգացական վերաբերմունքը և, վերջապես, իր կամքը թելադրել։ Խոսողի այս նպատակադրումներն արտահայտվում են հնչերանգով, քերականական միջոցներով, ինչպիսիք են բայի խոնարհման եղանակները, զանազան բառային միջոցներով, ինչպիսիք են ձայնարկությունները, վերաբերական բառերը և այլն։ Այսպես՝ հրամայելու, հորդորելու, առաջարկելու իր նպատակը խոսողն արտահայտում է բայի գերազանցապես հրամայական եղանակով։ Օրինակ՝ Ե՞տ տար քո

խալը (ՇԿ)։ Զարթե՛ք, երգեր իմ, ժամ է հնչելու (ՎՏ)։ Իր հիացմունքը, հույզը, զանազան զգացմունքները խոսողն արտահայտում է ըղձական եղանակի բայերով, ձայնարկություններով, վերաբերական բառերով, կոչականներով։ Օրինակ՝ Ա՜խ, մեծ սրտիդ սեղմեմ սիրտս, Լամ, արուն լամ, Ալագյազ (ԱԻ)։ Որ արտուտի պես վե՞ր ու վե՞ր ճախրեմ Նոր օրվա ծեգիդ, ազիզ հայրենիք, Ու անուշ երգեմ, բա՜րձր ու զիլ գովեմ Կանաչ արևդ, ազատ հայրենիք... (ԱԻ)։

Սակայն խոսողի նպատակը և բայի խոնարհման եղանակները միշտ չէ, որ համընկնում են, օրինակ՝ հարցման նպատակի համար բայի եղանակը նշանակություն չունի, խոսողը կարող է ընտրել ցանկացած եղանակի բայ, կարևորը հնչերանգն է։ Որևէ բան պատմելու համար խոսողը կարող է օգտագործել բայի բոլոր եղանակները, բացի հրամայականից։ Թեև հրաման, կարգադրություն, առաջարկ արտահայտելու հիմնական միջոցը բայի հրամայական եղանակն է, բայց խոսողն այդ նպատակի համար կարող է ընտրել նաև այլ եղանակի բայեր, անգեմ ձևեր։ Նույնը կարելի է ասել նաև հույզ, զգացական վերաբերմունք արտահայտելու նպատակով օգտագործվող նախադասությունների մասին։

Խոսողի նպատակի արտահայտության լավագույն միջոցը հնչերանգն է։ Ուստի հնչերանգով էլ խմբավորում ենք նախադասությունները։ Գիտական քերականության մեջ[23] նշվում է չորս բնույթի հնչերանգ՝ շեղոք (պատմողական), հարցական, շեշտական, բացականչական։ Ըստ այս չորս հնչերանգի էլ առանձնացվում է չորս բնույթի նախադասություն՝ պատմողական (շեղոք հնչերանգով), հարցական (հարցական հնչերանգով), հրամայական-հորդորական (շեշտական հնչերանգով) և բացականչական (բացականչական հնչերանգով)։ Հնչերանգը լայն ընդգրկում ունի։ Երբեմն միևնույն հնչերանգով տարբեր նպատակներ են արտահայտվում։ Օրինակ՝ «Դու արդեն առո՞ղջ ես։ — Ո՞ւր է, որ առողջ եմ»։ Այս երկու նախադասություններն էլ հարցական հնչերանգով են, սակայն, եթե առաջին նախադասության հնչերանգը և խոսողի նպատակը համընկնում են (հարցում՝ չիմացածը իմանալու համար), ապա երկրորդում դրանք չեն համընկնում, այստեղ հարցումը չիմացածը իմանալու նպատակով չէ, այլ՝ ժխտելու։ Այս նախադասությունը ձևով հարցական է, բովանդակությամբ՝ ժխտական։ Տարբեր են այս նախադասության խորքային և մակերեսային կառուցները, բովանդակությունն ու ձևը, տրամաբանականն ու քերականակաը։

Ուրեմն, ընդունելով հնչերանգային չորս տեսակի նախադասություն, տեսնենք, թե դրանցից յուրաքանչյուրով ինչ նպատակ է հետապնդում խոսողը։

---

[23] Տե՛ս, օրինակ, Գ. Ջանուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, էջ 355—359։

Պատմողական նախադասություն: Պատմողական նախադասությամբ հաստատվում կամ ժխտվում է որևէ երևույթ, իրողություն, փաստ։ Խոսողն այս նախադասություններով հաղորդում է կատարում զանազան գործողությունների, բնական երևույթների մասին, բնութագրում է առարկաները, հաստատում կամ ժխտում է որևէ իրողություն, փաստ։ Օրինակ՝ Կա հինավուրց մի զրույց, թե մի տղա, Միամորիկ, սիրում էր մի աղջկա (ԱԻ)։ Կտավատը շատ արժեքավոր կուլտուրա է, այն ունի բուժիչ հատկություն։ Բույսերն էլ են շնչում։ Մարդը մի անգամ է ծնվում։ Արամը երեխա չէ։ Սողունը թռչել չի կարող և այլն։

Պատմողական նախադասության հիմքում ընկած է դատողությունը, ուստի հաճախ դատողությունն ու նախադասությունն իրենց կազմությամբ նույնանում են։ Օրինակ՝ Երկրագունդը պտտվում է արեգակի շուրջը։ Մարդը բանական կենդանի է։ Թումանյանը մեծ բանաստեղծ է և այլն նախադասությունները միաժամանակ դատողություններ են և համընկնում են իրենց գլխավոր անդամներով։

Պատմողական նախադասությունը ներկայացնում է չեզոք հաղորդում, առանց կոնկրետ վերաբերմունք ցույց տալու։ Արտասանվում է ձայնի ցածր տոնով և միջին արագությամբ։ Հնչերանգը դանդաղ բարձրանում և իջնում է չեզոք առոգանությամբ։ Հնչերանգի ամենաբարձր կետը տրամաբանական շեշտն է, այն սովորաբար ընկնում է ստորոգյալի վրա։ Օրինակ՝ Ես սիրում եմ մթնշաղը Նրբակերտ (ՎՏ)։ Ես վեր ելա, ոգի առած՝ Զարկի սրտիս լարերին։ Սիրտս խնդաց, կուրծքս թընդաց—Եվ լարերը խզվեցին (ԱԻ)։ Սակայն միշտ չէ, որ տրամաբանական շեշտը ընկնում է ստորոգյալի վրա։ Այն կարող է լինել նաև այլ անդամների վրա։ Օրինակ՝ Դե՛մքդ եմ տեսնում՝ նոր ու պայծառ, Քո հնագեղ ոճով (ԱԻ) նախադասության տրամաբանական շեշտը դե՛մքդ ուղիղ խնդրի վրա է, իսկ՝ Հայրենի՛ հողի վրա եմ նորից (ԱԻ) նախադասության տրամաբանական շեշտը Հայրենի՛ որոշչի վրա է։ Նայած թե տրամաբանական շեշտ կրող բառը նախադասության որ մասում է գտնվում, ըստ այդմ էլ ստացվում են հնչերանգի երեք տարբեր ձևեր։

ա) Բարձրացող։ Օրինակ՝ 1) Արևի ոսկի մատները իջան (ԵՉ)։ 2) Խոտերի միջից առավակը խնդաց (ԵՉ)։

Ահա սրանց գծապատկերը.





բ) Բարձրացող-իջնող։ Օրինակ՝ Դու մի անհայտ Բանաստե՛ղծ ես, չտեսնված մինչ էսօր. Առանց խոսքի ե՛րգ ես թափում հայացքներով լուսավոր (ՀԹ)։ Միայն ի՛մ, ի՛մ սիրտն է կարոտից դողում (ՀՇ)։ Լոկ մա՛յրս է արժան ձեր համբույրներին (ՀՇ)։

Այս նախադասությունները ունեն հետևյալ գծապատկերը.



գ) Իջնող։ Օրինակ՝ 1) Անջա՛տ է իմ հոգին ու հանգիստ (ՎՏ)։ 2) Երագեցի՛ շարունակ Իմ կյանքի մեջ ես մանկուց (ՀԹ)։

Ահա սրանց գծապատկերը.



Պատմողական նախադասության ստորոգյալը լինում է՝ 1. պարզ՝ արտահայտված բայի սահմանական, ըղձական, ենթադրական և հարկադրական եղանակներով։ Օրինակ՝ Տանում ենք հնուց մեր գանձերն մանգին (ՀԹ)։ Նա ուներ խորունկ երկնագույն աչքեր (ՎՏ)։ Ջյունը մաղում է բարակ (ՎՏ)։ Էլ աշխարհ չեմ գալու հո նոր, Իր տված եմ տալիս իրեն (ՀԹ)։ Կյանքս թեթև տանուլ տված գրազ եղավ, անցկացավ (ՀԹ)։ Ճոխ պարգև եմ առել վերուստ (ՀԹ)։ Թաղեմ քեզ, հատիկ, և դարդոս քեզ հետ (ՀՀ)։ Դու խղճուկ, կամացուկ ես կգաս, Կնգաես գոդի պես ինձ սիրել (ՇԿ)։ Ու պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով, Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով (ՀԹ)։ 2. Բաղադրյալ, *ինչպես՝ Ես բանաստեղծ եմ, ճավերժի որդի, Երկինքը մայրս է, երկիրը՝ հայրս (ՀՇ)։ Սիրտս է առատ, լեռն ու ազատ (ՀԹ)։ Սերն անվերջ է, բարին առատ (ՀԹ)։ Ցավս խորն է, ճար չկա (ԱՒ) և այլն։*

3. Կարող է արտահայտվել անդեմ նախադասությամբ։ Օրինակ՝ Ութսունմեկ թիվ։ Վաղարշապատ։ Էջմիածին։ Միրգ ու փոշի։ Անխիղճ արև։ Շողամրցում Մասիսների, Արագածի (ՊՍ)։ Ո՛չ տրտունջ, ո՛չ մըրմունջ սգավոր (ՎՏ)։

Պատմողական նախադասությունները կազմությամբ լինում են՝ պարզ, ինչպես՝ Իմ մեջ սառել է հիվանդ մի կարոտ (ՎՏ)։ Բարդ, ինչպես՝ Բարակ ամպերը մաղում են ոսկի, Ջրերը անուշ հեքիաթ են ասում (ՎՏ)։ Երկկազմ։ *Օրինակ՝ Ջեզանից հետո եկավ գիտություն (ՄՆ)։* Միակազմ՝ *Դալուկ դաշտեր, մերկ անտառ... Մահացողի տխուր կյանք, Անձրև, քամի, սև կամար... — Սրտակտուր հեկեկանք (ՎՏ)։*

Պատմողական նախադասությունները լինում են՝ հաստատական, ինչպես՝ Ման եմ գալիս դեռ սրտեսիրտ մի լավ յարի Սայաթ-Նովա (ՀՇ)։ Դեպի արևն էին գնում ամբոխները խելագարված (ԵՉ)։ Ժխտական, ինչպես՝ Եվ երբեք չի աղոտի քո կանթեղը խավար մեր հոգում (ՀԹ)։ Դեռ չեմ տեսել ծովը Վանա, Չեմ տեսել սարն իմ Սիփանա (ՀՇ) և այլն։

Հարցական նախադասություններ։ Հարցական նախադասությունը արտահայտում է հարցում։ Նրա միջոցով խոսողը խոսակցից հարցնում է իրեն անհայտ որևէ իրողության, փաստի մասին։ Օրինակ՝ — Լևոն, ճիշտն ասա, ի՞նչն է քեզ ստիպում Իտալիա գնալ (ԱՇ)։ — Սինյոր, ի՞նչ լուր կա Լուիզայից (ԱՇ)։ Դու ինչո՞վ ես կերակրում քեզ ու մորդ (ԱՇ)։

Հարցական նախադասություններն ըստ հարցնողի նպատակի լինում են.

ա) Բուն հարցական, երբ խոսողը չգիտի, տեղյակ չէ տվյալ իրողության, փաստի մասին և հարցնում է իմանալու համար։ Այս դեպքում հարցմանը սովորաբար հետևում է պատասխանը։ Օրինակ՝ — Իսկ ի՞նչ էիք անում ստրկաց շուկայում։ — Ադգակից էինք փնտրում (ԴԳ)։ — Իսկ ինչպե՞ս ես խլելու, որ բաժանենք։ — Նիզակիս ու դաշույնիս ծայրերը դեռ սուր են (ԴԳ)։ — Անունդ ի՞նչ է։ — Մուրո (ԱԲ)։ — Դուք ի՞նչ էիք անում մինչև պատերազմը։ — Ես ուսուցիչ եմ եղել, գրականության ուսուցիչ (ՀԲՀ) և այլն։

Որոշ դեպքերում հարցնողը որոշ տեղեկություն ունի հարցման ենթակա փաստի, իրողության վերաբերյալ և հարցնում է ավելի հավաստի դարձնելու իր իմացածը։ Օրինակ՝ — Ասում են հայրդ հիվանդ է, ճշմարի՞տ է։ — Այո՛ (ՆԴ)։ — Ուրեմն դու ինձ չե՞ս սիրում։ — Ո՛չ (Ր)։ — Ուրեմն Գեղամն այնտե՞ղ էր և չպաշտպանե՞ց քեզ։ — Իհարկե (Սգր)։ — Նշանակում է մենք այլևս չենք հանդիպելո՞ւ։ — Երևի (Սգր)։ — Ասել է թե դու գիտակցաբա՞ր դիմեցիր այդ քայլին։ — Միանգամայն գիտակցաբար (Սգր) և այլն։

Երբեմն հարցի պատասխանն էլ է հարցով տրվում։ Օրինակ՝ — Իսկ դու, եղբո, մի գավաթ պիտի չխմե՞ս քո ազգի կենացը։ — Ինչո՞ւ չեմ խմի, ապա (Ր)։ Ձիու մեջքը վիրավորվե՞լ է։ — Բա ի՞նչ է արել (ՆՉ)։ — Մացակ Ավագյանի՞ մասին եք խոսում։ — Բա ո՞ւմ (ՆՉ)։ — Ի՞նչ է, սխալվո՞ւմ եմ։ — Ինչպե՞ս կարող է սխալվել ձերդ մեծությունը (ՆԴ)։ — Կարծում ես Արշակը քո բերդերը կթողնի՞ քո ձեռքը։ — Իսկ ինչո՞ւ ո՛չ (ՍՉ) և այլն։ Այս պատասխան հարցական նախադասություններն արտահայտում են համաձայնություն, հաստատում են հարցումով ասված իրողությունը, փաստը, կարող են փոխարինվել այո՛, ո՛չ պատասխանական բառերով։

Որոշ դեպքերում պատասխանողը հարցական նախադասությամբ

բացատրում, պատճառաբանում է արված կամ չարված որևէ բան։ Օրինակ՝ — Դու գյուղ գնացի՞ր։ — Ո՞վ գնաց որ (Սգր)։ — Կարդացի՞ր «Առանց դավանանքի» վեպը։ — Ե՞րբ կարդայի (Սգր)։ — Ինչո՞ւ վիրավորեցիր տղային։ — Բա ինչո՞ւ է սուտ խոսում (Սգր)։ — Ինչո՞ւ չես ստացել պարգևատրումը։ — Ո՞վ տվեց որ չստացա (Սգր)։ — Ինչո՞ւ գիրքը չես բերել։ — Որտեղի՞ց բերեի (Սգր) և այլն։

բ) Ճարտասանական-հարցական։ Սրանք ձևով հարցական են, բովանդակությամբ հաստատական կամ ժխտական։ Այս դեպքում հարց տվողը պատասխանի չի սպասում, նա կամ պատասխանը գիտի և ինքն է տալիս պատասխանը և կամ դա հանրահայտ ճշմարտություն է։ Հարցը դառնում է հուզաարտահայտչական միջոց, ոճական հնարանք։ Օրինակ՝ Ո՞ւմ վրա չի ազդում հարբած մարդը։ — Ո՞վ կուզի իր հարազատի դժբախտությունը։ — Ո՞ւմ են ուրախացնում քո անկարգությունները։ Պարզ է, որ ոչ ոքի (Սգր)։ Անչատման ժամին գիտե՞ք ինչ էր անում, չէր ուզում ինձ գրկից բաց թողնել (ՆԴ)։ Ի՞նչ ձգտում, ի՞նչ նպատակ, ի՞նչ եռանդ, դրանք անմիտ բաներ են (ՆԴ)։ Ի՞նչ բան է գանգ կոչված մարդկային այս գլուխը, որ ստեղծում է տաճարներ, աստվածներ, ինկվիզիցիա և դևեր։ — Որդի բնակարան (ՆԴ)։ Մեր ապրուստն ի՞նչ է։ — Մի կտոր չոր հաց (ՀԹ)։ Լևոնը թշնամի՞ է։ Ո՛չ։ —Նրա անալիզը ճի՞շտ է։ Այո՛ (ՆՁ)։ Գողն ի՞նչ կուզի՝ մութ գիշեր։ Բանն ո՞վ անի՝ ես ու դու, հացն ո՞վ ուտի՝ ես ու դու (առած)։

գ) Ժխտական-հարցական։ Հաճախ հարցական նախադասությամբ ժխտվում է որևէ իրողություն։ Օրինակ՝ Ո՞վ կարող է հլու և հեզ չաղոթել ձեզ, Օ՜, տիկին (ՎՏ)։ Մի՞թե Սմբատը թույլ կտա իրեն՝ այդպես վիրավորել մի անպաշտպան աղջկա (ԱՇ)։ Ի՞նչ, մի՞թե նա՝ հիմար է, որ աչքերը բաց, թողնի օրը ցերեկով իրեն կողոպտեն (ԱՇ)։ Ինչո՞վ են մեղավոր այդ մանուկները (ԱՇ)։ Ո՞վ է տվել էն լրբին սար, Սարն ամենքինս է հավասար։ Ո՞վ կթողնի վեր կենա գա... (ՀԹ)։ Ո՞ւր ես գալիս, ա՜յ գարուն... (ՀՀ)։ Այդպիսի կողմնակալ դեկավարին ո՞վ կհարգի (Սգր)։ — Դու ի՞նչ մեղք ունես, մատաղ, մեղավորը նա է (Սգր) և այլն։

Եթե հարցական նախադասությունների ստորոգյալը ժխտական խոնարհման բայ է, ունենում են հաստատական իմաստ, ինչպես՝ Ինչո՞ւ չլինել համարձակ։ Ինչո՞ւ ես էլ իմը չպնդեմ (ԱՇ)։ Ինչո՞վ երջանիկ չէ ճանճը։ Մի՞թե արվեստը ճակատագիր չէ (Փափ.)։ Ի՞նչ, ես բաժանվեմ իմ ծնողների՞ց։ — Ինչո՞ւ չէ (ԱՇ) և այլն։

դ) Հաստատական-հարցական։ Այս դեպքում հարցական նախադասությամբ որևէ իրողություն, փաստ է հաստատվում։ Նախորդ նախադասությանը կապակցվում է չէ՞ որ հարցականով։ Օրինակ՝ Չէ՞ որ նրանք մոտիկ ընկերուհիներ են։ Չէ՞ որ Լևոնն ինքն է որոշել հեռանալ (ԱՇ)։ Բայց չէ՞ որ միշտ էլ երազ էր միայն Պայծառ պատկերդ այս

անապատում (ՎՏ)։ — Ո՞վ ասաց։ — Գոհարը։ — Բայց չէ՞ որ նա այնտեղ չի եղել (Սգր)։ Ինչո՞ւ,— զարմացավ Լևոնը,— չէ՞ որ դու ասում էիր, թե լավ մարդ է (ՆՁ)։ Բայց ինչպե՞ս էր նա մնացել այդտեղ, չէ՞ որ գյուղում մարդ չկար, չէ՞ որ գյուղը փախել էր երկյուղից (ՍՁ) և այլն։

ե) Հարցահուզական։ Այս նախադասություններն արտահայտում են զարմանք, տարակուսանք, երազանք, ցանկություն, անտեղյակություն և այլն։ Օրինակ՝— Եմենք մեր մոտալուտ հաղթանակի կենացը։ — Ախ, ե՞րբ պիտի գա։ Տեսնես կապրե՞նք մինչև այդ օրը (ՀրՀ)։ Մի՞թե բացվել են մանուշակները։ Այս ե՞րբ հալվեցին ձյան վերջին պատառները (ՀրՀ)։ Մի՞թե գերմանացին ամեն ինչ թողած՝ այսպես արագ փախչում է։ Կարո՞ղ է պատահել, որ մենք հենց այսպես էլ շարժվենք, մինչև ե՞րբ, մինչև ո՞ւր (ՀրՀ)։ Ինչպե՞ս մարդ կարող է նայել ու չտեսնել (ՆՁ)։ Ի՞նչ, դու Մարութիանյանին դո՞ւրս ես հանում տնից (ԱՇ)։ Վիրավորե՞ց, քե՞զ, հա՞յրս, այդ անկարելի է (ՆԴ)։ Մի՞թե վերջին պոետն եմ ես, Վերջին երգիչն իմ երկրի (ՎՏ)։ Իմ թափառ կյանքում, Մարդ ի՞նչ իմանա, Չե՞մ նստել թախծել այդ քարի վրա... (ԱԻ)։ Վախենում էր, թե կանգ չառնի՞ իր սիրտը, խոսքը կիսատ չմնա՞ (ՀՔ)։

Իբրև ոճական հնարանք օգտագործված հարցական նախադասությունները արտահայտում են նաև հեգնանք, արհամարհանք, հորդորանք, հանդիմանություն, այլև խնդրանք, հարկադրանք, պայման։ Օրինակ՝ Հաբեթյանն ո՞վ է, որ Ալիմյանին ճակատ-ճակատ կանգնի, փիե՜, աշխարհը քանդվել է՞ (ԱՇ)։ — Ի՞նչ կա, ո՞ւմից քաշվեմ, չլինի՞ թե քեզանից։ Ինչպե՞ս չէ, քեզ էլ ենք ճանաչում (ՆՁ)։ Ա՞յդ է քո դասակարգային գիծը, Մանուկ Վարոսյան (ՆՁ)։ Դո՞ւ պիտի էն հոր զավակը լինես (ՀԹ)։ Հալվան ի՞նչ է, որ նրա տված օգուտը ինչ լինի (Սգր)։ Գուցե չե՞նք շոյում մեր տանջված դեմքով Ձեր նուրբ ջղերը-հոգով քաղցածներ, Դուք կուշտ մարմիններ (ՇԿ)։ Ինչո՞ւ ես քաշվում, մոտ եկ, մեր քեռին է (Սգր)։ Ինչո՞ւ եք լռել, խոսեցեք (Սգր)։ Ինչո՞ւ չեք գրում վերադասին, գրեցեք (Սգր)։ Ինչո՞ւ թողիք, որ վեճի մտնեմ (Սգր)։ Մայր բնություն, այս ի՞նչ արիր, Դո՞ւ էլ ես վրաս ծիծաղում (ՀՇ)։ Ի՞նչ ես արել, իմ բալիկ, ո՞ւր ես քրտնած շորերդ հանել (ՀՇ)։ Դու ստո՞ւր ես, ինչի՞ նրա մատները չբռնեցիր, չկպցրիր քո պատին (ԱԲ)։ Սիրո՞ւմ ես, ամուսնացիր (ԱԲ)։ Խելո՞ք ես, մի խառնվիր ուրիշի գործերին («Գարուն») և այլն։

Հարցական նախադասությունների ձևավորման հիմնական միջոցը հարցական հնչերանգն է։ Մյուս նախադասություններից նրանք տարբերվում են հարցական հնչերանգով։ Միևնույն պատմողական նախադասությունը կփոխվի հարցականի, եթե չեզոք հնչերանգը փոխենք հարցական հնչերանգով։ Այսպես՝ Թեյամանի մեջ ջուրը եռաց (ԱԲ) պատմողական նախադասությունը կփոխվի հարցականի՝ հարցական

հնչերանգի շնորհիվ՝ Թեյամանի մեջ ջուրը եռա՞ց (կամ ջո՞ւրը եռաց)։

Հարցական հնչերանգը այս նախադասություններում ունենում է երեք աստիճան, ինչպես պատմողական նախադասություններում, իջնող. օրինակ՝ Տեսա՞ք ինչ բախտի տիրացավ ողբը (ԳԲ)։ Լսե՞լ եք, արդյոք, այս երգը քնքուշ (ՎՏ)։ Ո՞ր աշխարհում ունեմ շատ բան (ՀԹ)։ Բարձրացող. օրինակ՝ Միքայելը ծախսի ինչքան քեֆն է, իսկ ես մի հարյուր ռուբլու համար նրան աղաչե՞մ... (ԱՇ)։ Եվ եթե պանդուխտ է որդիդ, ի՞նչ է իր հոր զավակը չէ՞ (Փափ.)։ Բարձրացող-իջնող. օրինակ՝ Հիմա տեսնենք ո՞նց ես ապրելու առանց ինձ ու երեխաների (ՍՁ)։ Ինձ ո՞վ է մատնել այս մառախուղին (ՎՏ)։ Այս փողոցում դու ի՞նչ գործ ունես։

Հարցում արտահայտող բառը հնչերանգի ամենաբարձր կետն է։ Եթե այդ բառը նախադասության սկզբում է, հնչերանգը բարձրից իջնող է, օրինակ՝ Մի՞թե, ասուված, դեռ բավական չտեսար Այսքան ավեր, վիշտ ու ցավեր, հեծություն (ՀԹ)։ Եթե մեջտեղում է, հնչերանգը բարձրացող-իջնող է։ Օրինակ՝ Աշուն, քեզ ի՞նչ քնքշությամբ, Ի՞նչ խոսքերով երգեմ քեզ (ՎՏ)։ Իսկ եթե վերջում է, հնչերանգը բարձրացող է։ Օրինակ՝ Իմ մրմուռ, միշտ անլուր ցավերով, Ա՛յ անգին, քո հոգին ձանձրացա՞վ (ՇԿ)։

Ահա հարցական նախադասությունների հնչերանգային գծապատկերը։

ա) Ինչո՞ւ էիր ուշ-ուշ նամակ գրում (ՀրՀ)։



բ) Տեսնես քեզ նման ե՞րբ պիտի մի օր էլ Կարոն գա (ՀրՀ)։



գ) Դու Երևանում սիրած աղջիկ ունե՞ս։



Եթե հարցական նախադասություններում ստորոգյալը հաջորդում է հարցում արտահայտող բառին, ապա նրա եմ բայն առաջ է ընկնում։ Օրինակ՝ Մա՞հն է արդյոք, թե՞ նինջը քեզ պատել, պայծառ Նաիրի (ՎՏ)։ Որտե՞ղ է աղոթքն այնպես վեհ ու պարզ Եվ զոհաբերումն այնպես խնդագին (ՎՏ)։ Բայց ո՞ւր են տանում այսքան լույսերը (ՀՍ)։ Ի՞նչ ես անում առանց ինձ, Ո՞ւմ ես խրատում, Ո՞ւմ համար ես ձեռագիր երգերդ կարդում (ՀՍ)։ Այս ի՞նչ խավար է իմ սրտին իջել (ՀՍ)։ Գարնա՞նն ենք գնալու։ Խաղողի այգի՞ ես մշակում։ Մեքենան նո՞ր ես առել և այլն։

Իսկ եթե հարցում արտահայտող բառը հենց ստորոգյալն է, շարադասությունը չի փոխվում։ Ինչպես՝ Դու լսո՞ւմ ես՝ այնտեղ՝ դրսում Շաչ ու շառա՛չ, լաց ու կո՞ծ (ԱՇ)։ Լսե՞լ ես, արդյոք, այս երգը դյութող (ՎՏ)։ Լուսնի նկարները տեսե՞լ ես և այլն։

Սովորաբար յուրաքանչյուր պարզ նախադասություն մեկ հարցում է արտահայտում, և հարցը վերաբերում է որևէ անդամի՝ ենթակային, ստորոգյալին կամ որևէ լրացումի։ Օրինակ՝ Արդյոք մե՞նք, թե աշխարհն է երգում, Արդյոք մե՞նք, թե խոսքերն են ստում (ՎՏ)։ Տեսնո՞ւմ ես որքա՞ն, որքա՞ն արագ Անցնում է բոլորն ու դառնում հուշ (ՎՏ)։ Հիշո՞ւմ ես դու ակացիան (ՎՏ)։ Ո՞ր երկրի սրտում թախիծ կա այսքան (ՎՏ)։ Գալ տարի մե՞ծ ներում կլինի (ԵՁ)։ Ո՞ւմ նկարներն են շահել (Սգր)։ Ի՞նչ է ասում ճամփորդներին հալված-մաշված այս կածանը (ՀՍ)։ Ցա՞խ է բերում անտառից, այն էլ շալակո՞վ։ Գնացքո՞վ են ձեր գյուղը գնում։ Տղայի՞դ ես առել պայուսակը։ Գայլի՞ց էր փախչում։ Դպրոցի մասի՞ն եք զրուցում։ Լուսաբացի՞ն է գնում գնացքը։ Երևանո՞ւմ եք ապրում, երբվանի՞ց։ Համալսարա՞ն եք գնում։ Ժամի քանիսի՞ն են դասերն սկսվում (Սգր) և այլն։

Նախադասության բազմակի (համադաս) անդամներից յուրաքանչյուրը կարող է հարցում արտահայտել։ Օրինակ՝ Ի՞նչ անել, արդյոք, բաժանվել մորի՞ց, թե կնոջից (ԱՇ)։ Հետաքրքիր է իմանալ ո՞ր Սուլյանը, ո՞ր Սրաֆիոնը, ո՞ր Ղուլամյանը, ո՞ր Աճաքելյանը այստեղ մեջքը չի ծռի նրա առաջ (ԱՇ)։ Ի՞նչ ես առել երեխային՝ գի՞րք, տետրա՞կ, համազգե՞ստ (Սգր)։ Նա չգիտեր դպրո՞ց, կինո՞, թե՞ տուն գնար։

Որտե՞ղ նա սովորեց՝ տա՞նը, դպրոցո՞ւմ, թե՞ փողոցում։ Ումի՞ց է սովորել՝ ծնողների՞ց, եղբորի՞ց, քրոջի՞ց, ումի՞ց (Սգր)։

Երբեմն պարզ նախադասության տարասեռ անդամներն էլ են հարցում արտահայտում։ Օրինակ՝ Ե՞րբ, ո՞ր ժամին, զավոդի ո՞ր կողմից է սկսվել հրդեհը (ԱՇ)։ Ի՞նչ գրի և ինչո՞ւ, ի՞նչ իրավունքով (ԱՇ)։ Ի՞նչ հոբելյան և, վերջապես, ի՞նչ բանի համար հոբելյան (Փափ)։ Ինչո՞ւ և ո՞ւմ էիր դու այդպես գովում քո բաժակաճառում (Սգր)։ — Ո՞վ և ե՞րբ է այդ լուրը քեզ հասցրել,— հարցրեց եղբայրը (Սգր)։ — Ո՞ւր, ինչո՞վ ես գնում այս կես գիշերին,— սաստեցի ես (Սգր)։ Այս դեպքում ըստ երևույթին ենթադրվում է ստորոգյալի զեղչում, յուրաքանչյուր հարցում արտահայտող պարագայի կամ խնդրի համար մի ստորոգյալ է ենթադրվում, ինչպես՝ ո՞ւր ես գնում, ինչո՞վ ես գնում, ո՞վ է լուրը հասցրել, ե՞րբ է հասցրել։

Բացի հնչերանգից, հարցական նախադասությունների ձևավորմանը զգալի մասնակցություն ունեն հարցական դերանունները՝ ո՞վ, ի՞նչ, ինչպե՞ս, ինչպիսի՞, որքա՞ն, ինչքա՞ն, ո՞ւր, ո՞ր, որտե՞ղ, ե՞րբ, ինչո՞ւ, ինչի՞ և այլն, վերաբերական (եղանակավորող) բառերը՝ մի՞թե, իրո՞ք, արդյո՞ք, չէ՞ որ, գո՞ւցե և այլն։ Սովորաբար այս բառերը դրվում են նախադասության ստորոգյալից առաջ, սկզբում։ Օրինակ՝ Ո՞ւմ կինն է, ո՞ւմ հարսն է։ Հերոն ե՞րբ բաց աչքով նայեց (ՄԳ)։ Հերո, դաշտում հիմա ի՞նչ կա։ Այդ տհասը քանի՞ տարեկան է (ՄԳ)։ Էլ ո՞վ պիտի քեզ խնդա, էլ ո՞ր սիրտը կթնդա (ՀՀ)։ Ասա, ո՞ւր գնամ, ո՞ւմ գանգատանեմ։ Այս ի՞նչ խավար է այսպես իմ սրտին իջել (ՀՍ)։ Դրախտը ո՞ր աստծունն է, արդյոք, ես ո՞ւր և ե՞րբ տեսա այն, և կա՞ աստվածն այդ, իրոք (ՎՔ)։ Ո՞վ քեզ ծեծեց, Մարո ջան (ՀԹ)։ Մի՞թե դարձյալ թուրքեր են (ՀՔ)։ Չէ՞ որ ինձ սպանում էր Արամը (ՀՔ)։ Մի՞թե քիչ է քո զանգ ծիծաղը (ՍԿ)։ Արդյո՞ք կհասցնենք պլանը ժամկետին կատարել, գո՞ւցե օգնություն խնդրենք հարևան գյուղից (մամուլ)։ Նրա արյունը կարմի՞ր է մերից, թե՞ ավել հունար դուրս կգա ձեռից (ՀԹ)։

Հարցական նախադասությունների սկզբում երբեմն լինում են այս, այդ, այն (էն) ցուցական դերանունները։ Ինչպես՝ Այդ ի՞նչ միտք է քեզ տանջում (Սգր)։ Էն ո՞վ էր, նանի, որ կանչում էր մեզ (ՀԹ)։ Այդ որքա՞ն են դաժան աստվածները հիմա։ Այս ի՞նչ դարի հասանք (ԱԽ)։ Այդ ո՞ր տրակտորն է փչացել (Սգր) և այլն։

Երբեմն հարցաժխտական նախադասություններն ավարտվում են որ թարմատարով։ Ինչպես՝ Ախր անտառին ի՞նչ է եղել որ (ԱԽ)։ Ի՞նչ է արել որ։ Ո՞վ կարող է որ։ Ինչքա՞ն է ստացել որ։ Ե՞րբ գնաց որ (Սգր) և այլն։

Հարցական նախադասությունների վերջում կարող են լինել հա՞, չէ՞, թե չէ՞ եղանակավորող բառերը։ Օրինակ՝ Ձեր քույրը երևի մեծ էր, հա՞ (ՆԴ)։ Դուք անշուշտ Քութախից եք գալիս, այնպես չէ՞։ Ձեզ

կարողանում քնել, հա՞ (ՆԴ)։ Դու ուզում ես քո կարծիքը հայտնել, չէ՞։ Դու կոլխոզի անդամ ես, չէ՞։ — Հա, բա՞։ — Ես էլ եմ կոլխոզնիկ, չէ՞ (ՆՋ) և այլն։

Երբեմն հարցական նախադասության այս կամ այն բառի վրա է լինում, իբրև տրամաբանական շեշտն իր վրա կրող բառ, բայց խոսողի հարցումը ստորոգյալին կամ այլ անդամի է վերաբերում։ Օրինակ՝ Իսկ ջո՞ւր կրողն ով է (Սգր)։ Այստեղ թեև հարցականը ջուր բառի վրա է, բայց հարցնողն ուզում է իմանալ, թե ով է ջուր կրողը։ Այլ օրինակներ՝ — Սա՞ ինչ գիրք է։ — Քո՞ ինչ գործն է (Սգր)։ Բանաստեղծությո՞ւնն ով պիտի արտասանի (Սգր)։ Երե՞կ ով էր բացակայում։ Դու կոշիկներն ես տանո՞ւմ, բա վերարկո՞ւն ով պիտի տանի (Սգր)։ Իսկ կամո՞ւրջը երբ պիտի նորոգեն (Սգր) և այլն։

Հարցական նախադասությունների ստորոգյալը, ինչպես երևում է բերված օրինակներից, պատմողական նախադասությունների նման արտահայտվում է բայի սահմանական, ըղձական, ենթադրական և հարկադրական եղանակներով, կարող է բաղադրյալ լինել։ Հարցական կարող են լինել նաև անդեմ նախադասությունները։ Ինչպես՝ Երեխան ու սուտ խոսե՞լ։ Աշխենն ու լալկանությո՞ւն և այլն։

<u>Հրամայական նախադասություններ</u>։ Հրամայական նախադասություններն արտահայտում են հրաման, հորդոր, պահանջ, թելադրանք, ցանկություն, առաջադրանք, խնդրանք և այլն։ Օրինակ՝ Պահպանեցե՛ք ժողովրդի դարավոր արվեստն ու մշակույթը։ Վախեցի՛ր ամենից շատ անտարբերությունից։ Վարը նստիր, որ վերևը քեզ տեղ տան։ Շատ գիտես՝ քիչ խոսիր (առ.) և այլն։ Այժմ այդ արտահայտությունների (երանգների) մասին առանձին-առանձին։

1. Հրաման, հարկադրանք, հանդիմանություն, Ջոկ, շարվի՛ր։ Վազքով մա՛րշ։ — Փորի՛ր, փորի՛ր,— հրամայում է լեյտենանտը (ԲՀ)։ Բավական է, հանեցե՛ք ձեր դիմակները։ Ինքդ հասկացի՛ր և ուրիշներին դու լավ հասկացրո՛ւ (ՊՍ)։ Մի՛ համարձակվիր անքաղաքավարի խոսել երիտասարդ տիկնոջ մասին (ԱՇ)։ Գնա՛ քո գործերի հետևից (ԱՇ)։ Մտի՛ր առանձնասենյակդ, խորասուզվի՛ր քո հաշիվների մեջ և հետո... ո՞վ գիտե (ԱՇ)։ — Տարե՛ք դրան, սատկացրեք,— հրամայեց քուրդը մյուսներին (ՀՔ)։ Ինձ մի՛ խաբիր։ Հիմարություններիդ վե՛րջ տուր։ Դե՛, պատմի՛ր (ՀՔ)։ Խարիսխը նետե՛լ, ճոպանները կապե՛լ։ Ձայնդ մի՛ բարձրացրու, խելքդ գլուխդ հավաքիր։ Ձեզ պահել իմացե՛ք։ Ձեռքդ քե՛զ քաշիր։

2. Խորհուրդ, առաջադրանք. Գտնե՛լ ի հոլովման գոյականները, որոշել հոլովը և թիվը։ Կարդացե՛ք առակը դերերով։ Գրի՛ առեք ձեր լսած առակներից մի քանիսը (դասագիրք)։ — Վանի՛ր քեզանից այդ տխուր մտքերը, Փառանձեմ, ու եղի՛ր խելամիտ։ — Ո՛չ, արքա, ունկն մի՛ դիր այդ խոսքերին և շարունակի՛ր սկսածդ (ՍՋ)։ Ուտելուց առաջ

ձեռքերդ լվա՛։ Ներս մտնելիս գլխարկդ հանի՛ր։ Մաքրած հավը լվացած դրե՛ք կաթսայի մեջ, ջուրը լցրե՛ք ու խաշե՛ք։ Հավի մսաջրից հավաքե՛ք ճարպը, լցրե՛ք թավայի մեջ և սոխը մեջը տապակե՛ք (մամուլ)։

3. Հորդոր. — Մանի՛ր, մանի՛ր իմ ճախարակ (ՂԱ)։ Քաշի՛, եզը, ուսիդ մատաղ, քաշի՛, քաշենք, վար անենք, ճիպտի՛ն արա, քշի՛, հոտաղ, Մեր սև օրին ճար անենք (ԼԹ)։ Խաղաղ անցի՛ր, ուրախ անցի՛ր երկու օրվա էս ճամփեդ (ԼԹ)։ Աղոթի՛ր, ճգնի՛ր, կգտնես, որդյակ (ԼԹ)։ Հայոց աղջիկ, հայոց աղջիկ, գնա՛ առաջ, մի՛ վախիլ (ՌՊ)։ Պահպանեցե՛ք հայ լեզուն և հայ գիրը, եթե փրկվենք այս եղեռնեն (ԼՔ)։ Սիրեցե՛ք և գալոց սերունդներին ավանդեցե՛ք հայ լեզուն ու հայ գիրը (ԼՔ)։ — Ի՞նչ ունիս, ասա, մի՛ քաշվիր (ԱՇ)։ Մի՛ վախեցեք նրման վատությունից (ՊՍ)։ — Խոսի՛ր, դստրիկս, խոսի՛ր, խոսի՛ր համարձակ (ՍԶ)։ Քնի՛ր, իմ մանուկ, օրոր ասեմ քեզ (ՍԿ)։ Արի՛, եղբայր, փառաբանենք մեր քաղցրաբառ հայոց լեզուն (ՆԶ)։

4. Խնդրանք։ — Օգնի՛ր ինձ նրա հետ հաշտվելու։ Տո՛ւր ինձ ձեռքդդ, ես քեզանից ներում եմ խնդրում։ Թո՛ւլ տվեք անցնել (ԱՇ)։ — Ների՛ր, տեր իշխան։ Իրավո՛ւնք տուր խոսելու (ՍԶ)։ Ուզում եմ ապրել, հայր, կյա՛նք տվեք ինձ (ԹՀ)։ Ուրեմն ների՛ր ինձ, ծերուկ (ՄԱ)։ Համեցե՛ք, նստեցե՛ք, թե՞յ անուշ արեք։ Ողորմացե՛ք անտեր, անտուն ծերուկիս։ Խնայեցե՛ք անհեր որդուն (Սգր)։

5. Կոչ, հրավերք. Ե՛տ եկեք... գարնան վարար գետ եկեք, Անցած օրեր խինդ ու սեր, դարձե՛ք իրար հետ եկեք (ԼԹ)։ Է՛յ, կանաչ ախպեր, Արի՛ քեզ հետ բեր արևի շողեր, բե՛ր անուշահոտ ծիլ, ծաղիկ ու խոտ (ԼԹ)։ Ո՛վ քնած է, արթուն կացե՛ք, Ո՛վ արթուն է, ձի թամբեցե՛ք, Ձի ևս թամբել, եկե՛ք հեծե՛ք (ԼԹ)։ Հեյ՛, ո՞վ կուզի թել ու ասեղ, Դո՛ւրս եկեք, դո՛ւրս, ինձ մոտ, էստեղ (ԼԹ)։ Պրոլետարնե՛ր, բոլոր երկրների, միացե՛ք։ Ելի՛ր, ում կյանքն անիծել է և այլն։

Հաճախ որոշ նախադասություններ այնքան էլ որոշակի չեն տարբերվում միմյանցից, նրանց տարբերությունը երանգային է։ Այդ տարբերությունն զգացվում է երբեմն անուղղակի խոսքի, ծանոթագրումների միջոցով։

Հրամայական նախադասությունները ձևավորվում են հրամայական հնչերանգով, տոնի բարձրությամբ։ Հրաման արտահայտող բառը կրում է նախադասության տրամաբանական շեշտը։ Ուստի եթե նա նախադաս է, ինչպես՝ Մանի՛ր, մանի՛ր, իմ ճախարակ։ Քաշի՛, եզը, ուսիդ մատաղ, հնչերանգը բարձրից իջնող է։ Եթե միջադաս է, հնչերանգը բարձրացող, իջնող է, ինչպես՝ Իմ փոքրիկ եղբորն ուղարկեցի՛ք այդ հետաքրքիր գիրքը։ Իսկ եթե վերջադաս է, հնչերանգը բարձրացող է. ինչպես՝ Սառը գետը մի՛ մտնք։ Այս գիրքը կարդացե՛ք։

Հարադրավոր բայերի շեշտն ընկնում է անվանական բաղադրիչի վրա։ Օրինակ՝ Անձնատո՛ւր եղեք։ Նե՛րս եկեք։ Դուրը բա՛ց արեք։ Ձիուց ցա՛ծ իջիր և այլն։

Հրամայական նախադասության ստորոգյալն արտահայտվում է՝ ա) բայի հրամայական եղանակով։ Օրինակ՝ Դուք էլ ծիծաղի ալիքների թիվն ասացե՛ք, հապա, ցո՛ւյց տվեք նրանց գույները պես-պես և քմծիծաղի ու քրքջոցի տարբերությունը հասկացրե՛ք մեզ (ՊՍ)։ Խընդրի՛ր, սիրտ իմ, կարոտակեզ... խնդրի՛ր նրան (ԼԹ)։ Մի՛ նեղացեք, դուք էլ զգո՛ն եղեք (ԲՀ)։ Ասացե՛ք մեծ տիկնոջը, որ ես այստեղ եմ (ԱՇ)։ Գեղակահարեցե՛ք նրան... խնդրեցին նաև մյուսները (ՄԱ)։

բ) Բայի սահմանական եղանակի ներկա և անցյալ կատարյալ ժամանակներով։ Օրինակ՝ — Գնացի՛նք,— հրամայում է մայրը տիրական շեշտով (ԲՀ)։ Այս բոպեին գնո՛ւմ ես և տեսորդ բերում,— ջղայնանում է ընկեր Կարապետյանը (Սգր)։ Հիմա գնո՛ւմ եք և սկսո՛ւմ վարը, հողը այդքան թաց չէ (Սգր)։

գ) Ըղձական եղանակի ապառնի ժամանակի 1-ին դեմքի հոգնակի, 2-րդ դեմքի եզակի և հոգնակի թվերով։ Օրինակ՝ Կոնկին, վերցրո՛ւ ավտոմատը, բայց չկրակե՛ս, մինչև լասեմ (ԲՀ)։ Զգնա՛նք, ընկերնե՛ր, մենք այստեղ պետք ենք։ Գնա՛նք, Արամ, ուշ է (Սգր)։ Երեխաներ, նե՛րս եկեք, բայց չաղմկե՛ք, շմոռանա՛ք, որ կողքի սենյակում դաս է (Սգր)։ Չհամարձակվե՛ս մորդ նեղացնել (Սգր)։ Կորչե՛ն դավաճանները (Սգր)։ Գնա՛, իմ աչքին այլևս չերևա՛ս (Սգր)։ Վաղը ճաշին անպայման հացը հասցնես, սոված չթողնե՛ս տրակտորիստներին (Սգր)։ Բոլոր ուժերը նվիրե՛նք պլանների կատարմանը։ Է՛լ ավելի բարձրացնե՛նք աշխատանքի արտադրողականությունը, իջեցնե՛նք ինքնարժեքը (մամուլ)։

դ) Ենթադրական եղանակի ապառնի ժամանակի 2-րդ դեմքով։ Օրինակ՝ — Մտեր, Կամալով, հերթապահեցե՛ք որքան կարող եք, իսկ հետո կարթացնե՛ք Կոնկինին և Նալբանդյանին։ Անպայման կնիշե՛ս, շմոռանա՛ս (ԲՀ)։ Կգնա՛ս և հորդ կպատմե՛ս արարքդ (Սգր)։

ե) Հարկադրական եղանակի ապառնի ժամանակի 2-րդ դեմքով։ Օրինակ՝ Այս ամենը պե՛տք է աչքի առաջ ունենանք։ Պե՛տք է զոհեք։ Դու չպի՛տի ընկրկես, Դուք չպիտի՛ լռեք (Մ)։

զ) Անդեմ նախադասությամբ։ Օրինակ՝ — Կրա՛կ,— լսվում է լեյտենանտի ձայնը։ — Նոր ժապավե՛ն,— բղավում եմ ես (ԲՀ)։ Զոկի հրամանատար Սասունյանին՝ նախաճաշից հետո կալանավորե՛լ զինվոր Կոնկինին։ Զինսե՛լ, տեղադրե՛լ գնդացիրը (ԲՀ)։ Դեպի սո՛ւտ, քաջեր, դեպի սո՛ւտ և դեպի մա՛հ (Մ)։ Մա՛հ գերմանական օկուպանտներին։ Բարձրացնե՛լ աշխատանքի արտադրողականությունը, իջեցնե՛լ արտադրանքի ինքնարժեքը (մամուլ)։ Ծաղիկները շտորե՛լ։ Զաղմկե՛լ։

Ծանոթ. 1. Հաճախ մի-ն հանդես է գալիս որպես եղանակավորող բառ, ոչ արգելական։ Այդ դեպքում շեշտ չի ունենում, ինչպես՝ Թող գա

մի տեսնենք (ՀԹ)։ Մի ասա տեսնեմ։ Մի վերկաց գնա գյուղամեջ, թող տրամադրություն բացվի (ԱԲ)։ — Տիտոս, չմեռնես դու, ճակատդ էլ ա մի բաց արա (ԱԲ)։ Մի տես, մի տես, ոնց է կանչում (ՀԹ)։

Ծանոթ. 2. Մի շարք հրամայական եղանակի բայեր (արի, եկ, տես, բեր, ասա) հաճախ հանդես են գալիս եղանակավորող բառի իմաստով՝ տվյալ կապակցության մեջ կորցնելով հրամայական եղանակի իմաստը։ Օրինակ՝ Դե եկ, վարդապետ, մի՛ խելագարվի (ՊՍ)։ Արի վերջացրու, բոլ ելավ, հերիք։ Բեր ձեռը վեր կալ, անեծք չար բանին (ՀԹ)։ Աշխարհը միշտ կմնա, ասա մարդը սներես չմնա (ԱԲ)։ — Անունն ի՞նչ էր էն անտերի... Տես է, հուշ եմ ասել (ԱԲ)։ Տես ինչպես բացվեց լեզուն (ԱԲ)։ Արի գնանք Բոհեմիայի անտառները (ԱԲ)։

Բացականչական նախադասություններ։ Սրանք բացականչական հնչերանգով նախադասություններ են, ունեն զգացական երանգ և արտահայտում են ափսոսանք, հիացմունք, օրհնություն, հեգնանք, հանդիմանություն, վախ, կասկած և այլն։ Բացականչական նախադասությունների զգացական կողմն ուժեղ է։ Շատ բացականչական նախադասություններ փոխակերպման չեն ենթարկվում, չեն դառնում պատմողական կամ հրամայական։ Բացականչական նախադասությամբ խոսողը նպատակադրվում է համապատասխան զգացումներ առաջացնել լսողի մեջ, նրան հաղորդակից դարձնել իր զգացմունքներին։ Այս նախադասությունները գործածական են գեղարվեստական գրականության մեջ, բանավոր խոսքում։ Յուրաքանչյուր նախադասություն համապատասխան հնչերանգով կարող է դառնալ բացականչական և արտահայտել խոսողի զգացմունքային վերաբերմունքը այս կամ այն իրողության վերաբերյալ։ Բացականչական նախադասությունները չունեն բառաբերականական արտահայտման ինքնուրույն, հստակ միջոցներ, ինչպես ունեն հրամայական-հորդորական նախադասությունները (բայի հրամայական եղանակ), այս տեսակետից նման են պատմողական, հարցական նախադասություններին։

Բացականչական նախադասությամբ խոսողն արտահայտում է՝

1. Ափսոսանք, այլև զժգոհություն։ — Ա՜խ, ափսոս իմ գարուն կյանքիս Սուր փշերը մնացին (ԱԻ)։ Վա՜խ, իմ սերս անցավ գնաց, ետ կանչելու ճար չկա (ԱԻ)։ Ա՜խ, լաց՝ ինչքա՞ն, ինչքա՞ն կուզես. Անցածն էլ ետ չի գալու (ԱԻ)։ Հե՜յ, վա՜խ, կոտրան իմ թևերս, Ընկա գիրկդ, Ալագյազ (ԱԻ)։ Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցավ, Օր ու արև չտեսանք, Վա՜խ, մեր կյանքը սևով անցավ, Աշխարհից բան չիմացանք (ԱԻ)։ Քանի սերեր, քանի հուրեր Ջուր հանգցրի, հաղար ափսո՞ս (ՎՏ)։ Բյուր մարդոց մեջ, պաղ մարդոց մեջ Որպես տրտում անապատում—մենակությո՞ւն, մենակությո՞ւն... (ՎՏ)։ Ափսո՞ս, Անուշ սարի ծաղիկ, Ափսո՞ս իգիթ քո յարին (ՀԹ)։ Ինչքա՞ն ծաղիկ պիտի բուսներ, Որ չբուսավ էս հողին (ՀԹ)։

2. Հիացմունք. — Է՜յ, ջա՜ն, հազար ինձ երանի (ԱԻ)։ Է՜յ, ջա՜ն, հայրենիք, ինչքա՞ն սիրուն ես (ԱԻ)։ Ջա՜ն, իմ յարն է, մեռնեմ նրան (ՀԹ)։ Այնպե՜ս դուրեկան, այնպե՜ս փայփայիչ աշուն էր կրկին (ՊՍ)։ Շվին հեռու հառաչեց, Գանգատ արավ, ի՜նչ անուշ, Հովը եկավ տարուբեր, Շնկշնկում է, ի՜նչ անուշ (ԴԴ)։ Ինչքա՞ն ծիլ ծաղիկներ ծընվեցին այս գիշեր (ԴԴ)։ Քո սուրբ քրտինքով Բազում—բյուրավոր ապրում են մարդիկ խաղա՞ղ երջանի՞կ (ԱՍ)։ Որ արտուտի պես վե՞ր ու վե՞ր ճախրեմ... ազիզ հայրենիք (ԱԻ)։

3. Օրհնություն, մաղթանք, այլև անեծք. — Փա՞ռք իմ հանդիսատեսին, փա՞ռք ու շնորհակալություն նրա ներշնչող, ստեղծագործ ոգուն (Փափ)։ Ողջո՞ւյն, ողջո՞ւյն մեր հին ու նոր Արի, բարի ընկերներ (ՀԹ)։ Փա՞ռքդ շատ, ա՜յ աստված։ Շե՛ն կենա Առաքել քյոխվեն,— ձայն տվին այս ու այն կողմից (ԱԲ)։ Ողջո՞ւյն քեզ, արև, ողջո՞ւյն քեզ, գարուն (ՎՏ)։ Փա՞ռք և երանի՞ քեզ, քա՞ջ սերմնացան (ԱՇ)։ Անե՞ծք քեզ, չար սատանա։ Ջարն էլ է միշտ ապրում անվերջ, անե՞ծք նրա չար գործին (ՀԹ)։ Կեցցե՛ գեղեցկությունը (Շանթ)։ Կեցցե՛ Մայիսի մեկը։

4. Ջարմանք, այլև վրդովմունք. — Ի՞նչ պատասխան պիտի ես տամ հող ու ծաղիկ տվողին (ՀԹ)։ Սա ի՞նչ անշնորհք բան է, ա՜յ տղա (Շանթ)։ Նրա թևերից բռնեցին, ետ քաշեցին և, ո՛վ զարմանք, խոհարարը, ի՞նչ անպատվություն, ի՞նչ խայտառակություն Պետրոս Ղուլամյանի համար (ԱՇ)։ — Ի՞նչ հիմար բան ասացիր Անտոնինա (ԱՇ)։ Գո՜ղ, ավազա՜կ, վախկո՜տ,— մռնչաց Միքայելը,— գոնե տաքացի՞ր, բարկացի՞ր, վախկո՜տ (ԱՇ)։ Ա՜խ, Եվա՜, այս ինչե՞ր ես ասել տալիս ինձ, այս ինչե՞ր ես ասել տալիս ինձ (ՆԴ)։ Գարուն է, արի, վա՜խ, քեզ ի՞նչ արին (ՊՍ)։ Օ՜, ինչ ահավոր բոպե է։ Օ՜, ահռելի, քստմնելի այդ լռությունը (Փափ)։ — Վա՜յ, վա՜յ, նանի, պոչը ծաղիկ է (ԱԲ)։

5. Հեգնանք. — Է՜է, շատ հարկավորս է։ — Ահա թե ի՞նչ,— գոչեց Սմբատը զարմացած,— շա՜տ առատաձեռն ես (ԱՇ)։ — Թե չէ, ի՞նչ ազբյուր, թե չէ ի՞նչ լճակ (ՊՍ)։ Բարի է, ինչպե՜ս չէ,— ծոր տվեց նա։ — Նա քեզ սիրո՜ւմ է։ Ինչպե՜ս չէ, այդ էր պակաս։ Տեսա՞ր դու, նա ինձ սիրո՜ւմ է։ Ես էլ սիրե՞մ, ի՞նչ է,— հեգնախառն ժպտաց նա (Սգր)։

Այս նախադասությունների ձևավորման ամենակարևոր միջոցը բացականչական հնչերանգն է, որը գրավորում արտահայտվում է բացականչական նշանով։ Բացականչական հնչերանգը այս նախադասությունների ձևավորման կայուն, մշտական միջոցն է։ Առանց այդ հնչերանգի բացականչական նախադասություն չի լինի, այն առկա է այս բնույթի բոլոր նախադասություններում։ Այդ հնչերանգը, ինչպես հրամայական, հարցական նախադասություններում, իր վրա է կրում նախադասության որևէ անդամ, բայց վերաբերում է ողջ նախադասությանը։ Մյուս նախադասությունների նման այս դեպքում էլ, ըստ

հնչերանգակիր բառի դիրքի, հնչերանգը կարող է լինել՝ իջնող. ինչպես, օրինակ՝ Օ՜, ինչ ասեղ, իսկն օձի քիստ (ԶԹ)։ Ա՜խ, տվեք ինձ քաղցր մի քուն, Կյանքից հեռու սլանամ (ԶՀ)։ Մնաք բարո՜վ, արև, գարուն և խնկաբույր ծաղիկներ (ԶՀ)։ Բարձրացող. ինչպես՝ Անուրջներս երկնածին գնացի՜ն, գնացի՜ն (ՎՏ)։ — Հե՜յ, լավ մանրո՜ւք, Ասե՜ղ, հուլո՜ւնք, Մատնի՜ք, մարջա՜ն, Ապարանջա՜ն։ Հա՜վ, ձու բերե՜ք, Առե՜ք, տարե՜ք (ԶԹ)։ Բարձրացող-իջնող. ինչպես՝ Մանուկ օրից շա՜տ եմ տեսել։ Համ էլ մահից ի՜նչ փախչեմ (ԱՇ)։ Քեզ մոտ եմ գալիս, իմ հի՜ն տրտմություն (ԶԹ)։

Բացականչական նախադասությունների բառաբերականական միջոցներն են՝ ա) բայի խոնարհման եղանակները։

Բացականչական նախադասությունների ստորոգյալներն արտահայտվում են ամենից շատ ըղձական եղանակի բայերով։ Օրինակ՝ Լինե՜ր հեռու մի անկյուն, Լինե՜ր մանկան արդար քուն, Երազիս մեջ երջանիկ Հաշտ ու խաղաղ մարդկություն (ԶԹ)։ Լինեի չոբան սարերում հեռու (ՎՏ)։ Ումուդ ջա՜ն, նանին քո ցավը տանի (ՊՍ)։ Որ արտուտի պես վե՜ր ու վե՜ր նախրեմ (ԱԻ)։ Տանի՜, թողնի՜, ո՜րն է բարին (ԶԹ)։ Ապրե՜ք, երևե՜ք, բայց մեզ պես չապրե՜ք (ԶԹ)։ Ջա՜ն, իմ յարն է, մեռնեմ նրան (ԶԹ)։

Բացականչական նախադասությունների ստորոգյալները կարող են արտահայտվել նաև բայի մյուս եղանակներով բացականչական հնչերանգի օգնությամբ։ Օրինակ՝ սահմանական եղանակի բայերով՝ Եկա՜ն, Եկա՜ն, հարսանիքավորները եկա՜ն։ Գալի՜ս եմ, գալի՜ս։ Ո՞վ իմանա՝ ուր ընկանք, Քանի՜ օրվա հյուր ընկանք, Սերն ու սիրտն էլ երբ չկա՝ Կրա՜կն ընկանք, զո՜ւր ընկանք (ԶԹ)։ Երազներս երկնածին գնացի՜ն, գնացի՜ն (ՎՏ)։ Ա՜խ, տաշում է նա, որ դնի հանդիսատ Իմ կյանքի վրա, Իմ անո՜ւշ կյանքի (ԴԴ)։ Գալո՜ւ եմ, գալո՜ւ, ինձ էլ էք տանելու (Սգր)։ Ենթադրական եղանակի բայերով՝ Կգա՜ս, կգա՜ս, անպայման կգա՜ս,— ձայնում էր Արշակը (Սգր)։ Հարկադրական եղանակի բայերով՝ Պիտի գոռամ, պիտի կրկնեմ Անդադար, ազատությո՜ւն (Մն)։ Հրամայական եղանակի բայերով՝ — Եկե՜ք, քույրե՜ր, սեգ սարերի Ձմեռազեղ ոգիներ (ԶԹ)։ Այս նախադասությունների ստորոգյալն էլ մյուսների նման կարող է բազադրյալ լինել։ Օրինակ՝ Տեր աստված, ինչքա՜ն գեղեցիկ, ինչքա՜ն հուշալի էր նա այդ միջոցին (ՆԴ)։ Գանձեր ունեմ, անտա՜կ, անծե՜ր, ես հարուստ եմ, ջա՜ն, ես հարուստ (ԶԹ)։ Էս ի՜նչ զուլում աշխարհ է, Արտացավ ընկեր չկա (ԱԻ)։

բ) Ձայնարկությունները։ Բացականչական նախադասություններն արտահայտվում են նաև ձայնարկությունների միջոցով։ Օրինակ՝ Հե՜յ վա՜խ, կոտրան իմ թևերը (ԱԻ)։ — Օ՜, նա շատ բարի է,— բացականչեց Եվան։ — Ա՜, վերջապես հասկացաք։ Օ՜հ, ինչ բթամիտն ես եղել (ՆԴ)։ — Օհո՜, օհո՜, ա՜յ նոր բա՜ն (ԱՇ)։ Է՜յ, ջան, հայրենիք, ինչքա՜ն

սիրուն ես (ԱԻ)։ Ուխա՜յ, ուխա՜յ, սիրուն հովիվ, քունդ անուշ (ՂԱ)։ — Վա՜խ, վա՜խ, իմ անմեղ ոչխար,— մղկտաց Հասոն (ՎՓ)։

գ) Հարցահարաբերական դերանունները։ Այս նախադասություններում մեծ է հարցահարաբերական դերանունների մասնակցությունը։ Օրինակ՝ Ի՜նչ սիրուն օր է, ի՜նչ կապույտ երկիր (Շանթ)։ Ի՜նչ գեղեցիկ սեզոն եղավ այդ (Փափ)։ Ինչպիսի՜ անձնազոհությամբ աշխատեցի այդ տարիներին, ինչքա՜ն սիրեցի ես իմ ընկերներին (Փափ)։ Ի՜նչ էլ բերք կար էն տարի (ԱԻ)։

Հաճախ կարող են ձայնարկություններն ու հարցահարաբերական դերանունները միասին հանդես գալ բացականչական երանգով։ Օրինակ՝ Ա՜հ, ի՜նչ սիրող դուստր, ինչ զգայուն սիրտ (ԱՇ)։ Ա՜հ, որքա՜ն, որքա՜ն սրտիս մոտ էին (Շանթ)։ — Ա՜խ, Լևոն, իմ պատվական ընկեր, որքա՜ն շնորհակալ եմ քեզանից (ՆԴ)։ Ո՜հ, որքա՜ն դժվար է թողնել իմ ետևից մայրս կիսամեռ, հայրս սգավոր, փեսաս սրտաբեկ (Մ)։

դ) Անդեմ նախադասությունները։ — Փա՜ռք մեր Տիրամոր անունին (Շանթ)։ Մոռանա՜լ, մոռանա՜լ ամեն ինչ, ամենին մոռանա՜լ, Զսիրել, չխորհել, չափսոսալ, հեռանա՜լ (ՎՏ)։ Ա՜խ, լինել թեթև, հրոտ, հրակամ, վառվե՜լ որպես զոհ (ԵՉ)։ — Յավրո՜ւս, յավրո՜ւս, կանաչ արև իմ յավրո՜ւս,— աղաղակում էր մայրը (ՎԹ)։ Օ՜, ողորմելիներ, օ՜, թշվառականներ, օ՜, ատելի ստրուկներ (ՆԴ)։

Ձայնարկություններն ու հարցահարաբերական դերանունները մշտական միջոց չեն, որովհետև առանց ձայնարկության և հարցահարաբերական դերանունների էլ նախադասությունը կարող է բացականչական լինել, եթե ունի համապատասխան հնչերանգ։ Հաճախ բառերի կրկնության շնորհիվ նախադասությունը ստանում է սաստկական երանգ։ Ինչպես՝ Դժո՜խք, դժո՜խք,— գոչում էր նա։ — Օգնեցե՜ք, օգնեցե՜ք (ԱՇ)։ Օ՜, ծանր է, ծանր է, օ՜, ծանր է այնքան ուսերիս համար բեռը կյանքի (ԵՉ)։ Քնի՜ր, քնի՜ր, եղիր խեղճ, անօգնական ու հլու (ԵՉ)։ Անի՜, Անի՜, ա՜խ, Անի՜, Քանդողիդ տունը քանդվի (ԽԱ)։ Այնպե՜ս, այնպե՜ս, այնպե՜ս անուշ նա փաղաքշում էր (ԵՉ)։

Երբեմն միևնույն նախադասության մեջ հանդես է գալիս թե՛ շեշտական հնչերանգ, քանի որ ստորոգյալն արտահայտված է լինում հրամայական եղանակի բայով, թե՛ բացականչական, որն արտահայտված է լինում ձայնարկություններով, բացականչություններով։

Օրինակ՝ Ա՜խ, տվե՛ք ինձ քաղցր մի քուն, Կյանքից հեռու սլանամ (ԶՀ)։ Ապատության դանգ, դու վեհ զողանջև... Ինչպես մրրիկ շաչե՛, շառաչե՛ (ԱԻ)։ Օ՜, նայիր ու տես, նայիր ու ժպտա, Օ՜, նայիր հեռուն (ԵՉ)։ Վա՜յ, վա՜յ, Մոսի ջան, ինձ մի՛ սպանի (ԶԹ)։ Կանչեմ ձեզ, հլամ՝ եղբայրնե՛ր, եկե՛ք... (ՎՏ)։ Այս բոլոր նախադասություններում շեշտական և բացականչական հնչերանգները միասին են հանդես եկել և դժվար է դրանց հնչերանգային մի տեսակ համարել։ Այդպես էլ՝ Ի՜նչ

կլինի վեր կենաս գաս (Սգր)։ Ի՞նչ են տարել նրանք կյանքից, թե ի՞նչ տանես դու քեզ հետ (ՀՔ), նախադասություններն ունեն հարցաբացականչական հնչերանգ։ Այդպիսի նախադասություններն ընդունված է անվանել համակցական կամ խառը նախադասություն։

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Նախադասություններն ըստ կառուցվածքի լինում են՝ ա) դիմավոր և անդեմ։ Դիմավոր են կոչվում այն նախադասությունները, որոնք ունեն դիմավոր բայով գերադաս անդամ (ստորոգյալ)։ Օրինակ՝ Տրդատը երկյուղածորեն շոշափեց թուղթը (ԴԳ)։ Արքան հրամայեց մի կամուրջ էլ կառուցել (ԴԳ)։ Դու ես իմ ճրագը, դու ես իմ վարդը, դու ես իմ արևը, դու իմ հողը... (ՎՓ)։ Փակ են քո սրտի հեռուներն իմ դեմ (ՎՏ)։ Ես ամենուրեք քեզ եմ որոնում (ՎՏ)։ Շահյանի հայրը մոտ վաթսուն տարեկան մարդ էր՝ խոշոր արտաքինով (ՆԴ)։ Նաիրյան այդ հնամյա քաղաքն ամեն ինչով նման էր Նաիրյան բոլոր հին ու նոր քաղաքներին (ԵՁ)։ Լուսացավ։ Երեք ժամ անձրևում էր։ Ցուրտ է, ցուրտ է, բուք-բորան։

Անդեմ են կոչվում այն նախադասությունները, որոնք չունեն դիմավոր բայ (ստորոգյալ), և նրանց գլխավոր անդամն արտահայտվում է գոյականով կամ անդեմ բայով։ Օրինակ՝ Կայարան, գորքե՞ր, գորքե՞ր, գորքե՞ր (ԳՄ)։ — Դե՞հ, քիչ հանդարտ, երեխայք,— ձայնեց նա։ Ի՞նչ... արհամարհել պապենական սովորությունը, թողնել ճահիճն ու ձորերը, ճգնել ազատվելու պատատուկներից և, որ գլխավորն է, դեպի լեռը մագլցե՛լ։ Ինչի՞ նման էր դա (ՎՓ)։ Սաղիկները չտրորել։ Ծառերը չկոտրել և այլն։

բ) Պարզ և բարդ։ Պարզ նախադասությունն արտահայտում է մեկ միտք մեկ ստորոգումով, ստորոգումային մեկ միավոր է։ Օրինակ՝ Գարունն ամեն տեղ նոր կյանք է վառել (ՎՏ)։ Արագիլը հանգրվանել էր մեր պարտեզի բարդու կատարին (ԱՍ)։ Ա՜խ, թոռ՛ր, ծիծեռնակ, ծընած տեղս՝ Աշտարակ (Դոդոխյան)։ Մեկը մյուսի հետևից անհետանում էին քաղաքի մասնավոր խանութները (ԱՍ)։ Երեկոյանում էր և այլն։

Բարդ նախադասությունը բաղկացած է մեկից ավել ստորոգումային միավորներից՝ միացած հնչերանգային մեկ ավարտվածությամբ, ուրիշ խոսքով՝ միտքն արտահայտվում է մեկից ավել ստորոգումով, բայց մեկ ավարտուն հնչերանգով։ Օրինակ՝ Որտե՞ղ է ընկած Այն քարը հիմի, Որ հողիս վրա Շիրիմ պիտ լինի (ԱԻ)։ Պարույր Սևակը հանճարեղ բանաստեղծ էր, և որքան հեռանանք, այնքան պարզ ենք տեսնելու այս ճշմարտությունը (մամուլ)։ Դուռը բացվեց, և ներս մտավ Մանուկ էֆենդին (ԵՁ)։ Քնքշաբույր ծաղկանց հրեղեն խաղով ժրպտում են նորից անտառ ու ձորակ, ով հեղեղները խոսուն-սառնորակ ողջունում են ինձ զվարթ ծիծաղով (ՎՏ)։ Եթե դու բարձրից, սրինգդ հնչեցնելով, կարողացար ոչխարներին սանդուղքի վրայով քեզ մոտ վեր հանել, այն ժամանակ աղջիկս քեզ հալալ, ա՜ռ ու վայելիր (ՎՓ)։

Պարզ նախադասություններն էլ իրենց հերթին լինում են համառոտ և ընդարձակ։ Համառոտ է կոչվում այն նախադասությունը, որը բաղկացած է միայն գլխավոր անդամներից, չունի լրացումներ։ Օրինակ՝ Առուները քչքչում են։ Երդում է Լուսինե Զաքարյանը։ Իսահակյանը քնարերգու է։ Ընդարձակ է կոչվում այն նախադասությունը, որը, գլխավոր անդամներից բացի, ունի նաև լրացումներ։ Օրինակ՝ Լեռը մի գիշերում այնպես ճերմակել էր (ԴԳ)։ Պատուհանիս տակ լալիս էր կրկին Թափառիկ երգչի երգը ցավագին (ՎՏ)։ Գյուղում Ավին լավ որսորդի համբավ ուներ (ԱԲ)։

գ) Միակազմ և երկկազմ։ Երկկազմ են այն նախադասությունները, որոնք ունեն երկու գլխավոր անդամներ՝ ենթական և ստորոգյալ։ Օրինակ՝ Օրորոցից մեզ փայփայել է մայրաբար հայոց լեզուն (ՆՁ)։ Հրպարտ դողանջում են արքայանիստ քաղաքի հազար ու մեկ եկեղեցիների զանգերը (ԴԳ)։ Անտառը հուզված էր, հուզված մեծապես (ՎՏ)։

Միակազմ են այն նախադասությունները, որոնք միակենտրոն են, բաղկացած չեն երկու գլխավոր անդամներից։ Օրինակ՝ Ճտերն աշնանն են հաշվում։ Վարը նստիր, որ վերը քեզ տեղ տան (առած)։ Ջծխել։ Կանաչները չպոկել։ Ի՞նչ լավ, ի՞նչ անուշ, հոյակապ եղանակ։ Հե՛ր ան ինիծած։ Խմե՛լ, խմե՛լ, մինչև գիտակցության լրիվ կորուստ (Սգր)։

դ) Հաստատական և ժխտական։ Հաստատական նախադասությունները հաստատում են ենթակայի որևէ հատկանիշ, ինչպես՝ Թունելագործները կատակելով գնացին հանգստանալու։ Նա երկար տարիներ թունելագործ է։ Արփա-Սևանն ավարտված է, ջուրը բարձրանում է։

Ժխտական նախադասությունները ժխտում են ենթակայի որևէ հատկանիշ։ Օրինակ՝ Սերը ո՛չ հեռավորություն է ճանաչում, ո՛չ էլ խորություն։ Մի հովիվ ադայի փեսա չի լինի (ՎՓ)։

Ժխտական նախադասություն։ Ժխտական նախադասությունը ներհակ է հաստատական նախադասությանը։ Եթե հաստատական նախադասությունում որևէ հատկանիշ վերագրվում, կապվում է ենթակային, ապա ժխտականում այդ կապը ժխտվում է, ցույց է տրվում, որ ենթական չունի այդ հատկանիշը։ Այսպես՝ «Գետը հոսում է, լիճը չի հոսում» օրինակում առաջին նախադասությունը հաստատական է, հաստատվում է գետի հոսելու հատկանիշը, իսկ երկրորդը՝ ժխտական, ժխտվում է լճի հոսելու հատկանիշը, ցույց է տրվում, որ լիճը հոսելու հատկանիշ չունի։

Բոլոր հաստատական նախադասություններն էլ ունեն իրենց համապատասխան ժխտական ձևերը, բացառությամբ մի քանի անվա-

նական անդեմ նախադասությունների, ինչպես՝ Երևան, Ասատֆյան փողոց (ԵՁ)։ 1915 թվական։ Հրդե՜հ, հրդե՜հ։ Բարի երեկո և այլն։

Ժխտումը լինում է ընդհանրական և մասնակի։ Եթե ստորոգյալի արտահայտած հատկանիշի վերագրումն է ժխտված, այսինքն ցույց է տրված, որ ենթական չունի այդ հատկանիշը, ժխտումը լրիվ է։ Օրինակ՝ Սերմնացանները չդարձան տուն (ԳՍ)։ Սոխակն էլ երգ չի ասում։ Դաշտերը դեռ չեն ազատվել ձյան հաստ շերտից և այլն։ Իսկ եթե ժխտված է միայն ենթական կամ մի որևէ լրացում, ժխտումը մասնակի է։ Օրինակ՝ Աշոտը ոչ թե դպրոց է գնում, այլ՝ մանկապարտեզ։ Նա եղբորս տղան է, ոչ թե քրոջս։ Արամն է խոսում, ոչ թե Գեղամը և այլն։ Առաջին օրինակներում ցույց է տրված, որ ենթականները (սերմնացանները, սոխակը, դաշտերը) խոսքի պահին չունեն նշված հատկանիշները (տուն դառնալու, երգելու, ազատվելու), իսկ երկրորդ օրինակներում ժխտումը մասնակի է, ժխտված են առանձին անդամները (տեղի պարագան (դպրոց), հատկացուցիչը (քրոջս), ենթական (Գեղամը)։ Այստեղ հատկանիշի վերագրում ենթակային կա, չի ժխտված, ուստի ժխտումը մասնակի է։ Բերենք ընդհանրական և մասնակի ժխտման այլ օրինակներ։ Ընդհանրական. Ես սիրում եմ մայրիկին, Ես չեմ ուզում լինել կին։ Չէ՛, չի լռել մեծ Շոթայի երգի ձենը կաթողին (ՀԹ)։ Լուսնի լույսը չէր ընկել տան վրա։ — Իմաստունը թույլ չէ, Անդրեաս, այլ՝ անպաշտպան է (ԴԳ)։ — Դուք ինձ չեք հիշում։ Այն ժամանակ դուք ինձ միջոց չտվիք շնորհակալություն հայտնելու։ — Դրժբախտաբար ճանապարհը չգիտեմ,— ծիծաղեց Մինասյանը։ Ես չեմ վախենում, օրիորդ, վերջապես ես մտադիր չեմ երկար խոսելու (ՆԴ)։ Մասնակի ժխտման. — Դուք էլ ունիք մի թշվառ հայրենիք,— ասում էր նա,— բայց ոչ այնքան թշվառ, որքան իմը (ՆԴ)։ Նա վեպ էր կարդում, ոչ թե դրամա (Սգր)։ Սա ոչ թե թթու, այլ քաղցր խնձոր է։

Հաճախ ընդհանրական ժխտական նախադասություններում ստորոգյալի հետ կարող են ժխտվել նաև ենթական և այլ անդամները։ Օրինակ՝ Ոչ ոք նրանց մասին ստույգ բան չգիտեր (ԱԲ)։ Այլևս ոչ ծառաներն ու ոչ գործակատարները և ոչ փողոցից եկած աստիկանները չկարողացան զսպել խեղճերի մերկանդամ բանակը (ԱՇ)։ Երբեք չի սիրել և ոչ էլ սիրվել (ԱՇ)։ Երբեք չի անջատվել նրանից, ո՛չ հանուն հայրենական անեծքի, ո՛չ հանուն կրոնի, ո՛չ մայրական աղերսների և ո՛չ հասարակական նախապաշարումների ու արհամարհանքի (ԱՇ)։ Երևանի կայարանում մեզ ոչ ոք չհանդիպեց (Փափ)։ Ես ոչ մի անգամ չեմ հանդիպել (Սգր)։

Սանոթագր.—Ընդհանրական ժխտական նախադասությունների ստորոգյալները երբեմն կարող են արտահայտված լինել նաև հաստատական խոնարհման բայերով։ Այս դեպքում ենթական արտահայտված է լինում ժխտական դերանունով (ոչ ոք, ոչ մեկը)։ Օրինակ՝ ...Շարունակելու համար այն «ներկայացումը», որի վարագույրը ոչ ոք բարձրացրեց մինչև այսօր և ոչ ոք իջեցրեց (Փափ)։ Ամեն ինչ կանցնի, ոչինչ կըմնա (ԱԲ)։ Ոչ ոք կարող է ասածդ խորհուրդները քննել։ Մեզնից ոչ ոք ունի իրավունք ժողովրդի ազատությունը յուր բախտին զոհելու (Մ)։ Բայց ես նրանց ոչ մի առաջարկությունը պիտի ընդունեմ (Մ)։ Սակայն այս ձևերը ավելի հատուկ են արևմտահայերենին և այժմ հնացած են, հազվադեպ են պատահում արևելահայերենում։

Չևով ժխտական, սակայն բովանդակությամբ հաստատական են՝

ա) կրկնակի ժխտում արտահայտող նախադասությունները։ Օրինակ՝ Դուք չեք կարող չհավատալ, Ես չէի կարող չխոստովանել։ Ես չեմ կարող չսիրել կյանքը, այն միանգամ է տրվում մարդուն (ՆԴ)։ Չի կարելի չվերհիշել (ԱԲ)։ Չեմ կարող չտեսնել վատը և մխիթարվել միայն լավով (Փափ)։ Չեմ կարող չնայել կողքիս մահճակալին (Սգր)։ Սրանք թեև ձևով ժխտական, սակայն բովանդակությամբ հաստատական են և համապատասխանաբար նշանակում են՝ պիտի վերհիշել, պիտի տեսնեմ վատը, նայեմ կողքիս մահճակալին և այլն։

բ) Ճարտասանական հարցում և ժխտում արտահայտող նախադասությունները։ Օրինակ՝ Եվ մի՞թե լացը ծիծաղ չէ... Կամ ծիծաղը՝ լաց, նայած բոպեին (Փափ)։ Մի՞թե ծայրեիծայր անամոթ ծաղր չէ ամբողջ կտակը (ԱՇ)։ Պարզ չէ՞, միթե (ԱՇ)։ Ափսոս չէ՞ մեր լեզուն (ԱԲ)։ Եվ ինչո՞վ երեխա չէ արվեստագետը (Փափ)։

գ) Արևելահայերեն խոսակցական լեզվում գործածվող ձևով ժխտական, բովանդակությամբ հաստատական այնպիսի նախադասությունները, ինչպիսիք են՝ Բժշկին ոչ չասեավ, ուշքը գնաց։ Այդ ոչ չասաց, ծիծաղից թուլացանք։ Ոչ չերգեց, հայիլ-մայիլ մնացին։ Ոչ չարվեց, շրխկոցը մեզ վեր թռցրեց և այլն։ Այս բոլոր ընդգծված ժխտական ձևերը, որոնք կապվում են ոչ չաղկապով, հաստատական իմաստ ունեն և նշանակում են՝ հենց որ ասաց, հենց որ երգեց, հենց որ տվեց, հենց որ տեսավ, կամ՝ տեսնելուն պես, տալուն պես, ասելուն պես և այլն։

Մասնակիորեն կարող են ժխտվել նախադասության բոլոր անդամները։ Օրինակ՝ Ենթական. Ինձ դիմում էին ոչ թե հանդիսասրահի հազարավոր աչքերը, այլ մի հին ժողովուրդ։ Հոդվածում արտահայտված հիացմունքի խոսքերը չէին գլխավոր դերը կատարում, այլ՝ հոդվածը ինքը (Փափ)։ Ռոշիշը. Այդ տարվա ընթացքում ես խաղացել եմ ոչ թե ճարյուրի չափ ներկայացում, այլ մի ներկայացում միայն՝ անվերջանալի արարվածներով (Փափ)։ Փափախ էին կարում ոչ թե Բուխարայի, այլ գառան հասարակ մորթու (ԱԲ)։ Հատկացուցիչը. Առաջ ոչ թե կոլտնտեսության, այլ սովխոզի աշխատողներն էին դրամական վարձ ստանում։ Ոչ թե կիենոդերասանի, թարգմանչի ձայնն էր լսվում։ Կովի կաթն է յուղոտ, ոչ թե ոչխարի։ Բացահայտիչը. Սրանք հանդես են գա-

լին սիրտակաս բացահայտյալների հետ։ Օրինակ՝ Ոչ մեկին՝ ո՛չ Բոջը, ո՛չ եղբորն էր գրում նա։ Ոչինչ՝ ո՛չ քաղց, ո՛չ տանջանք, ո՛չ էլ օտարություն էր կրել նա։ Խնդիրներ. Մենք սիրում ենք ոչ թե նահատակություն, այլ հաղթանակ ուխտած զորավարներ։ Ոչ թե նրանից էր վախենում, այլ իրենից։ Նա ո՛չ հորս էր երևում, ո՛չ մեծ եղբորս, ամաչում էր (ՎՓ)։ Ո՛չ մեքենայով, ո՛չ էլ ավտոբուսով, ոտքով կամ տրամվայով էր գնում։ Պարագաներ. Նա հոգնած ու ուժասպառ էր ոչ թե գիշերվա անքնությունից կամ ոգելից ըմպելիքից, այլ հոգեկան տառապանքներից (ԱՇ)։ Քեզ ներկայանում եմ ոչ այնպես, ինչպես թվացել եմ ընտանիքում (Սգր)։ Նա էլ է շախմատ խաղում, բայց ոչ այնքան հաջող, որքան եղբայրը։ Քայլում էր ո՛չ արագ, գործնական մարդու պես, ո՛չ էլ ծույլերին ու անբաններին հատուկ դանդաղ քայլվածքով։ Երբեմ ամուսինը այդպես կոպիտ չէր խոսել կնոջ հետ։ Քիչ չէր ապրել նա աշխարհում։ Երկու տասնամյակ էլ չէր անցել (ՀՔ)։

Քիչ, պակաս, վատ, լավ, շատ պարագաները ժխտական ստորոգյալների հետ կազմում են մասնակի ժխտական նախադասություն։ Օրինակ՝ Վատ չէր խոսում, քիչ շաշխատեց, պակաս ժլատը չէր, շատ չեմ սպասել, վատ չէր խաղում և այլն։ Սրանք նշանակում են՝ լավ էր խոսում, շատ աշխատեց, շատ ժլատ էր, քիչ եմ սպասել և այլն։

Ժխտական նախադասությունների կառուցվածքը.— Ժխտական նախադասություններն արտահայտվում են ժխտական խոնարհման բայերով։ Օրինակ՝ Մենք էլ չենք զարկելու երկաթի սալին։ Քեզ սպասող չմնաց։ Գովքդ ասող չմնաց (ՀՀ)։ Ինվել էր մեր տանը և երբեք չէր տեսել արմավենի և ոչ էլ նրա սմբակները մխրճվել էին հարավի տաք ավազներում (ՎՓ)։ Զուզեց օջախին մոտենալ (Սգր)։ Ինչպե՞ս ես չնայացա, որ նա մեծ բանաստեղծ է, երբ նա երիտասարդ էր (ՀՔ)։ Ճշմարտությունը չի եղել և չի կարող լինել ո՛չ պաշտոնական, ո՛չ կանխորոշյալ, ո՛չ քարացած (ՊՍ)։ Մի՛ լար, որդիս, որ չես լսում էլ մայրական քաղցր օրոր։ Մի՛ լար, բլբուլ։ Քեզ մի՛ տանջիր (ԱՇ)։ Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին (ՎՏ)։

Ստորոգյալի ժխտական ձևերը կազմվում են չ և մի՛ մասնիկներով։ Մի՛-ն դրվում է հրամայական եղանակի բայի վրա։ Օրինակ՝ Է՛հ, աղա ջան, դարդ մի՛ արա (ԱՇ)։ Ծաղիկները մի՛ տրորիր։ Այդպես մի՛ ասա, մի՛ վիրավորիր մարդկանց (Սգր)։ Չ-ն դրվում է սահմանական, ըղձական, ենթադրական և հարկադրական եղանակների բայերի վրա։ Օրինակ՝ Եվ ես չեմ բերում խոսքը հաշտության։ Անցածն էլ ետ չի գալու։ Իմ հոգին վիրավոր մի թռչուն, չունի բույն, չունի քուն ու անդորր (ԱԻ)։ Չեմ էլ ճիշում շար ու խավար ես ժամին (ՀՔ)։ Երջանիկ չէր եղել նա (ՀՔ)։ Չեմ դավաճանի իմ նվարդին (ՎՏ)։ Ասե՞մ, թե չասեմ հորս։ — Դու չպիտի ասես հորդ (Սգր)։

Ժխտական նախադասություններում օժանդակ բայը դրվում է դերբայից առաջ, հակառակ հաստատական նախադասությունների։ Օրինակ՝ Ձե՞ս լսում երեխայի ձայնը։ Դու չես կարող գրել, և ես չեմ էլ ուզում, որ գրես (Սգր)։ Նա չէր նավատում և չէր ուզում հավատալ (ԱՇ)։ Աշխենն այդպես տխուր, մելամաղձոտ չէր երևացել (ՆԴ)։

Բաղադրյալ ստորոգյալի էական բայի ժխտական ձևը մնում է եզակի։ Օրինակ՝ Մոլորվել եմ, ճամփաներին ծանոթ չեմ (ԱԻ)։ Թե յոթ շաբաթում այդքան չքանդեմ, իմ հոր տղան չեմ (ԱԹ)։ Հեշտ չէ մենակ մնալը։ Գյուտեր պետք չեն։ — Եկ, բնած չեմ։ — Դու շար չես, բարի ես (Սգր)։ Դա խոսք չէ, մի ասա։ Պարզ ստորոգյալի եզակի երրորդ դեմքի է-ն փոխվում է ի-ի։ Օրինակ՝ Տուն չի շինել, կարծում է սյունը մեջն է բուսել (առած)։ Աստված ինքն էլ տարակուսած, չի նասկանում ինչ անի (ՀԹ)։ Երեխա չի օրորել, ման չի լվացել, չի լսում (Սգր)։

Հարադրավոր բայերում ժխտական մասնիկը դրվում է բայ-հարադրի վրա, իսկ եթե երկու եզրն էլ բայ է, առաջին բայի վրա։ Օրինակ՝ Վեր շրնկավ։ Ցույց չտվեց։ Ոչ ոքի ներս չթողեց։ Ոչ մեկդ լաց չլինեք։ Պատմությունը հո այստեղ կանգ չառա՞վ։ Երկար ժամանակ բաց չէր թողնում, թույլ չէր տալիս։ Թուրքն էլի միտքը չփոխի՞ (ՀՔ)։ Ճրագն իր տակ լույս չի տա (առած)։ Զգնաս տանս, վեր չկենա՞ գնա, մի՛ տա առնի, մի՛ փախչի գնա։ Զրնկնե՞ս մեռնես։ Սարերը ճով չեն անում։ Լույս մի՛ տանի։ Դարդ մի՛ տանի։ Կանգ մի՛ առնի։ Աչքով մի՛ տանի։ Ձեռք չի տալիս խորհուրդ և այլն։

Տանոթագր.— Երբեմն հարադրավոր ձևերում չ-ն, մի՛-ն առաջ են ընկնում, ինչպես՝ վեր մի՛ ընկնի—մի՛ վեր ընկնի, ցույց տա—չցույց տա, լաց մի՛ լինի—մի՛ լաց լինի, աչքով մի՛ տանի—մի՛աչքով տանի և այլն։ Այսպիսի զուգահեռ ձևեր են՝ ասած չլինի—չասած լինի, գնալու չլինի—չգնալու լինի, գրելու չլինի—չգրելու լինի, տեսնելու չլինի—չտեսնելու լինի։ Սրանք, սակայն, հատուկ են խոսակցական լեզվին։ Գրական լեզվում ժխտական մասնիկը դրվում է բայի կամ առաջին բայի վրա։

Հարկադրական եղանակի բայը չ-ն առնում է կամ բայական մասի, կամ եղանակիչի վրա։ Օրինակ՝ պիտի չասես—չպիտի ասես, պիտի չխոստովաներ—չպիտի խոստովաներ, պիտի չերևար—չպիտի երևար։ Չպիտի փոխեին իմ ժողովրդի վիճակը։ Այլևս երջանկություն չպիտի ունենամ ձեզ տեսնելու։ Դուք պիտի չգնայիք նրա հետ (ՀՔ)։

Ժխտման արտահայտության ձևերից է ոչ-ը։ Այն դրվում է նախադասության բոլոր անդամների վրա։ Ինչպես՝ ենթակայի.— Չեն երևում ո՛չ Քարակոփի տները, ո՛չ Կյորեսի հին եկեղեցին (ԱԹ)։ Ո՛չ հայրն էր տանը, ո՛չ մայրը։ Ոչ տրակտորն էր երևում դաշտում, ո՛չ տրակտորիստը (Սգր)։ Ստորոգյալի.—Ո՛չ կգնամ, ո՛չ էլ պատասխան կտամ։ Ո՛չ կուտեմ ձեր վոհիկ, ո՛չ կիշեմ ձեր հորիք (առած)։ Ո՛չ աշխատում է, ո՛չ էլ տանը նստում, թափառում է։ Ո՛չ եկավ, ո՛չ էլ մի լուր ուղարկեց (Սգր)։ Լրացումների վրա.— Չէին վաճառում ո՛չ տեղական գինի, ո՛չ տեղա-

կան ձուկ։ Ձուկն է՛լ, գինին է՛լ բերված էին դրսից (ԱԲ)։ Այստեղ ոչ-ը դրված է տեղական որոշչի վրա, այսինքն գինի ու ձուկ վաճառում էին, բայց ոչ տեղական։ Ո՛չ էռ, ո՛չ էլ եղբորդ խաղն է ինձ դուր գալիս՝ ընկերոջդ խաղը (Սգր)։ Ո՛չ տանը գտա նրան, ո՛չ ճիմնարկում, այլ՝ քաղաքային այգում և այլն։

Հաճախ ոչ-ը դրվելով որևէ լրացման վրա՝ կազմում է ընդհանրական ժխտական նախադասություն։ Օրինակ՝ Ո՛չ խելք ունի, ո՛չ հոգս։ Ո՛չ ձուկ է ջրում, ո՛չ միս ցամաքում։ Ո՛չ վերարկու ուներ, ո՛չ էլ փող, որ գներ։ Ո՛չ կնոջը դիմեց, ո՛չ՝ տղային։ Չվալ չունինք, չաթու չունինք, Ո՛չ սամոտեն, ո՛չ պարան (ՂԱ)։ Ինչպես երևում է օրինակներից, այս բոլոր դեպքերում ոչ-ը հանդես է գալիս կրկնակի ձևով և շեշտված։

Ժողովրդական խոսքում երբեմն ոչ-ի փոխարեն գործածվում է չէ-ն։ Օրինակ՝ Չէ՛, չի լռել մեծ Շոթայի երգի ձենը կաթոգին (ՀԹ)։ Ով ուզում է թող առաջ գա, ով չէ, մնա տեղում։ Գնո՞ւմ ես, թե չէ։ Խոսելո՞ւ ես, թե չէ։ Խոսքիդ տերն ես, թե չէ, թե չէ, ես իմ գլխի ճարը տեսնեմ։ Գյուղ գնացի՞ր, թե չէ (Սգր)։

Ժխտական նախադասություններ են կազմում նաև ժխտական դերանունները՝ ոչ ոք, ոչինչ, ոչ մի, ոչ մեկը, ինչպես և՝ այլևս, էլ, երբեք մակբայները և ոչ թե... այլ զուգադիր շաղկապը։ Դրանց հետ ստորոգյալը սովորաբար ժխտական ձևով է լինում, բացառությամբ նշված շաղկապի։ Այսպես՝ Դրանցից ոչ մեկը չեն օգտագործում։ Ոչ ոք չպատասխանեց, ոչինչ չասացին։ Ոչ մի անգամ ինձ չօգնեց։ Երբեք չէր լռում։ Ոչ թե լռում, այլ երգելով խանգարում էր։ Ոչ մի դեպքում նա մեզ համաձայն չի լինի։ Նա նստեց ծովափի մի նստարանի վրա հոգնած ու ուժասպառ՝ ոչ գիշերվա անքնությունից կամ ոգելից ըմպելիքից, այլ՝ հոգեկան տառապանքներից (ԱՇ)։ Ոչ ոք մինչև այժմ առաջին թղթի վրա այդպիսի մի գումար չէր առաջարկել (ԱՇ)։ Էլ սար չի գնա առանց Սարոյի (ՀԹ)։ Էլ մի ուշացնի, ես շատ եմ կացել, էլ մի լացացնի, ես շատ եմ լացել (ՀԹ)։ Ուրիշ տեղ այլևս չէր գնալու։ Մինչև գարուն ոչ մի մարդ ոտք չի դնում անտառներում։ Այդ մասին նա երբեք չէր մտածել (ԱԲ)։ Ոչ ոք չունիս, ոչ ոք չկա՝ քեզ մոտ գա (ԱԻ)։ Չկա ոչինչ, որ այնքան թովիչ լինի, որպես քո Տխրությունը կուսական (ՎՏ)։

Ժխտական նախադասություններում զգալի դեր ունի հնչերանգը, տրամաբանական շեշտը։ Եթե տրամաբանական շեշտը ենթակայի վրա է, ժխտումը մասնակի է։ Օրինակ՝ Ատոդի՛կը չէր քուլրը։ Այստեղ ժխտված է միայն ենթական։ Եթե տրամաբանական շեշտը որևէ լրացման վրա է, և ժխտվում է միայն տվյալ լրացումը, մասնակի է։ Օրինակ՝ Բայց դու անօգուտ չպտտվեցիր նրա շուրջը։ Այստեղ էլ թեև բայ-ստորոգյալը ժխտական խոնարհմամբ է, բայց ժխտված է միայն անօգուտ ձևի պարագան։ Նա պտտվել է և ոչ անօգուտ։ Կամ՝ Ոչ ոք չէր լալիս անկեղծորեն (ԱՇ) նախադասությունում ժխտված է միայն անկեղծորեն ձևի


Նախադասության անդամները
բան գլխավոր անդամների մասնակցության
բան կազմության
բան հնչերանգի հետ ունեցած հարաբերության մասնակցության
բան գլխավոր անդամի մասնակցության
բան-ստորոգյալ
բան-սահմանում
բան-հանգամանք
բան-լրացում
բան-խնդիր
բան-ենթական
բան-ստորոգյալ
բան-հնչերանգ
բան-ենթական
բան-ստորոգյալ
բան-ենթական
բան-ստորոգյալ
բան-ենթական
բան-ստորոգյալ

պարագան։ Այլ օրինակներ՝ Աշխատելու համար չի եկել, եկել է, որ սիրած աղջկան զարմացնող նամակներ գրի։ Այդ միջոցների ընտրության մասին շատ էլ չէր մտածում Արուսյակը (Փափ)։ Այս բոլոր նախադասություններում ժխտված են ընդգծված լրացումները։ Այս նախադասությունների հոմանիշը կազմվում է ոչ, ոչ թե... այլ ձևերով։ Ինչպես՝ Մարդ ի ծնե հանցագործ չի լինում—մարդը ոչ թե ի ծնե է հանցագործ լինում։ Երեխան հացի համար չէր լալիս—երեխան ոչ թե հացի համար էր լալիս։ Ոչ ոք չէր լալիս անկեղծորեն—լալիս էին, բայց ոչ անկեղծորեն։ Նա հո աշխատելու համար չէր եկել—նա եկել էր, բայց ոչ աշխատելու համար։ Նա շատ էլ խելոք չէր—խելոք էր, բայց ոչ շատ։ Ուսուցչին լավ չպատասխանեց—պատասխանեց, բայց ոչ լավ։ Այդ նամակը քե՛զ չի ուղարկված—ուղարկված է, բայց ոչ քեզ և այլն։

Ինչպես ասվել է, ընդհանրական ժխտումը կարող է արտահայտվել նաև հարցական հնչերանգով, թեև ստորոգյալը բայի հաստատական խոնարհմամբ է լինում։ Օրինակ՝ Նա պիտի փողո՞ց նետեր այն փոքրիկ անմեղին և ինչո՞ւ, ո՞ր բարոյական իրավունքով (ԱՇ)։ Ի՞նչ ցանկալի բան է որ (Սգր)։ Ո՞վ գնաց, որ ես գնամ։ Այս նախադասությունները ժխտական իմաստ ունեն. առաջինը նշանակում է փողոց չպիտի նետել, երկրորդը՝ ցանկալի բան չէ, իսկ երրորդը՝ ոչ ոք չգնաց։ Այսպես էլ խոսողը ժխտական նպատակ ունի հետևյալ հարցական նախադասություններում։—Է՛յ, նավարար, ի՞նչ ես անում, Ո՞ւր ես նստում դու նավակ. Սև ամպերն են, տե՛ս, բարձրանում Դեպի երկինք կապուտակ (ԱՄ)։ Քեզ սպասող չմնաց, Ո՞ւր ես գալի, ա՛յ գառուն (ՀՀ)։ Կյանքը լավ է... բայց ի՞նչ արած... Համ էլ մանից ի՞նչ փախչեմ (ԱՄ)։ Ո՞ւր ես ձայնդ բարձրացնում։ Ո՞ւր ես մարդկանց նեղացնում և այլն։

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ

Նախադասությունը կազմվում է բառերով, բառակապակցություններով։ Բառերն իրենց ձևով ու գործառությամբ որոշ հարաբերության մեջ են մտնում միմյանց հետ և կազմում են կապակցված կառույց, նախադասություն։ Այդ բառերը շարահյուսական միավորներ են ,գտնվում են ստորոգումային, որոշչային, խնդրային ու պարագայական հարաբերության մեջ և կոչվում են նախադասության անդամներ։ Սրանք ունեն ձևաբանական արտահայտություն։ Այսպես՝ սովորաբար ստորոգումային հարաբերության մեջ են գտնվում գոյականն ու բայը, որոշչային հարաբերության մեջ՝ գոյականն ու ածականը (թվականը), խնդրային հարաբերության մեջ՝ բայն ու գոյականը, պարագայական հարաբերության մեջ՝ բայն ու մակբայը։ Ուրեմն նախադասության անդամներն արտահայտվում են ձևաբանական միավորներով։ Ըստ որում ձևաբանական

մեկ միավորը սովորաբար մեկ անդամի պաշտոն է կատարում։ Օրինակ՝ «Քամին քշեց դեղնած տերևները» նախադասությունն ունի չորս անդամ՝ արտահայտված չորս ձևաբանական միավորներով։ Ձևաբանական մեկ միավորը նախադասության մեկ անդամից ավել պաշտոն չի կարող կատարել, բայց նախադասության մեկ անդամը կարող է արտահայտվել ձևաբանական մեկից ավելի միավորներով։ Օրինակ՝ «Նա գյուղում երեսց երեք օր հետո» նախադասությունը ունի չորս անդամ (ենթակա, ստորոգյալ, տեղի պարագա, ժամանակի պարագա), բայց ձևաբանական վեց միավոր, որովհետև ժամանակի պարագան արտահայտված է ձևաբանական երեք միավորներով (երեք օր հետո)։

Լեզվաբանները զանազան բնութագրումներ են տվել նախադասության անդամին, տարբեր են նրանց ըմբռնումները նրա մասին։

Ըստ ավանդական քերականագիտության՝ նախադասության անդամներ են նյութական բովանդակություն ունեցող այն բառերը, որոնք որևէ պաշտոն ունեն նախադասության մեջ, կարող են կապակցվել միմյանց հետ։ Նախադասության անդամ կարող են լինել ինչպես բառը, այնպես էլ բառակապակցությունը։ Օրինակ՝ «Աշոտը սենյակ մտավ ձեռքերը գրպանում» նախադասության անդամներն արտահայտված են բառով (Աշոտը, սենյակ, մտավ) և բառակապակցությամբ (ձեռքերը գրպանում)։ Նյութական բովանդակություն չունեցող բառերը նախադասության միավոր են, բայց անդամ չեն։ Նրանք կապակցողի դեր են կատարում (կապ, շաղկապ), արտահայտում են խոսողի վերաբերմունք (ձայնարկություն, վերաբերականներ)։

Կառուցվածքային լեզվաբանության հետևողները նախադասության անդամները չեն տարբերում խոսքի մասերից։ Օրինակ՝ վերը հիշված Грамматика 70-ի հեղինակները քննելով ռուսաց լեզվի կառուցվածքային հարցերը, նշում են միայն ենթական ու ստորոգյալը և չեն անդրադառնում նախադասության երկրորդական անդամներին։ Այսպես են վարվում նաև Վ. Ա. Կոշերգինան և ուրիշներ։ Նրանք քննում են գոյականական, բայական, ածականական, մակբայական կապակցությունները, նրանց շարահյուսական կաղապարները, շարադասությունը, կապակցության եղանակները, նախադասության կառուցվածքային և ելրանդային տեսակները և այլն։

Հայ քերականներն առաջնորդվում են ավանդական սկզբունքով։ Այսպես՝ Մ. Աբեղյանը նախադասության մեջ հանդես եկող բառերը բաժանում է երեք խմբի. 1-ին՝ բառեր, որոնք նախադասություն են կազմում (դրանք դիմավոր բայերն են), 2-րդ՝ բառեր, որոնք լրացնում են դիմավոր բային (ենթական և մյուս անդամները) և 3-րդ՝ բառեր, որոնք նախադասության մեջ ոչ մի պաշտոն չկատարելով՝ նրանից դուրս են մնում (միջարկություններ, ձայնարկություններ, կապակցական բառեր՝ կապ, շաղկապ)։ Աբեղյանն ընդունում է նախադասության հետևյալ ան-

դամները՝ բայ-ստորոգյալ, ստորոգելիական վերադիր, ենթակա, խնդիր, պարագա և վերադիր[24]։

Գ. Ջահուկյանը նույնպես ընդունում է նախադասության գլխավոր (ենթակա և ստորոգյալ) և երկրորդական անդամներ (որոշիչ, խնդիր, պարագա), նախադասությունից դուրս է թողնում նյութական բովանդակություն չունեցող բառերը։ «Պետք է նկատի առնել,— գրում է նա,— որ եղանականիշ և հարաբերական բառերը չեն մտնում բուն նախադասության կառուցվածքի մեջ և կարող են հաշվի չառնվել նախադասության բուն կազմակերպը կառուցելիս»[25]։ Այսպես են ներկայացնում նախադասության անդամները նաև ժամանակակից մյուս հայ քերականները՝ Գ. Սևակը, Վ. Առաքելյանը, Ս. Աբրահամյանը և ուրիշներ[26]։

Նախադասության անդամն այլ կերպ են ըմբռնում անմիջական-կազմիչների (ԱԿ) տեսության կողմնակիցները։ Նրանց կարծիքով նախադասության անդամ են ենթական, ստորոգյալը և սրանց անմիջական լրացումները՝ արտահայտված բառով կամ կապակցությամբ։ Բառակապակցությամբ արտահայտված անդամների բաղադրիչ բառերը ոչ թե նախադասության անդամ են, այլ՝ բառակապակցության։ Այսպես, օրինակ՝ «Երևանից մեկնող ապրանքատար գնացքը վառելանյութը վերջանալու պատճառով կանգնեց լեռնային ճանապարհի կեսին» նախադասության անմիջական կազմիչներն են՝ Երևանից մեկնող ապրանքատար գնացքը (ենթակա) և՝ վառելանյութը վերջանալու պատճառով կանգնեց լեռնային ճանապարհի կեսին (ստորոգյալ), հաջորդ կազմիչներն են ենթակայի լրացումներ ապրանքատար և Երևանից մեկնող որոշիչները։ Վերջինիս կազմիչը՝ Երևանից տեղի պարագան։ Ստորոգյալի անմիջական լրացումներն են՝ վառելանյութը վերջանալու պատճառով (պատճառի պարագա) և լեռնային ճանապարհի կեսին (տեղի պարագա), պատճառի պարագայի անմիջական լրացումն է վառելանյութը, իսկ տեղի պարագայի (կեսին) լրացնում է լեռնային ճանապարհի, սրա լրացումը՝ լեռնային։ Ըստ այս տեսության՝ նախադասության անդամներ չեն լրացման լրացումները՝ Երևանից, վառելանյութը, լեռնային, ճանապարհի բառերը, սրանք բառակապակցության անդամներ են։ Այս նախադասության գծապատկերը կլինի այսպիսին՝

ա) ըստ ավանդական վերլուծման.



բ) ըստ անմիջական կազմիչների վերլուծման.



Անմիջական կազմիչներով վերլուծման առավելությունն այն է, որ պարզ է դառնում նախադասության կառուցվածքը, ջոկվում են լեզվական մակարդակները՝ բառ-շարույթ-բառակապակցություն և նախադասություն։

Անմիջական կազմիչների տեսությունն սկիզբ է առել Սոսյուրի՝ լեզվական իրողությունների երկատման սկզբունքից և ձևավորվել է Բլյումֆիլդի կողմից։ Արդի հայ լեզվաբաններից անմիջական կազմիչների մեթոդին են հետևում Վ. Քոսյանը[27] և ուրիշներ։ ԱԿ վերլուծության միջոցով դարձյալ որոշվում են նախադասության անդամները և, ըստ երևույթին, դուրս են մնում սպասարկու բառերը, քանի որ վերլուծությունն ընթանում է ստորադասական հարաբերությունների աստիճանական պարզաբանմամբ, իսկ ձայնարկությունը, վերաբերականները ոչ մի անդամի հետ ստորադասական կապի մեջ չեն մտնում, որևէ անդամի չեն լրացնում և ոչ էլ որևէ անդամի ընդունում են իբրև իրենց լրացում։ Այս հարցում ԱԿ վերլուծության կողմնակիցներն ընթանում են ավանդական ուղիով։

---

[24] Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, էջ 361։

[25] Գ. Ջահուկյան, *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները*, էջ 340։

[26] Ռ. Իշխանյանը նախադասության անդամ է համարում նաև շաղկապը, կապը, ձայնարկությունն ու վերաբերականները, որոնք նախադասության միավոր են, բայց՝ անդամ չեն։ («Լեզվաբանական վերլուծության սահմանը արդի հայերենի շարահյուսական մակարդակում») ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» հաս. գիտ. 1977, 12։

[27] Վ. Քոսյան, *Ժամանակակից հայերենի նախադասության վերլուծության հարցեր*, Երևան, 1976, էջ 36։

Նախադասության ստորոգումային անդամները՝ ենթական և ստորոգյալը կոչվում են գլխավոր անդամներ, նրանք են նախադասության միջուկը, կորիզը։ Նրանք միայնակ կարող են նախադասություն կազմել, մյուսները լրացուցիչ տեղեկություններ են հաղորդում, ընդարձակում են գլխավոր անդամների բովանդակությունը, ուստի կոչվում են երկրորդական անդամներ։

Նախադասության անդամը որոշելու լավագույն միջոցը հարցն է, սրա միջոցով կարելի է որոշել նախադասության անդամը մե՞կ բառով է արտահայտված, թե՞ մեկից ավելի (ծավալուն)։ Օրինակ՝ «Դասերից հետո մրցումներ սկսվեցին» նախադասության ստորոգյալը որոշելու համար հարցնում ենք՝ մրցումներն ի՞նչ եղան (սկսվեցին), ենթակայի համար՝ ինչե՞րն սկսվեցին (մրցումները), լրացման համար՝ ե՞րբ սկսվեցին (դասերից հետո), ուրեմն դասերից հետո-ն նախադասության մեկ անդամ է, ինչպես՝ մրցումները, սկսվեցին բառերը։ Կամ՝ Գիրքը դրված է սեղանին և գիրքը դրված է սեղանի վրա։ Այս երկու դեպքում էլ տեղի պարագան պատասխանում է որտե՞ղ հարցին, բայց մի դեպքում արտահայտված է մեկ բառով (սեղանին), մյուս դեպքում՝ երկու (սեղանի վրա)։ Այդպես էլ մեկական անդամներ են ներքևում ընդգծված կապակցությունները։ Հինգ տարի դեռ փող չեմ տա (ՀԹ)։ Խոսում էր ձեռքերը գրպանում (Սգր)։

Ինչպես երևում է վերլուծությունից, նախադասության անդամը դեռ շարահյուսական վերջին միավորը չէ, քանի որ այն կարող է բաղադրյալ լինել՝ արտահայտված մեկից ավելի միավորներից։ Օրինակ՝ «Ներս մտավ մի անծանոթ՝ գրքերով հանդերձ, ձեռնափայտը ձեռքին» նախադասության անդամներն են ստորոգյալը (ներս մտավ), ենթական (անծանոթ), որոշիչը (մի), ձևի պարագաները (գրքերով հանդերձ և ձեռնափայտը ձեռքին), բայց ձևի պարագաներն արտահայտված են բաղադրյալ ձևով, վերլուծական կազմություն ունեն։ Նախադասության վերլուծությունը պիտի մինչև վերջ տանել, որոշել նրանում եղած բոլոր միավորները, ուստի այստեղ մենք կունենանք գրքերով կապի խնդիրը, հանդերձ կապը, ձեռնափայտը կողմնակի ուղիղ խնդիրը և ձեռքին կողմնակի տեղի պարագան։ Ահա այս վերլուծմամբ հասնում ենք շարահյուսական նվազագույն միավորներին (ՇՆՄ)։ Ուրեմն այս կառույցը բաղկացած է նախադասության 5 անդամից, բայց 7 նվազագույն միավորից։ Շարահյուսական նվազագույն միավորը կարող է համընկնել նախադասության անդամին, բայց նրանք նույնական չեն։ Երկու օրինակ ևս։ «Երեխան քարի վրա նստած՝ ջրի մեջ տեսնում էր իր պատկերը» նախադասությունը կազմված է 7 անդամից (երեխան, քարի վրա, նստած, ջրի մեջ, տեսնում էր, իր, պատկերը), բայց 9 շարահյուսական նվազագույն միավորից (երեխան, քարի, վրա, նստած, ջրի, մեջ, տեսնում էր, իր, պատկերը), այսինքն 9 բառից։ — Արամ,

հե՞յ, դու ո՞ւմ համար ես եկել և ինչո՞վ, ո՞ւմ հետ» նախադասությունը կազմված է 5 անդամից (դու, ո՞ւմ համար, ես եկել, ինչո՞վ, ո՞ւմ հետ), բայց 10 շարահյուսական նվազագույն միավորից (ՇՆՄ), այսինքն 10 բառից (Արամ, հե՞յ, դու, ո՞ւմ, համար, ես եկել, և, ո՞ւմ, հետ, ինչո՞վ), քանի որ կոչականը, ձայնարկությունը, կապը, շաղկապը նախադասության անդամ չլինելով հանդերձ՝ շարահյուսական միավոր են։

Ինչպես ասվեց, ենթական ու ստորոգյալը նախադասության ստորոգումային միավորներն են, առանց որևէ այլ անդամների նրանք կարող են նախադասություն կազմել։ Ըստ որում այդ երկուսից առաջնայինը ստորոգյալն է՝ դիմավոր բայը։ Առանց դիմավոր բայի դիմավոր նախադասություն չկա։ Ստորոգյալն ու ենթական կոչվում են գլխավոր անդամներ։ Անհրաժեշտ է տարբերել գլխավոր և գերադաս անվանումները։ Գլխավոր են կոչվում նախադասության կենտրոնական, միջուկը կազմող անդամները՝ ենթական ու ստորոգյալը, իսկ գերադաս՝ ստորադասական կապակցությունների լրացյալ անդամները։ Գլխավոր են կոչվում նաև միակազմ նախադասությունների կենտրոնական անդամները՝ բայը կամ գոյականը։

Նախադասության անդամներից միայն ստորոգյալն ունի իր հատուկ կայուն ձևը՝ դիմավոր բայ։ Մյուսները չունեն այդպիսի միակ, կայուն ձև։ Ճիշտ է, ենթական արտահայտվում է միայն ուղղական հոլովով, բայց այդ հոլովով արտահայտվում են նախադասության նաև այլ անդամներ։

Այժմ անցնենք նախադասության գլխավոր անդամների բնութագրմանը։

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԸ

ԵՆԹԱԿԱ

Ենթական նախադասության գլխավոր անդամներից մեկն է, այն անդամը, որը մի բան է անում կամ լինում, որին ստորոգումով վերագրվում է որևէ հատկանիշ։ Ինչպես՝ Կոմիտասը հանճարեղ արվեստագետ է։ Երկիրը պտտվում է արևի շուրջը։ Մեր գունդը գրավից բարձունքը։

Պետք է տարբերել քերականական ենթական ու ստորոգյալը տրամաբանական (դատողական) ենթակայից ու ստորոգյալից։ Տրամաբանական ենթական այն պատկերացումն է, որ կա մեր մտքում, իսկ ստորոգյալն այն նորն է, որ ավելանում է մեր մտքում եղածի վրա, իրրև հատկանիշ։ Այսպես՝ եռո՛ւմ է թեյը դատողության ենթական թեյն է, այսինքն այն, ինչի մասին մենք գիտենք, ինչն արդեն կա մեր մտքում, պատկերացման մեջ, իսկ եռում է դատողության ստորոգյալն է,

այսինքն այն նորը, որ ավելանում է մեր իմացածին, պատկերացմանը։ Իսկ եթե ասենք՝ թե՛ն է եռում, այդ դեպքում մեր մտքի նախնական առարկան, պատկերացումը կլինի եռալու գործողությունը։ Տվյալ դեպքում մենք գիտենք, որ մի բան եռում է, ուստի եռում է-ն տրամաբանական (իմա՛ դատողության) ենթական է, իսկ թեյը այն նորն է, որ ավելանում է մեր իմացածի, պատկերացման վրա, ուստի նա է դատողության ստորոգյալը։ Դատողության ստորոգյալը միշտ կրում է տրամաբանական շեշտ։ Այդ շեշտի փոփոխությունից փոխվում են դատողության գլխավոր անդամները, մինչդեռ հայերենում նախադասության ենթական ու ստորոգյալը շեշտի պատճառով այդպիսի փոփոխություն չեն կրում։ Վերը բերված օրինակում թեյը միշտ ենթակա է, իսկ եռում է՝ միշտ ստորոգյալ՝ անկախ շեշտից։ Ուրեմն դատողության ենթական ու ստորոգյալը տարբերվում են քերականական ենթակայից ու ստորոգյալից, թեև երբեմն նրանք կարող են համընկնել։ Այսպես՝ «Գարունը եկել է։ Սար ու ձոր կանաչել են» նախադասությունների քերականական ու դատողության ենթական ու ստորոգյալը միևնույն բառերն են (գարունը, սար ու ձոր՝ ենթակա, իսկ եկել է, կանաչել են՝ ստորոգյալ)։ Բայց հենց որ փոխենք տրամաբանական շեշտի տեղը և ասենք՝ «Գարունն է եկել։ Սար ու ձորն են կանաչել» դատողության ենթականները (գարուն, սար ու ձոր) կփոխվեն դատողության ստորոգյալների։

Շարահյուսության մեջ ուսումնասիրվում են քերականական ենթական ու ստորոգյալը։

Ինչպես ասվեց, ենթական նախադասության այն անդամն է, որը մի բան է անում կամ լինում, որին ստորոգումով վերագրվում է որևէ հատկանիշ։ Ստորոգումը հատկանիշի վերագրումն է առարկային ժամանակի և տարածության մեջ։ Որոշիչ-որոշյալ կապակցությունում նույնպես առկա է հատկանիշի վերագրում առարկային, ինչպես՝ կապույտ ծաղիկներ, հավերժական սեր, ահռելի ձոր և այլն։ Սակայն այս դեպքում վերագրումը ստորոգումային չէ, ժամանակի հետ չի կապվում։ «Երբ մենք ասում ենք կանաչ տերև,— գրում է Է. Աղայանը,— դարձյալ ունենք հատկանիշի վերագրում առարկային, բայց այս դեպքում՝ անկախ ժամանակից»[28], իսկ ենթակային հատկանիշը վերագրվում է ժամանակի որևէ հատվածում, որոշակի ժամանակում, նրանում արտահայտվում են բայի եղանակը, ժամանակը, դեմքը, թիվը։

Ենթական հանդես է գալիս միշտ դիմավոր բայի (ստորոգյալ) հետ, առանց ստորոգյալի ենթակա չկա, զեղչման դեպքում էլ ստորոգյալը ենթադրվում է։

Նախադասության ենթական՝ ա) գործող, մի բան անող առարկան է։ Օրինակ՝ Գնացքը փնչալով անցավ։ Շանյանը գլխարկը նորից

[28] Է. Ռ. Աղայան, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1967, էջ 420։

ցած քաշեց մինչև ականջները (ՆԴ)։ Հիշողությունը նրան դավաճանում էր (ՆԴ)։ բ) Այն առարկան, որը կրավորական կառույցում իր վրա է կրում ուրիշի գործողությունը։ Օրինակ՝ Միակ աղաղ ծնողներից շատ է սիրվել։ Նամակը Շահյանի կողմից արդեն գրված, ուղարկված էր (ՆԴ)։ Արարատը նկարված էր հյուսիսային կողմից։ գ) Այն առարկան, որի որակը, ինչպիսին, ինչ, ինչքան լինելը որոշվում է ստորոգյալի միջոցով։ Օրինակ՝ Քո ունիերը, իմ սիրելիս, կեռ են դահճի թրի նման (ԱԻ)։ Ես երգիչ եմ, երկնի թիթեռ (ԱԻ)։ Նրանք քսանվեցն էին (ՀՀ)։ Սիրուն էր Զալխեն (ՎՓ) և այլն։ դ) Այն առարկան, որի գոյությունն է հաստատում կամ ժխտում ստորոգյալը։ Օրինակ՝ Դահլիճում մեծ բազմություն կար։ Գոյություն ունի մի սովորույթ։ Տանը մարդ չկար։ Մեր սարերում անուտ քիչ կա և այլն։

Ենթական ու ստորոգյալը նախադասության հավասարազոր անդամներ են։ Նրանք իրար հետ ստորոգումային հարաբերության մեջ են։ Ենթակայի և ստորոգյալի կապակցությունը Մ. Աբեղյանը կոչում է ներունակական կապակցություն, այսինքն ստորոգյալը (իմա՛ դիմավոր բայը) իր մեջ ունի ենթակայի գաղափարը՝ իր դեմքի միջոցով։

Ստեղծագր.—Բայակենտրոն տեսության հետևողները (հայ լեզվաբաններից Մ. Աբեղյան) նախադասության գլխավոր անդամը դիմավոր բայն են համարում։ Ըստ այդ տեսության՝ ենթական բայի դեմքի լրացումն է։ «Ենթակա ասվում են,— գրում է Մ. Աբեղյանը,— այն լրացումները, որոնք բացահայտում են բայի դեմքը, որոշ կերպով ցույց տալով անող կամ եղող առարկան, որին վերագրվում է բայիմաստը կամ մի հատկանիշ»[29]։

Ենթակայի արտահայտությունը։ Ենթական արտահայտվում է՝ ա) գոյականով։ Օրինակ՝ Իրիկնաժամին, թիթեռն օրորող հովի պես թեթև մի ուռու անցավ, մի գունատ աղջիկ ճերմակ շորերով (ՀՍ)։ Միձեռնակը բույն էր շինում, և՛ շինում էր, և՛ երգում (ԱՂ)։ Ինչքա՜ն ծաղիկ պիտի բուսներ, որ չբուսավ էս հողին (ՀԹ)։ Սիրուն էր Զալխեն, շատ սիրուն (ՎՓ)։ Ստեփանիան համառոտ պատմեց ինձ Լևոնի մասին (ԱՇ)։

Ձևաբանությունից գիտենք, որ գոյականը, ուրեմն և նրանով արտահայտված ենթական, կարող է լինել՝ 1. անձի անուն։ Օրինակ՝ Լևոնը կրկին անգամ սենյակի մի զույգ աթոռներն առաջարկեց մեզ (ԱՇ)։ Մեծ պատմաբանը ծերացել էր ու կուրացել (ՀԹ)։ Գլուխդ ալևոր, բաջածի՛ն Մասիս, դու էլ խոնարհիր, Հանգչե՛ է գալիս (ՀՀ)։ Ու պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով, Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով (ՀԹ)։ Կապեմն առավ վարդը քունքուշ, համբուրեց (ԱԻ)։ 2. Բրի անուն։ Օրինակ՝ Մեր աչյունն է

[29] Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 370։

այնտեղ հոսում՝ ներկած և՛ տուն, և՛ փողոց (ԱՄ)։ Քնքուշ վարդերն ինձ բարձ լինեն (ՀՀ)։ Եվ խայտալով իմ առաջին Վտակն անուշ խոխոչն (ՀՀ)։ Ջրերն են անվերջ միգում հեկեկում (ՎՏ)։ 3. Երևույթի անվանում. օրինակ՝ Հաղթեց նեղափոխությունը, կապրի հայ ժողովուրդը (ՀՔ)։ Քամին կուգա, զով կանի (ԱԻ)։ Թող որոտա իմ գլխին փայլակ, կայծակ, հուր, երկաթ (ՄՆ)։ Զախորդ օրերը ձմռան նման կուգան ու կերթան (Ջիվանի)։ Քունն անուշ է մեզ թվում (ՀՀ)։ 4. Հասկացության անվանում. օրինակ՝ Իր հուրը վառեց մի պայծառ կարոտ (ՎՏ)։ Զեզանից հետո եկավ գիտություն։ Գիտակցությունը հաղորդեց սորան։ Ագզի վինակը ծանրացավ սրտիս (ՄՆ)։ Ով է իմ վիշտն անափ ու խոր, լիքն ակունքով հազարավոր. Իմ զայրույթը լիքն է սիրով (ՀԹ)։ Թախիծը խեղդում էր ինձ (ԱՇ)։ Հպարտությունն ու ամոթանքը միասին եռացին մեջս (ՀՔ)։ Մահի ահ կա իմ սրտում (ՀԹ)։

բ) Առարկայանիշ (անձ կամ իր) դերանուններով։ Օրինակ՝ Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում (ԵՉ)։ Դու էլ նայիր սեղ, ճակատին ու անցիր (ԱԻ)։ Դու պիտի հնչես, հնչես հաղթական, Իմ հին հայ լեզու՝ քաղցր ու սրտաբուխ (ԱԻ)։ Մենք ուխտ ունենք՝ միշտ դեպի լույս, Ու գնում ենք մեր ճամփով (ՀԹ)։ Ես այն օրից ուրտեղի ազատությունը սիրել (ՄՆ)։ Գուցե ճնշվո՞ւմ է նա իր հենակից։ Սրտիս հենվելով՝ դու հպարտ անցիր (Աղավնի)։ Մի օր սա եկավ... (ՀԹ)։ Դա նրա վերջին խոսքն էր։ Այդ նրա վերջին նամակն էր (ՆԴ)։ Բայց ո՞վ կտա էն վայելքը (ՀԹ)։ Ի՞նչը կհաղթի կյանքում հերոսին, թե չլինին կինն ու դինին։ Ողջը ազատ են ու հարազատ։ Ողջը քո մեջ՝ անմահ, անվերջ՝ Քեզ են երգում Քո ձենով (ՀԹ)։ Ամենքն էլ դաշտ են գնացել։ Ոմանք կներեն։ Ոչ ոք չգիտեր նրա խաղը (մամուլ)։ Մեկը իր կամքին՝ ինչ ասես՝ անի, Մյուսը խոսելու իրավունք չունի (ՀԹ)։ Չկա ոչինչ, որ այնպես թովիչ լինի։ (ՎՏ)։ ...Ու ինձ ոչինչ չմբնաց (ՎՏ)։ Ուրիշներն ի՞նչ կասեն։

Մանոթագր.—Երբեմն անձնական դերանունները ինքը, ամենքը, բոլորը դերանունների հետ գործածվելիս նրանցից տրոհված չեն լինում և միասին են մեկ անդամի պաշտոն ունենում, չեն դիտվում իբրև բացահայտյալ-բացահայտիչ։ Օրինակ՝ Մենք ամենքս հյուր ենք կյանքում։ Մեր ծննդյան փուչ օրից (ՀԹ)։ Մենք ինքներս ենք մեղավոր։ Դու ինքդ գնա։ Ես ինքս կբերեմ։ Դուք բոլորդ էլ նրան եք ձայն տվել։ Նրանք ամենքը մի երգ գիտեն՝ աշխատանքի երգը («Գարուն»)։ Այս կառույցում անձնական դերանվան փոխարեն կարող է հանդես գալ գոյական անունը, ինչպես՝ Մայրս ինքն ասաց։ Եղբայրդ ինքն է բերել։ Մենք երկուսս աշխատում ենք, դուք երկուսդ հանգստանում եք, հերթով է, հիմա էլ դուք երկուսդ կաշխատեք, մենք երկուսս կհանգստանանք (Սգր)։

գ) Անորոշ դերբայի որոշյալ առումով։ Օրինակ՝ Այնքան դժվար է անսխալ ապրելը (ՊՍ)։ Զաշխատելը հիվանդացնում է մարդուն։ Կարդալը զարգացնում է մեզ։ Վազելը կոփում է մարդու օրգանիզմը (մամուլ), Երգելը նրա տարերքն էր (Սգր)։ Լավ է ազատ լաց լինելը, քանց դարդ անելն անմոռուն (ՀՀ)։ Մեր գնալը հետաձգվեց (մամուլ)։ Անորոշ առումով։ Օրինակ՝ Ոչ միայն կա լողանալ և լողալ, այլև լողալ էլ կա, լողալ էլ։ Կա լողալ ջրավազանում և կա լողալ արձակ ծովում (ՊՍ)։ Իրար խառնել օրանցն ու դինին, որքան որ ես եմ հասկանում, չի կարելի (ՊՍ)։ Նրան կարելի է զգալ և զգալով սիրել, իսկ պատմել նրա մասին դժվար է (ՀԹ)։ Անհրաժեշտ էր հիվանդին դեղ հասցնել։ Հարկավոր է պահեստային ուժերը նախապատրաստել դրան։ Մեզնից պահանջվում է բարձրացնել կարգապահությունը։ Հաշտվել այդ մտքի հետ, համաձայնել այդ առաջարկին նրա համար շատ դժվար էր (մամուլ)։

Մանոթագր.—Որոշ քերականներ[30] անհրաժեշտ է, հարկավոր է, կարելի է, ծանր է, դժվար է, անտանելի է, խնդրվում է, կարգադրված է, հարկ է, հնշտ է և նման այլ ստորոգյալների հետ գրված անորոշ դերբայը անորոշ առումով համարում են բաղադրյալ ստորոգյալի մաս, իսկ եթե անորոշի փոխարեն գոյական անուն է կամ հենց անորոշ դերբայը, բայց որոշյալ առումով, համարում են ենթակա։ Ուրեմն ըստ այդ կարծիքի՝ «Հիվանդին դեղ է հարկավոր (կամ անհրաժեշտ)» նախադասության մեջ դեղը ենթակա է, իսկ՝ «Հիվանդին բուժել է հարկավոր (կամ անհրաժեշտ)» նախադասության մեջ բուժել-ը, որը նույն դեղ բառի փոխարեն է դրված, ենթակա չէ, այլ՝ ստորոգյալի մաս։ Կամ՝ «Դժվար է այդ մտքի հետ հաշտվելը» նախադասության հաշտվել-ը ենթակա չէ, այլ՝ ստորոգյալի մաս, իսկ՝ «Դժվար է այդ մտքի հետ հաշտվելը» նախադասության մեջ հաշտվելը ենթակա է։ Սակայն քերականական տեսակետից դրանց մեջ տարբերություն չկա, երկու դեպքում էլ անորոշ դերբայը ենթակա է։

Մ. Աբեղյանը, Գ. Սևակը և ուրիշներ այդ կառույցում անորոշ դերբայը համարում են ենթակա՝ անկախ առումից։

դ) Փոխանուն ածականով։ Օրինակ՝ Արյունից մուգ դարձավ վարդերի կարմիրը (ՍԿ)։ Վշտերից ծանրագույնը հասնում է ինձ (Մ)։ Հսկաները հոգով չեն թուլանում (ՀԹ)։ Ոչ ուժեղը թող պարծենա, ոչ տկարը տխրի (Ջիվան)։ Ո՞րն է բարին (ՀԹ)։ Կան վաղահասներ, կան և աշնահասներ (ՊՍ)։ Ժլատն ի՞նչ կտանի աշխարհից (ՀՄ)։ Ամենամոտիկը քո ընտանիքի անդամներն են։ Լավը հենց դա է (ՀՄ)։

ե) Փոխանուն հարակատար դերբայով։ Օրինակ՝ Ան-

[30] Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, Խ. Գ. Բաղդիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, էջ 159—162։

ցածն էլ նա չի գալիս (ԱԻ)։ Նրա ուզածը մեծ բան չէր։ Գյուղի կենտրոնում կառուցվածը նրա տունն էր։ Մնացածը պիտի ավարտվեր մեկ ամսում (մամուլ)։ Ուզտի առաջ շոմածը նաբիրն էր (ԱԲԱվ)։

զ) Փոխանուն ենթակայական դերբայով։ Օրինակ՝ Նրան շնանաչողները փշաքաղվում էին (ՀՔ)։ Մի բեմադրող այսպես է ասել... («Գարուն»)։ Ճար կա, ճար անող չկա (ԱԻ)։ Աշխատողը սոված չի մնա։ Խաղացողները չէին նկատել հեռվում հետզհետե կուտակվող ամպերը։ Այցելողները փղի մոտ երկար էին կանգնում։ Այդ լուրը տարածողը երեի իմ ընկերն էր։ Մատնողը ես չեմ։ Կնոջն այդքան խանդողը չէր կարող նրանից այդքան հեռու մնալ (Սգր)։

է) Փոխանուն թվականով։ Օրինակ՝ Վերարկու եմ առնում, ութսունն ունեմ, հիսունը պակասում է — լավ է, որ ութսունը կա (ՀՄ)։ Երկուսն էլ հայ են, ունեն մի հավատ (ՀՔ)։ Կոլտնտեսականների մեկ շաբաթը դաշտ չէր գնացել։ Նրա երեք տղաներից մեկն էր վերադարձել պատերազմից (մամուլ)։ Գարունը շորսն էլ ծնեն, բավական է (ՀՔ)։ Երեքը վազը պիտի բանկից ազատեր մուրհակները (ԱՇ)։ Այդքան աշխատելուց հետո նրա մեկն երկու չէր դառնում (ԱՔ)։ Հարյուրը քսանհինգից չորս անգամ մեծ է։ Նրանցից առաջինը կէրազ երևսուն բոպե անընդհատ, երկրորդը հազիվ ութսուներորդ (օրացույց)։

ը) Փոխանուն սեռականով։ Օրինակ՝ Աշոտի վարն անորակ էր, իսկ ինչաբաիինը՝ որակյալ (Սգր)։ Երկուսիս վերարկուներն էլ կորան։ Նրանը գտնվեց, իմը կորավ ու կորավ (Սգր)։ Իմ աշխատանքն ընդունվեց, իսկ նոնը մնաց մյուս նիստին (Սգր)։

թ) Ինքնանվանողաբար գործածված այլ խոսքի մասերով (մակբայ, կապ, շաղկապ, չհոլովվող դերանուններ, վերաբերական բառեր, ձայնարկություններ), որոնք գործածվում են վերաբերյալ ձևով, իբրև իրենք իրենց անուն։ Օրինակ՝ Այս նախադասություններում տակ, վրա, մեջ, մոտ կապեր են։ Այս նախադասության մեջ ու-ն շաղկապում է ահել, ջահել ենթակաները։ Ժամանակով, արդեն, հիմա ժամանակի մակբայներ են։ Այսման-ը մատնացույց է անում առարկայի քանակը։ Հեռու, ամենուրեք, բաղեբաղ տեղի մակբայներ են։ Գրել-ը անորոշ դերբայ է (դասագիրք)։ Ա-ն ձայնավոր է, իսկ յու, յա, այ, ույ երկհնչյուններ են (դասագիրք)։ Բառարանում կա նաև «կանվա», իսկ ո՞ւր է «ճեմիր»։ Կա «կոմպոտ», իսկ «կոդմնացույցն» ի՞նչ հող տա իր գլխին (ՊՍ)։ Բայց միայն կ-ն էլ բավական է (ՊՍ)։ Իմ կա–չկան այս է, որ կա (ՊՍ)։ Անհաս բանից ըսկզբանից, երբ չկան էլ դեռ չկար... (ՀՔ)։ Գեում եմ-ը բայ է։ Պիտի բոշեմ-ը լուսանցքում է գրված և այլն։

ժ) Բառակապակցություններով։ Օրինակ՝ Նրա գլխին կախված էր դամոկլյան սուր։ Նրա գլխում տորիչելյան դատարկություն էր տիրում։ Ամիլլեսյան զարշապարը թնավոր արտահայտություն

է։ Հինգ տարին անցավ աննկատելի։ Այդ պահը երբեք չի մոռացվի։ Տասնվեցը բաժանած չորսի հավասար է չորսի (Սգր)։ «Ըստ իս»-ն ու «իմ կարծիքով»-ը քիչ է մնում ընկալվեն աղանդավորության պես մի բան, իսկ «մենք կարծում ենք» ու «մեզ թվում է»-ն պարկեշտության նշան (ՊՍ)։ Վերջին օրինակում նախադասությունն էլ է ենթակայի դերում։ Այդ բնակարան կոչվածը մի նեղ ու մութ սենյակ էր (ԱՇ)։ Եթե լացի ճամարվողը այդպիսի հարց չէր տա։ Պահանջկոտությունը շատ բան է։ Ինչ-որ բան էլ։ Գայլ թվացողը մի թփուտ էր (Սգր)։

Որոշ քերականներ, ոչ առանց պատճառաբանության, ընդունում են մասնական ենթակայի առկայությունը ժամանակակից հայերենում։ Իբրև օրինակ, բերում են «Կատարվեցին Կոմիտասի երգերից» կառույցի նախադասություններ, ուր մասնական ենթակա են համարում բացառական հոլովով դրված երգերից բառը, կամ «Այդ գրքից խոսքերում չկա» նախադասության գրքից բառը[31]։

Որոշ քերականներ էլ[32] ընդունում են բաղադրյալ ենթակա՝ իբրև օրինակ, բերելով «Մեզնից Երկուսը գնաց։ Գյուղացիներից մեկը առաջ եկավ» կառույցի նախադասություններ, ուր ենթակա են համարում ընդգծված կապակցությունները։

Կարելի է ընդունել մասնական ենթակայի գոյությունը, քանի որ բովանդակության տեսակետից (խորքային կառույցում) այդ բացառակաները ենթակայի գործառույթ ունի, բայց նա ձևով ավելի շատ խնդիր է, անուղղակի խնդիր։ Գալով բաղադրյալ ենթակային՝ պետք է ասել, որ այդ կապակցություններում բաժանման, անջատման իմաստը շատ է զգալի։ «Գյուղացիներից մեկը եկավ» նախադասության ընդգծված կապակցության մեկը ավելի շատ անջատվում է գյուղացիներից, քան միանում։ Ուրեմն պետք է վերապահորեն ընդունել մասնական և բաղադրյալ ենթակաների բաժանումը։

ՍՏՈՐՈԳՅԱԼ

Ստորոգյալը երկկազմ նախադասության գլխավոր անդամներից մեկն է։ Ստորոգյալը նախադասության մեջ կատարում է երկու գործառություն՝ ա) արտահայտում է հատկանիշ, բ) այդ հատկանիշը վերագրում, կապում է ենթակային։ Հատկանիշն արտահայտվում է դերբայի, բայահիմքի և ստորոգելիի (ստորոգելիական վերադրի) միջոցով, իսկ վերագրումը՝ եմ բայի և դիմային վերջավորությունների միջոցով։ Օրինակ՝ 1. «Ծառերը կանաչել են», 2. «Ծառերը կանաչեցին»

[31] Ա. Գ. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1975, էջ 278։

[32] Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. 1, 1958, էջ 57։

և 3. «Ծառերը կանաչ են» նախադասություններից առաջինում հատկանիշն արտահայտված է կանաչել դերբայով, երկրորդում՝ կանաչեց բայահիմքով, երրորդում՝ կանաչ ածականով, այդ հատկանիշների վերագրումը (ստորոգում) կատարված է առաջին նախադասությունում են օժանդակ բայի միջոցով, երկրորդում՝ ի դիմային վերջավորության, իսկ երրորդում՝ են էական բայի (հանգույցի) միջոցով։

Նախադասության այն անդամը, որն արտահայտում է հատկանիշ և այդ հատկանիշը վերագրում, ստորոգում է ենթակային, կոչվում է ստորոգյալ։ Ստորոգյալն ու ենթական դրվում են միևնույն դեմքով ու միևնույն թվով։

Ստորոգյալն արտահայտվում է բայի դիմավոր ձևերով։ Առանց դիմավոր բայի դիմավոր նախադասություն չի կարող լինել։ Արտահայտվելով բայի դիմավոր ձևով՝ ստորոգյալը երևան է բերում նաև եղանակի, ժամանակի ու դեմքի քերականական կարգեր։

Ստորոգյալը կազմությամբ լինում է երկու տեսակ՝ պարզ և բաղադրյալ։

Պարզ ստորոգյալ։ Պարզ է կոչվում այն ստորոգյալը, որն արտահայտված է միայն խոնարհված բայով։ Ասում ենք միայն խոնարհված բայով, որովհետև բաղադրյալ ստորոգյալի կազմում էլ կա խոնարհված բայ, բայց նրանում կա նաև այլ խոսքի մաս, իսկ պարզում այլ խոսքի մաս չկա։

Պարզ ստորոգյալն արտահայտվում է բայի խոնարհման բոլոր եղանակներով ու ժամանակներով։ Օրինակներ՝ Աստղերն են ժպտում լուսեղեն նաղով (ՎՏ)։ Հեռանում էր նա խուցից ու վանքից, Գնում էր այնտեղ, ուր երդն էր հնչում (ՊՍ)։ Շատ երգեր կան իմ սրտում, Բայց ես էլ չեմ երգելու (ՎՏ)։ Սրտակեզ կսկիծ մի հին, Որ անգուլ սարդի նման Հյուսել է հրե ոստայն (ՎՏ)։ Ներեկոն փռեց իր թևերը մութ (ՎՏ)։ Բայց ինչո՞ւ գնաց Հայոց Թագուհին (ՊՍ)։ Մի մանուկ ծնվեց Լոռվա Դսեղում։ Հետո նա պիտի... Անբախտ Մարոյին լացով ապանի, Մեր հառաչանքը հացնի Աստծուն (ՊՍ)։ Դու կնայես իրիկվան կարոտով անքուն, Ինձ կկանչես ու կգամ անտես ու թաքուն (ՎՏ)։ Քնքուշ երազով պանուցիր հոգիս, Նստիր մահճիս մոտ ու տխուր երգիր (ՎՏ)։ Թողեմ, որ լինեմ հեռավոր, մենակ, Զզգամ, որ կա սեր, և՛ ցնորք, և՛ լաց... (ՎՏ)։ Ուստի սահմանափակվեմ այսքանով։ Այսօրվանից չեմ տեսնիլ Եվային և կաշխատեմ մտքիցս հանել նրան (ՆԴ)։

Պարզ ստորոգյալն արտահայտվում է նաև՝ ա) բայի երկրորդական բաղադրյալ ժամանակով։ Օրինակ՝ Դու մի ասի էս աղջկան ուզած է լինում հարևան երկրի թագավորը (ՀԹ)։ Ծառը փռած է լինում (ՀԹ)։ Մի օր հայրն աշխատելիս է լինում, ծարավում է (ՀԹ)։ Մինչև տեղ է հասնում, հարսանիքավորները գնացած են լինում (ՀԹ)։ Ամեն անգամ, երբ աշխատանքի գնալիս է լինում, կամ աշխատանքից տուն

դառնալիս, հանդիպում է նրան։ Առավոտները, երբ դպրոց եմ գնալու լինում, նա ճնած է լինում։ — Ես զանգահարում եմ, բայց դու միշտ գնացած ես լինում։ Հրդեհի ժամանակ նա տնից գնացած է եղել։ Երեխան լալիս է, հենց որ մայրը գնալու է լինում (Սգր)։

բ) Հարադրավոր բայերի խոնարհված ձևերով։ Օրինակ՝ Մնար, որ նրան ծայրությունն աներ (ՊՍ)։ Երկու ձիգ տարի նա այնպես պիտի մնա գա երգելով ու շուրջը դիտի (ՊՍ)։ Հարս ու աղջիկ, ջահել կանայք, Դեռ չեմուշում, նազ են անում (ՊՍ)։ Մեր տված փայտից կրակ են անում (ՂԱ)։ Թռավ գնաց վիրավոր (ՀԹ)։ Եկավ հասավ էն օրն էլ երջանիկ (ՀԹ)։ Մեռնեմ պրծնեմ էս ցավից (ՀԹ)։ Թռավ գնաց, որ ուրիշ տեղեր էլ նույն բարիքն անի (ՀԹ)։ Շալակատարի մեղրը գալիս է, առնում ետ գցում է գետը։ Դու իմ աշխատանքն առնում ես էլ ետ ջուրը գցո՞ւմ։ Դե գնա կորի աչքիս չերևաս (ՀԹ)։ Ճամփա պահեցինք, պահեցինք, մինչև գարունքը բաց ելավ (ՀԹ)։ Տարավ բերեց շրջիկ երեսին։ Գնաց եկավ կպավ այդ տղային։ Տվեց առավ, վերջը հրաժարվեց։ Ոչ տարավ, ոչ բերեց՝ մի կոշտ խոսք ասաց և այլն։

գ) Միևնույն բայի կրկնությամբ։ Օրինակ՝ Լուսիկը գնում է, գընում, շատ է գնում, թե քիչ է գնում, շատն ու քիչն էլ ասված գիտի (ՀԹ)։ Անուշ արա, տղա ջան, անուշ արա (ՂԱ)։ Միամ եմ անում, միամ ու չեմ հասկանում (ՀԹ)։ Գնա՞ց, գնա՞ց, հասավ մի անտառի (ՀԹ)։ Գալի՞ս եմ, գալի՞ս (ՀՐ2)։ Կանգնեց, կանգնեց ու հանկարծ պոկվեց տեղից։ Երգեց, երգեց ու գլուխը կախեց կրծքին։ Ասաց, ասաց ու լաց եղավ։ Բացատրում եմ, բացատրում, չի հասկանում (Սգր)։

Սովորաբար կրկնվող բայերի երկրորդ եզրում օժանդակ բայը դեղչվում է։ Օրինակ՝ Ասում եմ, ասում, ինձ չի լսում։ Խրատում եմ, խրատում, բան դուրս չի գալիս։ Լռում եմ, լռում ու ինքս իմ հոգին եմ մաշում։ Տեսել եմ, տեսել, բերել եմ, բերել, քնած է, ճնած և այլն։

Կրկնվող բայերը կարող են միմյանց հետ կապվել շաղկապով։ Օրինակ՝ Հացը կա ու կա։ Տուր թե կտաս, տուր որ կտաս։ Փախի որ փախի։ Ջենք տա որ չենք տա։ Գնաց ու գնաց։ Չյուր եմ, որ ճյուր։ Տեսա մատակը չկա ու չկա։ Քաշի, որ քաշի և այլն (Սգր)։

Կրկնության երկրորդ եզրը նույն բայի ժխտական ձևն է լինում։ Օրինակ՝ Լինում է, չի լինում, մի աղքատ մարդ է լինում (ՀԹ)։ Կար չկար մի թագավոր կար (ՀԹ)։ Ապրում էր, չէր ապրում, մի թագավոր էր ապրում (Հ. Հայր) և այլն։

Կրկնվող երկրորդ բայը կարող է ուրիշ եղանակով ու ժամանակով արտահայտված լինել։ Օրինակ՝ Տուր թե կտաս շան ճակատին (ՀԹ)։

Կրկնությունն արտահայտում է գործողության տևողությունը (գընո՞ւմ եմ, գնո՞ւմ, հասնում եմ մի քաղաքի), խոսողի ուրախությունը (եկա՞ն, եկա՞ն, հարսանիքավորները եկա՞ն), զարմանքը (տեսե՛ք, տեսե՛ք, կապիկը ծիծաղում է), ցանկությունը (հարբեցրո՛ւ, հարբեցրո՛ւ

ինձ քո աննման գինով, հարբեցրու) (ԾՁ), *տագնապը* (եկե՛ք, եկե՛ք, *իմ բակում արջ է բռնվել*) *և այլն։*

դ) Երկու խոնարհված բայով։ Օրինակ՝ Եկ նստիր։ Արի գնանք *տեղը ցույց տամ։* Գնաց գտնի *հայելին։* Թողեմ խոսեմ *ես ազատ։ Ինչո՞ւ չգնամ որմնադիր դառնամ (Սգր)։* Պոկել տարել են *խաղողը (ՂԱ)։* Ասա տեսնեմ *ո՞ւմ ես սիրում այժմ դու (Երգ)։* Գնա խոսիր *հետը։* Եկ տեսնեմ *ի՞նչ ենք անում (Սգր)։* Տանում դնում են *մառանը (ՂԱ)։* Գնում է տեսնում *մի հովիվ անհայ կաթն է ուտում (ՀԹ) և այլն։*

ե) Հարակատար դերբայով և կամ, ունեմ բայերով։ Օրինակ՝ Կախած ունեմ *իմ անարին (ՀՇ)։ Բեռին, Փարիզ անունները* լսած կամ, *բայց այդ անունները* լսած չկամ։ *Այդպիսի բան* տեսած չկամ։ *Ցամակը* պահած ունեմ *և այլն։ Սրանք նույնպես երկրորդական բաղադրյալ ժամանակներ են համարվում։*

զ) Դարձվածքներով։ Օրինակ՝ Երեխան վախից իրենն առավ։ *Աչքերը* շուռ արեց։ *Մորից* մերկ է ծնվել։ *Խելքը* խաղին է տվել։ *Աչքը* վրեն մնաց։ *Մի խոսքով* բան գլուխ չեկավ։ *Վիզը* ծուռ մնաց։ *Դա աշխով ունխով* անել է *և այլն։*

է) Անորոշ դերբայով և նույն բայի խոնարհված ձևով։ Օրինակ՝ Իմանալը չիմացավ, *բայց վախենում եմ ուրիշներն ասեն։* Տեսնելը չտեսավ, *բայց կասկածում էր։* Կծելը չկծեց, *բայց շատ վախեցրեց։* Բարկանալը չի բարկանա, *բայց անհարմար է և այլն։ Ինչպես երևում է օրինակներից, սրանցով կազմվում են ներհակական համադասական նախադասություններ։*

Մանոթ.—Թող, տես, արի, եկ, բեր, համեցեք, ասա *բայերը ստորոգյալի հետ նշանակավորման դեր են կատարում։ Օրինակ՝ Բայց* տես, *շատ* չնեռանաս։ Թող *մի* տեսնեմ։ Համեցեք, *դիվան ուզիր սրանից (ՀԹ)։* Բեր *կարոյին գործուղման ուղարկենք (Սգր)։* Գնալը կգնանք, ասա *պանը լինի (Սգր)։* — Թող գա, *գոռում է, որ բռնենք նորից։* Թող ոչ սպանեմ *ես էդ հրեշին (ՀԹ)։*

Բաղադրյալ ստորոգյալ։ *Այն ստորոգյալը, որը կազմված է դիմավոր բայով և այլ խոսքի մասով, կոչվում է բաղադրյալ ստորոգյալ։ Օրինակ՝* Կովը խոտակեր է։ *Աշիկը* ահաջավոր է համարվում։ *Արամը* փոռնարկող է։ *Հակոբը* դարձել է բրիգադիր։ *Գիրքը կրթության անփոխարինելի աղբյուր է և այլն։*

Բաղադրյալ ստորոգյալները հանդես են գալիս երկու տեսակի կազմությամբ։ ա) գոյական, ածական, թվական կամ այլ խոսքի մաս + դիմավոր բայ (նրանք երկուսն էին։ Նա անարիշ դարձավ։ Հարևանս ինժեներ է։ Մեր շենքը գեղեցիկ է և այլն)։ Այս ստորոգյալները կոչվում են անվանաբայական բաղադրյալ ստորոգյալ։ բ) Դիմավոր բայ + անորոշ դերբայ կազմությամբ։ Խուսափում է պատասխանել։ Զգում էր ապացուցել։ Ջանում էր *խնդիրը լուծել և այլն)։ Սրա երկու եղրն էլ*

բայ է, ուստի կոչվում է բայական *բաղադրյալ ստորոգյալ։*

Անվանաբայական բաղադրյալ ստորոգյալի բաղադրիչները կոչվում են ստորոգելի *(ստորոգելիական վերադիր) և հանգույց։ Հատականիշ արտահայտող մասը կոչվում է ստորոգելի (ստորոգելիական վերադիր), իսկ հատականիշը ենթակային վերագրող մասը՝ հանգույց։ Օրինակ՝ «Ծերը իմ օղակինն է» նախադասության* օղակինն *ստորոգելին է, իսկ է-ն հանգույցը։ «Արուսը տաղանդավոր դերասանուհի էր» նախադասության* դերասանուհի-ն *ստորոգելի է, իսկ էր-ը՝ հանգույց։*

Բայական բաղադրյալ ստորոգյալը կազմվում է՝ ա) դիմավոր բայ + անորոշ դերբայ կազմությամբ։ (պատրաստվում է գնալ, հրաժարվեց վերցնել, համարձակվում է ասել, նպատակադրվել է վերադառնալ և այլն)։ Միշտ է, այս դեպքում անորոշ դերբայը դիմավոր բայի լրացումն է, այդուհանդերձ նրանք միասին կազմում են բաղադրյալ ստորոգյալ, ինչպես ընդունում է Մ. Աբեղյանը։ բ) Ստորոգելի + եմ + անորոշ դերբայ կազմությամբ։ (Ուրախ եմ հայտնել։ Պատրաստ եմ զեկուցել։ Համաձայն եմ աշխատել)։ Այս դեպքում գործ ունենք երկու կարգի լրացման հետ. ուրախ, պատրաստ, համաձայն բառերը լրացնում են եմ բային, իսկ հայտնել, զեկուցել, աշխատել բառերը՝ ուրախ եմ, պատրաստ եմ, համաձայն եմ կառույցներին։ Ստացվում է բաղադրյալ ստորոգյալ բարդ կառույցով՝ ստորոգելի + եմ և (ստորոգելի + եմ) + անորոշ դերբայ։ Բայական այս երկու (ա և բ) կառույցներում էլ անորոշ դերբայը, լրացում լինելով հանդերձ, ստորոգյալի մաս է, բաղադրիչ։

Բաղադրյալ ստորոգյալի կազմության վերաբերյալ զանազան կարծիքներ կան հայ քերականագիտության մեջ։ Գ. Սնակը իր դպրոցական դասագրքում, երևի դպրոցականին մատչելի լինելու նպատակով, ընդունում է բաղադրյալ ստորոգյալի մի տեսակ՝ եմ, լինել, դառնալ, համարվել, թվալ *բայերով և որևէ վերադիրով։ Այսպես է վարվում նաև Ս. Աբրահամյանը դպրոցների համար գրած իր նոր դասագրքում։ Վ. Առաքելյանն ընդունում է բաղադրյալ ստորոգյալի երկու տեսակ՝ անվանական և բայական։ Ակադեմիայի լեզվի ինստիտուտի հրատարակած «Ժամանակակից հայոց լեզվի» 3-րդ հատորում նշված է նույնպես երկու տեսակ՝ անվանական և բայական (հեղինակ՝ Հմ. Օհանյան)։*

Մ. Աբեղյանը բաղադրյալ ստորոգյալը, որ անվանում է բաղադրյալ բայ-ստորոգյալ, բաժանում է երկու խմբի՝ ա) եմ, լինել *բայերով և մի գոյական կամ ածական լրացումով, որ ասվում է* ստորոգյալ *(ձյունը սպիտակ է), բ)* դառնալ, կոչվել, համարվել, թվալ *և այլն բայերով և մի գոյական կամ ածական լրացումով, որ ասվում է* ստորոգելիական վերադիր։ *Օրինակ՝ Ջուրը գոլորշի դարձավ*[33]*։ Այնուհետև*

[33] *Տե՛ս* Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն, էջ 367—368։*

բացատրում է, որ եմ, լինել բայերը սովորաբար որոշակի իմաստ չունեն, ցույց են տալիս ստորոգում։ Երբ ասում ենք է (Տիգրանն է), իմանում ենք, որ Տիգրանին վերագրվում է մի որևէ հատկանիշ, բայց թե ի՞նչ հատկանիշ, չի իմացվում, այն իմացվում է միայն ստորոգյալի միջոցով (Տիգրանն աշակերտ է)։ Գոյականը և եմ-ը կազմում են բաղադրյալ բայ-ստորոգյալ։ Այս բայ-ստորոգյալի մեջ ստորոգյալը լրացում է՝ առնված գոյականով, ածականով, իսկ բայը ցույց է տալիս ստորոգում և կոչվում է էական բայ կամ հանգույց։ Է-ն ունի խոսք կազմող զորություն[34]։ Կան բայեր (դառնալ, կոչվել, համարվել, հանդիսանալ և այլն), գրում է Աբեղյանը, որոնք միայնակ հաճախ բավարար չափով որոշակի բայիմաստ չունեն, նրանց հետ իբրև բայիմաստի լրացում դրվում է մի գոյական կամ ածական, որ կոչվում է ստորոգելիական վերադիր։ Այդ լրացումը և բայը միասին կազմում են բաղադրյալ բայ-ստորոգյալ։ Օրինակ՝ «Ներսես Դ-ը կոչվեց Շնորհալի» նախադասության մեջ կոչվեց Շնորհալի բայ-ստորոգյալ է, իսկ Շնորհալի՝ ստորոգելիական վերադիր։ «Բայն ու իր լրացումը միասին ստանում են մի բայի նշանակություն և երբեմն կարող են մի բառով արտահայտվել, ինչպես՝ գոլորշի դառնալ—գոլորշիանալ, փունջ կապել—փնջել և այլն»[35]։ Ստացվում է բաղադրյալ ստորոգյալի երկու տեսակ՝ եմ, լինել+գոյական, ածական կազապարով և՝ դառնալ, համարվել, թվալ, հանդիսանալ, կոչվել և այլն+գոյական, ածական կազապարով։ Առաջին կազապարում հատկանիշ ցույց տվող բառը կոչվում է ստորոգյալ, 2-րդում՝ ստորոգելիական վերադիր։ Աբեղյանը նրբանկատորեն բացատրում է այս երկու կազապարների իմաստային տարբերությունը։ Առաջին կազապարում ստորոգյալը (ստորոգելին) ցույց է տալիս, որ ենթական այդ հատկանիշն ունի իր էությամբ, բնությամբ (ջուրը հեղուկ է), իսկ երկրորդում՝ ենթական հատկանիշը. ձեռք է բերում, փոխվելով, դառնալով այդպիսին, կամ այդ հատկանիշը թվում է խոսողին թեական (ձյունը ջուր դարձրին, թուփը նրան գայլ թվաց, ժողովը նրան նախագահ ընտրեց և այլն)։

Բաղադրյալ ստորոգյալի մասին այս նույն կարծիքն ունի նաև Գ. Ջահուկյանը։ «Եմ և դառնալ բայերի լրացման մասը,— գրում է նա,— սովորաբար կոչվում է ստորոգելի, եթե այլ կարգի բայեր հանդես են գալիս եմ-ի և դառնալ-ի իմաստով՝ կորցնելով իրենց մասնահատուկ իմաստները, ապա ստորոգելին կոչվում է ստորոգելիական վերադիր»[36]։

Անանցողական բայերի դեպքում հատկանիշ արտահայտող մասը կոչվում է ստորոգելի (թուփը մարդ թվաց), իսկ անցողական բայերի

[34] Տե՛ս նույն տեղը։

[35] Նույն տեղը։

[36] Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 339։

դեպքում՝ ստորոգելիական վերադիր (ժողովը Հակոբին նախագահ ընտրեց)։

Գ. Ջահուկյանը, Վ. Առաքելյանը ընդունում են նաև բարդ ստորոգյալ անվանումը, որ տրվում է ուզում է գնալ, պատրաստ է զեկուցել, շարունակում էր կարդալ, կարող է թռչել տիպի կառույցներին։

Ստորոգելիի և ստորոգելիական վերադրի այս տարբերակումը, սակայն, ինչպես մեկնաբանում է Մ. Աբեղյանը, իմաստային է, քերականորեն, կառուցվածքով դրանք իրարից չեն տարբերվում։ Երկու դեպքում էլ գործ ունենք դիմավոր բայ+որևէ այլ խոսքի մասով լրացում մանսակազապարի հետ։ Ուստի երկու դեպքում էլ հատկանիշ արտահայտող մասը այժմ ընդունված է անվանել ստորոգելի։

Ստորոգելի (ստորոգելիական վերադիր) առնող բայերը կոչվում են ստորոգառու բայեր։ Ստորոգառությունը արժույթի մի դրսևորումն է[37]։

Անանցողական ստորոգառու բայերն են՝ եմ, լինել, դառնալ, երևալ, թվալ, հանդիսանալ, հանդես գալ (որպես), ձևանալ, մնալ, ներկայանալ (իրենից ներկայացնել)։ Երկրորդաբար վերացական բնույթ ստանալով՝ իբրև ստորոգառու կարող են հանդես գալ՝ դնալ (գերի գընալ), գալիս (երազ է գալիս), ընկնել (կրակն ընկնել), կանգնել (պաշտպան կանգնել), կտրել (քար կտրել), նստել (թագավոր նստել) և այլն։

Անցողական ստորոգառու բայերն են՝ անվանել, առաջադրել, ասել, գտնել, դիտել (որպես), դարձնել, ընդունել (որպես), օծել, կոչել, համարել, հաշվել, հաստատել (որպես), հիշատակել (որպես), հռչակել, հրապարակել (որպես), նշանակել, նշել (որպես) և այլն։

Սրանք վ ածանց ստանալով փոխվում են անանցողական ստորոգառու բայերի։ Այս բայերը ցույց են տալիս առարկայի վիճակի փոփոխություն, անցումը մի վիճակից մի այլ վիճակի։ Ըստ ուժեղ, պարտադիր խնդրառության անանցողական բայերը միարժույթ են (սա քար է, թուփը գայլ թվաց), իսկ անցողականները՝ երկարժույթ (փայտը ձի է դարձրել, ժողովը նրան նախագահ ընտրեց և այլն)[38]։

Անվանաբայական բաղադրյալ ստորոգյալի ստորոգելին (ստորոգելիական վերադիրը) կարող է արտահայտվել՝

Գոյականի ուղղական հոլովով. օրինակ՝ Նա էլ մի լուսեղեն հեքիաթ էր (ՎՏ)։ Բայց չէ՞ որ միշտ էլ երազ էր միայն պայծառ պատկերդ այս անապատում (ՎՏ)։ Միջակությունը... թե թռչուն է նա, ապա թութակ է, թե կենդանի է, կապիկ է միայն (ՊՍ)։ Ես առաջին

[37] Գ. Ջահուկյան, նշված աշխ.-ը, էջ 468—469։

[38] Նկատի չի ունեցվում ենթական։

անգամ իմացա, որ ծիծեռնակի մայրն էլ մայր է *ու սիրան էլ* սիրա է, *ինչպես մերը (ԼԹ)։ Ես* երգիչ եմ, *երկնի* թիթեռ *(ԱԻ)։*

Տրական հոլովով. օրինակ՝ Այս բաժակը թեյի է: *Գդալը* ճաշի է: *Ժամացույցը* գրպանի (ձեռքի, պատի, սեղանի) է: *Այս մեքենան* կարի է: *Համազգեստը* աշակերտի է: *Մենք էլ այդ* մոտիկ ենք: *Դուք ի՞նչ* կարծիքի եք *և այլն։*

Բացառական հոլովով. օրինակ՝ Նրա գուլպաները բամբակից են, *իսկ իմը* բդից են: *Մոսկվայի շենքերի մեծ մասը* աղյուսից են, *իսկ մերը* քարից են: *Այս գդալը* արծաթից է, *իսկ մյուսը* փայտից է *և այլն։*

Գործիական հոլովով. օրինակ՝ Այսօրվա մեր ճաշը մսով էր: *— Կարկանդակը* լոռո՞վ է, *թե՞* կարտոֆիլով: *Ձեր ճաշը* բրնձով է *ու* տապակայով *(Սգր) և այլն։*

Կապային կապակցությամբ. օրինակ՝ Մարդը մոտի ետ էր, *շնկա-*տեց: *Խոսքը* գետի մասին է: *Ջեկուցումը* տոնի վերաբերյալ էր: *Ճաշ-կերույթը* տարելիցի առթիվ էր: *Նրա առաջընթացը* աշխատասիրության շնորհիվ է: *Ո՞վ* է դատի տակ: *Հեռվից երևացողը* արջի նման էր: *Աշա-կերտները* ոտքի վրա էին: *Մի ամբողջ տարի այդ ուսապարկն* ինձ հետ է եղել *(Հրշ)։*

Ածական անունով. օրինակ՝ Սակայն այդ թվին Մայր Հայաստանի արգանդը եղավ *սրբորեն* բեղուն *(ՊՍ)։ Ի՞նչն է այստեղ* ոգևորիչ, *ինչո՞վ* է խորթ *և* հարազատ, *ինչո՞վ* մոտիկ, *ինչո՞վ* է զատ *Աշխարհիկը հոգևորից (ՊՍ)։ Ի՞նչն է* պայծառ, *ի՞նչը՝* մթար, *Ո՞րն է քոնը, ո՞րն է* օտար, *Ի՞նչն է* կոպիտ *կամ* նազելի *(ՊՍ)։ «Ինչ* լավն էին, *ինչ* թարմ էին *վարդերը» (ԼԹ)։ Ի՞նչ* մաքուր ու ֆնֆուշ է *ջահել դեմքի տեսքը (ԼԹ)։ Ո՞վ* կլինի *քեզ* նավասար, *Ով Քաջ Նազար (ԼԹ)։ Մեր բրիգադը* դաշ-տավարական էր, *իսկ նրանցը՝* այգեգործական *(Սգր)։* Փակ են *քո սրտի հեռուներն իմ դեմ, Հավետ քեզ կապված, քեզ* օտար եմ *ես (ՎՏ)։* Ցուրտ է *աշխարհն ու* ադոտ *(ՎՏ)։ Լենան ոչ միայն* մտերիմ է, *այլև՝ նրա* հարազատն *(Հրշ)։ Այսպիսի ժամանակ ահը* վեր է լինում, *քան մահը (ՍՁ)։ Իմ այսօրվա տրամադրությունը և շրջական այս երեկոյի նման* խաղաղ *ու* բանաստեղծական են *(Հրշ)։*

Թվական անունով. օրինակ՝ Նրանք քսանվեց էին: *Հաղթողը* երկ-րորդն էր *(Սգր)։ Հազար* եմ *ու* բյուր *(ԵՁ)։ Հարյուրի կեսը* նիստուն է: *Այս մրցությունում նա* առաջինն է *(մամուլ)։*

Դերանուններով. օրինակ՝ Ո՞վ ես *դու, ո՞վ ես—բնավ չգիտեմ (ՎՏ)։* Նույնն է *հասցեդ հնամյա,* նույնն է *օթելը «Պարիժ» (ՎՏ)։ Մենք մե-նակ ենք—ես ու դու, ես էլ* դու եմ՝ *ես չկամ (ՎՏ)։ Քեզ ինչպե՞ս կան-չեմ,— ես* այն չեմ, *այն չեմ (ՎՏ)։ Սա ի՞նչ է: Իմ տեսածը* ուրիշ է: Այլ է *նրա նպատակը։ Իմ ճամփան* այս է: *Այդ երգողն ո՞վ է: Նրա մշակածը այլ* բոլորն են: *Իմ նպատակը* դա է: Այդպիսին էր *նրա վը-ճիռը։ Ձեր պարտքն* ինչքա՞ն է: *Այդ բոլորն իմ տառապանքի դիմաց*

ոչինչ են: *Իմ ունեցածն այս* ամենն է *(Սգր)։ Ո՞վ ես դու, ով եմ ես, չգիտեմ, Օտար ենք մենք իրար, անծանոթ (ՎՏ)։ Կյանքը* այսպես է լի-նում *միշտ (Հրշ)։ Ես ոչ մի լուր չունեմ մերոնցից։ Տեսնես ի՞նչ* են ե-ղել *(Հրշ)։ Եվ ես հավիտյան* ուրիշ եմ *արդեն (ՎՏ) և այլն։*

Անկախ դերբայներով. օրինակ՝ Վնասելու չէ, *վերջ կունենա (Ջի-վանի)։ Սա* գրե՞լ է, *որ գրում ես։ Այդ ինչ* երգել էր, *որ նա երգեց։ Սա* խաղալ չէ, *լուրջ գործ է։ Դա խոսք* ենենել չէ, *որ հետո անես։ Աշխատան-քը մածուն* ուտել չէ: *Մեքենա վարելը* կատակ անել չէ: *Այս աղջիկը լավ* երգող է *(Սգր)։ Այնպես* զգվող է *երեկոն անափ (ՎՏ)։ Երեխան* ընած է: *Մեքենան* կանգնած է *և այլն։*

Ասացինք, որ ստորոգելին (ստորոգելիական վերադիրը) ցույց է տալիս ենթակայի հատկանիշը։ Գիտենք նաև, որ որոշիչը նույնպես հատկանիշ է ցույց տալիս, ուստի ստորոգելին փոխարկերպելիս դառ-նում է ենթակային որոշիչ[39]*։ Օրինակ՝* Խոր են *քո հուր աչքերը (ՎՏ) կդառնա՝ քո* խոր, ճուր աչքերը, *Այնպես* օրորուն է *քայլքդ (ՎՏ) կը-դառնա՝* օրորուն քայլքդ: *Դա, այդ պատմությունը* ծանր է *ինձ համար և այս դեպքում՝* անտանելի *(Հրշ), կդառնա՝ Դա՝ ինձ համար* ծանր ու *այս դեպքում* անտանելի պատմությունը: *Բաժակը* թեյի է, *ժամացույցը* գրպանի է, *ճաշը* մսով է, *շենքերը* աղյուսից են, *զեկուցումը* տոնի մա-սին էր *կփոխվեն* թեյի բաժակ, գրպանի ժամացույց, մսով ճաշ, աղ-յուսից շենքեր, տոնի մասին զեկուցում *կապակցությունների։*

Պետք է նկատի ունենալ, որ հաճախ եմ բայն իր խոնարհման ձև-վերով ինքնուրույն հանդես է գալիս իբրև պարզ ստորոգյալ։ Օրինակ՝ Արդյոք ո՞ւր ես դու, Իմ անուշ երազ (ՎՏ)։ «Մենք երևանում ենք»։ «Գիրքը սեղանին է», «Ժամացույցը գրպանում է» նախադասությունների ուր, երևանում, սեղանին, գրպանում *բառերը որոշիչի չեն փոխակերպ-վի, որովհետև նրանք տեղի պարագա են, ոչ թե՝ ստորոգելի։ Այդպես էլ «Ժողովը երեկ էր» նախադասության* երեկ *բառը ժամանակի պարա-գա է, իսկ էր-ը ստորոգյալ, ուստի չի փոխակերպվի որոշիչի* (երեկ ժո-ղով *կապակցություն չունենք), իսկ «Հացը երեկվա է» նախադասու-թյունը կփոխակերպվի* երեկվա հաց *կապակցության, որովհետև* երեկ-վա-ն *ստորոգելի է։ Եթե ենթական դերանուններով է արտահայտված, այդ դեպքում ստորոգելին փոխակերպվում է բացահայտիչի, քանի որ դերանունը որոշիչ, հատկացուցիչ չի ընդունում։ Օրինակ՝ Ես երգիչ եմ (ԱԻ) կփոխակերպվի՝* ես՝ երգիչս: *Դու ուսուցիչ ես՝* դու՝ ուսուցիչդ: *Նրանք բանվորներ են՝* նրանք՝ բանվորները *և այլն։*

Մի շարք չեղոք սեռի բայեր ունենում են հոմանիշ խնդիրներ՝ ար-տահայտված անորոշ դերբայի հոլովաձևերով և ուղիղ ձևով, անորոշ

[39] *Բացառություն է անորոշ դերբայ ստորոգելին (Սա կարդալ չէր)։*

առումով։ Այսպես՝ խուսափում էր հանդիպելուց և խուսափում էր հանդիպել։ Ձգտում էր ապացուցելու և ձգտում էր ապացուցել։ Ջանում էր համոզելու և ջանում էր համոզել։ Պատրաստվում էր գնալու և պատրաստվում էր գնալ։ Հույս ուներ տեսնելու և հույս ուներ տեսնել և այլն։ Այս ստորոգյալների գոյականով արտահայտված խնդիրները դրվում են անպայման թեք հոլովներով՝ խուսափում էր պաշտոնից, ձգտում էր պաշտոնի, պատրաստվում էր ճնշության և այլն։ Իսկ նույն խնդիրը անորոշ դերբայով արտահայտվելիս դրվում է թե՛ ուղիղ ձևով, թե՛ թեք։ Եթե անորոշ դերբայը ուղիղ ձևով է դրված (հրաժարվում է պատասխանել), նշանակում է նա չի ընդունել գերագույն անդամի թելադրած հոլովը, ուրեմն խնդրառական կապի մեջ չէ նրա հետ։ Դ. Սակը անորոշ դերբայը այս կառույցում անվանում է բացարձակ անհրաժեշտ, քանի որ այդ դիրքում անորոշը հանդես է գալիս սոսկ իբրև դերբայ, գերագույնին չկապակցված։ Այս երկուսը միասին կազմում են մի բայական բաղադրյալ ստորոգյալ՝ ստորոգյալ+անորոշ առումով անորոշ դերբայ կաղապարով։ Այս դեպքում էլ մյուս բաղադրյալ ստորոգյալների նման մենք գործ ունենք լրացում-լրացյալ հարաբերության հետ։ Օրինակներ՝ Ես չեմ կարող զսպել լացս (Հրշ)։ Ես դես ու դեն եմ ընկնում և աշխատում եմ ծածկ գտնել (Հրշ)։ Յուրաքանչյուր ուղևոր ջանում էր գեթ մի աչքով դիտել ծովը (ՍՉ)։ Օդաչուն ճիգ էր բռնում արագ անցնել (ՍՉ)։ Ուրախ եմ հայտնել ձեզ։ Համաձայն էր պայմանագիր կնքել։ Հակված էր հանել իր թեկնածությունը։ Չեմ խուսափում հիշել ու խոսել Ստեղյայի մասին (Հրշ)։ Սովորություն ուներ առանձհանալ (Հրշ)։ Խորհուրդ են տալիս բերանը փակել (ՍՉ)։ Թիֆլիսի կենդանասերները արծիվ են փնտրում և պատրաստ են մեծ դին տալ (ՍՉ)։ Մենք դժվարանում ենք պարզել այդ բանը (ՍՉ)։ Նա հրաժարվեց վերցնել հարը (ՍՉ)։ Այս բոլոր օրինակներում ստորոգյալները կամ չեզոք սեռի բայով են արտահայտված և կամ բաղադրյալ են, ուստի անորոշ դերբայը ուղիղ խնդիր չի կարող լինել, թեև ստորոգյալի լրացումն է ուղիղ ձևով։ Իմաստային տեսակետից (խորքային կառույցում) անորոշ դերբայը կամ նպատակի պարագայի իմաստ է արտահայտում (ճիգ էր թափում արագ անցնել), կամ որոշիչի (խորհուրդ են տալիս բերանը փակել), կամ անջատման անուղղակի խնդիր (խուսափում էր պատասխանել), կամ հանգման անուղղակի խնդիր (ձգտում էր պատասխանել), բայց իրենց ձևով և ոչ մեկը չէ դրանցից, ուստի քերականներն այդ բացարձակ անհրաժեշտը համարում են ստորոգելի, բաղադրիչ՝ նրա և ստորոգյալի միջև տեսնելով ստորադասական հարաբերություն, այսինքն այդ անորոշ դերբայը լրացումն է դիմավոր բայի, ինչպես այդ տեսանք բաղադրյալ մյուս ստորոգյալներում։



Ենթակայի եվ ստորոգյալի համաձայնությունը

Կապակցության եղանակները քննելիս տեսանք, որ ենթական ու ստորոգյալը կապակցվում են համաձայնությամբ։ Գիտենք նաև, որ համաձայնությունն ընդհանրապես ստորադասական հարաբերության արտահայտություն է։ Սակայն այս՝ գլխավոր անդամների համաձայնությունը տարբերվում է ստորադասական մյուս եղանակներից՝ կառավարումից ու առդրությունից, ինչպես և, որ շատ կարևոր է, գրաբարի որոշչի և որոշյալի միջև եղած համաձայնությունից։

Ժամանակակից հայերենի ստորոգյալի ու ենթակայի կապակցությունը պայմանավորված է երկուստեք համաձայնությամբ։ Մեր դիմավոր բայն ունի այն առանձնահատկությունը, որ բայիմաստի հետ

արտահայտում է նաև գործողություն կատարողի (ենթակայի) դեմքի ու թվի գաղափար։ Դեմքի ու թվի կարգեր ունեն նաև ենթակայի պաշտոնով հանդես եկող անձնական դերանունները, ուստի ստացվում է միևնույն դեմքով ու թվով ենթակայի ու ստորոգյալի զուգահեռ կապակցություն։ Այդպիսի զուգահեռ ստացվում է նաև գոյական ենթակայի ու բայ-ստորոգյալի միջև, քանի որ գոյականը նույնպես ունի թվի կարգ և երբորդ դեմքի իմաստ։

Խոսելով ենթակայի ու ստորոգյալի համաձայնության մասին՝ Մ. Աբեղյանը գրում է. «...Ստորոգյալն ու ենթական,— Անին Բագրատունյաց մայրաքաղաքն է,— ինչպես խոսքի երկու հավասար եզրեր կամ մասեր, զուգորդվում են իրար։ Ամեն մի ենթակա, ինչպես «Տիգրանը» ուղղականը, նույնպես խնդրում է մի բայ-ստորոգյալ «գնաց», ինչպես և բայ-ստորոգյալը ինքը պահանջում է մի ենթակա։ Ենթակայի հոլովը բայից կախում չունի»[40]։

Մ. Աբեղյանը ընդունում է ստորադասական հարաբերության երկու տեսակ՝ կախում և ներունակություն։ Կախման հարաբերությամբ են կապակցվում որոշիչն ու որոշյալը, հատկացուցիչն ու հատկացյալը, խնդիրն ու բայը, պարագան ու բայը, ստորոգելին ու հանգույցը և այլն, իսկ ներունակությամբ՝ ենթական ու ստորոգյալը, բացահայտիչն ու բացահայտյալը։

Ուրեմն Մ. Աբեղյանը ենթակայի ու ստորոգյալի կապակցությունը համարելով ստորադասական մի տեսակ՝ տարբերում է այն բուն ստորադասականից։ Ենթական բայի դեմքի լրացում համարելով հանդերձ նրանց մեջ տեսնում է հավասարազորություն, փոխկապակցություն։

Ենթական և ստորոգյալը նախադասության հավասարազոր անդամներ են համարում արևելահայ դրական լեզվի շարահյուսության գրեթե բոլոր ուսումնասիրողները՝ Գ. Սեակ, Վ. Առաքելյան, Ս. Աբրահամյան, Գ. Ջահուկյան և ուրիշներ։ Ենթական և ստորոգյալը «իրար նկատմամբ,— գրում է Ջահուկյանը,— գրավում են երկակի դիրք, և չի կարելի մեկը համարել գլխավոր, մյուսը՝ լրացական անդամ»[41]։ «Ենթական հաղորդակցային առումով՝ կենտրոնական անդամ է, հաղորդային առումով՝ դիմավոր բայով արտահայտված հարաբերության կողմերից մեկը, այսինքն՝ բայական արժույթի մի դրսևորումը, հետևվարաբար դիմավոր բայի համեմատությամբ լրացական անդամ։ Ստորոգյալը որպես նախադասության կենտրոնական հարաբերության արտահայտություն, հաղորդման մակարդակով կենտրոնական անդամ է, և ենթական նրա արտահայտած հարաբերության կողմերից մեկը. ստորոգյալի ստորոգելիական մասը ակնհայտորեն ծառայում է ենթակայի

[40] Մ. Աբեղյան, նշված աշխատությունը, էջ 398։

[41] Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 340։

վիճակի բացահայտմանը և կախյալ դիրք ունի նրա նկատմամբ, իսկ ստորոգող մասը (հանգույցը) ծառայում է այդ կախման արտահայտության»։ Ջահուկյանն ըստ էության ենթական գլխավոր անդամ է համարում խորքային կառուցվածքում, իսկ մակերեսային կառուցվածքում ստորոգյալն է համարում գերադաս անդամ։ Նա միանգամայն իրավացի է, երբ գրում է, թե ստորոգելին (ստորոգելիական վերադիրը) ենթակայի հատկանիշն է ցույց տալիս, դրանով իսկ կախման մեջ է ենթակայից, իսկ բայական մասը (հանգույցը) այդ հարաբերությունն է արտահայտում, դա պարզ երևում է փոխակերպման ժամանակ։ Օրինակ՝ ջուրը սառն է→սառը ջուր, սիրտը քար է→քար սիրտ և այլն։

Ենթակայի և ստորոգյալի հարաբերության բնութագրման հարցում կարծիքները միատեսակ չեն նաև ռուս քերականագիտության մեջ։ Որոշ լեզվաբաններ գրում են, թե ենթական գլխավոր անդամ է, ստորոգյալը՝ նրա լրացումը։ Ստորոգյալը համաձայնում է ենթակային։ Ենթական բերականորեն անկախ անդամ է, ստորոգյալը կախված է նրանից[42]։ «Грамматика современного русского литературного языка» (1970), «Современный русский язык» (1978) գրքերում հեղինակները ընդունում են ստորադասության երկու տեսակ՝ համաձայնություն (согласование) և նմանեցում (уподобление)։ Ենթակայի և ստորոգյալի քերականական միևնույն կարգերով (դեմք, թիվ, սեռ) արտահայտվելը համարում են նմանեցում (уподобление), իսկ մյուս անդամների միևնույն սեռով, թվով, հոլովով արտահայտվելը՝ համաձայնություն, ինչպես՝ этот человек, сама мать, поющие люди, третий этаж, наблюдаемое явление, красная книга, этого человека և այլն։

Ըստ այդ հեղինակների թեև ենթական ու ստորոգյալը դրվում են միևնույն թվով ու դեմքով, բայց ոչ նրանցից մեկը գլխավոր է, ոչ էլ մյուսը՝ երկրորդական։ Ենթակայի և ստորոգյալի ձևով իրար համընկնելը նման է համաձայնությանը, բայց էապես տարբերվում է նրանից։

«Երկկազմ նախադասության գլխավոր անդամների ձևական նմանեցումը ենթակայի և ստորոգյալի ձևերի քերականական կոորդինացիա է։ Արտաքինից նրանց կապը նման է համաձայնությանը, բայց ներսից գլխավոր անդամների կապակցության ձևային նմանությունը էապես տարբերվում է համաձայնությունից»[43]։ Ուրեմն հարցը քննելով խորքային և մակերեսային կառուցվածքի տեսակետից՝ հեղինակները տարբերում են ստորոգյալի ու ենթակայի միջև եղած ստորադասական հարաբերությունը մյուս լրացում-լրացյալ կապակցություններում եղած

[42] Современный русский язык. Синтаксис, под ред. Е. М. Галкина-Федорук, М., 1957, стр. 27.

[43] Грамматика современного русского литературного языка, 1970 г., стр. 548.

ստորադասական հարաբերությունից։ Սա նման է Աբեղյանի բնութագրին, չէ՞ որ Աբեղյանն էլ գլխավոր անդամների միջև եղած ստորադասական հարաբերությունը, առանձնացնելով կախյալ հարաբերությունից, կոչում է ներունակություն։

Այսպես, ուրեմն, թեև ենթական ու ստորոգյալը միմյանց հետ կապակցվում են համաձայնությամբ, իսկ համաձայնությունը ստորադասական հարաբերության արտահայտություն է, այնուամենայնիվ, ենթակայի ու ստորոգյալի կապակցությունը տարբերվում է մյուս ստորադասական կապակցություններից, օրինակ, որոշիչային, խնդրային, պարագայական կապակցություններից։ Կարելի է նշել հետևյալ տարբերիչ հատկանիշները։

1. Ամենից առաջ ենթական ու ստորոգյալը ստորոգումային կապակցության մեջ են, որով կազմվում է նախադասությունը, նրանցով արտահայտվում է եղանակավորում, 2. նրանց միջև կարող են լինել համաձայնության շեղումներ, բայց դրական լեզվում ընդունված, 3. ենթակայի ու ստորոգյալի համաձայնությունը կարող է լինել նաև իմաստային (բակառություն), 4. բաղադրյալ ստորոգյալների դեպքում ենթակայի հետ համաձայնում է միայն դիմավոր բայը (հանգույցը), մյուս բաղադրիչները կապակցվում են կառավարումով կամ առդրությամբ։ Օրինակ՝ «Դու խելոք ես» կառույցում դու ենթական և ես բայհանգույցն են համաձայնել իրար հետ (եզակի, երկրորդ դեմք), խելոք և ես բառերը կապակցված են առդրությամբ։ Այդպես էլ «Ես նրան ստրուկ չհամարեցի» կառույցում ես և չհամարեցի բառերն են համաձայնել թվով ու դեմքով (եզակի, առաջին դեմք), իսկ ստրուկ չհամարեցի» կապակցությունը կապակցված է կառավարումով։ Նշանակում է ստորոգյալի և ենթակայի միջև համաձայնությունը լրիվ, ամբողջությամբ է լինում այն դեպքում, երբ ստորոգյալը միայն խոնարհված բայով է արտահայտված լինում (ես գնացի, դու գնացել ես, նա երգում է և այլն)։

Ժամանակակից հայերենում ենթական ու ստորոգյալը համաձայնում (նմանվում) են դեմքով ու թվով։ Մենք պահպանում ենք համաձայնություն տերմինը ավանդույթը չխախտելու համար, բայց դրա տակ նկատի ունենք ենթակայի ու ստորոգյալի երկուստեք ձևային նմանեցումը։

Դեմքի համաձայնություն։ Ժամանակակից հայերենում կայուն է ստորոգյալի ու ենթակայի համաձայնությունը դեմքով։ Երկուսն էլ դրվում են միևնույն դեմքով։ Օրինակ՝ Ես չեմ հիշում ե՞րբ և ո՞ւր հանդիպեցի քեզ, Ու դու վրդովեցիր համբ ու լուռ հանգստությունն իմ հոգու (ՎՏ)։ Նա փերին է դմբուխտ գետի, Յնորքներիս սիրելին (ԱԻ)։ Այստեղ առաջին նախադասությունում ենթական ու ստորոգյալը դրված են առաջին դեմքով (ես չեմ հիշում, հանդիպեցի), երկրորդ նախադասությունում՝ երկրորդ դեմքով (դու վրդովեցիր), իսկ երրորդում՝ երրորդ դեմքով (նա փերին է, սիրելին)։ Համաձայնության մի երկու օրինակ ևս։ Դու չՀացել ես, դու էլ չկաս, Քեզ չզտա ես կյանքում խավար (ՎՏ)։ — Դու ուզում ես, որ ես ոչինչ չծածկե՞մ քեզանից։ Դու չես սխալվում։ Ես անտարբեր չեմ դեպի Մարությանի աղջիկը։ Նա այդ մասին կպատմի ձեզ (ՆԴ)։

Գոյականի, ինչպես և փոխանունների հետ ստորոգյալն արտահայտվում է երրորդ դեմքով։ Օրինակ՝ Մի ուրու անցավ, մի գունատ աղջիկ ձերմակ շորերով (ՎՏ)։ Կարմիրը հաճելի գույն է։ Հինգը երեքից մեծ է։ Արագը ձեի մակրայ է և այլն։

Եթե համադաս (բազմակի) ենթականերից մեկը առաջին դեմքի դերանուն է, ստորոգյալը դրվում է առաջին դեմքով (Ես, դու, Մանիկը պիտի աշխատենք), եթե առաջին դեմքի դերանուն չկա, երկրորդ դեմքի դերանուն է, ստորոգյալը դրվում է երկրորդ դեմքով, իսկ եթե երրորդ դեմքի դերանուն է՝ երրորդ դեմքով (Արամը, դու և նա գնացեք փողոց։ Ես և Արամը երգում են)։

Եթե ենթական դիմորոշ հոդով է, ստորոգյալը համաձայնում է այդ հոդի արտահայտած դեմքի հետ։ Օրինակ՝ Լավատեսներդ վախկոտ եք և իբրև վախկոտ՝ խաբեբա եք (ՆԴ)։ Պիոներներդ պիտի հինգ տոնա մետաղի ջարդոն հավաքեն։ Հետախույզ մարտիկներս անցանք թշնամու թիկունքը։ Այստեղ բայի դեմքը ցույց է տալիս, որ ս, դ հոդերը դիմորոշ են։

Մյուս դերանունների հետ (ցուցական, հարցական, հարաբերական, անորոշ, որոշյալ, ժխտական) ստորոգյալը դրվում է երրորդ դեմքով։ Օրինակ՝ Սա մեր անտառն է պաշտպանում։ Դա նրա միակ հոգսն է (Սգր)։ Ո՞վքեր էին այդ ցեղերին հշել։ Որո՞նք էին այդ առանձնահատկությունները։ Ինչ-որ մեկը դուռը ծեծում է։ Բոլորը մտածում են բակը կարգի բերել, թեև յուրաքանչյուրը մի հոգս ունի։ Ոչ ոք շատաց ճշմարտությունը։

Եթե ամենքը, յուրաքանչյուրը, բոլորը, ամեն մեկը, մեկն ու մեկը, դերանունները երկուսը, երեքը և այլն, ս, դ հոգեր ունեն և ենթակայի պաշտոնով են հանդես գալիս, ստորոգյալը դրվում է համապատասխանաբար 1-ին կամ 2-րդ դեմքով և հոգնակի թվով։ Օրինակ՝ Ամենքս ենք պատասխանատու (ամենքդ եք պատասխանատու), բոլորս էլ դաշտ ենք գնալու (բոլորդ էլ դաշտ եք գնալու), յուրաքանչյուրս մի տնկի բերենք (յուրաքանչյուրդ մի տնկի բերեք), երկուսս ենք մնացել (երկուսդ եք մնացել), մեկն ու մեկս գնանք ջրի (մեկնումեկդ գնաք ջրի) և այլն։

Սակայն այս ձևերի հետ ստորոգյալը հանդիպում է նաև եզակի երրորդ դեմքով։ Ինչպես՝ Յուրաքանչյուրս մի գիրք կբերի։ Երկուսս դր-

նալու է ջրի, երկուսդ՝ տնկիների։ Ամեն մեկս մի տան ծաղիկ է (ամեն մեկդ մի տան ծաղիկ է) և այլն։

Նկատելի է, որ առաջին դեպքում ենթական հոգնակի թվի իմաստ ունի. ամեն մեկս պատասխանատու ենք, նշանակում է մենք՝ ամեն մեկս, իսկ ամեն մեկս պատասխանատու է, նշանակում է մեզնից ամեն մեկը պատասխանատու է։ Այլ օրինակներ՝ Եթե ոչ մեկս չգնանք և՝ եթե ոչ մեկս չգնա։ Եթե ոչ մեկդ չգնա և՝ եթե ոչ մեկդ չգնաք։ Յուրաքանչյուրս ծառ պիտի խնամի (խնամենք), յուրաքանչյուրդ ծառ պիտի խնամի (խնամեք)։ Ամեն մեկս մի տան ծաղիկ է (ենք), ամեն մեկդ մի տան ծաղիկ է (եք)։

Մանրագր.—Երբեմն անձնանիշ դերանուն ենթական դրվում է ստորոգելիից հետո, բայից առաջ՝ ստորոգելի+ենթական+եմ կաղապարով, ինչպես՝ ղեկավարը դու ես, մեղավորը բոլորս ենք, բժիշկը ես եմ և այլն։ Այս դեպքում նույնպես ենթական դերանունն է և հանգույցի հետ (եմ) նույն դեմքով է դրված։ Այսպես՝ Ես էլ դու եմ, ես չկամ (ՎՏ) նախադասության ենթական ես-ն է, որին համաձայնել է եմ-ը։ Նույնը և՝ «Ես ես եմ։ Ես դու չեմ դառնա» նախադասություններում։

Երբեմն երբ խոսքը խոսակցին է ուղղվում կամ վերաբերում է խոսողին, անունները առաջին կամ երկրորդ դեմքի իմաստով են կիրառվում, և ստորոգյալն էլ համապատասխան դեմքով է դրվում։ Օրինակ՝ Քույր ու եղբայր նստած զրույց եք անո՞ւմ։ — Այո՛, քույր ու եղբայր նստած զրույց ենք անում։ Տանը մնացել ենք երկու ծերունի։ Ո՞վ ու ով գնացիք։ Նախագահ ու քարտուղար այդ եք որոշե՞լ — Ի՞նչ է, նախագահ ու քարտուղար իրավունք չունե՞նք որոշելու (Սգր)։

Թվի համաձայնություն։ Ժամանակակից հայերենում ենթական ու ստորոգյալը դրվում են միևնույն թվով։ Ինչ թվով ենթական է, նույն թվով էլ ստորոգյալն է դրվում։ Սա կանոն է։ Օրինակ՝ 1. Եվ գլուխը կախ նա լաց է լինում։ Պառավեց մահաշունչ ոսոխը դաժան (ԱԻ)։ Լռեց ծերունին... (ՀԹ)։ Մեր առջև ձորն էր թշշում խավարլտին, Մեր դեմը խաղում գիշերվան շունչը (ՀԹ)։ Այս օրինակներում ենթական ու ստորոգյալը դրված են եղակի թվով։

Հետևյալ օրինակներում՝ հոգնակի։ Ջրերը ուրախ գալիս են գնում (ԱԻ)։ Երգեր են հորդում զվարթ սրտերից (ԱԻ)։ Անմուրազ մեռած սիրահարների Աստղերը թռած իրար են գալիս (ՀԹ)։ Բարբառոսներ շատ կգան ու կանցնեն անհետ, Արքայական խոսքը մեր կմնա հավետ (ՎՏ)։

Բաղմակի ենթականների հետ ստորոգյալը սովորաբար դրվում է հոգնակի թվով։ Օրինակ՝ Մարությանը, կինը, աղջիկը երբեմն բոլորովին տարբեր, շատ անգամ իրար հակառակ կարծիքներ էին հայտնում միևնույն նյութի մասին (ՆԳ)։ Կտուրի վրա մնացինք Հազրոն և ես (ԱԲ)։ Նագիկը, Հակոբը, երրորդ դասարանցի Մելինեն, երեքամյա Նունեն նրան օրիորդ Մարի են ասում (ՄԳ)։ Հարազատ են իմ հոգուն,

Վհատությանն իմ խոնարհ ես։ Բիլերը դողդոջուն, ես խոտերը գետնահար (ՎՏ)։ Գետակը ձորում, թռչունը օդում, բոլորն էլ սիրով քեզ են ողջունում (ԱՄ)։ Այնտեղ հայրեր, այնտեղ որդիք Մի նոր կյանքի եզերքում, Որպես մի-մի հերոս մարտիկ Մահն են զրկում ու երգում (ԱՄ)։

Ենթակայի ու ստորոգյալի համաձայնությունը երբեմն կարող է լինել իմաստային հիմունքով։ Իմաստային համաձայնության դեպքում հաշվի չի առնվում ենթակայի թվային կարգը, և եղակի թվով ենթակայի հետ ստորոգյալը հոգնակի թվով է դրվում ենթակայի իմաստի պահանջով։ Համաձայնության այդ ձևը Մ. Աբեղյանն անվանում է բազմություն։ Բակ առնել նշանակում է ներսը, այսինքն բովանդակությունն առնել, նկատի ունենալ։

Բազմության հիմունքով եղակի թվով ենթակայի հետ ստորոգյալը դրվում է հոգնակի թվով, երբ եղակի թվով ենթական մեկից ավել առարկայի իմաստ է ունենում կամ հավաքական անուն է։ Օրինակ՝ խնդիրների մի մասը լուծվեցին, մյուս մասը մնացին անլուծելի, երեխաների համար բարդ էին։ Ժողովականների կեսը դուրս գնացին։ Տղաների մոտ կեսը դժգոհ մնացին (մամուլ)։

Անցյալի արձակագիրների ստեղծագործություններում (Պռոշյան, Մուրացան, Բաֆֆի) հանդիպում են հավաքական գոյականների հետ հոգնակի ստորոգյալներ, ինչպես՝ ժողովուրդը ջուր կտրեցին, թամաշավորը ձայն ձայնի տվին, կամ՝ տանուտերը իր որդիների հետ բոլորել էին ընթրիքի սեղանի շուրջը (Մ)։ Այսօր, սակայն, դրանց հետ ստորոգյալը միշտ դրվում է եղակի թվով։

Երբ ենթական ունենում է երկու և երկուսից բարձր քանակ ցույց տվող թվական որոշիչ, ստորոգյալը դրվում է և՛ եղակի և՛ հոգնակի թվով։ Օրինակ՝ Երկու գյուղն էլ գետի ձախ ափին են ընկած։ Երկու գյուղն էլ ականջները խլացին նոր օրերի լուրերին (ԱԲ)։ Արևմտյան Գերմանիայում աշխատանք որոնելու էին եկել թուրքահպատակ 1500 մարդ։ Իսրայելի սանձազերծած գործողությունների հետևանքով 500 մարդ սպանվեց և ավելի քան 200 մարդ վիրավորվեցին (ՍԽ)։ Ընդամենը քսան մարդ դեմ եղավ (մամուլ)։ Այսպես էլ մեկից բարձր փոխանուն թվական ենթակայի հետ ստորոգյալը թե՛ եղակի, թե՛ հոգնակի թվով է դրվում։ Օրինակ՝ Այդ ժամանակ երեքը ծառի տակից վեր կացան և կանգնեցին։ Երկուսս էլ ողջ էինք և դեռ երկար ենք ողջ լինելու։ Խառնածնի հարվածից տասներկուսը գլորվեցին և դուրս թռան։ Երկուսն էլ ջարդված վերադառնում էին (ՀրՄ)։ Ծառին 15 ճենդուկ կար, հինգը թռավ, քանի՞սը մնացին ծառին (դասագիրք)։ Նա հինգ տղա ուներ, երեքը գնացին բանակ, մնաց երկուսը (մամուլ)։

Բաղմակի (համադաս) ենթականների հետ ստորոգյալը եղակի թվով է դրվում, երբ համադաս ենթականները արտահայտված են հո-

մանիշ անուններով, որոնք միասնաբար ըմբռնվում են իբրև մի հասկացություն, մի առարկա, ինչպես՝ կարգ ու կանոն, չափ ու սահման, օր ու արև, զարդ ու զեղեցկություն, վիշտ ու հոգս, եռանդ ու տոկունություն և այլն։ Օրինակ՝ Ամենուրեք իշխում է սերն ու բարեկամությունը։ Կարգ ու կանոն պիտի իշխի՞, թե քմահաճույքը (ՀՍ)։ Նրանց մեջ եռանդ ու կրակ շատ կա (ՆԴ)։ Սենյակում աչքի է ընկնում կարգ ու կանոնը (ՆԴ)։ Հողաշափի գալուց հետո խոսքն ու զրույցը ավելի շատացավ։ Իսանանց խանութում նորն ու կառոը պակաս էր երևում (ԱԲ)։ Մենության երգերի «ախն» ու «վախը» տեղի է տալիս մի կենսուրախ լավատեսության (ԱՏ)։ Սրգն ու տաղն է բռնել մեր ողջ գյուղը։ Հաղն ու պարը համակել էր բոլոր ներկաներին (մամուլ)։

Եթե ենթականերն առանձին-առանձին են գիտակցվում կամ վերաբերում ստորոգյալին, ստորոգյալը թվարկվող ենթականերից առաջ է ընկնում և համաձայնում է իրեն անմիջապես հաջորդող ենթակային։ Օրինակ՝ Ինձ դուր է գալիս նրա անկեղծությունը, անմիջականությունը, պարզությունն ու սրտաբացությունը։ Երկրում տիրում էր կոտորած, սով համատարած և համաճարակ (ՀՄՍ)։ Հարսանքատուն մտցնելիս Թագավորի ու Թագուհու գլխին վերից Յաղ է տեղում չամիչ—փշատ, նոդոլ—նարաբ, Ջիր ու շոր թուր՝ Կարկտախառն հորդ անձրևի խշշոցով, եվ սերկևիլ, տանձ ու խնձոր՝ Ջատկին ներկած ձվերի պես գունակ-գունակ (ՊՍ)։ Սյունաղարդ և ընդարձակ սրահից երևում էր հանդիպակաց ամրոցը, դիմացի բարձունքը, արքունի սաղարթախիտ անտառը (Սգր)։ Ելույթից պարզվեց նրա նպատակը, միջոցն ու ճոգին։

Երբեմն բազմակի ենթակաները կապակցվում են և՛... և՛, թե՛... թե՛, ո՛չ... ո՛չ, կա՛մ... կա՛մ, ո՛չ միայն..., այլև շաղկապներով, ստորոգյալը համաձայնում է դարձյալ մոտիկ ենթակային։ Օրինակ՝ Ու միշտ, քանի որ կա շահ ու գերի, սարուկ ու տեր, Չի լինելու երկրի վրա Ո՛չ շիտակ խոսք, ո՛չ կյանք, ո՛չ սեր (ՀԹ)։ Բայց հիմա չկա ո՛չ պատը, ո՛չ այն տունը, որի պատշգամբի տակ հորդ անձրևին պահվել էին։ Աշնան խաղաղ օրերին նրա համար հաճելի էր և՛ սիմինդրի տերևների խշշոցը, և՛ վազերի օրորը, և՛ հնձանի դռնակի երգը (ԱԲ)։ Ծատուրյանի գրական աշխատանքների լիակատար բնութագրումն անելու ինձ չի ներում ո՛չ ռեֆերատիս հատկացրած ժամանակը, ոչ էլ ներկա պայմանները (ՎՏ)։ Նրա հայացքի մեջ նկատվում էր և՛ ամոթխածություն, և՛ երկյուղ, և՛ ապշություն, և՛ անշտի հեզություն, և՛ երեխայական միամտություն, և՛ անմեղություն (ՆԴ)։

Երբ անորոշ դերբայով արտահայտված համադաս (բազմակի) ենթակաները նույնպես գիտակցվում են առանձին-առանձին, և ստորոգյալը ընկնում է նրանից առաջ, դարձյալ համաձայնում է իրեն հաջորդող ենթակայի հետ՝ դրվելով եզակի թվով։ Օրինակ՝ Վարոսյանի

մտքով անցավ վազել տուն, դուրս հանել սնդուկից լեցուն ատրճանակը, գտնել Զորանյանին, գնդակներից հինգը դատարկել նրա բերանը, որ նա այլևս «դասակարգային անալիզ» չանի, իսկ վերջինով ցրել սեփական գանգը (ՆՁ)։ Մեր կենտ նպատակն էր դուրս բերել աշխատավորությանը ծանր վիճակից և տիրացնել իշխանությանը (ՀՄՍ)։ Նրան խիստ անհրաժեշտ էր շտապ մի մեքենա ճարել և քրոջը հիվանդանոց հասցնել (մամուլ)։ Մեքենավարին անհրաժեշտ էր նախ դռները ստուգել, բենզին վերցնել, ապա գնալ ավտոկայան (մամուլ)։

Ինչպես ասվեց, այս կրկնվող շաղկապներով կապակցություններում ստորոգյալը համաձայնում է անմիջապես հաջորդող կամ նախորդող ենթակային։ Օրինակ՝ Թե ինքը գնաց, թե եղբայրները, բայց՝ թե եղբայրները գնացին, թե ինքը, ոչ միայն նա գնաց, այլև՝ եղբայրները, բայց՝ ոչ միայն եղբայրները գնացին, այլև նա։ Կամ նա պիտի գնա, կամ եղբայրները, բայց՝ կամ եղբայրները պիտի գնան, կամ նա և այլն։ Այստեղ առկա է նաև զեղչումը։

Բոլորը, ամենքը դերանունների հետ ստորոգյալը դրվում է հոգնակի թվով։ Օրինակ՝ Բոլորն իրար անցան։ Ամենքը ժպտալով նայում էին Եվային (ՆԴ)։ Այդ բոլորը տանձի ծառեր են։ Ամենքն էլ կանաչել, ծաղկել են։ Սակայն հանդիպում է սրանց հետ նաև եզակի ստորոգյալ ինչպես՝ Կարծես թե դարձել եմ ես տուն, Բոլորն առաջվանն է կրկին (ՎՏ)։ Ինձ համար բոլորը մեկ է, միևնույն է և այլն։

Ողջը, յուրաքանչյուրը, ամեն մեկը, ամենը, ոչ մեկը, ոչ ոք դերանունների հետ ստորոգյալը սովորաբար դրվում է եզակի թվով։ Օրինակ՝ Ողջը քամու բերանն ընկավ։ Ամեն մեկը մի օգտակար գործ էր կատարում։ Յուրաքանչյուրը երկու-երկու մասնագիտություն ունի։ Մի քանիսն էր միայն դաշտ գնացել։ Այդ ամենը փչացավ, ջուրը լցրին։ Ոչ մեկը չառարկեց։

Վերոհիշյալ դերանունները օգտագործվում են նաև ս, դ դիմորոշ հոդով։ Այդ դեպքում ստորոգյալը դրվում է թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվով։ Օրինակ՝ Յուրաքանչյուրդ մի-մի գիրք կբերեք (նաև՝ կբերի)։ Մի քանիսդ գնացեք ջրի (նաև՝ թող գնա ջրի)։ Ամեն մեկդ մի ծառ պիտի տնկի (նաև՝ մի ծառ տնկեք)։ Ոչ մեկս չգնաց (նաև՝ չգնացիք)։ Ոչ մեկդ չգնացիք (նաև՝ չգնաց) և այլն։

Այս նույն ձևով համաձայնությունն ազատ է, երբ ենթական արտահայտված է մեկը անորոշ դերանվան կրկնությամբ։ Այսպես՝ Մեկնումեկդ գնացեք տեսեք, կամ՝ Մեկնումեկդ թող գնա տեսնի։ Մեկնումեկդ եկեք գրատախտակի մոտ, կամ՝ Մեկնումեկդ թող գա գրատախտակի մոտ և այլն։ Ինչպես երևում է, այստեղ դեր է խաղում նաև բայի եղանակը։ Հրամայական եղանակի բայերը սովորաբար դրվում են հոգնակի թվով, ինչպես՝ մեկնումեկդ բացատրեք (բայց՝ թող բացատրի)։

Նկատելի է, որ երբեմն ստորոգյալը համաձայնում է բացահայտիչի հետ։ Օրինակ՝ Նրանց գրույցը, հակաճառելը, աղմուկը՝ ամեն ինչ հայտնի է ինձ։ Քանակն էլ, որակն էլ՝ ամեն ինչ կպահպանվի։ Նրանց ընտանիքը՝ հայրը, մայրը, երեխաները գնացել էին ծովափ։ Կոլտնտեսականները, դպրոցականները, բժիշկները՝ ողջ գյուղը հավաքվել էր ակումբում (մամուլ)։

Երբ հոգնակի թվով ենթական ունենում է ն որոշող և ս. ղ ստացական հոգերը, բայց հոգնակիությունը վերաբերում է հատկացուցիչին, ստորոգյալը դրվում է եզակի թվով։ Ինչպես՝ Բաններս բուրդ է, որ նշանակում է մեր բանը բուրդ է։ Գործներս ձախ է գնում, նշանակում է մեր գործը ձախ է գնում։ Երբ հոգնակիությունը վերաբերում է նաև ենթակային, ստորոգյալը նույնպես հոգնակի թվով է դրվում, ինչպես՝ Ձեռքներս (ձեռքներդ) մաքուր են) մեր, ձեր ձեռքերը։

Մի շարք գոյականներ թեև ձևով հոգնակի են, բայց մի առարկայի անվանում են, ուստի նրանց հետ ստորոգյալը դրվում է եզակի թվով։ Օրինակ՝ Բաֆֆու «Կայծերը» ծրագրային վեպ է։ Տերյանի «Մթնշաղի անուրջները» հաճույքով է կարդացվում։ Դեմիրճյանի «Ընկերները» լավ պատմվածք է և այլն։

Ժամանակակից հայերենում ստորոգելին (ստ. վերադիր) բազմակի կամ հոգնակի թվով ենթականների հետ դրվում է թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվով։ Օրինակ՝ Սրանք ի՞նչ ծաղիկ են (կամ ծաղիկներ են)։ Երգը, երաժշտությունը, նկարչությունը բարձր մշակույթ են։ Գրքերը մեզ համար ուսուցիչ (կամ ուսուցիչներ) են։ Երկնքի աստղերը ճրագ (կամ ճրագներ) են։

Հոգնակի կամ բազմակի ենթականների հետ ստորոգելին (ստ. վերադիրը) եզակի թվով է դրվում առանձնապես՝ ա) երբ տեսակի անվանում է և դրվում է անորոշ առումով։ Օրինակ՝ Կատուն, շունը ընտանի կենդանի են։ Հայրը, մայրը, եղբայրը ուսուցիչ են։ Նրանք աշակերտ են։ Սրանք ծիրանի ծառ են։ Դուք բանվո՞ր եք։ բ) Երբ ստորոգելին (ստ. վերադիրը) չափի միավոր է և ունի թվական որոշիչ։ Օրինակ՝ Մենք քսանհինգ հոգի էինք։ Մեր սենյակները հիսուն քառակուսի մետր է։ Լուցկիները քանի՞ արկղ են։ Աղը, շաքարը և այլուրը միասին քանի՞ կիլոգրամ են։ գ) Երբ ստորոգելին մի վերացական կամ հավաքական անուն է։ Օրինակ՝ Թոռները նրա համար ուրախություն են։ Դրանք նրա ծուլության նեռևանք են։ Եվ դրանք կոչվում են խղճահարություն։ Այս նկարները հանճարեղ մարդու ստեղծագործություն են։ Մեր նոր շենքերը մի ընդունակ ու ստեղծագործ ժողովրդի գործ են։ Սրանք տաղանդավոր երիտասարդի ձեռքի արգասիք են։

Հոգնակի կամ բազմակի ենթականների հետ ստորոգելին առանձնապես հոգնակի թվով է դրվում՝ ա) երբ ստորոգելին որոշյալ առումով է և սովորաբար ունի հատկացուցիչ, որոշիչ։ Օրինակ՝ Տեր հոր

երկու որդիները քույր Աննայի աշակերտներն են։ Նրանց հոգերը մշակողները մեր գյուղացիներն են։ Հայրենիքը բոլորիս է, և մենք բոլորս ենք նրա զինվորները (Մ)։ Մենք կինոյի բանվորներն ենք։ Իմ ընկերներն այդ նկարիչներն են։ Դրանք այդ մարդու կեղծ փողերն են։ Նրա գործիքները նեռկեռն են, վրձինն ու ներկապնակը (ՀրՍ) և այլն։

բ) Երբ ստորոգելին վերաբերում է ենթականերից յուրաքանչյուրին առանձին-առանձին։ Օրինակ՝ Մարքսը, Էնգելսը գիտական կոմունիզմի տեսաբաններն են։ Վարդը, մենեկը, հասմիկը հոտավետ ծաղիկներ են (կամ սիրված ծաղիկներ են)։ Բաշինջաղյանը, Սուրենյանը, Սարյանը սիրված նկարիչներ են։ Իսկ եթե ստորոգելին վերաբերում է ենթականերին միասին վերցրած, իբրև մի ամբողջություն, դրվում է եզակի թվով։ Ինչպես՝ Վարդը, մենեկը, շուշանը հոտավետ ծաղիկ են։ Աշոտը, Արամը, Մելեկը դեռ հոկտեմբերեկ են։ Դրանք պատատու ծառ են։ Խաղողի այգիները Արարատյան դաշտի զարդն են, իսկ դեղձը, տանձը, խնձորն ու ծիրանը այգիների զարդն են։

Ստորոգելիի այս համաձայնական տարբերությունը այսօր գրեթե վերացել է և ստորոգելին հանդիպում է թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվով։ Քաղաքավարության համար դու-ի փոխարեն գործածվում է դուք-ը և դրվում է մեծատառով։ Այդ դեպքում նրան համապատասխան ստորոգյալն էլ դրվում է հոգնակի թվով։ Օրինակ՝ Նա դիմեց ինձ.— Դուք պատերազմի վետերա՞ն եք։ Հանդստանալո՞ւ եք գնում (ԲՀ)։ Այս երեկո կրկին Դուք եկաք որպես հյուր (ՎՏ)։

Գլուխ 12

ՄԻԱԿԱԶՄ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մենք մինչև հիմա քննում էինք երկկազմ նախադասության կառուցվածքը, կազմությունը։ Տեսանք, որ երկկազմ նախադասությունը կազմվում է երկու գլխավոր անդամներով՝ ենթակայով ու ստորոգյալով։ Նրանց են կապակցվում երկրորդական անդամները։ Ինչպես՝ Արևի առաջին ճառագայթները ընկան Սպիտակ լեռան կատարին (Սգր)։ Մարդիկ մի պահ մոռացել էին իրենց ձիերը։ Դարբնի տղան Սիմոնի ականջին շշնջաց (ԱԲ) և այլն։ Ժամանակակից հայերենում գործածական են գերազանցապես երկկազմ նախադասությունները։

Սակայն կան նախադասություններ, որոնք միայն մի կենտրոն ունեն, միաբևեռ են, ունեն միայն բայ-ստորոգյալ, ենթակա չունեն, ինչպես՝ մթնեց, երեկոյանում էր, լուսանում էր և այլն։ Սրանք մոտ են երկկազմ նախադասությանը այնքանով, որ գլխավոր անդամն արտահայտված է դիմավոր բայով, բայց և հեռու են նրանից, քանի որ չունեն ենթակա, միակենտրոն են, սրանով էլ մոտենում են միակազմ նախադասություններին։

Կան նախադասություններ էլ, որոնք ոչ ենթակա ունեն, ոչ ստորոգյալ, նրանց գլխավոր անդամն արտահայտվում է որևէ գոյականով կամ անորոշ դերբայով։ Ինչպես՝ Կանաչները շառուրել։ Բարձր չխոսել։ Ինչպե՞ս կողմը գնալ—ա՞ջ, թե՞ ձախ, առա՞ջ, թե՞ ետ։ Մթություն ամենուրեք (ԱՇ)։ Ինչ անուելի վին երկուսի մեջ (ԱՇ)։ Այս երկու տիպի նախադասությունների (դիմավոր և անդեմ) մեջ ընդհանուրն այն է, որ երկուսն էլ միակենտրոն են, միաբևեռ, այս հիմունքով էլ սրանք ներկայացվում են մի ընդհանուր տեսակի մեջ, որ կոչվում է միակազմ։ Միակազմ նախադասություններն առհասարակ հանդիպում են գեղարվեստական գրականության մեջ։ Գիտական ուսումնասիրություններում գրեթե չեն հանդիպում։

Միակազմ նախադասությունները կազմությամբ լինում են՝ պարզ համառոտ, ինչպես՝ Ցրտեց։ Լռությո՛ւն։ Պառկե՛ք։ Ձկրակե՛լ և այլն, պարզ ընդարձակ, ինչպես՝ Երեկ երեկոյան անձրևում էր։ Պանդանել լռություն և կարգ ու կանոն։ Զո՛ւկ, իմ եռանից, առա՞ջ և այլն։ Կարող են լինել բարդ, ինչպես՝ Ամռանն ոչ է մթնում, ձմռանը՝ շուտ։ Ամբողջ օրը, լուսանում է, թե մթնում, հիվանդի մոտ է լինում (Սգր) և այլն։

Միակազմ նախադասությունները կարող են լինել բարդ նախադասության բաղադրիչ։ Օրինակ՝ Մենք ճամփա ընկանք, երբ լուսացել էր։ Գանել, թե ո՞ր բայերն են ներգործական սեռին պատկանում, արտագրել դրանք և դրանցով կազմել գեղեցիկ նախադասություն։ Սարգիսը, վայրկյանից օգտվելով, պիտի թավալվեր հետ և այնուհետև այլևս փրկության ոչ մի հույս (ԱՇ) և այլն։

Միակազմ նախադասությունները լինում են երկու տեսակ՝ դիմավոր միակազմ և անդեմ միակազմ, վերջիններս էլ իրենց հերթին լինում են՝ բայական և անվանական անդեմ նախադասություններ։

Անդեմ նախադասություններ են նաև բառ-նախադասությունները։

Դիմավոր միակազմ (անենթակա) նախադասություններ։ Դիմավոր միակազմ (անենթակա) են կոչվում այն նախադասությունները, որոնք չունեն ենթակա և չեն կարող ունենալ, որը բխում է այդ նախադասությունների կառուցվածքային առանձնահատկություններից։ Այս նախադասությունները ունեն միայն մի գլխավոր անդամ՝ ստորոգյալ, որն արտահայտվում է դիմավոր բայով, դրա համար էլ դրանք կոչվում են դիմավոր միակազմ նախադասություններ։

Դիմավոր միակազմ (անենթակա) նախադասությունները տարբերվում են այն նախադասություններից, որոնց ենթական գեղչված է, բայց կարելի է վերականգնել բայի դեմքի, խոսքային միջավայրի միջոցով։ Օրինակ՝ Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե (ԽՉ) նախադասության բայ-ստորոգյալի դեմքից երևում է, որ ենթական խոսողն է, իսկ՝ Կարդա, ա՛յ իմ խելոք մանուկ, Կարդա, գրիր

տարին բոլոր (ԱՇ) նախադասության բայ-ստորոգյալը հուշում է, որ ենթական դու-ն է։

Ինչպես ասվեց, զեղչված ենթակայով նախադասություններում ենթական երբեմն գիտակցվում է խոսքային միջավայրից։ Օրինակ՝ — Նհոյի կնկան էլ կանչե՞մ։ — Չէ, ամոթ է (ՀՔ)։ Միշան պսակվում է Մաշայի հետ։ Ճի՞շտ է (ԱՇ)։ — Տանն եք, ասում եք՝ տանը չեք։ Ամոթ չէ՞ (ՆԴ)։ Մեր պարտքն է պաշտպանել այդ գիծը։ —Ճիշտ է (ՆՉ)։ Այս բոլոր ընդգծված նախադասությունների ենթակաները նախորդ նախադասություններն են։ Սրանց հոմանիշը կլինի՝ Ամոթ է, որ Նհոյի կնկան էլ կանչես. Ճի՞շտ է, որ Միշան պսակվում է Մաշայի հետ և այլն։

Այդպիսին չեն, սակայն, Մրենց։ Երեկոյանում է։ Ցրտեց և այլն միակազմ նախադասությունները, նրանց ենթական հնարավոր չէ և կարիք էլ չկա վերականգնելու։

Դիմավոր միակազմ (անենթակա) նախադասությունները լինում են երեք տեսակ։

1. Վիճակային, բուն անենթակա նախադասություններ։ Սրանք արտահայտում են՝ ա) մթնոլորտային երևույթներ՝ տեղումներ, օդի ջերմություն և այլն։ Օրինակ՝ Ամպել է, ձյուն չի գալիս (Լրգ)։ Երեք ժամ անձրևում էր։ Այս գիշեր շատ ցուրտ էր և այլն։

բ) Տարվա եղանակ, ժամանակ։ Օրինակ՝ Երեկոյանում էր։ Աշունքացել էր (ԴԴ)։ Լուսացավ, լույսը բարին (ՂԱ)։ Գարուն է։ Գիշեր է, ձմեռ է, կեսօր էր և այլն։

Վիճակային միակազմ նախադասությունները երբեմն փոխաբերական իմաստով արտահայտում են խոսողի հոգեկան վիճակը։ Օրինակ՝ Լռություն է, մութ է այնտեղ, սակայն իմ Սրտում արդեն արշալույս է, հարություն (ՎՏ)։ Ինչպես երևում է օրինակներից, այս նախադասություններում սահմանափակ բայեր են գործածվում։

Վիճակային անենթակա նախադասություններում գերադաս անդամը արտահայտվում է բայի սահմանական, ըղձական, ենթադրական, հարկադրական եղանակներով, միշտ եզակի թվով և երրորդ դեմքով։ Օրինակ՝ Կայծակում էր։ Երկար ժամանակ անձրևում էր։ Ամպել է, շուտով անձրևելու է։ Դուրսը նայիր, տես ինչպես է մթնել։ Իսկապես սև ամպեր են, կարկտելու է (Սգր)։ Երեկ ամպամած էր։ Կցրտի, տեղ չենք հասնի։ Սա ապրիլ ամիսն է, էլ չի ցրտի (Սգր)։ — Էլ չի՞ լուսանա, ի՞նչ ես տագնապում (Սգր)։ Երանի մի անձրևեր, սարերում խոտը խանձվում է (Սգր)։ Պիտի ցրտի, որ դու տաք հագնվե՞ս (Սգր)։

Այս նախադասությունների ստորոգյալն արտահայտվում է նաև հարադրավոր բայերով, ինչպես՝ Շաղ է դրել։ Շախտա է արել։ Կայծակին է տալիս։ Վերջերս ցուրտ է անում։ Երեկոները ուժեղ քամի է

անում։ Ինչպես և երկրորդական բաղադրյալ ժամանակներով։ Օրինակ՝ անձրևելիս է լինում, ամպած է եղել և այլն։

Այս անենթակա նախադասությունների ստորոգյալը կարող է նաև բաղադրյալ լինել։ Ինչպես՝ Գարուն է, ձյուն է արել (երգ)։ Գիշեր է, ամպամած գիշեր։ Առավոտ էր։ Մութն է, լույս է, անձրև է, քամի է, շոգ է, ցուրտ է և այլն։

Անենթակա պետք է համարել նաև՝ քունը տանում է (տարել է, տարավ), ուշքը գնաց, վրան դող է եկել և նման հարադրավոր բայերով արտահայտված նախադասությունները։

Անենթակա նախադասություններին զուգահեռ գործածվում են նաև նրանց հոմանիշ ենթակայով ձևերը։ Օրինակ՝ ձնեց և ձյուն եկավ, անձրևվում է և անձրև է գալիս, լուսացավ և լույսը բացվեց։

Ոմանք (օրինակ Մառը) գտնում են, որ անենթակա նախադասություններն ավելի հին են, քան նրանց ենթակայով ձևերը։ Ոմանք էլ անենթակա ձևերը համարելով ավելի բարձր մտածողության, ընդհանրացման, վերացարկման հետևանք, գտնում են, որ դրանք ավելի ուշ շրջանում են ստեղծվել։ Ավելի վաղ եղել են անձրև է գալիս, ձյուն է գալիս, քան անձրևում է, ձնում է ձևերը։ Իրականում անենթակա ձևերը նույնքան հին են, որքան նրանց հոմանիշ ենթակայով ձևերը։ Պետք է նկատել, սակայն, որ բաղադրյալ, հարադրավոր ձևերը իբրև ժողովրդական ձևեր, պետք է, որ նախորդած լինեն համադրական ձևերին։

2. Անորոշ դիմավոր (անենթակա) նախադասություններ։ Այս նախադասությունները զանազան հաղորդումներ են կատարում։ Նրանց բայ-ստորոգյալի հոգնակի թիվը չի համապատասխանում գործողության բուն կատարողի թվին։ Գործողություն կատարողը մի անձ է, բայց խոսողը չգիտի՝ ով է, ուստի հոգնակի թվով է ասում, որը նախադասությանը տալիս է անորոշություն։ Անորոշ դիմավոր նախադասության գործողություն կատարողը միշտ անձ է, անձի անուն։ Օրինակ՝ Նոր էր աչքս կպել, կողքիս բորում են (ԲՀ)։ Քեզ գրասենյակում կանչում են (Սգր)։ Զանգը տվեցին (ՀԹ) և այլն։ Նախադասություններում գործողություն կատարողը մի անձ է, սակայն խոսողը չգիտի, թե ով է, ուստի ասում է հոգնակի թվով, ընդհանրապես։

Երբեմն խոսողը ենթական հիշատակելը կարևոր չի համարում, նրա համար կարևորը բուն գործողությունն է, հաղորդման բովանդակությունը։ Օրինակ՝ Ասում են՝ դու լավ ես երգում, Բայց չգիտեմ՝ ճի՞շտ են ասում (ՂԱ)։ Ասում են, թե դու այնպես, Մոռացել ես ինձ այնպես, Որ երբ անունս են տալիս, Հազիվ միտդ եմ գալիս (ԱԻ)։ Ինձ առաջարկում են պաշտոն Ազգային գործերի մինիստրության մեջ (ՎՏ)։ Սակայն անբախտ նրա դին Պապի կողքին շրջրին, ...Փոս փորեցին

մի խորին, Առանց ժամ ու պատարագ Մեջը դրին Մարոյին, Էն սև քարն էլ տաշեցին, Բերին վրեն քաշեցին (ՀԹ) և այլն։

Այս բոլոր օրինակներում խոսողի համար կարևոր չէ, թե ով է ասում, ով է պաշտոն առաջարկում, ով է թաղում, քարը քաշում և այլն։ Կարևորը հաղորդվող գործողություններն են, այդ պատճառով էլ ենթական չի նշվում։ Այս նույն պատճառով էլ ենթական չի արտահայտված հետևյալ նախադասություններում։ Ինձ արձակուրդ են տալիս, գնալու տեղ չունեմ, դու գնալու տեղ ունես, քեզ արձակուրդ չեն տալիս, այդպես է, պատերազմ է (ԲՀ)։ Հիվանդանոցում առանց չքավորության վկայականի չեն ընդունի ձրի (ՆԴ)։ Երևանում որ իմացան, գիտե՞ս ինչ կանեն, մեզ հոգեց հոգի կկորցնեն (ՊՊ)։ Խանութում վաճառում են իջեցված գներով ապրանքներ։ Այստեղ վաճառում են վիճակախաղի տոմսեր։ Մեզ մոտ չեն ծխում։ Ոչ մի տեղ արշին աչքան լավ չգիտեն, որքան Սարու գյուղում (ԱԲ)։ Ասում են՝ տարել են մեկին, ուզել են թաղել, շիրիմի փոսի մեջ գարթնել է հանկարծ (ՀԹ) և այլն։

Անորոշ դիմավոր նախադասությունների ստորոգյալն արտահայտվում է, ինչպես օրինակներն են ցույց տալիս, բայի հոգնակի թվով, երրորդ դեմքով։ Ինչպես՝ Սիրեցի, յարս տարան, էս ինչ զուլում աշխարհ է, Սիրաս պոկեցին տարան (ԱԻ)։ Շինականի վրա գյուղում շոնթարացին (ԱԲ)։ Ու սառ ջուր լցրին իմ գլխին ասես (ԵՁ) և այլն։

Երբեմն խոսողն է իր միտքն արտահայտում բայի երրորդ դեմքով, հոգնակի թվով, որի հետևանքով արտահայտվողի դեմքն ու թիվը (եզակի, առաջին) չի համապատասխանում բայ-ստորոգյալի դեմքին ու թվին և ստացվում է անորոշություն։ Օրինակ՝ — Սայլդ պատրաստիր։ Քեզ ասում են սայլդ պատրաստիր։ Քեզ չեն ասո՞ւմ, ո՞ւմ հետ են (ՊՊ)։ Պարզ երևում է, որ ասողը մի մարդ է և խոսողն ինքն է, բայց բայ-ստորոգյալը հոգնակի թվով, երրորդ դեմքով է, այդ անհամապատասխանության հետևանքով էլ բայի դեմքն ու թիվը դարձել են ձևական, իսկ նախադասությունը՝ անենթակա։ Այլ օրինակներ՝ Ջա՛նմ, քանի՞ անգամ ասեն, երեկ էլ ասացին, որ ձեր պատասխանը կստանաք ա՛յ էն սենյակում (ԴԴ)։ Իսկ ի՞նչ է, կարծում ես կատակո՞ւմ են քեզ հետ (փոխանակ՝ կատակո՞ւմ եմ) (ԲՀ)։— Ցուրտը տարա՛վ... վա՛հ տնա՛շեն, Ձես թող անում մի շունչ քաշեն (փոխանակ՝ քաշեմ) (ՀԹ) և այլն։

3. Ընդհանրական միակազմ նախադասություններ։ Այս նախադասություններով արտահայտված միտքը վերաբերում է մարդուն առհասարակ, նկատի չի ունեցվում առանձին մի մարդ կամ առանձին մարդիկ։ Օրինակ՝ Նվեր ձիու ատամները չեն հաշվում։ Մի՛ լինի ուրագի պես՝ միշտ դեպի քեզ, միշտ դեպի քեզ, այլ եղի՛ր սղոցի պես՝ մեկ դեպի քեզ, մեկ դեպի մեզ (առած)։ Այս առածների խրատական միտքը վերաբերում է մարդուն առհասարակ, նկատի չի ունեցվում ո՛չ

մարդկանց ինչ-որ խումբ և ո՞չ էլ ինչ-որ մարդու։ Բայի երկրորդ դեմքի և եղակի թվի առկայությունը վերոնում բերված նախադասությունում ձևական է, ուստի ստորոգյալը դառնում է ենթակայազուրկ։

Ընդհանրական միանգամ (անենթակա) նախադասությունները մեծ մասամբ խրատական բնույթի առածներ են, աֆորիզմներ, ընդհանրացված մտքեր։ Ինչպես՝ Ճիպոտդ քոլիցդ կորիր։ Սրբի դուռն էլ առանց խաչհամբույրի չեն գնում։ Վարը նստիր, որ վերը քեզ տեղ տան։ Շատ գիտես, քիչ խոսիր։ Մեկ խոսիր, մեկ էլ լսիր և այլն։

Ընդհանրական-անենթակա նախադասության գերադաս անդամն արտահայտվում է.

ա) Բայի հոգնակի երրորդ դեմքով։ Օրինակ՝ Հրեղեն ձի սրան կասեն (ԱԲ)։ Միշտ էլ երբ համն են հանում, ուղիղ հակառակ բան են ստանում (ՊՍ)։ Մարդկանց մասին հիշողություններ գրում են նրանց մահից հետո (մամուլ)։ Այսպիսի նախադասություններ են շատ առածները, օրինակ՝ Մի ձեռով երկու ձմերուկ չեն բռնի, Մեխի գլխին բռունցքով չեն խփի, Ճտերն աշնանն են հաշվում, Ջուկը ջրում բազար չեն անի, Ամեն բարև տվողին բարեկամ չեն ասի և այլն։ Սրանք, ինչպես ասվեց, արտահայտում են կյանքի փորձից հանված եզրակացություններ, ընդհանրացնող մտքեր, որոնք վերաբերում են ոչ թե մեկ մարդու, ոչ էլ մի քանի, այլ՝ մարդուն ընդհանրապես։

բ) Բայի եղակի երկրորդ դեմքով։ Օրինակ՝ Ամեն անգամ խնձոր պոկելիս ծառ տնկողին միտդ բեր (առած)։ Մեկը մեր գյուղում մի թիզ հող ունի, թիեռ մի ձեռից՝ մյուս ծերը կընկնի (ՀԹ)։ Մի տեսակ ամեն ինչ հիշում ես, ամեն ինչի մասին մտածում, այդ պատճառով էլ ամեն ինչ շփոթվում է գլխումդ (Լեո)։ Որտե՞ղ ես տեսել երկինք հասցնող փրկարար սանդուղք (ՊՍ)։ Շտապում ես մի բոպե առաջ իմանալ ամեն ինչ, մտքիդ առաջ ես քաշում կարդացած նկարագրություններդ, տեսած պատկերներդ, ուզում ես ամփոփել իրականության մեջ այն, ինչ երևակայություն է եղել մինչ այդ բոպեն, ուզում ես մի ժամ առաջ ամբողջացնել երևկոյան մռայլի մեջ կցկտուր, ցիրուցան, անլույս ու անորոշ երևացող կտորները և իմանալ, թե ինչ է նշանակում Անին (Լեո)։ Այս նախադասություններում դիմավոր բայերի արտահայտած հատկանիշը երկրորդ դեմքին չի վերաբերում, այլ՝ մարդուն ընդհանրապես, ուստի նրանց երկրորդ դեմքը և եղակի թիվը բուն ենթակայի թիվն ու դեմքը չեն, ձևական են, այդ պատճառով էլ նախադասությունները անենթակա են։ Հիշյալ երկրորդ դեմքով արտահայտված նախադասությունների միտքը կարելի է արտահայտել նաև ենթակայով նախադասությամբ։ Օրինակ՝ Ամեն անգամ խնձոր պոկելիս մարդ ծառ տնկողին պետք է միտը բերի (առ)։ Մարդ մի տեսակ ամեն ինչ հիշում է, ամեն ինչի մասին մտածում (Լեո)։ Մարդ որտե՞ղ է տեսել երկինք հասցնող փրկարար սանդուղք (ՊՍ)։ Այս օրինակներում մարդը ենթակա է, թեև ձևական։

գ) Բայի հոգնակի երկրորդ դեմքով։ Օրինակ՝ Եվ այդ շինարար, գեղեցկացնող ուժը ավելի սիրելի ու պաշտելի է դառնում ձեզ համար այն պատճառով, որ տեսնում եք նրան հաղթանարված, տապալված դժոխային հանճարի ուժից։ Ամեն քայլափոխում եք տեսնում, ամեն մի քարի կտորի վրա եք կարդում բշվառացնող, ավերող վայրենի ուժը (Լեո)։ Եվ երբ մտածում եք, թե ինչ ու ինչ տեղերից ենք եկել ու հավաքվել այս բոլոր կենդանի մարդիկս... (Լեո)։ Նայելով դեպի ցած՝ դողում եք այն վայրկենական մոքից, թե ինչ կլինի, եթե հանկարծ գնացքը դուրս գա գծից (Լեո)։ Այնքան ընդարձակ են խոպանի հողերը, որ վառում եք, վառում, չեք հասնում ծայրին (մամուլ)։ Ինչքան կարդում եք, այնքան խճճվում եք, մտածում ու զայրանում եք, թե որքա՞ն կարելի է բարդ գրել (մամուլ)։

դ) Անենթակա նախադասություններ են նաև երկրորդ դեմքի բայով արտահայտված հետևյալ պայմանի և զիջական երկրորդական նախադասությունները. թեկուզ սպանիր, սպանես էլ, թեկուզ լաց եղիր, թեկուզ կատաղիր, թուր քաշիր վրեն, ուր էլ գնաս, ուր էլ մտնես, ինչ էլ ասես, ինչպես էլ պատվես, ինչքան էլ խնդրես, ինչքան էլ խելոք լինես և այլն։

Մանրագր. 1. Երբեմն անենթակա նախադասությունն արտահայտված է լինում նաև բայի առաջին դեմքով։ Օրինակ՝ Մնվում ենք սկամա, ապրում ենք դարմացած, մեռնում կարոտով (ԱԻ)։ Այստեղ թեև գործողություն կատարողների մեջ խոսողն ինքն էլ կա, բայց ստորոգյալների հատկանիշները վերաբերում են մարդուն ընդհանրապես։

2. Որոշ աշխատություններում[44] անենթակայի իմաստ է վերագրվում նաև այն նախադասություններին, որոնց ենթակայի դերում հանդես է գալիս մարդ բառը առանց հոդի։ Մարդ-ն այս դեպքում ձևական ենթակայի գործառույթ ունի։ Օրինակ՝ Մարդ ինչ անի իր գլխին կանի (ՊՊ)։ Դժվար է, ասավ, երբ անգործ է մարդ (ՀԹ)։

Երբեմն մարդ անորոշ ձևին առընթեր գործածվում է ինքը դերանունը, որը դարձյալ համարում են ձևական ենթակա։ Օրինակ՝ Մարդ ինքը պետք է լավություն անի, որ ասված էլ նրա բանը հաջողի (Խ. Աբովյան)։

ե) Ընդհանրական անենթակա նախադասություններ են կազմվում նաև կրավորական չեզոք սեռի բայերով։ Օրինակ՝ Այստեղ չի նստվում։ Մթնում չի խոսվում։ Այսքան ջրով կլողացվի՞։ Վհատելու չէ, վերջ կունենա... (Ջիվանի)։ Այդ ոտի ամաններով վեր կելնվի՞ (ՀՊ)։ Ա՜խ, սիրտ չկա, չի գրվում։ Ասելիք, թվում է, թե շատ կա, բայց չի գրվում

[44] Գ. Սևակ, Հայոց լեզվի շարահյուսություն, «Լույս», 1975, էջ 31։

(ՎՏ)։ Բնորոշ է, որ Տերյանը երբեմն չակերտների մեջ է առնում գրվում բայը։ Ինչպես՝ Վերջապես գրել այն ժամանակ, երբ «գրվում» է։ Վերջին օրերս ինձ այնքան լավ չէի զգում և չէր «գրվում»։

Հաճախ կրավորական սեռի բայը հանդես է գալիս վերաբերության անուղղակի խնդրի հետ, առանց ենթակայի, և կազմում է անենթակա նախադասություն։ Ինչպես՝ Այդ մասին շատ է գրվել։ Դրա վերաբերյալ վաղուց է կարգադրվել։ Այդ առթիվ ասված է փակ նամակում։ Այս մասին առաջարկված (կարգադրված, զեկուցված, որոշված, հրամայված) է և այլն։

Անենթակա են հետևյալ ընդգծված նախադասությունները բարդության համակարգում։ Էնպես պատահեց, որ մեր գյուղում ուսումնարան բաց արին (ՀԹ)։ Ոնց է եղել՝ ընկել է ծանծաղուտը։ Այնպես թրվաց, թե մի մարդ մտավ տուն։ Այդպես է լինում միշտ, սիրույդ առարկան կրկնակի սիրելի է թվում նրան կորցնելուց հետո (ՆԴ)։ Իսկ թե լիներ, այնպես լիներ, որ ընջավոր ու փնջավոր ծամով մեկին, որ կարճլիկ ու խուրճլիկ համով մեկին օր ծերության դարձներ իր կին մի անատամ Բիբար խոջա (ՊՍ)։ Անառակի երեսին թքես, կասի՝ անձրև է գալիս (առած)։ Քո ապրանքին տիրություն արա, որ հարևանդ գող չհռչակվի (առած)։

Անենթակա են նաև՝ ուտող-ուտողի է, խաբող-խաբողի է, փախչող-փախչողի է, տանող-տանողի է, գլուխն ուտի և այլ դարձվածքները։

Ընդհանրական անենթակա նախադասությունների գերադաս անդամը (ստորոգյալը) արտահայտվում է բայի սահմանական եղանակով. Ճտերն աշնանն են հաշվում (առած)։ Վնասելու չէ, վերջ կունենա... (Ջիվանի)։ Կամ գժի հետ խոսել ես, կամ գարի հաց կերել ես (առած)։ Այս տիպի նախադասություններում հարակատար դերբայով և անցյալ ապառնի, անցյալի վաղակատար ժամանակներով բայ-ստորոգյալները հազվադեպ են պատահում։

Հրամայական եղանակով. Սև աչերեն շատ վախեցիր։ Սև աչերը մի՛ սիրե (ԱԻ)։ Գիտունի հետ քար քաշի, անգետի հետ փալավ մի՛ ուտի (առած)։ Խարխուլ մակույկով հանձնվիր ծովին, քան թե հավատա կնոջ երդումին (ԱԻ)։

Ըղձական եղանակով. Բանը որ չվերցնես տասը մատով, կմնա տասը տարով (առած)։ Մին տաս, երկու կուզի (առած)։ Թե զարնեին սրտիս դանակ, մի պուտ արյուն դուրս չէր հոսի (ՊՍ)։

Պայմանական եղանակով. Բա դեղին լալի (սաթի) պես հավին երկաթ կդիպցնե՞ն։ Մարդ իր աչքը քոռ կուզի՞ (Մ)։ Մեկ կխոսեն, մեկ էլ կլսեն (առած)։

Հարկադրական եղանակով. Պիտի վարը նստես, որ վերևը քեզ տեղ տան։ Պիտի մեկ տաս, որ տասը առնես։ Պիտի ցանես, որ քաղես (առած)։

Այս նախադասությունների ստորոգյալը կարող է նաև բաղադրյալ լինել։ Օրինակ՝ Ինչքան որ գիտուն ես, չիմացածդ մի անգետի հարցրու։ Շուն ես, քո դռանը հաչի (առած)։

Ընդհանրական անենթակա նախադասությունները կազմությամբ լինում են պարզ (Ճտերն աշնանն են հաշվում, Երկաթը տաք-տաք են ծեծում) և բարդ (Ի՞նչ անես, ախպեր, ո՞ւմից խռովես (ՀԹ)։ Երկու լսե, մեկ խոսե։ Մարդ ո՞ր աղբրից ջուր խմե, էն աղբրին քար չի գցի (առած)։ Էլ ո՞ւմ դուռը գնաս, ձեռդ ո՞ւմ մեկնես (Աբովյան)։

Այս կառույցում բարդ նախադասությունները կապակցվում են թե՛ առանց շաղկապի, շարահարությամբ, ինչպես՝ Աչքդ թեքեցիր, բանիդ տերը չես։ Կեր փորձված թանը, մի ուտի անփորձ մածունը (առած), և թե՛ շաղկապով, օրինակ՝ Թե ունիս փող, ունիս ամեն ինչ, կարող ես գոռալ, կանչել, հայհոյել, ծեծել, քանի ամուր զարնես, այնքան ավելի կբծնեն, քանի պինդ գոռաս, այնքան ավելի լեզուները դուրս կհանեն, փող ունիս, հանաք բան չէ (ՎՓ)։

Անենթակա նախադասություններն ըստ հնչերանգային բնույթի կարող են լինել՝ պատմողական. օրինակ՝ Ամեն մարդու մեղք իրանից կուզեն (առած)։

Հարցական. Մեխի գլխին բռունցքով կխփե՞ն։ Ջուկը ջրում բաղար են անո՞ւմ (առած)։

Ընդհանրական անենթակա հարցական նախադասություններն արտահայտում են մերժում, հանդիմանություն։ Օրինակ՝ Այս ցրտին այդքան բարակ կհագնվե՞ն։ Բա դանակ պատառաքաղն այդպես կբռնե՞ն։ Բա այդքան անխիղճ կլինե՞ն։ Բա այդքան անպատրաստ ներկայանո՞ւմ են քննության և այլն։

Հրամայական. Շան հետ ընկերացի՛ր, փայտը ձեռքիցդ մի՛ դցիր։ Բերանդ բանալուն, ա՛չքդ բաց (առած)։

Բացականչական. Ջա՜ն, լուսանում է։ — Է՜յ, ընկերնե՛ր, մթնում է։ Ջա՜ն, գարուն է արդեն։

Ստանդարտ.—Նախադասության մեջ առանց ենթակայի հանդիպող մի շարք կապակցություններ տվյալ կառույցում, եղանակավորող բառերի, շաղկապների գործառություն ունեն և չպետք է շփոթել անենթակա նախադասության հետ։ Օրինակ՝ Ով գիտե, կարելի է նա նեղացած է ինձանից (ԱՇ)։ Ո՞ւր է թե գար այն մարդը։ Վնաս չունի, տուն գնա։ Ինչպե՛ս չէ, կգնամ։ Ինչ հալածանքի ուզում են ենթարկեն իրեն (ՆԴ)։ Չլինի՞ թե մեր միջև սև կատուն անց կենա (ԱՇ)։ Այս օրինակներում ընդգծված կապակցությունները գուցե, երանի, ոչինչ, անպայման, հանկարծ եղանակավորող բառերի դեր են կատարում, այդ իմաստն ունեն։

Այսպես էլ երբեմն եղանակավորող բառերի դեր են կատարում արի, եկ բայերը։ Օրինակ՝ Դե եկ, վարդապետ, ու մի խենթանա։ Դե եթե

մայր ես, եկ մի՛ ցնորվի (ՊՍ)։ Արի այդ մասին այլևս չխոսենք։ Ե՛կ այսօր կինո չգնանք (մամուլ)։

Հետևյալ ընդգծված բայերն էլ շաղկապի դեր են կատարում։ Նշանակում է ես չեմ կարող մոտենալ։ Նշանակում է այդ բոլորը կեղծ են։ Մացակ Ավագյանը պնդում է, նշանակում է հիմք ունի (ՆՋ)։ Այն ազգը, որ չունի մատենագրություն, ասել է թե չունի և բանականություն (ՄՆ)։ Ասել է թե գյուղ ես գնում։ Այս նախադասություններում ընդգծվածները ուրեմն շաղկապի դեր են կատարում, ուստի նախադասություն չեն և չեն տրոհվում բուն նախադասությունից։ Այդպես էլ շաղկապի դեր են կատարում՝ ինչ է թե, թե ինչ է, չէ՞ որ, ասենք թե, կարծես թե, ասես, ասենք և այլ կապակցությունները և բայերը։

Անդեմ նախադասություններ*: Անդեմ են այն միակազմ նախադասությունները, որոնց կազմում չկա դիմավոր բայ, ուստի և չունեն քերականորեն արտահայտված սուբյեկտ։ Այդ նախադասության ձևավորման միջոցը հնչերանգն է, հնչերանգային ավարտվածությունը, որով արտահայտվում է խոսողի վերաբերմունքը և ասվածի հարաբերությունը իրականության նկատմամբ։ Օրինակ՝ Այժմ, որդի, ահա դու, ահա հորդ կտակը (ԱՇ)։ Եվ ոչինչ նմանություն գոյության այդ երկու շրջանների մեջ, ոչ մի աննշան կապ (ԱՇ)։ Դնել քսանեութ տարեկան տղամարդին ուրիշի հրամանատարության տակ—Միթե՞ մի հայր կարող էր ավելի դաժանորեն պատժել իր հարազատ որդուն։ Օ՜հ, անողոք ծերուկ (ԱՇ)։

Անդեմ նախադասությունների ձևավորման միջոց է նաև խոսքային միջավայրը, հաճախ հնչերանգի հետ հանդես է գալիս նաև խոսքային միջավայրը։ Այսպես՝ «Անծանոթը, տեսնելով տրամվային մոտեցող երևիթային, բացականչեց՝ Երեխա՜ն, երեխա՜ն» (Սդր)։ Այս ընդգծված կապակցությունը թեև ունի բացականչական հնչերանգ, հաղորդակցական դեր չէր կատարի, ուստի և նախադասություն չէր լինի, եթե չիներ նրան նախորդող նախադասությունը։ Ուրեմն երկկազմ նախադասությունը մի տեսակ խոսքային միջավայր է դառնում անդեմ նախադասության համար։ Այլ օրինակներ Մյուսը դիմեց դրամի օգնության՝ ազատելու համար այն մարդուն, որն ազատել էր իր զավակներին։ Դառը ինքնանի՝ շրջված չքավորության երեսին որպես թունավոր բուք (ԱՇ)։ Շուշանիկը գաղտուկ նայեց Սմբատին։ Ե՞վ ի՞նչ փոփոխություն (ԱՇ)։ — «Սերեք հազար, չորս հազար, հինգ հազար՝ ազատողին»։ Մարդկային կյանքի ամոթալի անուրդ (ԱՇ)։

---

* ՀԱԱՀ ակադեմիկոս է. Բ. Ադայանն այս նախադասությունները հանում է նախադասության համակարգից և անվանում է ասություն (высказ)։ (Բանբեր Եր. համալս-ի. 1987 թ., № 1)։

Այստեղ ընդգծված նախադասությունների միտքը պարզ է դառնում նրանց նախորդող երկկազմ նախադասությունների միջոցով, նրանցով է ստեղծվում խոսքային միջավայր։

Սակայն անդեմ նախադասություններն առհասարակ հանդես են գալիս նաև միայնակ, ունեն ինքնուրույն, անկախ կիրառություն։ Դրանք հույզեր, կոչեր, առաջարկություններ, կարգադրություն ու հրամաններ, երազանքներ արտահայտող նախադասություններ են, գործածվում են իբրև ամփոփ ու ամբողջական միտք արտահայտող շարահյուսական միավորներ։

Անդեմ նախադասությունները կազմությամբ լինում են՝ պարզ համառոտ, ինչպես՝ Լռությո՛ւն։ Կրա՛կ։ — Սրաֆիոն Գասպարի՛չը,— ասացին այս ու այն կողմից (ԱՇ)։ Պարզ ընդարձակ, ինչպես՝ պանդանել մաՀուրություն և կարգ ու կանոն։ Ջո՛կ, իմ եռեկից, առա՞ջ։ Օ՜հ, մանկական խարեություն, չՀացած երազ ընտիր զՀեՀուլ սնված ուղեղի (ԱՇ)։

Անդեմ նախադասությունները կարող են ունենալ բաղմակի (համադաս) դերադաս անդամներ։ Ինչպես՝ Միայն համաձայնե՞լ արդյոք նրա ասածներին, թույլ տա՞լ նրան տնից դուրս ես գործերով զբաղվելու (ԱՇ)։ Այնտեղ թանձր ծխերի մեջ անօգնական մերձավորներ, այստեղ մոր ու հորաքրոջ հուսահատ պատկերներ (ԱՇ)։

Անդեմ նախադասությունները ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելիության լինում են բայական և անվանական։

Բայական անդեմ նախադասություններ։ Բայական անդեմ են կոչվում այն միակազմ նախադասությունները, որոնց գլխավոր անդամն արտահայտված է անդեմ բայով, գերազանցապես անորոշ դերբայով և մեկ-երկու դեպքում էլ հարակատար դերբայով։ Օրինակ՝ Հատակին չմքել։ Նաղիկները չտրորել։ Պահպանել մաքրություն։ Թքած։ Հերն անիծած և այլն։ Այս նախադասությունների ձևավորման միջոցը հնչերանգն է։

Այս նախադասություններում դերբայներն անկախ գերադաս անդամ են, նրանցով կազմված կապակցություններն արտահայտում են ամբողջական, ավարտուն միտք։ Այսպես՝ Դասարանում չաղմկել։ Այստեղ չծխել։ Թշնամուն նկատելիս անցնել հարձակման։ Արտադրել բայերը, որոշել նրանց սեռը և այլն։

Նախադասության որևէ անդամի լրացնող դերբայական կապակցությունը նախադասություն չէ, որովհետև չունի անկախություն, ինքնուրույնություն, հնչերանգային ավարտվածություն։ Օրինակ՝ Օ՜, ինչ բաղդ է երկինք վերանալ, վիշտ, հոգս մոռանալ (Հակ) նախադասության ընդգծված կապակցությունները բաղդ է ստորոգյալի ենթականերն են, չունեն անկախություն, հնչերանգային ավարտվածություն։

Բայական անդեմ[45] նախադասությունների գերադաս անդամը՝ անորոշ դերբայը միշտ դրվում է ուղիղ ձևով՝ պահպանել մաքրություն, ծաղիկները չտրորել, բարձր չխոսել։ Սրանք էլ դիմավոր երկկազմ նախադասությունների նման ունեն եղանակավորում, երանգավորում, որ արտահայտվում է հնչերանգի միջոցով։ Ըստ այդմ էլ բայական անդեմ նախադասությունները լինում են.

ա) Պատմողական. օրինակ՝ Իսկ լոկ երեակայությամբ ստեղծել այսպիսի բոլոր անարդարությունների մի սկզբնապատճառ,— այդ թե շատ քիչ է և թե դրա վրա չես կարող զայրույթդ թափել (ՆԴ)։ Եվ սիրել բախտը՝ պարզ ու երկրային, Ցանկություններդ մեղմ ու կամակոր, Եվ սիրել քո տան փոշեպատ ուղին, Եվ սենյակներիդ տխրությունը գոլ (ԵՉ)։

բ) Հրամայական. օրինակ՝ Ջոկի հրամանատար Սասունյանին՝ ճաշից հետո կալանավորել Կոնկինին (ԲՀ)։ Ձխոսե՛լ, լուռ սպասել (մամուլ)։ Դուրս գրել բայերը, ցույց տալ նրանց սերը (դասագիրք)։

Հարցական. օրինակ՝ Թե՞ հանդուգն մի փորձ անել, համր խաղերը վերծանել։ Ա՜խ, ինչպե՞ս, ո՞նց մոռանալ արհավիրքն այն օրերի (ՊՍ)։ Ի՞նչ հերքել, Տերյանին ո՞նց կհերքես (ԵՉ)։ Դեպի ո՞ր կողմը գընալ,— ա՞չ, թե՞ ձախ, առա՞չ, թե՞ ետ (ԱՇ)։

Բացականչական. օրինակ՝ Բարձրանա՜լ, միշտ բարձրանալ, անդադար բարձրանա՜լ (ՆԴ)։ Քո՜ւյր, ղողանջի պես ճախրե՜լ ու գնա՜լ,— Հմայված ու հեզ—ճախրե՜լ ու գնա՜լ (ԵՉ)։ — Անա թե ի՜նչ,— գոչեց Սմբատը դարմացած,— շա՜տ առատաձեռն ես (ԱՇ)։ Փայփայել քընքո՜ւշ, լինել հարազա՜տ, Հեռանա՜լ, դառնա՜լ կրկին ու կրկին (ՎՏ)։

Այս անդեմ նախադասությունները կարող են արտահայտել.

ա) Մի բան անելու, դառնալու իղձ, ցանկություն, փափագ. օրինակ՝ Մոռանա՜լ, մոռանա՜լ, ամեն ինչ, Ամենին մոռանալ, չսիրե՜լ, չխորհե՜լ-չափսոսա՜լ, Հեռանալ... Մի վայրկյան ամենից հեռանալ, Ամենին մոռանալ. —խավարում, ցավերում քարանալ Մեն-միայն (ՎՏ),

բ) խոսողի զարմանք ու զայրույթ. օրինակ՝ Ի՞նչ, Արշակին փող չտա՞լ (ԱՇ)։ Ի՞նչ, տուն չգնա՞լ, գժվե՞լ ես։ Մեծել, ծեծել, այդքա՞ն ծեծե՞լ (մամուլ)։

գ) պահանջ, առաջադրանք, հրաման. օրինակ՝ Օդանցքը բաց անել, օդափոխել սենյակը (ԱՇ)։ Թշնամու հետախույզին կենդանի բռնել, չկրակել (ԲՀ)։ Արտագրել գոյականները, որոշել հոլովը։ Ծաղիկները չտրորել։ Հատակին չթքել և այլն,

դ) երկընտրանք, երկմտություն. օրինակ՝ Որի՞ն մոտենալ, որի՞ հետ ձուլվել առմիշտ, ո՞րն է բարվոքը—զրկվել հարստությունից, մընալ հավատարիմ տեսականին և անզե՞ն, թե՞ լինել հարուստ, գորա-

[45] Կարելի է անվանել նաև դերբայական անդեմ նախադասություն։

վոր, ինքնիշխան (ԱՇ)։ Սրա՞նց, այս խեղճերի՞ն մեղադրել (Լեո)։ Լինե՞լ, թե՞ չլինել (Թարգ),

ե) կարող է լինել հարցադրում, որին հաջորդում է բացատրությունը. օրինակ՝ Կռվե՞լ... կռվել միայն կարմիր գարնան (Հակ)։ Խեղդվե՞լ ջրի մեջ,— դա ողորմելի միջոց է։ Կուսանո՞ց գնալ,— այդ էլ հիմարություն է (Մ),

զ) կարող է ժխտել որևէ միտք. օրինակ՝ Ինչպե՞ս զրկել այս անմեղներին իրենց մորից և թողնել նրանց, որ տառապեն կարոտից։ Ինչո՞ւ ոտնահարել մի նահապետական կնոջ նույնիսկ անմիտ ավանդությունները (ԱՇ)։ Այս դեպքում, ինչպես երևում է օրինակներից, նախադասությունը ձևով ճարտասանական հարցական է լինում, իսկ բընույթով ժխտական։ Այդպիսին է նաև հետևյալ նախադասությունը. Ինչպե՞ս չսիրել հարազատ մորը, հարազատ հորը և թողնել նրանց մենակ ու անօգնական (Սգր)։

Բայական անդեմ նախադասությունները կազմությամբ սովորաբար պարզ են լինում, ինչպես՝ Կանաչները չտրորել։ Քայլել միայն մայթերով։ Փողոցն անցնել անցումներով և այլն։

Անդեմ նախադասությունը կարող է ունենալ մեկից ավելի համադաս (բաղմակի) գլխավոր անդամներ։ Օրինակ՝ Աստվածային հոգոր ձեռքով Այս ցած կյանքից հեշտ ու անթեթ թռչել երկինք, վերև՜, վերև՜, Ցավեր, հոգսեր ողջ մոռանալ, Դժոխք իջնել, դրախտ գնալ, Անհուն զգալ, թովիչ երգել... Ո՞ր բախտից եմ ես քեզ զրկել (ՀԹ)։ Բայական անդեմ նախադասությունը լինում է նաև բարդ նախադասության բաղադրիչ, ինչպես՝ Հողին հանձնել միակ որդուն, որ պահպանում է քեզ իր մաքուր ու քնքուշ սիրով..., հողին հանձնել անմխիթար տանջանքների միակ ապոստոլին—մի սրտաճմլիկ պատմություն է սա (ՎՏ)։ Սարսափել մահից այն ժամանակ, երբ ուրիշները չէին սարսափել՝ նետվելով կրակի մեջ (ԱՇ)։

Անվանական անդեմ նախադասություններ։ Միակազմ նախադասությունների այս տեսակն անվանում է որոշակի առարկաներ և հաստատում խոսելու պահին նրանց առկայությունը, միաժամանակ արտահայտելով խոսողի վերաբերմունքը նրանց նկատմամբ։

Անվանական են կոչվում այն միակազմ նախադասությունները, որոնց գերադաս անդամը արտահայտված է որևէ անունով։ Այս նախադասությունները նույնպես ենթակա ու ստորոգյալ չունեն, ունեն գերադաս անդամ, որը կառույցի քերականական կենտրոնն է։ Նրանց ձևավորման միակ միջոցը հնչերանգն է՝ հարցական, պատմողական, հրամայական, բացականչական։ Բայական անդեմ նախադասությունների պես սրանք էլ հուզական բնույթ ունեն, արտահայտում են հուզականություն։ Օրինակ՝ Սև գիշեր, և՜ հուշեր և՜ խոհեր անհամար, Մո-

ռացված երազներ՝ շուշաններ թառամած, խնդություն հեռացած և անցած և անդարձ,— Տրտմություն մենավոր, միաձայն, միալար... (ՎՏ)։

Անվանական անդեմ նախադասության գերադաս անդամը, բնականաբար, անվանական լրացումներ է ունենում, ինչպես որ բայական անդեմ նախադասության գերադաս անդամը՝ բայական։ Օրինակ՝ Սբ-խոտ-մրոտ, պատ-առիք, Բոբիկ ոտներ, հին քաթան եվ հազար ու մի կարիք, Հազար ու մի ծակ ու ծուկ (ՊՍ)։ Ա՜խ, անհոգություն ջահել աղջկա (ՀԹ)։ Կապույտ աղջիկ, ագատի ու կաթի պես հոգեթով, լուսամփոփի պես՝ աղջիկ (ԵՉ)։ Սրամիտ բախտի ինչպիսի՜ հանաք ու ծաղրուծանակ (ՊՍ)։

Անվանական անդեմ նախադասության գերադաս անդամի հետ բայական լրացման առկայությունը դեռ չի ենթադրում ստորոգյալի զեղչում և չի դիտվում որպես երկկազմ նախադասություն։ Օրինակ՝ Շուրջը մարդիկ, կանայք հագած-կապած (ԵՉ)։ Այնուհետև ուրիշ պատկերներ, ուրիշ դույներ, ուրիշ տրամադրություն (Լեո)։ Ջերմագին բարևներ Վարդային և համբույր քո սիրուն բալիկին (ՎՏ)։ Այնտեղ բոսորագույն կրակն իր բյուրավոր ճյուղերով ու ահարկու լեզուներով, այստեղ սև ուրվականներ, ինչ-որ վայրենի ճիչեր, ինչ-որ գոռում-գոչյուններ, հինգ կիսով չափ այրված դիակներ, մութ, ցեխ, նավթ, կեղտի ու խավարի, կյանքի ու մահվան մի զանգված։ Եվ այդ քաոսի մեջ երկու տարբեր պատկերներ—մեկը բարձրահասակ, առնական կերպարանքով, քաղաքային մաքուր հագուստով, մյուսը՝ մի միջահասակ, ոտից մինչև գլուխ նավթի, մրի, տիղմի մեջ։ Մեկը... մաքուր, մյուսի անցյալը կեղտոտ, ներկան անորոշ (ԱՇ)։ Թեև այս օրինակներում կարող են զեղչված համարվել էին, ճաղոդիր և մյուս բայերը, որոնք ենթադրվում են և կարող են վերականգնվել, բայց դրանք կլինեն միաձայնի հոմանիշներ։

Անվանական անդեմ նախադասությունների երկրորդական անդամները, այսպիսով, նույնպես կարող են բայական լրացում ունենալ։ Օրինակ՝ Գողություն, որպիսի՜ վիրավորանք Ալիմյանի գերդաստանի պատվին և ինքնասիրությանը (ԱՇ)։ Այստեղ պատվին և ինքնասիրությանը խնդիրները վերաբերում են վիրավորանք բառին, քանի որ վիրավորանքը իրոք բայանուն կարող է խնդիր լրացում առնել, ինչպես՝ Հաղթական վերադարձ յուրայինների մոտ, իրենց տուն (մամուլ), հանդիպում լուսաբացին, զեկուցում ատոմի մասին և այլն։

Անվանական նախադասությունների հաղորդումը սովորաբար առընչվում է ներկա ժամանակի հետ, քանի որ արտահայտում է առարկայի առկայությունը խոսքի պահին։ Օրինակ՝ Ահա գործարանը... նայում եմ նրան։ Ահա քաղաքը... հսկա բուրգերի մի զանգված է այն (Հակ)։ Երևան, Աստաֆյան փողոց։ Դիշեր (ԵՉ)։ Կայարան։ Ջորքե՞ր, ջորքե՞ր, ջորքե՞ր (ԳՄ)։ Մանկություն... ոսկեթև թռչուն... դեղնավուն

ոսկի հինայի։ Օ՜, երգեր իմ առաջին, առաջին..., «Ծրեք երգս», Աստղիկ Ղոնդաղչյան (ԵՉ)։ Ա՜խ, այն գիշերը անսահման երկար, Այն լռությունը՝ մահու պես տխուր (ՎՏ)։

Անվանական նախադասությունների գերադաս անդամը արտահայտվում է՝

ա) Գոյականի ուղղական հոլովով. օրինակ՝ Օ՜հ, մանկական խաբեությո՜ւն, լքացած Երազ ընտիր գրքերով սնված ուղեղի (ԱՇ)։

Գոյական գերադաս անդամի հետ կարող են լինել ահա՛, ա՜յ ցուցական բառերը և ձայնարկություններ։ Օրինակ՝ Ահա բուն ազգային երգ (ՄՆ)։ Ահա Կապկազ քաղաքը, ահա սպիտակ Զյունակերտը (Ր)։ Ա՜յ, իսկական աշխատանքի մինիստր (ԴԴ)։ Ա՜խ, նրա հեռո՜ւ, հեռո՜ւ հայրենիք։ Ա՜խ, միամիտ իմ պապերի մանկաբարո ուրախություն։ Կռո՜ւնկ, ...Ա՜խ, էլ ի՞նչ սև կռունկ (ՊՍ)։

Գերադաս անդամի կրկնությունն արտահայտում է առկա առարկայի շատությունը, բազմաքանակությունը։ Օրինակ՝ Կայարան։ Ջորքե՞ր։ Ջորքե՞ր (ԳՄ)։ Շիրմաքարե՞ր, շիրմաքարե՞ր, շիրմաքարե՞ր և մամուռի ու փոշու տակ՝ շիրմագրե՞ր և ի՞նչ խոսուն շիրմագրե՞ր (ՊՍ)։

բ) Դերանվան ուղղական հոլովով, որին առընթեր լինում են նաև ահա՛, ա՜յ բառերը։ Օրինակ՝ Ահա նրանք, այն թանկագին էակները (ԱՇ)։ Այժմ, որդի, ահա դու և ահա հորդ կտակը (ԱՇ)։ Բայց ահա և ինքը (Լեո)։

Ահա բառի հետ և շաղկապի կիրառությունը ցույց է տալիս սպասվելիք անձի, առարկայի ներկայությունը, հայտնությունը։

գ) Թվականի և գոյականի կապակցությամբ. օրինակ՝ 1895—1908 թվականներ... լուության և հուսաբեկության տարիներ, տառապանքի շրջան՝ արևմտահայ գրականության մեջ ու կյանքում (Թամ)։ Ահա և 1885 թվականը (Մ)։ Ութը հարյուր ութսուն մեկ թիվ, էջմիածին (ՊՍ)։ Օ՜, հերոսական տասնհինգ տարի (ԵՉ)։

Մանոթագր.—Երբեմն անվանական անդեմ նախադասության գերադաս անդամը կոչական անուն է լինում, որը հատուկ հնչերանգով արտահայտում է խոսողի զարմանքը, դժգոհությունը, հանդիմանանքը տրվյալ անձի նկատմամբ։ Օրինակ՝ — Քո զավակնե՞րն են։ — Այո՜, մայր, իմ հարազատ զավակներն են։ — Ո՜չ, հարազատ չեն, որդի։ — Մա՜յր...,— արտասանեց Սմբատը հանդիմանորեն (ԱՇ)։ — Դու մրտրումդ մեր հորը համարում ես հարստահարիչ և չես խղճահարվո՞ւմ դալ, տիրանալ նրա հարստությանը։ — Միքայե՛լ։ — Զուր ես վիրավորվում (ԱՇ)։ Այս օրինակներում ընդգծված կոչականները հաղորդակցման դեր են կատարում, արտահայտում են Սմբատի դժգոհությունը ու հանդիմանանքը մոր և եղբոր նկատմամբ։

Անվանական անդեմ նախադասությունները կազմությամբ սովորաբար պարզ են լինում։ Օրինակ՝ — Ահա՛ Սևանը։ — Երեխա՜ն,—

ճշաց մեկը (Սգր)։ — Փո՛ւչ աշխարհ, փո՛ւչ աշխարհ (ԱՇ)։ Սրանք կարող են ունենալ համադաս (բազմակի) գլխավոր անդամներ։ Օրինակ՝ Գալուկ դաշտեր, մերկ անտառ... Մահացողի տխուր կյանք. Անձրև, քամի, սև կամար... Սրտակուր հեկեկանք (ՎՏ)։ Որքա՞ն ձյունե թիթեռ, Ջեռնե՞ր, ձեռնե՞ր բարակ, Որքա՞ն գինով ու ջուր, Որքա՞ն պուրպուր շուրթեր... (ՎՏ)։

Անվանական անդեմ նախադասությունները ըստ հնչերանգի լինում են՝

Պատմողական. Ահա մեր գյուղը։ Աքաղաղի արծաթեղեն ձայնը, հրեղեն արշալույսի շուշանները, սրնգի ներդաշնակ նվագը, հոտերն ու մեղուների պարսը (Թամ)։ Պատմողական անդեմ նախադասություններով տրվում են շրջապատի նկարագիրը, դրամատիկական երկերի ծանոթագրությունները (ռեմարկ)։ Օրինակ՝ Արութին, 60 տարեկան, միջին հասակով և կառուցվածքով, երեսը կարմիր, լիքը և ածիլած։ Սև ներկած կարճ մազեր, հատ հոնքեր և խուզած բեղեր։ Եվրոպական հագուստ, սպիտակ շապիկ, գունավոր փողկապ, նույնպիսի ժիլետ և պանտալոն։ Սև սերթուկ և գլխարկ-ցիլինդր։ Ոսկե ժամացույց, ոսկե շղթայով (ԳՍ)։

Բացականչական, *որով արտահայտվում է խոսողի զգացական վերաբերմունքը՝ հիացմունք, զարմանք, դժգոհություն, հեգնանք, ուրախություն։ Օրինակ՝* — Սրաֆիոն Գասպարի՞ շը (ԱՇ)։ *Օ՜, tempora, օ՜, more, օ՜, Զանգեզուր, օ՜, Կյորես (ԱԲ)։ Օ՜, ինչ խորամանկություն (հեգնորեն ծիծաղում է) (ԳՍ)։ Ի՜նչ զարհուրելի բարբարոսություն (Մ)։ Ի՜նչ սքանչելի իրան, ի՜նչ կրակոտ աչքեր և որպիսի՜ ձգտիչ նայվածք (ԱՇ)։ Ո՜վ, բրեաների, կուլրերի երկիր (ՀԲ)։*

Այս անդեմ նախադասություններով երբեմն արտահայտվում է կարոտ, ափսոսանք։ Օրինակ՝ Հա՜յ գիտի մեր 90-ական թվերի գավառական դպրոց (ԴԴ)։ Ինչպիսի՜ առիթ (ՄԱ)։ Ոսկի թիթեռնե՞ր-ոսկեհուր աստղե՞ր, Ով Մարմարայի-լուսեղեն անո՞ւրջ. Գինով գիշերնե՞ր, լուսնի վառ շողեր, Մուգ նոճիների դյութական մթմունջ... Հուշերը նորից սիրտս են տանջում (ԱԻ)։

Հրամայական, *որով արտահայտվում է հրաման, հորդոր, պահանջ, առաջադրանք, նախազգուշացում։ Օրինակ՝ Վերջին նստարան, լռությո՛ւն,— սաստում է ուսուցիչը (ԱԲ)։ — Զգա՛ստ,— հրամայում է Սուրովը (ԲՀ)։ Ո՛չ մի ոտնաձայն, ո՛չ մի շշուկ, զգուշությո՛ւն (մամուլ)։*

Հարցական, *որով արտահայտվում է հետաքրքրություն, զարմանք։ Օրինակ՝ Ջառե՞ր, հեռագի՞ր, սո՞ւգ գուցե (ԵՁ)։ Ի՞նչ, Արշակը անփող մուրացի՞կ (ԱՇ)։ Գուրգենն ու համբերությո՞ւն։ Սաթիկն ու ամոթխածությո՞ւն, Հարդենն ու բարությո՞ւն։*

Անդեմ նախադասությունները (բայական և անվանական) արտահայտում են մարդու հուզական աշխարհը։ Հատուկ են ավելի գեղարվեստական ստեղծագործություններին, բխում են գրողի խառնվածքից, ոճից, թեմայից։ Դրանց մի մասը մաղթանքի խոսքեր են և կարող են առաջանալ նաև զանազան կրճատումների հետևանքով։ Օրինակ՝ Գալուստդ բարի լինի՝ գալուստդ բարի կամ բարի գալուստ, առողջություն եմ ցանկանում՝ առողջություն։ Այսպես են ստացվել կենացդ, բարի երեկո, ցտեսություն, ողջույն, բարև, փառք աստծո, բարի ճանապարհ, բարի քուն, ցնոր գրություն, առայժմ, շնորհավոր նոր տարի, հաջող, մինչև նոր հանդիպում և այլ անվանական նախադասությունները։ Այս անդեմ նախադասությունների համար հնչերանգի հետ շատ կարևոր է, ինչպես տեսանք վերևում, նաև խոսքային միջավայրը, այսինքն նրանց հաջորդող կամ նախորդող նախադասությունների առկայությունը։

Բառ-նախադասություն։ *Սրանք պատասխանական, վերաբերական (եղանակավորող) բառեր են, փոխարինում են նախադասությանը, դրանով կատարում են հաղորդակցական դեր։ Օրինակ՝*

— *Ուրեմն վաղը գնում ենք հարձակմա՞ն։* — Այո՛։

Դուք երբեմցե հարձակման գնացե՞լ եք։ — Ո՛չ։ — *Բան չի լինի։*

— *Իսկապե՞ս (ԲՀ)։ — Հիշո՞ւմ ես հորդ, Լևոն։* — Իհարկե *(ԱՇ)։ — Հիմա նա 103 է ուզո՞ւմ։* — Բա՛ *(Մ)։ — Դու ուզում ես, որ ես նրան խնդրե՞մ։* — Երբե՛ք։ — *Նա կհամաձայնի՞։* — Ո՛չ։

Այս ձևով նախադասություններին կարող են փոխարինել՝ այո՛, ո՛չ, իսկապե՞ս, չէ՛, ինչո՞ւ, կարծեմ, անշուշտ, չէ՛ մի, իսկապե՞ս և այլ վերաբերական բառեր։

Թեև հիշյալ բառերը հանդես են գալիս նախադասության կազմում, փոխարինող չեն, հաղորդակցման դեր չեն կատարում, ուստի նախադասություն չեն։ Օրինակ՝ Մարտին կարող է ձյուն գալ։ — Մի՞թե *(մամուլ)։ Մի՞թե վերջին պոեմն եմ ես (ՎՏ)։ Այս երկու օրինակներից առաջինում Մի՞թե-ն փոխարինում է նախադասությանը, երկրորդում՝ ոչ։*

Այս պատասխան բառ-նախադասությունները միայնակ են հանդես գալիս, բայց երբեմն կարող են պարագա լրացում ունենալ։ Օրինակ՝ Զկարծես, թե հիվանդացել եմ «բանաստեղծական» հիվանդությամբ։ Ո՛չ, դեռ ո՛չ (ՎՏ)։ — Խմբագիրն այստեղ չէ՞։ — Դժբախտաբար *ո՛չ (ՆԴ)։ Այսպես նախադասությանը փոխարինել կարող են՝ ինչո՞ւ չէ, իհարկե չէ՛, անպայման այո՛, գուցե և ո՛չ, բնավ ո՛չ, հիմա ո՛չ, ամենևին էլ չէ՛ և այլ նման կապակցություններ։*

Բառ-նախադասությունները հատուկ են երկխոսությանը, թեև օգտագործվում են նաև մենախոսության մեջ։ Դրանք խոսքը դարձնում են աշխույժ, կենդանի և հակիրճ։ Հաճախ այդ նախադասությունների միջոցով գրողը բնութագրում է գործող անձին։

Օրինակ՝ — Սաքո՞ւլ։ — Էք՞։ — Զարթուն ե՞ս։ — Հա՜։ — Սա-

քուլ չա՞ն։ — Չ՞ը։ — Քնած չե՞ս։ — Չկ՛։ — Ո՞նց ես։ — Է՞ճ, եսի՞մ (ՆԴ)։ Այստեղ ընդգծված նախադասություններն արտահայտում են հիվանդ Սաքուլի խոսել չցանկանալը, ընկած տրամադրությունը։ Ահա բնութագրող մի օրինակ Մարությանի ու Շահյանի («Մահ») խոսակցությունից։ — Յավ չե՞ս զգում։ Ջես հազո՞ւմ։ — Ամենևին։ — Սակայն այդպիսի փորձեր, կարծեմ, եղել են, չէ՞։ — Կարծեմ։ — Դուք անշուշտ Քութախից եք գալիս, այնպես չէ՞։ — Ո՛չ։ — Կամ Աբասթումանից... Կամ Բորժոմից, հա՞։ — Ո՛չ։ — Ուրեմն անշուշտ Բաթումի՞ց։ — Այո՛։ — Եվ Թիֆլի՞ս եք գնում։ — Այո՛։ — Ներեցեք, ես ձեզ, գուցե, ձանձրացնո՞ւմ եմ։ — Ամենևին։ — Շահյա՞ն,— հարցրեց նա։ — Այո՛։ — Դուք Շահյանի որդի՞ն եք։ — Այո՛։ — Կարապե՞տ Շահյանի։ — Այո՛։ Այստեղ էլ երևում է մեկի հարցասիրությունը, կենսասիրությունը, մյուսի ծուլությունը, անտրամադիր վիճակը։

Բառ-նախադասությունների կրկնությունն արտահայտում է խոսողի ծայր աստիճանի հուզված, վրդովված լինելը։ Օրինակ՝ — Չէ՛, չէ՛, չէ՛։ Դու ու քո երեխաները, վերցրու, ես քո կնիկը չեմ (ՆԴ)։ Այո՛, այո՛։ Քեզանից են, բայց քոնը չեն (ԱՇ)։

Բառ-նախադասություններն արտահայտում են.

1. Հաստատում, համաձայնություն՝ հա՛, այո՛, ինչո՞ւ չէ, իհա՛րկե, լա՛վ, անշո՛ւշտ, ինչպե՞ս չէ, հարկա՛վ, այն էլ ինչպե՞ս, հապա ինչպե՞ս, ո՞նց չէ և այլն։ Օրինակ՝ Երևի եթե ինքս եկած լինեի, դու ինձ չէիր կանչի։ — Փաա՛, ո՞նց չէ։ Դու Գայանեի մա՞յրն ես։ — Այո՛։ — Ինչո՞ւ ուրիշների մոտ մնա, այնպես չէ՞։ — Իհարկե։ — Լա՛վ։ Ես նրանից բացատրություն կպահանջեմ։ Նա քեզ սիրում է։ — Այո՛, շա՛տ։ Այժմ դպրոցը դպրոցի նման է։ — Այո՛, իհարկե։ Ուսումն էլ կվերջացնի, չէ՞։ — Իհարկե (ԱՇ)։

2. Ժխտում՝ քավ լիցի, երբեք, հազիվ թե, դժվար թե, ոչ, բնավ, ամենևին, ոչ մի դեպքում։ Օրինակ՝ — Արդյոք ե՞րբ, վերջապես, կշափավորվի իմ զգայնությունը։ «Երբե՛ք, երբե՛ք»։— Պատասխանում էր նրան մի ուրիշ ձայն։ — Դու, երևի, ինձ հետ կատա՞կ ես անում։ — Երբե՛ք։ — Ուրեմն բացատրություն չի՞ եղել։ — Դեռ ո՛չ։ Ո՛չ, ո՛չ, հազար անգամ ո՛չ (ԱՇ)։ — Անդո, կովը քեզ կուտի՞։ — Չէ՛, կսատկի։ — Գոմե՞շը։ — Չէ՛ (ԱԲ)։

3. Արհամարհանք՝ իսկապե՞ս, չէ՛ մի, ո՞նց չէ, մի՞թե և այլն։ Օրինակ՝ Այրին ուզում է Պյոտր Սոլոմոնիչի դեմ դատ բաց անել։ — Մի՞թե,— արտասանեց Բարաթյանն անտարբեր։ — Դու ես պատասխան տալու։ — Մի՞թե,— հարցեց նա արհամարհանքով (ՆԴ)։ — Սաթիկը քեզնից լավ է սովորում։ — Ո՞նց չէ։

զունում ձեր որոշումները։ — Այո՞։ — Այո։ — Չէի՞ք հուսահատվել։ — Ե՞ս, ոչ։ — Ո՞չ։ — Ի՞նչ գործի եք։ — Առայժմ ոչինչ։ — Ոչի՞նչ։ — Այո (ԱՇ)։

Միակազմ նախադասությունների գծապատկերը.



ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԵՐԿԲՈՐԴԱԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

Ինչպես տեսանք, երկկազմ նախադասության գլխավոր անդամներն են ենթական և ստորոգյալը։ Ենթակայից և ստորոգյալից բացի նախադասության կազմում կան և այլ բառեր, որոնք լրացնում են գլխավոր անդամներին։ Դրանք կոչվում են երկրորդական անդամներ կամ լրացումներ։ Լրացումներն էլ կարող են ունենալ իրենց լրացումները, որ կոչվում են լրացման լրացումներ։ Այսպես, օրինակ, Գարնանային անձրևի խոշոր կաթիլները կտկտալով զարկվում էին լուսամուտի ապակիներին (ՆԴ)։ Նախադասության գլխավոր անդամներն են **կաթիլները** *(ենթակա),* **զարկվում էին** *(ստորոգյալ)։ Մյուս բառերը սրանց լրացումներն են.* **անձրևի-ն** *ենթակայի լրացումն է (հատկացուցիչ),* **գարնանային-ը՝ անձրևի** *լրացման լրացումը (որոշիչ),* **խոշոր-ը** *ենթակայի որոշիչն է,* **ապակիներին՝** *ստորոգյալի հանգման խնդիրը,* **լուսամուտի-ն** *լրացման լրացում է՝ հանգման անուղղակի խնդրի հատկացուցիչը, իսկ* **կտկտալով-ը** *ստորոգյալի ձևի պարագան է։*

Շարահյուսական կառույցում լրացյալը լրացում է ընդունում ոչ թե իր ունեցած գործառույթով (պաշտոնով), այլ՝ քերականական իմաստով, խոսքիմասային պատկանելությամբ։ Եթե լրացյալը գոյական է, ընդունում է որոշիչ, հատկացուցիչ, քանի որ գոյականը առարկայի անուն է, իսկ առարկան ունի հատկանիշ՝ համ, հոտ, գույն,

որակ, քանակ և այլն, պատկանում է որևէ այլ առարկայի, իսկ եթե լրացյալը բայ է, ընդունում է խնդիրներ ու պարագաներ, քանի որ բայի արտահայտած գործողությունը, եղելությունը առնչվում են առարկաների, հանգամանքների հետ։ Բայի, գոյականի պաշտոնն այս դեպքում նշանակություն չունի։ Ուրեմն գոյականը որոշիչ, հատկացուցիչ է առնում անկախ նախադասության մեջ իր ունեցած գործառույթից։ Օրինակ՝ Ես իմ անուշ Հայաստանի արևանման բառն եմ սիրում (ԵՉ) նախադասության որոշիչներն ու հատկացուցիչները լրացնում են երկրորդական անդամներին, որոնք գոյականներ են։ Իմ հատկացուցիչը վերաբերում է Հայաստանի լրացյալին, որն իր հերթին բառը ուղիղ խնդրի հատկացուցիչն է, անուշ որոշիչը վերաբերում է Հայաստանի հատկացուցիչին, իսկ արևանման որոշիչը՝ բառն ուղիղ խնդրին։ Մինչդեռ ենթական (ես) չունի որոշիչ ու հատկացուցիչ և չի էլ կարող ունենալ, թեև ենթակա է։ Չի կարող այդ լրացումներն ունենալ, որովհետև արտահայտված է անձնական դերանունով, որը, ինչպես անձնանիշ դերանուններն առհասարակ (ես, դու, նա, ով) որոշիչ ու հատկացուցիչ չեն ընդունում։

Ուրեմն մի կողմից՝ որոշիչն ու հատկացուցիչը լրացնում են գոյականին՝ անկախ նախադասության մեջ նրա ունեցած գործառույթից, մյուս կողմից՝ եթե ենթական անձնանիշ դերանունով է արտահայտված, որոշիչ ու հատկացուցիչ չի կարող ստանալ։ Նշանակում է այս լրացումները գոյական անդամի, այդ թվում և ենթակայի, լրացումներ են, գոյականական լրացումներ։

Այսպես էլ բայը (դիմավոր թե անդեմ) կունենա խնդիր ու պարագա լրացումներ՝ անկախ նախադասության մեջ ունեցած գործառույթից։ Օրինակ՝ «Ծոռոցում մուշ-մուշ քնած երեխան իմ թոռնիկն է» նախադասության տեղի և ձևի պարագաները վերաբերում են ֆնած դերբային, որը, սակայն, երեխա գոյականի որոշիչն է, իսկ՝ «Ձու գողացողը ձի էլ կգողանա» նախադասության ուղիղ խնդիրներից մեկը (ձու) վերաբերում է գողացողը դերբային, որը, սակայն, նախադասության ենթական է։ Ուրեմն որոշիչն ու ենթական ընդունել են պարագա ու խնդիր լրացումներ, որովհետև արտահայտված են բայով (հարակատար ու ենթակայական դերբայներով)։ Ահա թե ինչու խնդիրներն ու պարագաները համարվում են բայական անդամի (կամ բայական) լրացումներ։

Խնդիր ու պարագա լրացումներն առնում են նաև որոշ ածականներ, մակբայներ, բայանուն գոյականներ։ Ինչպես՝ զգացմունքներով հարուստ, պատասխանատվությունից ազատ, ամբողջովին թաց, գընացքից արագ, անասելի դանդաղ, դեռ վաղուց, հանդիպում կամուրջին, հարձակում կեսգիշերին, զեկուցում մեծ դահլիճում և այլն։

Այս բոլորը հաստատում են, որ լրացումը բխում է լրացյալի քերականական իմաստից, խոսքիմասային պատկանելությունից։

Այժմ անցնենք գոյականական անդամի լրացումների բնութագրմանը։

ԳՈՅԱԿԱՆԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Հայտնի է, որ գոյական անունը ցույց է տալիս առարկա, առարկայի անուն է, իսկ առարկան ունի ձև, համ, հոտ, գույն, չափ և այլ հատկանիշներ, այն պատկանում է, վերաբերում է մի որևէ առարկայի։ Ըստ այդմ էլ նախադասության մեջ գոյականով արտահայտված անդամներն ունենում են այնպիսի լրացումներ, որոնք ցույց են տալիս գոյական լրացյալի որպիսությունը, հատկանիշը և կոչվում են որոշիչ, նրա պատկանելությունը, վերաբերությունը և կոչվում են հատկացուցիչ։ Ուրեմն գոյական անդամի լրացումներն են որոշիչն ու հատկացուցիչը։

ՈՐՈՇԻՉ

Որոշիչը ցույց է տալիս գոյականով արտահայտված անդամի հատկանիշը՝ որակը, չափ ու քանակը, ինչից լինելը, ինչին վերաբերելը և այլն։ Օրինակներ՝ Փոքրիկ երեխան խաղում է լուսավոր ու բնդարձակ սենյակում (Սգր)։ Մարդը տեսավ կնոջ սպիտակ ճակատը, սև մազերը և նույնքան սև աչքերը (ԱԲ)։ Բակը փակված է փշալարից ցանկապատով և երկաթե դարպասով։ Երկու չրվոր երեք բրիգադի այգիները չրեցին։ Հիսուն գարուն է տեսել։ Քննարկվեց սոցիալիստական գյուղի մասին վեպը (Սգր)։

Որոշիչն արտահայտվում է.

1. Ածական անունով։ Ձևաբանությունից հայտնի է, որ ածական անունը ցույց է տալիս առարկայի որպիսությունը, չափը։ Այստեղից էլ բխում է նրա գործառությունը նախադասության մեջ։ Ածականը մեծ մասամբ գոյականական անդամի որոշիչ է լինում։ Ահա որում այդ պաշտոնում հանդես են գալիս թե՛ որակական և թե՛ հարաբերական ածականները։ Օրինակներ՝ Ցավը իմ հոգուց հին հառաչանքներ է քամում, որ ողոքեմ՝ մայր, քաղցր մայր, քեզ մեղա (ՌԴ)։ Մանիշակագույն ճանապարհներով սլանում էին նրանք խելագարելի, հիրավի, իմաստը մարդու՝ սլացքը անեղ ու ինքը տկար (ՌԴ)։ Քաղաքական ոստիկանն անգամ ձեռքը թափ էր տալիս ու հեռանում (ՆԴ)։ Մի ընդարձակ բակի եռեի կողմը կանգնած էր դրոգպան Ցաղորի հեծյա տնակը՝ բաղկացած ընդամենը մի մեծ սենյակից (ՆԴ)։ Պարզ, կա-

պույտ երկինքը զարդարված էր անթիվ աստղերով (ՆԴ)։ Մեր հին սաղի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում (ԵՉ)։

Ածականով արտահայտված որոշիչը ցույց է տալիս որոշյալի.

(ա) որակական հատկանիշը. ինչպես՝ լավ, վատ, խելոք, անխելք, շար, բարի, լուսավոր, մութ, գեղեցիկ, տգեղ, սքանչելի, հին, նոր, տեսարժան և այլն։ Օրինակներ՝ Ես մի ուրիշ, ավելի սուր զենք ունեմ ձեռքիս։ Թող կարծեն, որ ես մի աստվածասեր և ողորմած մարդ եմ, որ ծածկեմ իմ ներքին կյանքը (ՆԴ)։ Դաշտերիդ բերքառատ ու քո պարարտ հողին, ոսկեծամ իմ երկրին ողջո՜ւյն, ողջո՜ւյն։ Որ նոր գարնան պայծառ, լուսե այգաբացին իր երկրի հյութերը նա վայելե։ Ահա նա է ակոսում սև հողի կուրծքը փրփրուն, փափուկ ու բերքառատ (ԳՍ)։ Արագն եկավ լափին տալով, ժեռ քարերին ափին տալով, Ո՞րտեղ թաղեմ ես իմ դարդը, Զոր գլուխս տափին տալով (ՀՀ)։ Մնաք բարով, արև, գարուն եվ խնկաբույր ծաղիկներ, Կարկաչաձնոտ վտակ սիրուն, կանաչագեղեստ բլուրներ (ՀՀ)։

(բ) Չափը, քանակը, մեծությունը. ինչպես՝ բազմաթիվ, տասնյակ, հարյուրավոր, հազարավոր, միլիոնավոր, շատ, քիչ, ծանր, թեթև, մեծ, փոքր, երկար, կարճ, ուժեղ, մոտ, խոր, ծանծաղ, խիտ, նոսր, ահավոր, հսկայական, երկնաքերեր և այլն։

Օրինակներ՝ Մահացումներ եմ տեսնում և ծնունդներ բազում (ԳՍ)։ Փշրում է բյուրավոր ալիքներ իր ափերի վրա (ԳՍ)։ Լսիր, լուցկի իմ շնչեն (ԳՍ)։ Ջա՜ն, փոքրիկ, սիրուն տղա (ԳՍ)։ Նա մի ծեր հայր էր խնամում (ԳՍ)։ Բոլոր հույսս մեծ որդուս վրա է (ՆԴ)։ Իր ճնկա հասակով կանգնեց կնոջ առաջ (ՆԴ)։ Պառավի մարմինը սկսեց դողդողալ ներքին բուռն զայրույթից (ՆԴ)։ Ներս ընկավ մի անագին մարդ (ՆԴ)։ Այս անգամ թեթև շալ էր վերցրել (ՆԴ)։ Զորան Կարոն սարերի Մի հովիվ էր վիթխարի (ՀԹ)։ Միայն փոքրիկ նորահարս Մարոն, ասաց իր մարդուն (ՀԹ)։

(գ) Չափը. ինչպես՝ քառակուսի, եռանկյունի, տափակ, կլոր, գընդաձև, ~~ձգձգուն~~, լայն, նեղ, պոզավոր, ուղիղ, ոլորմոլոր, զիգզագ։ խորդուբորդ և այլն։ Օրինակներ՝ Երեխաները շուռ եկան և ցանուցիր եղան շեղակի նեղ փողոցներում (ՆԴ)։ Կլոր գավը գլորվեց (ՆԴ)։ Բացի կարճ, կեղտոտ շապիկից, ուրիշ բան չկար նրա հագին (ՆԴ)։ Հանեց ծռմռված ոտնամանները (ՆԴ)։ Լպրծուն տափակ քարերից ու ճրմից թոմբեր էին կազմում (ՆԴ)։ Փողոցների փոխարեն ընկած էին ինչ-որ ծուռումուռ անցքեր, ընկած էին անկարգ ու շեղ ուղղությամբ թմբաձև, հողածածկ բարձրություններ (Մ)։ Ունեին մի-մի հատ նեղ ցածուն դռներ (Մ)։

(դ) Գույնը, համը, հոտը. ինչպես՝ գույնզգույն, երփներանգ, սպիտակ, սև, արծաթագույն, համեղ, թթու, դառը, քաղցր, բուրավետ, հոտավետ և այլն։ Օրինակներ՝ Մի ուրու անցավ, մի գունատ աղջիկ ներ-

մակ շորերով (ՎՏ)։— Տեսնք, տեսնք, կրծքին կարմիր պուտ-պուտ (ՆԴ)։ Տես ինչ է դառել այն սպիտակ, մաքուր, գեղեցիկ թռչունը (ՆԴ)։ Գիժ, լեռնային մի վտակ խոխոջում է նրա տակ, խաղում կանաչ մարգերին (ՀԹ)։ Խաղում էինք, վազվզում գույն-գույն մանրիկ ավազում։ Կամ հետևում հևիհև թիթեռնիկին ոսկեթև (ՀԹ)։ Ա՜յ, թուխ մազավոր աղջիկ (ՀԹ)։ Կապույտ սուփրի վրա պլպլում էր մի փոքրիկ լամպ։ Դա շեկ մազերով, կարմիր թշերով ռուս կին էր (ՀՄՍ)։ Ի՞նչ անուշ է հարստի գինին (ԱՇ)։ Ագահորեն կուլ էին տալիս նամեղ պատառները (ԱՇ)։ Քնքշաբույր ծաղկանց հրեղեն խաղով ժպտում են նորից անտառ ու ձորակ (ՎՏ)։

Գույն ցույց տվող ածականները հաճախ գործածվում են փոխաբերական իմաստով։ Օրինակ՝ Դողում է պաղ նրա ձեռնից Իմ սիրտը սև ու տխուր (ՀԹ)։ — Օ՜հ, ինչ սև վիճակ քեզ բաժին ընկավ (ՀԹ)։ Կարմիր օրս երբ սևացավ, Եվ պարտք մնաց թեև քիչ (ԱՂ)։ Ծպրել միայն կարմիր գարնան (Հակ)։ Կանաչ ճանապարհ հայ մարզիկներին (մամուլ)։ Այդ հուշերի մեջ կա մի խաղցր ցավ (ՎՏ)։

ե) Զբաղմունքը. ինչպես՝ դրոգապան, գինեգործ, ներկարար, վարպետ, բժիշկ, մարզիկ, դերձակ, քարտաշ, ատաղձագործ, խառատ և այլն։ Օրինակներ՝ Ամբողջ թաղը Հոպոպ անունով էր կնքել զինագործ Ասատուրին (ՆԴ)։ Դրոգապան Յագորը նախնական քննության ժամանակ քննիչին ասաց (ՆԴ)։ Սխախոտագործ բանվորները շատ գունատ էին (ՀՄՍ)։ Կաթնավաճառ կինը լցնում է բաժակը (ՀՄՍ)։ Բանվոր Սերգոն զրուցում է ընկերների հետ։ Ներս է մտնում վերահսկիչ Ազաֆոնը (ՀՄՍ)։ Համբոն Գիքորին ծառա տվավ բազազ Արտեմի տանը (ՀԹ)։ Մոր կոճակ կտրող էր միկիտան Սաքոն (ՊՊ)։

զ) Ինչից լինելը կամ ինչին վերաբերելը. Ինչպես՝ արծաթե, բրդե, փայտյա, դպրոցական, գյուղական, քաղաքային, տնային, երկաթյա, ուսանողական, քարե և այլն։ Օրինակներ՝ Նա արդեն վարժվել էր բանվորական կյանքին, գործարանային ծանր աշխատանքին (ՀՄՍ)։ Պարույրը իրենց տանը դպրոցական գիրք էր կարդում (ՀՄՍ)։ Կոշտ մատների ստրանքում տրորելով թղթե ու արծաթե դրամները՝ գնաց Սերգոյի մոտ (ՀՄՍ)։ Կաշվե բաճկոնով մարդը ետ նայեց (ԱԲ)։ Ֆետրե գլխարկով մարդը հիշեց (ԱԲ)։ Հալածում է ինձ որպես ծնողական սոսկալի անեծք (ՆԴ)։ Դարձյալ համբույրն իմ եղբայրական հանգչում է քո պարզ ճակատի վրա (ՌԴ)։ Կարգավորել գյուղական ճանապարհները (մամուլ)։

Մի խումբ ածական-որոշիչների հետ որոշյալը դրվում է հոգնակի թվով։ Դա բխում է այդ ածականների հոգնակիության իմաստից։ Այդ ածականներն են՝ զանազան, տեսակ-տեսակ, հազարավոր, բազմազան, բազմաթիվ, գույնզգույն, երփներանգ, հարյուրավոր, միլիոնավոր, խումբ-խումբ, փունջ-փունջ, գույն-գույն և այլն։ Օրինակներ՝

Աղբյուրի չորս բոլորը բուրում էին գույնզգույն ծաղիկները (Մ)։ Տեսակ-տեսակ սափորներ ձեռքերին՝ նավակը շրջապատել էին բազմաթիվ հարս ու աղջիկներ (Մ)։ Հարյուրավոր անցորդներ են հյուրընկալվում տանուտերի ու քահանայի օջախում (Մ)։ Արեգակն իր երփներանգ եռաագայթները սփռեց կանաչազարդ բլուրների և դաշտերի վրա (Մ)։ Ճանապարհներն անցնում էին զանազան սարերի, ձորերի ու գետերի վրայով։ Մի փոքր հեռու տատանում էին ուղղաբերձ կաղամախին, սգատերև նոճին և այլ բազմազան ծառեր, որոնք տասնյակ հազար բներով ծածկում էին Սյունյաց այդ դժվարագնաց լեռները (Մ)։ Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան... (ՀԹ)։ Գույնզգույն թիրեռաձերը գույնզգույն ծաղիկների նման, ցանված էին էին օդի մեջ (Ր)։ Անցնում էին մի խումբ ձիավորներ (Ր)։

Ածականը կարող է որոշիչ լինել ածական+գոյական կապակցությանը։ Ինչպես՝ ճոյակապ տուֆակերտ շենք, հրաշալի գարնանային արև, ճնագույն պարային արվեստ, անեոգ երիտասարդ զույգ, նորակազմ երգչային խումբ և այլն։ Օրինակներ՝ Երևանում բարձրահարկ բետոնապատ շենքերը երևսպատում են տուֆով։ Քաղխորհրդի որոշմամբ վերացվեցին քաղաքային ընդարձակ այգիները շրջափակող բարձր երկաթյա ցանկապատերը։ Երևկոն եզրափակեց նորակազմ երգի-պարի անսամբլը (մամուլ)։ Մեզ տաքացնում էր գարնանային հրաշալի արևը (Սգր)։ Մենք ապրում էինք այդ գեղեցիկ տուֆե շենքում (Սգր)։ Խմբին մոտեցավ մի հին կաշվե բաճկոնով մարդ (Սգր)։

Որակական ածական-որոշիչի կրկնությունն արտահայտում է գոյականին վերաբերող հատկանիշի սաստկական աստիճանը։ Այսպես՝ սև-սև աչքեր նշանակում է շատ սև աչքեր, մեծ-մեծ՝ շատ մեծ, լայն-լայն՝ շատ լայն, ծուռ-ծուռ՝ շատ ծուռ և այլն։ Օրինակ՝ Անց ենք կացնում մեր սև-սև օրերը (ՀԹ)։ Մեզնից առաջ անցավ լայն-լայն քայլերով (Սգր)։ Ուշադրությունից դուրս չմնաց նրա սև-սև ու կրակոտ աչքերը (Սգր) և այլն։

2. Թվական անունով։ Թվական որոշիչը ցույց է տալիս գոյական անդամի թիվը, թվային քանակը և կարգը։ Օրինակ՝ Հազար շեփոր հնչեն թող այս առավոտ, Հազար թմբուկ խփեն թող այս առավոտ (ԳՍ)։ — Կանչեցե՞ք, ասավ, իմ զորքը բոլոր, Հազար հազար մարդ նորելուկ մանուկ, Հազար հազար մարդ անբեղ, անմորուք (ՀԹ)։ Երկու մարդու թարմ ոտնատեղ գտան (ՀԹ)։ Շինարարությանը մասնակցում է ավելի քան 2400 մարդ։ Յուրաքանչյուրին տվեցին մեկական գույլ ու ավել։ Առաջին դասարանցիներին բաժանեցին մեկական տետր ու մատիտ։ Իր առաջին հյուրերին՝ աշխարհի ուժեղագույն ծանրորդներին, համալիրը կընդունի շարժասանդուղքների մոտ։ Շինարարության երկրորդ կեսը կավարտվի 1984 թվականի առաջին կեսին։ Հոկտեմբերի մեկին այստեղ երկրորդ փորձարկումից հետո կցայտեն շատրվաններ։

Միայն խաղավերջում Պողոս Գալստյանին հաջողվեց դառնալ «Արարատի» 900-րդ գոլի հեղինակը։ Հինգերորդ գնդակն ուղարկեց ցանցի մեջ (մամուլ)։ Հազար ոչխարի համար պատասխան պիտի տամ (մամուլ)։

3. Դերանուններով։ Որոշչի պաշտոնում հանդես են գալիս հատկանիշ ցույց տվող (ա) ցուցական դերանունները (այս, այդ, այն, սույն, նույն, միևնույն, այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի, այսքան, այդքան, այնքան, նույնքան, այսչափ, այդչափ, նույնչափ)։ Օրինակներ՝ Այդպիսի մտածումներով էր Թևոսը ձեռնարկել գործը (ՎՓ)։ Նրան հաջողվել էր արդեն այնքան քրտինք թափել, այնքան աշխատանք (ՎՓ)։ Ինչո՞ւ այդքան ազատ բերեց միայն մեկի պատմությունը (ՆԴ)։ Որոշել եմ հեռանալ այնպիսի գյուղ, որ այդ քաղաքից կտրված լինի (Մ)։ Տարիներ են անցել այն օրից (Մ)։ Այդ սովորությունը մնացել էր այնպես հաստատ (ԱԲ)։ Տրվում է սույն տեղեկանքը...

բ) Հարցական, հարաբերական դերանունները (որ, ինչ, որքան, ինչքան, ինչպիսի, քանի)։ Օրինակներ՝ Փկած կլինի, որ խաբար տանի, թե խելքը գլխին դեռ քանի գյուղ կա (ՀԹ)։ Հրամանքդ, ի՞նչ մարդ ես կամ ո՞րտեղից, ո՞ւր (ՀԹ)։ Ի՞նչ ցավ ունի խեղճ ռանչպարը (ՀԹ)։ Ինչքան ցավ եմ տեսել։ Քանի՞ ձեռքից եմ վառվել (ՀԹ)։ Ո՞վ իմանա ո՞ր սիրունի բիբն ես կոխում դու հիմի (ՀԹ)։ Ո՞ր երկրի սրտում թախիծ կա այնքան, եվ այնքան ներում—Ո՞ր երկրի սրտում (ՎՏ)։ Քանի՞ մահ կա իմ սրտում (ՀԹ)։ Ո՛ր ընկերոջը դիմեց, մերժում ստացավ (Սգր)։

գ) Անորոշ, որոշյալ, ժխտական դերանունները (ինչ-ինչ, ինչ-որ, ոմն, մի, ուրիշ, այլ, ողջ, բոլոր, ամբողջ, ամեն մի, յուրաքանչյուր, ոչ մի)։ Օրինակներ՝ Աշխատում էին չկորցնել ոչ մի խաղը, ոչ մի գեղգեղանքը։ Մի ինչ-որ գյուղացի գալիս կանգ էր առնում այդ հողի ծայրին։ Մյուս տարվա վերջին իսկ կարող էր մի աշնանացան փորձել նրա վրա։ Ամբողջ մարմնով դողում էր (ՎՓ)։ Ինձ ուրիշ բան չէր մրնում (ՆԴ)։ Հավաքվել էին ընտանիքի բոլոր անդամները, մի քանի մերձավորներ։ Մյուս այցելուները խմբվել էին հյուրասենյակում (ՆԴ)։ Ինչ-ինչ մարդիկ էին ներս ու դուրս անում (ԱԲ)։ Ամեն մի իր ձեռքն առնելիս չգիտեր թե ուր դներ (ԱԲ)։ Ողջ գյուղը քլթքլթում էր կրակին դրած կաթսայի պես (ԴԴ)։

Բոլոր, որոշ դերանունների հետ գոյական լրացյալը դրվում է հոգնակի թվով (բոլոր գյուղացիները, որոշ ընկերներ), իսկ ողջ, ամբողջ, յուրաքանչյուր, ամեն մի դերանունների հետ՝ եզակի (ողջ գյուղը, ամբողջ քաղաքը, յուրաքանչյուր քաղաքացի, ամեն մի կոլտնտեսական)։ Օրինակներ՝ Ինձ թվում էր, որ խոսում են նրա բոլոր ճյարդերը, սրտի բոլոր թելերը (ԱՇ)։ Նրա օրինակին հետևեցին պատանիների ամբողջ խումբը (ԱՇ)։ Յուրաքանչյուր նավաստի իր պատ-

վերն էր տալիս, որոշ մարդիկ կորցրեցին իրենց (ԱՇ)։ Ողջ գյուղը կանգնեց պարսպի նման։ Ամեն մի բանակն ընտրեց փահլևան (ՀԹ)։

2. Անկախ դերբայներով։ Անկախ դերբայներից որոշիչ կարող են լինել՝ ա) անորոշ դերբայի տրական (սեռական) հոլովը՝ խմելու ջուր, գրելու թուղթ, ուտելու միրգ։ Ցույց է տալիս, թե ինչի է հատկացված, ինչի համար է որոշյալ-պարկանչ։ Օրինակներ՝ Նրա մեջ առաջացավ Գրիշային տեսնելու ցանկություն։ Անհապաղ կատարելու գործեր շատ կային (ԱՇ)։ Աշոտը կարդալու գրքեր շատ ունի, իսկ դպրոցում սովորելու տարիներին այդ մասին չէր մտածել։ Խորհելու շատ բան կար նրա համար։ Միասնություն պահպանելու մտահոգությունը չխանգարեց հեղինակին։ Բաց չէր թողնում նախագծին վերադառնալու իր մտադրությունը (մամուլ)։ Սպիտակը կախելու խաղող է (մամուլ)։

բ) ենթակայական դերբայը՝ վազող ձին, երգող տղան, ցատկող մարդիկը և այլն։ Ցույց է տալիս որոշյալ-գոյականի մի բան անող կամ լինող հատկանիշը։ Օրինակներ՝ Նրա մտավ նա ֆծնող հայացքով։ Հանելի էր թրջվել բարակ մաղող անձրևի տակ։ Հիացրին ծերունուն շրջապատող մարդիկ։ Ներկա եղող մեծավորները նորից մոտեցան իրար (ԱՇ)։ Ջնացող կյանքի վերջին զորավոր ցնցումն էր այդ։ Այրիացած Ոսկեհատն ազատություն տվեց հեկեկանքին՝ հարձակվելով ամուսնու սառչող դիակի վրա (ԱՇ) և այլն։

գ) Հարակատար դերբայը՝ (քնած երեխա, ծաղկած ծառեր, հանգած օջախ և այլն)։ Ցույց է տալիս, թե ինչ վիճակում, ինչպիսին է լրացյալը։ Օրինակներ՝ Նետել է մարմինը իր սիրած կապույտ ջրերին (ԳՍ)։ Նրանք ընկած ընկերներս են (ԳՍ)։ Կոմերիտ յարիս ված բարեվը սրտիս վրա (ԳՍ)։ Մեր տառապած, բաց հոգիների երազանքների էջերն է կարդում (ՌԴ)։ Նրա մեջ պահված թղթերն են ենչում (ՌԴ)։ Արդեն եփած կարտոֆիլը վերցրեց (ՀՍ)։ Աթոռին նստած Սերգոն ոտքի ելավ։ Եկան տղամարդիկ կուրացած մեջքով, դեղնած ու դալուկ կանայք (ՀՍ)։ Անհրաժեշտ էր մի քանի բոպե ևս պահպանել կյանքը հյուծված ու քայքայված անոթի մեջ (ԱՇ)։ Մնում էր մի թույլ ժպիտ թառամած շրթունքների վրա։ Սպառված աղբյուրի վերջին կաթիլներն էին դրանք (ԱՇ)։

6. Գոյական անունով։ 1. Ուղղական հոլովով։ Ունենում է հետևյալ կաղապարները։

ա) Հասարակ անուն+հատուկ անուն։ Այս դեպքում լրացումը ցույց է տալիս լրացյալի կոչումը, պաշտոնը, զբաղմունքը և այլն։ Օրինակներ՝ Երևանում պիտի կանգնեցվի բանաստեղծ Պարույր Սևակի արձանը (մամուլ)։ Միջանցքում Սերգոյին դիմավորեց բանվորուհի Քեթևանը։ Սերգոն ծանոթացրեց իր որդի Ստեփանին։ Նրանց մեջ էր նաև հյուսն Արշամը։ Նա բռնեց խոզ Մարտիրոսի օձիքից և ետ շպրտեց (ՀՍ)։ Տիկին Մարզպետունին և իշխանուհի Մարիամը գրկեցին ու համբուրեցին Գոռ իշխանիկին ու Շահանդուխտին (Մ)։ Զորապետ Բեշիրը կատաղեց (Մ)։ Կաթողիկոս Հովհաննեսն իր տեղում չէր (Մ)։ Դա իշխան Մարզպետունին էր (Մ)։

բ) Հատուկ անուն+հասարակ անուն։ Օրինակներ՝ Ո՛չ Աբաս արքայեղբայրը, ո՛չ Աշոտ սպարապետը, ո՛չ Գագիկ Արծրունին չէին կամենալ միության մեջ մտնել (Մ)։ Այդ զգացմունքն անծանոթ էր մինչ այդ Մարզպետունի իշխանին (Մ)։ Վերջապես մոտեցավ Մուշեղ բերդակալը։ Դիմեց Վահրամ սեպուհին (Մ)։ Նպատակը հեռացել էր դեպի Ատրպատական (Մ)։ Հայտնեցեք Բեշիր զորապետին (Մ)։ Աշոտ արքայի տորմիղը սկսավ մոտենալ ափին (Մ)։ Աբաս թագավորի բանակը ծանրությամբ էր առաջանում (Մ)։ Մնվել է ուժեղ, կորովի դասակարգը Բաֆու քաղաքում (ԵՁ)։

գ) Հասարակ անուն+հասարակ անուն։ Օրինակներ՝ Սերգոն մի քանի արծաթ դրամ տվեց Ստեփանին (ՀՍ)։ Հրաշք արջիկ, ցնորքների դիցուհի (ՎՏ)։ Պայծառ աշխարհում կլինենք մենակ, Յավ կյանքի մեռնող լույսերից խաբված։ Կերազենք անհուշ, անվերջ ու անհագ, Հեմիաթ աշխարհում առհավետ կապված (ՎՏ)։ Ցնորք հուշերով ամոքիր հոգիս (ՎՏ)։ Մենք մեր ուժն ենք տալիս քեզ ու մեր հույզերը ոսկի (ԳՍ)։ Ոսկի հասկեր, ոսկի բերքով, ողկույզները քաղվեն երգով (ԳՍ)։ Ելնում են դեմս մարդիկ, դեմքեր... ու դեմս բացվող քավիշ գարուն (ԳՍ)։ Ես լեռներ ունեմ անքարբառելի, որ լեռ արտերը հիմքից կհուզեն (ՌԴ)։ Մորս պես մեկը նստեր իմ կողքին, բռներ ձեռքերս իր լույս ձեռքերով (ՌԴ)։

Ուղղական հոլովով այս հասարակ անունները բնորոշում են գոյական որոշյալի որակական կողմը՝ ածականի դեր կատարելով։ Կարող են գործածվել լինել փոխաբերական իմաստով, իբրև մակդիր, ինչպես՝ արծաթ մազեր, ոսկի հեքիաթ, լույս ձեռքեր, երկաթ կամք, ծաղիկ հասակ և այլն։ Լրացյալի որակական կողմն են նշում՝ արև օր, ձմեռ ժամանակ, տոն օր, անձրև եղանակին և այլ կապակցությունների գոյական որոշիչները։

2. Գոյականի տրական (սեռական) հոլովով։ Այս դեպքում լրացումը ցույց է տալիս՝ ա) ինչից է բաղկացած, պատրաստված լրացյալ-գոյականը։ Ինչպես՝ Փայտի գդալ, ձկան ապուր, գարու հաց, երկաթի դուռ։ Օրինակ՝ Ուրցի տաք դեղնականաչ թեյ էին խմում («Գարուն»)։ Երբ մնաց եփված պանրի, հացի, շամարի ու աղի մածուցիկ շփոթը, պապը ծիծաղեց։ Ի՞ա գայլերի ոհմա՞կ է, թե ոչխարների հոտ։ Թղթերի երամ տեսե՞լ ես, իսկ անասունների նախի՞ր (մամուլ)։ Մի կողմ կանգնած՝ Անահիտը օտարացած նայում էր մարմարի տապանաքարերի արանքում հավաքված մազմուրոքով մարդկանց (Սգր)։ Գայլերի ոհմակն ընկավ ոչխարի հոտի մեջ (ՀԹ)։ Այն ժամանակ գարու

ճաց էին ուտում և փայտի գդալով՝ ձեթի ճաշ: Մեկանում էլ են ձկան ապուր ուտում, Սևանի ափին (մամուլ)[46]։

բ) Այն առարկան, որին վերաբերում է լրացյալ-գոյականը։ Այս հոլովով դրված գոյականը հոմանիշ է հարաբերական ածականին։ Ինչպես՝ մոր սեր և մայրական սեր, բանվորի կյանք և բանվորական կյանք, աշակերտի վարք և աշակերտական վարք և այլն։ Օրինակներ՝ Այժմ նա նմանվում է գործարանի մրոտ բանվորի (ԱՇ)։ Տաճ վարձ չէին տալիս։ Գաշտի աշխատանքը նրա համար ծանր չէր։ Մոր սերը մեծ հովանի է (Սգր)։ Քանի մի բոպե նրան պաշարեց անձնասիրության և ամոթի զգացումը (ԱՇ)։ Կնոջ կարոտն ինձ համար է հորինվել, Ինձ համար է ծնվել թախիծը սիրո (ՌԴ)։

գ) Այն առարկան, որին հատկացված, որի համար նշանակված է որոշյալը։ Ինչպես՝ խմորի տաշտ, շախմատի տուն, մատաղի գառ, ֆուտբոլի դաշտ, թեյի գդալ, ճաշի սպասք, խմելու ջուր, վարելու հողամաս և այլն։ Օրինակներ՝ Ցավալին այն է, որ խմելու ջրի շուայլումների փաստերը հազակի չեն։ Մանարանի արտադրամասում մածունի շշերը սառեցնում են խմելու ջրով: Արփիկը լրագրով ծածկեց լուսամուտը և վառեց նավթի լամպը: Բաց դռնի միջից տեսավ մեղուների ջրամանը, կորնգաճի վարդագույն արտը: Մեղուների դատարկ փեթակին շարեց մեղր, աղ ու հաց։ Պապը լվաց ճաշի փոքր կաթսան: Երբ Մեղրի բիդոնները չեն հերիքի։ Ձեռքն էր վերցնում մեղուների տեսարը: Տատը քեռուն տալիս էր լվացքի մեքենան նորոգելու։ Թեյի փոքրիկ գդալը մնաց օդում, ապա ընկավ պաղպաղակի սկահակը (մամուլ)։ Ճաշի սեղանը ծածկված էր ափսեներով, գարեջրի, գինու, օղու բաժակներով ու շշերով: Մի անգամ իմ ներկայությամբ Լևոնը նա դրեց օղու բաժակը (ԱՇ)։ Սոված ժամանակներս էլ վազում էինք ճացի տաշտից մի կտոր հաց առնում, պանրի կաբասից մի կտոր պանիր (ՀԹ)։

դ) Այն առարկան, որը ցույց է տալիս լրացյալի տեղը, ժամանակը։ Ինչպես՝ սեղանի, պատի, ձեռքի ժամացույց (նաև օրացույց), աշնան քամի, ամռան արև, ցերեկվա աշխատանք, Երևանի ընկերը և այլն։ Սրանք ցույց են տալիս առարկայի տեսակ, որոշ դեպքերում կարող են փոխարինվել հարաբերական ածականով։ Ինչպես աշնանային քամի, ցերեկային աշխատանք, երևանյան ընկեր (և այլն)։ Օրինակներ՝ Մայրը գլխի շուռ էր շտկում և սրբում ճակատի քրտինքը։ Պապը հանեց ամառվա ծակոտկեն գլխարկը, նայում էր սարի լանջի ծաղիկնե-

[46] Եթե գայլի ոռմակ, ոչխարների հոտ, ծաղիկների փունջ, թռչունների նրամ կապակցություններում ընդգծված սեռական հոլովով բառերն ունեն հարաբերական ածականի իմաստ (գայլային ոռմակ, ոչխարային հոտ և այլն), ապա նրանք որոշչի լուրծառույթ ունեն։

ին: Արմենը ձեռքի գիրքը ծալեց, որ սայլի մթերքը տեղափոխի տեսակը։ Սարի մարդ էր մեղվապահ պապը։ Քեռին պատմում էր Սիբիրի ընկերոջ մասին։ Հիմա ամառվա տոթ երեկո է («Գարուն»)։ Հիշում եմ գարնան այն օրը, երբ հանդիպեցինք Լենինականի գնացքին: Տունդարձիս ճամփին մի անակնկալ էր սպասում ինձ։ Նրանք ընդունակ են 2—3 անգամ երկարացնելու ընդերքի մետաղի կյանքը («Գարուն»)։ Աշնան քամին հիմա կգա, ծառդ արմատով կառնի-կերթա (Ա.Ի)։ Փողոցի լապտերի լույսը ազոտ էր լուսավորում։ Դա այլևս ամառվա Լևոնը չէր։ — Է՞յ, դու, Կալուգայի արջ, ինչպես համարձակվեցիր,— գոռաց Սիբիրի ոեխը (ԱՇ)։ Նրան սիրում էին պանդոկի նավաստիները (ԱՇ)։ Հիշում էր յուր երեկվա դրությունը և սաստիկ ամաչում (ԱՇ)։

Երբեմն դժվար է որոշել, թե սեռականով լրացումը որոշի՞չ է, թե պարագա, երբ այդ լրացումն արտահայտված է լինում անորոշ դերբայով։ Օրինակ՝ Հարկավոր է ցույց տալ կորուստը գտնելու դեթ մի թույլ հույս (ԱՇ)։ Ես խաչություն չունեցա նրան ճանդիմանելու (ԱՇ)։ Նա դեռ պահում էր մի թույլ հույս փողերը գտնելու (ԱՇ)։ Այդ երկվոիթյունը հետևանք է նաև այն բանի, որ լրացումը ետադաս է և կարող է գիտակցվել նաև պարագա։ Այսպես՝ առաջին նախադասության ընդգծված լրացումը կարող է համարվել թե հույսի որոշիչ (ի՞նչ հույս), թե հարկավոր է ստորոգյալի պարագա (ինչի՞ համար)։ Այս դեպքում պիտի առաջնորդվել հարցով։

3) Գոյականի բացառական հոլովով։ Այս կառույցում որոշիչը ցույց է տալիս առարկան, որից բաղկացած է որոշյալ-առարկան, նրա նյութն է։ Օրինակներ՝ Բնական մորթուց բանկոնը ճոճում է։ Այդ հոյակապ քարից շենքը գրավել է բոլորի ուշադրությունը։ Ցարը զարմացել էր, որ այդ կավից կենդանի համար այդքան համառ կռիվներ են մղվել։ Եվ նա նվիրեց բրդից գուլպաներն իր որդուն։ Պարտեզը փակված էր փշալարից ցանկապատով և ուներ երկաթից մի մեծ դուռ (մամուլ)։

Այս հոլովով լրացումը կարող է ցույց տալ նաև, թե ինչի մասին է լրացյալ գոյականը։ Ինչպես՝ Լսում էր քեռու պատմությունները Հեռավոր Արևելքից: Քննարկեցին նրա նոր վեպը կոլտնտեսության կյանքից (մամուլ)։

4. Գոյականի գործիական հոլովով։ Այս կառույցում որոշիչը ցույց է տալիս՝

ա) Այն առարկան, որով օժտված է կամ որն ունի լրացյալ առարկան։ Ինչպես՝ ծամով աղջիկ, հրացանով մարդը, բեղերով կինը, շնիկով տիկինը և այլն։ Օրինակներ՝ Պապը ցած դրեց մածնով կաթսան: Շրջանակով մեղրը թանկ է։ Արդեն որդան կարմիր մաշիկներով արֆա էր, ճերմակ ձիով սպարապետ, նիզակով ռազմիկ: Սկզբում ցանցով գլխարկը չէր հանում։ Աստղաբեփուկներով սև շրջազգեստը ընդ-

գծում էր նրա նազելի կառուցվածքը։ Կողքի սեղանի մոտ նստած կաշվե բանկոնով տղան շրջվեց։ Վարտիքի գրպանից հանելով արծաթե դրամներով քսակը՝ գցեց նրա գիրկը («Գարուն»)։

բ) Այն նյութը, որով պատրաստված է լրացյալ-գոյականը։ Օրինակներ՝ Կարծես առնում էր ծավարով փլավի հոտը։ Ցեմենտով շաղախը ամուր է։ Պանելներով շենքը տուֆ քարով երեսպատում են։ Պատերազմի տարիներին ծավարով, կաղամբով վռիկ էինք ուտում, ձերով թելուկ, կարտոֆիլով կարկանդակ (մամուլ)։

գ) Բառակապակցությամբ։ Օրինակ՝ Մեկը որակել է լեռան երգիչ անվանումով, մյուսը՝ Բայրենի եզերքի երգիչ։ Մեկը նրան համարել է անցյալի մեծարաբերի երգիչ, մյուսը՝ ադաթի ու կենցաղային սովորույթների (ԱՏ), «Բախտը բերել», «կոնակը շուռ տալ» արտահայտությունները ժողովրդական են։ Ինչ զարմանալի ճիշտ է գտնված «ուղտի քայլվածք» արտահայտությունը, որին լրացնելու են գալիս «անիվների հետքերը», այն էլ «դաջվել» և «մխրճվել» դիպուկ բառերով (ՊՍ)։ Եթե երևար Գողին, լերկ երեսով, դեմքի մաշկը ծալ-ծալ ու մանրիկ աշքերով Գողին։ Այդ կարճլիկ, թիկունքը լայն և ոսկորը պինդ մարդուց Ունանը խեղճանում էր (ԴԴ)։ Ներս վազեց մազերը գանգուր երեխան։ Կանչում էր մի ոտը կաղ Սեթոն։ Մազը երկար, խելքը կարճ կին է (Մազը)։ Խոսում էր մազերն սպիտակ, բայց դեմքը զվարթ, տառնց կրնեիների Սաթոն (ԴԴ) և այլն։

Այս ընդգծված կապակցություններում առկա է վերադրյալ սառորոգում, սառորոգում, որը բովանդակությունից զգացվում է, բայց ձևաբանորեն չի արտահայտված։ Մազերն սպիտակ, ոտքը կարճ նշանակում է՝ որի մազերն սպիտակ են, ոտքը՝ կարճ։ Այս կապակցությունների հոմանիշներն են՝ աչքերը շեղ—շեղ աչքերով, մազերը գանգուր—գանգուր մազերով, ոտքը կարճ—կարճ ոտքով, դեմքը զվարթ—զվարթ դեմքով և այլն։

դ) Նախադասությամբ։ Օրինակներ՝ Նա ուշադիր ու ներշնչված լսում էր «խոհվամազ Պյուռոսը» նա, որի գենքերն այնպես սև էին «մենախոսությունը»։ «Մեղ Կեսարը մեռավ, հող դարձավ» խոսքերը նա արտասանում էր դանդաղ («Գարուն»)։ Կարելի է վիճարկել ամեն մի աֆորիզմ, ամեն առած ու ասացվածք, այդ թվում նաև հայերի «Երկու բարին մեկ տեղ չի լինում» իմաստուն խոսքը (ՊՍ)։

8. Վերադրյալ, ինքնանվանողական բառերով։ Օրինակ՝ Այդ դերանվան երրորդ դեմքում եզակի սեռականի իր ձևի փոխարեն երբեմն գործածում են յուր ձևը, որն արդեն հնացած է։ Քաղաքավարության համար դու եզակի ձևի փոխարեն գործածվում է դուք հոգնակին։ Բերված նախադասությունների մեջ գործածված երեսունհինգ և ութերորդ բառերը թվական անուններ են։ Այստեղ ութերորդ բառը ցույց է

տալիս դասարան գոյականի թվային կարգը։ Թիթեղ, տանիք բառերը ցույց են տալիս առարկաներ (դասագիրք)։

Որոշիչն արտահայտվում է նաև կապային կապակցությամբ (պատերազմի մասին հաղորդումը ցնցեց երկիրը), մակբայով (Ուշ աշնան, վաղ գարնան) և այլն (մանրամասնությունները տե՛ս բայանուն գոյականների բաժնում)։

Բայանուն գոյականների լրացումները։ Բայանուն գոյականը, ի տարբերություն մյուս գոյականների, արտահայտում է գործողության առարկայացված հասկացություն և, որքան էլ նա գոյական է, այնուամենայնիվ, իր մեջ պահում է գործողության իմաստը։ Այսպես՝ հանդիպում, կառուցում, զեկուցում, խոսք, կռիվ, բաժանություն, ուսուցում, հատուցում, նկատողություն բառերը գոյականներ են, բայց պահպանել են հանդիպելու, կառուցելու, զեկուցելու, խոսելու, կռվելու, բաժանվելու, հատուցելու բայական իմաստը։ Այդ է պատճառը, որ բայանուն գոյականներն ունենում են նաև այնպիսի որոշիչներ, որոնք կարող են համարվել նաև խնդիր կամ պարագա, ըստ իրենց արտահայտած իմաստի։ Այսինքն այդ լրացումները (որոշիչ) խնդրային կամ պարագայական իմաստ (երանգ) են ունենում։

Բայանուն գոյականների որոշ լրացումներում ուժեղ է արտահայտված խնդրային-պարագայական իմաստը, իսկ որոշ լրացումներում՝ որոշչային։ Օրինակ՝ մոտեցում վարպետին, խնդրանք եղբորը, դիմում դիրեկտորին, վերաբերմունք ճարեանի նկատմամբ, սերը աղջկա հանդեպ, հիասթափություն կյանքից, փախուստը բանտից, տարածումը ամենուրեք, նվեր որդուն, նկատողություն ուշացման համար և այլն կապակցությունների ընդգծված լրացումներում պարագայական-խնդրային իմաստն է ուժեղ արտահայտված, իսկ հանկարծակի վերադարձը, տեղին վճիռը, բերքի ժամանակին հավաքումը, ներքուստ վրդովմունքը, արտաքուստ սառնասրտությունը, տոնի առթիվ զեկուցումը, առձակուրդի մասին դիմումը, նիզակներով կռիվը և այլ կապակցությունների ընդգծված լրացումներում որոշչային իմաստն է ուժեղ արտահայտված։ Առաջին խմբի լրացումները պատասխանում են ո՞ւմ, ինչի՞ համար, որտեղի՞ց, ումի՞ց, ո՞րտեղ հարցերին, երկրորդ խմբի լրացումները՝ ինչպիսի՞, ո՞ր հարցերին։

Ինչպես երևում է բերված օրինակներից, բայանուն գոյականների լրացումները որոշելու համար պիտի դիմել հարցին։ Այսպես՝ արագ (դանդաղ) ընթացքը, բժիշկների կյանքից վեպը, Բաֆֆու մասին զեկուցումը, արտաքերք թողարկումը, խնամքով պահպանությունը և այլ կապակցություններում ընդգծված լրացումները պատասխանում են ո՞ր, ինչպիսի՞ հարցերին, ուստի որոշիչներ են։ Ինչպես՝ ո՞ր վեպը, զեկուցումը, ինչպիսի՞ ընթացք, թողարկում, պահպանություն։ Իսկ, ա-

սենք՝ մեկնումը գնացքով, վերադարձը տուն, հանդիպումը որդուն, մահը կաթվածից, փախուստը բանտից, մեկուսացումը հասարակությունից և այլ կապակցությունների ընդգծված լրացումները պատասխանում են ինչո՞վ, ո՞ւր, ո՞ւմ, ինչի՞ց, ո՞րտեղից, ո՞ւմից հարցերին, ուստի պարագայական, խնդրային իմաստ ունեն։

Բայանուն գոյականների լրացումների տեսակը որոշելու հարցում կարևոր է նաև լրացման գրված տեղը, շարադասությունը։ Նկատելի է, որ որոշիչները այս կառույցում նախադաս են լինում, ինչպես՝ դերերով ընթերցանություն, գիշերով հարձակում, անսպասելի վայրէջք, ներքուստ հուզմունք, հնուց սովորություն և այլն, իսկ պարագաները ու խնդիրները՝ ետադաս։ Ինչպես՝ հարձակում թշնամու վրա, վերադարձը տուն, հարցաքննություն դեպքի մասին, զրույց արտադրության շուրջը, երգ գարնան մասին, արձակում տոնի առթիվ և այլն։

Տեսնենք այս (բայանվանական) կապակցություններում բայանվան լրացումը ձևաբանական ի՞նչ արտահայտություն ունի, ի՞նչ կապակար ունի հիշյալ բառակապակցությունը։ Ստորև ներկայացնում ենք բայանվան լրացումների ձևաբանական արտահայտությունները։ Այսպես, ուրեմն, բայանուն գոյականի լրացումներն արտահայտվում են.

1. Ուղղական հոլովով։ Այս դեպքում լրացումն ունենում է տեղի իմաստ։ Օրինակներ՝ Մուտքը բատրոն հրավիրատոմսերով։ Նրա վերադարձը հայրենիք խորը զղջման արտահայտություն էր։ Օդանավի վայրէջքը Երևանի օդանավակայան երկու ժամով ուշացավ։ Նրա մեկնումը արտասահման հատուկ նպատակ ուներ։ Գրողների այցը գործարան մեկնաբանվեց բաղմատիրաժի էջերում։ Իսրայելյանի կրկին վերադարձը ստեղծագործական ասպարեզ, նոր ստեղծագործությունների դուռ բացեց (մամուլ)։

2. Տրական հոլովով։ Այս դեպքում լրացումն ունենում է՝ ա) հանդման, մատուցման իմաստ։ Ինչպես՝ նվեր, պարգև, խոսք, խորհուրդ (որդուն), դիմում, խնդրանք, առաջադրանք (բանվորներին), հանդիպում (ընկերոջը), մոտեցում (խնդրին) և այլն։ Սրանք մեծ մասամբ վերնագրային կառույցներ են, ինչպես՝ Խոսք իմ որդուն (ՍԿ)։ Կառավարության դիմումը իր ժողովրդին։ Յոթ խորհուրդ գալիքի սերմնացաններին (ԵՉ)։ Ուղերձ մեր հանճարեղ վարպետներին։ Յոթ խորհուրդ գալիքի երգասաններին (ԵՉ) և այլն։

բ) Տեղի ժամանակի իմաստ։ Օրինակներ՝ Այս կառույցը Հրազդանի ձորեզրին, «Հաղթանակ» կամրջի հարևանությամբ, ձեռք բերեց միութենական նշանակություն։ Աղջկա ճամփեզրի հանդիպումը Արմենին քարացրեց տեղում («Գարուն»)։ Անհրաժեշտ է պլանավորել ու կարգավորել վայրի բույսերի ու պտուղների ժամանակին ու անկորուստ հավաքումը։ Հանդիպում Վատերլոոի կամրջին։ Պարտիզանների

կեսգիշերին հարձակումը, այն էլ ճահիճների միջով, հանկարծակի բերեց հիտլերականներին։ Հարձակումը լուսադեմին՝ լավ էր ծրագրված (մամուլ)։

3. Բացառական հոլովով։ Լրացումն արտահայտում է. ա) տեղի պարագայի, անցման խնդրի իմաստ։ Օրինակներ՝ Կամոյի փախուստը բանից կազմակերպել էին ընկերները։ Շահյանի հիասթափումը կյանքից անգործության հետևանք էր։ Տնային բանտարկությամբ նրա մեկուսացումը հասարակությունից դժվարացրեց նրա գործունեությունը։ Դեսպանի մեկնումը Երևանից (մամուլ) և այլն։

բ) Պատճառի պարագայի իմաստ։ Օրինակներ՝ Բժշկությունն առայժմ անզոր է կաթվածից մահվան դեմ։ Իրավացի է բնակչության դժգոհությունը Բշգ-ի բացառությունից։ Գործի դանդաղումը շինանյութերի պակասությունից սպառնում է պլանի կատարմանը։ Երկա՞ր պիտի տևի նրանց շարշարանքը ջրի պակասությունից։ Քաղաքներում ծայր են առել հուզումները բռնությունից (մամուլ)։

գ) Վերաբերության խնդրի իմաստ։ Օրինակներ՝ Բժիշկների կյանքից նրա զրույցը հետաքրքիր էր։ Որդու հերոսությունից (հերոսության մասին) ակնարկը մոր աչքերից արցունքներ քամեց։ Լսում էին նրա նոր տեղեկությունները այդ տարածված հիվանդությունից։ Ներունու զրույցն իրենց կյանքից բացահայտում է շինականի դժգոհությունն ու ըմբոստ տրամադրությունը (մամուլ) և այլն։

4. Գործիական հոլովով։ Լրացումն արտահայտում է. ա) տեղի, ժամանակի իմաստ։ Օրինակներ՝ Մեր զորամասի գիշերով հարձակումը շփոթեցրեց հիտլերականներին։ Պարտիզանական ջոկատի անցումը ճանիճներով անհավատալի էր գերմանացիների համար։ Փակեցին դեռ տի-հոսքը ձորով և ստեղծեցին մի հսկայական ջրամբար։ Ավարտվեց դեսպանի այցը երեք օրով (մամուլ) և այլն։

բ) Միջոցի և հիմունքի իմաստ։ Օրինակներ՝ Բանվորներին ուրախացրեց նոր սկզբունքով պարգևատրումը։ Հիանալի է նկարահանված ստրուկների կռիվը նիզակներով ու սրերով։ Հնարավոր չէ սարալանջի վարը տրակտորով, այն կատարում են գութանով։ Հրոսաշրջիկների մեկնումը ինքնաթիռով՝ հետաձգվեց։ Դիրեկտորի հրամանով նրա հեռացումն աշխատանքից դատարանը չհաստատեց (մամուլ)։

գ) Ձևի պարագայի իմաստ։ Օրինակներ՝ Շատ կարևոր է բնական պաշարների խնամքով պահպանումը և խնայողաբար օգտագործումը։ Այդ կոթողի խնամքով պահպանությունը իրենց վրա են վերցրել շրջանի դպրոցականները (մամուլ)։

5) Ներգոյական հոլովով։ Լրացումն արտահայտում է տեղի, ժամանակի իմաստ։ Օրինակներ՝ Խազդի վաճառքը խանութում էժանացնում է շուկան։ Առափնյա մասում գրոսանքը թարմացնում է մարդկանց։ Այդ որոշումները իրավական հիմք հանդիսացան բնական պա-

շարների հենց իրենց վայրում անձեռնմխելի պահպանման և արդյունավետ օգտագործման համար։ Կուսակցական աշխատողների և գրողների զրույցը Կիրովականի խաղկոմում լուսաբանվեց կենտրոնական թերթերում։ «Դինամոյի» դահլիճում ներքին վերանորոգման ավարտին օրեր են մնացել (մամուլ)։ Պատերազմում ճիշտ պաշտպանության ու հարձակման արդյունքը այժմ էլ ենք տեսնում (մամուլ)։ Հարսանիքում աղմուկը անդուր բան է։ Գործի մեկ ժամում ավարտը զարմացրեց մեզ։

6. Մակբայով։ Լրացումն արտահայտվում է մեծ մասամբ ձևի և ժամանակի մակբայներով և որոշիչին տալիս է ձևի և ժամանակի պարագաների իմաստ։ Օրինակներ՝ Արմենի արագ քայլերը զարմացրին աղջկան։ Նրանց առջև, սեղանի վրա թերթի երեկոյան արտահերթ թողարկումն է։ Ամերիկայում գենքի ամենուրեք վաճառքը անիշխանություն է ստեղծում փողոցում։ Տեղի է ունենում բնական պաշարների աստիճանաբար նվազում, բույսերի, կենդանիների աստիճանաբար ոչընչացում, հողերի էրոզիա, շրջապատի միջավայրի անասելիորեն աղտոտում։ Դրանք հուսալի պայմաններ են համատեղելու բնական պաշարների խելացիորեն և հաշվենկատ օգտագործման, պահպանման և բարելավման խնդիրները։ Փոխառների մշտական պահպանման կարևորությունը անվիճելի է (մամուլ)։

7. Կապային կապակցությամբ։ Այս կառույցում որոշիչի պարագայական կամ խնդրային իմաստը բխում է կապի իմաստից։ Դրանք շատ են։ Նշենք մի քանի գործածականները։ ա) Տեղի և ժամանակի։ Օրինակներ՝ Մակադրություն ժայռի վրա։ Ուղևորություն դեպի Լոռի։ Ռուս և հայ ժողովուրդների բարեկամության հուշարձանի մոտ կանգառի ժամանակ եղան նաև ելույթներ։ Մնվել էր ամենաէականը՝ հայրենի հողի վրա գիտելիքների և փորձի ներդրման բերկրանքը։ Նրա վերադարձը դեպի տուն կլինի հաղթողի բերկրանքով լի (մամուլ)։

բ) Վերաբերության իմաստ։ Օրինակներ՝ Կնոջ նկատմամբ տղամարդու վերաբերմունքը նրա ընդհանուր կուլտուրայի ցուցանիշն է։ Մարդկային խառնվածքի գծերից մեկը պիտի դառնա խելացի ու գիտակցական վերաբերմունքը բնության պահպանության նկատմամբ։ Մեծ լոռեցու հանդեպ համաժողովրդական սիրո դրսևորումը եղավ պոեզիայի այդ օրը։ Քաղկոմի քարտուղարի զեկուցումը քաղաքի զարգացման հատակագծի մասին տպագրվեց թերթերում (մամուլ)։

գ) Պատճառի, հիմունքի իմաստ։ Օրինակներ՝ Հանցանքին համապատասխան վճռից գոհ էին դահլիճի մարդիկ։ Ուշացման համար նրկատողությունը վերացրին։ Հարգելի էր նրա ուշացումը փոխադրականի պատճառով։ Հրետանու շնորհիվ մեր առաջխաղացումը խումապի մատնեց հիտլերականներին (մամուլ)։ Այս կապային որոշիչը կարող է ունենալ նաև միասնության, համապատասխանության և այլ երանգներ։

ինչպես՝ Հանդիպումը կիրովականցիների հետ անցավ ջերմ մթնոլորտում։ Հրամանատարը տեղանքին համապատասխան որոշում կայացրեց։ Ուղտի շափ համբերություն է պետք։ Գոնե նշմարությանը մոտ կարծիք հայտներ։ Նրազի նման ապրուստ ունի (մամուլ) և այլն։

ՀԱՏԿԱՑՈՒՑԻՉ

Հատկացուցիչը ցույց է տալիս այն առարկան, որին պատկանում, վերաբերում է մի այլ առարկա։ Հատկացուցիչ ունեցող անդամը կոչվում է հատկացյալ։ Միևնույն հատկացուցիչ-հատկացյալը կապակցությունը կարող է դանազան հարաբերություններ արտահայտել։ Այսպես՝ Բաշինջաղյանի նկարը կապակցության հատկացուցիչը կարող է նշանակել՝ Բաշինջաղյանի նկարած նկարը, նրա սեփական նկարը, նրան պատկերող նկարը, նրա ձեռքում եղած նկարը և այլն։ Կամ՝ Մարկոսի աթոռը կարող է նշանակել Մարկոսի պատրաստած աթոռը, նրան պատկանող աթոռը, նրա գնած աթոռը, այն աթոռը, որին նա նստում է և այլն։ Հատկացուցիչն արտահայտվում է տրական (սեռական) հոլովով և պատասխանում է ո՞ւմ, ինչի՞ հարցերին։ Օրինակ՝ «Սմբատը սեղանի դղրոցից հանեց իր եղբոր նամակը» նախադասության առաջին հատկացուցիչը (սեղանի) պատասխանում է ինչի՞ հարցին (ինչի՞ դղրոցից), իսկ երկրորդը (իր) և երրորդը (եղբոր) պատասխանում են ո՞ւմ հարցին (ո՞ւմ եղբոր, ո՞ւմ նամակը)։

Հատկացուցիչի հետ հատկացյալը սովորաբար դրվում է որոշյալ առումով։ Օրինակներ՝ Անչափահաս երեխաների դաստիարակությունը շատ կարևոր գործ է։ Պարույր Սևակի բանաստեղծությունները անգիր գիտեն։ Ավտոգործարանի ղեկավարությունը պիտի լուրջ մտահոգվի արտադրանքի որակի բարձրացմամբ։ Իմ հարցերը զարմացրին նրան։ Տեղամասի պետը արձակուրդ էր գնալու և այլն։

Հատկացուցիչի պաշտոնում հանդես են գալիս՝ ա) գոյականները. օրինակներ՝ Դասկածի վերջին նշույլը պիտի փարատվեր։ Մարթան դուրս եկավ ծնողների տնից արտասուքն աչքերին (ԱՇ)։ Հա բարձրանում էին ոչխարները, հրում միմյանց՝ արնգի ձայնից դյութված (ՎՓ)։ Կնոջ մատնությամբ ամրոց չի առել (ՀԹ)։ Մարդու գործն է միշտ անմահ (ՀԹ)։ Սիրիայի պատվիրակության ղեկավարը շատ գոհ էր (մամուլ)։

բ) Առարկայանիշ (անձ կամ իր) դերանունները սեռական (տրական) հոլովով. օրինակներ՝ Երնեկ նրան, որ իր գործով կապրի անվերջ, անդադար (ՀԹ)։ Էյ, տեր աստված կարուկ անի Թուրը մեր քաջ իշխանի. Նրա շուքը միշտ հանապազ Մեր գլխիցը անպակաս (ՀԹ)։ Միքայե՛լ, ֆո անբարոյականությունը չափ չունի (ԱՇ)։ Մեկն իր զավակներին է սիրում, կնոջը ատում, մյուսի կինն է դավաճանում (ԱՇ)։

Ինչի՞ս է հարկավոր կինը, քանի որ ուրիշների կանայք կան։ Մի ժամից հետո ես կլինեմ ուրիշի կնոջ մոտ (ԱՇ)։ Սմբատը քաղաքավարի, բայց սառը սեղմեց մեկի ու մյուսի ձեռքը և հեռացավ (ԱՇ)։ Ոչ ոքի, ոչ մեկի կամքով չէր առաջնորդվում, բոլորի կարծիքն էլ անտեսում էր։ Սրա գույնն ու համը տարբերվում էր նրա գույնից ու համից (մամուլ)։ Որի՞ թերթերն են նոր։ Այդ ինչի՞ համն էր թթու։ Մեկի ջրերն առատ են ու ջինջ, մյուսինը քիչ ու պղտոր (Սգր)։

գ) Գոյականաբար գործածված (փոխանուն) ածականը. օրինակներ՝ Մեր պարտքն է ասպարեզ հանել հանգուցյալի օրինակելի բարեգործությունը (ԱՇ)։ Արին մի անգամ գովքը սիրուն։ Ո՞վ իմանա՝ որ սիրունի բիրն ես կոխում դու հիմի (ԼԹ)։ Անբախտի օրը սև լինի։ Սուտասանի տունը կրակ ընկավ չհավատացին։ Պառավի մշտական պարապմունքը լվացարարությունն էր և հաց թխելը (ՆԴ)։ Լավի ու բարու համբավը հեռու է գնում (ՆԴ)։ «Զարի վերջը» բալլադ է, իմաստունի խոսք (մամուլ)։

դ) Փոխանուն թվականը. օրինակներ՝ եթե հարյուրի 12 տոկոսը հաշվենք, բոլոր գումարը կլինի 31 ռուբլի (Մ)։ Հարյուրի 60 տոկոսն է առնում (Մ)։ 1915-ի արյունահեղությունը ինչպե՞ս մոռանաս։ 1945-ի ուրախությունն աշխարհով էր (մամուլ)։

ե) Փոխանուն անկախ դերբայները. օրինակներ՝ Ճիշտ խոսողի գդակը ծակ է։ Քնածի ու մեռածի տարբերությունը մեծ չէ։ Վիրավորվածի հետքը բռնեցին, գնացին որոնելու։ Հաղթողների աղաղակը, ընկնողների վայնը, պարտվելու հուսահատ ճիչերը թնդացնում էին օդն ու դաշտը (Մ)։ Հարձակվելու հրաման եղավ (Մ)։

զ) Իբրև ինքն իր անուն, վերադիր ձևով գործածված բառերը. օրինակներ՝ Ա-ի գծերը հավասարաչափ չեն։ Ո-ի, դ-ր-ի ուղղագրությունը լավ պիտի իմանալ։ Որոշել լավ-ի, արագորեն-ի, գեղեցիկ-ի, կուրորեն-ի, հանգստ-ի, արդեն-ի, մուր-ի, հետո-ի, առաջ-ի խոսքիմասային պատկանելությունը (դասագիրք)։

Հատկացուցիչի իմաստային առումները։ Հատկացուցիչն արտահայտում է՝ 1. Սեռացականություն, այսինքն՝ ցույց է տալիս այն առարկան, որը մի բան ունի, մի բանի տեր է, իբրև սեփականություն, հատկություն և այլն։ Օրինակ՝ Մտնում ենք հայր Ալիշանի խուցը։ Նրա խոշորացույց ակնոցի միջով նայում են ինձ երկու փայլուն, մեծ աչքեր (ԱԻ)։ Նրանք վար առան Կամսարյանի իրերը (Մ)։ Մեր սրերը պիտի օրհներ հայոց հայրապետը (Մ)։ Հավաքեցին ընկածների գենքերը, քանդեցին Բեշիրի հարուստ տաղավարը (Մ)։ Հանդերձապահը վերցրեց Գրիշայի վերարկուն (ԱՇ)։ Մարուխանյանի գործարանը Մև քաղաքի կենտրոնում էր (ԱՇ)։ Միաձայն հաստատեցին բոմբերի բորբոքում (ԱՇ)։ Այցելուների համբերությունը քանի գընում սպառվում էր (ԱՇ)։ Բնությանշքեղությունները նվաղում էին

(Մ)։ Լրացնում էին խոշայի դեմքի տգեղությունը (Մ)։ Ձիու սանձը բռնել սպասում էր (ԼԹ)։ Տանտերը Համբոյի հին ծանոթներից էր (ԼԹ)։ Այս կապակցությունների դիմավոր հոմանիշն արտահայտվում է ունենալ բայի դիմավոր ձևերով։ Այսպես՝ Վարսավիրն աշակերտ ունի—վարսավիրի աշակերտը, գետը կամուրջ ունի—գետի կամուրջը, մենք սուր ունենք—մեր սուրը, Գրիշան վերարկու ունի—Գրիշայի վերարկուն, Ալիշանը խուց ուներ—Ալիշանի խուցը, թոքերը բորբոքում ունեն—թոքերի բորբոքում։

2. Ցույց է տալիս այն առարկան, որից ծագում, սերում է մի այլ առարկա՝ հատկացյալը։ Այս դեպքում լրացումը գործողություն կատարողն է։ Ինչպես՝ Կարդացել էի Գրիգոր Զոհրապի գեղեցիկ պատմվածքները (ԱՇ)։ Ալիշանի սքանչելի բանաստեղծությունները մենք անդիր գիտենք (ԱԻ)։ Շշնջյունները վայրկենապես ընդհատվեցին, ինչպես ագռավների կռկռոցը հրացանի ձայնից։ Ճայերի ողբաձայն կռինչն ավելի էր շեշտում այդ վայրի ամայությունը (ԱՇ)։ Աղջիկն սպասում էր հոր վերադարձին։ Նրան դուր չէին գալիս աղջիկների խաղերը։ Աղջիկը փոքրուց լսել է ծնողների դրույցը։ Կատարում էր վարպետների կարգադրությունները։ Լուսինե Զաքարյանի երգը հմայում է լսողներին։ Գատուբանի վճիռը բողոքարկման է ենթակա տասը օրում։ Ֆրանց Վերֆելի որոշ ստեղծագործություններ լույս են սփռում նրա հայրական տան մթնոլորտի վրա (մամուլ)։ Լսվում էր արտի տրոփյունը։

3. Հատկացուցիչ-հատկացյալ կապակցությամբ արտահայտվում է մասի և ամբողջի հարաբերություն։ Այս դեպքում հատկացուցիչը այն խումբը, ազգը, ընտանիքը ամբողջությունն է, որի մի մասը, անդամն է հատկացյալը։ Օրինակ՝ Հայ ժողովրդի արժանի զավակն է նա։ Վայելում են միության անդամի արտոնությունները (մամուլ)։ Ալիմյանների ժառանգները ընդհարման մեջ էին (ԱՇ)։ Ներս մտավ հարևանենց ծառան (Մ)։ Նա ապացուցեց, որ զավակն է Սյունյաց դյուցազնորդի նախարարաց (Մ)։ Հողարկավորների մեծ մասը ցրվեց (ԱՇ)։ Արտաշատի ջրանցքը դրավել էր հայ քաջերի երկու ջոկատ (Մ)։ Սկսեց դիտել ծովակի սիրուն մակերեսը։ Կամսարյանի գլխին կարծես ջուր մաղեցին (Մ)։ Կարճ շապիկի փեշը ֆոֆոաքնում էր օդի մեջ (ՆԴ)։ Քարը շեշտակի գնաց կպավ կնոջ մեջքին (ՆԴ)։ Տանրգիք և հարևանները եկան մինչև գյուղի ծերը ու ճամփու դրին (ԼԹ)։ Միջանցքի կիսաբաց դռնից տեսավ Կարայի արձակ մազերը։ Երևում էին ներքնազգեստի մանրամասները (ՁԽ)։ Նստած էր խնամոնց Արուսը։ Նա մեր դասարանի խելոքներից է (Սգր)։

Միևնույն դռան բռնակ, լուսամուտի ապակի, մարդու ձեռք, գործարանի բակ, ինքնաթիռի ղեկ կապակցություններում սեռական հոլովով լրացումը կարող է դիտվել թե իբրև որոշիչ և թե իբրև հատկա-

ցուցիչ։ Եթե լուսամուտի ապակի, մարդու ձեռք, գործարանի բակ, ինֆինաթիի ղեկ *նշանակում է* ապակու, *ձեռքի, բակի, ղեկի տեսակ։ այդ դեպքում որոշիչ է, կարող է նույնիսկ արտահայտվել հարաբերական ածականով՝ մարդկային ձեռք, գործարանային բակ, ինքնաթիռային ղեկ։ Իսկ եթե տեսակի անուն չէ, այդ դեպքում հատկացուցիչ է, ինչպես՝ Մեր լուսամուտի ապակին կոտրվեց, Այդ գործարանի բակը կանաչազարդ է, Այս մարդու ձեռքը չի աշխատում և այլն։*

Նույնը վերաբերում է, ասենք, ոչխարի հոտ, գայլերի բոլուկ, ձիերի երամակ և այլն կապակցություններին, որոնց մասին խոսվում է ներքևում։ Դա գայլերի ոհմակի (բոլուկի) նման էր։ Ոչխարի հոտ տեսե՞լ ես։ Նա ձիերի երամակ չէր տեսել։ *Այս օրինակներում սեռականով լրացումները տեսակի անուններ են, ուստի որոշիչներ են, իսկ՝* Ոչխարի հոտը *ֆշեց* սարերը։ Ոռնում էր գայլերի ոհմակը (բոլուկը)։ Սովխոզի ունեցած ձիերի երամակը դաշտում է *կապակցություններում սեռականով դրված բառերը հատկացուցիչներ են։*

Հատկացյալը կարող է լինել փոխանուն։ Օրինակ՝ — Տեր իշխան, ի՞նչ կարող է անել մեր հարյուրը։ — Մեր մեկը քսան հագարացու ալիտի թաղի։ Մեր երկուսն *ամեն ինչ արեց (Մ)։* Սոխի բաղցը *կա՞։* Գինիների ապիտակը *լավ է։ Հիմա* ձմեռուկի դեղինը *քիչ է հանդիպում։* Ձկների *իշխանը չի բազմանում։* Խաղողի խակը *չի ուտվի և այլն։*

Երբեմն հատկացուցիչն ու հատկացյալը միևնույն ածականի փոխանվանական կիրառություններ են։ Ինչպես՝ լավերի լավը, սիրունների սիրունը, դաժանների դաժանը, խելոքների խելոքը, վատերի վատը, կարմիրների կարմիրը և այլն։

4. Հատկացուցիչն այն առարկան է, որից բաղկացած է հատկացյալը, ինչպես՝ Ծաղիկների *փունջը տվեց ընկերուհուն։* Թատերասերների *մի խումբը աջ էր գնում, մյուսը՝ ձախ։* Բանակատեղում մնում էին *Աբաս Բագավորի* զինվորների *մի քանի* վաշտ *(Մ)։ Դժվար էր թեքել* ձիերի *երամակի ուղղությունը (մամ.)։ Այնպես էլ* աստղերի *բույլը, թռչունների երամը, գայլերի ոհմակը, ոչխարի հոտը և այլն։*

5. Հատկացուցիչն այն առարկան է, որին վերաբերում է հատկացյալը։ Օրինակ՝ Անշեղորեն կատարել փողոցային երթևեկության *կանոնները։* Պատերազմի *երգերը խրոխտ են լինում ու մարտական։ Հերոսական է հայ ժողովրդի պատմությունը։ Լենինի մահվան լուրը տարածվեց կայծակի արագությամբ և այլն։ Սրանց հոմանիշն արտահայտվում է* մասին, *վերաբերյալ կապերով, ինչպես, ուղղագրության կանոնները—ուղղագրության մասին (վերաբերյալ) կանոնները, պատերազմի երգերը—պատերազմի մասին երգերը, սիրո երգերը—սիրո մասին երգերը և այլն, ուստի և կարող են գիտակցվել նաև իբրև որոշիչներ։*

Երբեմն հատկացուցիչն ունենում է ուղիղ խնդրի իմաստ, ինչպես՝

Գինու *արտահանումը Հայաստանի համար խոշոր տնտեսական նշանակություն ունի։ Բնությունը մեզնից պահանջում է ժամանակին ու անթերի կատարել հողի պարարտացումը, ծառերի բուժումը, այգու էտումը, ցորենի հունձը։ Մեր խնդիրն է ապահովել բեռների և ուղևորների ժամանակին փոխադրումը։ Այս ուռուցումների կենսագործման համար հարկավոր են նոր միջոցներ։ Դանդաղում է նոր շենքի կառուցումը (մամուլ)։ Սրանց հոմանիշներն են գինին արտահանելը, հողը պարարտացնելը, ծառերը բուժելը, այգին էտելը, բեռներն ու ուղևորներին փոխադրելը, շենք կառուցելը։*

Հաճախ դժվար է որոշել, թե տրականով (սեռականով) արտահայտված լրացումը հատկացուցի՞չ է, թե՞ որոշիչ։ Այս դեպքում պետք է դիմել հարցին։ Խոհանոցի սեղանին անձեռնոցիկով ծածկվածը միրգ էր։ Դրանք մեր թաղի աղանդավորականներն են։ Իրար հաջորդելին գիշերվա ու առավոտվա նորությունները։ Ամառվա փուշը ձմեռվա նուշն է (Ղխ)։ Այս օրինակներում տրականով (սեռական) արտահայտված լրացումները ցույց են տալիս լրացյալի տեղը, ժամանակը, աշխատանքի բնույթը (երկաթի մանանգետ, դազգահի վարպետ և այլն) և պատասխանում են ո՞ր, ի՞նչ հարցերին (ի՞նչ նորություններ, ո՞ր փուշը, ո՞ր դասերին, ի՞նչ (ո՞ր) ուսուցման, ո՞ր սեղանին) և այլն։ Իսկ կոշկի լեզվակը, մազերի գույնը, հիմնարկի տնօրենը, դռան բրդնակը, մեքենայի անիվը, տեատրակի բերքը կապակցություններում լրացումները պատասխանում են ինչի՞ հարցերին և հատկացուցիչ են։

Տրականով (սեռական) լրացումը որոշիչ լինելու դեպքում, ինչպես ասվեց, հաճախ կարելի է փոխարինել հարաբերական ածականով, որպես հոմանիշ, ինչպես՝ դպրոցի կյանք—դպրոցական կյանք, խոհանոցի սեղան—խոհանոցային սեղան, գիշերվա նորություն—գիշերային նորություն, աշակերտի տետր—աշակերտական տետր, մոր սերը—մայրական սերը, թատրոնի կյանքում—թատրոնական կյանքում, հոր խրնամք—հայրական խնամք և այլն։ Սա էլ այս հոլովման գործառույթը որոշելու միջոցներից մեկն է։

ԲԱՑԱՀԱՅՏԻՉ

Ժամանակակից հայերենի քերականագիտության մեջ բացահայտիչը մի միասնական բնութագիր չունի, թեև միշտ համարվել է անվանական լրացում։ Անցյալի քերականները (Ա. Այտընյան, Ս. Պալասանյան) բացահայտիչ են համարել հատուկ անուն որոշիչը։ Այսօր ընդունված է Մ. Աբեղյանի կարծիքը. «Բացահայտիչ ասվում են այն գոյական որոշիչները, որոնք դրվում են անվան վրա ետևից՝ այն հոլովով, որով դրված է բացահայտյալը»[47]։ Մ. Աբեղյանը նշում է նաև

[47] Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն, էջ 393։*

մասնական բացահայտիչը՝ իբրև, որպես, ինչպես կապերով կապակցվող։ Գ. Ջահուկյանը ընդունում է բացահայտիչի երեք տեսակ՝ սովորական (Տիգրան թագավորը, Տիգրան թագավորի), տրոհված (հայոց թագավորը՝ Տիգրանը, հայոց թագավորի՝ Տիգրանի) և մասնական (ես, որպես դպրոցի ուսուցիչ, որպես դպրոցի ուսուցիչ, ես)։ Բացահայտական կապակցության եզրերը՝ և՛ բացահայտյալը, և՛ բացահայտիչը նշանակում են միևնույն առարկան[48]։ Վերջին շրջանում, սակայն, որոշ քերականներ բացահայտիչը բացահայտյալի քերականական լրացումը չեն համարում, թեև նշում են նրանց իմաստային կապը[49]։

Բնութագրական է, որ բացահայտիչ-բացահայտյալ կապակցությունը հայ քերականները առհասարակ դուրս են թողնում բառակապակցությունների համակարգից, չնայած բացահայտիչը համարում են գոյականի լրացում։ Դա պատճառաբանում են նրանով, որ բացահայտիչը տրոհվող լրացում է, իսկ տրոհվող լրացումները ըստ այդ կարծիքի բառակապակցություն չեն կազմում[50]։ Ուրեմն՝ դիրեկտորի հրամանը կառույցը բառակապակցություն է, իսկ Դիրեկտորի՝ դպրոցի մասին հրամանը կառույցում դիրեկտորի հրամանը բառակապակցություն չէ, որովհետև տրոհված են իրարից բութով։ Կամ՝ Սենյակի կենտրոնում դրված էր մի սեղան՝ ծածկված մահուր սփռոցով (ԱՇ) նախադասության ընդգծված կապակցությունը բառակապակցություն չէ, իսկ ծածկված սեղանը բառակապակցություն է։ Սա ընդունելի չէ, որովհետև տրոհումը չի խանգարում նրանց՝ լրացում-լրացյալ լինելուն։ Երկու դեպքում էլ առկա է լրացում-լրացյալի կապակցություն, ստորադասական հարաբերություն։ Ուրեմն բառակապակցությունները բնութագրողները բացահայտիչ-բացահայտյալ կապակցությունը, ստորադասական համարելով հանդերձ, բառակապակցություն չեն համարում։ Այսպիսով, մի կողմից՝ բացահայտիչ-բացահայտյալ կապակցությունը բառակապակցություններից դուրս են թողնում՝ նրանում ըստ էության մերժելով լրացում-լրացյալի հարաբերությունը, մյուս կողմից՝ բացահայտիչը համարում են գոյականական անդամի լրացում։ Ինչպես երևում է, հակասությունն ակնառու է։ Եթե բացահայտիչը բացահայտյալի լրացումն է, նրանք բառակապակցություն են կազմում, իսկ եթե բառակապակցություն չեն կազմում, նշանակում է անտեսվում է նրանց միջև ստորադասական հարաբերությունը, որն ըստ երևույթին ավելի ճիշտ է։

Այս երևույթի պատճառն այն է, որ բացահայտիչ-բացահայտյալ կապակցությունը մի յուրատեսակ կառույց է և տարբերվում է անվանական (որոշչային) կառույցից։ Բացահայտիչը բացահայտյալի հետ այնպիսի հարաբերության մեջ չէ, ինչպիսին ունի որոշիչը որոշյալի հետ, հատկացուցիչը՝ հատկացյալի հետ։ Այս իմաստով հիշյալ կապակցությունը դուրս է մնում բառակապակցությունից։

Բացահայտիչը որոշ չափով անկախ է բացահայտյալից, որի պատճառով տրոհվում է նրանից։ Պատահական չէ, որ հայերենում անձնանիշ դերանունները (ես, դու, նա, սա, ով և այլն) թեև լրացում՝ որոշիչ, հատկացուցիչ չեն առնում (եթե բարդության երկրորդական նախադասությունը լրացնում է այդ դերանուններին, անպայման բացահայտիչի գործառույթն ունի), բայց բացահայտիչ առնում են։ Եթե այդ դերանունները լրացում չեն ընդունում, լրացյալ չեն լինում, այս դեպքում էլ լրացյալ չպիտի լինեն, բացահայտիչը նրանց լրացումը չպիտի լինի։ Բացահայտիչը իմաստով կապված լինելով բացահայտյալին, շարահյուսորեն որոշ անկախություն ունի, դրանով էլ տարբերվում է որոշչից, եթե նույնիսկ հաշվի չառնենք բացահայտչի քերականական մյուս առանձնահատկությունները։

Այսպիսով, բացահայտիչ-բացահայտյալը լինելով մի առանձնահատուկ կառույց՝ առանձնանում է անվանական լրացումների համակարգից։

Բացահայտիչը նախադասության առարկա ցույց տվող անդամի կրկնությունն է մի այլ բառով, որը նույնպես առարկայի անուն է, ուստի բացահայտչի պաշտոն են կատարում գոյականները, գոյականաբար առնված այլ բառեր և առարկայանիշ դերանունները։ Օրինակ՝ Նրանցից մեկը՝ յոթ-ութ տարեկան Ալեն, քարերաբար էր թռչկոտում (ՄԳ)։ Նա՝ այդ խոշոր Այվազը, քաղաքի բաց մասում լիճ էր ստեղծել (ԱԲ)։ Ավագը՝ դաշտերի անխոնջ ջրվորը, հենվել էր բահին։ Իմ հոբելյարը՝ մեր ազգի բանիմացն ու գործունյան, ծերացել էր։ Սև ագռավը՝ մեր բակի ծառին ամեն առավոտ կռկռացողը, անհանգստացնում էր մորս։ Պառավը ձեռ չէր քաշում թթենուց՝ այդ չորացած, բունը փտած ծառից։ Հարևանիս՝ օպերայում երգողի ձայնը լսելի էր օրվա բոլոր ժամերին։ Ընկերուհուս փոքր տղան՝ ծառի տակ այդպես մուշ-մուշ քնած, անմեղություն էր։ Մենք բոլորս՝ ես, դու, Արան, Սեդան պիտի ծառ տնկենք։ Մեզ երեքիս՝ ինձ, քեզ, նրան են ընտրել։

Բացահայտիչն ու բացահայտյալը միևնույն առարկան են։ Այսպիսով՝ բացահայտիչը բացահայտյալի կրկնությունն է մի այլ բառով կամ բառակապակցությամբ։ Օրինակ՝ Այնտեղ այժմ բարձրանում է Երևանի՝ Սովետական Հայաստանի մայրաքաղաքի կենտրոնական գլխատեսիլ հանրախանութը (ԳՄ)։ Այստեղ Երևանի բացահայտյալը և մայրաքաղաքի բացահայտիչը միևնույն առարկան են նշանակում միևնույն առարկայի՝ քաղաքի անվանումներն են։ Նույնպես և՝ Լենինա-

[48] Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 558։

[49] Գ. Պողոսյան, Հայոց լեզու, 1976, Երևան, էջ 221։ Բանբեր Երևանի համալսարանի, 1979 թ., № 1, Ա. Խաչատրյանի հոդվածը։

[50] Ս. Գ. Աբրահամյան, Վ. Դ. Առաքելյան, Վ. Ս. Քոսյան, Հայոց լեզու, հ. Բ, Երևան, 1975, էջ 4։

կանի հին թաղերից մեկում՝ Զորի բողազում, որն ամենայն իրավամբ դեռ կարող էր կրել Գյումրի անունը, իր փոքրիկ տան մեջ մեռնում էր ազգությունների հռչակավոր վարպետ ուստա Մկրտիչը (ՄԱ) նախագասության ընդգծված բացահայտիչն ու բացահայտյալը նույն տեղն են նշանակում։

Բացահայտչի իմաստային առումները։ *Բացահայտյալն արտահայտում է ընդհանուրը, իսկ բացահայտիչը կոնկրետացնում, մասնավորեցնում է այդ ընդհանուրը։ Օրինակ՝ Դրանք մեծ մասամբ* ոչինչ բաներ *էին՝* սեղանի կամ բուխարու վրա դնելիք զարդարանքներ, յուրօրինակ ձեի ժամացույցներ, ալբոմներ, ծաղկամաններ *(ՆԴ)։ Ապա տալիս էր համեստ* ընթրիք՝ պանիր, հաց, տաք կերակուր, հանդիպ բերած կանաչեղեն, *երբեմն էլ* հարեանի ուղարկած մի ագիզ կերակուր։ *Երկու բեռ ցորենի դիմաց տվեց մի* ոչինչ բան՝ մի բանի արշին շիր, պառավի համար հագավացու, երկու զրվանքա շաքար, մի բանի բոնոքի *(ԱԲ)։ Այս դեպքում բացահայտյալը՝ ա) հոգնակի թվով գոյական է, իսկ բացահայտիչը թվարկում է նրանում եղած առարկաները։ Օրինակ՝ Դրանք հորաքրոջ* աղջիկներն *են՝* Աշիկը, Էնգելինան, Նելլին *(ՀԶՀ)։ Պատի մեջ պարտկել էր ամենաթանկագին մանր-մունը* իրեղենները՝ ոսկեղենն *ու* արծաթեղենը *(ՆԴ)։ Կյորեսն ուներ իր* սուրբերը՝ Կանաչ եկեղեցին, սուրբ Մարտիրոսը *(ԱԲ)։ Այդ դավաճանները հայոց երկու ամենահզոր նախարարությունների* ներկայացուցիչներն *էին՝* Վահան Մամիկոնյանն ու Մեռուժան Արծրունին *(Ր)։ Թվական լրացում ունեցող գոյական է։ Օրինակ՝ Քաղաքն ունի* երկու անուն՝ Գարիս *և* Կյորես։ Երեք *բաղ ունի՝* Հումբաթի ձորը, Միջին մանյան *և* Գյունեյ բաղը։ *Ըստ այդ ցուցակի՝ նավի վրա ութ մարդ կար՝* ինքը, մայրը, կինը, չորս երեխան *և* Տիգրանուհին։ *Կային* երեք Ներսես բեյ՝ Հաստ Ներսես բեյ, խուրդա կամ Կարճիկ Ներսես բեյ *և* Գրիգորավի Ներսես բեյ *(ԱԲ)։ Շրջանից բաժանվեցին* երեք հոգի՝ Զուգրովը, Թասուլը *և* Կարապետը *(ԱՇ)։ Արշակն ունեցավ յուր դեմ* երեք *հզոր* թշնամիներ՝ հույները, պարսիկը *և յուր* նախարարները։ *Տրդատ մեծի* երեք հաջորդները՝ Խոսրով Բ, Տիգրան Բ, Արշակ Բ *ավելի առաջ տարան նրա սիրած գործը (Ր)։ գ) Բացահայտյալն արտահայտում է ընդհանրապես տեղ, ժամանակ, իսկ բացահայտիչն այն կոնկրետացնում է։ Քերականներն այն կոչում են մասնավորեցնող պարագայական բացահայտիչ*[51]*։ Օրինակ՝ Գետի մյուս* ափին՝ այգեստաններ մեջ *փոքրիկ գունավոր կտուրներով քաղաքի տներն էին։ Իսկ* խորքում՝ կապույտ մրշուշի մեջ *հազիվ նշմարելի երևում էր զույգ Արարատը։ Ուղտերը շո-*

[51] *Ս. Գ. Արբրահամյանն ընդունում է բացահայտյալի երեք տեսակ՝ բուն բացահայտիչ, մասնական և մասնավորող պարագայական (տե՛ս հեղինակի «Ժամանակակից հայերենի քերականություն», 1975, էջ 287)։*

քում են Հյումբաթի ձորի ճրագարակում՝ *փոքրիկ* կրպակների առաջ։ Տան առաջ՝ *դարբասի քարերի* ներքում *բուսել էր խոտը։ Մի քիչ* ներքև՝ *ծեր* ժայռերի տակ *Հյումբաթն է (ԱԲ)։ Նրանցից մեկի ծայրը հասավ* անկյունում՝ *մարմարյա* վառարանի *վրա դրված բրոնզե ժամացույցին (ԱՇ)։ Նստեց հենց* այնտեղ՝ դռան *մոտ դրված աթոռի վրա (ՆԴ)։ Նա Փարիզում է ապրում՝* հրոջ *մոտ։ Գնացել է* Կիրովական՝ *իրենց* տուն։ *Սկիզբն* այսօր, ժամը տասնիններին։ Երեկ, ուշ երեկոյան, *ժամը մոտ* տասնմեկին *հանդիպեցի նրան։* Եկող տարի, հունիսի 20-ին *նշվելու է նրա ծննդյան վաթսունամյակը (մամուլ)։* 1906 թ. ամառ, հունիսին *գնացի* Դսեղ գյուղը, Թումանյանի մոտ *(ԱԻ)։*

Բացահայտյալն արտահայտում է կոնկրետը, մասնակիները, իսկ բացահայտիչն այդ մասնակիների ընդհանրացումն է։ Օրինակ՝ Ամենից առաջ քաղաքային դուման, բանկը, կլուբը, *ակցիոներական* ընկերությունները—*այդ բոլորը հօդս ցնդեցին (ՆԴ)։ Կայարան էին եկել ճանապարհելու* հայրը, մայրը, քույրը, Մայրանուշը, Սեդրակը՝ *բոլոր* մոտիկները։ *Նա կորցրել էր* աշխատանք, պատիվ, փառք՝ ամենը, *ինչ ուներ երեկ (մամուլ)։*

Բացահայտյալը հասարակ անուն է, իսկ բացահայտիչը՝ հատուկ, այսինքն բացահայտյալի ցույց տված առարկայի անունն է։ Օրինակ՝ Հայրը՝ Հակոբ աղան *նույնպես զոհվում է սիրահար տենդի (ՎՓ)։ Երկրորդ* անունը՝ Կորիս *տալիս էր միայն* մի մարդ՝ *դեղավաճառ* Քյալլա Մատուրը։ *Բարդու* ոդին՝ Հաբուլը *հասել էր այնքան, որ օգնում էր հորը (ԱԲ)։ Նրան հետևեց* աղջիկը՝ *տիկին* Մարթա Մարութխանյանը։ *Դա հանգուցյալի* փեսան *էր, Մարթայի* ամուսինը, *քաղաքում բավական* ակտիվ *գործարարներ և միևնույն ժամանակ սպեկուլյանտ* Խաչիկ Մարութխանյանը *(ԱՇ)։*

Բացահայտյալը հատուկ անուն է, իսկ բացահայտիչը՝ հասարակ։ Այս դեպքում բացահայտիչը պարզաբանում է բացահայտյալի զբաղմունքը, պաշտոնը, որպիսությունը։ Օրինակ՝ Այդպիսին էր, օրինակ, Գավլի բեյ Օրբելյանը՝ *«Մշակ» թերթի հավատարիմ* բաժանորդը։ *Նրան ամենից շատ մաշում էր* Գորիսը՝ *վաճառականների ու մեծատունների* քաղաքը։ Յախշիե՝ *Դրմբոնի* նախագահը, *գործի է անցել (ԱԲ)։*

Բացահայտիչ–բացահայտյալ կառույցի բերականական առանձնահատկությունները։ *Բացահայտիչը միշտ դրվում է բացահայտյալից հետո։ Սա հիշյալ կառույցի կառուցվածքային առանձնահատկությունն է։ Այսպես՝ «Մեծ լոռեցին՝ Հովհաննես Թումանյանը խաղաղության դրոշակակիր էր»։ Այստեղ* Մեծ լոռեցին *բացահայտյալին հաջորդել է* Հովհաննես Թումանյանը *բացահայտիչը։ Վերցնենք մի այլ օրինակ՝ Հունիսի 23-ին* Ֆ. Միտերանը՝ *Ֆրանսիական հանրապետության* պրեզիդենտը, *Մոսկվայից մեկնեց Վոլգոգրադ (մամուլ)։ Այստեղ էլ բացահայտյալին հաջորդել է բացահայտիչը։ Բացահայտյալի տեղափոխությունից ի-*

մասի փոփոխություն չի լինում, բայց կատարվում է գործառական (ֆունկցիոնալ) փոփոխություն՝ բացահայտիչը փոխվում է բացահայտյալի, իսկ բացահայտյալը՝ բացահայտչի։ Օրինակ՝ Նա սեփականել էր ամբողջ Արարատը՝ երկրի սիրտը։ Այս օրինակում Արարատը բացահայտյալ է, երկրի սիրտը՝ բացահայտիչ։ Եթե տեղափոխություն կատարենք (երկրի սիրտը՝ Արարատը) Արարատը կդառնա բացահայտիչ, իսկ երկրի սիրտը՝ բացահայտյալ, թեև երկու դեպքում էլ կառույցի բաղադրիչները միևնույն առարկան են նշանակում։

Բացահայտիչ-բացահայտյալ կառույցի քերականական մյուս առանձնահատկությունը կապակցման եղանակն է։ Բացահայտիչն արտահայտվում է նույն դեմքով ու թվով, ինչով՝ բացահայտյալը։ Օրինակ՝ «Մենք՝ հինգերորդ դասարանցիներս մեկ տոննա մետաղի ջարդոն ենք հավաքել»։ Այստեղ բացահայտյալը (մենք) առաջին դեմքով ու հոգնակի թվով է արտահայտված, բացահայտիչը (դասարանցիներս) նույնպես առաջին դեմքով ու հոգնակի թվով է։ Իսկ Դուք՝ մեր դաշտերը մշակողներդ, սրտացավ պիտի լինեք յուրաքանչյուր թփի համար (մամուլ) նախադասության բացահայտիչն ու բացահայտյալը դրված են միևնույն երկրորդ դեմքով, հոգնակի թվով։ Ես՝ սովետական քաղաքացիս, գինվորս, երդվում եմ (մամուլ) օրինակում բացահայտիչն ու բացահայտյալն արտահայտված են միևնույն եղակի թվով, առաջին դեմքով։ Քեզ՝ անվանի բրիգադիրիդ են նայում կոլտնտեսականները (մամուլ) նախադասության բացահայտիչն ու բացահայտյալն արտահայտված են միևնույն երկրորդ դեմքով, եղակի թվով։ Եթե փոխենք բացահայտյալի դեմքը կամ թիվը, կփոխվի նաև բացահայտիչի դեմքն ու թիվը։ Ինչպես՝ ես՝ ուսանողս, մենք՝ ուսանողներս և այլն։

Ինչպես երևում է վերը բերված օրինակներից, եթե բացահայտյալն արտահայտված է անձնական դերանունով, գոյականով արտահայտված բացահայտիչը նրան համաձայնում է դիմորոշ հոդի միջոցով, ինչպես՝ մենք՝ ուսուցիչներս, ես՝ բանվորս, դուք՝ բանվորներդ և այլն։

Որոշյալ առումով բացահայտյալի հետ բացահայտիչը սովորաբար որոշյալ առումով է լինում։ Օրինակ՝ Նրանց կողքին քնել էր Հարությը՝ նեղ օրերի ապավենը միակ։ Այդպես էր խոսում Օլինկան՝ Մատվեյ Մատվեյիչի կինը (ԱԲ)։ Մայրաքաղաքի կինոդահլիճներում ցուցադրում են «Պատվի համար» կինոնկարը՝ Շիրվանզադեի լավագույն ստեղծագործության էկրանացումը (մամուլ) և այլն։

Հիշտ է, բացահայտիչը դրվում է այն հոլովով, որով դրված է բացահայտյալը, բայց դա ոչ թե համաձայնության հետևանք է, այլ այն բանի, որ երկուսն էլ, միևնույն առարկայի անվանումը լինելով, միևնույն հարաբերության մեջ են իրենց համար գերադաս մի այլ անդամի հետ և առնում են այդ անդամի թելադրած քերականական

ձևը (հոլովը), ուստի դա խնդրառական եղանակ է, կառավարում։ Օրինակ՝ «Այդ մարգիկից՝ մրցույթներում միշտ հաղթող Արայից դեռ ոչ ոք առաջ չի անցել» (մամուլ) նախադասության մարգիկից և Արայից բացահայտյալն ու բացահայտիչը դրված են բացառական հոլովով առաջ չի անցել բայ-ստորոգյալի պահանջով, իբրև նրա խնդիր։ Այդպես էլ՝ Նա մոտեցավ իր սիրելի ուսուցչին՝ արդեն թոշակի անցած Վարդուհուն (Սգր) նախադասության ուսուցչին և Վարդուհուն բառերը դրված են տրական հոլովով մոտեցավ բայ-ստորոգյալի պահանջով։ Բացահայտիչը բացահայտյալի կրկնությունն է մի ուրիշ բառով, ասում է Մ. Աբեղյանը, այնպես որ լրացումն իր լրացյալին ստորադասվելով հանդերձ՝ խոսքի մեջ մի տեսակ նրան հավասար պաշտոն է վարում կամ թե լծորդվում, զուգորդվում է նրան և իր հոլովական ձևով կախված չէ նրանից։ Բերելով «Անուշ՝ Բագրատունյաց մայրաքաղաքից հեռացա» նախադասությունը՝ Մ. Աբեղյանը բացատրում է, որ «բացահայտչի բացառական հոլովը կախված է իսկապես ոչ թե բացահայտյալից, այլ՝ «հեռացա» բայի նշանակությունից» («Տեսություն», 398)։ Բացահայտիչն ու բացահայտյալը հավասարաչափ անդամներ են, նրանց կապակցությունը Մ. Աբեղյանն անվանում է ներունակություն, այսինքն յուրաքանչյուր բացահայտյալ իր մեջ ունի բացահայտիչի գաղափարը, ինչպես որ ստորոգյալը, հանձին բայի դեմքի, ունի ենթակայի գաղափարը։

Հաճախ բացահայտիչը բացահայտյալին կապվում է այսինքն, այն է, այդ նույն, այսպես ասած բառերով ու բառակապակցություններով։ Օրինակ՝ Խեղճ մարդ, նա չկամեցավ հիսուն տարվա արյուն-քրտինքով վաստակածը համուն տալ, այսինքն ձգել երկրորդ որդու՝ Միխայելի ձեռքը։ Իսկ անշարժ գույքը, այն է՝ նավթային հանքերը, տները և գործարանները, այսինքն նրանց արժողությունը կամ եկամուտը, հավասարապես բաժանվում է երեք տեղ։ Իմ բաղձանքն էր, որ հասնեմ Երիզորի ատաֆեանին, այսինքն մագազինի դրամարկղը։ Անունս դրել էին «Յոթդա խաչի», այսինքն արագընթաց խաչի (ԱՇ)։ Դրանք՝ այդ ուռմերը պարարտ ակոսների մեջ են ընկնում (ՀրՄ)։ Այդ կենտրոնն ուներ իր կենտրոնը, այսպես ասած, քաղաքային միջուկը։ Մատվեյ Մատվեյիչը, նույն ինքը Մաթևոս բեյը, չէր կարող կտրել Գյուրջի Օբու այդ լեղուն (ԱԲ)։ Մնացել էր այդ նույն՝ տասներորդ դասարանում (ՀրՀ)։ Պատասխանող կողմը՝ նույն ինքը Ս. Հ. Ոբյանը, հայտարարեց (մամուլ)։

3. Երբեմն բացահայտյալի իմաստն արտահայտվում է դիմորոշ հոդով, որը դրված է լինում բացահայտչի վրա։ Օրինակ՝ Լավատեսներդ վախկոտ եք (ՆԿ)։ Դեղներս գաղափարական պայքարում պիտի առաջին գծում լինենք։ Այս երկու բրիգադիրներդ պլաններդ չեք կատարել և դրա համար ինքներդ եք մեղավոր (մամուլ)։

4. Կապակցման միջոցներից է բացահայտյալի կամ կապի կրկնությունը։ Օրինակ՝ Գորիսը կենտրոն էր, վարչական կենտրոն, ռազմական կենտրոն։ Մի սերմն էլ՝ մի հատիկ սերմը բավական է (ԱԲ)։ Ինչ-որ թախիծ էր զգում՝ անորոշ, ծանր թախիծ։ Թափանցեց դեպի ներս՝ դեպի սեփական հոգու խորը (ԱՇ)։ Այս կրկնության դեպքում, ինչպես երևում է օրինակներից, բացահայտիչ համարված մասը լրացուցիչ որոշիչներով կամ այլ լրացումներով ավելի ստույգ է դարձնում, կոնկրետացնում է բացահայտյալի իմաստը, ինչպես՝ Այդ գետը՝ լեռնային աղմկոտ գետը, ո՞ւր մնաց (ՀՔ)։

Կառուցվածքային տեսակետից բացահայտիչը կարող է ա) արտահայտված լինել մեկ բառով։ Օրինակ՝ Հարևանս՝ երվանդը ինժեներ է։ Պավլի մայրը՝ Պելագեյա Նիլովնան նույնպես հեղափոխական էր։ Այդ նա՝ Միքայելն էր խոսողը (մամուլ)։ բ) Ունենալ լրացում. օրինակ՝ Հարևանս՝ խելոք ու բանիմաց ինժեներ Երվանդը, լավ մարդ է։ Պարույր Սևակը՝ մեր օրերի ճանճաբեղ բանաստեղծը, անմահ կմնա։ Կարող է ունենալ նույնիսկ երկրորդական նախադասությամբ արտահայտված լրացում։ Օրինակ՝ Մյուս կողմը բուն Կյորեսն էր և նրա միջնաբերդը՝ Շենը և նրա նշանավոր պարագլուխները՝ Ղարրենի Աղալոն, որ բեռնած էշը գլանից բարձրացնում էր, Պարան-Պարան Ավանեսը, որի ձայնը հասնում էր մինչև Դրենգանի նորը, Գյուրջի Օբին, որի լեզվից վախենում էր մինչև անգամ քաղաքալուխ Մաթևոս բեյը։ Երբեմն պատոնավորը, այսինքն Գորիս քաղաքացիք՝ Եփրատ Երեմը, Անիկա այոտան, տիկին Օլինկան, Կիզիկով Իսահակը հանգերձ ընտանյոք, Սահակ Սերգեյիչը՝ թագավորական ուսումնարանի տեսուչը, Ավագիմով եղբայրները, Ճաղային Մոզրովը՝ արծաթե մեդալներով, Կարճլիկ Կեռ բեյի աղջիկները, նավթավաճառ Գյորգին, լապարանց տունը՝ իրենց նշանավոր աղջիկներով, որոնցից մեկը՝ Հերսելյան ամենաշքեղաշուն էր (ԱԲ)։ Կարճ ժամանակ նա՝ ցածրահասակ, մեծ, մաղտատ գլխով, խոշոր ակնոցով Տիգրան Տիրոնին, մեզ հայ գրականության դասեր է տվել (ՀրՀ)։

գ) Ինչպես երևում է վերը բերված օրինակներից, բացահայտիչն էլ կարող է ունենալ բացահայտիչ լրացում, այսինքն լինել բացահայտյալ։ Օրինակ՝ Խմրի հետ գալիս էր իմբ՝ նորին մեծ բանաստեղծը՝ վարպետը (ՀրՀ)։ Վարդանն անմիջապես պատկերացրեց Մարինոշկային՝ այդ լիզայի դստերը՝ այդ հաղիվ վեցամյա կրակի կտոր աղջնակին, և անմիջապես հիշեց իր զավակներին (Սգր)։ Զհաշտվեցան երկու նախարարները միայն՝ Մերուժան Արծրունին և Վահան Մամիկոնյանը՝ Սամվելի հայրը։ Ամրոցում մնացել էին երկու եղբոր որդիները միայն՝ Սամվելը՝ Վահանի որդին և Մուշեղը՝ Վասակի որդին (Ր)։

դ) Բացահայտիչը կարող է արտահայտվել անորոշ դերբայով։ Ինչպես՝ Հարուտն զգում էր մի անզուսպ ցանկություն՝ տեսնել այդ բոլորը (ԱԲ)։ Նրա հայացքում նկատվում էր անդառնալի ճրամանը՝ շկրկրնել տալ այլևս միևնույն պատվերը (Մ)։ Հոր խոժոռած դեմքի վրա որդին կարդում էր կյանքի մի որոշ անխախտելի նպատակ՝ վաստակել ու վաստակել զավակների ապահովության համար։ Վարդանը տանջող մի ցանկություն զգաց՝ այսպես շարունակ տեսնել այդ աղջիկան (Սգր)։ Երկար ժամանակ նրան տանջում էր այդ միտքը՝ բաժանվել կնոջից։ ե) Բացահայտիչ կարող է լինել ածականը իր բուն իմաստով։ Օրինակ՝ Նախարարների նկատմամբ ձեռք առավ երկու՝ խիստ և մեղմ միջոցներ (Ր)։ Ամենուրեք գույնզգույն ծաղիկներ էին՝ դեղին, կարմիր, սպիտակ, կապույտ։ Տարբեր էին նրանց բնավորությունները և ներհակ՝ համբերատար և անհամբեր, աշխատասեր և ծույլ, շար ու բարի։ Ինչ լավն էր՝ խելոք, բարի, համբերատար, գեղեցիկ (Սգր)։

Երբեմն բացահայտյալի ու բացահայտչի միջև ստորոգյալ է ընկած լինում։ Այս դեպքում բացահայտիչը ընկնում է նախադասության կամ վերջում, կամ մեջտեղը։ Օրինակ՝ Ոչինչ եկեղեցական չկար այդ ուխտավայրում՝ ո՛չ գիր, ո՛չ խաչ (ԱԲ)։ Ոչ ոք չկար այդ ժամին՝ ո՛չ նախագահը, ո՛չ քարտուղարը, ո՛չ էլ գրասենյակի աշխատողներից որևէ մեկը (մամուլ)։ Այդ գույնով պետք է գրել՝ արնագույնով (ՄԳ)։ Այս օրինակներում ոչինչ, ոչ ոք, գույնով բացահայտյալներին հաջորդել են ստորոգյալները, ապա նոր՝ բացահայտիչները, որոնք ընկած են նախադասության վերջում։ Իսկ հետևյալ նախադասություններում ստորոգյալին հաջորդող բացահայտիչն ընկած է մեջտեղը, նրան հաջորդում՝ են այլ անդամներ։ Մի մարդ է եկել՝ իրենց համերկրացի հետաքրքիր մի ծերունի, պղնձի չափով դիրի է խմել (ՄԳ)։ Պրոֆեսորն էր դասախոսություն կարդում՝ Ալիկի հոբելյարը, Մանսուրյան ազգանունով (Սգր)։ Միայն մեկից էր քաշվում՝ հոբելյարից, որին շատ էլ սիրում էր (Սգր)։

Բացահայտչի հետ կապված կետադրությունը։ Բացահայտիչը բացահայտյալից արտհվում է բութով, ուստի համարվում է տրոհվող լրացում։ Օրինակ՝ Հայոց թագաժառանգը՝ Պապը, յուր կնոջ՝ Զարմանդուխտի և երկու որդիների՝ Արշակի և Վաղարշակի հետ պահված էին Ի. Պոլսում։ Եվ այդ դավաճանները հայոց երկու ամենազոր նախարարությունների ներկայացուցիչներն էին՝ Վահան Մամիկոնյանն ու Մերուժան Արծրունին։ Նրանք դիմեցին հայոց դարևոր թշնամուն՝ պարսիկին։ Նրա աչքին ընկավ յուր պապի՝ Վաչեի պատկերը։ Թշնամին կպավ ժողովրդի ամենասրբազան զգացմունքներին՝ նրա եկեղեցուն (Ր)։ Մարզպետունի իշխանը՝ Աշոտ թագավորի հավատարիմը, գտնվում էր Գառնո ամրոցում։ Մոտեցավ յուր մորը՝ Մարզպետունի իշխանուհուն, և համբուրեց նրա աչքը (Մ)։ Քի՞չ են մեզ մոտ՝ Հայաստանում, որ ռուսերեն չիմացած՝ Պուշկին են թարգմանում (ՀրՀ)։ Ինքը՝ Մացակ

Ավագյանը գովել էր (ՆՉ)։ Ես՝ Առաքել Դավրիժեցիս վկա եղա ահեղ աղետների։ Նրա մեջ կենդանի էին ապուպապերի՝ Պոռշյան հզոր իշխանների և Մելիք Հայկազյանի տոհմիկ հատկությունները՝ անսահման նվիրվածություն ազգին, անկոտրում հավատ հայրենիքի նկատմամբ (ՍԽ)։ Ինքը՝ ուստա Մկրտիչը, մի սովորական գյումրեցի էր (ՄԱ)։ Հաճախ գոյականով կամ անձնական դերանունով և ինքը դերանունով կապակցության բաղադրիչները չեն տրոհում միմյանցից՝ դիտելով իբրև մի ամբողջություն։ Օրինակ՝ Ինքը մահամերձը նստած էր անկողնու մեջ։ Մակար աղան ինքը պատվիրել էր։ Ես ինքս տասը տարի մի մանրավաճառի մոտ գործակատար եմ եղել (ԱՇ)։

Բացահայտիչը մյուս անդամներից սովորաբար տրոհվում է, որը գրավորում արտահայտվում է ստորակետով։ Օրինակ՝ Էնկևները՝ Զաուշենկոն և Իցկոն, հուսահատվել էին։ Դեպքերն աստիճանաբար դարբանում են և վեռին՝ պատմվածքի հերոսին, հասցնում են ինքնասպանության (ԱՇ)։ Մարտիրոս Սարյանը՝ դիմանկարի խոշոր վարպետը, դիմանկարով ներկայացնում է իր ժամանակի ոգին։ Գրիգոր Արծրունին՝ նշանավոր հրապարակախոսը, քննադատ ու գրական-հասարակական գործիչը, նախնական կրթությունն ստացել է Թիֆլիսի ռուսական գիմնազիայում, այնուհետև սովորել է ռուսական մշակույթի երկու կենտրոններում՝ Մոսկվայում և Լենինգրադում, իսկ հայերեն դասեր է առել Մխիթարյանների մոտ՝ Վիեննայում և Վենետիկում։ Նրա գեղարվեստական գործերը՝ «Էվելինա» վեպը, պատմվածքները, ակնարկները, այնքան էլ տարածված չեն (օրացույց)։

Ծանոթագր.—Բացահայտիչը բացահայտյալից բութով տրոհելու այս կանոնը հաճախ խախտված է հանդիպում։ Բութի փոխարեն ստորակետ են դնում կամ՝ գիծ։ Օրինակ՝ Ես վարժապետիս—Տեր Վահագի—թուլությունները վաղուց գիտեի (ԱՇ)։ Թող չքանա կյանքը—այդ անագորույն կոիվը հացի համար (ՆԳ)։ Այստեղ էր ապրում նա—իմ սրտի մեջ (ԱԲ)։ Հանեց պարանոցից կախված մի նկար—Դարբիրայրդի գլուխը (ԱԲ)։ Համո Համբարձումովիչի աչքերը չէին տեսնում Լորիս Մելիքյանի, այդ չարչիական փողոցի ցածլիկ խանութները։ Սիրում է պատմել նրա, Գեներալ Ալոշի ներկայությամբ (ԵՉ)։ Մեր գյուղը, լանջին նստած՝ ձորերի պահակը, փոքրանում է (մամուլ)։

Ծանոթագր.—Պատահում է, որ տրոհումն արտահայտում են երկու կողմից բութ կամ գիծ դնելով։ Օրինակ՝ Միշի բոլոր փողը—սև ու սպիտակ դրամները—թափեց սեղանի վրա (ՆԳ)։ Լուցկու լույսով երկու գիշատիչները՝ Ավագյանն ու կատուն՝ նայեցին իրար (ՆՉ)։ Միացյալ Նահանգների սպանված նախագահի կինը՝ երկու երեխայի մայրը՝ դեմ չէ ամուսնության գնալու Օնասիսին (ՀրՄ)։ Բայց սրանք շեղումներ են։ Բացահայտիչը բացահայտյալից տրոհվում է բութով, իսկ մյուս անդամներից՝ սովորաբար ստորակետով։ Սա կանոն է։

Նակայն բացահայտիչը մյուս անդամներից չի տրոհվում, եթե՝

ա) տրական (սեռական) հոլովով է։ Օրինակ՝ Նրա աչքին ընկավ յուր պապի՝ բարի հիշատակ Վաչեի պատկերը։ Ես նույնիսկ սուլթան Իբրահիմի հոր՝ սուլթան Մուրադ Փաթի խոսքին չեմ բանի տեղ դրել (ՍԽ)։ Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի պրեզիդենտական աշխատավարձը ի վիճակի չէր բավարարելու Սպիտակ տան տիրուհու՝ «գեղեցկության երևկվա թագուհու» դուզսի հոգսերը (ՀրՄ)։

բ) Կապի խնդիր է։ Օրինակ՝ Շատ եմ դրուցել այդ գիտակ մարդու՝ Երվանդ Շահազիզի հետ (ՀրՀ)։ Զգնամ, մեզ՝ Կարսիիում նրա հավաքած գերի հայերիս համար վատ կլինի (ՍԽ)։ Վերահսկողությունը շատ անգամ ուղղակի անհրաժեշտ է հենց իրենց՝ որդիների համար (ԱՇ)։ Նրա տունը կանգնած էր Զորի բողազի՝ այդ ոչ խոր ձորակի մեջ (ՄԱ)։

գ) Բացահայտիչն հաշորդում է եմ բայր կամ ու շաղկապը։ Օրինակներ՝ Գարեգինը՝ այգեգործական բրիգադի փորձված բրիգադիրն ու ես մեկնում ենք այգիները։ Այդ օրը իմ ընկերը՝ առաջավոր խառատ Արամն էր հերթապահը։ Հիմա մեր թիմը՝ իմ սիրելի «Արարատն» էր խաղը շահում։ Մեր դիմաց Գերեղը՝ Լոռվա գիժ գետն էր գալարվում (մամուլ)։

Մասնական բացահայտիչի հարցը։ Այս լրացումը թե՛ բնբականերեն, թե՛ իմաստով տարբերվում է բացահայտիչից։

1. Բացահայտչի տեղը նախադասության մեջ կայուն է, միշտ նախադաս է լինում, իսկ այս լրացումը՝ իբրև, որպես կապերով կապակցվող մասնականը, կարող է դրվել և՛ նախադաս, և՛ հետադաս։ Օրինակ՝ Գնթ այս անգամ ձեռքդ անկեղծությամբ մեկնիր, որպես քայր։ Եվ ձեր խինդը սարսեցնում է, որպես բոր (ՎՏ)։ Որպես չեմպիոն նա հռչակվեց 1979 թվականին։ Որպես հայր, Արան հոգատար է, սիրալիր։

2. Այս լրացումը սովորաբար արտահայտվում է անորոշ առումով, անկախ նրանից, թե լրացյալը ինչ առումով է, և թվով ու դեմքով կարող է տարբերվել բացահայտյալից, հակառակ բուն բացահայտչի։ Օրինակ՝ Նստել էր Իվան բեյը իր սեղանի առաջ, որպես թեք ցարդած թռչուն (ԱԲ)։ Դյութական բառը՝ «սեր» նրա բերանից հնչում էր որպես լպիրշ արձագանք (ԱՇ)։ Մեր օդակի անդամները, իբրև առաջավոր այգեգործ, աչքի են ընկել գյուղում։ Նրանք, իբրև ուսման գերազանցիկ, եղույթ ունեցան։ Կարապետյանը, որպես դիրեկտոր, պատասխանատու է շենքի փլուզման համար։ Այս լրացումը երբեմն համաձայնում է իր լրացյալին հոլովով, օրինակ՝ Ես դիմեցի Արևյանին իբրև ուսուցիչ (դիմողն ուսուցիչ է) և ես դիմեցի Արևյանին իբրև ուսուցչի (ուսուցիչը Արևյանն է)։

3. Բացահայտիչը իր լրացյալից միշտ է տրոհվում, իսկ մասնա-

կանը հաճախ չի տրոհվում կամ տրոհվում է ստորակետով։ Օրինակ՝ Ղազարյանը գտնում էր, որ միտինգը բաց անելու իրավունքը պատկանում է իրեն որպես կուսակցության ղեկավարի (ՆՁ)։ Այս խոստովանությունը կմնա մեր մեջ որպես նուրբ գաղտնիք («Գարուն»)։ Նա ղգում էր, որ միայն այժմ է ինքը, իբրև բանական էակ, սկսել ապրել (ԱՇ)։

Սովորական և մասնական բացահայտիչները համեմատելու համար վերցնենք այս զույգը՝ «Արմիկը՝ դասարանի լավագույն աշակերտուհին, պարգևատրվեց» և՝ «Արմիկը, որպես դասարանի լավագույն աշակերտուհի, պարգևատրվեց»։ Ուշադիր դիտողը կտեսնի, որ առաջին նախադասության բացահայտիչը (դասարանի լավագույն աշակերտուհին) ցույց է տալիս, թե ինչ է Արմիկը, այստեղ բացահայտիչը բացահայտյալի կրկնությունն է մի այլ բառով (տվյալ դեպքում աշակերտուհի բառով), իսկ երկրորդ նախադասության մասնականը (իբրև լավագույն աշակերտուհի) ցույց է տալիս, թե ինչի հիման վրա են պարգևատրել Արմիկին, ի՞նչ հիմունքով։ Առաջին նախադասության մեջ այդ հիմունքը չկա։ Գուցե նա պարգևատրվել է իբրև օրինակելի ջոկատավա՞ր՝ «Արմիկը՝ դասարանի լավագույն աշակերտուհին, իբրև օրինակելի ջոկատավար, պարգևատրվեց»։ Հենց այս օրինակը ցույց է տալիս, որ իբրև-ով կապակցությունը բացահայտիչ չէ, այլ՝ հիմունքի պարագա։ Այսպիսի պարագայական գործառություն ունեն հետևյալ ընդգծված կապակցությունները. Սիրարփին դիմեց Կարապետյանին,իբրև իրենց դիրեկտորի։ Նա դիֆտերիտ ուներ և, իբրև վարակիչ հիվանդի, բժիշկը բոլորովին առանձնացրել էր նրան (մամուլ)։ Այստեղ հիվանդին առանձնացնելու հիմքում ընկած է վարակիչ լինելու հանգամանքը, առանձնացման պատճառը հիվանդության վարակիչ լինելն է։ Կամ՝ Նա, իբրև սիրող մայր, կցանկանար անշուշտ, ամառն անցնել յուր որդու հետ (Մ)։ Պարզ է, որ այստեղ էլ նրա ցանկության հիմքում ընկած է սիրող մայր լինելը, ուստի իբրև սիրող մայր կապակցությունը հիմունքի պարագա է։

Մ. Աբեղյանը բերելով այս օրինակը՝ «իբրև սիրող մայր» կապակցությունը համարում է բացահայտիչ։ Սակայն նա չի բացառում, որ դրանք կարող են ունենալ նաև ձևի, հիմունքի գործառություն։

«Երբեմն բացահայտյալը,— գրում է նա,— երբ մի դերանուն է և ենթակա, չի դրվում, կամ իբրև բառով բացահայտիչը դրվում է բացահայտյալից առաջ և այն ժամանակ ստանում է հիմունքի կամ ձևի պարագայի նշանակություն»։ Ապա բերելով «Իբրև գյուղական քահանա, նա մինչև անգամ ավելի շատ բան գիտեր, քան սպասելի էր» (Մ) նախադասությունը՝ իբրև գյուղական բառանա կապակցությունը համարում է հիմունքի պարագա[52]։ Հետագա քերականները այդ տարբերությունը չեն էլ նշում, եռադասն էլ, նախադասն էլ համարում են բացահայտիչ՝ մասնական որակումով։ Եվ իսկապես, այդ տարբերությունը, եթե այն ժամանակ եղել է, այժմ վերացել է։ «Արամյանը, որպես ուսուցիչ, շատ հոգատար է» և «Որպես ուսուցիչ Արամյանը շատ հոգատար է» նախադասություններում ընդգծված կապակցությունները միևնույն գործառույթն ունեն. մասնավորեցնող պարագայական խնդիր են։ Այսինքն Արամյանը ոչ թե առհասարակ, այլ որպես ուսուցիչ է հոգատար։

Վերը մեր բերած ընդգծված կապակցությունների հոմանիշները կլինեն՝ որովհետև դիրեկտորն էր, որովհետև վարակիչ հիվանդ էր, սիրող մայր էր, լավագույն աշակերտուհին էր։

Անշուշտ իբրև, որպես կապերով կապակցությունները առնչվում են իրենց նախորդող կամ հաջորդող գոյականի կամ դերանվան հետ, բնութագրում են նրանց, բայց հենց այդ հանգամանքն էլ կապակցությանը տալիս է պարագայական գործառույթ։ «Կինը դիմեց ուսադիրներով մարդուն, իբրև միլիցիոների» նախադասության ընդգծված կապակցությունից երևում է, որ ուսադիրներով մարդը միլիցիոներ է, կամ կինն այդպես է կարծում։ Բայց հենց այդ բնութագրումն էլ հիմունք, պատճառ է կնոջ համար՝ դիմելու նրան։ Եթե միլիցիոներ չլիներ, չէր դիմի։ Ուրեմն հիշյալ կապերով կապակցություններն ունենում են ձևի, հիմունքի, կամ ինչպես Պ. Պողոսյանն է գրում, սահմանափակման պարագաների[53], բաղդատման խնդրի գործառույթ։ Օրինակ՝ Այդ հեղինակներին բնորոշ է սոսկ զարգացման, նույնիսկ գրագիտության զարհուրելի ցածր մակարդակ, որը հանդես է գալիս մեկ որպես ցածրարժեք աշուղականություն, մեկ որպես արհեստական նորաձևություն (Սգր)։ Եվ նրանց մեջ, ցանկապատի փշերի արանքից երևացին երկու մանրիկ աչքեր, որպես սև ձիթապտուղ (ԱԲ)։ Սպիտակ ադամենիները, ինչպես ձյան սպիտակ ֆուլա, սավառնում են օդում։ Այս բոլոր ընդգծված կապակցությունները ձևի պարագա են կամ բաղդատման անուղղակի խնդիր։ Նրանցում որպես, իբրև կապերը կարելի է փոխարինել պես, նման կապերով։ Օրինակ՝ Սիրտդ որպես վառ ատրուշան, պահիր վառ (ՎՏ) նշանակում է վառ ատրուշանի նման պահիր վառ։ Որպես փյունիկ կրակից կելնես (ՎՏ) նշանակում է փյունիկի պես կելնես։

Ծանոթագր.—Երբեմն իբրև, որպես, ինչպես կապական բառերը շաղկապի գործառույթ են ունենում, կապում են երկու նախադասությունները, որոնցից մեկում ստորոգյալը ոչնչված է լինում։ Օրինակ՝ Նույն

[52] Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, էջ 512։
[53] Նշված ձեռնարկը, էջ 222։

կառքը, նույն ճանապարհը, որ շողշողում է մթի մեջ, ինչպես փրփուր ջուրը (ԱԲ)։ Որպես արքան այս մանուկ, չեմ դավաճանի իմ Նվարդին (ՎՏ)։ Սրանք բարդ ստորադասական նախադասություններ են, որոնց երկրորդական նախադասությունների ստորոգյալները գեղչված են (շողշողում է մթի մեջ, ինչպես փրփուր ջուրն է շողշողում, չեմ դավաճանի իմ Նվարդին, ինչպես չի դավաճանել Արան)։

Այս հարցում կարող է դեր խաղալ նաև կապակցության գերադաս անդամի առումը։ Այսպես՝ «Նա անէացավ, ինչպես ձյան փաթիլ» և՝ «Նա անէացավ, ինչպես ձյան փաթիլը»։ Երկրորդ նախադասությունում զգացվում է ստորոգյալի գեղչված լինելը (ինչպես ձյան փաթիլն է անէանում), իսկ առաջինում դա չի զգացվում։

Այսպիսով, բացահայտիչը բացահայտյալի կրկնությունն է մի այլ բառով։ Գործառությամբ էլ չի տարբերվում նրանից, ուստի դրվում է նույն դեմքով, թվով, առումով ու հոլովով։

Բացահայտիչի ու բացահայտյալի միևնույն հոլովով դրվելը բխում է նրանց առնչվող ընդհանուր անդամի խնդրառական պահանջից, դա խնդրառական երևույթ է, կառավարում։

Եթե բացահայտյալը ենթակա է, ապա բացահայտիչը նույն հարաբերության մեջ է ստորոգյալի հետ, ինչ՝ բացահայտյալը, իմաստով նա էլ է ենթակա, ստորոգյալը երկուսի համար էլ ընդհանուր անդամ է։

Հիշատ կլինի այս կապակցությունը հանել անվանական լրացումների շարքից իբրև մի առանձին կապակցություն, առանձին կառույց։

Իբրև, որպես, ինչպես բառերով կապակցությունները, այս կամ այն առարկան բնութագրելով հանդերձ, պարագայական գործառույթ ունեն՝ հիմունքի, սահմանափակման, ձևի, բաղդատման և այլն։

ԲԱՅԱԿԱՆ ԱՆԴԱՄԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Ինչպես գիտենք, բայը ցույց է տալիս գործողություն, եղելություն, որոնք կապվում են առարկայի հետ, տեղի են ունենում որոշակի հանգամանքներում։ Ըստ այդմ էլ նախադասության՝ բայով արտահայտված անդամն ունենում է համապատասխան երկու խումբ լրացումներ՝ խնդիրներ և պարագաներ։ Խնդիրները ցույց են տալիս գործողության հետ կապ ունեցող առարկաներ, իսկ պարագաները՝ գործողության հանգամանքներ։ Խնդիր և պարագա ընդունում են նախադասության թե՛ դիմավոր, թե՛ անդեմ բայով արտահայտված անդամները։ Դիմավոր բայի խնդիրներն ու պարագաները լրացումներ են, իսկ անդեմ բայինը՝ լրացման լրացումներ։

Խնդիր ու պարագա առնում են նաև ածականները (կյանքից դոհ, բոլորովին մերկ, թախիծով լի և այլն), մակբայները (գնացքից ադրագ, չափազանց դանդաղ, ամպի գոռոցի պես ուժգին և այլն), խնդրի ու պարագայի իմաստով լրացումներ են առնում նաև բայանունները (զեկուցում վեպի մասին, հանդիպում լուսաբացին)։ Ածականի, մակբայի, բայանվան լրացումները նույնպես լրացման լրացումներ են։ Խնդիրներն արտահայտվում են հիմնականում գոյականներով, իսկ պարագաները՝ մակբայով ու գոյականով։

Նախադասության անդամների յուրաքանչյուր տեսակի արտահայտման համար բնորոշ է և նրա միջուկն է կազմում բառերի որոշակի խումբ, որն ունի իմաստային, քերականական ընդհանրություն։ Օրինակ, ենթակայի համար բնորոշ է առարկայական իմաստը, ուստի ենթակա են դառնում առարկա ցույց տվող բառերը (գոյականներ), իսկ ստորոգյալի համար՝ գործողության, հատկանիշի իմաստը, ուստի ստորոգյալ են դառնում գործողություն, եղելություն ցույց տվող բառերը (բայերը)։ Որոշչի համար բնորոշ է հատկանշային իմաստը, և նրա արտահայտման միջուկն են կազմում հատկանիշ ցույց տվող բառերը (ածականներ), խնդրին բնորոշ է առարկայական իմաստը, խնդիր են դառնում գոյականները հոլովաձևերով, իսկ պարագայի միջուկն են կազմում մակբայները։

Երբեմն դժվար է լինում լրացումների տեսակը որոշել, խնդիրը տարբերել պարագայից, որոշիչը՝ հատկացուցիչից (նաև պարագայից)։ Այս դեպքում պետք է դիմել հարցին, փոխակերպմանը, բառի իմաստին, որոնք օգնող միջոցներ են։ Այսպես՝ «Մեր ապրանքատար ավտոմոբիլնան գնացքից արագ էր ընթանում, անցավ նրանից» նախադասության գնացքից բառը ինչի՞ց հարցի դեպքում բաղդատման անուղղակի խնդիր է, իսկ ինչքա՞ն հարցի դեպքում՝ չափի պարագա, բայց ոչ բուն պարագա, այլ՝ պարագայական խնդիր։ «Քամին տերևները պոկում էր ծառերից» նախադասության ծառերից բառը ինչերի՞ց հարցի դեպքում անջատման անուղղակի խնդիր է, իսկ որտեղի՞ց հարցի դեպքում՝ տեղի պարագա (պարագայական խնդիր)։ «Մայրը որդու հետ գնաց» նախադասության որդու հետ կապային լրացումը ինչպե՞ս (մենա՞կ, թե՞ որդու հետ) հարցի դեպքում ձևի պարագա է (պարագայական խնդիր), իսկ ո՞ւմ հետ հարցի դեպքում՝ միասնության (սա նաև կապի խնդրի հարց է)։ Ինչպես ասվեց, նախադասության անդամները որոշելիս երբեմն պետք է դիմել փոխակերպմանը։ Կյանքը գյուղում եթե նշանակում է գյուղական կյանք, ուրեմն գյուղում-ը որոշիչ է։ Եթե արձակուրդ ձմռանը նշանակում է ձմեռային արձակուրդ, ձմռան-ը որոշիչ է, այս դեպքում պատասխանում է ի՞նչ, ո՞ր հարցերին, իսկ ե՞րբ հարցի դեպքում կդիտվի իբրև ժամանակի պարագա։

Խնդիրները գոյականական հարցերի պատասխաններն են (ի՞նչ, ո՞ւմ, ինչի՞, ինչո՞վ, ինչի՞ց և այլն), իսկ պարագաները՝ մակբայական (ե՞րբ, ո՞րտեղ, ինչպե՞ս, ինչքա՞ն)։ Ընդունված է ասել, թե խնդ-

դիրների մասնակցությունը գործողությանը ավելի սերտ է, քան պարագաներինը։

Որոշ պարագայական լրացումներ ավելի շատ ամբողջ նախադասությանն են վերաբերում, քան կոնկրետ որևէ բայի։ Շարահյուսորեն բայ-ստորոգյալի լրացում լինելով՝ իմաստով կապվում են ամբողջ նախադասությանը։ Օրինակ, ներգոյականով տեղի պարագան, ետ, միասին, փոխարեն, բացի կապերով կապվող լրացումները։ Այսպես՝ «Ձուկը ջրում է լողում» նախադասության ջրում տեղի պարագան ենթակային էլ է վերաբերում, քանի որ ենթական, տվյալ դեպքում ձուկը, նույնպես ջրում է։ «Եղբոր փոխարեն քույրն է պատասխանում» նախադասության եղբոր փոխարեն կապային կապակցությունը, լրացնելով ստորոգյալին, կապված է ամբողջ նախադասությանը։ «Քույրը եղբոր հետ թատրոն գնաց» նախադասության եղբոր հետ միասնության պարագան, ստորոգյալի լրացում լինելով հանդերձ, վերաբերում է ամբողջ նախադասությանը, չէ՞ որ եղբայրն էլ է գնացել թատրոն։ Այս է պատճառը, որ այս կառույցներում հաճախ ստորոգյալը իմաստի թելադրանքով դրվում է հոգնակի թվով, որ կոչվում է բակառություն։

ԽՆԴԻՐՆԵՐ

Խնդիրները, ինչպես ասվեց, ցույց են տալիս գործողության հետ կապված առարկաներ, գործողության առարկաներ, որոնք իրենց վրա են կրում գործողությունը կամ գործողության արդյունք են, որոնց հանգում է գործողությունը, որոնցով կատարվում է գործողությունը, որոնցից սկսվում է գործողությունը և այլն։ Ուստի, ինչպես ասվեց, խնդրի գործառությամբ հանդես են գալիս առարկայի նշանակություն ունեցող բառերը՝ գոյականներ, առարկայանիշ դերանուններ, գոյականաբար գործածված այլ խոսքի մասեր և անորոշ դերբայները իբրև գործողության անուն։ Խնդիրներ առնում են հիմնականում բայերը, թեև, ինչպես ասվեց, ածականն ու մակբայն էլ կարող են խնդիր առնել ինչ-որ չափով։

Խնդիրները լինում են երկու տեսակ՝ ուղիղ և անուղղակի։ Ուղիղ խնդիրն արտահայտվում է միայն հոլովով, առանց միջնորդության, իսկ անուղղակի խնդիրները՝ թե՛ հոլովով, թե՛ կապային կապակցությամբ (միջնորդված)։ Ուղիղ խնդրի կապը լրացյալի հետ սովորաբար ավելի ուժեղ, սերտ է, քան անուղղակի խնդիրներինը։ Անուղղակի խնդիրներից էլ հանգման, անջատման խնդիրներն ավելի սերտ են կապված իրենց լրացումներին, քան մյուս անուղղակի խնդիրները, եթե նկատի չունենանք առանձին դեպքերը։ Ուրեմն խնդիրները տարբեր չափով (սերտությամբ) են կապվում իրենց լրացումներին։ Անհերկբայելի է, որ ներգործող անուղղակի խնդիրը շատ սերտ կապի մեջ է իր լրացյալի հետ, նա անբաժանելի է կրավորական սեռի բայերից։

Խնդիրները դրվում են բայի իմաստի և սեռի պահանջով։ Ուղիղ խնդիրը և ներգործող անուղղակի խնդիրը դրվում են բայի սեռի թելադրանքով (ուղիղ խնդիրը ներգործական սեռի խնդիրն է, ներգործող անուղղակի խնդիրը՝ կրավորական սեռի), մնացած անուղղակի խընդիրները դրվում են բայիմաստի պահանջով և կոչվում են նաև բնության խնդիրներ։

ԲԱՅԻ ՍԵՌԻ ԽՆԴԻՐՆԵՐ

Ուղիղ (կրող) խնդիր։ Ուղիղ կամ կրող խնդիրը ներգործական սեռի բայի խնդիրն է, ցույց է տալիս՝ ա) այն առարկան, որը փոփոխություն է կրում գործողությունից, ինչպես՝ Երեխան ջարդեց խաղալիքը։ Քամին փշրեց լուսամուտի ապակին։ Վարարած գետը քանդել էր ափերը, ջարդել ծառերը և այլն։

բ) Այն առարկան, որը գործողության արդյունք է, հետևանք։ Օրինակ՝ Դերձակը գլխարկ, վերարկու է կարում։ Շինարարները շենք են կառուցում։ Թումանյանը քառյակներ է գրել և այլն։

գ) Այն առարկան, որը ո՛չ փոփոխվում է գործողությունից, ո՛չ էլ գործողության արդյունք է, այլ՝ գործողության անմիջական առարկա։ Ինչպես՝ Ես տեսնում եմ գյուղերը։ Դիտում եմ ցուցանմուշները։ Վերցրեց գիրքը և ընդգծեց բայը։ Պապը պատմում էր հեքիաթը։ Նոր եզ է սովորել (Սգր)։ Նա ինձ առաջարկում է փոքրիկ թղթակցություններ գրել և դրանք ուղարկել թերթին (Հրշ) և այլն։

Ուղիղ խնդրի գործառությամբ հանդես են գալիս՝ ա) գոյականները, ինչպես՝ Խոսում էր ինքն իրեն՝ պատմեր էր վճարում, նոր հագուստներ էր գնում, ձեռներն էր շարժում օդի մեջ, անցորդների ուշադրությունը գրավում։ Շուշանիկը հորեղբորը շատ էր սիրում (ԱՇ)։

բ) Առարկայանիշ դերանունները, ինչպես՝ Մեզ տեղափոխում են հանդեսը։ Ի՞նչ ես կարդում։ Բոլորն ուղարկեցին, ոչինչ չթողեցին (Սգր)։ Այդ ո՞ւմ են ծեծել։ Լևոնն ու Հասմիկը սիրում էին միմյանց (ՆՋ)։

գ) Անորոշ դերբայը, ինչպես՝ Սիրում էր նստել գոռանը և դիտել անցնող-դարձողներին (Սգր)։ Նախագահն առաջարկում էր վարել հողը (ՆՋ)։

դ) Իբրև գոյական գործածված (փոխանուն) այլ խոսքի մասերը, ինչպես՝ Հինգ գավակ ուներ, երեքին կռիվ տարան (Սգր)։ Մեր գորամասը շատ կորուստներ տվեց, բայց նորերին բերեցին, համալրեցին (Հրշ) և այլն։

Ուղիղ խնդիրն արտահայտվում է ուղղական (հայցական) կամ տրական հոլովներով, պատասխանում է ի՞նչ, ո՞ւմ հարցերին։

Իրի անուն ուղիղ խնդիրն արտահայտվում է ուղղական (հայցական) հոլովով, թե՛ որոշյալ, թե՛ անորոշ առումով։ Ինչպես՝ Նամակները դնում ենք առանձին-առանձին ծրարների մեջ և ուղարկում, որ եթե մեկը կորցնեն, մյուսը տեղ հասցնեն։ Մենք գրավում ենք Ռաղաֆը։ — Սիրելի Ստեպան, մի քանի անգամ կարդացի նամակդ (ՀրՀ)։ Մեզ նոր նագուստ տվեցին։ Ես հաստոցային գնդացիր եմ տանում (ՀրՀ)։ Մկրատ բերեմ, ասեղ բերեմ, մեր Աշոտին նոր շոր կարեմ (ժող.)։

Իրի անունը երբեմն շնչավորի իմաստով է առնվում, այդ դեպքում ուղիղ խնդիրը դրվում է տրական հոլովով։ Ինչպես՝ Սոխակը վարդին է սիրում։ Նա իր նվագով սարերին էր լացացնում (ՎՓ)։

Անձի անուն ուղիղ խնդիրը որոշյալ առումով դրվում է տրական հոլովով։ Ինչպես՝ Ես Շիրազին չեմ հիշում ծխելիս, չէր ծխում (ՍԽ)։ Պատկերացրի կորած զույգ որդիներիս, այդ փոքրիկ, անմեղ երեխաներին (ՍՋ)։ Պիոներներին բերել էին ողջունելու։ Կարապետյանին պարգևատրեցին մեդալով։ Շրջանավարտին գյուղ ուղարկեցին։ Հարեվանուհուս հրավիրեցին ճաշի, չգնաց (ՍՋ)։ Կարծես ձյունոտ անտառում տեսնում էր աղջկան (ԱԲ)։ Գրկում եմ Ռաֆիկին, ապա մյուսներին։ Հրամանատարիս ներկայացնում եմ մերոնց (ՀրՀ) և այլն։

Անձի անուն ուղիղ խնդիրը անորոշ առումով դրվում է թե՛ ուղղական, թե՛ տրական հոլովով։ Ինչպես՝ Հիմա մեր այգիներում աշխատող կին շատ կտեսնեք (ԽԳ)։ Գուցե վերևից տեսնում էր դարան մտած մարդիկ։ Մի զինվորի վիրավորեցին։ Դաշտի մեջ նկատում եմ չորս-հինգ տարեկան մի երեխա (ՍՋ)։ Մի աշակերտի կանչեցի մոտս։ Նա այդպիսի մի համարձակ տղայի ուղարկեց անտառ (Սգր) և այլն։

Կենդանիների անուն ուղիղ խնդիրը որոշյալ առումով դրվում է թե՛ ուղղական, թե՛ տրական հոլովով։ Ինչպես՝ Թորոսը բռնել էր արծիվների զույգին։ Խնամքով պահում էր արծիվներին։ Քաղաքից պիտի գային ու կրկեսի համար գնային արծիվներին (ՍՋ)։ Նախ ճարթերը տեղավորեց։ Աղվեսին փնտրելու ժամանակ Անտոնը մի մուշտակ էլ սպանեց (ԱԲ)։ Եզներն արձակի, տուն արի (ԱՒ)։

Կենդանիների անուն ուղիղ խնդիրը անորոշ առումով դրվում է ուղղական հոլովով, ինչպես՝ Մի ճավք զարկի ես մի օր (ՀԹ)։ Լորը արտում ձագ էր հանել։ Ինչպե՞ս ես գայլ նկարում։ Երեխան սարյակ է պահում, խնամում։ Նրանք թութակ են վարժեցնում։ Կարթը ձուկ էր բռնել (Սգր)։

Այդ անունները կարող են դրվել նաև տրականի անորոշով, ինչպես՝ Նա թութակի էր խոսեցնում։ Սարյակի էր կերակրում և այլն։

Ունենալ բայի ուղիղ խնդիրը միշտ դրվում է ուղղական (հայցական) հոլովով։ Ինչպես՝ Հայր ունեի, ծովում կորավ (ԱՄ)։ Գրիչ ունի

նա ձեռքում (ԱՄ)։ Եղբայր չունի։ Մեր դպրոցը լավ դիրեկտոր ունի և այլն։

Ներգործական կառուցվածքի նախադասությունը կրավորական կառուցվածքի փոխվելիս առաջինի ուղիղ խնդիրը փոխվում է ենթակայի։ Այսպես՝ Արհեստանոցում նորոգում են տրակտորը — տրակտորը նորոգվում է արհեստանոցում։ Ջուրը քաղաք են բերում մեծ-մեծ խողովակներով — ջուրը քաղաք է բերվում մեծ-մեծ խողովակներով։ Մոր ձեռքերը խմոր են հունցում — մոր ձեռքերով խմոր է հունցվում և այլն։ Այս օրինակներում ընդգծված բառերն ուղիղ խնդիրներ են, որոնք զուգահեռ նախադասություններում փոխվել են ենթակայի։ Սա ուղիղ խնդրի քերականական հատկանիշներից մեկն է։

Ուղիղ խնդիր առնող բայերը (ներգործական և պատճառական) կոչվում են անցողական բայեր, ուղիղ խնդիր չառնող բայերը (չեզոք և կրավորական)՝ անանցողական։

Ծանոթագր.— Քերականության որոշ գրքերում[54] նշվում է նաև բացառական հոլովով մասնական ուղիղ խնդիր (այդ ջրից չեմ խմել, հացից չեմ կերել)։ Դա բովանդակությամբ նման է ուղիղ խնդրին (հացից չեմ կերել→հացը չեմ կերել), սակայն արտահայտության ձևով տարբերվում է ուղիղ խնդրից, ուստի կարելի է համարել անուղղակի խնդիր։

Լեզվի զարգացման ընթացքում կատարվում են ինչպես բառիմաստի փոփոխություններ, այնպես էլ խնդրառական տեղաշարժեր։ Այսպես՝ անցյալում տիրել, տիրապետել, դիմավորել, հսկել, գրոհել, կառուցել բայերը, իբրև չեզոք սեռի բայեր, առնում էին տրական հոլովով անուղղակի խնդիրներ, այժմ, սակայն, այդ բայերն առնում են նաև ուղղականով (հայցական) լրացումներ։ Ինչպես՝ դիմավորել գարնանացանին և դիմավորել գարնանացանը, նոր տարվան և նոր տարին, գրոհել կայարանի, քաղաքի վրա և գրոհել թշնամու խրամատները, ձեռնարկել մի բանի և մի բան, տիրապետել տեխնիկան և տեխնիկային, տիրել քաղաքին և թշնամու դիրքերը, հսկել քաղաքը և հսկել երեխայի գործողություններին։

Որոշ քերականներ[55] ընդունում են նաև կրկնակի ուղիղ խնդիր և իբրև օրինակ բերում են կոչել, անվանել, սովորեցնել, կարգել, նշանակել և այլ բայերով կազմված նախադասություններ, ինչպես՝ Գյուղում նրան կոչում են Սաքո, կամ՝ Ժողովը Հակոբին նախագահ ընտրեց։

Այս դեպքերում, սակայն, կա մի ուղիղ խնդիր, դա այն լրացումն

---

[54] Ս. Գ. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, էջ 294, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, էջ 225։

[55] Հայոց լեզու, 2-րդ մաս (դասագիրք), 1975, էջ 208։

է, որը կրավորական կառուցվածքի փոխված նախադասության մեջ դառնում է ենթակա, ինչպես՝ Գյուղում նա կոչվում էր Սաքո, Հակոբը ժողովի կողմից նախագահ ընտրվեց։

Ուրեմն նրան, Հակոբին ուղիղ խնդիր են, իսկ նախագահ, Սաքո բառերը՝ ստորոգյալի բաղադրիչներ, քանի որ կրավորական կառույցում նրանք մնացել են անփոփոխ, նույն գործառույթամբ[56]։

Ներգործող խնդիր։ Ներգործող խնդիրը կրավորական սեռի բայի խնդիրն է, դրվում է կրավորական սեռի պահանջով։ Ներգործող խընդիրը ցույց է տալիս այն առարկան, որի գործողությունն անցնում է ենթակային։ Օրինակ՝ Այդ կարճ կրակոցից ես էլ եմ վիրավորվել, արյունը հոսում է թիկունքիցս (Հրշ)։ Նրա ոտքերը ծնկներից վերև վիրավորվել են գերմանական գնդացրի գնդակներից (Հրշ)։ Գյուղն ավերվել է ռմբակոծությունից։ Ի՞նչ մեղք ունեն հորից ու մորից փայփայված ու սիրված այս պատանիները, որ բնավեր են եղել։ Անսպասելի հայտնությունից շփոթվել եմ, ուրախությունից մոռացել անելիքս։ Մեր կապիտանը գինվորներիս կողմից շատ հարգված մարդ է, լուրջ ու հոգատար, մենք էլ նրա կողմից ենք սիրված (Հրշ)։

Ներգործող անուղղակի խնդիրը կոչվում է նաև ենթակայական խնդիր, քանի որ այն առարկան, որի գործողությունն անցնում է ենթակային, գործողության բուն կատարողն է, իրականում նա է կատարողը, բայց քերականական ենթական չէ, որովհետև չունի ստորոգյալ (դիմավոր բայ)։

Ներգործող խնդիր են առնում բոլոր կրավորական սեռի բայերը՝ կառուցվել, սիրվել, հրապուրվել, զգացվել, աղդվել, խաբվել, փառաբանվել, վիրավորվել, վրդովվել, նկարվել, հարգվել, փայփայվել, ասվել, ուղարկվել, խորտակվել և այլն։

Ներգործական կառուցվածքի նախադասությունը կրավորականի փոխվելիս նրա ենթական կրավորականում դառնում է ներգործող կամ ենթակայական խնդիր։ Այսպես՝ Անսպասելի հանդիպումը չափազանց հուզել էր Արային→Անսպասելի հանդիպումից չափազանց հուզվել էր Արան։ Այստեղ առաջին նախադասության ենթական՝ հանդիպումը, երկրորդում փոխվել է անուղղակի խնդրի՝ հանդիպումից։ Այսպես էլ՝ Ձյունը ծածկել է սար ու ձոր→սար ու ձոր ծածկվել է ձյունով։ Որդիները ոգևորում էին նրան→նա ոգևորվում էր որդիներով։

Ներգործող անուղղակի խնդիրը չպետք է շփոթել միջոցի անուղղակի խնդրի և պատճառի պարագայի հետ։ Ներգործող անուղղակի խնդիրը գործողության բուն կատարողն է և հիշյալ փոխակերպման դեպքում այն դառնում է ենթակա, իսկ միջոցի և պատճառի լրացումներն այդ հատկությունը չունեն։ Օրինակ՝ «Նա ընկերոջից խիստ վիրավորված էր և աշխատանքով էր ուզում, որ մոռացվի այդ վիրավորանքը»։ Այս բարդության կրավորական կառուցվածքի նախադասությունը ներգործականի վերածվելիս ընկերոջից լրացումը փոխվում է ենթակայի (ընկերը վիրավորել է), իսկ աշխատանքով բառը մնում է իր պաշտոնում՝ «Ընկերը վիրավորել էր նրան և աշխատանքով էր ուզում մոռանալ այդ վիրավորանքը»։ Այս դեպքում էլ աշխատանքով բառը միջոցի անուղղակի խնդիր է։

Պետք է նշել, որ պատճառի պարագան ևս ներգործականի իմաստ ունի, ինչպես՝ «Ցուրտը դողացնում էր նրան»—«Ցրտից դողում էր նա»։ Այս դեպքում պատճառական բայը փոխվում է չեզոք սեռի բայի, մինչդեռ ներգործող խնդիրը կրավորական սեռի խնդիրն է։ Այդպես էլ պատճառի պարագա «Քարե պատները շիկանում էին կիզիչ ճառագայթներից» նախադասության ընդգծված լրացումը՝ դրված չեզոք սեռի բայի հետ։

Ներգործող անուղղակի խնդիրն արտահայտվում է՝ ա) բացառական հոլովով։ Օրինակ՝ Կարծես մի սոսկալի հրդեհ լափել է բոլորը, ինչ որ կարող է լափվել կրակից։ Ներունու դեմքը թեթևակի աղավաղվեց մահու ցուրտ սլուքից (ԱՇ)։ Մորից շատ էր սիրված ու փայփայված Արամը։ Շոշապատից, բատերական հասարակությունից մեծարված ու փառաբանված արվեստագետը վայելում էր իր խոր ծերությունը (Սգր)։ Ընկերը անսպասելի խաբել էր Հասմիկին, և ընկերոջից խաբված՝ նա կորցրել էր հավատը մարդկանց նկատմամբ (Սգր)։

բ) Կողմից կապով ու նրա խնդրով։ Օրինակ՝ Ստացվեց լեհական պիոներների կողմից ուղարկված նամակը։ Նախագահի կողմից առաջադրված թեկնածուն անցավ (մամուլ)։ Երկար ժամանակ մտածում էի գնչուի կողմից գուշակված օրվա մասին (Սգր)։ Ցարական դատարանի կողմից դատապարտված էր ցմահ բանտարկության (Սգր)։

գ) Գործիական հոլովով։ Օրինակ՝ Համալված (եմ) լուսնի շողերով արծաթ (ՎՏ)։ Լեռներ, ներշնչված դարձյալ ձեզանով, Թնդում է հոգիս աշխուժով լցված (ՀԹ)։ Դաշտը ծածկվել է ծաղկով ու կանաչով։ Սերդ ինձ տարել է, աչքերդ դյութել են, և այդ սիրով տարված ու աչքերով դյութված ճամփաս եմ մոլորել (Սգր)։

դ) Տրական հոլովով։ Օրինակ՝ Մի՞թե առհավետ գերված եմ վըշտին (ՎՏ)։ Ինչպե՞ս իզուր խաբվել ես դու սուտ խոսքերին չար աղվեսի։ Ահա պոետն էլ, պատրանքով հարբած, գերվեց մի անգամ ժըպտուն աչքերի։ Թովված, կախարդված, տարված էն երգին, Վերացավ, թռավ իմ վշտոտ հոգին (ՀԹ)։

Վերևում բերված բոլոր ընդգծված լրացումները ներգործական կառուցվածքի նախադասություններում համապատասխանաբար փոխվում են ենթակայի, ինչպես՝ Գյուղն ավերվել էր ռմբակոծությունից→ռմբակոծությունն ավերել էր գյուղը։ Թռչունների վաղորդյան

[56] Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1965 թ., էջ 400—404։

ծլվլոց-երգով հափշտակվել էինք ու զմայլվել→թռչունների վաղորդյան ծլվլոց-երգը հափշտակել էր մեզ ու զմայլեցրել։ Մի՞թե առհավետ գերված եմ վշտին→մի՞թե առհավետ գերել է ինձ վիշտը։ Դաշտը ծածկվել է ծաղկով ու կանաչով→ծաղիկն ու կանաչը ծածկել են դաշտը։ Հմայված եմ լուսնի շողերով արծաթ→լուսնի շողերը արծաթ հմայել են ինձ և այլն։

ԲՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Բնության խնդիրներն առնվում են բայիմաստի պահանջով։ Այս խնդիրները բայի սեռի նկատմամբ անտարբեր են։ Այսպես, օրինակ, միջոցի կամ անջատման անուղղակի խնդիրներ առնում են թե՛ ներգործական, թե՛ չեզոք և թե՛ կրավորական սեռի բայերը։ Ինչպես՝ «Գրիչով նամակ է գրում—Գրիչով նամակ է գրվում և Գրիչով սուլում էր»։ Այս բոլոր նախադասություններում գրիչովը միջոցի խնդիր է, թեև բայերը տարբեր սեռի են։ Կամ՝ «Երեխային բաժանեցին հիվանդից—Երեխան բաժանվեց հիվանդից և Երեխան հեռացավ հիվանդից»։ Այս նախադասություններում էլ անջատման խնդիր են առել բոլոր երեք սեռի բայերը։ Ուրեմն այս խնդիրների համար բայի սեռը նշանակություն չունի, կարևորը բայի իմաստն է։ Սրանից էլ բխում է այն իրողությունը, որ բնության խնդիրներ են առնում նաև ածականները, մակբայները, բայանուն գոյականները, թեև սահմանափակ շրջանակում։ Բնության խնդիրները շատ շատ են, որ բխում է բայիմաստի բազմազանությունից։ Ընդունված է դրանցից նշել հանգման, անջատման, բաղդատման, վերաբերության, միջոցի խնդիրները։

Հանգման անուղղակի խնդիր։ *Այս խնդրի իմաստային առումները չափազանց շատ են, նույնիսկ խմբավորելով հնարավոր չէ սպառիչ կերպով ընդգրկել դրանք։ Այնուամենայնիվ, նշենք դրանցից մի քանիսը։ Հանգման անուղղակի խնդիրը ցույց է տալիս.*

1. Այն առարկան, որին հանգում, մոտենում, հանդիպում, ձուլվում, միանում, կպչում է որևէ բան։ Ըստ այսմ էլ այս իմաստով խնդիր են առնում նանգել, փաթաթվել, մոտենալ, հանդիպել, դիպչել, ձուլվել, սեղմվել, այցելել, միանալ, կպվել, բախվել, գամվել, փարվել *և այլ բայեր։ Օրինակ՝ Պիտի փարվեմ լքնաղ լանջիդ։ Կյանքի կրովում ամենքը դեմ ամենքին՝ Սուր են պարզում ամենքը դեմ ամենքին։ Կայծակն է զարկում իմ վեհ նակատին, Ես ժայռի նման կանգնած եմ ամուր (ԱԻ)։ Նոր զորամասում հանդիպում եմ մի հայ երիտասարդի (ՀրՀ)։ Ասպետը նիզակի ծայրով խոտը մոտեցրեց խոյին և միսը՝ վագրին (ԱԻ)։ Պճնազարդ Մարթան թաշկինակն աչքերին սեղմած, շարունակ հեկեկում էր բավական վարպետորեն (ԱՇ)։ Պատահեց մի մարդու հայհոյող։ Սեղմվեց կողքի բանվորին (ԵՉ)։ Փասատրանին այցելություն էր եկել մի կին։ Գնդակը կպել էր աչ թևին և նրան գամել անկողնին։ Մոտեցա նրա մահճակալին (Սգր)։ — Գալիս է,— ասաց Մոսիկոն, բռունցքը գարկելով սեղանին (ԱՇ) և այլն։*

2. Այն անձը, որին ասվում, հայտնվում է որևէ բան։ Այս իմաստով խնդիր են առնում ասացական բայերը՝ ասել, գրել, առաջարկել, պատմել, հայտնել, մրմնջալ, փսփսալ, հրամայել, զեկուցել, հարցնել, հաղորդել, թելադրել, խոստովանել, և այլն։ Օրինակ՝ Փսփսաց նա էլ կողմինին (ԵՉ)։ Նամակ եմ գրում հարազատներիս (ՀրՀ)։ Հետո նա բոլորին խնդրեց անցնել այնտեղ։ Նա դառնում էր ավագ որդուն և նրան հաղորդում բոլորը (ԱՇ)։ — Թիփի է անում քենակալս,— ասում էր Երանոսը պատերի տակ նստոտած գյուղացիներին։ — Ո՞ւր ես տանում,— դիմեց նա խաչոյին։ — Ո՞ւր ես քշում,— Սամոյին ձայն տվեց Ասատուրը։ Նախագահը կարգադրեց խաչոյին՝ խոտը վերադարձնել տիրոջը (ԵՉ)։ Ո՞ւմ գանգատվեմ, դիվան կանչեմ։ Բյուր ուղիներով դիմեցի քեզ (ԱԻ)։ Դիմում է փաստաբանին։ Նրան թելադրում իր մրտքերը, խոստովանում նրան իր արարքը (ՆԴ)։ Ես այդ մասին պիտի զեկուցեի հրամանատարին, բայց նախ հարցրի ընկերոջս (ՀրՀ)։

3. Այն առարկան, որին համաձայնում, հպատակվում, մնում, թեքվում, հնազանդվում, նմանվում, բաժանում, հակառակվում, վստահվում, ենթարկվում, հետևում է մի այլ առարկա։ Օրինակ՝ Այգին երկու մասի կիսեց և բաժանեց տղաներին (Սգր)։ Ժողովականները համաձայնեցին ելույթ ունեցողի կարծիքին (Սգր)։ Զինվորը անխոս հպատակվում է հրամանատարին։ Փոքրիկ Արան միշտ աշխատում էր նմանվել եղբորը (Սգր)։ Դրոշը փոխանցեցին հարևան կոլեկտիվին (մամուլ)։ Ջերմությունը հաղորդում է երկաթին։ Հավաքվածներիս դժգոհությունը հետզհետե փոխվում է զայրույթի (Սգր)։ Կասկած չի լինի հնչելու մասին, երբ գործն է մնում ուրիշի հույսին (առակ)։ Ո՞վ կարող է հավատալ հաղթած թշնամու գթությանը։ Նվաճված քաղաքը միշտ ենթակա է վտանգի (ՍՉ)։ Իմ խոհերի ու զգացմունքների ամենօրյա մասնակիցն է Բորիս Շելին (ՀրՀ)։ Հիմնականում համաձայն եմ դրան (ՆՉ)։ Շմավոնը հետևում էր տեխնիկական քարտուղարի գրչի ընթացքին (ՆՉ)։ Սիրածներիս կուրուտի հետ Չհաշտվեցի ես երբեք, Անհրաժեշտի իմաստի հետ չհաշտվեցի ես երբեք (ԱԻ)։

4. Այն առարկան, որին տենչում, կարոտում, դառնում, վնասում կամ օգնում, ունկնդրում, ձեռնարկում է մի այլ առարկա։ Այսպիսի խնդիր առնող բայերից են՝ տենչալ, կարոտել, բաղձալ, փափագել, վնասել, օգնել, ունկնդրել, լսել, անսալ, խանգարել, ձեռնարկել և այլ բայեր։ Օրինակ՝ Սիրտս գայլերին թող բաժին դառնա (ԱԻ)։ Կարոտ աչքիս քուն չի գա (ԱԻ)։ Ա՜խ, քո տեսքին, անուշ լեզվին Կարոտել եմ, մայրիկ ջան (ԱԻ)։ Զայնին ունկնդիր, ցավին ցավակիր ընկեր էր նա (Սգր)։ Ցուրտը վնաս էր տվել ծառերին։ Հարկավոր էր ձեռնարկել այդ

գործին (մամուլ)։ Այս տարվա երկարատև ձյունը խանգարեց ծառերի ժամանակին բացվելուն։ Երեխաները ուշադիր հետևում էին՝ ձայնին ունկնդիր (մամուլ)։

5. Այն առարկան, որին տրվում, հանձնվում է մի այլ առարկա։ Այսպիսի խնդիր են առնում՝ հանձնել, բաժանել, առաջարկել, ցույց տալ, տալ, մեկնել, մատուցել, վերադարձնել, փոխանցել, հրամցնել, ուղարկել և նման այլ բայեր։ Այս խնդիրը կոչվում է նաև մատուցման անուղղակի խնդիր։ Օրինակ՝ Մրարը հանձնում եմ շտաբի պետին (Սգր)։ Վերջին ծանր մարտերից հետո մեզ տրվում է ժամանակավոր դադար (Հրշ)։ Լուսանկարները տեսնելու համար մեկ-մեկ տալիս եմ մոտիկ մարդկանց։ Քոչարն ինձ է հանձնում լուսանկարը (Հրշ)։ — Իսկ իմ կողմից այս,— ասաց երիտասարդ նկարիչը, առաջարկելով նրան իր նկարներից մեկը (ՍՁ)։ Ես տուփը մեկնեցի երիտասարդ կնոջը (ՍՁ)։ Բազեին էր տալիս գետնին նստած գառը (ՍՁ)։ Մանդարին ու նարինջ առաջարկեցի նրան (ՍՁ)։

Հանգման խնդիր առնում են նաև ածականները։ Ինչպես՝ մեկին ատելի, մի բանի ընդունակ, համաչափ, վստահ, վարժ, հոգուն խորթ, հարազատ, գործին գիտակ, տեղյակ, հմուտ, ցավին անտարբեր, անտեղյակ և այլն։ Օրինակ՝ Խոսում էր իրադրությանն անտեղյակ։ Շատերն ինձ են ատելի, Շատերին ես օտար եմ (ՌՊ)։ Խաբելու ընդունակ չէր։ Նա դրան վստահ էր։ Հոգուն խորթ էր դա (Սգր)։ Դավին անտեղյակ, ցավին անտարբեր (ՀԹ)։

Թվարկված այս խմբերով, սակայն, չեն ավարտվում հանգման խնդրի իմաստային առումները, դրանք, ինչպես ասվեց, բազմազան են։ Ավելի հեշտ է այս խնդիրը տարբերել մյուս խնդիրներից հոլովով կամ կապային լրացումով ու հարցով։

Հանգման անուղղակի խնդիրն արտահայտվում է տրական հոլովով կամ դեմ, ընդդեմ, վրա, համար կապերով ու նրանց խնդիրներով։ Այս խնդիրը պատասխանում է ինչի՞(ն), ո՞ւմ հարցերին։ Վերևում բերված օրինակներում այս խնդիրն արտահայտված է տրական հոլովով։ Մի երկու օրինակ էլ բերենք կապային արտահայտությամբ։ Այս դեպքը ծանր տպավորություն թողեց նրա վրա։ Մանրամասնություններն իմ պատմածի հետ կապված չեն։ Դա ինձ համար մի ծանր ու կոշմարային էպիզոդ էր (ՍՁ)։ Մեր մեջ զայրույթի ամպեր էին կուտակվել ընդդեմ թուրքերի, բայց մենք անգեն ինչպե՞ս կովեինք զինված ենիչերիների դեմ (ՆՁ)։ Ընդդիմախոսը ելույթ է ունենում ընդդեմ պաշտպանողի։

Անջատման անուղղակի խնդիր։ Անջատման անուղղակի խնդիրը ցույց է տալիս այն առարկան, որից անջատվում, բաժանվում, ծագում է մի այլ առարկա։ Այդպիսի խնդիր են առնում՝ 1. բաժանել, անջատել, կտրել, պոկել, զրկել, հեռանալ, փախչել, թաքցնել, կորզել, թոցնել, մաքրել, թեթևանալ... փախցնել, հեռացնել և այլ բայերի կրավորական ձևերը։ Օրինակ՝ Արուսը հեռացավ Մացակ Ավագյանից (ՆՁ)։ Կովողներին հազիվ բաժանեցին իրարից (ՆՁ)։ Ղազարյանին իր պաշտոնից հանեցին, ուզում են կուսակցությունից էլ հեռացնել (ՆՁ)։ Փիլոն հայացքը փախցրեց Վասակից (ՆՁ)։ Մի ծանոթ աղմուկ Լեոնին սթափեցրեց իր մտքերից (ՆՁ)։ Բախտը ինձնից թռավ, գնաց (ԱԻ)։

2. Առաջանալ, ծագել, սերվել, դուրս գալ և այլ բայեր։ Օրինակ՝ Այդ փորձից մի միտք ծագեց, մի միտք առաջացավ։ Նա ծագում էր չքավոր ընտանիքից։ Աղջիկը սերում էր բանվորական ընտանիքից և այժմ դուրս էր եկել ծնողների խնամքից։ Այդ մորից ծնվել էր նույնպիսի մի համեստ աղջիկ (Սգր)։ Խեղճ աղքատի հոգին դուրս գա, Քարից, հողից հաց քամե (ԱԻ)։

Անջատման անուղղակի խնդիրը դրվում է բացառական հոլովով, պատասխանում է ինչի՞ց, ումի՞ց հարցերին։ Հաճախ անջատման անուղղակի խնդիրը կարող է շփոթվել ներգործող խնդրի, հիմունքի, պատճառի, տեղի պարագաների հետ, որոնք նույնպես դրվում են բացառական հոլովով։ Չշփոթվելու համար միշտ պիտի դիմել հարցերին, թեև հաճախ հարցը նույնպես չի օգնում, բայց պիտի նկատի ունենալ, որ սույն լրացումը այն առարկան է, որից անջատվում, ծագում է մի այլ առարկա։

Վերաբերության անուղղակի խնդիր։ Սա ցույց է տալիս այն առարկան, որին վերաբերում է գործողությունը, որի մասին, վերաբերյալ, առթիվ մի բան է ասվում։ Օրինակ՝ Գրիգոր Սահակյանը պատմեց տեղի ունեցածի մասին։ Էս ինչի՞ մասին եք խորհրդակցում (ՆՁ)։ Եկել է Վանոյենց տուն՝ իմանալու նրա տղայի առողջության մասին։ Այդ աղջիկը քաղաքականությունից լավ տեղյակ է (ՆՁ)։ Խոսում էին անցյալ աշնան բերք ու բարիքից (ԽԳ)։

Վերաբերության անուղղակի խնդիրն արտահայտվում է՝ ա) բացառական հոլովով։ Օրինակ՝ — Ինչպե՞ս եք ապրում, դու ձեզնից պատմի, Ձեր օր ու կյանքից, ձեր ցավ ու դարդից (ՀԹ)։ Նա միշտ պատերազմի օրերից էր պատմում, իր քաջություններից (Սգր)։

բ) Մասին, վերաբերյալ, առթիվ, վրա, նկատմամբ, դեպի կապերով ու նրանց խնդիրներով։ Օրինակ՝ Խոսեցին սկսեցին խոսել կովի վրա, հացի բանկության վրա (ՀԹ)։ Դեպի եղբայրն ունեցած վստահությունը շեղեց նրան (Սգր)։ Զեկուցում էին կարդում Զարենցի վերաբերյալ (Սգր)։ Լիպարիտը անասնապահական ֆերմայի մասին ոչ մի կոնկրետ առաջարկ չարավ (ՆՁ)։ Վնասարարության նկատմամբ պետք է անզիջող լինել (ՆՁ) և այլն։

Վերաբերության անուղղակի խնդիրը պատասխանում է ումի՞ց, ինչի՞ց, ինչի՞ մասին, վերաբերյալ, առթիվ հարցերին։

Միջոցի անուղղակի խնդիր։ *Սա ցույց է տալիս այն առարկան, որով կատարվում է գործողությունը։ Օրինակ՝* Ատամով *ընկույզ չեն կոտրի։ Մոսկվան այդ քաղաքների ազատագրումը նշանավորել է հրետանային քսան* համազարկով *և* հրավառությամբ *(ՀրՀ)։ Այժմ Ջերմուկ գնում են նաև* ինֆեկցիոնով։ *Մեզ մոտ ձուկը* բոռով *են բռնում (Սգր)։ Միջոցի անուղղակի խնդիր են առնում նաև լի, լիքը, առատ, հարուստ, հայտնի, նշանավոր, հպարտ, գոհ, հղի, երջանիկ և այլ ածականներ։ Ինչպես՝ Գարնանը* ջրերով *առատ են գետերը։ Նա ուրախ էր իր* որդիներով *ու* թոռներով *(մամուլ)։ Շիրվանզադեն հայտնի է իր* վեպերով, *Թումանյանը՝* պոեմներով, *Տերյանը՝* ճնարական բանաստեղծություններով, *Սունդուկյանը՝* դրամաներով *(Սգր)։ Մարդկանց նշանավորում ու մեծարում են նրանց* գործերով։

Միջոցի անուղղակի խնդիրն արտահայտվում է գործիական հոլովով և ձեռքով, միջոցով *կապական բառերով։ Օրինակ՝ Ինչ չի արվում* սրով, *արվում է* լեզվով *(առած)։ Նամակն ուղարկել էին «ճուտիկի»* միջոցով *(ՀմՍ)։ Արուսին նամակներ էր ուղարկում փոքր* եղբոր ձեռքով *(Սգր)։*

Միջոցի խնդրին մոտ է բաղկացության *խնդիրը, որ ցույց է տալիս, թե ինչից է բաղկացած այս կամ այն իրը։ Օրինակ՝ Բերեցին պրսակը՝ գործած* վարդերով *ու* մեխակով։ *Հինգ* հոգով *կազմված մեր խումբը առաջ անցավ։ Այս խնդիրն արտահայտվում է նաև բացառական հոլովով։ Օրինակ՝ Գիրքը բաղկացած էր* կազմից *և 50* թերթից։ *Բնակարանը բաղկացած է երեք* սենյակից, խոհանոցից *և* միջանցքից...։

Սահմանափակման խնդիր։ *Սա ցույց է տալիս այն առարկան, որով սահմանափակվում է գործողությունը, հատկանշի վերագրումը։ Օրինակ՝ Եթե ասում ենք, թե այս մարդը* սրտից *խեղճ է, նշանակում է նրա խեղճ լինելը սահմանափակում ենք՝ հատկանիշը վերագրելով միայն սրտին։* Լեզվից ճարտար *նշանակում է ոչ թե առհասարակ ճարտար, այլ՝ լեզվից ճարտար։ Նա ֆիզիկապես* թուլացել *էր նշանակում է ոչ թե առհասարակ էր թուլացել, այլ՝* ֆիզիկապես։ *Այդ թուլանալը չի վերաբերում նրա հոգեկան, մտավոր աշխարհին։ «Աշոտը քիմիայից ուժեղացել է» նախադասության ուժեղանալու հատկանիշը վերաբերում է միայն քիմիային, մյուս առարկաները նկատի չեն առնվում։ Ինչպես երևում է օրինակից, սահմանափակման անուղղակի խնդիր առնում են բայերն ու ածականները։*

Այս խնդիրն արտահայտվում է՝ բացառական հոլովով (խելքից պակասել, ոտքից թեթև), գործիական հոլովով (տեսքով դուրեկան, լեզվով ճարտար), ներգոյական հոլովով (խոսելում վարժ, վազելում տկարանալ, աշխատանքում բարեխիղճ), մեջ կապով (ուտելու մեջ միակ, աշխատանքի մեջ ծուլանալ, ընկերության մեջ խորթանալ)։

Սահմանափակման խնդիրը պատասխանում է ինչի՞ց, ինչո՞վ, ինչո՞ւմ *հարցերին։*

ՊԱՐԱԳԱՆԵՐ

Յուրաքանչյուր գործողություն կատարվում է որոշ հանգամանքներում, պարագաներում՝ ժամանակի, տարածության մեջ, որոշակի ձևով, չափով, նպատակով, պատճառով և այլն։ Սրանք էլ կազմում են նախադասության պարագա լրացումները։ Պարագան, ուրեմն, բայական այն լրացումն է, որը ցույց է տալիս գործողության տեղ, ժամանակ, ձև, պատճառ, նպատակ, չափ և այլն։ Պարագան բայիմաստի լրացում է։ Պարագան ընդհանրապես բայական լրացում լինելով հանդերձ, կարող է որոշ դեպքերում լրացնել նաև ածականին, մակբային, բայանուն գոյականին։

Ըստ վերը նշված իմաստների՝ պարագաները լինում են՝ բնութագրական, *որոնք բնութագրում են գործողությունը կամ հատկանիշը, դրանք են ձևի, միասնության, չափի պարագաները, և ոչ* բնութագրական, *դրանք են՝ տեղի, ժամանակի, հիմունքի, պատճառի, նպատակի, պայմանի, զիջման պարագաները։*

Պարագաներն իրենց արտահայտության ձևով բաժանվում են երկու խմբի՝ բուն պարագաներ, *որոնք արտահայտվում են չթեքվող խոսքի մասերով (մակբայ, ածական, չհոլովված դերբայներ՝ համընթացական, հարակատար, չհոլովվող դերանուններ), և* պարագայական խնդիրներ, *որոնք արտահայտվում են հոլովաձևերով կամ կապային կապակցությամբ։ Միևնույն պարագան կարող է արտահայտվել թե՛ հոլովաձևերով (պարագայական խնդիր), ինչպես՝ «Երևանում ծառերը ծաղկել են», թե՛ չթեքվող խոսքի մասերով (բուն պարագա), ինչպես՝ «Ամենուրեք ծառերը ծաղկել են»։*

Բնութագրող պարագաներ։ *Ձևի պարագա։ Ձևի պարագան ցույց է տալիս՝ ա) գործողության կամ հատկանիշի ձևը, որակը, ինչպես՝ Եվ Լբաղիս մեջ ես զառն լացի։ Աչքերդ լեցուն սիրով ու գթով՝* Անթարթ, անխիթիթ *հառել ես վրաս (ԱՒ)։* Անուշ *երգում էր մի սիրուն թռչնակ, և մենք լսում էինք* հիացած *(Սգր)։ Կինը ուրախ ժպտաց երեխայի շարքաճի արարքի վրա։ Կնոջ վերին շրթունքը* անկատ դողդողաց։ *Գլխի շորն* արագ *իջեցրեց ճակատին (ԱԲ)։ (Նա շատ լավ է երգում։)։*

բ) Գործողության հետևանքը, ինչպես՝ Կորավ անհետ, *հարցի լուծումը թողնելով* անհետևանք *(Սգր)։ Զայներն սկսում էին ներդաշնակ հնչել՝ գոյացնելով մի քաղցրալուր նվագ (ԱԲ)։ Պատմությունը վերջացրեց՝* թողնելով *մի ծանր տպավորություն (Սգր)։*

գ) Գործողության կատարողի կամ խնդրի վիճակը, ինչպես՝ Քոռինի մեջ *դողում էր (Սգր)։* Արոռին նստած՝ *Սուրենը քահքահ ծի-*

ծաղում էր։ Գրգռված վիճակում բառերի ընտրություն չեն կատարում։ Մարին նրան այգում նստած գտավ (Սգր)։ Մատիտի արագ շարժումով նկարեց կնոջը՝ օջախի մոտ նստած, աչքերը օջախի քարին։ Միայն տղան տեսավ մոր նկարն սպիտակ թղթի վրա (ԱԲ)։

դ) Գործողության որևէ անձի, իրի հետ միասնաբար կատարում, ինչպես՝ Եվ միասին ու միասիրտ՝ գնում ենք հաղթական (ԵՁ)։ — Ինչպե՞ս է գնացել կայարան, մենա՞կ։— Չէ՛, մոր հետ (Սգր)։ Հացավաճառը նրա դեմ նլավ անասնապահական ֆերմայի պրակտիկանտուհին՝ իր ձյունափայլ առամներով, երջանկության խոստումներով լեցուն իր աչքերով, իր չքնաղ դլխի կախարդական շարժումով, իր կարկաչուն ձայնով (ՆՁ)։ Երեխաները խմբով թատրոն էին գնացել։ Խմբով դիտում էին ցուցահանդեսը (մամուլ)։ Գրիգոր Սահակյանը վերադարձավ Աբեյի հետ միասին (ՆՁ)։ Հայր ու տղա աշխատում են ամբողջ օրը միասին (ԳՍ)։ Գործողության կատարման միասնականությունն ցույց տվող այս պարսգան քերականներն անվանում են միասնության պարագա։ Բայց միասնությունը նաև ձև է, հակադրվում է մենակ, միայնակ ձևին։

Ձևի պարագան պատասխանում է ինչպե՞ս, ի՞նչ ձևով հարցերին։ Ձևի պարագան արտահայտվում է՝ ա) ձևի մակբայով և մակբային համապատասխան դերանունով, ինչպես՝ Մեր երիտասարդությունը ընդհատվում է հանկարծակի (ՀԲՀ)։ Նա մանրամասն հարցնում է, թե ո՞ւմ այդուց է... Երիտասարդ սպան դիտմամբ ծռել էր ճանապարհը (ԱԲ)։ Դանդաղ ու միապալաղ անցնում էին օրերը (Սգր)։ Լուռ նստեց խոտի վրա (ԱԲ)։ Իր որջի առաջ կիլ ոռնում էր գայլը (ԱԲ)։ Անհաս երկնքից ասեղ առ ասեղ ցուրտ ջրերի մեջ սուզվեցին նորա (ՎՏ)։ Ժամերով կարող եք նայել, թե ինչպես է զարկում փորի մաշկը (ԱԲ)։ — Այնպես էր խոսում, որ...։ — Ինչպե՞ս էր խոսում (Սգր)։ Անտոնինա Իվանովնան չգիտեր ինչպես արտահայտեր իր զարմացումը և հիացումը (ԱՇ)։

բ) Ածականով, որը նույնպես ավյալ կառույցում մակբայական կիրառություն ունի, ինչպես՝ Քնքուշ փռված է լուսազարդ շղարշ (ՎԹ)։ Նվագախումբը ներդաշնակ հնչեցնում է բարդ սիմֆոնիան (ԱԲ)։ Արտասուն ուրախ ճախրում է վեր (ԱԲ)։ Անցնում էին մշակներն ու արհեստավորները, շտապելով գործի—որը տխուր ու գլխակոր, որը՝ զբվարար՝ երգելով։ Մի խումբ մարդիկ, բմրած, դանդաղաբայլ անցնում էին ծովափով, ըստ երևույթին անվնույր ու անհոգ (ԱՇ)։ Դուրս գան ափերից վագեն համարձակ, ազատ խոխոջան, ազատ կարկաչեն (ԱԾ)։

գ) Գոյականի գործիական հոլովով, ինչպես՝ Սկզբում նա ինձ հետ խոսում էր «դու»-ով, բայց չգիտեմ ինչու՝ վերջացնում էր «Դուք»-ով (ՀԲՀ)։ Գոնե գիշերները չէր սպասի աչ ու դոդով (ՆԹ)։ Սավառնում է ոչ թե ուղիղ գծով, այլ՝ լայն պտույտներով (ՍՁ)։ Մեր գումարտակը նորից շարժվում է իր սովորական երթով (ՀԲՀ)։ Շները ճաչոցով-կլանչոցով վազեցին հանդիպ, մի այնպիսի իրարանցումով ու աղաղակով... (ՍՁ)։ Խմբով չի կարելի խոսել։

Գործիական հոլովով ձևի պարագան կարող է ունենալ իր լրացումները, ինչպես՝ Հովսեփը վախճանվել էր իր քսանչորս տարեկան հասակում, սնակենալ ու անիմաստ մահով (ԽԳ)։ Երբ ներս մտա, ժպտաց՝ միայն իրեն հատուկ փափուկ, ինչ-որ բան խոստացող ժպիտով (ԽԳ)։ Դնում ենք կարճ, ամեն մի հինգ կիլոմետրն անցնելուց հետո հինգ ռապեանոց սովորական դաղարով (ՀԲՀ)։

դ) Զանգամահատվող, անմասնատունակ բառակապակցություններով, ինչպես՝ Ուստեն եկավ ֆուրմր հագին, Շանը տեսավ, բեղի տակին... (ՀԹ)։ Ներսում էր բանտարկյալների խումբը՝ գորշ խալաթներով, ոտներին շղթա (ԱԲ)։ Ներս մտավ Համոն՝ բաճկոն ուսին (մամուլ)։ Հովսեփը կանգնած է՝ բեղի տակ ժպիտ (ԽԳ)։ Աղջիկը սոսկալուկ հայացքով աչքի տակից նայեց հոր դատարկ ձեռներին (ՆԹ)։ Երկու սուփ ձեռքին՝ նա փաթաթվեց մոր փեշերին։ Կերավ կորեկ հացը և փափախը գլխի տակ՝ մեկնվեց խոտերի վրա (ԱԲ)։ Լապտերավարը, սանդուղքն ուսին, փոքրիկ լապտերը ձեռքին, վազում էր լապտերները վառելու (ՆԹ)։

ե) Դերբայական դարձվածով, ինչպես՝ Աշխարհից հեռու մի գյուղում, եղեգնյա մի սրինգ կտրած՝ Արև է երգել ու գարուն այս հիվանդ, հանձարեղ պատանին (ԵՁ)։ Մի կերպ քնում ենք, ոտքերս կուշ արած գրպանները խրած շինելի մեջ (ՀԲՀ)։ Հովսեփը կանգնած է՝ աջ ձեռքը տիրակաճուճն դրած նշանաձի ուսին (ԽԳ)։ Մի բանի բոպե նա՝ արոտանքն նստած, նա՝ բիկն ուված ապիտակ բարձերին, լուռ նայում էինք իրար (ԽԳ)։ Սեղանում անհանգիստ նա ու առաջ անելով՝ ինչ-որ բան էր մտմտում (Սգր)։ Նա մանրամասն բացատրում էր երևույթը՝ պարզ օրինակներ բերելով (Սգր)։ Ոռնում են գայլերը՝ գունչը լուսնակին մեկնած (ԱԲ)։ Անձրևների ժամանակ կաթում, ծսթում՝ ստալանով խեղճ ու քշվող բնակիչներին՝ պատուղարվել ծալքերում, գրոների ու պատուհանների խոռոչներում, չուլ ու փալասների տակ (ՆԹ)։

զ) Կապային կապակցությամբ, ինչպես՝ Գլխով արավ նա՝ անհրաժար խոռնիկ մի ժպիտ բարակ շուրթերի վրա (ՍՁ)։ Ներս մտավ գրբերով հանդերձ (Սգր)։ Ամեն մեկը մտքերի մեջ հյուսում էր իր նախշը (ՍՁ)։ Տարիներն արագ, ամպերի նման, անցնում են անհետ (ՎՏ)։ Խանդը կայծակի պես փայլատակեց մռայլ հնձվորի սրտում։ Երկար ու կիրկեր, իրրև արևելյան թախծոտ երգ, հնչում էր հին դուռը (ԱԲ)։ Լապտերը... նայում էր շուրջը կեղտոտ ապակիների միջից՝ մառղու ցավագար նայոտ աչքերի պես (ՆԹ)։ Նա... տեղնուտեղը պպզեց տապտապ արած հավի պես (ՆԹ)։ Կյանքիս պես պահպանել եմ այդ ուսապարկը (ՀԲՀ)։

Չափ ու քանակի պարագա։ Չափ ու քանակի պարագան բնութա-

գրում է գործողությունը կամ որևէ հատկանիշ՝ չափի, քանակի, աստիճանի տեսակետից։ Օրինակ՝ «Յոր անգամ պտտվեց կրակի շուրջը» նախադասության յոր անգամ կապակցությունը պտտվեց բայի գործողության կատարման չափն է ցույց տալիս, քանակը։ Դենացքը չափազանց արագ անցավ» նախադասության չափազանց արագ կապակցությունը գնացքի ընթացքն է բնութագրում, իսկ չափազանց մակբայը՝ արագության աստիճանը, չափը։

Չափի ու քանակի պարագան պատասխանում է ինչքա՞ն, ո՞րքան, ի՞նչ չափով հարցերին։

Չափ ու քանակի պարագաներ առնում են բայերը, ածականները, մակբայները։ Օրինակներ՝ — Սամվե՛լ... Թանկագին Սամվել...— անդադար բացականչում էր նա՝ կրկին ու կրկին անգամ ողջագուրվելով։ Անտառը ոռոմվեց ամբողջապես։ Ճանապարհի հետքը կորավ բոլորովին։ Քամին միշ-միշ դադարեց (Ր)։ Մի կապտավուն ձի... բոլորովին մերկ, կատաղած վազում էր (ԱԲ)։ Նոր էր անձրևի տակից դուրս եկել՝ շրջերն ամբողջովին թաց։ Հազավ ամբողջովին կեղտոտ ու մաշված կոշիկները (Սգր)։ Մարկոս աղա Ալիմյանը ծանր նիվանդ էր (ԱՇ)։ Քո գգվանքը բյուր անգամ թանկ է ու սիրելի (ՎՏ)։ Չափազանց դանդաղ են ընթանում օրերը։ Շատ արագ, սիանգամայն անսպասելի դեղակը նայտնվում է դարպասից ներս (մամուլ)։

Չափ ու քանակի պարագան արտահայտվում է՝

1. Չափ ու քանակի մակբայներով, ինչպես՝ չափազանց, ուժգին, կրկին, բոլորովին, ամբողջովին, փոքր ի շատ, միշ-միշ, շատ-շատ, նուազի, քառակի, երիցս և այլն։ Օրինակ՝ Ցոլակը անքում էր, պոչն ուժգին խփում այս ու այն կողմ (ԱԲ)։ — Չէ, Անուշ, միշ էլ, մի միշ էլ մնա (ՀԹ)։ Նստել այստեղ, անվերջ նստել ու նստել (ՎՏ)։ Կրկին և-կար, անուշ գարուն (ՎՏ)։ Նորից իմ ճամփան գնում է հեռուն (ՎՏ)։ Փողոցի տոթին առատարեն հոսում էր ներս (ԱՇ)։ ...Ինչ որ կարող էր միշ թե շատ հանգստացնել։ ...Որով անխնա սեղմում էր իր պարտապանների կոկորդը (ԱՇ)։ Մատներով անընդհատ պրպտում էր գրպանները (ՆԴ)։ Ներսունու դեմքը թեթևակի ալավաղվեց մահու ցուրտ սյուքից (ԱՇ)։ Այժմ նա տուն էր դառնում հույսը բոլորովին կտրած (ՆԴ)։ Շատ է տեսել երկիրն իմ ցավ ու արհավիրք (ՎՏ)։ Արտարինն այդ մարդուն պատկերացնում էր վերին աստիճանի անվրդով հոգու տեր (ԱՇ)։ Այդ բանն ավելի կատաղեցրեց Դավթին (ՆԴ)։ Միծեռնակը մի գլոր ծղրտաց... ու թռավ (ՀԹ)։ Շարմաղ բիբին անընդհատ լալիս էր (ԱԲ)։ Կրկին առավ մագաղաթյա թերթերը (Ր)։ Այդ մասին բազմիցս գրվել է (Սգր)։

2. Այսքան, այդքան, այնքան, այսչափ, այդչափ, այնչափ ցուցական և ինչքան, որքան, որչափ հարցա-հարաբերական դերանուններով։ Օրինակ՝ Շարմաղ բիբին ու Շողերը կանգնեցին այնքան, մինչև

ձիավորները դարիվերը բարձրացան (ԱԲ)։ ...որոնց արտահայտությունը ոչ այնքան խելացի էր, որքան նենգամիտ ու հրոռ (ԱՇ)։ Կորուստն այնքան մեծ չէր (ԱՇ)։ Որքա՞ն ենք մենք խաղացել, իրար սիրել ու ծեծել (ՀԹ)։ Մութն իջնելուց (հետո) ինչքա՞ն մոայլ են թվում վերի ժայռերը (ԱԲ)։ ...Որքա՞ն է մորմոքվում այդ պահին առողջակազմ, ինքնավստահ դեմքով որդու վիշտը (ԱՇ)։ Էնքան մնացի՝ աչքս ջուր դառավ (ՀԹ)։ Որքան ցավել է իմ սիրտը, Այնքան թող գվարթ լինի քո սիրտը լուսեղեն (ՎՏ)։

3. Կապային կապակցությամբ։ Օրինակ՝ Հանդիպել ենք մի անգամ[57] (ՎՏ)։ — Կարո՞ղ ես նդրուղ չափ հեռու լողալ (Սգր)։ Խողովակից ջուրը դուրս էր գալիս մի բազկի չափ (մամուլ)։ Մի քանի անգամ գնաց եկավ (Սգր)։ Տասը անգամ չափիր, մեկ անգամ կտրիր (առած)։ Արին կթափեմ ես գետի նման (ՀԹ)։ Զգում էր միայն մի բան— սիրումու չափ տենչալի և մանվան չափ անդիմադրելի, զգում էր ծարավ... (ՆԴ)։ ...շատ անգամ էր պատահել փող ունեցած ժամանակ (ՆԴ)։ Արևդակը մի մետրի չափ բարձրացել էր սարից։ Մի երկու թզի չափ էր հեռու կանգնած (Սգր)։ Քառասուն անգամ ծունր էր դնում (ՆԴ)։

Պարագաներ, որոնք չեն բնութագրում գործողությունը կամ նատկանիշը, այլ ցույց են տալիս տեղ, ժամանակ, նպատակ և այլն։

Տեղի պարագա։ Տեղի պարագան ցույց է տալիս.

1. Այն տեղը, ուր կատարվում է գործողությունը։ Այս դեպքում այն արտահայտվում է՝ ա) տեղի մակբայներով, ինչպես՝ Ամենուրեք ծաղկել են ծառերը (Սգր)։ Ու նստոտեցինք իրար դեմ ու դեմ Սաստկությամբ վասվող կրակի շուրջը (ՀԹ)։ Լվացքի սապնոտ ջուրը տեղտեղ գուբ էր կապել (ՆԴ) և այլն։

բ) Գոյականի ներգոյական հոլովով, ինչպես՝ Նատոն պատմեց, որ նիվանդանոցում առանց չքավորության վկայականի չեն ընդունում ձրի (ՆԴ)։ Չհեռադրե՛լ, արդյոք, որ այդ կինը մնա իր ծննդավայրում (ԱՇ)։

Այս գործառույթով հանդես են գալիս նաև առարկայանիշ դերանունները՝ ներգոյական հոլովով, ինչպես՝ որտե՞ղ, ինչո՞ւմ, որո՞ւմ, մեզանում, ձեզանում, նրանցում։ Օրինակ՝ Դարձանը մեզանում ծառերն էտում են։ Զեզանում ծառ չկա, որ էտեն (Սգր)։ Լճակը, որում աճում են այս ձկները, ամեն տարի մաքրում են (մամուլ)։

գ) Գոյականի տրական հոլովով։ Օրինակ՝ Նեմին կանգնած էր Սեդրակը։ Աչքն ընկավ պատին կախած նկարին (Սգր)։ Ցեխոտ շուտերը թողնելով գետնին՝ ծալքից հանեց բավական մեծ ու հաստ մի վերմակ (ՆԴ)։ Կապույտ սուփրի մեջ հացերը շալակին՝ տնքտնքալով ներս մտավ ազին (ՆԴ)։

[57] Այս և հաջորդ օրինակներում անգամ բառը կապի գործառույթ ունի։

դ) Տարածական իմաստ ունեցող վրա, տակ, միջև, մեջ, վերև, ներքև և այլ կապերով։ Օրինակ՝ Բուխարու մեջ, կասկարայի վրա դրված կաթսայի տակ մի քանի բարակ փայտ էր ծխում (ՆԴ)։ Այժմ Սաքուլը ոտով-գլխով կորած էր վերմակների տակ (ՆԴ)։ Ջուլհակ Թորոսը նստում էր իր նահապետական դազգահի առաջ, ոտները կախում ճորի մեջ, մաքոքը ճինճի միջով աջ ձեռքից ձախն էր գցում, ձախից՝ աջը (ՆԴ)։ Մեր գյուղից վեր մինչ էսօր կա ուռենի մի սգվոր (ՀԹ)։ Ի՞նչ սև կատու էր անցել նրանց միջև (Սգր)։ Այս պարագան պատասխանում է որտե՞ղ հարցին։

2) Այն տեղը, որով անցնում է գործողությունը։ Ինչպես՝ Փողոցով անցնում է մեքենան։ Այս դեպքում տեղի պարագան արտահայտվում է գոյականի գործիական հոլովով։ Օրինակ՝ Անցնում ենք կանաչ դաշտերով (ՀրՀ)։ Սարերով ու լայն դաշտերով սլանում է դիվիզիան։ Այդ քաղաքը ծովով են գնում։ Մոսկվա կարելի է գնալ թե՛ ցամաքով, թե՛ օդով։ Մետրոյի գնացքները սլանում են գետնի տակով և այլն։

3) Այն տեղը, ուր ուղևորվում է որևէ առարկա, անձ և կոչվում է ուղևորման տեղի պարագա։ Այս դեպքում տեղի պարագան արտահայտվում է՝ ա) ուղղական (հայցական) հոլովով, ինչպես՝ Փոքրիկ երեխան բարձրացավ թախտը։ Նրանք մեկնեցին գյուղ։ Ես ընկա գրնդացրային վաշտ (Սգր)։ Նախշքար Դավիթը գնում էր տուն։ Այժմ նա տուն էր դառնում բոլորովին հույսը կտրած (ՆԴ)։ Երեխան վազեց փողոց։ Գյուղն էին իջել հովիվ պատանիք (ՀԹ)։ Արամը մեկնել էր Մոսկվա, տղան ընդունվել է ճամպարան և այլն։ բ) Դեպի, մոտ, վրա, մեջ կապերով ու նրանց խնդիրներով։ Օրինակ՝ Սաքուլը դուռը ետ դրեց, գնաց դեպի թախտը (ՆԴ)։ Նա հայտնվում էր մեր գյուղում ու մեր կտուրի տակ (ՀԹ)։ Պառավը ծալապատիկ նստեց որդու մոտ։ Գավն ու կապոցը դրեց թախտի վրա (ՆԴ)։ Երեկոյան դեմ նա գնաց իրեն լավ ծանոթ մի կապալառուի մոտ (ՆԴ)։ Դրանք ինձ դեպի կյանք են կանչում, իսկ ես գնում եմ դեպի մահ (ՀրՀ)։ Հոսանքը դեռ չի մտել լարի մեջ (Սգր)։ Բաթումից երկաթուղու մարդատար գնացքը սլանում էր դեպի Թիֆլիս (ՆԴ)։

4. Այն տեղը, որտեղից սկսվում է գործողությունը, և կոչվում է ելման տեղի պարագա։ Այս դեպքում պարագան դրվում է բացառական հոլովով։ Օրինակ՝ Ամպի տակից ջուր է գալիս (ՀԹ)։ Եվ աղմկալի հարսանքի տանից Դուրս եկավ Մոսին սաստիկ վիրավոր (ՀԹ)։ Ամպերը դանդաղ ուղտերի նման Նորից են ջուր խմած՝ ձորից բարձրանում (ՀԹ)։ Գյուղից սլացան մի խումբ կտրիճներ (ՀԹ)։ Մխականից անցել էր թեմական, թեմականից ճեմարան, ճեմարանից ուր—հայտնի չէ (ՆԴ)։ Ինչպես երևում է օրինակներից, ելման և ուղևորման տեղի պարագա են առնում շարժում, տեղափոխություն ցույց տվող բայերը,

ինչպես՝ գնալ, գալ, վերադառնալ, հեռանալ, անցնել, սլանալ, իջնել, ընկնել, բարձրանալ և այլն։

Ժամանակի պարագա։ Ժամանակի պարագան ցույց է տալիս՝ 1. առարկայի գործողության կամ հատկանիշի վերագրման ժամանակը՝ առանց նշելու ժամանակի որոշակի սահմանները՝ սկիզբը և վերջը։ Օրինակ՝ Ես միշտ տեսնում էի նրանց, բայց իմ միտքը ուրիշ տեղ էր։ Հիմա ընկալեցի (ՀՀ)։ Վաղուց, վաղուց ես դու ինձ մոռացել (ՀԹ)։ Այժմ էլ ցարն է մեզ աղալում (Հակ.)։ Ամառը ուշ է մթնում, շուտ է լուսանում, ձմեռը շուտ է մթնում, ուշ է լուսանում։ Առայժմ վեպեր ու բանաստեղծություններ եմ գրում (ՆԴ)։ Սիրում եմ երբեմն ինքս ինձ կարդալ իմ գրվածքները (ՆԴ)։ Անցյալ անգամ եկել էր, տակից գլխից դուրս էր տալիս։ Դեռ թեյ անուշ անենք, նեռս կկարդանք ճրագով (ՆԴ)։ Դեռ խելոք այս տղան... Արդեն անտանելի բնավորություն, այդ միշտ դժբախտ մարդը, առայժմ լռակյաց և այլն։

2) Գործողության կամ հատկանիշի վերագրման սկիզբը կամ վերջը նշող ժամանակը։ Օրինակ՝ Սկսած պատերազմից մինչև ավարտելը անբաժան էինք իրարից (ՆԴ)։ Դու որտե՞ղից գիտես ինձ, ծերունի՝ — Քո ծնված օրից։ Ես քո հորն էլ եմ ճանաչում փոքրուց (ՀԹ)։ Այդդ առնելուն պես պետք է հրացանդ բացվի։ Խոսելով՝ իրիկունը հասանք Օվակիմի դափեն (ՀԹ)։ Գաղթականների ուրախ ժամանակ դռնից ներս մտավ Մարտոն (ՀԹ)։ Եկող շաբաթ կարծեմ տուն է, առավոտից կգաս (ՆԴ)։ Մինչև ուշ գիշեր զրույց էինք անում (Սգր)։ Մինչև վերջ էլ չհասկացա, թե ինչ էր դա (ՍՋ)։ Վաղ առավոտից մինչև ուշ գիշեր խրճիթի խոր լռության մեջ լսվում էր ճախարակների միալար ճռճռոցը (ՆԴ)։ Առավոտյան ժամը 8-ից մինչև գիշերվա մեկը, երկուսը, երեքը նա շրջանային կոմիտեում էր (ՆՋ)։ Մեղանում աշխատանքն ավարտում են երեկոյան ժամը վեցին։ Նա համալսարանն ավարտել է 1952 թվականին։ Հարսանիքի ժամանակ միայն վերացան նրա կասկածները (Սգր)։ 1898 թ. նոր էր բացվել Թիֆլիսից Կարս գընացող երկաթուղին (ՀԹ)։

Ժամանակի պարագան արտահայտվում է՝ 1. ժամանակի մակբայներով։ Օրինակ՝ Հիմա ուշ է, հիմա թողնենք։ Գիշեր-ցերեկ ձեռքիցդ բաց չես թողնում։ Հետո, ընթրիքի ժամանակ, նրա սիրտը կամաց-կամաց տեղն ընկավ (ՆԴ)։ Ես այժմ չգիտեմ, բայց այն ժամանակ լիովին հավատացած էի։ Նուտով պիտի ավարտեի իրավագիտության ֆակուլտետը (ՆԴ)։ Մեկ-մեկ գալիս էր։ Այնուհետև նա՝ «հարյուր տոկոսով մեշչանկան» էմմային մոռացել էր (ՆՋ)։ Նոր էր վերադարձել գործուղումից։ Ճշմարտությունը մի անգամ ընդմիշտ իմանալու նպատակով հարց տվեց (ՆՋ)։ Էմման արդեն ամեն ինչ կռահել էր (ՆՋ)։ Մացակը երբեք չի եղել կուլակ (ՆՋ)։ Առավոտյան վաղ բռնեցին Թելեթի ճամփան (ՆԴ)։

2. Ժամանակ ցույց տվող գոյականով։ ա) Ուղղական հոլովով։ Օրինակ՝ Գիշերները իր թաքստոցից դուրս էր գալիս։ Ցերեկն աշխատել էր, գիշերը պիտի քներ (Սգր)։ Ձմեռը արհեստանոցում էր աշխատում, ամառը դաշտ էր գնում (մամուլ)։ Ձմեռը գյուղգործիքների վերանորոգումը պիտի ավարտել, որ գարունը դրանք պատրաստ լինեն (մամուլ)։

բ) Տրական հոլովով։ Այս հոլովով ժամանակի պարագա են դառնում ժամանակի իմաստ ունեցող բառերը՝ լուսաբաց, իրիկնամուտ, ադամամութ, խրշալույս և այլն։ Օրինակ՝ Այս երեկո, ծննդյան նրագալույցին շատ կոպեկներ էին ափսեն գցել (ՆԴ)։ Ձյունը դադարեց միայն լուսաբացին (ՆՁ)։ Իրիկնալաճին մի անգամ էլ երևաց գյուղը հեռու մշուշում (ՀԹ)։ Լուսին իշխաններ ելան միասին (ՀԹ)։ Պետք է ժամանակին վճարեք (ՆԴ)։ Ադամամուրին... Սոնան աչքերը բաց արեց (ՆԴ)։ Կեսօրին հասանք գյուղ (Սգր)։ Լուսաբացին նա բարձրացավ կախաղան (ՎՏ)։

Տրական հոլովով ժամանակի պարագա են դառնում տարվա եղանակների անվանումները՝ գարնանը, աշնանը, ձմռանը, ամառանը։ Ինչպես՝ Ամեն տարի աշնանը գնում էր, գարնանը եւ գալիս (ՀԹ)։ Խոր աշունին Լոռու սարերով անցնելիս մի գյուղում մութը վրա հասավ (ՀԹ)։ Ամեն տարի ամռանը նա սար էր գնում։

Զանազան երևույթների, կլիմայի անվանումները նույնպես տրականով ժամանակի պարագա են լինում, ինչպես՝ ցուրտ, տաք, փոթորիկ, քամի, անձրև, ձյուն, շոգ, հարսանիք, պատերազմ, հունձ, քաղ, կալ, ժողով, համագումար և այլն։ Օրինակ՝ Մնացածը կալին պիտի տա (Սգր)։ Տոնին նրանք գյուղ էին գնացել։ Զատկին ձու են կարմրացնում։ Այդ հարսանիքին նա շատ երգեց (Սգր)։ — Այս ցրտին ո՞ւր ես գնում (Սգր)։ Կանգնած է դեռ ու շոգին Հով է տալիս մշակին (ՀԹ)։ Ամառվա հնձին հայրս տուն չի գալիս (Սգր)։ Հարսանիքին հարսին մատանի են նվիրում։ Ծողովին խոստումներով հանդես եկավ կոլտնտեսության նախագահը (մամուլ)։

գ) Բացառական հոլովով։ Ցույց է տալիս այն ժամանակը, որից սկսվում է գործողությունը։ Օրինակ՝ Մի երկու օրից վերադարձա քաղաք (ՍՁ)։ Երեկվանից անձրև է գալիս։ Վաղ առավոտից սպասում է քեզ (Սգր)։ Աշխատում են լուսաբացից լուսաբաց և այլն։ Այս հոլովով ժամանակի պարագա են դառնում նաև մի շարք դեպքերի, անցքերի անվանումներ։ Օրինակ՝ Ու էն հարսանիքից թշնամի դարձան Ախպեր ղերքը էս դեպքի համար (ՀԹ)։ Գարնանացանից դաշտում էր մնացել և ժանգոտվել խոփը (մամուլ)։ Մանկությունից էր գալիս այդ սովորությունը։

դ) Գործիական հոլովով։ Ցույց է տալիս այն ժամանակը, որի ընթացքում կատարվում է գործողությունը։ Օրինակ՝ Ժամանակով կա-

տուն ճոն էր, Շոնն էլ գլխին գդակ չուներ (ՀԹ)։ Իշխում էր ահեղ ու նրա օրով Հավքն էլ չէր անցնում Սատմա սարերով (ՀԹ)։ ...Բանից հետո ամբողջ ժամերով կնստեր գինետանը... (ՆԴ)։ Սակայն մեր այս երթը մի տեղ ընդհատվում է, ընդհատվում գիշերով։ Գնում ենք ու գընում ամբողջ օրերով (ՀրՀ)։ Ցերեկով մեռած գյուղն սկսեց շարժվել։ Օրերով կորչում էր, չէին գտնում։ Բժշկի դուռը ժամերով սպասում էին (Սգր)։ Մեկ ամսով գործուղման է գնացել (մամուլ)։

ե) Սերգոյական հոլովով։ Ցույց է տալիս, թե երբ է կատարվում գործողությունը։ Ինչպես՝ Էս դարում Մըսր անհաղթ ու հզոր Մըսրա Մելիքն էր նստած թագավոր (ՀԹ)։ Քառասուն «Ա՜խա չէր քաշել նա դեռ իրեն օրում (ՀԹ)։ Ներկա օրերում այլ ինչ սև քնար, Սուր է հարկավոր կորիճի ձեռքին (ՄՆ)։ Դեռևս մանուկ հասակում լսել էր մորից (ՆԴ)։ Օրերում այս վառ, հողմավար, շփոթ—Հեռու ու մոտիկ միլիոն սրտերի Երգն է վիճակվել ինձ երգել այսօր (ՆՁ)։

զ) Կապային կապակցությամբ։ Ժամանակի պարագայի գործառություն ունեն՝ անց, առաջ, հետո, ժամանակ, ընթացքում, վրա՝ անգամ, ի վեր, միջոցին, մոտ, միջև, նախքան, պես, պահին, օրոք և այլն կապեր։ Օրինակ՝ Հին ժամանակներից ի վեր Դաղեղը պարծեցել էր յուր քաջերով (ՀԹ)։ Խոսակցության միջոցին գյուղի շներն սկսեցին անհանգիստ հաչել ու ոռնալ (ՀԹ)։ Այս անգամ մեր երգիչը դուրս էր գալիս (ՀԹ)։ Մասիսյանը նախմեն նրան պատասխանելը ազերբայջանական հայացք ձգեց ինձ վրա (ՆԴ)։ Այդ ձայնի վրա պահապան շունը հաչոցով թռավ դռան կողմը (ՆԴ)։ Այն ժամանակ վերջին կուրսի ուսանող էի։ Մի անգամ մի նամակ ստացա։ Այս անգամ ինքը Փափախչյանն էլ ծիծաղեց (ՆԴ)։ Ճաշի դեմ հասան Թելեր։ Մի՞թե շուրջ տարվա ընթացքում գեթ մի անգամ տեղեկություն չէիք ստանա քեզնից (ՆԴ)։ Ճաշի վրա, ճաշից հետո և մինչև լույս... եկան այն Եղբայրությունը... (ՆՁ)։ Կեսօրի մոտ դուրս եկան գյուղից (Սգր)։ Անուշի դուրս գնալուց միշ անց Ավաղյանին այցելեց Եփրեմ Նազանյանը (ՆՁ)։

է) Դերբայով, դերբայական դարձվածով՝ կազմված առանձնապես համընթացական դերբայով՝ որը ժամանակի պարագայի պաշտոն է կատարում։ Օրինակ՝ Քարտուղարի տան մոտով անցնելիս նա նկատեց էլուշին (ՆՁ)։ Թշնամին նախկին դիրքերը նահանջելիս թողել էր հրանոթները (մամուլ)։ Մանկությունս հիշելիս՝ սիրտս դառնում է գինով... (ՆՁ)։ Երգելիս ձայնը խզվեց։ Տանը նստած հիշեց որդուն (Սգր)։

Ժամանակի պարագայի պաշտոնով հանդես են գալիս նաև անորոշ և հարակատար դերբայներով կազմված կապակցությունները։ Օրինակ՝ Աշխատանքից հետո տուն վերադառնալով՝ նա դռան առաջ մի անծանոթ մարդ նկատեց։ Խեղճ պառավը դեռ անկողին չմտած՝ դուրը ծեծեցին (Սգր)։ Դեռ ճաց չկերած, դասերը չսովորած՝ բակ էր վազում։ Մանրամասնելով հայցվորի ներկայացրած փաստաթղթերին՝ դատավորը

համապատասխան մակագրություն արեց դիմումի վրա (մամուլ)։ Հանկարծ նկատելով մոտեցող Աբամին՝ բացականչեց։ Այդ վեպը երկրորդ անգամ կարդալով՝ նա փոխեց իր նախորդ կարծիքը (Սգր)։ Հասնելով իրենց փոքրիկ կայարանին՝ նա իջավ գնացքից։ Արտեմն աշխատանքից տուն էր գնում՝ կատարելով իր օրվա առաջադրանքը (մամուլ)։ Ձին շառած՝ մսուրն են կապում (առած)։ Մեր օդանավը դուրս եկավ երևանից առավոտյան, արևը դեռ չծագած (ՍՁ)։ Դեռ բլրի կատարին չհասած՝ մեզ վրա տեղում է գնդակների տարափ (Հրշ)։

Ժամանակ ցույց տվող գոյականները նախադասության մեջ հաճախ ունենում են որևէ որոշիչ՝ արտահայտված հատկանիշ ցույց տվող դերանուններով, թվականով և այլ բառերով, ինչպես՝ այդ օրը, այս ժամին, այն ձմեռ, հինգ տարի, երեք օր, ամբողջ օրը և այլն։ Այս դեպքում հիշյալ կապակցությունը միասին է դառնում ժամանակի պարագա։ Օրինակ՝ Ամեն տարի աշնանը ծում էր պահում (ՆԴ)։ Մի տարի սարում էի (ՀԹ)։ Դաղթականները առաջին բոպեին շփոթվեցին (ՀԹ)։ Այս երեկո կկարդամ (ՆԴ)։ Էն գիշեր ամենքն էլ լավ էին զգում իրենց (ՀԹ)։ Մի աշունմ մեր Դավոն գնաց քաղաք խոզ ծախելու (ՀԹ)։ Երկար տարիներ, համարյա թե օրը օրին գրի է անցրել (ՆԴ)։ Հեռևյալ օրն ևեր Նատոն մի քանի արշին սպիտակ կտոր գնեց (ՆԴ)։ Երկար տարիներ նա բացակայում էր տանից։ Այն տարի լավ բերք ստացանք (Սգր)։ Այս օրինակներում ընդգծված կապակցությունները միասին են ժամանակի պարագա։

Որոշ դեպքերում ժամանակի պարագան ցույց է տալիս գործողության կամ հատկանիշի տևողության չափը և պատասխանում է որքա՞ն, որքա՞ն ժամանակ, ինչքա՞ն հարցերին։ Օրինակ՝ Սաքուլը երկար ժամանակ չէր համաձայնում նոր պարտք անելու (ՆԴ)։ Ամբողջ շորս տարի ոչ մի տեղեկություն չունենք քեզանից (ՆԴ)։ Ցամաքի վրա զոր ու գիշեր շարժվում էին հետիոտն բանակները (Հրշ)։ Հինգ տարի դեռ փող չեմ տա (ՀԹ)։ Պառավ դեղին օրը մի քանի անգամ ներս էր մտնում (ՀԹ)։ Ընդամենը երեք տարի նա սովորեց, պատերազմն ընդհատեց ուսումը (մամուլ)։ Թռչում է միշտ իմ մտքում թևը արնոտ ու մոլոր (ՀԹ)։ Միշտ զգաստ, միշտ լուրջ, միշտ կենտրոնացած էր իր ներքին աշխարհի մեջ (ՆԴ)։ Մի ողջ տարի ուսապարկն ինձ հետ է եղել (Հրշ)։ Մի ժամի չափ տևում է այս կույր հրաձգությունը (Հրշ)։

Հիմունքի պարագա։ Հիմունքի պարագան ցույց է տալիս, թե ինչի՞ հիման վրա է կատարվում գործողությունը, ի՞նչ պատճառով, նպատակով, պայմանով։ Ըստ այսմ էլ այն հանդես է գալիս հետևյալ ենթատեսակներով։

ա) Բուն հիմունքի պարագա, որ պատասխանում է ինչի՞ց, ի՞նչ հիմունքով հարցերին։ Օրինակ՝ Ակնարկներից, հայացքներից հասկանում ենք իրար (ՍՁ)։ Հիմունքի պարագան արտահայտվում է բացառական, գործիական հոլովներով, բուա, համաձայն, շնորհիվ կապերով։ Օրինակներ՝ Գոլորշուց, բույրից, ավելի ճիշտ եռացող ջրից հասկանում է, թե ինչ է կատարվում կաթսայի խորքում (ԱԹ)։ Դաշտի մեջ նկատում եմ չորս-հինգ տարեկան մի թուրք երեխա։ Այդ երևում է թե հագուստներից, թե բասակից... (ՍՁ)։ Այդ հեռանկարից ոգի առած՝ ուզում էի դուրս գալ անտառից և հարձակվեց նրանց վրա (ՍՁ)։ Նրա ճարպոտ դեմքից, մի քիչ ծուռ դրած գդակից և սովորականից ավելի ժպտուն աչքերից երևում էր, որ լավ կերել-խմել է (ՆԴ)։ Քայլվածքից երևում էր, որ անցորդը հարբած է։ Դեմքի արտահայտությունից գլխի ընկա, որ նրա հետ մի արտակարգ բան է պատահել (Սգր)։ Գալիս էր Մացակ Ավագյանի հատուկ պատվերով (ՆՁ)։ Արձակուրդները տալիս են կառավարական օրենքով։ 1935 թ. Շահինյանը «Պրավդայի» խմբագրության հանձնարարությամբ լուսաբանում է ֆիզիոլոգների կոնգրեսի աշխատանքը (Սգր)։ Մ. Շահինյանի ակնարկի հիման վրա ստեղծում են հատուկ հանձնաժողով՝ ձկնարդյունաբերության թերությունների վերացման միջոցներ մշակելու (Սգր)։ Գրականագետների կարծիքով Շահնուրի ստեղծագործությունը քսաներորդ դարի հայ գրականության առաջնակարգ երևույթներից է։ Ըստ նրանց բնորոշման՝ Շահնուրի ստեղծագործությունը հետազոտության համար լի է հարստությամբ։ Իմ կարծիքով տղայիդ պիտի գործարան ուղարկես (Սգր)։ Գրավորները պիտի գնահատել ըստ գնահատման նորմաների (մամուլ)։ Մենք առաջ ենք գնում մեր գերազանց տեխնիկայի, զորքերի արիության, այլև պարտիզանների անդուլ պայքարի շնորհիվ (մամուլ)։ Շնորհիվ բրիգադի անխոնջ աշխատանքի՝ պլանը գերակատարվեց (մամուլ)։ Ըստ նախագահի զեկուցման մեջ բերված փաստերի՝ կոլտնտեսությունը մեծ առաջընթաց է ապրել (մամուլ)։

բ) Զիջման (հակառակ հիմունքի) պարագա. ցույց է տալիս այն հիմունքը, հակառակ որի է կատարվում գործողությունը, այսինքն այդ հիմունքից ուրիշ հետևանք պետք է առաջ գար։ Դա այն հիմունքն է, որին չի համապատասխանում հետևանքը։ Պատասխանում է հակառակ ինչի՞, չնայած ինչի՞ն հարցերին։ Արտահայտվում է հակառակ, չնայած կապերով ու նրանց խնդիրներով։ Օրինակ՝ Հակառակ մարզիչի սպասումների՝ լողորդը գրավեց միայն հինգերորդ տեղը (մամուլ)։ Չնայած հոգնածությանս շտապեցի նրանց տուն։ Հակառակ իմ սպասածի բոլորը տանն էին (Սգր)։ Չնայած հավերի բարձրաձայն կոկոցին՝ Արտեմը խոր քնած էր (ՆԴ)։ Համիկը հակառակ իր սովորության, լուռ էր (ՆՁ)։

գ) Պատճառի պարագա. ցույց է տալիս սկզբնական պատճառը, որի հետևանքն է գործողությունը։ Պատասխանում է ինչո՞ւ, ի՞նչ պատճառով, ինչի՞ց հարցերին։ Արտահայտվում է բացառական և գործիական հոլովներով, պատճառով, համար, երեսից կապերով կազմված կա-



պակցություններով։ Օրինակ՝ Հարազատներիս կարոտից, հոգնածությունից և անհուսությունից *ես դազազել էի (ՍԶ)։ Քրտինքը ծլում է ոչ միայն մեր բաց կրծքերից, այլև ուսերից ու մեջքից,* որից *խոնավացել են մեր վերնաշապիկները (ՀրՀ)։* Վիկտորիային *գյուղացիք Վիկտոր էին ասում կամ ավելի հաճախ* Ոչխար՝ ճկատի ունենալով *նրա արտակարգ հեզությունը (ԽԴ)։ — Մեծին ճանաչո՞ւմ էիր։* Ինֆարկտից *մահացավ (Սգր)։ Դրրաց Դրիգորը գդակը քաշեց աչքերին և,* ամոթից *ու* անզոր կատաղությունից *գունատ, կանանց ծաղրական ժպիտների տակ դիմեց դեպի դուռը (ՆԴ)։ Փոքրն արդեն շատ վնգստալուց հոգնել, քնել էր (ՆԴ)։ «Աստծու տուն» կոչված այդ շենքը ժողովրդի* աղքատությունից *և* անտարբերությունից *տարեցտարի անշքքանում, խարխլվում է (ՆԴ)։* Երկար ժամանակ հիվանդանալով՝ *նա չկարողացավ քննություններին մասնակցել (մամուլ)։* Ի ծնե շատ լինելով, *խայթում էր մարդկանց նույնիսկ առանց պատճառի (Սգր)։* Անսպասելի կարկտի պատճառով *այս տարի միրգը պակաս է (մամուլ)։* Անփույթ վերաբերմունքի համար *Գինոսյանին խիստ նկատողություն արեցին (մամուլ)։ Զարաճնի* նրբոր երեսից *քույրը կարմրից (Սգր)։ Մենք դրա համար ուրախանում ենք։* — Ինչի՞ համար։ — Կարկրտի *(ՆԶ)։*

զ) Նպատակի պարագա. ցույց է տալիս գործողության կատարման նպատակը, այն հիմունքը, որին հասնելու համար է կատարվում տրվյալ գործողությունը։ Պատասխանում է ինչո՞ւ, ինչի՞ համար, ի՞նչ նրպատակով հարցերին։ Արտահայտվում է տրական հոլովով և համար, հանուն կապերով կազմված կապակցություններով։ Օրինակ՝ Եվ ամեն ոք շտապում էր դեպի կուլիս՝ անձամբ սեղմելու Նրիատասարդ հանճարի ձեռքը և իր հիացքն ու շնորհակալությունը հայտնելու Նրան (ՆԴ)։ Մտնում ենք Ուկրաինայի հողը՝ ազատելու, մաքրելու ֆաշիստներից (ՀրՀ)։ «Հայրենիքի համար, այս աղջկա համար Արժի, որ մարդ կռվի ու մահանա» (ԳՍ)։ — Իմ եռնից, հանուն հայրենիքի, առա՛ջ (մամուլ)։ — Ընկեր կոլտնտեսականներ, քիչ հետո մեր աշխատանքի գորբաթանակը դաշտ կարշավի և կոկսի մեր պայքարը սոցիալիզմի համար, լուսավոր և երջանիկ կյանքի համար (ՆՁ)։ Հանուն ինչի՞ են այդ մարդիկ գործում, ի՞նչ նպատակ ունեն (Սգր)։

ե) Պայմանի պարագա. ցույց է տալիս գործողության պայման, մի հանգամանք, որ պայման է դառնում գործողության համար։ Պայմանի պարագան պատասխանում է ի՞նչ պայմանով, *ո՞ր դեպքում հարցերին։ Արտահայտվում է գործիական հոլովով կամ դեպքում կապով։ Օրինակ՝ Այդպես մտածելով՝ դու կարող ես վատատեսության գիրկն ընկնել։* Այդ դեպքում *օղակը ժամանակին չի հավաքի խաղողը։ Գյուղ է գնում աշխատելու պայմանով։ Միայն քո* օգնության դեպքում *այդ գործը գլուխ կգա (Սգր) և այլն։*

ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾ
(Նախադասության դերբայական լրացումներ)

Դերբայական բառակապակցությունները քննելիս մենք տեսանք, որ այդ կառույցներն ունենում են դերբայ+գոյական, դերբայ+մակբայ, դերբայ+ածական, դերբայ+դերանուն, դերբայ+դերբայ, դերբայ+կապային կապակցություն կաղապարները։ Հենց այս կաղապարներով էլ արտահայտվում է դերբայական դարձվածը նախադասության մեջ։ Ուրեմն դերբայական դարձվածը դերբայն է իր լրացումներով՝ արտահայտված դերբայ+լրացում կաղապարով։

Դերբայական դարձված կազմում են անկախ դերբայները՝ անորոշ, համընթացական, ենթակայական և հարակատար։ Սրանք են դարձվածի գլխավոր անդամները։

Դերբայական դարձվածը նախադասության մեջ այն գործառույթն ունի, ինչ նրա գերազանց անդամ դերբայը։ Նա հանդես է գալիս իբրև՝ 1. ենթակա. ինչպես՝ Նրա նիվանդ մորը խնամողը ես էի *(ՆԴ)։ ...Որպեսզի այլևս ոչ մեկի մտքով չանցնի* ձեռք բարձրացնել տիրոջ վրա, նրան փոխարինող որոնել *(Սգր)։ Հոպոպին կատաղեցնելը մի կատարյալ զվարճություն էր նրանց համար (ՆԴ)։ 2. Ստորոգելի. ինչպես՝ Իմ հարևանը* պայուսակն ուսին դիմացից եկողն է *(Սգր)։ Մեր պարտքը* գործը ուրակով և ժամանակին կատարելն է *(մամուլ)։ 3. Որոշիչ. ինչպես՝ Ջուրը թեև մի քիչ օղու համ էր ստացել, բայց, իհարկե, այն չէր, ինչ որ* բիից ծուխ հանող, աչքերից արտասուք քամող *օղին (ՆԴ)։ Առաջվա միշտ անբիծ,* միշտ արդուկած *հագուստը ճմռթվում էր, ծալծըլվում (ՆԴ)։ 4. Հատկացուցիչ. ինչպես՝* Ճիշտ խոսողի *գլակը ծակ է։* Առավոտյան շուտ արթնացողի *գործը առաջ կգնա։ 5.* Խնդիրներ. *ինչպես՝ Ծիրունին հարցով դիմեց* ժողովում բերքաճավաքի մասին զեկուցողին։ Հայրենական պատերազմին մասնակցածներին *պարգևատրում են։ Խուսափում էր* երկար ու անալի խոսողներից։ *6.* Պարագաներ. *ինչպես՝* Շատ լվացք անելուց, թոնրի մեջ հաց կող տալուց *նրա դեմքի և ձեռքերի կաշին եռացրած ջրի ու թոնրի կրակի մեջ մրրկվել, շորացել, ճաքճաքել, մագաղաթ էր դարձել (ՆԴ)։* Կարիքից ստիպված՝ *դու ձեռք ես մեկնել թունավոր օձերին՝* խաբվելով նրանց լեզվից *(ՆՁ)։* Աշխատանքից հետո տուն գալով՝ *անմիջապես սկսում է ճաշի պատրաստություն տեսնել։* Բացահայտելով իր քաղաքական դիրքորոշումը, որդեգրած սկզբունքներն ու գործելակերպը՝ *Օտյանն իր նամակներից մեկում գրում է («Գարուն») և այլն։*

Երբեմն դժվար է որոշել դերբայական դարձվածի պաշտոնը՝ որոշի՞չ է, թե՞ պարագա և կամ՝ ի՞նչ պարագա։ Օրինակ՝ Մի քանի րոպեից հետո հավերը, կուտն արդեն կերած, ջուրը խմած, ուզում էին դուրս գնալ (ՆԴ)։ Նախադասության ընդգծված դարձվածները կարող են ըմբռնվել թե՛ իբրև որոշիչ (ո՞ր հավերը) և թե՛ իբրև պարագա (ե՞րբ էին ուզում դուրս գնալ)։ Կամ՝ Այստեղ կանգնած էր մի թիկնավետ երիտասարդ՝ բեղերն ու մորուքը սափրած *(ՆԴ)։ Այստեղ էլ ընդգծված դարձվածը կարող է ըմբռնվել թե իբրև որոշիչ (ո՞ր երիտասարդը) և թե՝ պարագա (ինչպե՞ս էր կանգնած)։ Բանաստեղծը խոր վիշտ է զգում՝* տեսնելով մարդու տառապանքը դժոխք դարձած աշխարհում *(դասագիրք)։ Այստեղ էլ ընդգծված դարձվածը կարող է ըմբռնվել թե իբրև ժամանակի պարագա (ե՞րբ է զգում), թե՝ պատճառի (ինչո՞ւ է զգում)։*

Դերբայական դարձվածը նախադասության մեջ հանդես է գալիս մյուս անդամներից թե՛ տրոհված, թե՛ չտրոհված ձևով։ Տրոհման մասին մանրամասն կխոսվի «Տրոհվող լրացումներ» խորագրի տակ, այստեղ շատ համառոտ թվարկենք այդ դարձվածի տրոհվելու և չտրոհվելու դեպքերը։ Դերբայական դարձվածը տրոհվում է, երբ՝ 1. ետադաս որոշիչ է (Դեսպանները, կլոր սեղանի շուրջը նստած, *խորհրդածում էին), 2. պատճառի պարագա է (Հրավերքին նրան չէին կանչել՝* բավարար չափով ճեղինակավոր չհամարելով), *3. ձևի պարագա է (Տնից հեռացավ՝* դառն մտածմունքների մեջ խորասուզված), *4. ժամանակի պարագա է (Հասնելով Սուխումի՝ մենք իջանք), 5. զիջման պարագա է (Փողոցներում անցուդարձը դադարել էր՝* չնայելով դեռ շատ վաղ լինելուն) *և այլն։*

Դերբայական դարձվածը չի տրոհվում եթե՝ 1. ենթակա է (Տաուշի շրջանում մեր ժողովրդին պահողը *այգեգործությունն է), 2. նախադաս որոշիչ է (Նա նստած էր թղթերով,* բդբապանակներով, գրքերով ու անթիվ մանր-մունր բաներով ծանրաբեռնված *ահագին գրասեղանի առջև և գրում էր) (ՆԴ), 3. ժամանակի պարագա է՝ արտահայտված համընթացական (իս-ով) դերբայով* (Ամեն մի խոշոր քաղաք գրավելիս *այդպիսի հրավառություն էր տրվելու) (ՀՀ), 4. ստորոգելի (ստ. վերադիր է) (Դա Գարսևանի վերջին ճառելն էր) (Սգր), 5. հաճախ նաև նպատակի պարագա (Սանասարը լավ գիտեր, որ Թիֆլիս է մղվում ոչ միայն* ռնկիներ ու դեղանյութ բերելու, *այլև* նվերներ առնելու Ասլան բեկի կրտսեր աղջկան) *(ԱՔ), 6. ուղիղ կամ անուղղակի խնդիր է (Իրենց գյուղը բերքաճավաքի եկածներին նախագահը սենյակ էր տրամադրել) (մամուլ)։ Նրանք խոստանում են* շուտով երկրորդ ճակատը բացել Ֆրանսիայի հյուսիսում *(մամուլ), 7. եթե դերբայական դարձվածը կապի խնդիր է, այսինքն կապի հետ մեկ անդամի գործառույթ ունի* (Գերեզմանատան մուտքն անցնելուց հետո *թափորն անաղմուկ ցրվել եկավ) (ԱՔ)։*

Եթե տրոհվող դերբայական դարձվածը նախորդում է լրացյալին (նախադաս է) կամ հաջորդում է լրացյալին (ետադաս է), նրանից ստ-

վորաբար տրոհվում է բութով։ Օրինակ՝ Անկողնու մեջ նստած՝ նա դեռ ճմլկոտաց (ՆԴ)։ Ջութակը պլեղ սեղմելով վիրավոր կրծքին՝ հեռացավ անարդանքը հպարտ սրտի մեջ պարուրած (ՆԴ)։ Բոլոր դարակները լիքն էին ոսկեկազմ գրքերով՝ զորքի պես խիստ կանոնավոր կոլՀ-կոլՀի շարված (ՆԴ)։ ...Օրորում էր հիվանդը՝ ոսկեացած ձեռքը կիսով չափ վերմակի տակից հանած (ՆԴ)։ Դուրս եկավ մի կին՝ ուսերին մի հատ շալ գցած (ՆԴ)։

Սթև տրոհվող դերբայական դարձվածը միջադաս է, երկու կողմից առնվում է ստորակետերի մեջ։ Օրինակ՝ Պառավը, բախտի ծայրին կուչ եկած, մտածում էր (ՆԴ)։ Հետո, այլևս չկարողանալով շունչը ետ բերել, կանգ առավ (ՆԴ)։ Ինչո՞ւ Ռուբինյանների գունդը, իմանալով Մլենի սպանության մասին, չեկավ այստեղ տիրոջ վրեժն առնելու (ՄՇ)։ Բակուրանն առաջարկեց, որ անձամբ, իր ազատագնդի գլուխն անցած, ճեպընթաց տանի Ռուբենին և մյուսներին (ՄՇ)։ Պատրիկյանը կամաց նստեց, գլխարկը ծնկների վրա բռնած, և նայեց շուրջը (ՆԴ)։ Ծառաները, մոխրագույն բրդե շուխայի ետ ծալած երկայն ու լայն թևերը գցած բոլորելով, գնաց նրա խնդիրքը կատարելու (ՆԴ)։ Արծիվը, ժայռվե՛ն նստած, դիտում էր հեռուն։

Սակայն կետադրական այս կանոնները, որ նորմավորող նշանակություն ունեն, հաճախ են խախտվում։ Միևնույն հեղինակը հաճախ միևնույն կառույցում մեկ բութ է օգտագործում, մեկ՝ ստորակետ։ Ըստ որում պետք է նկատել, որ ավելի շատ տրոհում են ստորակետով։ Օրինակ՝ Արտեմը երեսն ի վեր պառկել էր թախտի վրա, ձեռքերը գլխի տակ դրած (ՆԴ)։ Վագում էին ամենից առաջ թագի անթիվ երեխաները, համարյա թե տկլոր ու ոտաբոբիկ, թռչկոտելով ու ծկլթալով (ՆԴ)։ Գրիգորն սկսեց կիսաձայն կարդալ, նայելով մեկթ գրքին, մերթ Մարթային և մերթ երեխային (ՆԴ)։ Իրենց հետ գալիս էր բեռնակիր ձիերի, ջորիների և նույնիսկ ավանակների մի երկար քարավան, բերելով Ռուբեն և Լեոն իշխանների, Ռիթա իշխանուհու, թիկնապահ ասպետների իրերը (Սգր)։

Մատնացույց.—Երբեմն դերբային լրացնում են ոչ թե առանձին բառեր, այլ՝ նախադասություններ։ Օրինակ՝ Հետո, տեսնելով, որ գրասեղանը ծածկված է փոշով, ցիլինդրի տակ մի լրագիր դրեց (ՆԴ)։ Իմանալով, որ Ավագը վաղը գալիս է, սկսեցին հյուրասիրության պատրաստություն տեսնել (մամուլ)։ Ընկերներից նեղացած, որ իրեն չեն հայտնել, թողեց տուն գնաց։ Դեռ չիմացած, թե երբ է գնալու, ճանապարհի պատրաստություն էր տեսնում։

Նախադասության կողմնակի անդամներ։ Նախադասության մեջ դերբայի անմիջական լրացումները կոչվում են կողմնակի անդամներ, դրանք են կողմնակի ենթական, ստորոգելին, խնդիրները ու պարագաները։ Սակայն պետք է նկատել, որ բայի անդեմ ձևերի այս կողմնակի

լրացումները քերականորեն և իմաստով չեն տարբերվում դիմավոր ձևերի նույնանուն լրացումներից՝ խնդիրներից ու պարագաներից։ Այսպես, օրինակ՝ երբ դեռ բլրի կատարին չէինք հասել, մեզ վրա տեղաց գնդակների տարափը (ՀրՀ)։ Մենք պիտի դասավորվենք բլրի լանջին (ՀրՀ)։ Գնացքը դեռ չէր շարժվում, երբ մենք հասանք կայարան (Սգր)։ Մեր գործարանը նաստոցներ է պատրաստում (մամուլ)։ Այս նախադասություններում ընդգծված են դիմավոր բայերի լրացումները՝ ժամանակի, տեղի պարագաները, ուղիղ խնդիրը։ Եթե այդ նախադասությունների լրացյալ դիմավոր բայերը դարձնենք դերբայներ, լրացումների ձևն ու բնույթը չի փոխվի։ Այսպես՝ Դեռ բլրի կատարին չհասած՝ մեզ վրա տեղաց գնդակների տարափը։ Գնացքը դեռ չշարժված՝ մենք հասանք կայարան։ Հաստոցներ արտադրող մեր գործարանը պլանները գերակատարում է։ Այս կառույցներում օգտագործված դեռ, բլրին, հասանք բառերը, բերված թե՛ դիմավոր, թե՛ անդեմ կառույցներում, միևնույն գործառույթն ունեն, միևնույն իմաստը։

Այն բոլոր լրացումները, որ ունենում է դիմավոր բայը, ունենում է նաև անդեմ բայը, ուստի առանձին քննել անդեմ բայի լրացումները կարիք չկա։ Միայն պետք է իմանալ, որ անդեմ բայերի լրացումները կոչվում են կողմնակի։ Կողմնակի անդամները լրացման լրացումներ են։ Կողմնակի պետք է համարել նաև ածականի ու մակբայի լրացում խնդիրները ու պարագաները։ Նրանք նույնպես լրացման լրացումներ են։ Այս կապակցությամբ տեղին է հիշել, որ Մ. Աբեղյանը կողմնակի էր կոչում լրացման լրացումներն առհասարակ, լինեն դրական խնդիր, պարագա, թե որոշիչ, հատկացուցիչ[58]։

Միմյանցից քերականորեն չեն տարբերվում նաև կողմնակի ստորոգելին և բուն ստորոգելին։ Օրինակ՝ Ինչպիսի անհամբերությամբ էինք բացում այդ եռանկյունաձև ծալած թղթիկը, որ նամակ էր, կոչվում։ Երբեք եռանկյունաձև ծալած այդ նամակ կոչվող մասունքն այնքան կարոտով սպասող չի ունեցել, ինչպես հիմա (ՀրՀ)։ Այստեղ ընդգծված լրացումներից առաջինը դիմավոր բայի ստորոգելին է, իսկ երկրորդը՝ անդեմ, բայց դրանք քերականորեն իրարից չեն տարբերվում։ Տարբերությունը միայն այն է, որ առաջինը լրացում է, իսկ երկրորդը՝ լրացման լրացում։

Այլ բնույթ ունի կողմնակի ենթական։ Դա գործողության բուն կատարողն է, գործողության տերը, բայց ենթակա չէ, որովհետև կապված է ոչ թե դիմավոր, այլ անդեմ բայի հետ, որը ստորոգյալ չէ։ Կողմնակի ենթական բայի հետ ստորոգումային կապակցության մեջ չէ։ Սեռական հոլովով արտահայտվելիս նա նման է հատկացուցիչին, բայց հատկացուցիչ չէ, որովհետև բայի լրացում է։ Այդ սեռականով

[58] Տե՛ս Հայոց լեզվի տեսություն, էջ 395, 47 կետը։

լրացումը համանիշ է ենթակային։ Այսպես՝ «Ես իմացա, որ Արամը հրաժարվել է կինո գնալուց և Ես իմացա Արամի հրաժարվելը կինո գնալուց»։ Այս կառույցների Արամը և Արամի ձևերը համանիշներ են, իմաստով նույնական են, երկուսն էլ գործողություն կատարող են, բայց ձևով, պաշտոնով՝ տարբեր են։ Այս դեպքում սեռականը կոչվում է ենթակայական սեռական։

Ինչպես ասվեց, կողմնակի ենթական արտահայտվում է սեռական (տրական) հոլովով, բայց կարող է արտահայտվել նաև ուղղական հոլովով։ Սեռական հոլովով արտահայտվում է սովորաբար անձի անունը, մանավանդ եթե անձնանիշ դերանուն է։ Օրինակ՝ Աշակերտների անկանոն հաճախելը բխում է ընդհանուր կարգապահության թուլությունից (մամուլ)։ Ուսուցչի լավ կարդալը, գրելը, խոսելը ընդօրինակում են աշակերտները (մամուլ)։ Անծանոթ մարդկանց ներս գալը նրան զարմացրեց (ԱԲ)։ Չեմ հասել երբեք քո որոնածին, Քո որոնածը աննյութեղեն էր (ՀՍահ)։ Բժշկի գնալուց հետո հիվանդը ջուր խնդրեց։ Սրա մեծ-մեծ խոսելը ինձ ջղայնացնում է։ Ո՞ւմ սուտ խոսելն ու շարախոսելն է մարդկանց դուր գալիս։ Իմ Մոսկվա գնալը չհաջողվեց։

Եթե կողմնակի ենթական իրի անուն է, սովորաբար դրվում է ուղղական հոլովով։ Օրինակ՝ Աշխատանքն ավարտվելուց հետո խորհրդակցության հրավիրեցին (մամուլ)։ Գնացքը կամուրջը չանցած՝ ձիավորներն առաջը կտրեցին (Սգր)։ Ձմեռը երկարելուց ի՞նչ օգուտ ունենք։ Արևը մայր մտնելուց հետո ...եղանակը զգալի կերպով ցրտել էր (ՆԴ)։

Սակայն այս օրինաչափությունը հաճախ խախտվում է, այնպես որ հանդիպում են թե շենքի քանդվելը, թե շենքի քանդվելը, արևի մայր մտնելը—արևը մայր մտնելը, գնացքը հայտնվելու ժամանակ—գնացքի հայտնվելու ժամանակ, բժիշկը գնալուց հետո—բժշկի գնալուց հետո, գյուղատնտես եկած ժամանակ—գյուղատնտեսի եկած ժամանակ և այլն։

Նկատելի է, սակայն, որ անձի անունն այս պաշտոնում գերազանցապես սեռական (տրական) հոլովով է դրվում, իսկ անձնանիշ դերանունները (ես, սա, ով և այլն) միայն սեռական (տրական) հոլովով (իմ կարդալը, նրա գրածը, քո խնդրելը, ո՞ւմ բերելով, սրա ասելով և այլն)։

Կողմնակի ենթակայի և նրա գերադաս անդամ դերբայի միջև այնուամենայնիվ պատկանելության իմաստ կա, թեև նրանք հատկացուցիչ-հատկացյալ չեն։ Այդ պատկանելության իմաստն է պատճառը, որ կողմնակի ենթական արտահայտվում է գերազանցապես սեռական (տրական)հոլովով։ Այստեղ դեր է խաղում նաև այն հանգամանքը, որ գերադաս անդամ դերբայը մեծ մասամբ փոխանվանական կիրառությամբ է հանդես գալիս, գործողության առարկայացված

իմաստ է արտահայտում։ Օրինակ՝ Քամու բերածը քամին էլ կտանի (առած)։ Թրի կտրածը կլավանա, լեզվի կտրածը չի լավանա (առած)։ Այստեղ բերածը և կտրածը փոխանուն գոյական են և ընդգծված կապակցությունում պատկանելության իմաստ կա, ուստի չի լինի քամի բերածը, թուրը կտրածը։ Պատահական չէ, որ համընթացական (իս-ով) դերբայով կառույցներում իրի անուն կողմնակի ենթական ուղղական հոլովով է դրվում՝ ամպը գոռալիս, անձրև տեղալիս, գնացքը սուրալիս, օրը մթնելիս, վարագույրը բացվելիս, կամուրջը քանդվելիս և այլն։ Սա նրանից է, որ համընթացական դերբայի կիրառությունը փոխանվանական չէ։

ԱԾԱԿԱՆԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Բառակապակցությունները քննելիս մենք տեսանք, որ ածականն էլ բայի նման ընդունում է խնդիր ու պարագա լրացումներ և նրանով կազմված շարահյուսական կառույցի կաղապարը նման է բայական կառույցի կաղապարին, քանի որ ածականը նույնպես հատկանիշ է ցույց տալիս, իսկ հատկանիշը ունի ձև, չափ, կապված է առարկաների հետ և այլն։ Միևնույն արմատից կազմված ածականի ու բայի լրացումները բառիմաստի թելադրանքով միևնույն ձևն են ընդունում, ինչպես՝ պատասխանատվությունից ազատվել—պատասխանատվությունից ազատ, հաջողություններով ուրախանալ—հաջողություններով ուրախ, որդիներով երջանկանալ—որդիներով երջանիկ, ունեցածով գոհանալ—ունեցածով գոհ, բերքով հարստանալ—բերքով հարուստ, տընտեսապես աղքատանալ—տնտեսապես աղքատ և այլն։

Քերականության մեջ ընդունված է բայի լրացումների երկու տեսակ՝ սովորական (լրացնում են դիմավոր բային) և կողմնակի (լրացնում են անդեմ բային)։ Քանի որ ածականի լրացումները նույնպես լրացնում են դեմքի կարգ չունեցող բառերի, նույնպես կողմնակի են։ Երկու դեպքում էլ խնդիրներն ու պարագաները հանդես են գալիս իբրև լրացման լրացումներ։ Ածականական բառակապակցություններում հանդես են գալիս նաև կողմնակի ենթակա և կողմնակի ստորոգելի, ինչպես դերբայական կառույցներում։

Ածական անունը, անկախ նրանից, թե նախադասության մեջ ինչ գործառույթ ունի՝ որոշի՞չ է, թե՞ ձևի պարագա, ունենում է իր լրացումները՝ արտահայտված գոյականով, դերանունով, դերբայով, մակբայով, կապային կապակցությամբ։ Տեսնենք, թե սրանցով կազմված ածական բառակապակցության կառույցները շարահյուսական ինչ առանձնահատկություններ ունեն։ Ի՞նչ լրացումներ են ընդունում ածականները։

1. Ուղղական հոլովով գոյական անուն՝ սիրտը սև *մայրը,* ձեռքերը ներկում *վարպետը,* ոտքերը բորիկ *տղան,* մազերն սպիտակ *անծանոթը,* մորքը սև *տղան,* բերանը ծուռ, աչամները ցից *Սեթոն և այլն։*

Այս կառույցում ածականն ու իր լրացումը, ինչպես սիրտը սև (մայրը), միասին են նախադասության մեկ անդամ, սիրտը սև մայրը *գոյականի որոշիչն է։ Եթե այդ կապակցությունն անդամատենք, և* սև-ն *առանձին անդամ համարենք, կստացվի* սև մայրը, *մինչդեռ* սև-ը մորը *չի վերաբերում, այլ՝ սրտին։ Այս* սիրտը սև, ոտքը կարճ, ձայնը խոպոտ *կապակցություններում լրացումը (սիրտը, ոտքը, ձայնը) կողմնակի ենթակայի իմաստ ունի, իսկ լրացյալը (սև, կարճ, խոպոտ)՝ կողմնակի ստորոգելիի, թեև ամբողջ կապակցությունը որոշիչի պաշտոն է կատարում։*

Այս կառույցում առկա է վերառյալ ստորոգում, ստորոգում, որը ձևաբանորեն արտահայտված չէ, բայց կապակցությունից հասկացվում է։ Այսպես՝ Մի ոտքը կարճ Հաճեսը *նշանակում է՝ որի մի ոտքը կարճ էր,* Ձայնը խոպոտ դեռասանը՝ *որի ձայնը խոպոտ է և այլն։ Նշանակում է այս կապակցության մեջ լրացումը կողմնակի ենթակա է, լրացյալը՝ կողմնակի ստորոգելի, իսկ կապակցությունն ամբողջապես՝ որոշիչ։ Այսպես՝ Ներս է մտնում* հասակը բարձր, օձիքը մաքուր *ուսուցիչը (Սգը) նախադասության ընդգծված կապակցությունները* ուսուցիչ *գոյականի որոշիչներն են, իսկ կապակցության ներսում* հասակը *և* օձիքը *կողմնակի ենթականեր են,* բարձր *և* մաքուր *ածականները՝ կողմնակի ստորոգելիներ։ Այսպիսով վերլուծությունը հասնում է ՇՆՄ-ի։*

Այս ածականական բառակապակցությունները չպիտի շփոթել ետադաս ածական լրացում ունեցող գոյականական բառակապակցությունների հետ։ Այսպես՝ «Երգերը անկապ, երգերը տխուր *Արցունքի նման հոսում են իզուր» նախադասության ընդգծված կապակցությունների տարբերակն են՝* անկապ երգերը, տխուր երգերը։ *Այնինչ ածականական բառակապակցության տարբերակում գոյականը թեք հոլովով է դրվում, ինչպես՝ հոնքերը կամար—կամար հոնքերով, աչքերը կապույտ—կապույտ աչքերով, սիրտը սև—սև սրտով և այլն։*

2. Տրական հոլովով գոյական անուն՝ ինձ անհասկանալի պատճառով, դստերն արժանի, իգիթին վայել, դավին անտեղյակ, ցավին անտարբեր, շատերին օտար, փառքին անհաղորդ, մտածելու ընդունակ, գործին օգտակար *և այլն։ Այս կապակցության մեջ տրականով լրացումը կողմնակի հանգման խնդրի իմաստ ունի, ածականը՝ կողմնակի ստորոգելիի, իսկ ամբողջ կապակցությունը որոշիչ է, կամ ձևի պարագա, կամ ստորոգելի։*

3. Բացառական հոլովով անջատման խնդիր *(ծնողներից բաժան),* բաղդատման խնդիր *(եղբորից խելացի),* սահմանափակման խնդիր

(արտաքինից դուրեկան), ճիմունքի պարագա *(քայլվածքից հայտնի),* ժամանակի պարագա *(մանկուց աղմկարար)։*

4. Գործիական հոլովով նյութի, միջոցի խնդիր *(ցորենով լի, երեխայով հպարտ),* սահմանափակման խնդիր *(արտաքինով գեղեցիկ, բնավորությամբ անտանելի)։*

5. Ներգոյական հոլովով տեղի պարագա *(աշխատանքում աշխույժ),* ժամանակի պարագա *(կովում քաջ),* սահմանափակման խնդիր *(գրելում վարժ, աշխատանքում ծույլ)։*

6. Կապային կապակցությամբ բաղդատման խնդիր *(շիրմի նման մութ, թեթև որպես վիթ),* վերաբերության խնդիր *(թշնամու նկատմամբ անխնա, դեպի երեխան ուշադիր),* ժամանակի պարագա *(քընությունից առաջ անհանգիստ, դասի ժամանակ ուշադիր)։*

7. Չևի, չափ ու քանակի, տեղի, ժամանակի մակբայներով համապատասխան պարագաներ (անհատականորեն անհնար, չափազանց խելոք, բոլորովին մերկ, հավիտյան օտար, միշտ խոնարհ, ամենուրեք բարի, անհունորեն բարի, երիցս արգահատելի)։

8. Ցուցական և հարցահարաբերական դերանուններով չափ ու քանակի *պարագա* (այնքան առատ, որքան համեստ, այսքան համբերատար, ինչքան աշխատասեր)։

9. Ածական անունով չափ ու քանակի *պարագա* (խիստ գործունյա, զարմանալի լավատես)։

Ինչպես ասվեց, վերևում բերված բոլոր դեպքերում ածականի լրացումները կողմնակի անդամներ են, լրացման լրացումներ։

Հայտնի է, որ ածական անունը նախադասության մեջ կատարում է որոշչի (խելացի երեխա), *ստորոգելիի (երեխան խելացի է), ձևի պարագայի (երեխան խելացի է խոսում) գործառույթներ։ Ըստ այդմ էլ նրանով կազմված կապակցություններն են ունենում հիշյալ գործառույթները։ Ինչ պաշտոն որ ունի կապակցության գերադաս անդամը, տվյալ դեպքում ածականը, նույն պաշտոնն ունի կապակցությունն ամբողջությամբ։ Օրինակ՝ «Ես դարձա եղբորս բոլորովին խորթ անձնավորություն» նախադասության* խորթ *ածականը* անձնավորություն *գոյականի որոշիչն է, այդպես էլ որոշիչ է* եղբորս բոլորովին խորթ *կապակցությունը։ «Այս ծառերը ցրտին դիմացկուն են» նախադասության* դիմացկուն *ածականը ստորոգելի է,* ցրտին դիմացկուն *կապակցությունը նույնպես ստորոգելի է։ «Ու հավիտյան էլ մնացին քնած, Դավին անտեղյակ, ցավին անտարբեր» (ՀԹ) նախադասության* անտեղյակ *և* անտարբեր *ածականները ձևի պարագաներ են, համապատասխանաբար ձևի պարագա են նաև* դավին անտեղյակ *և* ցավին անտարբեր *կապակցությունները։ Բացառություն են վերևում նշված դեպքերը, երբ կապակցությունն ամբողջությամբ է մեկ անդամի պաշտոն կատարում, ինչպես՝* մազերը երկար *աղջիկ,* ոտքը ծուռ *կատուն,* յոթ

գլխաթի դև, իսն ամսական երեխա, Միրը մեծ Համոն և այլն օրինակներին ընդգծված կապակցություններն են։

ՄԱԿԲԱՅԻ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Մակբայն իբրև խոսքի մաս ցույց է տալիս հատկանշի հատկանիշ, իսկ հատկանիշը (ինչպես ածականի դեպքում) ունի իր չափը, ձևը, համեմատության աստիճանը։ Ըստ այդմ էլ նախադասության մեջ մակբայի լրացում են լինում ձևի, չափ ու քանակի իմաստ ունեցող ածականները, մակբայները, ցուցական և հարցահարաբերական դերանունները, բաղդատության իմաստ ունեցող բացառական հոլովով անունները, թվական+գոյական կապակցությունները։

Ինչպես իրենք՝ լրացում առնող մակբայներն են սակավաթիվ, այնպես էլ սակավաթիվ, սահմանափակ են նրանց լրացումները։ Լրացում առնում են գերազանցապես ձևի, չափ ու քանակի մակբայները, լրացումներն էլ ձևի, չափ ու քանակի բնույթ են ունենում, առանձին դեպքերում նաև բաղդատման խնդրի բնույթ։

Այսպիսով, նախադասության մակբայով արտահայտված անդամներն ունենում են.

1. Չափ ու քանակի պարագա՝ ձևավորված չափ ու քանակի մակբայներով, ցուցական, հարցահարաբերական դերանուններով, ածականով։ Օրինակ՝ Իմ մասին մոռացան այնքան հեշտ ու այնքան արագ (Մ)։ Բոլորովին անսպասելիորեն դուրս եկավ դյուղի գղիրը (Մ)։ Որքան կուրորեն էր մոտեցել հարցին (Սգր)։ Նա վեր կացավ անսպասելի շտապ, ձեռքը զարմանալի ուժգնությամբ զարկեց սեղանին (Սգր)։

2. Ձևի պարագա՝ արտահայտված ցուցական, հարցահարաբերական դերանուններով։ Օրինակ՝ Ավագ, այդ քնարն իմ ձեռքում հնչեց նույնպես լալագին, նույնպես վշտաբար (ՄՆ)։ Ինչպիսի հերոս ընկերներ մեռան (ՀՀակ)։ Ընկած էի անդարձ մենակ (ՎՏ)։

3. Ժամանակի պարագա՝ արտահայտված ժամանակի մակբայով, թվական+գոյական կառույցով։ Օրինակ՝ Ես ընկած էի անդոր ու մոլոր, Ով հավետ մենակ, և անդարձ մենակ (ՎՏ)։ Երեմ ժամ շարունակ անձրևում էր։ Մի շաբաթ անընդհատ գնում գալիս էր։ Հինգ օր հետո, երկու ամիս առաջ և այլն։

4. Բաղդատման անուղղակի խնդիր՝ արտահայտված բացառական հոլովով, կապային կապակցությամբ։ Օրինակ՝ Ներս մտավ առաջվա պես արագ ու ժպտուն (ԱՇ)։ Փրկությունը հուսահատվելու չափ հեռու էր ընկած (Սգր)։ Ես էլ ծիծաղեցի, բայց ոչ Պետոյի չափ սրտանց (Մ)։ Բաղդատման այս լրացումները կարելի է նաև ձևի, չափի պարագա համարել։ Նախադասության՝ մակբայով արտահայտված անդամի լրացումները, ինչպես տեսանք ածականի դեպքում, նույնպես կողմնակի անդամներ են, լրացման լրացումներ։ Ինչպես որ մակբայը նախադասության մեջ կատարում է ժամանակի, ձևի, չափ ու քանակի գործառույթ, այնպես էլ մակբայով կազմված կապակցությունն է կատարում այդ գործառույթները։ Օրինակ՝ Միանգամայն անսպասելիորեն մոտեցավ։ Չափազանց ուշ եկավ։ Շատ քիչ է խոսում։ Ինչքան վաղ է արթնացել։ Երկինքը փայլատակեց չափազանց սաստիկ։

Մանոթագր.—Բայի, մակբայի վրա դրվող ածականները շատ լեզվաբաններ (Մ. Աբեղյան) համարում են մակբայներ, քանի որ այդ դիրքում լրացումը ցույց է տալիս հատկանշի հատկանիշ։ Սա նույնպես ճիշտ է, թեև որոշ լեզվաբանների համար ածականը միշտ ածական է՝ անկախ նրանից, թե ինչ խոսքիմասի հետ է դրված։

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԴԱՍ (ԲԱԶՄԱԿԻ) ԱՆԴԱՄՆԵՐ

Նախադասության միևնույն անդամին կապակցված այս կամ այն անդամը հաճախ արտահայտվում է մեկից ավելի բառերով։ Այսպես՝ «Մեր այգում աճում են տանձ ու խնձոր, դեղձ ու սալոր» նախադասության աճում են ստորոգյալին կապակցված ենթական արտահայտված է չորս բառով, իսկ «Սարալանջին սփռված են կարմիր, կապույտ ու դեղին ծաղիկներ» նախադասության ծաղիկներ ենթակային կապակցված որոշիչը՝ երեք բառով։ Միևնույն անդամին կապակցված այդ բառերը լինում են համասեռ և տարասեռ։ Համասեռ անդամները միևնույն բնույթի են, օրինակ, «Բակում խաղում են մեծ ու փոքր երեխաներ» նախադասության մեծ ու փոքր որոշիչները երեխաներ գոյական-ենթակայի միևնույն բնույթն են ցույց տալիս՝ մեծությունը, ուստի համասեռ են, իսկ՝ «Այն երկու շարաճճի ուլիկները փախան» նախադասության մեջ թեև այն, երկու, շարաճճի բառերը միևնույն ուլիկները գոյական-ենթակայի որոշիչներն են, սակայն նրանք նույնաբնույթ չեն, տարբեր կողմերով են բնութագրում ուլիկները գոյական ենթական, մեկը մատնացույց է անում (այն), մյուսը քանակն է ցույց տալիս (երկու), երրորդը՝ որակը (շարաճճի), ուստի տարասեռ են։ Համասեռ անդամները համադաս են (բազմակի), իսկ տարասեռ անդամները համադաս (բազմակի) չեն։

Ուրեմն, համադաս (բազմակի) են կոչվում նախադասության միևնույն անդամին կապակցված մեկից ավելի այն բառերը, որոնք նույն պաշտոնն են կատարում և համասեռ են։

Համադաս (բազմակի) անդամները՝

ա) Տվյալ նախադասության մեջ կապված են միևնույն անդամին, միևնույն շարահյուսական գործառույթն ունեն և պատասխա-

նում են միևնույն հարցին։ Օրինակ՝ «Մեր հին սազի լացակումած, ողբանվագ լարն եմ սիրում» (ԵՉ)։ Այստեղ լացակումած, ողբանվագ լրացումները որոշիչ են, պատասխանում են միևնույն ո՞ր հարցին։

Այլ օրինակ՝ Ես սիրում եմ ծաղիկ, աղջիկ-ծաղկի բուրմունք, կույսի սեր, Ես սիրում եմ մրմունջ-արտունջ, Տանջված սրտի երգ ու վերք (ԱՒ)։ Այստեղ ընդգծված անդամները կապված են միևնույն, իրենց համար ընդհանուր սիրում եմ անդամին, միևնույն քերականական դերով նրան են լրացնում, բոլորն էլ ուղիղ խնդիր են և պատասխանում են միևնույն ի՞նչ հարցին։

բ) Միացած են կամ կարող են միանալ համադասական շաղկապներով։ Օրինակ՝ Նրանք այժմ իրենց վաստակով տեր են դարձել երամակի և նախիրի, սայլաշարքի և մեքենաների, ունեն ցորեն և գարի (ԱՒ)։ Աշխատում էր այսպես անվերջ, առանց հոգնելու, առանց հագենալու (ՎՓ)։ Այս վերջին օրինակում ընդգծված պարագաները կարելի է իրար միացնել նաև միավորիչ շաղկապով։ Այս նույնը կարելի է ասել նաև հետևյալ անդամների նկատմամբ. Քաղաքը լցվում էր ուղտերի խաղաղ, իմաստուն նայվածքներով և նրանց երկար, հոգնած, աղերսական ձայնով (ՎՓ)։ Այստեղ մի կողմից նայվածքներով ու ձայնով խնդիրները կապակցված են և շաղկապով, մյուս կողմից՝ խաղաղ, իմաստուն և երկար, հոգնած, աղերսական որոշիչները կապակցված են միացնող դադարով, բայց կարելի է նաև և շաղկապով միացնել։

գ) Արտասանվում են թվարկման հնչերանգով։ Օրինակ՝ Ինչ-որ ցանկաս՝ կուզե՞ս լինիմ, Լինիմ երկինք ու երկիր, Լինիմ ծո՛վ, ժա՛յռ, ա՛րև, լո՛ւսին, Միայն, միայն ինձ սիրես... (ԱՒ)։ Հիշյալ ընդգծված լրացումները (ստ. վերադիրները) արտասանվում են թվարկող հնչերանգով։ Այսպես են արտասանվում նաև հետևյալ ընդգծված անդամները։ Կեռջո՛վ, երգո՛վ, գիսո՛վ արրիր դուն։ Ա՜խ, ի՞նչ լքնազ են ասպղերը դվարթ, Ասպիկեռ-ալ-վարդ, մեգր-փրփուր, ծեգր-պուրպուր, երգը–անուշ, վերքը–քնքուշ, աչքերն անհուն ծով ու ծավի (ԱՒ)։

դ) Համադաս անդամները արտասանվում են դադարով, ուստի գրավորում այդ դադարն արտահայտվում է ստորակետով։ Օրինակ՝ Թումանյանը հայության կյանքի բազմակողմանի ընդգրկումով, նրա հուզական աշխարհի, ոգու նկարագիրներով, հարազատ, պարզ ու վսեմ արվեստով, հանդիսանում է մեր ազգային մեծ երգիչը, մեր մեծ բանաստեղծը (ՍՉ)։

Բազմակի լինում են նախադասության՝

1. Ենթական. օրինակ՝ Ընկնում են սրտից և երգ և ասված (ՀԹ)։ Մեր այգում ծաղկում են նշենիներ, խնձորենիներ, ասանենիներ, սալորենիները և ակացիաներ (ՎԹ)։ Ափրոն, Անթառամը, Հրայրն ու

մոտիկ հարևանները շարմանքից քարացել էին (ՀՓ)։ Հազար շար ու շան, հազար հարամի, հազար չանելներ վխտում են հիմի (ՀՓ)։

Ծանոթագր.—Նախադասության մեջ կարող են լինել նաև մեկից ավելի ստորոգյալներ, միևնույն ենթակայի հետ։ Օրինակ՝ Անտես ու հուշիկ իմ շուրջը շրջում նվ շշնջում ես. և անուշ շշշում, Պայծառ տրտմությամբ ինձ ես անրջում Ու գաղտնի սիրով սիրում ու հիշում (ՎՏ)։ Զորերից ու քարափներից հանկարծ հայտնվում էին գլխված խմբեր, վայրի գազանների պես մռնչալով հարձակվում էին մեզ վրա, ջոկում սանում էին ջահել հարսներին ու աղջիկներին, պաշտանարում էին դիմադրող մայրերին, պոկոտում էին կանանց գլխաշորերն ու գոտիները, ոտքերից հանում էին կոշիկները, խուզարկում էին ծերերին, գտնում էին դրամներն ու արծաթ անձնատանում էին (ՀՓ)։

Մեկից ավելի ստորոգյալներով նախադասությունները կազմությամբ բարդ են, անկախ ենթակայի քանակից։ Համադաս ենթականերով նախադասությունները պարզ են, եթե նրանց համապատասխանում է մեկ ստորոգյալ։

Ծանոթագր.—Մեկ կամ մեկից ավելի ենթակաների հետ մեկից ավելի ստորոգյալներով նախադասությունները երբեմն անվանում են միավորյալ[59], իբրև նախադասության առանձին տեսակ։ Նախադասության այդպիսի տեսակ առանձնացնելու կարիք չկա։ Միավորյալ կոչվածները քերականական որևէ առանձնահատկություն չունեն[60]։

Եթե տվյալ նախադասության միայն ենթական է մեկից ավելի (համադաս) և կապված է մեկ ստորոգյալի հետ, նախադասությունը կազմությամբ պարզ է, իսկ եթե ստորոգյալն է մեկից ավելի, նախադասությունը կազմությամբ բարդ է, անկախ ենթակաների քանակից։ Օրինակ՝ Շահյանի թագմանը ներկա էին, ի միջի այլոց, օր. Սահակյանն ու Մարուքիանյանները։ Հուսարն ու Բազենյանը հանդիպեցին իմ տանը (ՆԴ)։ Համադաս ենթականերով այս նախադասությունները մի-մի ստորոգյալ ունեն, ուստի պարզ են։ Իսկ՝ Ոչինչ չեմ հասկանում, ոչինչ չտեսնեմ, տգետ եմ[61]։ Թագավորները ու գյուղապետները բարկանում ու խստիվ հրամայում են (ԱՒ) նախադասությունները բարդ համադասական նախադասություններ են, որովհետև ունեն մեկից ավելի ստորոգյալ, մեկից ավելի ստորոգում։

Ինչպես վերն ասվեց, համադաս (բազմակի) կարող են լինել նաև միակազմ նախադասությունների գլխադաս անդամները։ Օրինակ՝ Նո-

---

[59] Գ. Սևակ, Հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 1956։

[60] Տե՛ս մեր «Հայոց լեզվի մեթոդիկա», Երևան, 1978, էջ 274—277։

[61] Մեկ ենթակայով և մեկից ավելի ստորոգյալով համադասական նախադասությունները Ս. Գ. Աբրահամյանն իրավացիորեն անվանում է բնդհանուր ենթակայով բարդ համադասական նախադասություն («Հայոց լեզուն», 7—8-րդ դաս. համար, 1984, էջ 215)։

րից անձրև՝ մշուշ, ամպ, թախիծ անհուն, տխրանք հեզ։ Շուրջս ահա գիշեր ու երգ—հանգիստ, հեքիաթ ու երազ (ՎՏ)։ Այս անվանական նախադասությունների գոյականները համադաս (բազմակի) անդամներ են։

2. Գոյականով արտահայտված անդամների լրացումները։ Համադաս որոշիչներ. Նախադասության գոյականով արտահայտված միևնույն անդամի մեկից ավելի համասեռ որոշիչները կոչվում են համադաս։ Օրինակ՝ Առողջ, ժիր, շարժուն, մտացի և պոետ *մի աղջիկ էր Ռեբեկան (ՎՓ)։* Միջահասակ, թիկնեղ *ու դյուրահաղորդ մի երիտասարդ էր Ավետիսյանը (Փափ)։* Կապույտ գլխով, կանաչ ոտով *ես ծաղիկ եմ* անուշ հոտով *(ԳԴ)։ Է՛յ դու,* ջանել, հպարտ *հասակ, Քրոտոր ոսկի աստղի պես (ԱԻ)։*

Համադաս որոշիչներն արտահայտում են.

ա) Միևնույն տեսակի առարկաները միմյանցից տարբերակող հատկանիշներ։ Օրինակ՝ Մեր առաջ դուրս եկավ երեխաների խումբը՝ կապույտ, սպիտակ, կանաչ *վերնաշապիկներով (մամուլ)։ Այստեղ վերնաշապիկները տարբերակված են տարբեր գույն արտահայտող որոշիչներով՝ կապույտ, սպիտակ, կանաչ։ Կամ՝ Ինչ սիրուն գույներ ունեն՝* կարմիր, կապույտ, կանաչ, ոսկի *(ԱԻ)։ Ես տեսնում եմ մեր հաբբստացած* մեծ *ու* փոքր *գյուղերը (մամուլ)։ Դուրս թռան երեխաները՝* սև *ու* կապույտ *աչիկներով,* շիկահեր *ու* թխահեր *(ՂԱ)։ Մանիր թելեր* հաստ *ու* բարակ *(ՂԱ)։ Պիտի հավերժաբար ապրեն* մեծ *ու* փոքր *գերդաստանները (ՀՔ)։ Այստեղ բերված միևնույն տեսակի մեկից ավելի առարկաները բնութագրված են միմյանցից տարբերակող հատկանիշներով՝ գույներով, մեծությունններով։*

բ) Որևէ առարկայի մեկից ավելի հատկանիշներ։ Օրինակ՝ Մայր երկիրն ազատվեցավ յուր կուռ, ճնշող *կապանքից։ Դեռ հեռու է կատարն* անամպ *ու* հստակ *(ՀՀ)։ Իսկ այստեղ մեկ առարկայի մեկից ավելի հատկանիշներն են տրված։*

Մանրագր.—*Բազմակի որոշիչները կարող են մակդիրներ լինել։ Օրինակ՝ Որ դարձրին քեզ մշշտական* Սև *ու* սուգի *մի հովիտ։* Խեղճ *ու* լալկան *քո երգերով (ՀԹ)։* Պարզ, լուսածածան, հրաշալի *գիշեր։ Սիրո հուշեր* լուսավետ, գոգդոջուն *ու* ցնծագին *(ՄՄ)։ Նրա* լուսեղեն, բոցեղեն *գրկում։* Շուշան կրծքով, լույս թևերով *նիհրած գետը վրդովում։ Կընակվեր* հուր *ու* հրաշք *մի աղջիկ (ԱԻ)։*

Միևնույն անդամի մեկից ավելի որոշիչները միշտ չէ, որ բազմակի են։ Բազմակի են այն որոշիչները, որոնք համասեռ են։ Այս տեսակետից էլ բազմակի չեն այն որոշիչները, որոնք՝

1. Տարբեր սեռային հասկացություններ են արտահայտում։ Օրինակ՝ փոքրիկ *փայտե տնակ, կլոր* կանաչ *տերև,* ամուր *քարե տնակ,* հազարավոր *խելոք մարդիկ,* բանտային *տխուր կյանք և այլն։ Այստեղ*

ընդգծված որոշիչները տարասեռ են, ուստի համադաս չեն։ Ընդհանրապես որակական և հարաբերական ածականներով արտահայտված որոշիչները համադաս չեն, ինչպես օրինակ՝ աշակերտական *գեղեցիկ տնարաց,* դալուտային *ուժեղ բրիգադ։ Կարելի է ասել, որ սրանք՝ ընդգծվածները լրացնում են որոշիչ+գոյական կապակցությանը։ Օրինակ՝ Ազատություն. ազատություն, ներբողների մեջ չես դու և ոչ շքեղ իշխանական դարպասներում սյունազարդ (ԱԻ)։ Այստեղ շքեղ որոշիչը լրացնում է ոչ թե դարպասներում գոյականին, այլ՝ իշխանական դարպասներում կապակցությանը, ուստի շքեղ և իշխանական որոշիչները բազմակի չեն։ Այդպես էլ բազմակի որոշիչներ չեն հետևյալ նախադասություններում ընդգծված որոշիչները։ Վեցերորդ օրը, առավոտյան վաղ, կարմիր կտուցով մի սև ագավնի մեր ափը եկավ (ԱԻ)։ Ինչի՞ նման են իրարից ճեռացած ծուռ ոտքերը (ԲՀ)։*

2. Կապվում են մյուս որոշչին այսինքն, որ որում *բառերով։ Օրինակ՝* աջափնյա, այսինքն ճորակառույց *ավանը։* Փայտյա, որ որում խարխուլ *տնակ։*

Վերը հիշատակված դեպքերում ընդգծված որոշիչները թվարկման հնչերանգով չեն արտասանվում և համադասական շաղկապներով չեն կարող միանալ։

Համադաս հատկացուցիչներ. Նախադասության միևնույն անդամի մեկից ավել հատկացուցիչները կոչվում են համադաս։ Օրինակ՝ Մատաղ լինեմ Սերոբի, Հայրոյի, Հրայրի, Ժիրայրի, Գևորգի, Անդրանիկի, Մուրադի, Սոսեի, Ջեյրանի *գերեղմանի հողերին (ՀՔ)։ Ստուգայցի երկու օրվա ընթացքում* Աբովյանի, Արտաշատի, Աշտարակի, Գառնիի *և* Եղվարդի *ճանապարհահատվածներում գրանցվեցին 272 փոքր ու մեծ խախտումներ (մամուլ)։ Ի՞նչ երեխաներ պիտի ծնվեին* Ժիրայրի, Հայրի, Գևորգի, Անդրանիկի *ու* Մուրադի *մահից հետո (ՀՔ)։* Վարդենիների *ու* բրենիների *պահն է,* նոների *և* սալորների *տոնն է (ԱԻ)։*

Համադաս բացահայտիչներ. միևնույն բացահայտյալի մեկից ավելի բացահայտիչները կոչվում են համադաս։ Համադաս բացահայտիչները կոնկրետացնում են, մասնակիացնում բացահայտյալի արտահայտած իմաստը։ Օրինակ՝ Ես ունեմ երեք քույր՝ Խոսիկը, Սիրանույշը *և* Զյունիկը։ *Մեզ հարևան էին նրանք՝ մայրը,* որդին *և* աղջիկը։ *Ուզում եմ, որ ամեն ինչ կանգ առնի, ինչպես որ կա՝* երկինքը *աստղերով,* հողը *հասկերով,* լուսությունն *իր ջինջ կապույտով (ՎԹ)։ Նա ամեն տեղ էր՝* մեռելատանը, հարսանիքներում, կռվի ու բամբասանքների մեջ, տանիքի վրա, ագրյուռում, պարտեզում, հիվանդի գլխի վրա, աղոցկան մոր ոտքերի տակ, ժառանգությունների բաժանման մեջ, նշանտուքի ու խոսկապի մթին ցանցերում *(ՎԹ)։ Քշում էին ամբողջ բազմություն՝* ծեր տղամարդկանց, պառավ, զառամյալ կանանց,

պատանի տղաների ու փոքրիկ աղջիկների և դեռ ծծկեր երեխաների (ՀՔ)։

Բայական լրացումները։ *Համադաս խնդիրներ. Նախադասության միևնույն անդամի մեկից ավելի համասեռ խնդիրները կոչվում են համադաս։ Համադաս կարող են լինել թե՛ ուղիղ, թե՛ անուղղակի խնդիրները։*

Համադաս ուղիղ խնդիրներ. Այս խնդիրները լրացնում են միևնույն բային, լինի դա անդեմ թե դիմավոր։ Օրինակ՝ Հիշում եմ նրա կարկատանները, խունացած վերարկուն, հազար ու մի գույզնգույն կտորներով կպցրած շապիկը, մանավանդ գլխի շալը (ՎԹ)։ Մինաս Ավետիսյանը իր ողջ պայծառ կյանքը, իր եռանդը, տաղանդն ու գիտելիքները նվիրաբերել է հայ ժողովրդին (մամուլ)։ Մանկահասակ աղջիկը հավասար սիրով և գգվանքով համբուրելով թե՛ մեկին, թե՛ մյուսին, վերջ էր տալիս ծնողների վեճին։ Ամեն օր հացթուխ Շուշանը, աշխատանքի գնալիս, տեսնում էր խումբ-խումբ տղաներ ու աղջիկներ։ Նրա ձեռքերը, երեսը, պարանոցը ծուխը մրով սևացրել էր (ԱՇ)։

Համադաս անուղղակի խնդիրներ։ Համադաս անուղղակի խնդիրները միևնույն անդամին լրացնող մեկից ավելի համասեռ խնդիրներն են՝ հանգման, մատուցման, անջատման, միջոցի և այլն։ Լրացյալ անդամը կարող է արտահայտված լինել բայով, նաև ածականով, մակբայով։ Օրինակ՝ Երկնի մովին, կանաչ ծովին, անտառներին խոր ու մթին, Գարնան ամպին լույս ոլորտում, ասում եմ ես՝ մնաք բարով (ՎՏ)։ Բարձրանում էինք՝ բռնելով քարերից, ծառերից ու մացառներից։ Լի էր եղել գայրույթով, վշտով, խնդությամբ, լացով ու ծիծաղով, կարոտով, ափսոսանքով, բոլշանքով ու ծանր նիստաբարությամբ (ՀՔ)։ Ինչպե՞ս եք ապրում, ջա՛ն ձեզնից պատմի, Ձեր օր ու կյանքից, ձեր ցավ ու դարդից։ Պատմիր տեսնեմ... մեռնող ապրողից, թանկ ու էժանից, Կամ նոր դուրս եկած գազերից, բանից (ՀՔ)։ Ոգևորվելով ծերունու շփոթությունից և հարմար ատիթից՝ Մակար աղան խլում է մուրհակն ու փողի կապոցը (ԱՇ)։ Աշխատանքից, հոգսերից ու մտորումներից ազատ ժամանակ չունեցավ նա։ Ի՞նչը կարող է մտքից ու ձայնից արագ ընթանալ, իսկ մրջյունից ու կրիայից՝ դանդաղ։ Խելոք, զգացմունքներով ու արտահայտությամբ գրավիչ էր նա (Սգր)։

Համադաս անուղղակի խնդիրները սովորաբար համասեռ են լինում ոչ միայն գործառական իմաստով, այլև արտահայտության ձևով։ Թեև անուղղակի խնդիրները արտահայտվում են թե՛ հոլովով, թե՛ կապային կապակցությամբ, բայց բաղմակիները կամ միայն հոլովով են լինում, կամ միայն կապային կապակցությամբ։ Հաճվադեպ է պատահում, որ նրանցից մեկը հոլովով լինի, մյուսը՝ կապայինով։ Ինչպես՝ Նա սիրված էր բարեկամներից, ընկերներից և մանավանդ ծնողների կողմից (Սգր)։

Համադաս պարագաներ։ Միևնույն անդամին լրացնող մեկից ավելի այն պարագաներն են համադաս, որոնք համասեռ են թե՛ քերականական իրենց գործառությամբ, թե՛ իմաստով։ Համադաս կարող են լինել բոլոր պարագաները։ Օրինակ՝ Սպասեց մի օր, մի շաբաթ, տարի, բայց լուր չկար։ Ամառ-ձմեռ, գիշեր-ցերեկ նա իր գործին էր (ԱԲ)։ Արբել էին մաքուր օդից, լեռնային զեփյուռի ալիքները շնչելուց, ծաղիկների նոսից (ՎՓ)։ Գյուղն էին իջել հովիվ պատանիք՝ Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի (ՀՔ)։ Գարբնոցի մրից, փոշուց ու երկաթի ժանգից նրա ձեռները սևացել ու կոշտացել էին (ԱՇ)։ Առոգանությունից, ձայնից ու կմկմալուց երևաց, որ Սաթիկն է խոսում։ Ամեն առավոտ նրան կարելի էր տեսնել հացի, կաթի ու մածնի գնալիս (Սգր)։

Այս կամ այն համադաս (բազմակի) պարագան կարող է արտահայտված լինել տարբեր ձևերով, ասենք հոլովով և կապային կապակցությամբ, մակբայով ու հոլովով, ածականով ու հոլովով։ Օրինակ՝ Կռվել եմ Բարթուղյան լեռների վրա, Արամի ափերին, Սարդարաբադի դաշտում, «Վարդան զորավար» զրահապատի վրա, Դենպրի ու Վոլգայի ափերին (ՀՔ)։ Այստեղ տեղի պարագան արտահայտված է ներգոյական հոլովով, կապային կապակցությամբ, տրական հոլովով։ Իսկ հետևյալ նախադասությունում ժամանակի պարագան արտահայտված է մակբայով, տրական հոլովով և համընթացական դերբայով, այսպես՝ Վաղ առավոտյան, Վառ արշալույսին, Օրը բացվելիս, Արևը գարնան Քեզ է առաջին Ողջույնը տալիս (ԱՇ)։ Իսկ հետևյալ նախադասությունում ձևի պարագան է արտահայտված տարբեր ձևերով՝ հարակատար դերբայով, հոլովով, ածականով, այսպես՝ Քայլում էին դունդ եկած, հրուշ նստված, բորիկ, ճաքճքած ոտքերով, արյունոտված, կապտած գնմքերով, քաղցից ուժասպառ (ԱՇ)։

Կապի համադաս խնդիրներ։ Հաճախ միևնույն կապը մեկից ավելի խնդիրներ է ունենում, ըստ որում նախադրությունները սովորաբար դրվում են կապվող առաջին բառից առաջ, ինչպես՝ Դեպի վեր, սարն ի վեր, քաջասիրտ կինվոր (ՀՀ)։ Նա կռվում էր ճանուն իրենց հող ու ջրի, ընտանիքի, գյուղի, մի խոսքով հանուն հայրենիքի (մամուլ)։ Դպրոց էր եկել առանց գրիչի, մատիտի, բնագիտության դասագրքի։ Իսկ եռադրությունները դրվում են կապվող վերջին բառից հետո, օրինակ՝ Ինչպես մյուս մարզաձևերի, այնպես էլ մարմնամարզության համար ամենագլխավոր իրադարձությունը աշխարհի առաջնությունն է (մամուլ)։ Ուր խտացված է սերը հայրենի երկրի, հողի աշխատավորի նկատմամբ (Սգր)։ Հոգնությունը նրանց դեմքի, բաց կրծքերի և բորիկ ոտների վրա այնպես էր երևում (ՎՓ)։ Բեկերի

և աղալարների դեմ հող ու ջրի համար վրեժխնդիր իրավատերեր էին, խոր ու մթին աչքերով՝ քարանձավների խորության ու մթության ներման (ԱԻ)։

Միևնույն պարզ նախադասության մեջ կարող են լինել բազմակի (համադաս) անդամների տարբեր բնույթի շարքեր։ Օրինակ՝ Կանաչ, վիթխարի ընկուզենու տակ, Իրենց հասակի կարգով ծալապատակ, Միասին բաղմած, Մի շրջան կազմած, Քնֆ էին անում եվ ուրախանում Մեր հսկա պապերն ու մեր հայրերը՝ գյուղի տերերը (ՀԹ)։ Այստեղ կան համադաս որոշիչներ (կանաչ, վիթխարի), ձևի պարագաներ (ծալապատակ, բաղմած, շրջան կազմած), ենթականեր (պապերն ու հայրերը)։ Կամ՝ Կանգնեցի խոժոռ, մենակ ու հաստատ, Մասիսի նման, Կանչեցի թշվառ էն հոգիներին՝ ցրված հավիտյան Մինչև Միջագետք, մինչև Ասորիք, մինչև ծովն Հայոց, Մինչև Հելլեսպոնտ, Մինչև Պոնտոսի ափերն ալեկոծ (ՀԹ)։ Այստեղ էլ կան ձևի պարագաներ (խոժոռ, մենակ ու հաստատ, Մասիսի նման) և տեղի պարագաներ (մինչև Միջագետք, Ասորիք, ծովն Հայոց, Հելլեսպոնտ, Պոնտոսի ափերը)։

Նախադասության միևնույն բառի կրկնությունը բազմակիություն չէ։ Միևնույն նախադասության մեջ ոճական նկատառումով հեղինակը կարող է այս կամ այն բառը կրկնել։ Միևնույն ենթակայի, կամ լրացման կրկնությունը դիտվում է իբրև մեկ ենթակա, մեկ լրացում։ Օրինակ՝ Գուրգենը, Գուրգենը, Գուրգենն էր պատճառը։ Գալիս եմ, գալիս եմ, մի՛ ադմկիր։ Հեղինակը մի սիրտ էր տվել, մի սիրտ, ամբողջ մարդկությանը սիրելու ընդունակ մի սիրտ։ Հանդիպեցի Հրաշին, հին Հրաշին, այն Հրաշին, որի համար ես միշտ մնացել էի Վահրամը, այն Վահրամը, միշտ Վահրամը։ Եվ ճակատամարտը քեզ հետ սիրելի, սիրելի, սիրելի, սիրելի, հարազատ հանդիսատես, սկսել եմ (Փափ)։ Ու պայմար, պայմար, պայմար երգեցի (Վարուժան)։ Ինձ անլաց թաղեցեք, լուրյո՜ւն, լուրյո՜ւն, լուրյո՜ւն անսահման (ՎՏ)։ Իմ հեռո՜ւ, հեռո՜ւ, հեռո՜ւ նահրյան դալար բարդի (ՀՍ)։

Նանոթագր.—Եթե կրկնվող նույն դերանունը տարբեր առարկաներ է նշանակում, այդ դեպքում համադաս է։ Օրինակ՝ Ծաղրում էին Գորիսի վաճառականներին ու չինովնիկներին՝ որի ագահությունը, որի պարտք ուրանալը, որի կաշառակերությունը և որի ընտանեկան կեղտը (ԱԲ)։ Այստեղ կրկնվող դերանունները տարբեր դեպքերում տարբեր անձ են նշանակում, ուստի համադաս են։

Համադաս չեն՝ 1. իմաստով իրար մոտիկ, հոմանիշ բառերը, որոնք հարադրություններ են, և դարձվածաբանական կապակցությունները։ Օրինակ՝ Քո տեղ լցված ցող ու շաղով, Քնես կելնես երգ ու տաղով (ՀԹ)։ Թիթեռներդ հուր հրեղեն, թռչող-ճախրող ծաղիկներ։ Լճակներդ լույս փիրուզ (ԱԻ)։ Աղբյուրներդ գիշեր ու զոր խոսքի բռնված իրար հետ (ԱԻ)։ Ո՛չ ձուկ է, ո՛չ միս, և՛ ծիծաղ, և՛ լաց, և՛ ծեր, և՛

երիտասարդ, ո՛չ մեռած է, ո՛չ կենդանի, ո՛չ առ, ո՛չ թող ու փախի, ո՛չ տվեց, ո՛չ առավ, ո՛չ այս է, ո՛չ այն և այլն։

2. Մասնավորեցնող կամ ընդհանրացնող լրացումները։ Օրինակ՝ Վտակի ափին, ուռենու տակ տխուր նստել էր Լիլիթը։ Հախճապակե դստիկոնի վրա, գահավորակի մեջտեղ բարձերին թիկն էր տվել երիտասարդ արքան (ԱԻ)։ Համագումարը բացվեց նոյեմբերի 15-ին, առավոտյան (մամուլ)։ Մյուս օրը, ուշ երեկոյան ճամփա ընկանք։ Կնստեր դռան առաջ, քարի վրա։ Գնացել էր գյուղ, հորեղբոր տուն (ԱԲ)։ Բոլոր այս նախադասություններում ընդգծված լրացումները բազմակի չեն, որովհետև ցույց են տալիս մեկ տեղ, կամ մեկ ժամանակ, ուստի չեն միանում շաղկապով և թվարկման հնչերանգով չեն արտասանվում։

Այդպես էլ՝ Վտակի ափին, ուռենու տակ տխուր նստել էր Լիլիթը (ԱԻ) նախադասության ընդգծված լրացումները միևնույն տեղն են ցույց տալիս և ոչ թե այլ տեղեր։ Տվյալ դեպքում ուռենու տակ կապակցությունը կոնկրետացնում է վտակի ափին պարագայի իմաստը։ Նմանապես՝ նոյեմբերի 15-ին, առավոտյան կապակցության մեջ առավոտյան-ը կոնկրետացնում է նոյեմբերի 15-ին ժամանակի պարագայի իմաստը և ոչ թե մի այլ ժամանակ է ցույց տալիս։

Համադաս (բազմակի) անդամների կառուցվածքային առանձնահատկությունները։ Համադաս (բազմակի) անդամները կարող են արտահայտվել թե՛ բառով, թե՛ բառակապակցությամբ։ Երբեմն էլ բազմակի անդամներից մեկը բառով է արտահայտված լինում, մյուսը բառակապակցությամբ կամ նախադասությամբ։ Օրինակ՝ Հասցնել իմ արվեստը մի տեսակ գերազանց բյուրեղացման՝ անընդհատ ծեծելով, հղկելով ու մաքառելով, իսպառ վանելով նրանից ամեն մի արվեստականություն, դարձնելով նրան իմ միսն ու արյունը, մանավանդ նորանոր հանդիսատեսի հետ իմ ամենօրյա շփումով լայնացնել իմ աշխարհայացքը (Փափ)։ Այստեղ՝ հասցնել բյուրեղացման գերազանց անդամն ունի համադաս կողմնակի ձևի պարագաներ, որոնք արտահայտված են դերբայական բառակապակցությամբ (անընդհատ ծեծելով, իսպառ վանելով նրանից ամեն մի արվեստականություն, դարձնելով նրան իմ միսն ու արյունը) և առանձին բառերով (հղկելով ու մաքառելով)։ Միշտ նույն խոռերի շշուկին նլու, Միշտ նույն կարոտի կսկիծը պաճած՝ Ես դուրս եմ գալիս նորից շրջելու Նեղ փողոցներն ու կրկեսները բաց։ Զարթե՛ք, երգե՛ր իմ, ժամ է հնչելու, Ձիերու նորից գեղերը ցրիվ, Մեռած սառերը կյանքի կոչելու, Եվ բարբոքելու գայրույթ ու կռիվ (ՎՏ)։ Հետո խելաս չոր քամին՝ թևերը թափահարելով, սիելֆորի նման սուլելով, շվշվացնելով փախավ, թռավ հեռուները։ Ձեփյուռի պես սաճելով, գարնան պես բուրելով վազում է մի գեղուհի, փարվում է խանի ծնկներին՝ մանկան պես թեթև, երազի

պես հեզ (ԱԻ)։ Այս օրինակներում էլ համադաս ձևի և նպատակի պարագաներն արտահայտված են դերբայական բառակապակցություններով։

Համադաս լրացումներն իրենք կարող են ունենալ համադաս լրացումներ՝ արտահայտված բառով, կապակցությամբ։ Օրինակ՝ Ու քայլում ենք գունդ եղած, իրար կպած, բոբիկ ոտքերով, արյունոտված, կապտած դեմքերով, քաղցից ուժասպառ, սմքած, թուլացած, ուռած ու ծանրացած մարմիններով (ՀՔ)։ Այստեղ դեմքերով, մարմիններով լրացումներն ունեն համադաս լրացումներ՝ արյունոտված, կապտած (դեմքերով), սմքած, թուլացած, ուռած ու ծանրացած (մարմիններով)։

Համադաս (բազմակի) անդամները կապակցվում են՝ 1. միավորիչ շաղկապներով (և, ու, էլ, նաև, այլ, նույնպես և, նմանապես և, ինչպես և, ինչպես նաև, ոչ միայն, այլև, ոչ... ոչ, թե... թե)։ Օրինակ՝ Գրիշն այդ մարդու ձեռքին սրի ուժ ու թափ է ունեցել։ Կռվել էր իր երկրի սահմանների ներսում և այդ սահմաններից դուրս։ Կայծակը ամեհի գոռոցով խփում է երկնքից, ճեղքելով գետինը և այրելով ամեն ինչ՝ կորչում է սայլերի մեջ (ՀՔ)։ Առյուծի բաժինն առել են ոսը, վանքը և ուրբու արքան։ Պառավ մոր համար գնում էր սև շալ, նաև ուրիշ ապրանք։ Այս փողոցում ապրում էին հյուսներ, քարտաշներ, կոշկակարներ, թիթեղագործներ, ներկարար, նաև մի քանի բեյներ։ Այժմ ո՞ղ գոմեշներ կային, ո՞ղ նրանց աղբյուրները։ Ոչ ոք նրան բանի տեղ չէր դնում՝ ո՞ղ իրենց բեյերը, ո՞ղ կինը և ո՞ղ հարևանները (ԱԲ)։ Գողն էլ մի կոնից, գելն էլ մյուս կոնից... (ՀՔ)։ Եվ իրար հետ ջերմություն ենք փոխանակում ես ու քարը՝ անգամ առանց սակարգության ու մինչև իսկ չնայելով...։ Որին ամեն օր աշխարհ են բերում նաև աշխարհի անմաքուրները, մինչև իսկ նրանք՝ անմաքուրները։ Լոկ քարը չի ծակում, այլ համբ ու խուլ վայրկյաններին էլ պարգևվում է ձայն (ՊՍ)։ Ո՞ղ այդքան ծիծաղել եմ կյանքում, ո՞ղ էլ այդքան լացել (Փափ)։ Պատմությունը, ևս առավել նրա ժամանակագրական մասերը գրելը հեշտ բան չէ։ Պատմական վիպասանը պետք է ունենա գիտության, մանավանդ մի քանի գիտությունների առատ պաշար։ Ստացա ձեր մի քանի տող գրությունը, այլև «Ծաղիկ» կիսամսագիրը (Ր)։ Մի՞թե ազնվություն է մեկին ճամ մինչև երկինք բարձրացնել, ճամ աշխատել մրոտել նրան։ Նոցա գաղափարներին կամակից չէ հեղինակը և ոչ նրա գործերին ընկեր (Ր)։ Աշխենը եկել էր, նաև իր հետ լավ լուրեր էր բերել (ՆԴ)։ Նախագահը, ինչպես և բրիգադիրը, դեմ չէր դրան։ Այնտեղ աճեցնում էին տանձ և խնձոր, ծիրան ու սալոր, այլև դեղձ ու խաղող։ Լավ աշխատանքը երևում է վարի, ցանքի, ջրի ու քաղհանի, ինչպես և բերքահավաքի օրերին, գյուղգործիքները, նաև տեխնիկան վերանորոգելիս (մամուլ)։

2. Ներհակական շաղկապներով (բայց, սակայն, բայց և այնպես, այլ ոչ թե, բայց ոչ, ոչ թե այլ, և այլն)։ Օրինակ՝ Թամամյանը մի բարի, բայց պահանջկոտ դիրեկտոր էր (մամուլ)։ Կարապետյանը դանդաղ, սակայն վճռական քայլերով մոտեցավ սեղանին։ Նա երբ ոչ ընդունակ, գոնե աշխատասեր ու բարեխիղճ աշակերտ է։ Աշխենը եկել էր ոչ թե հրաժեշտ տալու, այլ իր հետ մեկնելու ռազմաճակատ։ Հարկավոր է համբերությամբ, այլ ոչ թե անտարբերությամբ գործել (Սգր)։ Նա քայլում էր մանր, բայց կտրուկ ու արագ (ՆԴ)։ Դու ինձ մոտ պիտի մնաս ոչ թե մի, կամ մի քանի տարի, այլ մշտական (ԱՇ)։ Հրդեհի ժամանակ պետք է գործել արագ, բայց ոչ տագնապահար, գլուխը կորցրած (մամուլ)։

3. Տրոհական շաղկապներով, մակբայներով (կամ-կամ, կամ թե չէ, և կամ թե, մերթ... մերթ, մեկ... մեկ, երբեմն... երբեմն, ստեպ-ստեպ և այլն)։ Օրինակ՝ Մարգարե դառնանք իրոք այն անվանի և անանուն խոյերի պես եվ կամ թե չէ այն գազանի մաշկի նման (ՊՍ)։ Գետի արծաթե գոտին ձգվում էր՝ մերթ շողալով չհնձված արտերի մեջ, մերթ թաքնվելով սոսիների երկնասլաց անտառում։ Մտածում էր՝ մեկ հպարտանալ, որ իր Աշխենը և ոչ թե մեկ ուրիշն է կատարել նման ազնիվ քայլ, մեկ էլ զարհուրելով հետևանքից (ՆԴ)։ Նրան կկոչեր կամ թափառական հրեա, կամ եզվիտ։ Դրանց գրողները կամ տգետ և պատմությունից տեղեկություն չունեցող, կամ ամենապարզ շողոքորթ մարդիկ են (Ր)։ Երբեմն դժգոհ, երբեմն անխռով, երբեմն քաղցի, լուռ տառապանքի սև կնճիռների անջինջ կնիքով (ՇԿ)։ Սա ոչխարի կամ թե խոզի միս է։

4. Հետևանքի շաղկապներով (հետևաբար, հետևաբար և, ուստի, ուստի և)։ Օրինակ՝ Արուսը, լրացնելով իր մտապատկերների արտահայտությունը կանացի շնորհով, թվում էր անհամեմատ ավելի թատերական, հետևաբար և ավելի գրավիչ, քան Հասմիկը(Փափ)։ Նա խելոք, բարի, աշխատասեր, ուստի և հարգված մարդ էր։

5. Ժիջական շաղկապներով (թեև, թեպետ, թեպետ և և այլն)։ Օրինակ՝ Գետի ափին լսվում էր Կոմորովի ձայնը՝ թեև մորմոքոց, բայց խրոխտ (ՍԽ)։ Սանասարը աշխատասեր, եռանդուն, թեպետ մեծախոս, բայց օգտակար հարևան էր։

Համադաս (բազմակի) անդամները կարող են զուգադիր բառակապակցություններով հանդես գալ, ըստ որում զուգադիր կապակցությունների բաղադրիչներն իրար միանում են շաղկապներով, իսկ զուգադիրներն իրար՝ կամ շաղկապներով, կամ թվարկող հնչերանգով, միացնող դադարով։ Օրինակ՝ Փախչողներին գերի առան ու հշեցին ձորերով ու դաշտերով, քար ու քոռ, ճանիճների միջով (ՀՔ)։ Այստեղ ընդգծված զուգադիր համադաս տեղի պարագաները միացած են հնչերանգով, իսկ զուգադիրների բաղադրիչները՝ ու շաղկապով։ Նույնը

տեսնում ենք նաև հետևյալ նախադասություններում։ Իջնում էինք ձորի խորքերը ժախ ու բոխի, քեղ ու մանդակ, խավրծիլ ու երնջուկ քաղելու։ Փրկության ափն էին գալիս ծեր ու երեխա, մայր ու մանուկ և իմ եղբայրներն ու քույրերը։ Լռել էին հող ու քար, լեռ ու դեռ (ՀՔ)։ Ես տեսա ամենուրեք լաց ու արյուն, ոճիր ու նախճիր, եղեռն ու զարհուրանքներ միայն (ԱԻ)։ Ներշնչված երգեցի տխուր և զվարթ, ժպիտով և արցունքով (ԴՎ)։

Զուգադիր բաղմակի անդամները միմյանց հետ կարող են միանալ միավորիչ և ներհակական կապակցությամբ։ Զուգադիրների բաղադրիչները կարող են իմաստով իրար ներհակ լինել, ինչպես երևում է Վարուժանից բերված օրինակից։ Կամ՝ Այս հիսուն տարիների ընթացքում ոչ մի օր՝ տանը, թե դրսում, ընտանեկան տաքուկ հարկի տակ, թե մեծ պատերազմների ցուրտ ու խոնավ խրամատներում, քրնած թե արթուն չեմ կարողանում մոռանալ սոսկումնալի ու կախարդական բոպեները Եփրատի կամրջի վրա (ՀՔ)։ Նա ուներ հեզ ու բարեհամբույր, բայց և պահանջկոտ ու խիստ բնավորություն (մամուլ)։ Օրն արևոտ էր ու պայծառ, սակայն և սառն ու քամոտ, իսկ քամին մեկ փչում էր տաք ու շոյող, մեկ էլ սառն ու փշաքաղող, դա կվնասեր ծառերին ու այգիներին, ցանքին ու բանջարանոցներին։ Շաբաթօրյակի էին բերել աշակերտներին ու ուսանողներին, բանվորներին ու ծառայողներին, մեծին ու փոքրին (մամուլ)։

Միավորիչ շաղկապները երբեմն կրկնվում են կապվող բառերի հետ։ Օրինակ՝ Զմեռը իջավ իմ գլխին և՛ ցուրտ, և՛ խոր, և՛ անդորր (ՎՏ)։ Թողել եմ ներքև, մեծ լեռան տակին և՛ փառք, և՛ զանձ, և՛ ֆուն, և՛ նախանձ-ամենը (ՀԹ)։ Դուք էլ հավասար բաժանեք թե՛ աշխատանքը, թե՛ արդյունքը, թե՛ իրավունքները և թե՛ պարտականությունները (Ր)։ Խոհուն ներածականներ նվիրեց թե՛ այդ բարգմանությանը, թե՛ բեմադրությանը և թե՛ դերակատարությանը (Փաշ)։ Եվ լայն օրում, թե՛ ընկերներ, թե՛ բարեկամ ճանաչիր, իսկ նեղ օրում ընկերների ու բարեկամի ո՛չ որոնիր, ո՛չ կանչիր (ԱԻ)։

Համադաս անդամների միավորիչ և, ու շաղկապներով փակված շարքը կոչվում է փակ (ներփակ) շղթա։ Շաղկապով միացած անդամը փակում է շարքը, որ այլևս չի շարունակվում։ Օրինակ՝ Կոշտ ու կոպիտ հանդիմանում է նրան առանց առիթի։ Բացվում էր մի ընդարձակ այգի՝ բաղմատեսակ մրգատու ծառերով ու գեղեցիկ ծառուղիներով (ԱՇ)։ Իմ դրությունը ողբերգական լինելով հանդերձ, երեխայական է ու ծիծաղելի (ԱՇ)։ Գինու և օղու բաժակները դատարկվեցին։ Այնտեղ էին Գրիշան, Մելքոնը, Մովսեսը և Քյալիմ-Բեգը (ԱՇ)։ Այս օրինակներում ու-ին և և-ին հաջորդող անդամները փակում են համադաս անդամների շարքը՝ ստեղծելով փակ շղթա։ Մնացած շաղկապներով և անշաղկապ (հնչերանգով) միացած շարքը կոչվում է բաց

շղթա։ Այն կարելի է շարունակել, համադաս նոր անդամներ ավելացնել։ Օրինակ՝ Ուզում էի ներս թռչել լուսամուտից, գրկել իմ մայրիկին, խնդրել, աղաղակել (ՀՔ) նախադասության ուղիղ խնդիրների շարքը բաց է, կարելի է նոր համադաս խնդիրներ ավելացնել։ Եվ, ու շաղկապների կրկնության դեպքում ստացվում է բաց շղթա, ինչպես՝ գնել էր և՛ մատիտ, և՛ տետր, և՛ գիրք...

Համադաս անդամների շարքը սովորաբար կարող է փակվել՝ նաև, նույնպես և, ինչպես և, մանավանդ, ոչ միայն..., այլև շաղկապներով։ Օրինակ՝ Նա գոհ էր իր ունեցած հաջողությունով, դիրքով, նաև (մանավանդ) հարգանքով։ Անթվակիր նամակների, ինչպես և հետմահու տպագրված հոդվածների գրության ժամանակը որոշված է բովանդակության և այլ տվյալների հիման վրա (Ր)։ Այս առանցքի շուրջը պտտվում էին բոլոր իմ խոհերը, բոլոր իմ զգացումները ոչ միայն արթուն ժամանակ, այլև գիշերային երազների մեջ (ԱՇ)։

Մերթ..., մերթ, մեկ... մեկ, կամ... կամ, ոչ... ոչ, թե... թե զուգադիր շաղկապներով միացած բաց շղթաները կարող են ներփակվել և, ու, էլ միավորիչ, շաղկապներով միավորված անդամներով։ Պատկերացնում է նրան թե՛ տնտեսապես, թե՛ բարոյապես և թե՛ մտավորապես (Ր)։ Լույսերով ողողված նրա դեմքը շողում է իմ մտքի առաջ՝ մե՛կ մարմրող, հեռու և մե՛կ էլ մոտիկ, սակայծող աստղի նման։ Մե՛կ կանգնած, մե՛կ քայլելիս և մե՛կ էլ ձորափի տաճարի առջև շրջած՝ «խոսում էր» ասածո հետ (ՀՔ)։ Նովի մակերեսը մե՛կ կապույտ, մե՛կ կանաչ և մե՛կ էլ սպիտակ գույն էր ստանում։ Կա՛մ պիտի ինքը ներկայանար, կա՛մ եղբայրը և կա՛մ հայրը։ Ո՛չ գնացքով, ո՛չ ինքնաթիռով և ո՛չ էլ նավով կարող էր գնալ, իրենը ձին էր։ Թե՛ հուզված, թե՛ հանգիստ, թե՛ տխուր և թե՛ ուրախ ժամանակ նա չափավոր էր (Սգր)։

Բազմակի (համադաս) անդամները շարադասվում են, ինչպես երևում է բերված օրինակներից, սովորաբար, հայերենի շարադասության համաձայն. լրացյալից հետո կամ առաջ՝ իրար ետևից, առանց ընդմիջման։ Օրինակ՝ Ներամփոփ, կենտրոնացած, աշխույժ կամ դանդաղ շարժումներով այս կերպարները սոսկ խաղային իրավիճակներ չեն ներկայացնում, այլ կյանքի, մարդկային հոգու բախումներ են արտահայտում։ Նույնիսկ լավ ունկնդիր, դիտող, ընթերցող լինելու համար տաղանդ և շնորհք է պահանջվում։ Էստոնիայում նկարիչները քաղաքաշինության, քաղաքի զարդարման, ընդհանուր տեսքի համար նույնքան շահագրգռված են և գործուն, որքան ճարտարապետները («Գարուն»)։

Սակայն հաճախ համադաս անդամների կուտակումից խուսափելու, խոսքը սահուն ու ճկուն դարձնելու համար բազմակի որոշիչներից, խնդիրներից կամ այլ անդամներից մեկի կամ մի քանիսի շա-

բաղասությունը փոխում են։ Օրինակ՝ Անդ հեռու ալեոր Հայր ունիմ սգավոր (ԳԴ)։ Կապույտ գլխով, կանաչ ոտով ես ծաղիկ եմ անուշ հոտով (ԳԴ)։ Դու մի անհայտ բանաստեղծ ես չտեսնված մինչ էսօր (ՀՔ)։ Ես ատելն եմ փորձել և սիրելը (ՀՍ)։ Նրանք շատ հեռու տեղ են գտնվում, խոռոնկի, անհուն ձորերի մեջ, ժայռերի ծերպերում, հեռու հեռուներում։ Լիլիթին այնպես հրապուրիչ էր օձի վեռվեռուն, գալարուն մարմինը ոդորկ, սուր և նեռվոդ։ Խենթացած թափառում էր Ադամը, առանց դադարի։ Իր ամեն մի ապրած վայրկյանը իմաստ ունի և անպարտելի հրապույր (ԱԻ)։ Նա լուռ ու ուշադիր լսում էր, աչքերը հառած հոր բերանին։ Այդ մի ոչ այնքան մեծ սենյակ էր, պատերն անպատառ, կիսավեր, օճորքը բանձր մխից սևացած (Սգր)։

ՏՐՈՀՎՈՂ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

Նախադասության մեջ լրացումն ու լրացյալը սովորաբար արտասանական մի ամբողջություն են կազմում, և նրանց միջև դադար տեղի չի ունենում, ուստի գրավորում էլ նրանք միմյանցից չեն տրոհվում։ Օրինակ՝ Բարձր են Մթնաձորի սարերը։ Ամին շալակի ցախը դրեց քարին։ Նրա սարսափը հեռուներում էր տարածված։ Բադին էլ ամաչում էր հաց ուզի։ Խրամատի մի անկյունում էլ թաղեցին Պետուն (ԱԲ)։ Այստեղ՝ Մթնաձորի սարերը, շալակի ցախը դրեց քարին, նրա սարսափը, հաց ուզի և մյուս լրացում-լրացյալ կապակցությունները արտասանվում են առանց դադարի և գրավորում էլ չեն տրոհվում։

Սակայն երբեմն խոսողը լրացումից առաջ դադար է տալիս, այդ լրացումը իր լրացյալից առանձնացնելու համար, ուստի գրավորում էլ լրացումը լրացյալից տրոհվում է ստորակետով կամ բութով։ Դադարով առանձնացված այդ լրացումը քերականության մեջ կոչվում է տրոհվող լրացում։

Տրոհումը նախադասության երկրորդական անդամների առանձնացումն է հնչերանգով՝ իմաստային լրացուցիչ հաղորդմամբ։ Տրոհմամբ խոսողը նպատակ ունի ընդգծել լրացման նշանակությունը, հաղորդակցի ուշադրությունը հրավիրել նրա վրա։ Օրինակ՝ Լույսի հավերժական փարոս Աթենքի Ակրոպոլիսը Հելլադայի կապույտ աչքն է՝ աշխարհին հառած, աշխարհը կախարդող (Սգր)։ Այս օրինակում հեղինակը, նպատակ ունենալով հատկապես ընդգծել, շեշտել ակրոպոլիսի նշանակությունը, որոշիչը տրոհել է լրացյալից հատուկ հնչերանգով։ Այստեղ ստորոգյալի վրա (աչքն է) ձայնը բարձրանում է, ապա դադար է տրվում, որին հաջորդում է լրացումը։ Նույնը և հետևյալ օրինակում. Դա մի երիտասարդ ինժեներ էր՝ խաղաղասիրական հագուստով, եռիար և արագաշարժ, կարճիկ մազերով, մուգ շագանակագույն միրուքով (ԱՇ)։ Տրոհման դեպքում թուլանում է կապը լրացյալի հետ, և լրացումը ձեռք է բերում որոշ ինքնուրույնություն։ Արտասանվում է հատուկ հնչերանգով, օրինակ՝ բերված նախադասությունում ինժեներ էր ստորոգյալի վրա ձայնը, ինչպես վերևում ասացինք, բարձրանում է, հետո դադար է տրվում, ապա արտասանվում են ինժեներ-ին հաջորդող համագաս տրոհվող լրացումները։

Տրոհված լրացումը մինչև չտրոհված լրացման տարբերակն է, սակայն ունի լրացուցիչ հաղորդման նշանակություն։ Այսպես՝ Թույն էր կարծես՝ բոբ արևի սրտից քամած (ԵՁ) նախադասության տարբերակն է՝ Կարծես բոբ արևի սրտից քամած թույն էր։ Սակայն եթե երկրորդ նախադասությունում ընդգծված կապակցությունը սովորական որոշիչ է, ապա առաջինում այն տրոհված է՝ հատկապես ընդգծելու համար նրա նշանակությունը։ Իր արտահայտած լրացուցիչ իմաստով տրոհվող լրացումը մոտենում է երկրորդական նախադասությանը և իմաստային տեսակետից գտնվում է չտրոհված լրացումի և երկրորդական նախադասության միջին դիրքում։ Վերը բերված տրոհված որոշիչի երկրորդական նախադասությամբ արտահայտած տարբերակն է՝ որը կարծես բոբ արևի սրտից է քամված։

Տրոհվող լրացումները ռուս քերականներն անվանում են կիսաստորոգումային կապակցություն։ Ահա այդպիսի երկու կապակցություն ևս.

Հասնելով երեկվա հերկին՝ Փիլոն սկսեց քայլել փխրուն սահողի մեջ (ՆՁ)։ Այս տրոհված կապակցության հոմանիշն է՝ երբ հասավ երեկվա հերկին... Հետո նա հաջորդ բուռն ավելի լիքն էր վերցնում՝ նուզված խիղճը հանգստացնելու համար (ՆՁ)։ Այս տրոհված կապակցության հոմանիշն է՝ որպեսզի հուզված սիրտը հանգստացնի։

Նախադասության մեջ լրացումը լրացյալից տրոհվում է հետևյալ պատճառներով, հետևյալ պայմաններում։

1. Տրոհման առաջին և կարևոր պատճառը շարադասությունն է։ Ընդհանուր ձևով, կանոնով հայերենում լրացումը դրվում է լրացյալից առաջ, ընդունված շարադասությունից շեղումը կոչվում է շրջուն շարադասություն։ Ահա այս շրջունության դեպքում երբեմն կարիք է զգացվում լրացումը տրոհել լրացյալից։ Օրինակ՝ Դուրս թռավ գնդակի արագությամբ մի մոխրագույն շնիկ՝ սև, տափակ դնչով, վզին փաթաթած վուոերիկ բռժոժներ (ԱՇ)։ Այսօր նա միանգամայն բորբոքեց Անուշի նախանձը՝ իր ազատ վարք ու բարքով (ԱՇ)։ Գետից այն կողմ նրանց հայրական բոստաններն էին՝ բակլայի, կարտոֆիլի և դդումի անսպառ բերքով (ԱԲ)։ Տանը նրան ծեծում էին ծնողները՝ նամարելով այդ իրենց սրբազան իրավունքը (ՆՁ)։ Վերջին թափով մի ամրակուռ՝ անգութ կովում էին նրանք (ԵՁ)։

Որոշ դեպքերում հնարավոր էլ չէ տրոհված լրացումը տանել նա-

խաղաս, ինչպես, օրինակ, Հաբուդի ծոցում կար մի փայլուն իր՝ մեջը սպիտակ թերթ (ԱԲ)։ Տրամվայով անցնելիս տեսա նրան՝ այգու նրստարանին միայնակ նստած։

2. Տրոհման մյուս պայմանը լրացման ծավալն է։ Սովորաբար տրոհվում են ծավալուն լրացումները, այս դեպքում նրանք կարող են լինել նաև նախադաս։ Օրինակ՝ Մեծացիր՝ շարին ու բարուն գիտակ։ Պահիր նրան բարձր ու վճիտ, Արարատի սուրբ ձյունի պես, Պահիր նրան սրտիդ մոտիկ, ֆռ պապերի անյունի պես (ՍԿ)։ Նրա ուսյալ աշքերը տեսնում էին զորավարներին, մագաղաթյա մատենագրին՝ նղեգքերը տեսնում էին զորավարներին, մագաղաթյա մատենագրին՝ նղեգ- ձայա գրչով նրանց գովքը հորինելիս (ԱԲ)։ Առանձին մոտենալով աշակերտների շարախնդությանն զոնին՝ մխիթարեց նրան (ՆՁ)։ Առուսն ամաչելով իր նեղստությունից՝ ձայնը կտրում է (ՆՁ)։

Եթե լրացումը ծավալուն չէ, սովորաբար չի տրոհվում։ Օրինակ՝ Ու հոսում է գիշերը մութ (ՆՁ)։ Դաշտն են դիտում խավարամած (ՆՁ)։ Երկինքներ կան կապուտաչյա (ՆՁ)։ Երգելով մոտեցավ մեզ։ Նստած պատմում էր երեկվա դեպքը։ Քնելիս էլ միշտ ջուր էր խմում (Սգր)։ Աշակերտը կարդում էր ճեգելով։ Մոտեցավ մեզ կուրատվելով և այլն։

3. Տրոհման պայման է նաև լրացման տեղը, դիրքը։ Իրար հաջորդող, բայց քերականորեն իրար չկապվող բառերը միմյանցից տրոհում են, որպեսզի նրանք լրացում-լրացյալ լրմբռնվեն։ Օրինակ՝ Հաղթ նստել էր նրա առաջ ու տիրանու կամքին գերի՝ երբեմն էր հակում գետնատարած։ Եկել էին նրանք նորից՝ հուսավառված ու կրակոտ (ՆՁ)։ Ամուր գրկած կուրծքը հողի՝ սեղմելով հետզհետե՝ փախչում էին գաղտագողի (ՆՁ)։ Մենք էլ մեր սիրտն ենք բերել նորից՝ հուսավառված ու կրակոտ (ՆՁ)։ Սպասում են՝ աչքերն հառած խավարամած հեռուներին (ՆՁ)։ Կամուրջի ճաղերին հենված՝ Փիլոն նայում էր ներքև (ՆՁ)։ Երգի՝ գյուղում ունեցած ելույթը լուսաբանվեց Ինքթում (Սգր) և այլն։ Եթե ընդգծված բառերը չտրոհվեն, կվերաբերվեն հաջորդ բառերին և կստացվի՝ գերի երթ, նորից հուսավառված, հետզհետե փախչում էին, հենված Փիլոն, երգի գյուղում, մինչև հիշյալ լրացումները վերաբերում են նախորդող բառերին՝ կամքին, գերի, նորից եկել էին, հետզհետե սեղմվելով, հենված նայում էր, երգի ելույթը։

4. Հաճախ համադաս (բազմակի) լրացումների մի մասը հեղինակը դնում է լրացյալից հետո, որպեսզի լրացյալը չծանրաբեռնի նախադաս լրացումներով, որանով նա նախադասությունն ազատում է լրացումների կուտակումից և դարձնում է դյուրընթեռնելի։ Օրինակ՝ Մի մարդաբոյ արջ էր կանգնել մի քիչ հեռու՝ ճյուղն ուսին, չոքանի մանակի պես (ԱԲ)։ Նա մարմնացած կիրք էր՝ այրող, անասնական (ԱՇ)։ Դա ոչ թե քուռակ էր, այլ մի վիթխարի կապույտ նժույգ՝ լավ խնամված, գիրացած, կատաղի (ՆՁ)։ Ո՞վ չէր ճանաչում կալվածատեր և հանգիստ Մարկոս Ալիմյանին՝ այդ վաթսունհինգ տարեկան, կլորիկ մարմնով, ուռած թշերով, եռանդուն ու աշխույժ ծերունուն (ԱՇ)։ Հիմա էլ Մթնաձորում մուգ կանաչ մաշկով խլեզներ կան, մարդու երես չտեսած, մարդուց երկյուղ չունեցող (ԱԲ)։

5. Տրոհման պայման է դառնում լրացումի նաև բացահայտող, ճշգրտող իմաստը։ Այս դեպքում լրացումը եռադաս է լինում։ Օրինակ՝ Ոչ ոք նրան բանի տեղ չէր դնում՝ ո՛չ իրենք բեյերը, ո՛չ կինը, ո՛չ էլ երեխաները (ԱԲ)։ Այնտեղ էլ տնատերերը գնել էին հավասար մեծությամբ՝ յուրաքանչյուրը շորս հարյուր քառակուսի սաժեն (ԱԲ)։ Մայր էր առնում երեխաների մահվանիվը՝ կռիվը տարբեր փողոցների երեխաների միջև (ԱԲ)։ Դա ազատագրման պայքար էր՝ հողատերերից նորտերի ազատագրման (Սգր)։ Փամփուշտները բաժանեցին հավասարապես՝ յուրաքանչյուր զինվորի հինգական փամփուշտ։

Հայերենում ճշգրտող, բացահայտող լրացում է նաև բացահայտիչը, ինչպես՝ Այս բոլոր մանկական կատակների հեղինակն ու ղեկավարն էր Աննա Կորոլկովան՝ մաքսային չինովնիկի աղջիկը (ԱՇ)։ Այս լրացման մասին, սակայն, մանրամասն խոսվել է իր տեղում։

6. Բանաստեղծական խոսքում այս բոլորից բացի, տրոհման պայման է դառնում նաև հանգավորումը։ Օրինակ՝ Էն Լոռու ձորն է, ուր հանդիպակաց ժայռերը՝ խորունկ նոթերը կիտած՝ Դեմ ու դեմ կանգնած, համառ ու անթարթ Հայացքով իրար նայում են հանդարտ (ՀԹ)։ Այստեղ ընդգծված եռադաս լրացումները (խորունկ նոթերը կիտած, նայում են հանդարտ) հանգ են ստեղծում հանդիպակաց և անթարթ բառերի հետ (հանդիպակաց—կիտած, անթարթ—հանդարտ)։ Եվ ընկնեմ երբ ես՝ իմ սրտից զարկած—կմեռնես ինձ հետ ժպիտով հանգիստ, Եվ կցրտանա քնարդ հանգած (ՆՁ)։ Այստեղ էլ զարկած եռադաս լրացումը հանգ է կազմում հանգած եռադաս լրացման հետ։ Ա՜խ, մնաք բարև չեմ ասում ես ձեզ, իմ հոր գերեզման, Որոնք մայրական, Իմ հոգին հավերժ խոով է ձեզ հետ, հայրենական հարկ, հուշեր մանկական (ԱԲ)։ Իսկ այստեղ մայրական և մանկական եռադաս որոշիչներն են հանգ ստեղծում։ Մեղմ գիշերի գեղագանգուր երազում՝ Այն աստղերը, որպես մոմեր սրբազան, Առկայծում են կարոտագին, երազուն Հավերժաբար իրար կապված և բաժան (ՎՏ)։ Այստեղ էլ եռադաս, տրոհված երազուն և սրբազան լրացումները հանգ են ստեղծել երազում և բաժան բառերի հետ։

Այսպիսով, տրոհման պայման են դառնում լրացման շարադասությունը (տրոհվում են եռադաս որոշիչները), լրացման ծավալը (տրոհվում են ծավալուն լրացումները), լրացման ճշգրտող, բացահայտող իմաստը (տրոհվում են բացահայտիչները) և հանգավորումը (հանգ ստեղծելու համար լրացումը եռադաս, տրոհված ձևով են օգտագործում)։

Ժամանակակից հայերենում բոլոր լրացումները կարող են այս

կամ այն չափով տրոհվել լրացյալից, ըստ որում բացահայտիչը միշտ է տրոհվում, որոշիչներն ու պարագաները՝ հաճախ, իսկ հատկացուցիչն ու խնդիրները՝ քիչ դեպքերում։

Տրոհվող որոշիչ։ Որոշիչը որոշյալից տրոհվում է այն դեպքում, երբ եռադաս է լինում և ծավալուն։ Օրինակ՝ եռոտ կոչվածը վիթխարի դեզ էր՝ ծաճր ու թրջված «տուկերով»։ Կապիտանը գնդի հրամանատարի տեղակալն էր՝ պատերազմի ժամանակ զորակոչված։ Շտաբը գյուղական խրճիթ էր՝ երկու սենյականոց (ԲՀ)։ Դա մի գիրուկ, կարճահասակ մարդ էր, արևահար դեմքով, մանր ու շարժուն աչքերով (Մ)։ Քո աչիկները՝ զարունքերով լի (ՍԿ)։ Նրա տակ հրավառվեց գեղեցիկ մի կնոջ արձան՝ վեհ ճակատով, բուրբ ձեռքին, մի ոտքը դրած ամեհի առյուծի կոկորդին (ԱՇ)։ Այդ մի երկհարկանի շինություն էր՝ արբատաշ քարից, տափակ կտրածածկ տանիքով (ԱՇ)։ Սիրուն էր Հասոն, Նոր ծագող արևի պես (ՎԹ)։ Իմ ժողովուրդը՝ զարկված շղթայի, նշխարներդ սուրբ, քարերդ մամոտ Պաշտեց, գուրգուրեց հավատով անշեջ (ԱԻ)։ Ուսին մի փայտ կար՝ ծայրին մեծ-մեծ մեխեր խփած (Սգր)։

Եթե եռադաս որոշիչը ծավալուն չէ, մեկ բառով է արտահայտված, սովորաբար չի տրոհվում։ Օրինակ՝ եկեք ջահել սիրահարի սերը ողբանք վաղամեռ (ՀԹ)։ Ո՞վ է փնտրում տունն իր հին (ՍասԳ)։ Եվ այն ծծելով՝ անդուլ ու անհագ, մոռացավ իսպառ սարսափ ու սոսկում, իր բախտը դժխեմ, զազանին վայրագ, ահեղ վիշապին, ժահրոտ իժերին, մկներին ագահ (ԱԻ)։ Դու ես, որ ջնջում ես օազիսները պայար, հովիտները գովաշունչ, անտառները բամբուկի։ Թախիծ են բերում օրերն անցած, Թունդ գինու տված ծիծաղը խանձ։ Վերջում դառնում է ծիծաղ ու լաց (ԱԻ)։ Ես տիեզերքի տերն եմ միանձնյան (ԱԻ)։ Դա ցույց է տալիս երկնքի հանդեպ ապստամբ մի սիրտ, անպաշտպան մի միտք անհամբեր (ՊՍ)։ Թումանյանի երգերում կա և «էն», և «էս», բայց կա և սիրտ դեգերուն, հոգի հրակեզ (ՎՏ)։ Աղմկում է նրանց սրտում մորմոքը հին, հազարամյա (ԵՉ)։ Ու մթի մեջ հազարամյա, Գիշերի մեջ խորը, անհուն... (ԵՉ) և այլն։

Նկատելի է, որ երբեմն մեկ բառով արտահայտված եռադաս որոշիչը նույնպես տրոհում են։ Բայց դա արվում է այն նպատակով, որ տրոհված լրացումը չվերագրվի հաջորդ բառին։ Օրինակ՝ Արևը բեժ՝ մայր էր մտնում արևմուտքում (ԵՉ)։ Ու արտերը ալեծածան, վառվում էին (ԵՉ)։ Եթե այս նախադասություններում բեժ և ալեծածան բառերը չտրոհվեն, կվերագրվեն մայր էր մտնում և վառվում էին ստորոգյալներին, մինչդեռ նրանք արևը և արտերը գոյականների որոշիչներն են։ Կամ՝ Բայց ժողովուրդը երկար իր երգերի մեջ երգեց Քաջի մասին էն խիզախ՝ ժողովրդին մխիթար (ԵՉ)։ Որքան նման է եղել պահն այդ՝ մարող կանթեղի (ԵՉ)։ Այս օրինակներում նույնպես եթե խիզախ

և այդ լրացումները չտրոհվեն, կվերագրվեն ժողովրդին և կանթեղին իբրև որոշիչներ, այնինչ դրանք պանը և քաջի գոյականների որոշիչներն են։

Եթե ծավալուն որոշիչը եռադաս չէ, չի տրոհվում։ Օրինակ՝ ժողովեցան Տրդատա հավանոցի առաջ Գառնիում գտնվող բոլոր զորքերը։ Գառնին ամբողջապես ամփոփվեց արքայաշեն հավանոցի առաջ գրանվող հրապարակում (Մ)։ Սեղանապետ ընտրվեց նոր մուճղիր հագած, երեսը նոր սափրած, բեղերը խնամքով սանրած Սրաֆիոն Գասպարիչը (ԱՇ)։ Եթե «Դրանք պողպատե լայն խողովակներ էին՝ կոնաձև ծածկոցով և փոքրիկ հրակնատով» և «Հրանոթներից մեկը հեռահար էր՝ խոշոր տրամաչափի (ԲՀ) նախադասությունների ընդգծված որոշիչները տանենք նախադաս, այլևս չեն տրոհվի։ Կստացվի՝ Դրանք պողպատե, կոնաձև ծածկոցով և փոքրիկ հրակնատով լայն խողովակներ էին և՝ Հրանոթներից մեկը խոշոր տրամաչափի հեռահար էր։

Տրոհվող որոշիչ-որոշյալի հարաբերությունը, ինչպես ասվել է, մոտենում է ստորոգումային հարաբերության։ Այսպես՝ Ծովի եզերին զորանոցներն էին՝ բոլորովին դատարկ։ Նրա կողքին ավելացել էր տանկը՝ գրեթե տնակի չափ (ԲՀ)։ Նախադասությունների տրոհված լրացումներում ցգացվում է օժանդակ բայերի զեղչում (որ բոլորովին դատարկ է և՝ որ գրեթե տնակի չափ է)։ Այդ նրանից է, որ առհասարակ ստորոգելին, ցույց տալով ենթակայի հատկանիշ, հոմանիշ է ենթակայի որոշչին և փոխակերպելիս փոխվում է որոշչի, ինչպես՝ զընդակը կլոր է—կլոր գնդակ, ժամացույցը ձեռքի է—ձեռքի ժամացույց, գուլպան բրդից է—բրդից գուլպա և այլն։ Իսկ տրոհումն ավելի է ցցալի դարձնում այդ էությունը։ Դա պարզ երևում է նաև հետևյալ նախադասություններում։ Բակի անկյունում զինվորական մի խոհանոց կա՝ կաթսան ժանգոտած, խողովակը ծուռ (ԲՀ)։ Ապա բարձրանում է բարարձիվը՝ կտուցը կեռ բուր, մագիլները սրածայր նիզակներ, փեռուրները պողպատե զրահ։ Կաթավաթերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է, ցողունը կամավի ոտի պես կարմիր, ծաղիկը ծիրանի դույն (ԱԲ)։

Մանոթագր.—Երբեմն տրոհված որոշիչները համատեղում են նաև ձևի պարագայի իմաստ, ցույց են տալիս խնդրի վիճակ։ Այս դեպքում դժվար է որոշել՝ այդ լրացումը որոշի՞չ է, թե պարագա։ Օրինակ՝ Ասես աչքի առաջ, ձյունոտ անտառում տեսնում էր աղջկան՝ ձեռքին շոր ցախը։ Հայրը գնում էր առաջից՝ շոր ցախի կապը մեջքին, աղջիկը նրա ետևից, ջրամանն ու հացի շորը թևի տակ։ Մատիսի արագ շարժումով նկարեց կնոջը՝ օջախի մոտ նստած, աչքերը օջախի քարին (ԱԲ)։ Նույն ճանապարհով վրանների կողմն էր բարձրանում մի մարդ, գոտկում պողպատե փայլուն մանգաղ (ԱԲ)։ Որդուն կանչելով գնում

էր Համբոն, շալակին մի խուրջին, մեջը մի քանի նոց ու մի գաստա թուրուն (ՀԹ)։ Այս ընդգծված կապակցությունները կարող են գիտակցվել թե իբրև իրենց նախորդող գոյականների որոշիչ և պատասխանել ո՞ր հարցին (ո՞ր աղջկա, ո՞ր կնոջը, ո՞ր մարդը) և թե ստորոգյալների ձևի պարագա և պատասխանել ինչպե՞ս հարցին (ինչպե՞ս էր տեսնում, գնում, նկարում, բարձրանում)։ Որոշողը հարցն է։

Տրոհվող որոշիչների արտահայտությունը։ Տրոհվող որոշիչն արտահայտվում է՝ 1. ածականով. օրինակ՝ Երիտասարդ էր մեր քաղաքը, կովկասցու նման սևաչեր և կիրթ (ԲՀ)։ Աչքերն են առաջվանը՝ սև, ժիր, անհանգիստ։ Սղալում է միրուքը՝ մեջն սպիտակ (ԱԲ)։ Գեղեցիկ էր կինը՝ երեգանտ և հրապուրիչ (ԱՇ)։ Ճիպոտում էին մեր մանուկներին՝ լույսի պես արդար, դեռ հորատոտիկ, Առավոտի պես

բանտարկեց նրան՝ կասկածելով, որ նա դիտմամբ է նրդեն գցել՝ իբր թե դալլաքի դրդելով (ՎՏ)։ Առաջին նախադասության դերբայական կապակցությունը ժամանակի պարագա է, իսկ երկրորդինը՝ պատճառի, բայց երկուսն էլ տրոհված են, որ բխում է հիշյալ կապմությունից։ Անորոշ դերբայի գործիական հոլովով կապակցությունը տրոհվում է նաև անկախ շարադասությունից՝ նուազաս, թե նախադաս։ Օրինակ՝ Կինը, ծիծաղելով ամուսնու վրա, չի հավատում նրան (ՆԴ)։ Տովի սիրուն կապուտակը շարունակ փոխվում էր՝ առնելով երբեմն պարզ փիրուզի, իսկ երբեմն զորշ մշուշի գույն, նայելով, թե կարոն ինչ ուղղությամբ էր ընթանում (Մ)։ Այստեղ թե՛ նախադասն է տրոհվել, թե՛ նուազասը։

Մանոթագր.—Նկատելի է, որ եթե տրամաբանական շեշտը դերբայի վրա է, նրանից հետո դադար չի լինում։ Օրինակ՝ «Սեղանին ոտքերի թաթերի վրա մոտենալով է վերցրել հացը»։ «Հարեվանին կասկածելով է բողոքել թաղականին»։

Անորոշ դերբայի գործիական հոլովով տրոհված կապակցությունը կարող է լինել՝ ա) տրոհված ձևի պարագա. օրինակ՝ — Ո՞րը, սա՞,— ցույց տվեց Կամսարյանը, զարմացմամբ շուրջը նայելով։ Սրան պետք է պատժել, զրկելով ամեն իրավունքներից, և բանտ նստեցնել (Մ)։ Ես քայլեցի առաջ՝ անընդհատ սպասելով, որ հիմա թիկունքից կխփեն ինձ (ԲՀ)։ Գնում էին դեպի վեր՝ ոտանելով ժայռի վրայից, արհամարհելով արգելքները, պատռելով հողի կուրծքը (ՎՓ)։ Այդպես տանջվելով, ես տարա չորս-հինգ տուփ՝ շորս-հինգ անգամ այն աշխարհը գրելով ու դառնալով։ Բոլորը ճանապարհ տվին նորեկին՝ բաժանվելով երկու շարքերի (ԱՇ)։ Սավալվելով ու ծանրանալով՝ ահեղ ամպը բրոնեց երկինքը (ՀրՄ)։

բ) Տրոհված պատճառի պարագա. օրինակ՝ Հայերեն տառերը, գործածությունից հանվելով, ժամանակի ընթացքում մոռացվել են։ Նա, անհնարին գտնելով հայ գյուղում ապրելն ու գործելը, ձգում ու հեռանում է (Մ)։ Սմբատը համաձայնություն էր տվել հակառակ իր հայացքների՝ չկամենալով մորը վշտացնել։ (ԱՇ)։ Մեր լեյտենանտը խղճում էր մեզ՝ տեսնելով մեր բոլորովին անեռեղի, իզուր շարշարանքները (ԲՀ)։ Արաբացիք, նորեկների հարձակումից շվարելով և մանավանդ թե սաստիկ հարված առնելով, մի քանի կետերում սկսեցին նահանջել (Մ)։

Մանոթագր.—Երբեմն գերադաս անդամ դերբայը զեղչված է լինում։ Ինչպես՝ Ի ծնե խուլ, նյութական աստղական պայմաններից զուրկ՝ նա հնարավորություն չի ունեցել նույնիսկ դպրոց հաճախելու (ՊՍ)։ Մանկությունից փարթամ ու ճեշտ կյանքին սովոր՝ նա չէր կարողանում հաղթահարել դժվարությունները, իսկ սա, բախտին հլու ենազանդ, տանում էր բոլոր դժվարությունները (դասագիրք)։ Ընդգծված օրի-

նակներում զեղչված է լինելով դերբայը, ուստի ստացվել է ածականական բառակապակցություն։

գ) Հիմունքի և դիտման պարագա. օրինակ՝ Ձնայելով իր տարիքին՝ նրա այտերը կարմիր էին (ԱՇ)։ Եվ, սակայն, չնայելով այդ կանխակալ վճռաբության, նա որոշեց մտնել այդ «գյուղ» կոչված ավերանոցը (Մ)։ Աղձնյաց և Մոկաց տերերն էլ, նրանց նայելով, մնացել էին ձեռնպահ (Մ)։ Իր սիրելի մոր ձայնին անսալով՝ նա տունն էր մաքրում, խանութ էր գնում։ Նա ձեռք էր բարձրացնում դեմ կամ կողմ՝ նայելով նախագահի ձեռքին։ Գործում էր՝ նայելով, թե որ կողմից է վնասը գալիս, կամ օգուտը։ Նա այդ կարծիքին էր հանգել՝ երկար ուսումնասիրելով հարցը (Սգր)։

դ) Տրոհված հետևանքի պարագա. օրինակ՝ Վաշտի հրամանատարն ու քաղղեկը խիստ կշտամբեցին մեր լեյտենանտին՝ առաջացնելով մեր բոլորի զայրույթն իրենց նկատմամբ (ԲՀ)։ Մեր ոտքերի պղպջակները պայթում էին՝ առաջացնելով վերքեր, արտաթորելով ավիշ ու արյուն (ԲՀ)։ Մեքենան սլացավ առաջ՝ իր հետ տանելով իմ խոր ափսոսանքը (ԲՀ)։

ե) Պայմանի պարագա. օրինակ՝ Ամեն բան սրտին մոտիկ ընդունելով՝ մարդ կարող է հուսահատվել։ Կնոջ հետ այդպես վարվելով՝ նա կարող էր հիասթափեցնել նրան։ Բանակում բարեխիղճ ծառայելով՝ նա բարձր աստիճանի կհասներ։ Գործից այդպես միշտ խուսափելով՝ նա կարող էր ձրիակեր դառնալ (մամուլ)։

զ) Ժամանակի պարագա։ Այս դեպքում տրոհված լրացումը ցույց է տալիս ստորոգյալի գործողությանը հաջորդող կամ նախորդող գործողություն։ Օրինակ՝ Ուղիղ հիսուն տարի առաջ, թողնելով իր ասերշան ծննդավայրը, եկել, հաստատվել էր ծովեզրյա քաղաքում։ Հեռու աշխարհից գալով՝ մտել էր նրա սեփական տունը։ Տեսնելով հյուրին՝ նա արագությամբ ոտքի ելավ նրան դիմավորելու (ԱՇ)։ Մտնելով գրական ասպարեզ՝ Թումանյանն իր հետ բերեց հայ բնաշխարհը (ՍՁ)։ Վահրիճը Դանիելի մոտ գնալով՝ կարգավորեց վաղուց գտնված գրքերը և, վերադառնալով, հանձնեց Մեծն Սահակին ու Մեսրոպին։ Ապա գալով Այրարատ՝ ծառայության է մտնում հայ Արշակունի խոսրով 3-րդի արքունի դիվանում՝ թարգմանչի ու քարտուղարի պաշտոնով (դասագիրք)։ Տան պատին հենելով ձեռքի փոցխը՝ մոտեցավ հյուրին։ Մտնելով Սայու բակը՝ Կամսարյանն ուղղակի դիմեց պրիստավին և, հայտնելով նրան յուր անուն ու ազգանունը, խնդրեց ծանոթանալ (Մ)։ Սեպուհը ներս մտնելով՝ հայտնեց նրան մի ուրիշ նորություն. բազավորը Կամավաբերդից հեռանալով՝ եկել նստել է Սևան (Մ)։ Զինակիցները հանեցին իսկույն սրերը և կաթողիկոսի շիրմի վրա դնելով՝ հավատարմություն ուխտեցին իշխանին, արքային և հայրենիքին (Մ)։

Երբեմն անորոշով այս կապակցությունն ունենում է երկրորդա-

կան նախադասությամբ արտահայտված լրացում։ Օրինակ՝ Հանեցի վերնաշապիկս, դրեցի մի կողմ՝ շնասկանալով, թե ինչ է ուզում ինձնից այս սեռժանը (ԲՀ)։ Նա դիմեց հրամանատարությանը՝ խնդրելով, որ իրեն տեղափոխեն ուրիշի ձեռի տակ (ԲՀ)։ Նա այդ ծրագիրը գտնում էր իրագործելի՝ մատնելով, որ ո՛չ տերությունը պիտի որևէ արգելք լիներ, ո՛չ էլ ինքը պիտի աշխատանք խնայեր (ՎՓ)։

Անորոշ դերբայով հիշյալ կառույցի և նրան առնչվող նախադասության գործողությունն կատարողը միևնույն անձն է, անորոշ դերբայի ու դիմավոր բայի հատկանիշները միևնույն անձին են վերագրվում, վերաբերում։ Այսպես՝ Իշխանը, գլուխը վեր բարձրացնելով, հպարտ-հպարտ նայեց սեպուհին (Մ)։ Այստեղ թե՛ գլուխ բարձրացնողը, թե՛ հպարտ-հպարտ նայողը իշխանն է։ Նույնպես և՝ Ապա անկողինն էլ, ներսից ճավաքելով, մի լավ թափ տվեց։ Ուսի կիսով չափ ճագնելով՝ նա դուրս եկավ սրահ (ՆԴ) նախադասություններում։ Առաջինում անկողին հավաքողն ու թափ տվողն է միևնույն անձը, երկրորդում՝ հագնվողն ու դուրս եկողը։

2. Հարակատար դերբայով։ Կապակցությունները լինում են՝ ա) հիմունքի, զիջման պարագա։ Օրինակ՝ Իրեն վարձ վերցնում է ավազակի ձին՝ շնայած ավազակի ցույց տված դիմադրությանը։ Ազգական տվավ օրինակելի կրթության՝ ներշնչված ազգային զգացմունքներով և ճայրենասիրությամբ (Սգր)։ Սենգի ձայնից գրավված՝ նրա մոտ էին գալիս (դասագիրք)։ Ժողովրդական մեղեդիով հիացած՝ նա նոր մշակումներ էր անում։ Թեև վաղուց անցած-գնացած՝ այդ դեպքը նրա հիշողությունից դուրս չէր գալիս (մամուլ)։

բ) Տրոհված ձևի պարագա. օրինակ՝ Մանկամարդ աղջիկը, գեղեցիկ աչքերը լուսնի ճառած և ձեռքը ծնոտին հենած, նստել էր մոր հանդեպ (Մ)։ Բացված լուսնի նուրբ շողերին, Հովի թևին թռչելով՝ Փերիները սարի գլխին Հավաքվեցին գիշերով (ՀԹ)։ Կուգեմ երգս, աղոթք դառած, հավերժ հուզե քո հոգին։ Աչքդ անխուփ, ուշդ լարած՝ ականջ արա իմ երգին (ԱՄ)։ Մեր արյունն է այնտեղ հոսում՝ Ներկած և՛ տուն, և՛ փողոց (ԱՄ)։ Իմ գունդը թողած՝ ես ինչպե՞ս փախչեմ (ԲՀ)։ Թևս անցած Զարոն սիրուն՝ Կիչնենք ձորը Մանթաշի (ԱԻ)։

գ) Տրոհված ժամանակի պարագա. օրինակ՝ Արազ, ծեգը ջրիդ շառած՝ Իմ սև դարդը քեզ կրերեմ (ՀՀ)։ Հայր ունեի-ծովում կորավ, որսի ելած մութ գիշեր (ԱՄ)։ Մարդը հոգին չի կարողանում աստծուն տալ՝ որդուն չտեսած (ԱՇ)։ Կանգնած ավագ եղբոր աջ կողմում՝ նրան թվում էր, թե կանգնած է մի օտար անկոչ հյուրի հետ (ԱՇ)։ Բոլորը քաղցած էին և անհամբեր սպասում էին ճաշի՝ նույնիսկ պատարագի կեսից սկսած (ԱՇ)։ Լույսը դեռ չբացված՝ արթուն էի (ԲՀ)։ Հայաստանը, գրերի ստեղծումից շատ շանցած, կորցնում է իր կիսանկախ

գրությունը (դասագիրք)։ Իր արյամբ մոմը մարեց՝ շավարռած «Տեր, ինչ մեղա»-ն (ՊՍ)։

դ) Պատճառի պարագա. օրինակ՝ Անակնկալ պատահարից շփոթված՝ Պետրոսը վեր կացավ տեղից (Մ)։ Կարիքից ստիպված՝ դու ձեռք ես մեկնել թունավոր օձերին՝ խաբվելով նրանց լեզվից (ՆՁ)։ Նրան լսում էին՝ հետաքրքրությունից մղված (ՆՁ)։ Հոգիս խաբված քո համբույրեն՝ երգս ծփաց ինքն իրեն (ԱԻ)։ Հիվանդությունից սարսափելի հյուծված՝ նա չէր կարողանում քայլել։ Անակնկալ հանդիպումից շրջապատված՝ տղան չիմացավ ինչ անի (մամուլ)։

Երբեմն դժվար է որոշել հարակատարով կապակցությունը որոշի՞չ է, թե՞ պարագա։ Այսպես՝ Լացեց աղջիկն այն պաղ՝ շտեսած սափոր (Սգր)։ Փայլփլում էր տանիքը՝ արևի լույսով ողողված (Սգր) նախադասությունների ընդգծված կապակցությունները իրենց մեջ համատեղում են և՛ որոշչային, և՛ պարագայական իմաստներ (ո՞ր աղբյուրը և ինչո՞ւ լացեց, ո՞ր տանիքը և ինչպե՞ս էր փայլփլում)։

3. Կապային կապակցությամբ։ Այս տրոհված լրացումները լինում են՝ ա) հիմունքի և զիջման պարագաներ. օրինակ՝ Չնայած բոլոր արգելքներին ու հալածանքներին, շնորհիվ մեր պատմիչ-գրողների, միջնադարի հայ գրականությունը նույն շրջանի համաշխարհային գրականության պատմության մեջ աչքի է ընկնում իր գիտական, ճանաչողական ու գրական արժանիքներով (դասագիրք)։ Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» առաջին և երրորդ մասերը, պատմական հիմք ունեցող անցքերի հիշարագրություն պարունակելով հանդերձ՝ առավելապես իրենցից ներկայացնում են քրիստոնեական մի լեգենդ, սրբի վարքագրություն՝ խառը աշխարհիկ էպոսի որոշ դրվագներով։ Ըստ նշգրտված գրի՝ Շնորհալու «Վիպասանությունը» կազմված է ութսունվանկ 21654 տողից (մամուլ)։ Հակառակ նորամուծ սովորության՝ այրին պահանջել էր... (ԱՇ)։ Համաձայն կանխավ արած որոշման՝ Մակաց տերն ու Աղձնյաց նահապետը պիտի միանային արքային Շարուրի դաշտում (Մ)։ Սրան, ըստ էպոսի, սեղմ բնութագրում է Խորենացին։ Ըստ որոշ տվյալների՝ հայերեն գրականությունը գոյություն է ունեցել 5-րդ դարից առաջ, հակառակ այս կարծիքի՝ մյուսները գտնում են, որ գրերի գյուտից առաջ հայերեն գրավոր գրականություն չի եղել (դասագիրք)։ Մեր ստացած ստույգ տեղեկությունների համաձայն՝ կենդանի չէ այլևս Հաջի Օնիկ էֆենդին (ԵՁ)։ Համաձայն բրիգադիրի տվյալների՝ խաղողի պլանը կգերակատարենք (մամուլ)։

բ) Տեղի պարագա. օրինակ՝ Մի քանի կանաչկոտ բլրակներ անցնելուց հետո երևացին Ջիբուխլուի աղքատիկ ցանքերը՝ հարուստ սեվանոցի վրա (Մ)։ Նկարիչը տեսավ նրա աչքերը և մոխրի փոշին՝ ունքերի վրա, մազերի վրա (ԱԻ)։ Երեխան տարված էր ձկների խաղով՝ փոքրիկ կապուտակ լճակի մեջ (մամուլ)։

գ) Նպատակի պարագա. օրինակ՝ Յուրաքանչյուրն աշխատում էր փայլել իր գիտությամբ՝ ճարտար սեղանակիցների ուշադրությունը գրավելու համար (ԱԾ)։ Երեք հեռագրագծերը Վառոդյանի հրամանով կանգնեցրել էին՝ դեզերտիրներին կախելու համար (ԵՉ)։ Որպիսի ապժանելի, տոկուն ու մեծ աշխատանք էր հարկավոր՝ ցորեն ունենալու համար մի այդպիսի խոպան տարածությունից։ Պատեցնում էր նրանց Վասպուրականի վանքերը՝ ցույց տալու համար յուր երկրի ճառագայթությունը (Մ)։

դ) Պատճառի պարագա. օրինակ՝ Գերմանացիները երկի հոհոացին՝ մի երիտասարդ կյանք ևս այն աշխարհը ուղարկելու համար (ԲՀ)։ Նրան խիստ նկատողություն արեցին՝ պաշտոնում անփույթ լինելու պատճառով։ Պահեստապետին աշխատանքից ազատեցին և գործը հանձնեցին քննչական օրգաններին՝ մեծ չափի պակասորդ տալու համար։ Նա հեռացվեց աշխատանքից՝ ճարբելու և աշխատանքի չներկայանալու պատճառով (մամուլ)։ Փողոցային երթևեկության կանոնները խախտելու համար՝ տուգանվեց։ Նա միշտ տուժում էր՝ իր բնավորության պատճառով (մամուլ)։

ե) Զևի պարագա. օրինակ՝ Ուզում եմ ապրել անչար ու բարի՝ գմբեթի ներքում բուսած տուղտի պես (ՊՍ)։ Նստել էր Իվան բեյը, որպես թեր ջարդած թռչուն։ Լավ օրվա հույսը հալվում էր՝ խողովակից եկող ծխի պես (ԱԲ)։ Վահրամ սեպուհը, որպես շանթառաք մի ճարված, ահավոր սուրը ձեռին՝ ընկավ արաբացոց վրա։ Մեր գունդն արշավում էր՝ որպես մրրիկ, որպես հողմ (մամուլ)։

զ) Չափի պարագա. օրինակ՝ Այրուն նշանակում էր կրասեր որդուն խնամակալ՝ մինչև չափահասություն (ԱԾ)։ Մինչև հոգու խորքը՝ վիրավորված էր ինձնից (Սգր)։ — Ես, ամպի չափ, սիրում եմ իմ մայրիկին (Սգր)։

4. Հոլովական ձևերով։ Սրանցով տրոհված պարագաները լինում են՝ ա) հիմունքի. օրինակ՝ Ճարտարապետության պատմության կարծիքով՝ այդ դարում հայ հին ճարտարապետությունը հասավ իր ամենաբարձր կատարին՝ հրաշակերտելով արվեստի այնպիսի գլուխգործոց, որպիսին Զվարթնոց տաճարն էր (դասագիրք)։ Ժամանակակից շատ բանաստեղծություններ, ճենց արդի ինճադասության կարծիքով, բովանդակաղուրկ, անհայրենիք ստեղծագործություններ են («Գարուն»)։ Տեր-Սիմոնը քայլ-առ քայլ հետևում էր Սմբատին՝ տնային ֆանտազիայի իրավունքով (ԱԾ)։

Եթե մի կողմից և մյուս կողմից կապակցությունները տեղի պարագա չեն, այլ՝ հիմունքի պարագա, լրացյալից տրոհվում են։ Այսպես՝ Մի կողմից՝ գնալը վտանգավոր էր, մյուս կողմից՝ չգնալ չէր կարող։ Մյուս կողմից՝ կտակը հնարել էր Միքայելին իր ձեռների մեջ առնելու համար (ԱԾ)։ Մի կողմից՝ ամուսնուն կորցնելու վիշտը, մյուս

կողմից՝ որբացած երեխաների հոգսը մաշել էին Նվարդին, բայց նա տոկաց և մեծացնում էր իր սիրասուն որբուկներին (մամուլ)։

բ) Նպատակի. օրինակ՝ Գյուղն էին իջել Հովիվ պատանիք՝ Ազչիկ տեսնելու, պարի ու կոխի (ՀԹ)։ Գրողի նպատակն էր օգնել գյուղացուն՝ դժվար կացությունից ելնելու։ Հիշում էր մի քանի ամիս ի վեր յուր գործ դրած ջանքերը, անխոնջ աշխատությունները՝ բաժանված ու պառակտված ուժերը միացնելու, երկիրը օտար բռնությունից, իսկ գանձը կործանումից ազատելու (Մ)։ Կամի նա ելանել վրեժխնդիր հոգով, Յուր անվերջ տանջանքի թույնը մահաբեր Աշխարհի չորս կողմը շաղ տալու մտքով։ Դուրս արի՝ բերելու կոտորած, ավեր (ՀՀ)։ Այրիացած Ոսկեհատն էր կարգադրել սեփական գրամից հարյուր ռուբլի բաժանել մուրացկաններին՝ ճանգուցյալի հիշատակին (ԱԾ)։

գ) Զևի. օրինակ՝ Աչքը աշտարակին՝ նվագում էր տխրագին։ Ապրում էր Հասան այդպես երջանիկ՝ ճեռու մարդկանցից, բնության գրկում, լեռների կրծքին (ՎՓ)։ Ամենից առաջ ներս մտավ Գեորգ Մարզպետունին՝ Արարատյան գնդով։ Մարզպետունուն հետևեցին գաշնակից իշխանները՝ յուրաքանչյուրն իր զորախմբով և իշխանական դրոշով։ Դրանց հետևում էր արքայական հեծելախումբը՝ թագավորական դրոշով (Մ)։ Թևերն ոսկեհուռ, հրաճեր բազով ճեռյզը տակին՝ սլացավ վերև (ՀՀ)։

5. Ածականով կամ մակբայով։ Այս դեպքում տրոհված լրացումը կատարում է՝ ա) ձևի պարագայի գործառություն։ Օրինակ՝ Արկերը պայթեցնում էին այդ ականները՝ շղթա առ շղթա (ԲՀ)։ Վազեցի աջ՝ իզուր, վազեցի ձախ՝ իզուր (ԲՀ)։ Ու անտեղյակ մահին, շարին՝ Հավքերն ուրախ սեր կերգեն (ԱԲ)։ Բոլորը նրա մասին էին խոսում՝ քե քեր, քե դեմ։ Թերաններ կերակրով լեցուն՝ ցինիկ անեկդոտներ էին պատմում (ԱԾ)։

բ) Պատճառի. օրինակ՝ Կյանքից ու աշխարհից խռով՝ նա դուրս չէր գալիս տնից։ Միջավայրն ու գործի նկատմամբ անտարբեր՝ նա չգիտեր, նույնիսկ թե ով է գործարանի նոր դիրեկտորը։ Մանկությունից խելոք ու աշխատասեր՝ նա այսօր էլ չգիտեր աշխատանքում գլուխ պահել (մամուլ)։

Տրոհված բացառման անուղղակի խնդիր։ Խնդիրները տրոհված ձևով քիչ են հանդիպում։ Բացառման անուղղակի խնդիրն է, սակայն, որ իրոք կանոն, միշտ տրոհված է լինում։ Այդ խնդիրն արտահայտվում է բացի, զատ, բացառությամբ, չհաշված կապական բառերով։ Օրինակ՝ Այստեղ բոլորը մեր թշնամիներն են, բացի Միքայելից (ԱԾ)։ Նրանց կոպերը, արտանուճքներից զուրկ լինելուց զատ, խիստ կարմիր էին (Մ)։ Թե տանուտերին զանգատ եմ գնում, Բան չեմ վաստակում, բացի դուշմանից (ՀԹ)։ Արտաշատի գրավումով ոչնչանում էր այն միակ ամ-

բությունը, որ Դվինից զատ՝ կարող էր վտանգ սպառնալ հայոց հաջողությանը (Մ)։ Բացի այդ, նրանք այրեցին հայոց մի աշտարակը (Մ)։ *Այնտեղ վաճառվում էին ներմուծված ապրանքներ,* չհաշված տեղական արտադրանքը։ *Բոլոր ընկերները,* բացառությամբ Աբամի ու Ղուշիկի, *եկել էին Հակոբին ճանապարհելու (մամուլ)։*

Երբեմն տրոհվել կարող է նաև ուղիղ խնդիրը՝ արտահայտված դերբայական կապակցությամբ։ Ինչպես՝ Հանգուցյալը կտակել էր՝ Սմբատին նշանակել կառավարիչ *(ԱՇ)։ Լուր տարածվեց, թե հանգուցյալը կտակել է՝* դնել այդ տրեխները իր դագաղի մեջ և նետը թաղել *(ԱՇ)։ Նա հրամայեց ծառաներին՝* մեկիկ-մեկիկ մուրացկաններին թույլ տալ իրեն մոտենալ *(ԱՇ)։ Այստեղ նույնպես տրոհման պատճառն այն է, որ լրացումի ու լրացյալի միջև մի այլ բառ կա, տվյալ դեպքում ստորոգյալի ու ուղիղ խնդրի միջև մի այլ խնդիր կա, որը ուղիղ խնդիր կգիտակցվի, եթե չտրոհվի։*

Որոշ տրոհվող լրացումներ համատեղում են խնդրի ու պարագայի իմաստներ։ Այսպես՝ հետևյալ նախադասություններում համատեղված են միջոցի անուղղակի խնդրի և ձևի պարագայի իմաստները։ Այդ նպատակով նրանք, զանազան հնարքների և միջոցների դիմելով, *ամեն կերպ աշխատում էին թուլացնել և նույնիսկ վերացնել քրիստոնեությունը և տարածել զրադաշտականությունը։ Այդ շրջանում հայ հոտորներից և փիլիսոփաներից հայանի էին Եզնիկ Կողբացին՝* իր «Եղծ աղանդոց» գրքով, *Դավիթ Անհաղթը՝* իր «Գիրք սահմանաց» *և «Մեկնություն ստորոգության Արիստոտելի» գրքով (դասագիրք)։ Կյորեսեցիք ծաղրում էին քաղաքացիներին՝* հորինելով մականուններ *(ԱԲ)։ Մտածում էր,* իր հանքում գետնի տակով խողովակ անցկացնելով, *հարևանի նավթը գողանա (ԱՇ)։ Հետո սկսում ենք արագ այլանդակել դաշտը՝* գիրքեր փորելով *(ԲՀ)։*

Հետևյալ նախադասություններում ընդգծված կապակցությունները կարող են դիտվել թե՛ իբրև ձևի պարագա, թե՛ բաղդատման անուղղակի խնդիր։ Որպես հաղթանդամ մի ծերուկ հսկա՝ *Կախված է ժայռը ջրերի վրա (ՀՀ)։* Եվ որպես մանուկ, ժպիտն երեսին՝ *մեղմիկ շշունջով խոսում են նրանք (ՎՓ)։ Սուլելով ու թառանչելով,* որպես մի կենդանի, մի հրեշ, *անցավ շոգեկառքը (ԱՇ)։ Սմբատը մոայլ մտքերի մեջ խորասուզված, գլուխը կրծքին թեքած, կանգնած էր,* որպես մի տեսակ դատապարտյալ *(ԱՇ)։ Երկու տող գիրքը վայրկենաբար ալեկոծեց նրա մեջ սառած որդիական զգացումները՝* որպես ուժեղ ձեռքով արձակած մի քար՝ նիրհած լիճը *(ԱՇ)։*

Տրոհված անդամը կարող է բաղմակի լինել՝ արտահայտված զանազան ձևերով։ Օրինակ՝ Եվ երկար, երկար տանջվելուց հետո, կես ճզակոտոր, տերևները կորցրած, ուժասպառ, խաղալիք՝ քամիների, որոտումների տակ, կայծակի գծերի մեջ, անձրևով թրջված՝ հասնում է բարձր կատարին (ՎՓ)։ Ամեն գիշեր մոայլ ծերունին մեն-մենակ, երկայն թավիշե խալաթը հագին, գիշերային սև թասակը գլխին, ձեռին բռնած մի ճրագ՝ իջնում է վար (ԱՇ)։

Տրոհվող լրացումների կետադրությունը։ *Ըստ կետադրության կանոնների՝ տրոհվող լրացումները լրացյալից բաժանվում են ստորակետով կամ բութով։*

Եթե տրոհված անդամը վերջադաս է, այսինքն նախադասության վերջին կապակցությունն է, կամ նախադաս է, այսինքն՝ առաջին կապակցությունն է, լրացյալից բաժանվում է բութով, օրինակ՝ Տեսեք Թովչանքը նրա՝ Հենց նոր ծաղկած ճշի ծառ. Տեսեք հայացքը նրա՝ Աբեգակի պես պայծառ (ԳՍ)։ Խորհել ենք շարունակ՝ աշխարհում ապրել արդար։ Աշխատեցի օրն ի բուն՝ ականջս կախ միշտ նրա խոստումներին ծեծծեռուն։ Անհավատարիմ ձեռքերով ծախված՝ հավատարմության ճյուղից եմ կախված (ՌԴ)։ Դուրս եկավ Գյուլնարան տնից՝ խալիչան ձախ ուսի վրա (ԳՍ)։ Գյուլնարան ճչաց, ընկավ ցած՝ երեսին իջած ապտակից (ԳՍ)։ Որպես ուժի մեծ մի առու՝ *Կյանք եմ տալիս նրանց հոգուն (ԳՍ)։* Այս քաց դաշտում շունչը պաճած՝ *Սպասում էի ես քո գալստին (ԳՍ)։ Հիշում եմ ես հրեշ մի թագավորի Գիրը՝* գրված մի մեծ ժայռի *(ԳՍ)։*

Նախադաս և վերջադաս տրոհվող լրացումները անջատում են նաև ստորակետով, բայց ճիշտը բութն է։ Իսկ եթե միջադաս է, երկու կողմից տրոհվում է ստորակետով։ Օրինակ՝ Արտում, ոսկի, ornrուն, *Մի գյուղացի խինդով վառ, Մի զույգ հասակ էր տրորում Իր բռան մեջ արևհար (ԳՍ)։ Եվ,* բեվելով, *կնոջ ականջին շշնջաց։ Մի պատանի պարսիկ,* նրա փեշերից քաշելով, *աշխատում էր ինքն առաջ ընկնել։ Կային անդամալուծներ, որ,* ձեռների վրա սողալով, սրա-նրա ոտները կրծոտելով, *ճգնում էին իրենց համար ճանապարհ բանալ (ԱՇ)։ Նոր ծառերը, սակայն,* անվրդով, անզգա կարծես այդ բոլոր հուզման, *անցել էին գիշերությունը, անցել գծված սահմանը (ՎՓ)։ Բրիգադիրը,* խաղողի վազերի մեջ կանգնած, *մոլորվել էր և,* կարկուտի հասցրած վրնասից շշմած, *չգիտեր ինչ աներ։ Հրշեջը մոտեցավ շենքին և,* իսկույն կողմնորոշվելով իր աեելիքում, *վերցրեց խողովակը։ Ջոկատը դիմադրում էր համառ կերպով, սակայն,* հակառակորդի հանդեպ փոքրաթիվ լինելով, *սկսեց ետ քաշվել (ԲՀ)։ Հեռվից լսվում էր հակառակորդի տանկերի հոնդյունը, բայց,* խոր խրամատում նստած, *նրանք չէին կարող հաշվել, թե քանիսն են (ԲՀ)։ Այս դեպքում տրոհման համար, անշուշտ, դեր են խաղում նաև շաղկապները, միջարկությունները։*

Գրականության մեջ տրոհումը հանդիպում է նաև ստորակետ-գծի, բութի-ստորակետի միջոցով, բայց դրանք շեղումներ են։

ԶԵՂՉՈՒՄ

Երբեմն նախադասության այս կամ այն անդամը բացակայում է կառույցից, բայց խոսքային միջավայրից ու իրադրությունից գիտակցվում է, լսողը, կարդացողը բացակա բառը մտքով վերականգնում է։ Այս վերականգնման ենթակա կամ սպասելի անդամի բացակայությունը կոչվում է զեղչում։ Ուրեմն ոչ բոլոր անդամների բացակայությունն է համարվում զեղչում, այսպես է կոչվում այն անդամի բացակայությունը, որի առկայությունը տվյալ կառույցում սպասելի է, պարտադիր և առանց այդ անդամի տվյալ նախադասության կազմը թերի է դառնում։ Օրինակ՝ «Գնացքը շարժվեց» նախադասության մեջ չկա, թե ինչ գնացք է, երբ շարժվեց, ուր շարժվեց, ինչպես շարժվեց, բայց սրանց առկայությունը պարտադիր չէ այդ կառույցում, ուստի նրանց բացակայությունը զեղչում չէ։ Համեմատենք այս նախադասությունը հետևյալ նախադասությունների հետ։ «— Գեղամը ո՞ւր գնաց։ — Գյուղ»։ «— Արամը քեզնից գոհ է։ — Իսկ դու դժգո՞հ ես»։ Առաջին ընդգծված նախադասությունում զեղչված են ենթական ու սահմանյալը (Գեղամը գնաց), իսկ երկրորդում՝ անուղղակի խնդիրը։ Սակայն այս բացակա անդամների առկայությունը սպասելի է, նրանց մասնակցությունը նախադասության կազմին պարտադիր է, ուստի խոսակիցը մտքում վերականգնում է բացակա անդամը։ Երբ լսում է՝ գյուղ, հասկանում է, որ Գեղամը գյուղ է գնացել։

Ինչպես ասվեց, զեղչման հետևանքով նախադասության կազմը թերի է դառնում, ուստի և կոչվում է թերի նախադասություն։ Այս թերությունը նախադասության բովանդակությանը չի վերաբերում, այլ միայն կազմությանը։ Բովանդակությամբ նա լրիվ է, կատարում է հաղորդակցման իր դերը։ Թերի տերմինի տակ սովորաբար հասկացվում է մտքի թերություն, երբ բառը կամ բառակապակցությունը բովանդակությամբ կիսատ է, որևէ պատճառով ընդհատված և հաղորդակցման դեր չի կատարում։ Օրինակ՝ «— Հե՞յ, առաջամասում...,— բայց հաղն ընդհատեց նրա խոսքը»։ Այստեղ ընդգծվածը և՛ կազմով, և՛ բովանդակությամբ թերի է, և լսողը չի հասկանում, թե ինչ էր ուզում ասել խոսողը։ Քանի որ թերի տերմինը գործածվում է բովանդակության տեսակետից, ուստի ավելի հարմար է կազմությամբ թերի նախադասությունը կոչել զեղչված նախադասություն։

Զեղչման շնորհիվ խոսքը դառնում է ճկուն, հակիրճ, ազատվում է ավելորդ կրկնությունից։ Զեղչումն ունի ոճական արժեք։ Ինչպես ասվեց, զեղչված անդամը հասկացվում է կամ շրջակա նախադասությունից, տեքստից, ինչպես այդ ցույց են տալիս վերևի օրինակները, կամ իրադրությունից։ Օրինակ՝ «Սամվելը» վեպի վերջին նախադասությունը՝ «— Արժանի է» թերի է, և նրա զեղչված անդամները իմացվում են նախորդող պատմությունից այն բանի մասին, որ Սամվելը սպանում է յուր մորը։

Զեղչման ենթակա են նախադասության բոլոր անդամները։

Ենթակայի զեղչումը. Նախադասության ենթական զեղչվում է հետևյալ դեպքերում՝ 1. Երբ ստորոգյալն արտահայտվում է առաջին դեմքի բայով, այսինքն ենթական ինքը խոսողն է։ Օրինակ՝ Ձեմ դավաճանի իմ Նվարդին (ՎՏ)։ Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե, Արևն ամառն ու ձմեռվա վիշապաձայն խոսքը վսեմ (ԵՉ)։ Քար կսեղմեմ կրծքիս հիմա, Կելնեմ սարերը լալու (ԱԻ)։ Մայր Արաքսի ափերով քայլամոլոր գնում եմ (ՌՊ)։ Թաղեմ քեզ, հատիկ, և դարդս քեզ հետ (ՀՀ)։

2. Երբ ստորոգյալն արտահայտված է երկրորդ դեմքի բայով, այսինքն երբ ենթական խոսակիցն է։ Այս դեպքում մեծ մասամբ խոսակցի դերում հանդես է գալիս կոչական անունը, որին և ուղղվում է խոսքը։ Օրինակ՝ Գնաս բարով, ա՛յ ուխտավոր (ՀԹ)։ Մի՛ լար, բլբուլ, քեզ մի՛ տանջիր (ԱՄ)։ Ելի՛ր, կանչի՛ր, ոսկե սավանով ծածկի՛ր իմ արտը ողջ ալեծածան (ՀՀ)։ Ասի, աշո՛ւղ, առ չունգուրդ, մեզ բան ասա սրտալի (ՀՀ)։ Գտավի՛ր, պտավի՛ր, կարուսել (ՎՏ)։ Կանչում ես ինձ լուսաբարբառ քո սիրազեղ կոչով (ԱԻ)։ Ինչպես երևում է օրինակներից, այս դեպքում նախադասությունն ունենում է մեծ մասամբ հրամայական բնույթ։

3. Երբ ենթական հայտնի է նախորդ նախադասությունից։ Նախորդում այդ անդամը կամ ենթակա է եղել, կամ նրա մասին խոսվել է։ Օրինակ՝ Մի հավք զարկի ես մի օր. Թռավ, գնաց վիրավոր։ Թռչում է միշտ իմ մտքում, Թեք առնում ու մոլոր (ՀԹ)։ Մանուկ փեսան ոչ խանութ ուներ և ոչ էլ արհեստով էր զբաղվում։ Երբ ասում եմ արհեստ չուներ, ուզում եմ ասել՝ սովորական արհեստ չուներ (ՎԹ)։ Եվ ջերմ աղոթքով տիրամոր առջև Ես մոմ կվառեմ, ես խունկ կծխեմ, Որ քեզ պարգևե մի առատ աճեռն, Որ քեզ միշտ սիրով նայե խնդագեմ (ՀՀ)։ Յարիս տեսա, լալիս էր, լալիս, գլխին տալիս էր (ՀՀ)։ Հայր ունեի— ծովում կորավ Ուրսի ելած մութ գիշեր (ԱՄ)։ Գրագարանավարն ընդունեց դիրքը և նոր գիրք առաջարկեց աշակերտին, բացատրեց այդ գրքի հետաքրքիր ու օգտակար բովանդակությունը։ Այժմ գյուղացին մեքենայով է վարում, ցանում, բուժում ու հնձում, հավաքում բերքը։

Ստորոգյալի զեղչումը. Նախադասության ստորոգյալի զեղչման նպատակը, ինչպես ենթակայի զեղչման մասին ասացինք, բառերի ավելորդ կրկնությունից խուսափելն է։ Դրանով խոսքը դառնում է ճկուն ու նպատակասլաց։ Այդ բանն առանձնապես նկատելի է երկխոսության ժամանակ, երբ շահվում է տեղ և ժամանակ։

Ստորոգյալը զեղչվում է՝ ա) ամբողջությամբ։ Օրինակ՝ Երեխաներից յուրաքանչյուրն իր հետ բերում էր մի որևէ առարկա։ Մեկը՝ դա-

տարկ տակառ, մյուսը՝ մի թիթեղե նավթի ման, մի ուրիշը՝ բոժոժներ, հաջորդը՝ մի զուռնա, թմբուկ, շատերը միայն երկու տափակ ափսեակներ, շատերն էլ՝ երկաթի կտորներ (ՎԹ)։ Աշոտը բժիշկ է, Արամն էլ։ Առաջին բառը երկրորդ դեմքի բայ է (գրեցիր), իսկ հաջորդ բառը՝ երրորդ (գրեց)։ Սա քանակական թվական է, իսկ սա՝ դասական (դասագիրք)։ Արմենը եղբորս տղան է, իսկ Համլետը՝ հրոցս։ Մենք ծառերն էինք ջրում, իսկ թռռնիկս՝ ելակը։ Արեգը դպրոց է գնում, իսկ հույրը՝ մանկապարտեզ և այլն։

բ) Մասամբ։ Օրինակ՝ Ոմանք միայն գոռում էին, ցատկռտում, աղմկում, ոմանք միայն հրահրում կատակը։ Երեխաները ցրվում էին, ինչպես թռչունների երամը, բայց էլի հավաքվում և ճչում ավելի բարձր (ՎԹ)։ Գագիկն իրենց տան ավագ զավակն է, իսկ Զորիկը՝ կրտսեր զավակը (Սգր)։ Փոքրիկ Արան մանկապարտեզում և՛ երգում է, և՛ պարում, սիրուն ռտանավորներ արտասանում։ Դպրոցի բակում վազում, թռչկոտում, ճչում ու ծվծվում էին առաջին դասարանի երեխաները (մամուլ)։

(Երբեմն կարող է զեղչվել նաև հարկադրական եղանակի պիտի եղանակիչը։) Օրինակ՝ Իսկ ես հեղ, փրփրագեզ ծովի մեջ Պիտ լողամ ու դողամ մինչև լույս (ՇԿ)։ Բայց ապրում ենք Մի սահմանում, մի համփով էլ պիտի գնանք, Կրկին ձուլվենք Մի հող դառնանք, Անհետ, անտես կորչենք... (ՀՔ)։ (Դու պիտի հնչես, հնչես հաղթական) (ԱԻ) և այլն։

Հանգույցով (այսինքն չզեղչված) ստորոգյալը դրվում է նախադասության թե՛ սկզբում, թե՛ վերջում։ Օրինակ՝ Մանուկների համար այդ բոլորն անհասկանալի, տարօրինակ, ապշեցուցիչ էին (ՎԹ)։ Նա այդ օրն արտակարգ ուրախ, աշխույժ ու զվարթ էր («Գարուն»)։ Բոլորն էլ խնդում, ծիծաղում ու հրճվում էին։ Հնում գյուղացին ձեռքով փորում, փոցխում, ցանում էր արտը (Սգր)։ Այս օրինակներում չզեղչված ստորոգյալը նախադասության վերջում է։ Իսկ հետևյալ օրինակներում չզեղչված ստորոգյալը առաջ է դրված, նրան հետևում են զեղչվածները։ Օրինակ՝ Եվ նամբ էր ընդմիշտ աշխարհն ինձ համար— Եվ օտար, և մութ (ՎՏ)։ Հեթիաթ էր և՛ հմայք, և՛ անծիր խնդություն մշուշում վարդագույն։ Այնպես անխինդ են և նման լացի, Երգերն իմ երկրի, այնպես տխրագին (ՎՏ)։ Նա գործից տուն էր գնում, վառարանը վառում, ճաշը պատրաստում և սպասում իր ամուսնուն («Գարուն»)։ Անտառից ցախ էր բերում, օջախը վառում, ջուրը դնում վրան, հետո երեխային էր լողացնում ու ինքը լողանում (Սգր)։ Խաղում էինք, վազվզում Գույն-գույն մանրիկ ավազում։ Կամ հետևում հեհհն, Թիթեռնիկին ոսկեթև, Ու միշտ հոգնած ժամանակ, էն մենավոր ծառի տակ Նստում էինք մի քարի, Գերեզմանին Մարոյի (ՀՔ)։ Ե՞վ շշնջում ես, և՛ անուշ շրշում, Անտես ու հուշիկ իմ շուրջը շրջում (ՎՏ)։

Զեղչվում են միևնույն եղանակով, միևնույն ժամանակով արտա-

հայտված բայ-ստորոգյալները, դա զեղչման նախապայմանն է, ըստ որում դեմքն ու թիվը կարող են տարբեր լինել։ Օրինակ՝ Դու դպրոց ես գնում, իսկ մենք՝ տուն։ Այստեղ առաջին ստորոգյալն արտահայտված է երկրորդ դեմքի, եզակի թվի բայով, իսկ երկրորդ ստորոգյալը՝ առաջին դեմքի, հոգնակի թվի, բայց երկու դեպքում էլ բայը սահմանական եղանակի ներկա ժամանակով է արտահայտված։ Կամ՝ Արամին ուղարկել են գյուղ, իսկ Աշոտին՝ ճամբար։ Արամը դժկամությամբ գնաց, իսկ Աշոտը՝ հաճույքով (Սգր)։ Տարբեր ժամանակի բայերի կամ հանգույցի զեղչումը աղավաղում է նախադասության իմաստը։ Օրինակ՝ «Հյուրերը տուն են գալու, իսկ դու թատրոն ես գնում», «Հայրը աշխատասեր գյուղացի էր, իսկ ինքը ծույլ է ու ձրիակեր» նախադասությունների ստորոգյալները չեն զեղչվի։

Տարբեր բայերի միայն օժանդակ բայը կարող է զեղչվել, այն էլ այն դեպքում, երբ կապված են միևնույն, ընդհանուր ենթակայի հետ։ Օրինակ՝ Մեծ պատմությունը ծերացել էր ու կուրացել (ՀՔ)։ Նա մտերմացել էր այդ շարժման ղեկավարների հետ, փառաբանել նրանց և ապա հեռացել նրանցից (ՀՔ)։ Բայց այստեղ բայերը միևնույն ժամանակով են արտահայտված։ Դա պարտադիր է։

Զեղչված ստորոգյալից առաջ արտասանական դադար է լինում, որը գրավորում արտահայտվում է բութով։ Օրինակ՝ Երեխան դպրոց է գնում, իսկ մայրը՝ աշխատանքի։ Ձմեռային հագուստը ամառը գնիր, իսկ ամառայինը՝ ձմեռը։ Սայլը եզներն են տանում, իսկ կառքը՝ ձիերը։ Գագաթներդ՝ բյուրեղ վրան, Թափառական ամպերի, Սեզ ժայռերդ՝ արծվի բույն, Լճակներդ՝ լույս-փերուզ, Առուներդ՝ մեջքիդ փայլուն Պերճ գոտիներ ոսկեհյուս (ԱԻ)։

Պարզ ստորոգյալի մասնակի զեղչման դեպքում զեղչված օժանդակ բայից առաջ բութ չի դրվում, որովհետև արտասանական դադար չի լինում։ Օրինակ՝ Նորից դու հին տեղը նստում, Շարժում ես իլիկը մեր հին։ Մանում ես ու հեքիաթ ասում (ՎՏ)։ Դարձյալ դաշտ էր գնում, ժամերով թափառում արտերում, նստում թմբերի վրա ու նայում Արաքսին (ՀՔ)։

Մանրագր.—Երբեմն բանաստեղծության մեջ հանգի ու երաժշտականության համար բաղադրյալ ստորոգյալի զեղչված հանգույցի փոխարեն նույնպես բութ չեն դնում։ Օրինակ՝ Լաց է այնտեղ ամեն երգ, և ողբ ամեն գիրք։ Մեր երկիրը ավերված, բայց սուրբ է և հին (ՎՏ)։ Մի՞թե վերջին պոեմն եմ ես, Վերջին երգիչն իմ երկրի (ՎՏ)։ Բանաստեղծն այստեղ ողբ, գիրք, երգիչ բառերը, որոնք ստորոգելիական վերադիրներ են, դադար չլինելու պատճառով բութ նշանով չի տրոհել։ Նույն երևույթը նկատում ենք Ավ. Իսահակյանի բանաստեղծության մեջ՝ Է՞յ ջան, հայրենիք, ինչքա՞ն սիրուն ես, Սարերդ կորած երկնի մովի մեջ, Ջրերդ անուշ, հովերդ անուշ, Մենակ բալենդ արյուն-ծովի

մեջ։ Այստեղ էլ բանաստեղծը անուշ, կորած վերադիրները ջրերդ, նովերդ ենթականերից չի տրոհել, դարձյալ դադար չլինելու պատճառով, և բուժ չի գրել վերադիրներին նախորդող ենթակաների վրա։ Այսպիսի դեպքերում հաճախ ստորոգելիական վերադիրները նախորդող ստորոգյալին են միանում և ու միավորիչ շաղկապներով։ Օրինակ՝ Գույնը ինձ համար երազ էր և ռոմանտիկա (ՀՔ)։ Հայ եմ ես և հեղափոխական (ՀՔ)։

Հաճախ երկխոսություններում ենթական ու ստորոգյալը միասին են դեղչվում։ Օրինակ՝ Ուրեմն վրացերեն գիտեք։ — Շատ քիչ (ՆԴ)։ — Նանի, առավոտյան գնում եմ։ — Ո՞ւր։ — Երևան։ — Բա մենա՞կ, ճաց, ճանապարհի ծախս (ԱԲ)։ Այս ընդգծված նախադասություններում դեղչված են ենթական ու ստորոգյալը, արտահայտված են միայն երկրորդական անդամները։ Այդպիսի դեղչում ունեն նաև հետևյալ ընդգծված նախադասությունները։ Ես իմ արհեստն ունեմ։ — Ի՞նչ արհեստ։ — Սովային հիվանդություն, տղաս։ — Հա՜ա՜ (ՆԴ)։ Ես գնում եմ Թիֆլիս։ — Թիֆլի՞ս, ինչո՞ւ։ — Բժշկվելու։ — Դուք փախչո՞ւմ եք այդ գործից։ — Երբե՛ք (ՆԴ)։

Երկրորդական անդամների դեղչումը։ Ինչպես վերևում ասվեց, դեղչման ենթակա են նախադասության բոլոր անդամները։ Սակայն երկրորդական անդամների դեղչումը այնքան զգալի չէ, որքան գլխավոր անդամների դեղչումն է։ Բերենք անվանական լրացումների դեղչման մի քանի օրինակ։ «Նրանցից մեկը կաշվե բաճկոն էր հագել, մյուսը՝ վերարդու, երրորդը՝ անդրավարտիք»։ Այս ընդգծված կապակցություններում դեղչված է կաշվե որոշիչը։ «Երեխայի գնդակը ծակվել էր, իսկ տիկնիկի էլ թևն էր կոտրվել», իսկ այստեղ դեղչված է հատկացուցիչը (երեխայի տիկնիկի)։

Բայական լրացումների դեղչման օրինակներ։ Մեկը նրան մեղադրում էր, մյուսը արդարացնում էր։ Միևնույն ծաղկից մեղուն մեղր է պատրաստում, օձը թույն է պատրաստում։ Այս ընդգծված կապակցություններում դեղչված են ուղիղ (նրան) և անուղղակի (ծաղկից) խնդիրները։ Մեկը վառոդի դնպքում վախենում, մախչում է, մյուսը նամարձակ է գործում։ Մեկն ալքի ընկնելու համար նվիրված է աշխատում, մյուսը դիմում է այլ միջոցների։ Այս ընդգծված նախադասություններում էլ պարագաներն են դեղչված։

Ինչպես ասվեց, երբեմն ամբողջ նախադասության փոխարեն միայն մեկ անդամն է արտահայտված լինում։ Օրինակ՝ Կուզե՞ք ձեր թագավորը գերվի Բեշիրից։ — Երբեք։ Այստեղ ընդգծվածը ժամանակի պարագա է և փոխարինել է մնացած անդամներին, որոնք (ենթական, ստորոգյալը, անուղղակի խնդիրը, հատկացուցիչը) դեղչված են։ — Քանի՞ լույսի պատրաստություն ունի կղզին։ — Քսան (Մ)։ Այստեղ էլ արտահայտված է միայն որոշիչը, մյուսները (ենթական, ստորոգյալ, ուղիղ խնդիր, հատկացուցիչ) դեղչված են։ — Որտեղի՞ց ես։ — Սիբիրից։ — Հող ունե՞ս։ — Իհարկե, խլեցինք (ԵՉ)։ — Տալի՞ս եք ազնիվ խոսք։ — Տալիս եմ։ — Մամա, պապան ո՞ւր է։ — Զգիտեմ։ — Ինչո՞ւ գնաց։ — Զգիտեմ (ԱՇ)։ Որոշված է մեզ ուղարկել։ — Ո՞ւր։ — Հայտնի չէ։ — Ե՞րբ։ — Կասեն (ԱՇ)։ Վերևի ընդգծված նախադասություններում էլ միայն ստորոգյալն է արտահայտված, մյուս անդամները դեղչված են։

Հաճախ հարցի պատասխանը տրվում է երկրորդական նախադասությամբ, առանց գլխավոր նախադասությունը (հարցը) կրկնելու։ Օրինակ՝ — Թեյ չբնե՞մ։ — Եթե ասմ է։ — Բա ի՞նչ ասաց։ — Կասենեմ։ — Ի՞նչ է ասում։ — Որ աղմատը ծույլ է (ԱԲ)։ — Ինչի՞ համար գնացիր Թուրքիա։ — Երկրին կարոտել էի։ — Բա ուրիշներն ինչո՞ւ չգնացին, դու գնացիր։ — Իմ սիրտը թույլ է (ՀՔ)։

ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՄՆԵՐԸ

Նախադասության մեջ գոյական անունը հանդես է գալիս թե՛ անորոշ, թե՛ որոշյալ առումներով։ Որոշյալ առումն արտահայտվում է ը կամ ն հոդով, իսկ անորոշը առանց հոդի կամ մի անորոշ դերանունով։ Ը հոդը դրվում է բաղաձայնով վերջացող բառերի վրա (գիրքը, վարդը, քարը), իսկ ն հոդը՝ ձայնավորով (առուն, գինին, Մարոն, Աբրան)։

Անորոշ առումով են գործածվում.

1. Ուղղական հոլովով արտահայտված գոյական որոշիչները։ Օրինակ՝ Մնասոյ Էրանելին հայոց այբուբենն արարեց։ Սիմոն հայր սուրբը շնորհ էր արել պատանուն... իր հետ տանելու։ Գուժում են բոթե՞ բոլորին՝ Տրդատ Ճարտարապետն է հանգել (ԳԴ)։ Այսպես էլ՝ Էջիսան ձուկ, քար սիրտ, ծաղիկ հասակ, պողպատ կամք, Արարատ լեռը, գրիչ Արիստակեսը և այլն։

2. Կոչել, անվանել, ընտրել, անունը դնել, օծել, դառնալ, երևալ և նման բառերի հետ իբրև ստորոգյալի մաս գործածված գոյականներ։ Օրինակ՝ Ջուրը տեղ-տեղ գուբ էր կապել։ Ամբողջ թաղը նրան Հոդոպ էր կանչում (ՆԴ)։ Շատ լավիկն էր աղջիկը, որին Վիզոչկա էին անվանում (ՆԴ)։ Սկսեցին նրան այլևս Մարգո չկոչել, այլ անվանել «գաղթականի աղջիկ» (ՆՉ)։ Ինձ կանչում էին «Տատանվող Առաքել» (ՆՉ)։ Նրան կալանավորները «ծիտիկ» էին ասում (ՆՉ)։ Դավաճանին Բաֆֆին իրավամբ պընտանի օձ» է անվանում (ԱՏ)։ Նրանք հին գայլեր էին երևում (ԵՉ)։

3. Կոչական անունը։ Օրինակ՝ — Տրդա՛ռ ճարտարապետ, տեսել եմ կառուցածդ բուրգերը (ԳԴ)։ Ողջո՛ւյն քեզ, Անի՛ քաղաքամայր (ԳԴ)։

— Ննչի՛ր, ավա՛գ եղբայր, մորս գործած կարպետն է։ Եղբայրիկ է անունս, աբեղա՛ եղբայր (ԳԴ)։ Աշո՛տ, ո՞ւր է քո գիրքը։ Ընկերնե՛ր, ե՞րբ ենք հավաքվելու (Սգր) և այլն։

4. Ուղղորման տեղի պարագան, թեև երբեմն դրվում է նաև որոշյալ առումով։ Օրինակ՝ Երազիկը գնացել էր հորեղբայր Միքայելենց տուն (ՌՊետ)։ Հարոն ու փեսան մտան եկեղեցի (ՌՊետ)։ Նա վերադարձավ քաղաքամայր (ԳԴ)։ Մենք դանլին մտանք երեկոյան (Սգր)։ Կարող է երթալ Անի քաղաք՝ ուսանելու (ԳԴ)։

5. Ժամանակ ցույց տվող ուղղական (հայցական) հոլովով գոյականները։ Ինչպես՝ այս ձմեռ, անցյալ տարի, երեկ գիշեր, անցյալ կիրակի, մինչև կիրակի և այլն։

6. Երբ գոյականը ցույց է տալիս անհայտ, ինչ-որ առարկա։ Ինչպես՝ Պղրոց են բաց արել։ Մարդ է գալիս։ Ոչխար են տանում։ Շենք են կառուցում։ Խնձոր են վաճառում։ Այս կիրառությամբ գոյականը երբեմն հոգնակիի իմաստ է ունենում։ Օրինակ՝ «Խանութում գիրք են վաճառում» նշանակում է գրքեր են վաճառում։ «Գարնանը ծառ են տնկում» նշանակում է ծառեր են տնկում։

7. Որոշ հարադրությունների բաղադրիչ գոյական մասը։ Ինչպես՝ գլուխ տալ, պառկ տալ, վախ ազդել, մարդ դառնալ, խելք անել, սիրտ անել, թև ու թիկունք լինել, գլուխ հանել, պառույտ տալ, գործ անել, դուրս գալ, քար դառնալ և այլն։

8. Երբ գոյականն առնվում է մասնական իմաստով։ Օրինակ՝ Մի ծառի մոտ նշմարեց խնձոր քաղող աղջկան (ԳԴ)։ Այստեղ խնձոր քաղող նշանակում է խնձորներից քաղող։ Այդպես էլ ծաղիկ քաղել նշանակում է ոչ թե մի ծաղիկ քաղել, այլ՝ ծաղիկներից քաղել, այդպես էլ՝ ջուր խմել, հաց ուտել, խոտ ճնճել, հող վարել, խաղող գնել, շենք կառուցել։ Այստեղ ընդգծված գոյականները հանդես են գալիս նաև իբրև տեսակի անուն։ Խոտ ճնճել, հող վարել նշանակում է ոչ թե այս կամ այն խոտը կամ հողը, այլ՝ առհասարակ խոտ, հող։

9. Երբ գոյականն ունի՝ մի, յուրաքանչյուր, ամեն մի, ամեն, ամենայն, ոչ մի, ուրիշ, մի այլ, շատ, մի քանի, ինչ-որ, ինչ-ինչ, որևէ դերանուններով արտահայտված որոշիչ։ Օրինակ՝ Ուներ մի շարք տեղական հրաշալիքներ (ԵՉ)։ Ոչ մի քաղաքացի չի համարձակվում լողանալ կամուրջի մոտերքը (ԵՉ)։ Գեներալ Ալոշը ցանկանում էր ինչ-որ բան ասել (ԵՉ)։ ...Որ նրանք ոչ մի շփում չունենան այլ կալանավորների հետ (ԵՉ)։ Շատ խնդիրներ պարզ չեն Բաֆֆու՝ Պարսկաստանում ունեցած գործունեության մեջ (ԱՏ)։ Բաֆֆին ազատել է բռնությունից մի փախցրած աղջկա (ԱՏ)։ Նրա ստեղծագործության որակի վրա ազդել էին նաև բուրժուա-դեմոկրատական աշխարհայացքի մի քանի տարրեր (ԱՏ)։ Կյանքի որոշ պայմաններ ստիպում են այդ անել։ Բաֆֆու որոշ հերոսներ գեղարվեստական կատարելություն են (ԱՏ)։ Մի այլ ճանապարհ գոյություն չունի երթեք ինձ համար (ՀՀակ)։

10. Անորոշ դերբայը՝ հարկ է, պետք է, անհրաժեշտ է, կարելի է, հարմար է, հարկավոր է և նման ստորոգյալների հետ։ Ինչպես՝ Անհրաժեշտ է բուժել։ Հարկավոր է դիմել դիրեկտորին։ Կարելի՞ է երեխային սրսկել։ Հարկ է պարզաբանել։ Պետք է հակաճառել։ Հնարավոր է կարճ ճամփով գնալ և այլն։

11. Իբրև, որպես, ինչպես բառերով կապակցվող գոյականները։ Օրինակ՝ ...Վազուց արդեն գոյություն է ունեցել... որպես ուղեղային մորմոք, սրտի հիվանդություն (ԵՉ)։ Իբրև ամենալավ ապացույց՝ հիշում եմ մի այլ երիտասարդի (ԵՉ)։ Դավաճաններից բաղկացած բանակը նա ներկայացնում է իբրև բորոտների մի հավաքույթ (ԱՏ)։ Նա միշտ ճանաչվել է իբրև առաջավոր ուսուցիչ (մամուլ) և այլն։

Որոշյալ առումով են գործածվում սովորաբար

1. Հատուկ անունները։ Օրինակ՝ Սարոն սիրում էր Անուշին։ Մոսին հետապնդում էր Սարոյին։ Թումանյանը թարգմանել է Բայրոնի «Շիլիոնի կալանավորը» (ԱՏ)։ Բրյուսովի գործը քննադատել է նաև Մ. Գորկին (ԱՏ)։ Նապոլեոնը թողեց Ռուսաստանը։ Ինչո՞ւ կատարյալ հրաշալիքներ չեն կարող համարվել—թեկուզ հենց Թերդ... Վարդանի կամուրջը... Առաքելոց եկեղեցին, Սլլան քարը, ճգնավորի մատուռը (ԵՉ)։

2. Հասարակ անունները, եթե տեսակի անուն են։ Օրինակ՝ Հավն արժե տասը ռուբլի։ Ձուկը ջրում է լողում։ Առյուծն անտառի արքան է։ Ձին, կովը, եզը, այծն ու ոչխարը ընտանի կաթնասուն կենդանիներ են և այլն։

3. Հաղորդողին ծանոթ անունները, որոնց մասին արդեն խոսվել է։ Օրինակ՝ Խոհանոցից դուրս եկող իմերել ծառային խնդրեց կամացուկ, որ տանտիրոջն իմաց տա, թե ուզում է տեսնել իրեն։ Սառան... գնաց խնդիրը կատարելու (ՆԴ)։ Տղան, մի շատ գեղեցիկ, աշխույժ ու շարաճճի պատանի, բոլորովին նման չէր ո՛չ հորը, ո՛չ մորը, ո՛չ էլ, մանավանդ, Բոզը (ՆԴ)։ Սարգիս քարգործն ասում էր, թե հաջորդ տարի մինչև աշնանամուտ կավարտեն շինությունը (ԳԴ)։ Եկող ամառ աստծո օգնությամբ ավարտին հասցնենք մատուռը սուրբ (ԳԴ)։ Քիչ հետո դեռևս ձյունն ավելի առատ կլինի (ԳԴ) և այլն։

4. Գոյական որոշիչ ունեցող անունները։ Օրինակ՝ Երրորդը գոչեց. — Տիեզերակալ և օգոստափայլ Վասիլ կայսրը (ԳԴ)։ Տղան ճարտարապետը չի եկել օտար երկրից (ԳԴ)։ Տղան հայը անում է այն, ինչը դուք անկարող գտնվեցիք (ԳԴ)։ Վահրամ սպարապետը ողջագուրվեց ճարտարապետի հետ (ԳԴ)։ Շուտով իր մահկանացուն կնքեց Խաչիկ Արշարունի վեհապետը, և հայրապետական գահին նստեց Սար-

գիս Վանականը (ԴԴ)։ Այսպես էլ հունվար ամիսը, շաբաթ օրը, բժիշկ Նավասարդը, հովիվ Սամոն, Արմավիր գյուղը և այլն։

5. Հատկացուցիչ ունեցող (հատկացյալ) գոյականները։ Օրինակ՝ Պատրիկյանը մի հայացք ձգեց իր հնացած ճագուստին, նայեց կոշիկների ծռմռված ծայրերին (ՆԴ)։ Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում։ Սիրում եմ մեր ջրերը ջինջ (ԵՉ)։ Ոչ մի պաղ ջրիկ չէր հագեցնի սրտի տապը (ԴԴ)։ Երկար դիտեց երկու ափաղաղների կռիվը (ԴԴ)։

6. Գոյականաբար գործածվող այլ խոսքի մասերը, փոխանուններ։ Օրինակ՝ — Այս տունն իմն է, իմն էլ կլինի,— ասաց նա ծանրծանր (ՆԴ)։ Միշտ մաքուր սափրած երեսը այժմ ծածկվում էր սեր սպիտակի հետ խառն մազի փշերով (ՆԴ)։ Այսօրվա միամիտ նաիրցին այն ամենը, ինչ որ նաիրյան է ու հաղթական, վերագրում է Վարդան Մամիկոնյանին (ԵՉ)։ Գետում խեղդվածները գալիս հավաքվում են կամուրջի տակ գտնվող ահռելի վիհերում (ԵՉ)։ Օլգա Վասիլևնան իրն է, իրը, Օսեփ Նարիմանովինը և միևնույն ժամանակ ուրիշ ոչ ոքինը չի կարող լինել (ԵՉ)։ Այսօրվա միամիտ նաիրցին է կարծում (ԵՉ)։

7. Այս, այդ, այն, բոլոր, ողջ, ամբողջ, որ գերանուն-որոշիչ ունեցող գոյականները։ Օրինակ՝ Նաիրյան այդ հնամյա քաղաքն ամեն ինչով նման էր նաիրյան բոլոր հին ու նոր քաղաքներին (ԵՉ)։ Պիտի մտաբերի այն մեծ նպատակը, որի համար ընկել է նա Ավարայրի դաշտում (ԵՉ)։ Այդ օրը բոլոր նաիրցիները «տոն» ունեն։ Ամբողջ պատմությունն էլ հենց դրա համար է։ Բոլոր այս միջոցները կիսամիջոցներ են (ԵՉ)։ Նաիրյան այդ քաղաքը, եթե ոչ իր ամբողջ հմայքը, գոնե իր հմայքի կեսից ավելին կկորցներ (ԵՉ)։ Ո՞ր քաղաքացին է սիրում հարբեցողին (մամուլ)։

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱՆԻՇՆԵՐ[62]

Լեզվի մեջ ինչպես որ միևնույն ձևը կարող է արտահայտել տարբեր իմաստներ, այնպես էլ միևնույն իմաստը կարող է արտահայտվել տարբեր ձևերով։

Տարբեր հարացույցներում հանդես եկող միանման, բայց տարբեր իմաստներով ձևույթները կոչվում են համանուն ձևույթներ, ինչպես ի-ն իբրև սեռական հոլովի վերջավորություն (քարի), բայի եզակի 3-րդ դեմքի վերջավորություն (խոսի), նախդիր (ի փառս), ածանց (աղի), ու-ն գարու, գրելու, հատու, ես ու դու ձևերում և այլն։ Միևնույն հարացույցում տարբեր իմաստներ արտահայտող միանման ձևույթները կոչվում են բազմիմաստ ձևույթներ։ Օրինակ՝ Ով ձևույթով բառաձևերը արտահայտում են միջոցի խնդրի, տեղի, ժամանակի, ձևի, միասնության պարագաների, որոշիչի իմաստներ։ Ինչպես՝ քարով չարդել, գիշերով փողոցով անցնել, խմբով ասել, մսով ճաշ և այլն։

Միևնույն իմաստն էլ կարող է արտահայտվել տարբեր ձևերով։ Այս դեպքում մենք գործ ունենք հոմանիշության հետ։ Հոմանիշությունը, ուրեմն, լեզվական այն երևույթն է, երբ բառային կամ քերականական միևնույն կամ մոտիկ իմաստն արտահայտվում է տարբեր ձևերով, ինչպես՝ այտ-թուշ, նստել-հեծնել, օդանավ-ինքնաթիռ-սավառնակ, ընկերի-ընկերոջ, արյունի-արյան, գիրքը դնել սեղանին-սեղանի վրա և այլն։

Արդի քերականագիտության մեջ հոմանիշ տերմինի տակ հասկացվում է իմաստային երկու խումբ՝ նույնանիշների խումբ և համանիշների խումբ։ Նույն իմաստն ունեցող բառերն ու քերականական ձևերը կոչվում են նույնանիշներ, ինչպես՝ պնակ-ափսե, մեկ-մի, անկյան-անկյունի, արյունով-արյամբ և այլն։ Կան նույնանիշներ, որոնք բացարձակ նույն իմաստն ունեն, ինչպես՝ ընթերցել- կարդալ, գաղտնի-ծածուկ, արյունով-արյամբ, ձյան-ձյունի և այլն։ Կան նույնանիշներ էլ, որոնք ունեն գործածության ոլորտի տարբերություն, ինչպես՝ մազ-հեր-վարս-ծամ, պայել-համբուրել, աչք-ակն, ջրում, ջրի մեջ։

Իմաստով իրար մոտիկ բառերն ու քերականական ձևերը կոչվում են համանիշներ։ Ինչպես՝ հեծնել-նստել, մարտ-կռիվ-պայքար-պատերազմ, հանդիպել ընկերոջը-ընկերոջ հետ, ձեզնից (ձեր մասին) պատմեք,գետում ձուկ չկա-գետի մեջ ձուկ չկա և այլն։

Հոմանիշներ, ինչպես երևում է վերը բերված օրինակներից, կան լեզվի երեք մակարդակում. բառային (նորից-կրկին-դարձյալ, կեսօր-միջօրե, սառը-պաղ, մարել-հանգցնել, վաճառել-ծախել և այլն), ձևաբանական (միևնույն սեռական հոլովի իմաստի արտահայտությունը ի, ու, ա, ան, վա, ոջ, ո, ց հոլովիչներով, բայի անցյալ կատարյալի եզակի առաջին դեմքի արտահայտությունն ի, ա վերջավորությամբ՝ գնացի-թռա, կարդացի-գտա և այլն), շարահյուսական (խոսել բերքի մասին-խոսել բերքից, նա չի կարող չաշխատել-նա պիտի աշխատի, Գնաց, որ ջուր բերի-գնաց ջուր բերելու, գրելու ժամանակ-գրելիս և այլն)։

Շարահյուսության մակարդակում հոմանիշները, այնուամենայնիվ, ունենում են ոճական տարբերություններ, ուստի դրանք գերազանցապես համանիշներ են։ Օրինակ՝ Տղան հանդիպեց հորը և տղան հանդիպեց հոր հետ համանիշներն ունեն նուրբ տարբերություն. առաջին դեպքում հայրը կարող է չիմանալ, որ տղան հանդիպելու է ի-

---

[62] Ն. Պառնասյան, Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1976։

բեն, նույնիսկ տղայի համար դա կարող է պատահական լինել, իսկ երկրորդ դեպքում ենթադրվում է երկկողմանի պայմանավորվածություն։ Այս է պատճառը, որ եթե խնդիրը իր է, կապով չի արտահայտվում, չենք ասում՝ հանդիպեց քարի հետ, կամ գետի հետ, այլ՝ հանդիպեց գետի, քարի։ Ուրեմն միշտ չէ, որ հոմանիշները կարող են փոխարինել իրար։

Շարահյուսական համանիշների միջոցով կարող է արտահայտվել խոսողի վերաբերմունքը իր հաղորդածի վերաբերյալ։ Այսպես՝ ես պիտի սովորեմ և ես ինչո՞ւ չպիտի սովորեմ համանիշներից երկրորդում արտահայտվում է խոսողի վճռական վերաբերմունքը, հաստատ համոզմունքը։ Կամ՝ ես պիտի բողոքեմ և ես չեմ կարող չբողոքել։ Այստեղ էլ երկրորդը նույնպես արտահայտում է խոսողի համոզվածությունը, անպայման բողոքելու տրամադրությունը, վճիռը։

Շարահյուսական հոմանիշները կարող են փոխարինել միմյանց, թեև ոչ միշտ։ Ինչպես՝ դիրեկտորի հրամանով նա արձակուրդ գնաց և դիրեկտորի հրամանի համաձայն նա արձակուրդ գնաց։ Վագրը նրան վախեցրեց և վագրից նա վախեցավ։ Եկել էին, որ ողջունեն և եկել էին ողջունելու։ Երեք ժամ անձրևում էր և երեք ժամ անձրև էր գալիս և այլն։

Շարահյուսական համանիշները շարահյուսական կարգերի նման կապված են ձևաբանական համանիշների հետ։ Այսպես՝ շենքի կառուցումը և շենքը կառուցելը շարահյուսական համանիշներն արտահայտված են կառուցելը և կառուցումը ձևաբանական համանիշներով։ Գիրք ընթերցելը զարգացնում է մանուկին—գրքի ընթերցումը զարգացնում է։ Չարենցի մասին նրա զեկուցումը հետաձգվեց—նրա զեկուցելը հետաձգվեց։

Այսպիսով, շարահյուսական այն կառույցները, որոնք արտահայտում են միևնույն հարաբերությունը՝ դրսևորելով նույնը տարբերություններ, կոչվում են շարահյուսական համանիշներ։

Շարահյուսական համանիշներ են կազմվում.

1. Նախադասությունների տարբեր կառուցվածքներով. ա) դիմավոր և՝ անդեմ նախադասություններով։ Օրինակ՝ Ծաղիկները չպոկել—ծաղիկները մի՛ պոկեք։ Արտագրեք գոյականներ, որոշեք նրանց հոլովը—արտագրել գոյականները, որոշել նրանց հոլովը։ 1915 թվական, կոտորած, սով—1915 թվականն էր, կոտորած էր ու սով և այլն։

բ) Ենթակայով և անենթակա նախադասություններով. օրինակ՝ Երեք ժամ անձրևում էր—երեք ժամ անձրև էր գալիս։ Ծիկաթը տաք-տաք են ծեծում—Նրանք երկաթը տաք-տաք են ծեծում։ Քեզ ասում են՝ ուղիղ նստիր—քեզ ասում եմ՝ ուղիղ նստիր և այլն։

գ) Չեղյվածով (թերի) և լրիվ նախադասություններով. օրինակ՝ — Դու ե՞րբ ես եկել — Երեկ—ես երեկ եմ եկել։ — Ի՞նչ արժե այդ

գլխարկը։ — Տասնհինգ ռուբլի—այս գլխարկը արժե տասնհինգ ռուբլի։ Մայրը դպրոց է գնում, իսկ հայրը՝ գործարան—մայրը դպրոց է գնում, իսկ հայրը գնում է գործարան։ Քույրն ուսուցչուհի է, իսկ եղբայրը՝ ուսանող—քույրն ուսուցչուհի է, իսկ եղբայրն ուսանող է և այլն։

2. Տարբեր բնույթի նախադասությունները.

ա) Դրական և ժխտական. օրինակ՝ Նա չի կարող չխոսել—նա պիտի խոսի։ Չասել չեմ կարող—պիտի ասեմ։ Չվազեց, չհասավ,—որ վազեր, կհասներ։ Մինչև չտեսավ, չհանգստացավ—տեսավ, նոր հանգստացավ։ Մինչև չգա վերջինը, առաջինը չի հիշվի—վերջինը պիտի գա, որ առաջինը հիշվի և այլն։

բ) Պատմողական (ժխտական) և հարցական. օրինակ՝ Ո՞վ կարող է տարվա եղանակները փոխել—ոչ ոք չի կարող տարվա եղանակները փոխել։ — Ինչո՞ւ դաշտ չես գնացել։ Ո՞վ էր գնացել որ—ոչ ոք չէր գնացել։ — Չեռքս չի հասնում, ինչպե՞ս պոկեմ—չեմ կարող պոկել։ Ի՞նչ միտք ունի գնալը—գնալը միտք չունի և այլն։

գ) Հարցական և հրամայական. օրինակ՝ Թույլ չէի՞ք տա անցնել—թույլ տվեք անցնել։ Չես կարո՞ղ մի քիչ հեռու կանգնել—մի քիչ հեռու կանգնիր։ — Չէի՞ք բարեհաճի վաղը մեր տուն գալ—վաղը բարեհաճեցեք մեր տուն գալ և այլն։

3. Տարբեր շարադասությամբ. օրինակ՝ Գնացքը հեռացավ կայարանից—հեռացավ գնացքը կայարանից—կայարանից հեռացավ գնացքը։ Աշակերտը գիրքը կարդում է—աշակերտն է գիրքը կարդում—գիրքն է կարդում աշակերտը—կարդում է գիրքը աշակերտը և այլն։

Համանիշներ կազմվում են նախադասության առանձին անդամների զուգահեռ ձևերով։

1. Ստորոգյալների համանիշներ. ա) կրավորական և ներգործական բայերով. օրինակ՝ Քամին ծածանում էր դրոշը—քամուց ծածանվում էր դրոշը։ Քույրը շատ էր սիրում եղբորը—եղբայրը շատ էր սիրված քրոջ կողմից։ Հիվանդությունը հյուծել էր մորը—մայրը հյուծվել էր հիվանդությունից։ Այս ձեռքն է գրել—այս ձեռքով է գրվել։

բ) Պատճառական և չեզոք բայերով. օրինակ՝ Մթության մեջ այդ շունն ինձ շատ վախեցրեց—այդ շնից ես շատ վախեցա։ Քամին կրակը հանգցրեց—քամուց կրակը հանգավ։ Եղբոր գալը նրան շատ էր ուրախացրել—եղբոր գալով նա շատ էր ուրախացել։

գ) Բայի տարբեր եղանակներով ու ժամանակներով. օրինակ՝ Թումանյանը գրում է—Թումանյանը գրել է։ Վաղը նրանք գնալու են գյուղ—վաղը նրանք գնում են գյուղ։ Նստած եմ մենակ ու միտք եմ անում—նստել եմ մենակ ու միտք եմ անում։ Կուզեի չտեսնել—չեմ ուզում տեսնել։ Այս բոպեին գնա և ներողություն խնդրիր—այս բոպեին

գնում ես և ներողություն խնդրում։ Վաղը նա գալու է—վաղը նա կգա (պիտի գա)։

գ) Պարզ և բաղադրյալ ստորոգյալներով. օրինակ՝ Այս մեքենան դեղին գույն ունի—դեղին գույնի է։ Նա բարի բնավորություն ունի—բարի բնավորության տեր է, բարի է։

ե) Բաղադրյալ և պարզ ժամանակներով, ինչպես՝ Մենք գտնվում ենք սարի գագաթին—մենք սարի գագաթին էինք և այլն։

զ) Բայի և ենթակայի եզակի ու հոգնակի թվերով. օրինակ՝ Մետաղը պինդ մարմին է—մետաղները պինդ մարմին են։ Մոտիկ հարևանը հեռու բարեկամից լավ է—մոտիկ հարևանները հեռու բարեկամներից լավ են։ Մենք աշխատել ենք գրքում ներկայացնել—ես աշխատել եմ գրքում ներկայացնել։ ...Մեր կարծիքով... իմ կարծիքով... Դրանք լավ ծաղիկ են—լավ ծաղիկներ են։ Երկու գյուղերն էլ փռված էին լանջին—երկու գյուղն էլ փռված էր...։

2. Համանիշ լրացումներով նախադասություններ։ Համանիշ որոշիչներ. Զմրուխտյա երգեր, երազներ շքեղ Գարնան վարդի պես եկան, գնացին (ԵՒ), այստեղ ընդգծված որոշիչների համանիշները կլինեն զմրուխտ և գարնանային որոշիչները։ Գիշերային մթության մեջ կապարի գնդակները թռչկոտում են օդում լուսատուիկների պես (ԲՀ), իսկ այստեղ ընդգծված որոշիչների համանիշներն են գիշերվա և կապարե որոշիչները։ Այսպես էլ համանիշ են երկաթե գոնները և երկաթյա գոնները և այլն։

Համանիշ խնդիրներ. ձեռքը բռնեց—ձեռքից բռնեց, արտը հնձելը—արտի հնձելը, ձեռքը թափահարել—ձեռքով թափահարել (Փոքրիկը հրաժեշտ էր տալիս՝ ձեռքով թափահարելով), բժիշկ հրավիրել—բժշկի հրավիրել, սոխակը վարդ է սիրում—վարդին է սիրում, տառապում է հոգացավով—հոգացավից, անվամբ երդվել—անունով երդվել և այլն։

Համանիշ պարագաներ. պատից կախել—պատին կախել, ներս մտնելիս նկատեց անծանոթ մի դեմք—ներս մտնելով՝ նկատեց անծանոթ մի դեմք, նախքան գնալը—գնալուց առաջ, համբերատար լսել—համբերությամբ լսել, լռությամբ համաձայնել—լուռ համաձայնել, ուշադիր լսել—ուշադրությամբ լսել, հոգով անհանգիստ—հոգեպես անհանգիստ և այլն։

Համանիշներ են կազմվում հոլովով և կապային կապակցությամբ։ Ինչպես՝ սենյակում և սենյակի մեջ, պատերազմից խոսել և պատերազմի մասին խոսել։ Գիրքը դրված է սեղանին և սեղանի վրա, ըստ հրամանի—հրամանով—հրամանի համաձայն։ Բոլորը եկել էին, բացառությամբ Սուրիկի—Սուրիկից բացի։ Ձեռքը պարզեց դեպի նկարը—նկարին։ Ծնողներից սիրված—ծնողների կողմից սիրված երեխա։ Մի ժամից նա կգա—մի ժամից հետո նա կգա։ Հինգ օրում արտը վարեց—հինգ օրվա ընթացքում արտը վարեց։ Պատերին մնացել էին ծեփի կտորները—պատերի վրա մնացել էին ծեփի կտորները։ Նա ներս մտավ ընկերների հետ—ընկերներով հանդերձ—ընկերներով։ Նա պատմեց իրենց ջոկի սխրանքի մասին—պատմեց ջոկի սխրանքից։

Շարահյուսական համանիշներ են կազմվում տարբեր ածանցներով, ածանցներով ու կապերով։ Օրինակ՝ Արշավարի բամփեց գլխին—արշի պես բամփեց գլխին։ Փափախանման մի բան էր թևի տակ—փափախի նման մի բան էր թևի տակ։ Այսպիսի համանիշներ են՝ առատորեն—առատ կերպով, համեստորեն—համեստաբար, ինչպես արծիվ—արծվի նման, մեծավարի—մեծի նման, արտաքնապես—արտաքինից և այլն։

27-րդ հարց

ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԿԻՑ ՄԻԱՎՈՐՆԵՐ

Քերականագիտության մեջ ավանդաբար ընդունված է նախադասության անդամ համարել ենթական, ստորոգյալը և անվանական ու բայական լրացումները։ Սակայն նախադասության մեջ կան բառեր, որոնք ո՛չ ենթակա են, ո՛չ ստորոգյալ, ոչ էլ անվանական կամ բայական լրացում։ Նրանք կապվում են նախադասության ընդհանուր բովանդակության հետ, արտահայտում են խոսողի մտավոր կամ հուզական վերաբերմունքը, կամ ցույց են տալիս, թե ում է ուղղված խոսքը։ Այս պատճառով էլ այդ կարգի բառերը քերականները ավանդաբար նախադասության անդամ չեն համարել։ Այդպես վարվելով, սակայն, նրանք այդ բառերը նախադասության կառույցից չեն հանում՝ համարելով նախադասության միավորներ, որոնք նույնքան կարևոր են, որքան նախադասության անդամները։ Բայց նախադասության անդամներից հարակից միավորները տարբերվում են թե՛ բովանդակությամբ, թե՛ արտահայտության ձևով, և նույնացնել, նույն կարգի լրացում համարել նախադասության անդամների հետ, ճիշտ չի լինի։

Նախադասության հարակից միավորներ են կոչական անունը, միջանկյալ բառերը (միջանկյալ զգացական ու միջանկյալ դատողական) և ներդրյալ բառերը։

Կոչական անուն։ Կոչականը նախադասության միավոր է, ցույց է տալիս այն առարկան, որին ուղղված է խոսքը, որին դիմում է խոսողը մի բան ասելու, հարցնելու համար։

Կոչականն արտահայտվում է ուղղական հոլովով, դա ուղղականի կիրառության մի տարբերակն է։

Կոչական անունը որոշիչ հոդ չի ստանում, նախադասության անդամներից տրոհվում է դադարով, որը գրավորում արտահայտվում է

ստորակետով։ Օրինակ՝ Մայրի՛կ, նայիր, արևն ինչպես դեղնել է (ԱԻ)։ — Երկար եք նստում ճաշի, ընկերնե՛ր, շատ երկար (ՆՁ)։ — Հասմի՛կ, դու կոմերիտուհի ես։ — Վասա՛կ, ինչո՞ւ ես տատանվում, ներս արի։ — Մի՛ ծաղրիր, Վասա՛կ (ՆՁ)։

Կոչականը շեշտակիր է, նրա վերջին վանկի վրա միշտ շեշտ է դրվում։ Ինչպես՝ Քո՛այր իմ նազելի, նայիր քո դիմաց (ԱԻ)։ Վարդե՛ր, ճամփա ցույց տվեք (ԱՏ)։ Հիշում եմ քո դեմքը ծեր, Մա՛յր իմ անուշ ու անգին (ԵՁ)։ Հիշո՞ւմ ես, Մարգո՛, այն երեկոն (ՎՏ)։

Խոսակցական լեզվում իբրև միայն կոչական գործածվում է աղջի գոյականը, որը կոչականից բացի, այլ կիրառություն չունի, հոդ չի ստանում, չի հոլովվում։ Օրինակներ՝ Աղջի՛, քյոխվեն տա՞նն է (Մ)։ Աղջի՛, անաստված, նստիր վրանում (ՀԹ)։ Աղջի՛, բախտավոր, երնեկ քո սերին (ՀԹ)։ — Ի՞նչ կա, աղջի՛,— հարցրի ես,— ո՞ւմ ես ուզում (ՎՓ)։

Կոչականի իմաստ ունեն նաև բարբառային աղա՛, արա՛ ձևերը, քա՛, տո՛, ծո՛, հե՛յ և այլ ձայնարկություններ։ Օրինակներ՝ — Տո՛, ի՞նչ ես ուզում ինձանից (ՆԴ)։ — Աղա՛, խո չի՞ գժվել էդ ուզուն-ախմախը (ՎՓ)։ Տո՛, ի՞նչ եք ձեններդ կարել։ ...Ծո՛, խոսեք։ — Ծո՛, լածիրակ, ո՞ւր ես, չես երևում։ — Ա՛ռա՛, ո՞վ էր այդ տղան։ — Գնա, էլ աչքիս չերևաս, ծո՛ (ՎՓ)։ — Տո՛, կդիմանաս, երեխա հո չե՞ս։ — Քա՛, խամ է, ո՛ղի, կսովորի, ո՛ղի։ — Տո՛, արջի քոթոթ, մոտ արի (ՀԹ)։ — Հե՛յ, ո՞ւր ես գնում։

Կոչականի գործառությամբ հանդես են գալիս.

1. Գոյական անունը, օրինակներ՝ Մի՛ լար, ուղիս, որ չես լսում էլ մայրական քաղցր օրոր (ԱԾ)։ Որ քեզ, իմ հատիկ, ծարավ չթողնեմ (ՀՀ)։ Քո ոտի հողն եմ, Մոսի ջան, Մոսի (ՀԹ)։ Ապրեք, երեխեք, բայց մեզ պես չապրեք (ՀԹ)։ Է՛յ, ջա՛ն, սարեր, Սասման սարեր, ինչ անուշ է ձեր լանջն ի վեր (ՀԹ)։

2. Փոխանուն ածականը. օրինակներ՝ — Պատասխան տուր ինձ, մատնիչ սևաչյա, Մի՞թե Թաթուլը քաջ չէր ու սիրուն (ՀԹ)։ Դու խաբում ես ինձ, սուտլիկ խաբեբա (ՀԹ)։ — Դե իմ անունով երդվիր, անզգամ, Որ էլ Սարոյին դու չես սիրելու (ՀԹ)։ Դուրս իմ տանից, սեներես, Ես չնայես դեպի մեզ (ՀԹ)։ Ա՛յ, իմ թաղան, թե տուր ինձ (ՀՀ)։ Իմ բարեկամնե՛ր, իմ մարդասերնե՛ր, դուք մի՛ բարկանաք (ՌԴ)։ Իմ արյունակից, կանգ առ իմ դիմաց (ԳՍ)։ — Դարձեք, խելառներնե՛ր,— գոչում էին հները (ՎՓ)։

Հաճախ ածականով կոչականը ս, դ հոդն է ունենում։ Օրինակներ՝ Սիրելիս, քեզ գիշեր բարի (ՊՍ)։ Սիրելիդ իմ, ինչո՞ւ չես խոսում։ — Հարգելիս, ես իսկույն (Սգր)։ — Խելոքս, մի՞թե նոր ես լսում դու (Սգր)։ Պետք չէ, սիրելիս, զուր ես երդվում։ Գիտեմ, ջանս, զուր ես

երդվում (ՊՍ)։ — Գիժուկս, ասա՝ հայրիկ։ — Խելոքս, մարդ էլ հողի դեմ ամոթով մնա՞ (ՄՀ)։

3. Փոխանուն թվականը. օրինակ՝ — Առաջի՛ն, դանդաղեցրու քայլերդ, երկրո՛ղ, արագացրու։ — Երեք հարյուր քսա՛ն, մոտեցիր սեղանին (մամուլ)։

4. Փոխանուն հարակատար և ենթակայական դերբայները. օրինակ — է՞յ, վերջում կանգնածնե՛ր, առաջ եկեք, տեղավորվեք։ — Մորը բարևացո՛ղ, հեռացիր ծառից։ — Վանաառող, հաց կա՞։

Կոչական անունը հանդես է գալիս՝ ա) միայնակ։ Օրինակներ՝ Ես քո փոխարեն կապրեի գյուղում, հա՛յր,— ասացի ես։ — Կոլտնտեսության հովատակին հիշո՞ւմ ես, հորեղբայր։ — Մանուկ,— ասացի ես,— այսօր աննման բան կատարվեց (Մարղ2)։ Քաշի, ե՛զր, ուսիդ մատաղ (ՀԹ)։

բ) Բառակապակցությամբ։ Օրինակներ՝ էլ չեմ դիմանալ, կփախցրնեմ գոռով—Ա՛յ սարի աղջիկ, Ա՛յ սիրուն աղջիկ, Ա՛յ դու կարմրաթուշ, Թուխամազ Անուշ (ՀԹ)։ Ա՛յ թուխ մազերով աղջիկ, Ա՛յ սարի սովոր աղջիկ, Ջիգյարին գյուլլա դիպչի, Քեզ սիրի ով որ, աղջիկ (ՀԹ)։ — Ա՛յ տղա,— կանչեցի նրան,— ինչո՞ւ չթողնցիր գարնանը հերկելու։ — Աղա, էդ ի՞նչ բանի ես, ա՛յ ուզուն-ախմախ (ՎՓ)։ Կոմսոմոլ ա՛յ տղա, աչքս վրեդ մնաց (ԳՍ)։ Ո՞վ գեղագույն փառք, վերջին ճիգս մունք, Արյունիր սիրտս քո համբույրներում (ՎՏ)։

Ինչպես երևում է օրինակներից, անձի անուն կոչականները կարող են ստանալ ո՛վ, ա՛յ ձայնարկությունը։ Եթե իրը կոչական անձի առումով է օգտագործված, կարող է նույնպես այդ մասնիկներն ստանալ. Ինչպես՝ Ա՛յ իմ Արազ, ջուրդ վարար, Սիրուն յարիս յարաբ տեսա՞ր։ Ո՞ւր ես գալիս, ա՛յ գարուն, Ջուր ես գալիս, ա՛յ գարուն (ՀՀ)։ Ա՛յ վարդ, լսիր աղաչանքիս, Թույլ տուր թփից քեզ քաղեմ (ԱԾ)։

Ա՛յ-ը ժողովրդական-խոսակցական է, իսկ ո՛վ-ը՝ գրքային և բնորոշ է բարձր, ճարտասանական ոճին։ Օրինակ՝ Դեպի վեր, սարն ի վեր, ո՛վ արի զինվոր (ՀՀ)։ Ուղարկում եմ քեզ գիրքս, ո՛վ դու ընթերցող։ Այս երգս քեզ եմ ձոնում, ո՛վ ճանապարհորդ, ո՛վ անհայտ հորիզոնների զնիչ, Ո՛վ մեռած վարպետներ, իմ թախանձանքը լսեք, Այդ շերեփով չի դատարկվի այս կաթսան (ԵՁ)։ Ձայն տուր, ո՛վ ծովակ (Ր)։

Ինչպես երևում է օրինակներից, ա՛յ, ո՛վ ձայնարկությունները միշտ դրվում են կոչականից առաջ և իրենց վրա են վերցնում շեշտը, կոչականից չեն տրոհվում։

Մանոթագր.—Խոսակցական լեզվում երբեմն ա՛յ մասնիկը և հատուկ անունը կրճատելով՝ միացնում են իրար և կազմում են մի բառ-կոչական։ Ինչպես՝ ա՛յ տերտեր→տատեր, ա՛յ Գուրգեն→Ագուր, ա՛յ Նազելի→Անազ, ա՛յ Սարգիս→Ասաք և այլն։ Կրճատված կոչականներ են մա՛ (մայրիկ ձևից), պա՛ (պապա ձևից) բառերը։

Կոչական անունը կարող է ունենալ անվանական լրացումներ։

ա) Որոշիչ. օրինակներ՝ Գլուխդ աչեռ, քաջածին Մասիս, դու էլ խոնարհիր, Վահագն է գալիս։ Ցնծա, բյուրվիշապ Հայաստան աշխարհ, Փրկության արև Վահագնիդ տեսար (ՀՀ)։ Ե՛կ, գարեան անձրև, թափվիր հորդառատ (ԱՍ)։ — Արի՛, իմ սիրելի ու հավատարիմ Մուշեղ (Մ)։ — Հը՞, ուստա Ասատուր, էգ ի՞նչ ես տաքացել (ՆԴ)։ Է՛յ հին ծանոթներ, է՛յ կանաչ սարեր, Ահա ձեզ տեսա ու միտս ընկան, Առաջս եկան երջանիկ օրեր (ՀԹ)։ Ո՛հ, ի՞նչ սև վիճակ քեզ բաժին ընկավ, Սևաբա՛խտ հույրիկ, նագելի՛ Անուշ (ՀԹ)։ Շնորհակալ եմ, անցվո՛ր ախպեր (ՀԹ)։ — Հապա լցրեք, իմ քա՛ջ հյուրեր, բաժակները լիուլի (ՀԹ)։ Ցավն իմ հոգուց հառաչանքներ է քամում, որ ողբեմ, մայր, քա՛ղցր մայր, քեզ մեղա (ՌԴ)։ Ան չունգուրդ, դարդո՛տ աշուղ, մեզ բան ասա սրտալի (ՀՀ)։ Զյո՛ւն, փափո՛ւկ ձյուն, ոպիտա՛կ ձյուն, Զգուշ իջիր դաշտերին (ԳՍ)։

բ) Հատկացուցիչ. օրինակներ՝ Փրկի՛ր նրան, Տե՛ր իմ, փրկիր, որ ապրի (ՌԴ)։ Իմ բարեկամնե՛ր, ազնիվ հերկերի, ճակատագրով եղբայրնե՛ր իմ թանկ, բացեք դռները փակված երդերի և ասեք՝ կյանքի իմաստը գտանք (ՌԴ)։ Իմ կարմիր կակաչ, իմ սիրուն կակաչ, Ասա դու նրան, որ կյանքը դեռ կա (ԳՍ)։ Նոր աշխարհի լույսը վառի, իմ բարեկամ, իմ ընկեր (ԳՍ)։ Իմ ժիր մանուկ, կարդա, գրիր (Սարմեն)։ Թռի՛ր, իմ ճեռյգ, սլացիր շուտով (ԱՍ)։ Կգա, գտարիկս իմ թանկագին (ՀԹ)։ Խաղաղություն ձեզ, մեր անբախտ պապեր (ՀԹ)։ Թափվեք, իմ երգեր, արցունք առ արցունք (ՎՏ)։

գ) Բացահայտիչ. օրինակներ՝ Եկե՛ք, քույրե՛ր, սեզ սարերի շքնաղագեղ ոգիներ (ՀԹ)։ Հյուգո, իմ բարեկամ, Պուշկին՝ ազնիվ ընկեր, Բայրոն՝ հիվանդ եղբայր, դուք ինձ կհասկանաք (ՌԴ)։ Կորած հայրենիք՝ իմ հանգած օջախ, ե՞րբ պիտի քո մեջ նոր կրակ վառեմ (ՌԴ)։ Իմ ցավաքաշ բարեկամ, խենթ ու խելառ իմ գրիչ, Քեզնից թափվում են այնքան զգացմունքներ դրդռիչ։ Իմ ցավաքաշ բարեկամ, միակ լեզու-կարեկցանք, Քեզնից թափվում է այնքան հավատի սերմ, հույսի ցանք (ՌԴ)։ Նվագում ես, աղջիկս, դաշնակահար երեխա, հրճիվների սիրահար (ԳՍ)։ — Հայրի՛կ, սիրելի՛, թանկագի՛ն ծնող, տուր ինձ այդ թղթերը (ԱՇ)։ Մարո՛, անբա՛խտ, վաղամե՛ռ, Դու մանկությանս իմ ընկեր, Որքան ենք մենք խաղացել, Իրար սիրել ու ծեծել... (ՀԹ)։ Քեզ եմ երգում, քաղցր քույր, խելագար Սոմա (ԵՉ)։

Կոչականին հաճախ ուղեկցում է որևէ ձայնարկություն (հե՛յ, ջա՛ն, է՛յ, օ՛յ և այլն)։ Դրանք կոչականից կարող են տրոհված լինել կամ չլինել։ Օրինակներ՝ Հե՛յ, ուլաեր, հե՛յ, գառնաեր, ելեք շուտով բացեք դռներ (ՀԹ)։ — Է՛յ, Փարվանա, չհնազ փերի, ի՞նչ է հավան քո սրտին (ՀԹ)։ Օ՛, դու իմաստուն, հավերժական փոխակերպության ոգի ներհուն, այս ի՞նչ ապրելու ուժ ես բերում (ՌԴ)։ Զգում եմ

խինդը հոգուդ, Ջա՛ն, փոքրիկ, սիրուն աղա (ԳՍ)։ Հե՛յ, ջա՛ն հայրենիք, որքա՛ն սիրուն ես (ԱՌ)։

Կոչականը կարող է նախադասությամբ արտահայտված լրացում էլ ունենալ։ Օրինակներ՝ Ով գալիքի սերմնացաններ, որ լիարուռ ենթելու եք ձեր սերմը մեր ձեռքերով հերկած այս դաշտում... Ահավասիկ, գրում եմ ձեր ընթացքի համար յոթ խորհուրդ (ԵՉ)։ Ես խոնարհում եմ գլուխս հանճարին անճառ, Ո՛վ վարպետներ, որ ավիշ ձև, կերպարանք մեր հողին (ԳՍ)։ Լսի՛ր, լուցկի իմ չնչին, որ մարում ես իմ շնչից (ԳՍ)։

Կոչականն էլ կարող է լինել բազմակի, ունենալ բազմակի (համադաս) լրացումներ։ Օրինակներ՝ Ո՜, բզկտված աշխարհ, սահմաններով ճղված, փշալարով կնքված, մարդու արյամբ խեղդված, արցունքներով ցողված, ծիծաղներով ճղի, քեզ ուզում ենք տեսնել առանց սահմանների (ՌԴ)։ Մնաք բարով, արև, գարուն եվ խնկաբույր ծաղիկներ, Կարկաչահոս վտակ սիրուն, Կանաչազարդ բլուրներ (ՀՀ)։ — Լո՛, լո՛, լո՛, Սև ջրերի շրթան, սար ու ձոր մղկտացնող ջիվան, գազան մեղմացնող, քար ու ծառ հուզող շրթան, ինչո՞ւ հիմարի պես հավատացիր ազային (ՎՓ)։ Հե՛յ, հեռու-մոտիկ հանքահանքերում, գործարաններում, լայն ատելիներում ու անտառներում—Բոլոր վայրերում, բոլոր կողմերում, Երկաթի, բրոնզի, հողի ու հանքի երգով օրորված իմ բյուր եղբայրներ—Ո՞վ ունի այսօր կամքը մեր հրե, ուժը մեր բոսոր ու վառ կամքը մեր տիեզերական (ԵՉ)։ Հրաշք-աղջիկ, անհայտ երկրի մանուշակ, Պիշերային արեգակի հառագայթ,—Դու իջնում ես կարող, որպես մահու խայթ (ՎՏ)։

Այն նախադասություններում, որտեղ ենթական ու կոչականը միևնույն անձն են, ենթական արտահայտվում է 2-րդ դեմքի դերանունով, իսկ ստորոգյալը՝ այս կամ այն եղանակի 2-րդ դեմքի բայով։ Ըստ որում ենթական մեծ մասամբ զեղչված է լինում։ Օրինակ՝ Մարիամ, լսո՞ւմ ես, տեսնո՞ւմ ես, Մարիամ (ՊՍ)։ — Վարդուշ, երեխաները քնա՞ծ են։ Չէ՛, կանչիր։ Վա՛յ, Մոսի ջան, ինձ մի՛ սպանիր (ՀԹ)։ Աղջի՛, Մանիշակ, վատ բան ես տեսել (ՀԹ)։ Դում էլ ինձ հետ ձեն տրվեմ, Իմ դարդերի թայ սարեր (ՀԹ)։ Սիրո՛ւն աղջիկ, ի՞նչ ես լալիս էդպես մենակ ու մոլոր (ՀԹ)։ Հե՛յ, պարոններ, ականջ արեմ թափառական աշուղին (ՀԹ)։

Այս կառույցներում տեղի է ունենում կոչականի ու ենթակայի մի տեսակ ներքին համաձայնություն. ենթակայի 2-րդ դեմքը բխում է կոչականի դիմային իմաստից։ Քանի որ կոչականն այն անձն է, որին դիմում է խոսողը, ուրեմն նա խոսակցի իմաստ է ստանում, իսկ խոսակիցը միշտ 2-րդ դեմքի է, այստեղից էլ բխում է ենթակայի 2-րդ դեմքը։

Երբեմն խոսողն իր անձն առնում է կոչականի ոլորտը, և ենթա-

կան սահանում է 1-ին դեմքի, հոգնակի թվի իմաստ, սորոգյալն էլ համապատասխանաբար արտահայտվում է 1-ին դեմքի հոգնակի թվով։ Օրինակներ՝ — Վարդան, գնանք այգիները տեսնենք։ — Արի խմենք, Կարապետյան, այսօր էլ հո դաս չունե՞ս։ — Որ գնացինք, պառավս, ես էլ այս կողմերը դարձող չեմ։ — Արի չգնանք, մարդ։ — Մենք կմնանք Սոնե,— ասաց կնոջը (Մարգ2)։ Հայրի՛կ, արագ, եռ ենք մնում, տես արևը թեքվեց ցած (ԳՍ)։

Եթե ենթական, որ սովորաբար զեղչված է լինում, ու կոչականը միևնույն անձն են, գրվում են միևնույն թվով՝ եզակի կամ հոգնակի։ Սա նրանց թվային մասնակի համաձայնությունն է։ Օրինակներ՝ Պայծառացի՛ր, ա՛յ առավոտ, երկիր, խմի՛ր ցոլքն արևի։ Ինձ հետ եղիր հաշտ ու խաղաղ, օ՛, սիրելի իմ գրիչ (ԳՍ)։ Այս կարկաչը, սիրտ իմ, էլ չես զգա (ԳՍ)։ Հե՛յ, հեռավոր ընկերնե՛ր ու բարեկամնե՛ր, դուք չե՞ք լսում, ձեզ ենք կանչում (ԵՉ)։ Իսկ հիմա լսեցե՛ք, մարդիկ, Շահնամեն բանաստեղծ Չարենցի (ԵՉ)։ Ների՛ր, Ասպոլիկ Ղոնդախչյան, իմ լուսե բարեկամ, ներիր (ԵՉ)։ Օ՜, սիրտ իմ, գլխիվայր ընկար–կախվեցիր... աղջկա վարսերից (ԵՉ)։ Սիրուն աղջիկ, ո՞ւմ ես սիրում էս աշխարհում (ԳՍ)։ Գարո՛ւն, ամեն տեղ նոր կյանք ես վառել (ՎՏ)։ Ե՛լ, դեմոկրատիա, խոր ու խնդուն, աղմկի՛ր ամեն կողմ (ՎՏ)։ Լուսի՛ն, լուսի՛ն լուսերես, ինչ սիրուն ու պայծառ ես (ՂԱ)։

Եթե կոչականը նախադաս որոշիչ ունի, շեշտը սովորաբար անցնում է որոշչին։ Ինչպես՝ Հեռու ես, անհաս, իմ լուսե՛ երազ (ՎՏ)։ Քե՛զ եմ երգում, կարմի՛ր, Արյունաբո՛ւրբ Ազատությա՛ն դրոշ—քեզ փա՜ռք (ՎՏ)։ Սրոտա՛, շաչի՛ր, փոթորկավե՛տ ամպ (ՎՏ)։ Եռար հերվանից առատ է, հը՞, Բեռի՛ Մանուկ։ — Խմիր, մամայի՛ բալա։ Կապրես ինձ մոտ, սիրելի՛ Ֆուզան (Մարգ2)։ Իսկ եթե կոչականի որոշիչը ետադաս է, շեշտը մնում է կոչականի վրա։ Ինչպես՝ Նվարդը մի աստծո գառ կին է, Սերո՛ր եղբայր (Մարգ2)։ Ինչպե՞ս չսիրեմ, երկի՛ր իմ կիզված (ՎՏ)։ Աշխե՛ն ջան, դու լալի՞ս ես (ՆԴ)։

Կոչական անունը կարող է լինել նախադասության թե՛ սկզբում, թե՛ մեջտեղում, թե՛ վերջում, բոլոր դեպքերում տրոհվում է ստորակետով։ Օրինակ՝ Երբ դուք, տիկին, կարծես հիշում եք մեռած մեկին։ Այնպես բարակ են ձեր ձեռքերը, տիկին (ՎՏ)։ Մա՞հն է արդյոք, թե նի՞նջը քեզ պատել, պայծա՛ռ Նաիրի (ՎՏ)։ Վառարանդի, երկրում աղոտ, Լուսե՛զ, քեզ եմ երազում։ Ցոլա՛, ցնորք Նաիրի (ՎՏ)։ Դու հրպարտ չես, իմ հայրենիք, Տրտում ես դու և իմաստուն։ Օ՜, հայրենիք՝ դառն ու անուշ, Ջլլացա խնդուն փառքիդ (ՎՏ)։ Ջեմ դավաճանի իմ Նվարդին, Որքան էլ դյութես, օ՜, Շամիրամ (ՎՏ)։ Հեռացիր, աշուն, համբորեն լացող, ողջույն քեզ, մորիկ, ահեղաշլյուն (ՎՏ)։

Երբեմն կոչականը կարող է նախադասության դեր ստանալ, բառ-նախադասության նման փոխարինել նախադասությանը։ Օրինակ՝

Անդրեաս.— Դու տխուր ես, որովհետև վերջերս քեզ հավատացրել են, թե քո հայրն ազնիվ մարդ չէ։ Մարգարիտ.— Հայրի՛կ... Անդրեաս.— Ամոթ քեզ, Մարգարիտ, ամոթ։ Դու ինձ ապտակ ես տալիս։ Մարգարիտ.— (վշտահար ու ամոթահար) Հա՛յր... (ԱՇ)։ — Ես եմ, մայրի՛կ, չե՞ս ճանաչում։ — Մինասյա՞ն։ Աշխենը թեթև կարմրեց։ — Վարո՛ւ,— հանդիմանությամբ նկատեց նա։ — Ա՜խ, Աշխեն, ֆույրիկս,— ասաց Եվան զգացված։ — Քույրիկ ջան,— աղաղակեց նա։ — Վառ՞ն,— զարմացած կանչեց նա (ՆԴ)։

Միջանկյալ բառեր։ Միջանկյալ են կոչվում նախադասության այն միավորները, որոնք քերականորեն չեն կապվում նախադասության անդամների հետ, տրոհվում են նրանցից արտասանական դադարով, որը գրավորում արտահայտվում է ստորակետով։ Նրանք թեքման ենթակա չեն, հոդ չեն ստանում։ Միջանկյալ բառերն արտահայտում են խոսողի զգացական և դատողական վերաբերմունքը։ Ըստ այսմ էլ զանազանվում են զգացական միջանկյալ բառեր (ձայնարկություններ) և դատողական միջանկյալ բառեր (վերաբերականներ կամ եղանակավորող բառեր)։

Զգացական միջանկյալ բառեր։ Զգացական միջանկյալ բառերը (ձայնարկություններ) արտահայտում են խոսողի զգացական վերաբերմունքը՝ ուրախություն, զարմանք, վախ, ափսոսանք, վիշտ, կոչ, ղայրույթ, բնական ձայների նմանություն և այլն։ Զգացական միջանկյալ բառերն արտասանվում են բացականչական հնչերանգով և դադարով, ուստի տրոհվում են նախադասության անդամներից ստորակետով, կրում են առոգանության նշաններ՝ շեշտ կամ բացականչական նշան։ Կարող են լինել նախադաս, միջադաս կամ վերջադաս։ Օրինակներ՝ — Վա՛յ, հարա՛յ, փախե՛ք (ԼԹ)։ Է՛յ ջան, սարե՛ր, Սասմա սարեր, Ի՜նչ անուշ է ձեր լանջն ի վեր (ԼԹ)։ — Վա՛ճ, էս քաղքցիք ի՜նչ վաղ են քնում։ — Հե՛յ, կովատեր, հե՛յ, գոմշատեր, ելեք շուտով բացեք դռներ։ — Փի՛շտ, փի՛շտ,— վեր թռանք ամենքս (ԼԹ)։ — Վա՛յ, խելառ Դավիթ, շաղգամի տեղակ Դու կրակ ուտես (ԼԹ)։ — Համա կերանք, հա՜։ — Հակո՛ւ, հե՛յ Հակո՛ւ, արի, արի, մայրդ կանչում է։ Սուս եմ արել ու մտածում եմ՝ ինչ լավ է, օխա՛յ, օխա՛յ, տեղս չգիտեն, ջա՜ն, ջա՜ն։ Պահո՛, սա էլ իմ վերջն է, ա՛յ, ա՛յ, մի տես, է՜, ինչպես են դալիս (ՎԱՆ)։ — Փա՛ճ, տեսա՞ր, Պատրիկ։ Բա՜, այդպես է աշխարհի բանը, է՜ (ՆԴ)։ 33 — Բռ՜, քեզ հետ չե՞մ, էդ ի՜նչ բանի ես, է՜, է՜ (ՎՓ)։ Կը՜ռ, կը՜ռ, Կրոկրոան, կռունկները հա՜ թռան (ԼԹ)։ — Ծուղրուղո՜ւ, աքլորը գիլ կանչեց թռուին, — ճի՛կ–ճի՛կ, ճի՛կ–ճի՛կ, Ջարթնեց մթնում ծիրը ծառին։ Հալվեց ձյունը, Տես, Գարուն է Սարերում, Ջա՜ն լե՜–լե՜–լե՜, Ջա՜ն լե՜–լե՜–լե՜, Սարերում (ժողովրդական)։

Սովորաբար զգացական միջանկյալ բառերը (ձայնարկություններ)

հաղորդակցական դեր չունեն, նրանք միայն խոսողի վերաբերմունքն արտահայտելու միջոց են։ Սակայն երբեմն նրանք փոխարինում են նախադասությանը, հաղորդակցման դեր են կատարում։ Օրինակ՝ — Համբարձո՞ւմ, բա չես գնո՞ւմ տուն։ — Ի՞, ի՞։ — Բա առանց քեզ ո՞նց կլինի։ — Է՞հ (Սգր)։ Այստեղ Համբարձումի պատասխանը միջանկյալ բառերով առաջին դեպքում արտահայտում է իր ձանձրացած լինելը և մերժումը, երկրորդ դեպքում՝ անտարբերությունը, ուստի դրանք հաղորդակցական դեր են կատարում նախադասության փոխարեն։

Դատողական վերաբերմունք արտահայտող միջանկյալ բառեր։ Դատողական միջանկյալ են կոչվում այն վերաբերական բառերը, որոնք վերաբերելով ողջ նախադասությանը՝ արտահայտում են խոսողի դատողական վերաբերմունքը և նախադասության անդամներից տրոհվում են դադարով, որը գրավորում արտահայտվում է ստորակետով։ Այդ բառերը հոդ չեն ստանում, քերականորեն (հոլովով, դիմային, թվային վերջավորությամբ) չեն կապվում նախադասության անդամների հետ։ Դրանք վերաբերական (եղանակավորող) բառերն են, ինչպես՝ այո՛, իհարկե, երևի, ո՛չ, անշուշտ, գուցե, ըստ երևույթին, կարծես և այլն։ Օրինակ՝ — Դրանք, այո՛, իմ իրերն են։ — Ոստանիկը, ո՛չ, չի գալու (Սգր)։ Հարկավ, դա շատ ծանր էր ինձ համար (ՆԴ)։ Անձնասպանության մասին ավելորդ եմ համարում խոսել, որովհետև այդ, իհարկե, շատ հիմար միտք է (ՆԴ)։ Ի՞նչ արած, բընությունը զրկել է ինձ այդ քաջությունից (ՆԴ)։

Սակայն միշտ չէ, որ վերաբերական (եղանակավորող) բառերը հանդես են գալիս միջանկյալ գործառույթով։ Հաճախ նրանք (բացի այո՛, ո՛չ պատասխանական բառերից) կատարում են նախադասության այս կամ այն անդամի պարագայական լրացման գործառույթ և չեն տրոհվում, ստորակետով չեն բաժանվում։ Նրանք կարող են դրվել նախադասության ցանկացած անդամի վրա և արտահայտել խոսողի վերաբերմունքը տվյալ անդամի վերաբերյալ։ Օրինակ՝ 1. Գեր հայրը մնար (ՊՍ)։ 2. Ասես ընկել ես ջաղացի ջրառուն (ՊՍ)։ 3. Եվ այդքանի մնչ, ասես ինի մեջ, Նա դանդաղ ժպտաց Աչքերով իր թաց (ՊՍ)։ 4. Գուցե չինում էր իրենց տան դուռը (ՀրՄ)։ 5. Գուցե օտարցում՝ հայրը սովորեցրել էր (ՀրՄ)։ 6. Գոնե մի անգամ թերթել էին այդ դասագիրքը (ՀրՄ)։ Այս օրինակներում վերաբերական բառերը դրված են ենթակայի (1), ստորոգյալի (2, 4), ձևի պարագայի (3), ժամանակի պարագայի (5), չափի պարագայի (6) վրա և վերաբերության պարագա են։

Միևնույն վերաբերական բառը կարող է հանդես գալ մի դեպքում իբրև միջանկյալ բառ, մի այլ դեպքում՝ պարագայական լրացում։ Օրինակ՝ Մինչև այս բոպեին էլ խելքս, կարծես, գլխիս չէ (ՆԴ)։ Շահյանը այժմ խոսում էր արտասովոր եռանդով և, ըստ երևույթին, ներքուստ զորեղապես հուզված (ՆԴ) նախադասություններում կարծես, ըստ երևույթին միջանկյալ բառեր են, իսկ՝ Տղան մանրիկ ծիծաղեց, կարծես մենակ չէր։ Ըստ երևույթին սկսել էր գրգռվել Մինասյանի հարցուփորձից (ՆԴ) նախադասություններում այդ նույն կարծես, ըստ երևույթին պարագայական գործառույթ ունեն։ Կամ՝ Իսկապես, քանդածն, ո՞վ պիտի շինի (ՊՍ) նախադասության իսկապես-ը միջանկյալ բառ է, իսկ՝ Լևոն, իսկապես մեծ ծառայություն մատուցեցիր ինձ (ՆԴ) նախադասության նույն իսկապես բառը պարագա է։

Մեր խոսքն այստեղ այն վերաբերական բառերի մասին է, որոնք, արտահայտելով խոսողի վերաբերմունքը նախադասության ընդհանուր բովանդակության վերաբերյալ, ոչ թե բնութագրում են այս կամ այն անդամը, այլ երանգ են տալիս ողջ նախադասությանը և նախադասության անդամներից տրոհվում են, բաժանվում ստորակետներով։

Դատողական միջանկյալ բառերն արտահայտվում են՝ 1. մակբայական իմաստ ունեցող բառերով[63], ինչպես՝ անշուշտ, իսկապես, անպայմանորեն, նույնիսկ առհասարակ, բարեբախտաբար, բնականաբար, հավանաբար, գլխավորապես և այլն։

Ի տարբերություն մակբայների, սրանք՝ ա. վերաբերում են ողջ նախադասությանը, իսկ մակբայը վերաբերում է բային (երբեմն էլ մակբային կամ ածականին)։ Օրինակ՝ «Մենք չկարողացանք, դժբախտաբար, ժամանակին մեկնել», բայց՝ «Մենք բարեկամաբար սեղմեցինք միմյանց ձեռք», բ. Նախադասության անդամներից տրոհվում են դադարով, որ գրավորում արտահայտվում է ստորակետով։ Մակբայը չի տրոհվում։ Լինում են միջադաս, նախադաս, վերջադաս։ Օրինակներ՝ Ուշացողներին, բարեբախտաբար, նախագահը չնկատեց (մամուլ)։ Ահա, վերջապես, Ուղղությունը։ Բայց ո՞վ է այդ կինը, վերջապես։ Բարեբախտաբար, անախորժ ճանապարհը կարճ էր (Սգր)։ — Դուք, անշուշտ, Քութահիից եք գալիս (ՆԴ)։ — Քո եղբայրությունը, ա՛խր, լոկ երևակայություն է, չունի իրական ոչ մի հիմք, համենայն դեպս, ոչ մի արդարացում (ՆԴ)։ — Դուք, ուրեմն, «Փնջիկ» թերթի խմբագրատանը չե՞ք աշխատում (Մ)։ — Լավ, ես կասեմ այդ մասին (Մ)։

2. Քարացած հոլովաձևերով. ինչպես՝ հարկավ, իրավ, իհարկե, միով բանիվ, արդարև, արդյոք, իրոք և այլն։ Օրինակներ՝ Արդարև, կան ցավեր, որոնք պետք է մոռանալ։ Միով բանիվ, այդ կույսը մեր բարերարն ու խնամակալուհին է։ Նման մի սրբազան շինության վրա, հարկավ, դարերի ընթացքում նստել է և՛ փոշի, և՛ անմաքրություն։ Թող այդպես լինի, այնուամենայնիվ, ես ցանկանում եմ լսել ձեզ։ Ես

[63] Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, էջ 379։

իմ կողմից, իճարկե, սպասեցնել չտվի (Մ)։ Ամեն գիշեր, արդարև, նրա մոտ էր լինում (ՆԴ)։

3. Մի քանի կապային կապակցություններով. ինչպես՝ ըստ երևույթին, ի դեպ, ըստ ամենայնի, ի վերջո, ըստ էության և այլն։ Օրինակ՝ Նա ճարպիկ է, թեթևաշարժ և, ըստ երևույթին, մի քիչ էլ անվախ։ Գյուղը, ըստ ամենայնի, նման էր մյուս բոլոր հայաբնակ գյուղերին։ Ի վերջո, մենք սկսեցինք իշնել լանջով։ Ըստ երևույթին, դա մի սավերաշատ ծառ էր եղել։ Ի դեպ, մենք այդ գյուղում եղել էինք (Մ)։

4. Գործող կամ քարացած դիմավոր բայերով. ինչպես՝ գոնե, գըրնթե, երևի, գուցե, ասես, գիտես, կարծես, երևակայիր, տեսնես, հավատա, ներեցեք, խնդրեմ, կարծեմ և այլն։ Օրինակ՝ Սակայն այդպիսի փորձեր, կարծեմ, եղել են, չէ՞։ Ներեցեք, ես ձեզ, գուցե, ձանձրացնում եմ։ Երկաթուղին ամենահարմար միջոցն է, չէ՞, փոխադրության համար։ Երկյուղ էր կրում, թե, միգուցե, իրեն ծանոթ նյութի մասին հանկարծ անհեթեթ կարծիք հայտնի։ — Հավատացեք, ես լուրջ եմ խոսում։ Երևակայեցեք, գիշերներն անգամ չէի հեռանում նրանից։ — Ինչևիցե, ինչևիցե, այդ թողնենք։ Կամ, գուցե, պատմեր մի իրական դեպքեր։ Շնորհ արեք, խնդրեմ, դուք մեծ հաճույք կպատճառեք ինձ։ Ես, հավատացեք, ձեր հայտնությունների ամենահավատարիմ ավանդապահը կլինեմ։ Ներեցեք, որ ես պահանջում եմ ավելին, բայց, հավատացեք, չեմ ների ինձ (Մ)։ Այս բոպեին էլ, կարծես, տեսնում եմ նրան։ Վերջացրեք, խնդրեմ, ձեր թեյը (ՆԴ)։ Անգիր իմանալ ձեր բանաստեղծությունները և, շկասկածեմ, չհանդիպել ձեզ, ծանր էր ինձ համար (Սգր)։

5. Բառակապակցություններով. ինչպես՝ իր ասելով, ի սեր աստծո, տեր իմ աստված, փառք աստծո, իմ կարծիքով, ի միջի այլոց, մինչև անգամ, սոսկալի բան, ճիշտն ասած, ես իմ հոգին, ինչպես միշտ, քո արև, աստված սիրես, աստված վկա և այլն։ Օրինակ՝ Ես հոգնել եմ սովորական կյանքից, ձանձրացել սովորական մարդկանցից և, մանավանդ թե, սովորական բարեկամությունից։ Այստեղ էլ, ճիշտ է, ոչ ոք չի վշտացնում ինձ։ Ինձ ընկերակցում է Պետո անունով մի գյուղացի երիտասարդ, որը, միևնույն ժամանակ, իմ առաջնորդն է։ Նա հյուրասիրեց մեզ պատվական գինով, որ, յուր ասելով, պահուկ էր պրիստավի համար (Մ)։ Ի սեր աստծո, տուն գնացեք, բարեվեցեք։ Շահյանի թաղմանը ներկա էին, ի միջի այլոց, օրիորդ Սահակյանն ու Մարությանները։ Այդպիսիները, մինչև անգամ, չեն ցավում (ՆԴ)։ Էն տեսակ կին, ես իմ հոգին, թե աշուղն էլ ուններ... (ՀԹ)։ Բայց, աստված իմ, այս կինը հանդիպող հանելուկներից մեծագույնն է (Մ)։ Ազատ տեղ, փառք աստծո, ունենք (ՆԴ)։ Նա այս անգամ էլ, ինչպես միշտ, թերակատարեց իր պլանները, թեև, ճիշտն ասած, բերքն այնքան էլ քիչ չէր։ — Քո արևը, ես չեմ նեղացել։ Երեխան, սոսկալի բան, վառվում էր տաքության մեջ, Երեխան, մինչև անգամ, զգում էր, կարծես, իր վիճակի ծանրությունը (Սգր)։

Վերը բերված դատողական բառերը երբեմն դրվում են նախադասության այս կամ այն անդամի վրա և ցույց են տալիս նրա նկատմամբ խոսողի վերաբերմունքը։ Այս դեպքում վերաբերականը, բնականաբար, լրացյալից չի տարանջատվում, կատարում է պարագայի գործառություն։ Օրինակ՝ Ինձ թվում է, թե նույնիսկ ձիերն են ուրախանում, նրանք ասես խնդում, ծիծաղում են։ Անշուշտ կուզեք տեսնել մեր նոր շենքը։ Գոնե էժան տար։ Իսկապե՞ս խելոք երեխա էր։ Բնականաբար պիտի առարկեր մեզ (Սգր)։ Նրա կարծիքները համարյա միշտ անցնում են, գուցե հեղինակությունից է։ Նա գրեթե միայնակ է ապրում։ Հիվանդն ի վերջո բուժվեց։ Իճարկե խելոք մարդ է նա («Գարուն»)։

Դատողական միջանկյալ բառերը լինում են. 1. նախադաս. օրինակ՝ Արդարև, կան ցավեր, որոնք չպետք է մոռանալ։ Ահա, այժմ մենք տանուտեր Ակոբի տանն ենք (Մ)։ Միով բանիվ, ամեն բան գործ եմ դնում, բայց, միևնույն ժամանակ, զգուշանում եմ։ — Անշուշտ, դուք ինձնից ավելի կառողջանաք (Մ)։ 2. Միջադաս. օրինակ՝ Իմ տարակուսանքն, իճարկե, փարատվեց։ Տեր Հոսեփն ինքն իրեն բուսած մի ծառ չէ, այլ, անշուշտ, այդ խորհրդավոր կնոջ ստեղծածն է։ Ի՞նչ կրկամենայիք, օրինակ, որ պատմեի ձեզ։ Դա, հավատա, նույնպիսի ուրախություն պիտի պատճառե ձեզ։ Ես ժամանակ ունեցա զգաստանալու և, մինչև անգամ, խոսելու նյութ ընտրելու։ Այդ բոլորն, անա, այս քրոջն ենք պարտական։ Կոշտ խոսելը, կարծես, հանցանք էր համարում։ Մեր մեջ, առհասարակ, շատ օգտավետ գործեր ոչնչանում են։ Այդ տեղն, արդարև, բանաստեղծական գեղավայր է (Մ)։ Եղե՞լ է նա, արդյոք, Բեռլինում։ Դա բոլորին հայտնի, բոլորից հարգված, այսպես անվանված, գեներալ Ալոշն է։ Այսպիսով, նա, բոլորովին իրավացիորեն, եվրոպացու հռչակ է վայելում։ Ինչո՞ւ կատարյալ հրաշալիքներ չեն կարող համարվել թեկուզ հենց բերդը, կամ, ասենք, Վարդանի կամուրջը (ԵՉ)։ Ես մի տղա ունեմ, գիտե՞ս, հինգ տարեկան է։ Ամուսին, այո՛, կար։ 3. Վերջադաս. օրինակ՝ Շատ էլ չեմ ընկճվում, փառք աստծո։ Չեմ իմանում ինչ կպատահի նրա հետ, ճշմարիտ։ Դու խելոք աղջիկ ես, կարծեմ։ Զայններդ իջեցրեք, աստծո սիրուն։ Նա երեկ է եկել, այո՛։ Գլուխ թոցնողները վխտում են ամեն տեղ, մանավանդ հիմա։ Սա բարձրացող ցուցանիշ է, ի հարկե։ Նա չգիտի, ո՛չ («Գարուն»)։

Դատողական միջանկյալ բառերն արտահայտում են.

1. Խոսողի երկբայական վերաբերմունքը։ Ինչպես՝ ըստ երևույթին, ամենայն հավանականությամբ, ասենք թե, երևի, իբրև թե, կար-

ծես, ասես, այնպե՞ս է, այնպես չէ՞, ասենք, գո՞ւցե, հավանորեն, հավանաբար և այլն։ Օրինակ՝ Նույնն էր, գո՞ւցե, *լոկ երաժշտությունը։ — Դու, երեի, Հասմիկին կառնես։ Մորս մեջ,* ըստ երևույթին, *կար մի բան, որ համոզմունք է (ՍտԱլ)։ — Դուք մի անգամ եք կարդացել, այնպես չէ՞։ «Նոնան» եք կարդում,* այնպես չէ՞ *(ՆԴ)։ Լինում է, որ թերթ եմ կարդում կամ,*ասենք, *գնում եմ շուկա մրգի։ Մրգավաճառը,* ասենք, *մի բարի գյուղացի է, իսկ կողքինն էլ,* ընդունենք, *շար է...։ Մեզ համար անցյալ տարին,* օրինակ, *ուրիշ էր։ Մեր տղան,* ըստ էության, *կարող է կտրվել քննությունից (Սգր)։*

2. Կոչոդության սովորական լինելը. ինչպես՝ ըստ սովորության, *սովորաբար, ինչպես միշտ,* ըստ ամենայնի, *առհասարակ,* ըստ օրինաց *և այլն։ Օրինակ՝ Սովխոզի կթվորուհիները,* առհասարակ, *բարեխիղճ են և իրենց պլանները,* սովորաբար, *կատարում են։ Աշխատանքի դադարներին,* ըստ սովորության, *կթվորները երեկվա տեսած կինոյից են խոսում կամ,* առհասարակ, *հեռուստացույցի հաղորդումներից։ Գիտնականը,* ըստ իս, *միանգամայն ճիշտ է գնահատում Անդրանիկի խաղացած դերը հայ ժողովրդի պատմության մեջ։ Այս անգամ էլ,* ինչպես միշտ, *նա հաղթեց («Գարուն»)։*

3. Խոսողի գնահատականը. ինչպես՝ դժբախտաբար, *ի զարմանս, ցավոք սրտի, չտեսնված բան, տարօրինակ բան, զարմանալի բան, հաղար ափսոս, ասված չանի (անի) և այլն։ Օրինակ՝ Ուներ մի շարք տեղական հրաշալիքներ, որոնցով,* դժբախտաբար, *չէր հետաքրքրվում պ. Մարուքեն (ԵՁ)։ Բայց,* զարմանալի բան, *բազմաթիվ կիրթ ու գրագետ մարդիկ հավատում են նրան։ Մոլի սնահավատ Ս. Թ...ն ես,* ցավոք սրտի, *հավատում է այս անգրագետ կնոջը։ Բայց,* տարօրինակ բան, *ես ուզում եմ մեռնել (մամուլ)։ Քանի սերեր, քանի հուրեր զուր հանգցրի—նազար ափսոս (ՎՏ)։*

4. Հավելում են կատարում ասվածին, որով բացահայտում, ճշգրտում են ասվածը, ինչպես՝ ի միջի այլոց, ըստ որում, *բացի դրանից,* ընդ որում, *նախ, առաջին, նախ և առաջ, այսպիսով, այսպես ուրեմն, վերջին հաշվով, վերջիվերջո, ի լրացումն և այլն։ Օրինակ՝ Բարձր ինքնարժեքի պայմաններում,* այնուամենայնիվ, *կաթի արտադրանքը, մի կողմից, սովխոզին շահույթ է տալիս։* Ըստ որում, *դա նշանակում է, որ յուրաքանչյուր մեկ տոկոսը 3500 ռուբլու օգուտ է բերում։ Այս ամենը, վերջիվերջո, նյութապես ամրապնդում է տնտեսությունը, պայմաններ ստեղծում,* նախ և առաջ, *անասնապահների աշխատավարձը մշտապես բարձրացնելու համար։ Դրանք, ի միջի այլոց, օգտագործվում են «գյուղատնտեսական մեքենաներ» առարկայի տեսական ժամերին։ Դիրեկցիայի օգնությամբ լայն աշխատանք տարվեց* նախ՝ *ուսումնաարտադրական բազայի ստեղծման,* ապա՝ *մեխանիզատորական կադրերի պատրաստման ուղղությամբ։ Ուսումնա-*

կան գործը, հետևապես, *կախված է այդ գործոններից։ Այսպիսով, մի կողմից՝ նյութական բազան, մյուս կողմից՝ կադրերի որակավորումը վճռում են ուսման բարձր որակի հարցը (մամուլ)։ Անասուններին,* վերջին հաշվով, *կեր է պետք (մամուլ)։*

5. Հավաստիացնում են ասվածը։ Ինչպես՝ այ՜ո, իսկապես, իմացեք, հավատացեք, անկասկած, ինքնըստինքյան, իրավ, հարիավ, արդարև, գիտեմ և այլն։ Օրինակ՝ Մորս դեմքի գողտրիկ գծիկն էլ, իսկապես, *համբերության դրոշմն է։ Մայրս,* իրոք, *երկու աշխարհի ներկայացուցիչ է։ Կյանքում,* անկասկած, *պիտի հավատալ նրան, ով սիրում է քեզ։ Քանի որ,* գիտեմ, *վարդապետները մի բան քարոզում, հակառակն են անում։ Հարևանս,* այո՛, *խելոք մարդ է։ — Վաղը,* իմացե՛ք, *պատասխան կտաք։ Ես այդպիսի նպատակ,* հավատացե՛ք, *չեմ ունեցել։ Սաթիկը,* հարիավ, *ճիշտ է (Սգր)։*

6. Խնդրանք, ներում են հայցում. ինչպես՝ ներեցեք, *ներող եղեք, ասածու սիրուն, ի սեր ասածո, ասված սիրես, բախտդ եմ, ներողություն և այլն։ Օրինակ՝ — Ասածու սիրուն, ների՛ր, թողություն արա։ — Ասածո սիրուն, մի անհանգստանաք։ — Կմրսես, վարժապետ,* ասված սիրես, *ծածկվիր, քնիր (Մ)։ Այնպես կատաղաբար, երկու ժողովանների նման միմյանց վրա գահավիժում ու թափվում են, որ,* ասված մի արասցն, *եթե նավակը մեջը ընկնի։ — Մարդը մի փող,* ասված սիրեմ։ *— է՛հ, փառ ասածո,— խոսեց ծերունին,— շատ էլ վնաս չի եղել (ՎՓ)։ — Սպասեցեք,* խնդրեմ, *մի հինգ րոպե։ Ներեցեք,* խնդրեմ, *որ այդքան երկար սպասել տվի։ Այո՛,* ներողություն, *ես մոռացա (Մ)։* Տեր ասված, *ես ո՞ւր փախչեմ այսքան նայվածքից (ՍտԱլ)։ — Սամսոն,* բախտդ եմ, *տար ինձ հետդ։ —* Բախտդ եմ, *մի՛ խնդրիր (Սգր)։*

7. Դատողական միջանկյալ բառերի մի խումբը վերաբերում է խոսքին, նրա ձևին. ինչպես՝ ավելի պարզ, *պարզ ասած, ուղղակի ասած, մի խոսքով, կարճ ասած, միով բանիվ, այլ կերպ ասած, այլ կերպ, բառացիորեն,* ավելի ճիշտ, *ասառացիորեն և այլն։ Օրինակ՝ Նա կարողացել է,* պատկերավոր ասած, *թռչել այդքան հեռու (ԵՁ)։ Մարդիկ,* պարզ ասած, *բարիքը քամում են քարից։* Մի խոսքով, *կաթից բացի ավելանում է նաև մսի արտադրությունը։ Կաթի արտադրությունը,* կարճ ասած, *բարձրացել է երկու տոկոսով։ Այս ամենը,* այլ կերպ ասած, *նյութապես ամրապնդում է մեր տնտեսությունը։ Մեր մեխանիզատորները,* ավելի ճիշտ, *տրակտորիստները, լավ աշխատեցին։ Մեխանիզատորները,* մի խոսքով, *լավ են նախապատրաստվել գարնանացանին (մամուլ)։*

Ներդրյալ բառեր և բառակապակցություններ։ *Սրանք տեղեկատու բառեր, բառակապակցություններ են, որոնք լրացուցիչ բացատրություն են տալիս նախադասության այս կամ այն անդամի մասին, եր-*

բեմն էլ արտահայտում են խոսողի վերաբերմունքը։ Ներգրյալ բառերը նույնպես արտասանվում են նախադասության անդամներից տարբերված ձևով, որը գրավորում արտահայտվում է փակագծերով, երբեմն էլ ստորակետով։ Օրինակ՝ Չէ՞ որ, «քաղաքակրթությունն» ու «մարդասիրությունը» այնպիսի «բարոյական» (ի՞նչ տխմար բառեր) օրենքներ են սահմանել։ Քաղաքակրթության գործն այն է, որ մարդու պահանջներն է ավելացնում (բոլորովին ավելորդ պահանջներ) (ՆԴ)։ Պետության այծենակաճը (յափնչի) փռեցինք։ Տների սրահներում (էլվա) երևում էին միայն կանայք (Մ)։ Արդեն առաջին դերակատարման ժամանակ (Դարյան, «Դոնի պատմվածք» կինոնկարում) նա ճանաչվել է որպես տարվա լավագույն դերասանուհի («Գարուն»)։ Այստեղ ածեցրած կարպը գերազանցում է ստանդարտը (միջին քաշը 500 գրամ ավելի)։ Սեպտեմբերի մեկից որս կսկսվի նաև Եղեգնուտի (Հոկտեմբերյանի) անտառության լճակներում։ Այսօր առաջավորների շարքերում են ընթանում Գագիկ Ղազարյանի (Աբմաշ), Սադիխով Թավաքյուլի (Մասիս), Սարգիս Գրիգորյանի (Եղեգնաձոր) ղեկավարած բրիգադները։ Որդկան գյուղը (այժմ Աշտարակի շրջան), որը գարձել էր «Իլանչալան», վերամկրտվեց «Արտաշավան»։ Այսօր ունենք չորս տարբեր հայկական գյուղեր միևնույն «Մադկաշեն» անունով (Ապարանի, Աբովյանի, Ղուկասյանի և Սպիտակի շրջաններում), երեք գյուղեր՝ «Այգեձոր» անունով (Գորիսի, Մեղրու, Նամշադինի շրջաններում), երեք գյուղ «Արագած» անունով (Ապարանի, Թալինի, Էջմիածնի շրջաններում)։ Հրատարակվեց գիտնականի «Դրամական շրջանառությունը Հայաստանում (մթա 1-ին դարից մինչև մթ 14-րդ դարը)» աշխատությունը։ Ավտոմատ հոսքային գծի մոտ են օպերատոր Վիգեն Կոտոյանը (ձախից), արտադրամասի պետի տեղակալ Նվեր Սաֆարյանը։ Շինարարներն ըստ առաջադրանքի պետք է սեպտեմբերի մեկին ավարտեին դպրոցի միայն երկու մասնաշենքերի շինարարությունը (780 աշակերտական տեղով), սակայն խոստացան շինարարությունն ավարտել ամբողջությամբ։ Ավտոմեքենաների լիցքավորումը կատարվում է 1,5 անգամ արագ (1 բալեում 60 լիտր, նախկին 40 լիտրի փոխարեն)։ Ընդմիջմանը կարճամետրաժ կինոնկար՝ «Մրրցավազք» («Հայֆիլմ»)։ Հեռուստատեսային գեղարվեստական կինոնկար՝ «Մթնեցրած պատուհաններ» (3-րդ սերիա)։ Ահա արդյունքները. «Դինամո» (Կիև)—Նիստրու՝ 3-0, «Դինամո» (Թբիլիսի)—«Պախտակոր»՝ 1-1, «Տորպեդո» (Մոսկվա)—«Շախտյոր»՝ 0-0 (մամուլ)։

ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Շարադասությունը շարահյուսության այն բաժինն է, որ ուսումնասիրում է պարզ նախադասության միավորների և բարդ նախադասության բաղադրիչ ստորոգումային միավորների շարադասման կարգը։

Նախադասություն ձևավորելու համար անհրաժեշտ են ստորոգում, հնչերանգային ավարտվածություն և բառերի որոշակի դասավորություն։ Նախադասության միավորների դասավորության կարգը կոչվում է շարադասություն։

Շարադասությունը լինում է կայուն և ազատ։ Անջատական լեզուները (չինարեն, վիետնամերեն և ուրիշներ) ունեն կայուն շարադասություն, որը նրանց համար ունի քերականական նշանակություն, կատարում է ձևաբանական մասնիկների, ձևույթների գործառույթ։ Կցական և թեքական լեզուները (հայերեն, ռուսերեն և ուրիշներ) ունեն ազատ շարադասություն, որը չունի կամ գրեթե չունի քերականական նշանակություն։ Այդ լեզուներում քերականական իմաստներն արտահայտվում են մասնիկների, ձևույթների միջոցով։ Այս խմբի առանձին լեզուներում և առանձին դեպքերում միայն շարադասությունը կարող է քերականական գործառություն ունենալ (օրինակ՝ ֆրանսերենում, անգլերենում)։

Ժամանակակից հայերենում, սովորաբար, լրացումը դրվում է լրացյալից առաջ, ենթական ստորոգյալից առաջ, իսկ բացահայտիչը՝ բացահայտյալից հետո։ Օրինակ՝ Գրողի անունը հարազատ ժողովրդի զգացմունքներում և հիշողությունում հավերժանում է, բայց հաճախ սպառնում է ասուպի պես մարելու տխուր վտանգը (մամուլ)։ Այս նախադասության մեջ գրողի անունը, հարազատ ժողովրդի, ժողովրդի զգացմունքներում ու հիշողությունում, զգացմունքներում ու հիշողությունում հավերժանում է, նրան սպառնում է, հաճախ սպառնում է, ասուպի պես, ասուպի պես մարելու, մարելու վտանգը, տխուր վտանգը լրացում-լրացյալ զույգերում ընդգծված լրացումները նախադաս են, դրված են լրացյալներից առաջ, իսկ ենթական (անունը) դրված է ստորոգյալից (հավերժանում է) առաջ։ Կամ՝ Այդ կանաչազարդ շիրիմի մեջ հանդչում էր հայրենիքի սուրբ սիրո նահատակը՝ մարմնացյալ անձնվիրությունը (Մ)։ Այստեղ էլ նահատակը բացահայտյալին հաջորդել է անձնվիրությունը բացահայտիչը։

Ցանոթագր.—Այն, որ ժամանակակից հայերենում սովորական շարադասության դեպքում լրացումը դրվում է լրացյալից առաջ, երևում է, ինչպես նկատել է Մ. Ասատրյանը, նաև բարդ բառերի կառուցվածքից, որն արտահայտվում է լրացում-լրացյալ կաղապարով, ինչպես՝ հացթուխ—հաց թխող, թանաքաման—թանաքի աման, մարդախույս—մարդուց խուսափող, խավարաբնակ—խավարում բնակվող, գլուխ տալ, աչքով անել, աչքից ընկնել, դուրս գալ և այլն։

Սակայն հայերենի շարադասությունն ազատ է ու ճկուն։ Այն կարող է փոխվել՝ առանց բովանդակության վրա ազդելու։ Օրինակ, եթե

«Հայրը որդուն շատ էր սիրում» նախադասության միավորների տեղերը փոխենք՝ որդուն շատ էր սիրում հայրը, շատ էր հայրը որդուն սիրում, շատ էր սիրում որդուն հայրը ձևերով, նախադասության բովանդակությունը չի փոխվի, միայն ոճական տարբերակներ կստացվեն։ Այդպես էլ՝ եթե «ճարտարապետը նայում էր խոսակցին» (ԳԴ) նախադասության միավորների տեղերը փոխենք (Նայում էր ճարտարապետը խոսակցին, խոսակցին էր նայում ճարտարապետը, ճարտարապետն էր խոսակցին նայում և այլն), նախադասության բովանդակությունը չի փոխվի։ Դարձյալ կստացվեն ոճական տարբերակներ։

— Նախադասության միավորների ընդունված կարգով դասավորությունը կոչվում է սովորական շարադասություն։ Օրինակ՝ Ես այդ տեսարը ընկերոջս տվեցի։ Հարևանս իր երկու չարաճճի տղաներին պիոներական ճամբար ուղարկեց։

Նախադասության միավորների դասավորության ընդունված կարգից շեղումը կոչվում է շրջուն շարադասություն։ Օրինակ՝ Դյութեցին ինձ քո մազերը ալեծածան և աչերիդ խորախորհուրդ (ՎՏ)։ Այստեղ ստորոգյալը նախադաս է, ենթակայից առաջ է ընկել, փոխանակ ետադաս լինելու, հաջորդելու նրան, իսկ ալեծածան, խորախորհուրդ լրացումները հաջորդել են մազերը, խորությունը լրացյալներին, փոխանակ նախորդելու։ Այս նախադասության սովորական շարադասությունը կլինի՝ Քո ալեծածան մազերը և աչերիդ խորախորհուրդ խորությունը ինձ դյութեցին։

— Շրջուն շարադասության գլխավոր պատճառը՝ ա) տրամաբանական շեշտի տեղափոխությունն է։ Երբ խոսողի կողմից նախադասության այս կամ այն անդամը առանձնապես շեշտվում է, իր լրացումից առաջ է ընկնում։ Օրինակ՝ Անառիկ է այդ բերդը։ Այսպես էին մտածում այդ բերդի մասին խնկական նախնյաները։ Հալչում էր սիրտը Անգինա Բարսեղովնայի (ԵՋ)։ Այս նախադասություններում տրամաբանական շեշտը ստորոգյալների վրա է, ուստի նրանք ենթականերից առաջ են ընկել, և ստացվել է շրջուն շարադասություն։ Խնամողի աչքով էր նայում Պետին նախիրին։ Քարի մոտ է բուսնում ալպիական մանուշակը, պարիսպների տակ։ Նոր են դեղին դարձել կանաչ տերևները (ԱԲ)։ Այս նախադասություններում տրամաբանական շեշտը դրված է պարագաների վրա, այդ պատճառով բայ-ստորոգյալների օժանդակ բայերը դերբայից առաջ են ընկել և ստեղծել շրջուն շարադասություն, որին նպաստում է նաև նրանց ենթակաների ետադաս դիրքը։

— Տրամաբանական շեշտի տեղափոխությունից առաջանում են նախադասության զանազան տարբերակներ, որոնք ունեն ոճական արժեք։ Այսպես՝ Առաջին աքլորականչին զարթնում էր Պետին (ԱԲ)։ Նախադասությունը կունենա հետևյալ տարբերակները՝ Զարթնո՛ւմ էր Պետին առաջին աքլորականչին (քնած չէր մնում), Պետի՛ն էր զարթնում առաջին աքլորականչին (և ոչ մի ուրիշը), Առաջի՛ն աքլորականչին էր զարթնում Պետին (ոչ թե ուշը), Պետին առաջի՛ն աքլորականչին էր զարթնում (ոչ ուշը), Պետին առաջին աքլորականչին զարթնո՛ւմ էր (քնած չէր մնում և այլն։ Կամ՝ Դու հասկացար տագնապները իմ հոգու (ՎՏ)։ Հասկացա՛ր դու տագնապները իմ հոգու (անհասկանալի չմնաց), Ի՛մ հոգու տագնապները դու հասկացար (ո՛չ մի ուրիշի), Տագնապնե՛ր իմ հոգու դու հասկացար (ոչ ուրիշ բան), Դու իմ հոգու տագնապները հասկացար, դու տագնապները իմ հոգու հասկացար, հասկացար իմ հոգու տագնապները դու և այլն։ Գետակի վրա թեքվել էր ուռին (ԱՒ) նախադասության տարբերակները կլինեն՝ Թեքվե՛լ էր ուռին գետակի վրա (ոչ թե ուղղաձիգ էր), գետակի՛ վրա էր թեքվել ուռին (ոչ ուրիշ բանի), ուռի՛ն էր թեքվել գետակի վրա (ոչ մի ուրիշը), ուռին թեքվե՛լ էր գետակի վրա (ոչ թե ուղղաձիգ էր) և այլն։

— բ) Շրջուն շարադասության պատճառ կարող է լինել նաև բանաստեղծության հանգը, երաժշտականությունը։ Օրինակ՝

Հարդագողի ճամփորդներ ենք մենք երկու,
Եւ սիրել ենք տրամությունը մեր հոգու (ԵՋ)։

Այստեղ շրջուն շարադասությունը երկու և հոգու բառերով հանգ ստեղծելու համար է։ Երկուսն էլ, թեև որոշիչներ են, լրացյալներից հետո են ընկել, փոխանակ առաջ ընկնելու։ Այս նույն հանգի համար Տերյանը գրում է.

Կնստեմ, անվերջ, կնստեմ մենակ,
Դու կփարվես ինձ թևերով ճկուն,
Քնքուշ կգգվես հույս ու հիշատակ,
Կպարզես մեղմիկ ցոլքն իմ հոգուն։

Այստեղ էլ մենակ և ճկուն բառերը շրջուն շարադասությամբ հանգ են ստեղծել հիշատակ և հոգուն բառերի հետ։

Արձակ ստեղծագործություններում նույնպես երբեմն շրջումով հեղինակները բանաստեղծական են դարձնում իրենց խոսքը։ Այդ միջոցին է դիմում, օրինակ, Ակսել Բակունցը, որի պատմվածքներում հաճախ կարելի է հանդիպել շրջունության։ Ինչպես՝ Գյուլբահարն այրի, գիշերին անլուսին, միրուքը՝ մեջն սպիտակ, Դրմբոն նահապետական, օրորվում էին եղեգները, ծփում են դրոշակները և այլն։

գ) Շրջուն շարադասություն է ստացվում նաև հավելադրությամբ։ Այս դեպքում շեշտի տակ եղած բառը դրվում է նախադասության սկզբում, նրան հաջորդում են եմ բայի ձևերը, որոնք կազմում են մի հավելադրական նախադասություն, սրան էլ հաջորդում է նախադասությունը՝ որ հարաբերականով կապակցված։ Օրինակ՝ Ես եմ, որ համբերում եմ։ Վաղուց է, որ չեմ տեսել։ Արամն էր, որ ձեռք բերեց։

Սիրտ էր, որ տրոփում էր։ Ոտքեր էին, որ խառնվում էին։ Մարդ էր, որ գալիս էր և այլն։

Երբեմն այս նախադասությամբ նշվում է առարկայի ու գործողության բազմակիություն։ Օրինակ՝ Գլխարկ էր, որ թռչում էր, փայտ էր, որ կոտրվում էր սրա-նրա գլխին։ Սիրան էր, որ թափվում էր քամուց և այլն։

Շրջումի կարիք է զգացվում նաև երբ նախադասության համադաս (բազմակի) անդամները շատ են լինում, և կուտակումից խուսափելու համար նրանց մի մասը տարվում է լրացյալից հետո։ Օրինակ՝ Լուսամփոփի պես աղջիկ, ատվածամոր աչքերով, Կապույտ աղջիկ ակաթի ու կաթի պես նոգեթով (ԵՉ)։ Նույն վայրկյանին իր վրա հառած տեսավ մի զույգ աչքեր, այնքան գեղեցիկ և, միևնույն ժամանակ, այնքան երկյուղալի։ Լսվեց օրիորդի լուրջ, դողդողացող ձայնը, լի հոգեկան վրդովմունքով։ — Տեսնո՞ւմ եք այդ մթին բուրգերը իրենց սուր ու եռանկյունի գագաթներով (ԱՇ)։

Այս ընդհանուր տեղեկությունից հետո անցնենք նախադասության առանձին միավորների շարադասությանը։

Ենթակայի շարադասությունը։ Ենթական գերազանցապես դրվում է ստորոգյալից առաջ։ Օրինակ՝ Ես կանգնած եմ վայրի ժայռի կատարին։ Լույսերը մեռան։ Մութը սառնաթև գրկեց ամեն ինչ։ Նա իր բոցերով այրեց ու գնաց (ՎՏ) և այլն։ Եթե ենթական ունի հատկացուցիչ, որոշիչ, նախ դրվում է հատկացուցիչը, հետո որոշիչը, ապա՝ ենթական։ Օրինակ՝ Հորեղբոր միակ որդին ռազմաճակատում էր։ Շրջկոոպի նոր նախագահը իրեն առավոտյան կանչելու է (ՄԳ)։ Այդ արքայակերպ վերջին ճաիրգու բոցե արցունքներն այրեցին հրնամյա այդ բերդի պատերը։ Քաղաքային խորհրդի համարյա բոլոր անդամները բացակայում էին (ԵՉ)։

Որոշ կառույցներում, երբ ենթական և ուղիղ խնդիրը միևնույն ձևով են արտահայտված լինում, ենթական միշտ առաջ է դրվում։ Այդ նախադասությունները շատ քիչ են հանդիպում։ Դրանցից են՝ Կեցությունը որոշում է գիտակցությունը, Հոգեկանը որոշում է գործելակերպը և այլն։ Թյուրիմացությունից խուսափելու համար շեշտը դնում են ենթակայի վրա, բայ-ստորոգյալը առնում են շրջուն շարադասությամբ՝ Կեցությունն է որոշում գիտակցությունը, Հոգեկանն է որոշում գործելակերպը։

Հարցահարաբերական դերանուններով արտահայտված ենթականները, իբրև կանոն, միշտ ստորոգյալից առաջ են դրվում։ Օրինակ՝ Ո՞վ է անվերջ հեծեծում, Ո՞վ է կանչում այսպես ուշ։ Թումանյանի պալատում ով որ քեֆի չի նստել, նա չի տեսել դեռ խնդում, աշխարհ չի տեսել։ Ո՞վ է կանգնել պաշտպան երկրին իմ ավեր, Ո՞վ է թարգման մեր դարավոր տանջանքին (ՎՏ)։ Ո՞վ էր խղճացել նրան և տեղ տվել

մի հրմնարկի արխիվում (Ա.բ)։ Ո՞վ քեզ ծեծեց, Մարո ջան (ՀԹ)։ Նա շատ էր ծույլ, որը նրան հասցրեց աղքատության։ Գյուղացիները, որոնք խոտ էին հնձում, զարմացան՝ այդ տեսնելով։

Ենթական նոտադաս է լինում, եթե հարաբերյալ է իրեն հաջորդող որ հարաբերական դերանվան։ Օրինակ՝ Տուն էր եկել այն մարդը, որին չէինք սպասում։ Արտը հնձում էր հորեղբայրս, որին ես շատ էի սիրում։ Այս շենքը նախագծել է այն ճարտարապետը, որն ինձ համար շատ թանկ է։ Եթե այս նախադասությունն արտահայտենք սովորական շարադասությամբ՝ այն ճարտարապետը նախագծել է այս շենքը, որն ինձ համար շատ թանկ է, որ հարաբերականը կվերագրվի շենք գոյականին, կփոխվի իմաստը։ Այս նույն պատճառով շրջուն է՝ Այս գիրքը գրել է իմ ընկերը, որը շատ է սիրված։ Սովորական շարադասության դեպքում կփոխվի բովանդակությունը՝ իմ ընկերը գրել է այս գիրքը, որը շատ սիրված է, այս դեպքում գիրքն է սիրված։

Ենթական նախադաս է դրվում, երբ բաղադրյալ ստորոգյալի հանգույցը զեղչված է լինում, սա պարտադիր է։ Օրինակ՝ Սա գիրք է, սա՝ մատիտ, իսկ սա՝ գրիչ։ Հայրը ուսուցիչ է, եղբայրը՝ ուսանող, իսկ մայրը՝ տնային տնտեսուհի։

Հեղինակային խոսքում ենթական նոտադաս է լինում, եթե այն ընկած է ուղղակի խոսքի մեջ կամ նրանից հետո։ Օրինակ՝ — Դե բավական է, Եվա,— աղաղակեց Աշխենը։ — Դու գնո՞ւմ ես,— հարցրեց նա կամաց։ — Լսիր, Եվա,— շարունակեց նա,— քեզնից այլևս չեմ կարող թաքցնել (ՆԴ)։ — Հե՛յ գիտի,— ասում է Խաչիկը,— բա ամառ չլինե՞ր, էս ջրի համար կոիվ տային։ — Ա՛յ պառավ,— ձայն է տալիս Ավագ պապը,— էդ անտերի մոռոցը կորի, հոգիս կերավ (ՄԳ)։

Մանոթագր.—Վերջին շրջանում որոշ գրողներ այս դեպքում էլ ենթական առաջ են գցում։ Օրինակ՝ — Առանց փորձել առել բերել է,— կինը շարունակում է։ — Ասի փորձել եմ էլի,— Խաչիկը զայրանում է։ — Հա՛, էլի՛, փոխեցիր,— նազլուն է։ — Մաղում է, շատ է մաղում,— հայացքը ջրին, ժորան գլուխը տանում-բերում է (ՄԳ)։ — Այդ ո՞ւմ եք բրիգադիր դարձնում,— Վալոն վեր է թռչում տեղից (Սգր)։

Ստորոգյալի շարադասությունը։ Ինչպես ասվեց վերևում, ստորոգյալը սովորական շարադասությամբ դրվում է ենթակայից հետո։ Ինչպես՝ Օրիորդ Մարին հետո խմում է սուրճը։ Հերմինեի հայրը երեք օր պահեց իրեն։ Այդ սև ամպերը ձորափին միանում են և քարափի գլխից թռչում ձորը (ՄԳ)։ Գետը վարարել է և այլն։ Սովորական շարադասությամբ եմ բայի ձևերն ընկնում են դերբայից ու ստորոգելիից հետո։ Օրինակ՝ Աշխարհը նորից խորունկ է և լայն (ՎՏ)։ Աշխարհն անգութ և ահավոր է (ՎՏ)։ Մոայլ սպան լուռ շրջում էր աջ ու ձախ (ՎՏ)։ Ամպերը պսակ են կազմել սարի գագաթին։ Գետը խրշշում է, քամին առնում տանում է այն (Սգր)։

Սակայն երբ ենթական տրամաբանական շեշտով շեշտվում է, եմ բայի ձևերը դերբայից և վերադիրից առաջ են ընկնում։ Օրինակ՝ Ծը-պիտներով խաղացկոն երգն է ձուլվել իմ հոգուն (ՎՏ)։ Մռայլ գիշերն է լռում։ Գիշերն իր ծովն է փռում (ՎՏ)։ Թե ես եմ արդեն աշխարհից աշխարհ շռայլել հոգիս (ՎՏ)։ Բաբելոնն է եղել մեր ախոյանը, տես (ՎՏ)։ Աղջիկը խելոք է, տղան է շարաճճի։ Աշունն է մրգով առատ (Սգր) և այլն։

Եթե կառույցը հարաբերական դերանունով է, շարադասությունը սովորական է, իսկ եթե այն փոխվում է հարցականի, շարադասությունը փոխվում է շրջունի։ Այսպես՝ Երբ ծովն ուժգին ալիկոծվում է— Ե՞րբ է ծովն ուժգին ալիկոծվում։ Լավ է նա, ում գիրքը մաքուր է— Ո՞ւմ գիրքն է մաքուր։ Ընկանք մի դաշտ, որտեղ ծառերը կանաչ էին— Ո՞րտեղ էին ծառերը կանաչ։ Ինչը գեղեցիկ է, շոյում է մարդուն— Ի՞նչն է գեղեցիկ։ Ով խելացի է...ո՞վ է խելացի։ Երբ համբուրում ես... Ե՞րբ ես համբուրում։ Ով գեղեցիկ է...ո՞վ է գեղեցիկ և այլն։

Ժխտական նախադասություններում եմ բայը դերբայից առաջ է ընկնում, դա օրենք է։ Օրինակ՝ Փախչելու եմ,— ասացի ես,— չեմ կանգնելու։ Այնտեղ զինվորներ չեն եղել (ՀրՄ)։ Ես չեմ հիշում ե՞րբ և ո՞ւր հանդիպեցի քեզ։ Գիտեմ, գիտեմ այս աղոտ երկրում քեզ չեմ գտնելու (ՎՏ)։ Զէր դադարում պատյանի մեջ։ Եթե բաղադրյալ ստորոգյալ է, եմ-ի ժխտական ձևերը մնում են ետադաս։ Ինչպես՝ Նա խելոք է—խելոք չէ։ Ես երգիչ եմ—ես երգիչ չեմ։ Ուրախ եմ—ուրախ չեմ։

Եթե ստորոգյալը տրամաբանական շեշտի հետևանքով ընկել է նախադասության սկիզբը, օժանդակ բայը հաջորդում է դերբային։ Նախադասությունը օժանդակ բայով չի սկսվի։ Այսպես՝ Լսե՞լ ես արդյոք այս երգը քնքուշ։ Այրում են սիրտս անբարբառ երգեր։ Ստվերում են սրտիդ գաղտնիքները սիրուն (ՎՏ)։

Հարադրավոր բարդությամբ արտահայտված ստորոգյալների շարադասությունը կայուն է. նախ դրվում է անվանական մասը, ապա՝ բայական, ըստ որում բայական մասի օժանդակ բայը շրջումով, դերբայից առաջ է ընկնում։ Օրինակ՝ ծափ է տալիս, պար է գալիս, ման է գալիս, աչքի է ընկնում, աչքից ընկավ, աչքի ընկավ, եռ է գալիս, շուռ է տալիս, պտույտ է գալիս և այլն։

Սակայն եմ բայը այս կառույցներում էլ կարող է սովորական շարադասությամբ լինել, ինչպես՝ աչքը ծակ է, աչքից ընկել է, աչքը վախեցել է, ձեռուստից ընկել է, դվխից հանել է, բանը բանից անցել է և այլն։

Նախադասության մեջ եմ բայն առհասարակ ձգտում է դեպի տրամաբանական շեշտ ունեցող անդամը, ինչ պաշտոն էլ այդ անդամն ունենա։ Այսպես՝ Երեխան կաթ է խմում։ Եղբայրը շախմատ է խաղում։ Նա արագ է վազում։ Դեռ երեկ էր այդ մասին նախազգուշացրել։ Ինքնաթիռով է եկել։ Զուկը շրում է ապրում։ Նա վախից է հիվանդացել։ Պապիկը նախ թոռնիկով է ուրախանում։ Փողոցն է փոշոտ։ Գլխարկն է նոր և այլն։

Երկրորդական բաղադրյալ ժամանակներով արտահայտված ստորոգյալներում դերբայը կանոնավոր կերպով նախադաս է լինում, ընդան հաջորդում է եմ բայը, իսկ սրան՝ լինել բայի ձևերը։ Օրինակ՝ Այս մարդը երկու ձուկը մի թավում խաշելիս է լինում։ Դու մի ասի, մարդը անից փախած է լինում։ Հայրը հանդը գնալու է լինում։ Աղմուկի ժամանակ մարդը գնացած է եղել և այլն։ Եթե այս բայերին էլ նախորդի տրամաբանական շեշտը, եմ բայը դերբայից առաջ կընկնի, ինչպես մյուս դեպքերում։ Այսպես՝ Այդտեղ հայրն է աշխատելիս եղել։ Շենքն են շարելիս եղել։ Տանն են նստած եղել։ Հայրը հանդն է գնալու լինում։ Մարդկանցից է փախած լինում։ Նա միայն մի վեպ է կարդացած լինում։

Թող, պիտի բառերը սովորական շարադասությամբ բայից առաջ են դրվում։ Օրինակ՝ Թող իմ աչքերը լույսից կուրանան, թող սիրտս լցվի արևի բոցով (ՎՏ)։ Պիտի ջրի գնար, պիտի փայտ բերեր, պիտի օջախը վառեր (ՎԹ)։ Թող արև ծագի և այլն։

Սակայն երբեմն (բանաստեղծական խոսքում) սրանք նույնպես ետադաս են լինում։ Ինչպես՝ Աշուղ Սայաթ-Նովի նման ես երգ ու տաղ պիտի ասեմ, Երգեմ պիտի ու սրտի խաղ պիտի ասեմ։ Քանդեն պիտի ու ավերեն, տեղը փոշի պիտի փռեն, Հաղարամյա քաղաքը այդ քանդեն պիտի ու ավերեն։ Այրեն պիտի խելագարված, պիտի պարեն հրդեհներում (ԵՉ)։ Ե՞րգ ես ուզում, լինի թող, աշխատա՞նք՝ լինի թող։

Որոշչի և հատկացուցչի տեղը։ Որոշիչը և հատկացուցիչը սովորական շարադասությամբ դրվում են իրենց լրացյալներից առաջ։ Օրինակ՝ Մյուս օրը Շողերը նրան տարավ կոլխոզի արտը։ Նա բռնեց Աղունի երկար ու հաստ հյուսերից (ՀՄ)։ Արձակ դաշտերի ամայության մեջ նա մեղմ շշնջաց։ Տխուր երեկոն գարկել է վրան։ Փակ են քո սրտի հեռուներն իմ դեմ։ Կա իմ հոգու մեջ մի անհագ ծարավ (ՎՏ)։ Եթե լրացյալը ունի և՛ հատկացուցիչ, և՛ որոշիչ լրացումներ, նախ դրվում է հատկացուցիչը, ապա որոշիչը, որպեսզի որոշիչը հատկացուցչին չվերագրվի։ Օրինակ՝ Գետի անուշ խշշոցը նինջ էր բերում։ Նայում եմ գրքի նկարազարդ էջերին։ Մեզ է մոտենում դպրոցի անվանի դիրեկտորը։ Երևաց սարի կանաչ կատարը։ Եթե լրացյալ գոյականն ունի հատկացուցիչ և մեկից ավելի որոշիչներ՝ արտահայտված ցուցական դերանունով, թվականով ու ածականով, ապա դրվում է նախ հատկացուցիչը, ապա՝ ցուցական, թվական և ածական որոշիչները։ Այսպես՝ Դասարանի այս երեք խելոք երեխաներն էլ գերազանցիկներ են։ Մեր այս երեք կանաչ ծառերը դեռ չեն ծաղկել։ Մեր

խաղաթի այս երեք ֆիանալի կառույցները մրցանակի արժանացան։ Մեր նախկին փողոցի այն երկու հին, փոքրիկ տնակների տեղում հիմա բարձրացել է ճամալսարանի երկու հիանալի բնակելի շենքը և այլն։

Եթե որոշիչներն արտահայտված են հարաբերական և որակական ածականներով, նախ դրվում է հարաբերական ածականը, ապա՝ որակականը։ Այսպես՝ Քարե ամուր շենք, դպրոցական հետաքրքիր կյանք, արծաթե բաճակ մատանի և այլն։

Գոյականով արտահայտված որոշիչը գերազանցապես նախադաս է լինում։ Ինչպես՝ կաշվից վերարկու թանկ է։ Երեխան բռնով փլավ է սիրում։ Մեզ մոտեցավ ըեղ ու մորուքով մի անծանոթ։ Սպիտակ վերարկուով տիկինը դիմեց մեզ։

Հատկացուցիչը երբեմն ետադաս է դրվում, եթե հարաբերյալ է, և նրան հաջորդում է հարաբերական դերանունը։ Ինչպես՝ Մենք բանվորներն ենք այն գործարանների, որոնք հայտնի են քաղաքում։ Սրբանք ստեղծագործությունն են այն նկարիչի, որը հայտնի է մեզանում։ Սա մասնիկն է այն ձեռագրի, որ հնագույն է։

Ժամանակակից հայերենում բացահայտիչը միշտ դրվում է բացահայտյալից հետո, դա կայուն օրենք է։ Ինչպես՝ Մեր անվանի քընարերգուները՝ Դուրյանը, Մեծարենցը, Իսահակյանը, Տերյանը և ուրիշներ միշտ էլ կմնան մեր ժողովրդի սրտում։

Բայական լրացումների շարադասությունը։ Բայական լրացումների շարադասությունն անհամեմատ ազատ է։ Խընդիրներն ու պարագաները կարող են բայից առաջ էլ դրվել, հետո էլ։ Օրինակ՝ Մարդիկ սիրում են այսպիսի եղանակ։ Գիրքը նա վերցրեց սեղանի վրայից։ Եղբորից նամակ էր ստացել։ Կրթություն էր ստացվել մինիստրից։ Մի անգամ եմ մահ տեսել։ Մի անգամ հիվանդին տեսա։

Խնդիրներն ու պարագաները երբեմն տրամաբանական շեշտ ունենալով՝ պարտադիր կերպով առաջ են դրվում բայից, ինչպես՝ Հարցրու քո խղճին—քո խղճին հարցրու, նա գնաց գյուղ—գյուղ գնաց նա։ Մատիտով նկարում էր—նկարում էր մատիտով։ Իր բախտից դժգոհ էր—դժգոհ էր իր բախտից։ Գնաց տուն—տուն գնաց և այլն։

Նկատելի է, որ ուղիղ խնդիրն ավելի շատ նախադաս է լինում, հանգման, մատուցման անուղղակի խնդիրները՝ ետադաս։ Կողմնակի խնդիրներն ու պարագաները գերազանցապես նախադաս են լինում, գերբայից առաջ են դրվում։ Այսպես՝ Երեկ արտը ջրելիս մրսեց (հարմար չէ՝ ջրելիս արտը), կամ՝ Նոր տունը վերանորոգելուց հետո կահույք գնեց (հարմար չէ՝ վերանորոգելուց հետո նոր տունը), Գիրքը ձեռքին բռնած՝ մոտեցավ (բայց ոչ՝ բռնած ձեռքին գիրքը), Տեսա անցյալ տարի երգող դերասանին (բայց ոչ՝ երգող անցյալ տարի), այս գիրքը գրող վիպասանը... և ոչ՝ գրող այս գիրքը։ Աթոռին նստած

երեխան ծիծաղում էր։ Այստեղ աթոռին նստած կապակցությունը որոշիչ է, եթե փոխենք շարադասությունը՝ նստած աթոռին, նստած դերբայը որոշիչ կհասկացվի աթոռին բառի համար, կամ ձևի պարագա ծիծաղում էր բայի։

Այս բոլոր ասվածից պիտի եզրակացնել, որ ժամանակակից հայերենի շարադասությունը որքան էլ ազատ ու շարժական է, այնուամենայնիվ որոշ սահմանափակումներ ունի, որ բխում է հնչերանգից ու շարահյուսական միջավայրից։

Կայուն է բաղադրյալ անունների բաղադրիչների շարադասությունը, ինչպես՝ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշան, սովետական բանակ, սոցիալիստական մրցություն, Երևանի պետական համալսարան, կոմունիստական աշխատանքի բրիգադ։

Կայուն են՝ խոնջի մոտք, միով բանիվ, տարին բոլոր, առ ի չգոյե և այլ քարացած ձևերը։

Սովորաբար կայուն են կապերի շարադասությունը. նախադրությունները դրվում են կապվող բառից առաջ, ետադրությունները՝ հետո։

Սակայն մի քանի կապեր (բացի, շնորհիվ, համաձայն, փոխանակ (փոխարեն), հանդեպ) ունեն ազատ, շարժական շարադասություն։ Օրինակ՝ Մոռանում է ամեն ինչ, ամենքին, բացի զավակներից (ԱՇ)։ Քեզնից բացի ուրիշ յար չունեմ։ Եթե բացի կապը նախադաս է, խընդիրը դրվում է թե՛ ուղղական, թե՛ բացառական հոլովով (բացի դա, բացի դրանից, բացի գիրքը, բացի գրքից), իսկ եթե ետադաս է, խընդիրը դրվում է միայն բացառական հոլովով (դրանից բացի, գրքից բացի)։ Օրինակներ մյուս կապերից. Տիկին Գոհարը ծնողների շնորհիվ ընտիր կրթություն էր ստացել (Մ)։ Շնորհիվ իր բարեխղճության մեծ հարգանք էր վայելում։ Աշակերտուհին պիտի կրթվի ու զարգանա մոր ցանկությունների համաձայն։ Նա ազատվեց աշխատանքից համաձայն իր դիմումի։ Մանկամարդ աղջիկը նստել էր մոր հանդեպ։ Այնտեղ մարդիկ հավատ ունեն աշխատող մարդու հանդեպ։ Բոլորը թշնամացել են հանդեպ իմը։ Դա մոր պարտքն է հանդեպ որդին (ԱՇ) և այլն։ Եթե հանդեպ կապը հաջորդում է խնդրին, վերջինս դրվում է տրական (սեռական) հոլովով (ընկերոջ հանդեպ, պարտականության հանդեպ), իսկ եթե նախորդում է, խնդիրը ուղղական հոլովով է դրվում (հանդեպ ընկերը, դպրոցը, գիրքը)։ Օրինակներ մյուս կապերից՝ Հակառակ խմբի թախանձանքներին, Սմբատը մնաց ծովափին։ Նա ստիպված էր գործել իր սկզբունքներին հակառակ (ԱՇ)։ Հորեղբայրը, փոխանակ շնորհակալության, հանդիպում է մերձավորի զժգոհությանը։ Եվ այդ բոլորը շնորհակալության փոխարեն (ԱՇ)։ Սայլի փոխարեն սայլվորն է ճոռում (առած)։

Ժամանակակից հայերենում շարադասությունը, ինչպես ասվել է,

մի երկու դեպքում ստանում է քերականական արժեք։ Դա ամենից առաջ վերաբերում է բացահայտչի շարադասությանը, որ կայուն կերպով նստադաս է, եթե փոխենք նախադաս, կփոխվի նրա պաշտոնը, կդառնա բացահայտյալ։ Եթե ենթական և ուղիղ խնդիրը ուղիղ ձևով ու որոշյալ առումով են, ենթական որոշվում է իր տեղով. դրվում է խնդրից առաջ, ինչպես՝ Մի մարդ տեսավ մի երեխա։

Մի քանի բառերի խոսքիմասային պատկանելությունը որոշվում է նախադասության մեջ (շարակարգում) նրանց գրված տեղով, դիրքով։ Օրինակ՝ Մի՞թե դու պիտի վառես նոր փափագ (ՎՏ) նախադասության նոր բառը որոշիչ է, ածական անուն, իսկ եթե այն դնենք վառես բայի վրա (Մի՞թե դու պիտի նոր վառես փափագ), կդառնա ժամանակի պարագա, մակբայ։ Կամ՝ Վարպետը հետո աշխատանքից էր պատմում և Վարպետը աշխատանքից հետո էր պատմում։ Առաջ աշխատանքից չէին խոսում և Աշխատանքից առաջ չէին խոսում։ Այս երկու օրինակում հետո և առաջ բառերը կիրառված են նախ իբրև մակբայ, ապա իբրև կապ։ Կամ՝ Նա նոր հագուստ է գնել և Նա նոր է գնել հագուստ։ Առաջին դեպքում նորը ածական է, որոշիչ, երկրորդ դեպքում՝ մակբայ, ժամանակի պարագա։

ՀՈԼՈՎՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Հոլովների շարահյուսական կիրառություններին մենք ծանոթացել ենք բառակապակցությունները, նախադասության անդամները քննելիս։ Այստեղ մեր նպատակն է ներկայացնել առանձին հոլովների կիրառությունները ի մի բերված, կենտրոնացված ձևով։ Սա կլինի հոլովների մասին առածի մի տեսակ ընդհանրացում։

Հոլովներով արտահայտվում են բառերի միջև եղած զանազան հարաբերությունները, բառի գործառությունը, նրա պաշտոնը նախադասության մեջ։ Հոլովն ունի ձև և իմաստ, առանց ձևի հոլով չկա։ Հակառակ բառերի միջև եղած հարաբերությունների, հոլովական ձևերը սահմանափակ են։ Ժամանակակից արևելահայերենում, ինչպես տեսանք ձևաբանությունն ուսումնասիրելիս, կա գոյականի հոլովական հինգ ձև, ուստի հինգ[64] հոլով՝ ուղղական, տրական, բացառական, գործիական և ներգոյական։ Քանի որ բառերի միմյանց հետ ունեցած հարաբերությունները շատ են ու բազմազան, ուստի միևնույն հոլովին մի քանի գործառություններ (պաշտոն) են բաժին ընկնում, մի քանի կիրառություններ։ Լեզվի մեջ ինչպես որ միևնույն ձևով կարող են արտահայտվել քերականական զանազան իմաստներ, պաշտոններ, այնպես էլ միևնույն իմաստը, պաշտոնը կարող է արտահայտվել զանազան ձևերով։ Օրինակ՝ միևնույն բացառական հոլովով արտահայտվում են անջատման, ներգործման, բաղդատման անուղղակի խնդիրները, տեղի, ժամանակի, պատճառի պարագաները, ստորոգելին, որոշիչը։ Միևնույն տեղի պարագան հանդես է գալիս գոյականի հոլովներով, մակբայներով, կապային կապակցություններով։ Նախադասության մեջ հոլովով արտահայտված պաշտոնները հոլովի կիրառություններն են- գործառությունները։

Այժմ տեսնենք, թե ժամանակակից արևելահայերենում հոլովները ինչ գործառություններ, պաշտոններ ունեն նախադասության մեջ։

Ուղղական (հայցական)։ Ուղղական հոլովով արտահայտվում են՝ 1. ենթական. օրինակ՝ Կախարդական մի շղթա կա երկնքում։ Մաղիկները այդ սուրբ շղթով իմ սիրտը լցրին (ՎՏ)։ Գիշերն եկավ, զով հովն ընկավ, Աստղանմ լուսնին ձայն տվին (ԱԻ)։ Մարկոս աղա Ալիմյանը ծանր հիվանդ էր (ԱՇ)։

2. Ստորոգելին (ստորոգելիական վերադիր). օրինակ՝ Կապույտ գլխով, կանաչ ոտով ես ծաղիկ եմ անուշ հոտով (ԳԴ)։ Ա՜խ, այդ ինչո՞ւ եռազ էր (ՍՇ)։ Մանուկներ ենք մենք կորած (ՎՏ)։ Սիրտս երկինք է։ Հրաշք է դառնում աշխարհն ինձ նորից։ Ես երգիչ եմ, երկնի թիթեռ (ԱԻ)։ Հիմա նա բոլշևիկ է դարձել (ԱԻ)։ Ռազմաճակատում համարձակ մարտիկ էր համարվում Արամը (Սգր)։

3. Կողմնակի ենթական. օրինակ՝ Արևը մայր մտնելիս մենք գյուղ հասանք։ Անտառի լռությունն զգալի էր փոքրիկը դադարելուց հետո։ Մառերը կանաչելուն դեռ շատ ժամանակ կար։ Ցանկապատը քանդվելուց հետո անասունների մուտքն ազատ էր (Մ)։

4. Որոշիչը. օրինակ՝ Արև բախտի երազ ես տեսնում։ Եվ անուշ լալիս իմ անուրջ բախտից։ Եվ վարդ ամպերի հրդեհն է դողում (ՎՏ)։ Եվ նոր վրեժով զարկեի հավետ։ Լույս երեսին կարոտ եմ։ Մայր իմ ժողովուրդ, դեպի քեզ կգամ։ Թուր ոսկի աստղի պես (ԱԻ)։ Ցով բարություն, շնորհք ու տեր Ճոխ պարգև եմ առել վերուստ (ՀԹ)։

Ուղղական (հայցական) հոլովով են արտահայտվում նաև դիմավոր և անդեմ բայերի՝

1. Ուղիղ խնդիրը. ա) եթե իրի անուն է։ Օրինակ՝ Գանձեր ունեմ անտակ, անծեր (ՀԹ)։ Այդ տնտեսությունը կոչված է հատապտուղներ աճեցնելու։ Քամին ավլում էր ճանապարհի վրայի ձյունը («Գարուն»)։ Գեղ կանգնի, գերան կկոտրի (առած)։ Եկեք համբուրեմ ճակատներդ ձեր, եթե հայրենի դաշտերն եք հերկել, եթե վայրենի մի դավ եք հերքել, եթե կարոտի մի ավ եք փրկել (ՀԿ)։ Նա նեռվից ազատելու, իրենով պատապարելու իր ձագուկը։ Դուրս պրծավ մեր կատուն, վեր թռցրեց փոքրիկ ճուտը (ՀԹ)։ Անհնարին է խոսել Մահարու մասին և չը-

[64] Անձնական դերանուններն ունեն նաև սեռական հոլով (իմ, քո, իր, մեր, ձեր և այլն)։

հիշել նրա կատակները, հումորը, ժպիտը (Սգր)։ բ) Եթե անձի անունն իրի առումով է գործածված։ Օրինակ՝ Յուրաքանչյուր ընտանիք իր բժիշկն ունի։ Խեղճ տղան ծնողներ չուներ, ուներ մի քույր։ Հիվանդի վիճակը ծանրացել էր, և որոշեցին բժիշկ կանչել։ Այստեղ բժիշկ հրավիրելն այնքան հեշտ չէր։ Իր կյանքում առաջին անգամ էր այդքան մոտիկից դեռասան ու բանասեղծ տեսնում («Գարուն»)։

2. Տեղի պարագան. օրինակ՝ Սրաֆիոն Գասպարիչը շտապեց Նախասենյակ (ԱՇ)։ Սկսեցինք իջնել մի խորանոր (Մ)։ Թոռը պապին դաշտ է տանում։ Նա թատրոն մտած անփորձ ուսանող էր։ Մայրն էր նրան դպրոց տանելու (Սգր)։ Նա տուն էր գալիս կարմիր բանակից (ՆՉ)։

3. Ժամանակի պարագան. օրինակ՝ Իրիկունները կնստեր դռան շեմին։ Գիշերը որսի գնալու համար առավոտյան զանգահարեց։ Կիրակի քիչ մարդ եկավ։ Երկուշաբթի ինձ զանգահարեցին (Սգր)։ Գիշերները ես քուն չեղա, արտասուքով լվացի (Մն)։ Տեսա օրերս Երևան ժամանած աշխարհահռչակ Վիլյամ Սարոյանին։ Գնացքը ցերեկն է գալիս (մամուլ)։

4. Նպատակի պարագան. օրինակ՝ Սաքուլին Թելեթ ուխտ տարան (դասագիրք)։ Վերադարձավ հարևան գյուղը նարսանիք գնացած եղբայրս։ Հունձ գնացածները եկան (Սգր)։ Ոչխարը բեր կիր (ՀԹ)։ Ու չեկավ նա տես (ՀԹ)։

5. Գնի, չափի պարագան. օրինակ՝ Խաղողի կիլոգրամն արժե ճիանունինգ կոպեկ։ Հացի կիլոգրամն արժե երեսուն կոպեկ։ Փշացավ մեքենան իննսուն կիլոմետր գնալով։ Մարդիկը շահեց՝ թռչելով երկու մետր ութսուն սանտիմետր։ Երկու ժամ անընդհատ վազում էր։ Մի ամբողջ օր քնեց (մամուլ)։ Կարգադրեց կես դյուժին շամպայնիա դրնել կառքը (ԱՇ)։ Զթի դինը մեկին երկու թանկացավ (ԱԲ)։

Ինչպես երևում է ընդգծված օրինակներից, ժամանակի, գնի, չափի, տարածության, հատաքանակի միավորները որոշիչի հետ միասին են դառնում նախադասության մեկ անդամ և պատասխանում են մեկ հարցի՝ ո՞ր, ինչքա՞ն, ե՞րբ, քանի՞ և այլն։

Տրական (սեռական) հոլով։ Այս հոլովով, առանց որոշիչ հոդի, անորոշ առումով (սեռական) արտահայտվում են գոյականի լրացումները։

1. Հատկացուցիչը. օրինակ՝ Ամենքն շտապում էին մահամերձ միլիոնատիրոջ տունը։ Հարձակվեց ամուսնու սառչող դիակի վրա (ԱՇ)։ Մշեցի մշակի համբերությունը հատավ։ Մի լրագրի աշխատակից էր։ Բազաղը Գարսոյի աշակերտն էր։ Հոգաբարձուների ընտրություն պիտի լինի (Մ)։ Մեր* տասը նրանց հարյուրին կհաղթի (մամուլ)։ Իր գրեթե բոլոր խաղերին Սայաթ-Նովան, մասամբ նաև հետագայում նրա որդին, կցել է բացատրություններ ու հրահանգներ։ Սայաթ-Նովայի ստեղծագործությունները հայ հանճարի ամենաինքնատիպ ու վառ դրսևորումներից են (ՊՀ)։ Պատին ժպտում էր մարշալի դիմանկարը («Գարուն»)։ Դա նրա զգացումների զեղումն էր (ԱՇ)։

2. Որոշիչ. օրինակ՝ Գինու և օղու բաժակները դատարկվեցին։ Գինու շշերի առաջին շարքը գլուխները տաքացրեց (ԱՇ)։ Դա անասունների ըմպանակն էր (Մ)։ Երեխան ճաշը թեյի գդալով է ուտում, մեծանա՝ նաշի գդալ կօգտագործի։ Սա զրոսանքի այգի չէ։ Հիմա կարի մեքենա չես ճարի՝ ձեռքի, թե ոտքի։ Գործարանն արտադրում է ձեռքի, գրպանի, սեղանի ու պատի գեղատես ժամացույցներ։ Անցյալ տարի խաղողի քաղը ժամանակին ավարտվեց։ Այսօրվա գործը վաղվան չեն գցի։ Հանգստի հիանալի վայր է Հրազդանի առափնյա այգին (մամուլ)։ Այլևս չկան մեր թաղի տղաները, ամեն մեկը մի տեղ սովորում կամ աշխատում է («Գարուն»)։

3. Կողմնակի ենթական. օրինակ՝ Ատածու պահած գառը գայլը չի ուտի։ Քամու բերածը քամին էլ կտանի (առած)։ Անծանոթի խոսելուց երևում էր, որ զարգացած մարդ էր։ Մինչև մեր այնտեղ հասնելը դեռ բավական ժամանակ կար։ Ձիերի սայթաքելն այնքան էլ անսպասելի չէր։ Ամպերի գոռալն ու անձրևի թափվելը մեկ եղավ (Մ)։

4. Կողմնակի ուղիղ խնդիրը. օրինակ՝ Ծառերի, խաղողի վազերի ժամանակին և ճիշտ էտելը բարձրացնում է պտղատվությունը։ Գյուղացին լավ գիտի ցորենի ժամանակին ցանելը, ջրելն ու հնձելը։ Նա չէր նկատել շան արձակելը։ Առաջին անգամ էր տեսնում մոտիկից արջի ու կապկի պարացնելը և այլն։

Սրանք, սակայն, սովորական ու տարածված կառույցներ չեն, մեկ-մեկ են պատահում։ Ընդունված են ուղղական հոլովով կառույցները՝ կովը կթելը, այգին քաղելը, արտը ջրելը, շախմատ խաղալը, ցորեն հնձելը և այլն։

Տրական հոլովով՝ որոշյալ կամ անորոշ առումով (այսինքն հոդով կամ անհոդ) արտահայտվում են բայական (անդեմ կամ դիմավոր) հետևյալ լրացումները.

1. Հանգման անուղղակի խնդիրը։ Այս անվանումը պայմանական է, ընդհանուր անվանում։ Տրականով խնդիրն արտահայտում է զանազան հարաբերություններ, որոնցից մեկի անվանումով էլ կոչվում են այդ խնդիրները։ Օրինակ՝ Պիտի սովորեի արժանավայել ծառայել այդ կոչմանը, պիտի վարժեցնեի ինձ զրկանքների, անձնվիրության։ Ես արժանանում էի նրա հետաքրքրությանը (Մ)։ Կարծես թե սիրո քնքուշ խոսք ասաց նիրհող դաշտերին (ՎՏ)։ Հորս վզին բևռ եմ, ապրում եմ նրա քրտինքի հաշվին (Ստև.)։ Լծված տերերի շառաչուն կառքին,

* Ընդգծված դերանունները բուն սեռական հոլովով են արտահայտված։

Անկում եք կարդում իմ նոր աշխարհին: Դավաճանեցին իր հանձնարին և իր գործին (ԾՁ)։

Տրականով այսպիսի խնդիր կարող են առնել նաև ածականները, ինչպես՝ դեպիին տեղյակ, տեսակետին անհարիր։ Մի մասը գեղջկուհիներին հատուկ ամաչկոտությամբ հավաքվեց ծառաստանի մի անկյունը (Մ)։ Բայանում գոյականները, ինչպես՝ հանդիպում ընկերոջը, պատերազմ պալատներին, խաղաղություն խրճիթներին, վերջ տառապանքներին և այլն։

2. Հանգման իմաստ ունի մատուցման անուղղակի խնդիրը. օրինակ՝ Պսակաձև կատարը մատնել է հողմերին: Գործը հանձնեց իր սաներին: Բաժակը վերադարձրեց ինձ (Մ)։ Ապին իր պատրաստած կշեռքը հանձնեց հարսին (Մարզ2)։ Կառավարությունը վաստակավոր ուսուցչի կոչում է շնորհել Մ. Մանուկյանին (մամուլ)։ Դա հարսին նվիրած մատանին էր։ Գյուղացիներն իրար հացը փոխ են տալիս, չեն վաճառում։ Ես նրան եմ վերադարձնում նամակը։ Ինձ առաջարկած աշխատանքը չեմ հավանում (ՍտԱլ)։ Ա՜խ, տվեք ինձ քաղցր մի քուն (ՀՀ)։

3. Ժամանակի պարագան. օրինակ՝ Տարին բոլոր քամի է արտաշնչում՝ գարնանը՝ հորոտ-մորոտի բուրմունքով, ամռանը՝ ուրցահոտով, ձմռանը՝ բուքուբորանով («Գարուն»)։ Անտառապահը մի գարունի տեսել է վարազի կմախքը։ Իրիկնադեմին Ավին տուն էր դառնում (ԱԲ)։ Եվ լուսաբացին, երբ հոգնած լինեք, թշնամուց խաբված, կանչեմ ձեզ, ճչամ՝ եղբայրնե՛ր, ելե՛ք։ Լուսաբացին նա բարձրացավ կախաղան (ՎՏ)։ Վարձը կալին է տալու (Մ)։ Ջսպասված ժամին եմ եկել (ՍտԱլ)։ Հարսանիքին չկարողացավ գալ, բայց զատկին եկավ։ Խաղողաքաղին երեխաներ էլ կային (մամուլ)։

4. Տեղի պարագան. օրինակ՝ Ավին շալակի դախը դրեց քարին և նստեց մի կոճղի: Տանը երևի սպասում էին արդեն։ Տան շեմին մի ժանգոտած նալ էին խփել (ԱԲ)։ Մատին մատանի չկար (Սգր)։ Ուսին ուսաշոր չկար։ Միտը թռավ գերանին, կանաչ խոտը բերանին (ՀԹ)։ Զորալանջին երգում էին սարյակները (Մ)։ Դեմքին կնճիռներ կան, մազերին մի շերտ սպիտակ (ՍտԱլ)։

5. Նպատակի պարագան. օրինակ՝ Պետոն ձիերը տարել էր արոտի (Մ)։ Գիշերը ոռսի են ելնում Մթնաձորի բնիկները։ Ավին նստեց մի քիչ շունչ առնելու (ԱԲ)։ — Ի՞նչ ես շտապում, կարծես կրակի ես եկել։ Պայքարի են ելել երկու աշխարհներ։ Վերադառնում էին ճնձի գնացած գյուղացիները (Սգր)։ Առաջներում սևանցիները Երևան էին գնում հիվանդին խնձոր գնելու, այսօր երևանցիներն են գնում Մարտունի՝ հյութալի խնձորի ու տանձի (մամուլ)։ Դպրոցականներին տարել էին խաղողաքաղի: Պիոներները եկել էին ողջունելու հերոսին։ Մայրը խանութ էր գնացել՝ կաթի ու ճացի (մամուլ)։

6. Չևի պարագան. օրինակ՝ Մեջքին պառկած չի կարելի կարդալ։ Մեջքին ընկավ արջը և թավալվում էր։ Օձը պոչին կանգնած՝ լեզու էր հանել։ Սպասում էր՝ ականջը ձայնի (Սգր)։

7. Ներգործման անուղղակի խնդիրը. օրինակ՝ Նվագի ձայնին հավաքվել էին երեխաները։ Նրա ճչոցին դուրս թափվեցին հարևանները։ Մեղրի հոտին հավաքվում են արջերը (Սգր)։

8. Շահի (օգտի կամ վնասի) անուղղակի խնդիրը[65]. օրինակ՝ Խաղը վերջացավ «Արարատի» օգտին: Խաղին նպաստում էր մարզիկների համերաշխությունը։ Վարպետին աշակերտում էին մի քանի երիտասարդներ։ Ժողովին նախագահում էր մեր օղակավարը (մամուլ)։ Մընում էր յարին ու չիկավ նա տես (ՀԹ)։ Մի՛ հավատա աղոթքին, բայց աղոթել իմացիր, ասածուն, թե մի ուրիշ բանի, այդ միևնույն է։ Մենք ասածո՞ւն ենք ծառայում, թե՞ երկրին (ՍտԱլ)։

9. Ստորոգելին (ստ. վերադիր). օրինակ՝ Նրա ականջը ձայնի էր։ Նրանք էլ մեր հավատին են։ Նա այդ կարծիքին է, իսկ դու ի՞նչ կարծիքի ես։ Ես էլ այդ մտքին եմ։ Դու ի՞նչ համոզմունքի ես։ Այդ մարդիկ ի՞նչ հավատի են, ի՞նչ դավանանքի (Սգր) և այլն։

10. Ուղիղ խնդիրը, եթե՝ ա) անձի անուն է, օրինակ՝ Ոչ ոք չի վշտացնում ինձ, ինձ ամենքն աշխատում են ուրախացնել (Մ)։ Կանանց դրգռելու համար առանձին շնորհք է հարկավոր։ Եվան տեսավ Աշխենին (ՆԴ)։ Նա արդեն մերկացնում էր խեղճին (ԱՇ)։ Ստորեն անընդհատ հովանավորում են մեզ (Մ)։ Զալիսեն էլ տեսավ Հասոյին, Զալիսեն էլ սիրեց Հասոյին (ՎՓ)։ Այդքան ժամանակ փոքրիկ Քրոջը տիրություն անող Դավուդին այսօր կանչել են ժողովրդաժին (ՄԳ)։ բ) Իրը իբրև անձ է գործածվում, անձի առումով՝ Ես քեզ սիրում եմ, այնքան եմ սիրում, որքան չի սիրում թիթեռը ճրագին, սոխակը վարդին, աշխարհն արևին և բույսը հողին (ՎՓ)։ Կովը բառաչելով հորթին էր կանչում։ Երկու թռչուն էին, երկուսին էլ բնից հանել, վանդակի մեջ էին մեծացրել։ Երկուսն էլ հիշեցին վանդակի կողքից սուրալով անցնող մեծ հրեշ թռչուններին ու նրանց անհագ, վայրենի հայացքները։ Հիշեցին մանավանդ խորամանկ կատվին (Սգր)։ Հասոն քարերին էր դողացնում, Սև-ջրի ալիքները հուզում, բնությունն էր քարացնում, գեփյուռին ողբացնում (ՎՓ)։

Ինչպես երևում է բերված օրինակներից, բայի հետ գործածված տրականը կարող է նաև անորոշ առումով լինել, ինչպես՝ մոտեցանք մի շենի, գնաց ջրի, նստել էր մի քարի, սիրում էր մի աղջկա: Ըստ որում որոշ կիրառություններում այս հոլովը միայն անորոշ առումով է լինում, ինչպես նպատակի, չափի պարագաների պաշտոնում (գնաց փայտի, հացը մի ռուբլու է գնել և այլն)։

---

65 Սրանք նույնպես կարելի է հանգման խնդիր համարել։

Բացառական հոլով: Այս հոլովով են արտահայտվում.

1. Անջատման անուղղակի խնդիրը. օրինակ՝ Երազում էր արևի լույսին մոտ լինել, ամպերի խոնավությունից հեռու կենալ և ճանճից միշտ ազատ մնալ (ՎՓ): Փախուստ էր տալիս նրա զրույցներից: Խուսափում էր նրա անունն արտասանելուց: Գյուղացին կղրկվի մի քանի խուրձերից (Մ): Հաբուդից շարունակ նամակ էր գալիս (ԱԲ): Ո՞ւր փախչեմ այսքան նայվածքներից: Բեթիից բաժանվեցի տխուր մտորումներով (ՍտԱլ): Նա չէր կարող զերծ մնալ ժամանակի երաժշտությունից, նրա ազդեցությունից անմասն մնալ: Հետագայում էլ նա հեռու չի մնում Կոմիտասից («Գարուն»): Մահարին ասում էր՝ այս ժըպիտը, հումորը, ես մարիցս եմ ժառանգել (Սգր): Առհասարակ հաստատակությունից խույս տալով՝ Շահյանը միշտ խույս էր տվել մանավանդ կանանց հաստատակությունից (ՆԴ):

2. Ներգործման անուղղակի խնդիրը. օրինակ՝ Նա շատ էր սիրված շրջապատից (մամուլ): Ու ջերմ իզձերս բախտից հալածված, ձեզ մոտ են թռչում հախուռն երամով (ՀԹ): Երբ քնած լինեք թշնամուց խաբված (ՎՏ): Թեթև համուց օրորվում էին դեղին հասկերը: Ամեն մի հարցում անայտ լինելով՝ սիրվում էր գործընկերներից (Սգր):

Ներգործման անուղղակի խնդիրը կրավորական սեռի խնդիրն է, միշտ լինում է կրավորական սեռի բայի հետ:

3. Վերաբերության անուղղակի խնդիրը. օրինակ՝ Երբ խոսում էին ծով ամբոխի մեջ վիշտ ու կարիքից (Հակ): Երբ խոսում էին գրականությունից, աչքերը փայլում էին (Սգր): Դուք ձեզնից պատմեք, ձեր or ու կյանքից (ՀԹ): Բա իմ որդուց մի լուր չիմանա՞մ: Ու մինչև այսօր լուր չկա նրանից (Սգր): Մենք մեր հին մայրաքաղաքների պատմությունից շատ քիչ բան գիտենք (ՍտԱլ):

4. Բաղդատման անուղղակի խնդիրը, որ կարող է գիտակցվել նաև իբրև ձևի, չափի պարագա: Օրինակ՝ Արշը ոռնաց առաջվանից էլ պինդ: Վեր թռավ կատվից ճարպիկ (ԱԲ): Մեղմիկը իհարկե սիրուն էր Բեթիից: Մայրս հորիցս շրջահայաց էր, ողջամիտ: Դու ումի՞ց ես լավ, քո արյունն ո՞ւմ արյունից է կարմիր: Սենն ինձնից գործունյա էր և աշխատանք ուներ (ՍտԱլ):

5. Սահմանափակման, մասնավորեցման անուղղակի խնդիրը. օրինակ՝ Լեզվից ճարպիկ, դատողությունից զուրկ էր նա: Արտաքինից բարի, ժպտացող այդ մարդը ներսից շատ չար ու չկամ մարդ էր: Կարդացել էր Գրիբոյեդովի «խելքից պատուհասը» (Սգր): Տղաներից մեկին կգրի իրենց շարքերում: Պետին տան առաջ հոսող առվակի ջրից մի երկու կից է անում, երեսը լվանում: Աղջիկներից յուրաքանչյուրն ապասում է իր հերթին (Մ): Մենք այդ խնձորից չունենք: Հանքավանի ջրից էին բերել, որից ես առաջին անգամ էի խմելու: Բժնիի ջրից շատ էի խմել: Կատարվեցին Կոմիտասի երգերից: Շիրվանզադեի երկերից

գրախանութներում չկան: Նա Տերյանի, Պարույր Սևակի բանաստեղծություններից ժամերով անգիր կասեր: Նկարչությունից, գծագրությունից «5» էր ստանում (մամուլ):

Ծանոթագր.—Որոշ քերականներ «Կատարվեցին Կոմիտասի երգերից» նախադասության երգերից (և նման) բացառականը համարում են մասնական ենթակա, իսկ «Այդ ջրից չեմ խմել» նախադասության ջրից (և նման) բացառականը՝ մասնական ուղիղ խնդիր: «Աղջիկներից յուրաքանչյուրը մի-մի ծաղիկ էր»: «Ընկերներից մեկը եկավ»: «Մեր հարևաններից Աշոտն է բժիշկ» և նման կառույցների բացառականը որոշ քերականներ համարում են որոշիչ, որոշ քերականներն էլ՝ ենթակայի բաղադրիչ[66]:

6. Պատճառի պարագան. օրինակ՝ Գերանները, օջախի ծխից սևացած, կախվել էին: Գոմերում տավարը տաքից թուլանում էր: Բաղին մոնչաց ցավից: Դրանից ամոան երկար օրերին Մինաձորում անթափանց խավար է լինում (ԱԲ): Անսահման զոչումից կրծոտում էր իր շրթունքները մինչև արյուն (ԱԲ): Շտապելուց թև են առել (ՀԹ): Վախից լեզուն կապ էր ընկել: Հիվանդությունից նիհարել էր (Սգր):

7. Հիմունքի պարագան. օրինակ՝ Ես ականջներից իմացա նրան, Նա իմ ճանկերից ճանաչեց ինձ (ԵՉ): Թերթի հոդվածից իմացանք, որ նա բժիշկ է: Բանից երևում է, որ մենք մի գյուղացի ենք (ՆԴ): Բանից պարզվում է, որ նրանք են դեմ եղել: Ես նրան ձայնից էի ճանաչում (մամուլ):

8. Տեղի պարագան. օրինակ՝ Այստեղից մեր առաջ տարածվում են ցորենի արտերը (Մ): Նոր էր վերադարձել ախտրավայրից: Գուրգեն Մահարու նախնիները սերում են Պարսկաստանից (Սգր): Ես հանում էի մեր հին գզրոցից գույնզգույն լաթեր ու սրմա: Գրում եմ Մոսկվայից: Նամակդ Բոստոնից գնացել է Լիտվա, Լիտվայից իջել է Մոսկվա և ինձ չգտնելով՝ Մոսկվայից բարձրացել է Երևան (ԳՄ): Մենությունն խավար զնդանից կրկին ես վերադարձա հզոր ու հպարտ (ՎՏ):

9. Ժամանակի պարագան. օրինակ՝ Խոհանոցի մոտ ընկած է մի սայլ՝ կոիվներից մնացած (ԲՀ): Երիտասարդ տարիներից ցանկություն եմ ունեցել թղթակցել (ԳՄ): Նրա հումորը մանկությունից է գալիս (Սգր): Պանդուխտ եմ, քույրիկ, մանուկ օրերից (ՀԹ): Անցյալ տարի նոյեմբերից սկսեց ձնել: Առավոտվանից բարակ անձրև էր մաղում: Այդ շորը հարսանիքից էր մնացել (Սգր):

10. Ստորոգելին. օրինակ՝ Նրա կոշիկները կտորից էին, և ոտքերը ճաքճքում էին անձրևաջրի մեջ (Սգր): Վառառվող սպասքը կավից է, ճենապակուց և հնաոճ: Հիմա ամենուրեք մահճակալները փայտից են:

[66] Ժամանակակից հայոց լեզու, հատ. 3, Շարահյուսություն:

Բայց այդ տան մահճակալը, միակ մահճակալը, երկաթից էր։ Նորակառույց պանելային շենքերը բետոնից են, քարից չեն։ Նրա վերարկուն կաշվից էր, բարակ կաշվից (մամուլ)։

11. Որոշիչը. օրինակ՝ Քանդեցին ցեխից ու աղյուսից հին տները և կառուցեցին քարից ու բետոնից նոր բարձրահարկ շենքեր (մամուլ)։ Երկու մահճակալ կա երկաթից, սպիտակ պղնձից ինքնաեռ, ափսեներ, բաժակներ հասարակ ապակուց (ԱԲ)։ Բժիշկը նրան խորհուրդ էր տալիս բրդից գուլպաներ հագնել։ Թղթից տոպրակը լդիմացավ ծանրությանը (Սգր)։

12. Զևի պարագան. օրինակ՝ Ես այդ լեզուն տակահան կանեմ արմատից (ԱՇ)։ Փոթորիկը ծառն արմատից պոկեց։ Շենքը ճիմից էր խախտուտ, ոչ թե վերևից։ Աշխատանքը ներքին օդակներից պիտի լավ հիմքերի վրա դնել։ Դա կողքից, դիմացից լավ է երևում։ Բացառական հոլովը այս գործառությամբ քիչ է հանդիպում, եղածներն էլ տեղի պարագայի երանգ ունեն, ինչպես՝ ծառը արմատից է սնվում, արմատից էլ չորանում է։ Այստեղ ընդգծված անդամը կարող է պատասխանել թե ինչպե՞ս հարցին և թե որտեղի՞ց հարցին (ինչպե՞ս է չորանում և որտեղի՞ց է չորանում)։

Գործիական ճոլով։ Գործիական հոլովով արտահայտվում են.

1. Միջոցի անուղղակի խնդիրը. օրինակ՝ Գալիս եմ, բայց ոչ ուրախ երգերով քո ծաղիկներին ծաղիկ ավելացնեմ, Այլ՝ դառն հեծության Քառաչանքներով էդ անդնդախոր ձորերդ լցնեմ։ Ծով է իմ վիշտն անափ ու խոր, լիքն ակունքով հազարավոր, իմ զայրույթը լիքն է սիրով, իմ գիշերը՝ լիքն աստղերով (ՀԹ)։ Եթե մահակներով կռիվ տայինք։ Լղար էր դարմանով պահած ձիու պես (ԱԲ)։ Մենք խոսքերով երգեմ քեզ։ Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին (ՎՏ)։ Մարդիկ իրարից տարբերվում են հենց բնավորությունքներով։ Ես մեքենայով եմ գնում աշխատանքի, որ ժամանակ չկորցնեմ (ՍամԼ)։ Ատամով ընկույզ չեն կոտրի և այլն։

2. Ներգործման անուղղակի խնդիրը. օրինակ՝ Տարիներ առաջ այդ վայրը ծածկված էր անտառով։ Արահետը հովանավորվում էր սաղարթախիտ ծառերով (ՎՓ)։ Նրա գերեզմանը վաղուց ծածկվել էր կանաչով։ Արեգակը մշուշով ծածկված լեռների ետևից յուր հրափայլ գունդը հանեց (Մ)։ Լեռներ, ներշնչված դարձյալ ձեզանով՝ թնդում է հոգիս աշխուժով լցված (ՀԹ)։ Սարեր ու ձորեր սպիտակ վերմակով ծածկվեցին (մամուլ)։

3. Ստորոգելին (ստ. վերադիր). օրինակ՝ Ճաշը մսով էր։ Հանգիստը խաղով էր։ Անծանոթը բեղումորուքով էր։ Կարկանդակը կարտոֆիլով էր։ Նախաճաշը մրգով, սուրճով ու քաղցրավենիքով էր։ Առաջ կաթը սերով էր, հիմա անսեր է (Սգր)։ Գինով եմ, գինով եմ ես էլ, Գինով եմ, թեթև, լեզվանի (ՎՏ)։

4. Որոշիչը. օրինակ՝ Մենք կարով թել խմեցինք (Մ)։ Հիմա էլ Մթնաձորում մուգ-կանաչ մաշկով խլեզներ կան։ Զորս լուսավոր սենյակ ունի, ապակեպատ փեղկերով (ԱԲ)։ Մի ուրու անցավ, մի գունատ աղջիկ ճերմակ շորերով (ՎՏ)։ Մեզ ձեթով ու լորով կարկանդակ տվեցին։ Հիմա տարածված է հավով ճաշը (Սգր)։

5. Տեղի պարագան. օրինակ՝ Մի խումբ մարդիկ անցնում էին ծովափով (ԱՇ)։ Մայր Արաքսի ափերով քայլամոլոր գնում եմ (ՌՊ)։ Դիմացի մայրով անցնում էր Մեղմիկը (ՍամԼ)։ Ամբողջ դահլիճով մի շշուկ անցավ։ Մի անբացատրելի դող անցավ նրա մարմնով («Գարուն»)։

6. Զևի ու միասնության պարագաները. օրինակ՝ Էն սև ծովում տառապելով լող է տալիս իմ հոգին։ Ու խավարն անհուն գգվանքով թեթև ծավալվեց շուրջս ու փովեց վրաս (ՀԹ)։ Վառ հավատով փառքերը մեր ավանդեցին որդոց որդի։ Մեր սուրը փառքով դրեցինք պատյան։ Խոսում են մարդիկ ծափով, ծիծաղով։ Խոր ակնածանքով լռում են մի պահ (ԱԲ)։ Կանգնած է հացին հպարտ տեսքով և մանր ու սուր ատամով։ Երգում էին սարյակները՝ մի թուփից մյուսը բռնկտելով։ Շներն սկսեցին իրենց սովորական հաչյունով հետևել մեզ (Մ)։ Բայց հին ու նոր քո վերքերով կանգնած ես դու կենդանի։ Ու գնում եմ ես ունայն արտունջով (ՀԹ)։ Ընկերով մահը հարսանիք է։ Հարևան աղաներով դաշտ են գնացել։ Բարեկամներով հավաքվել էին ճանապարհելու նրան (Սգր)։ Ամեն անգամ սիրով տրտում ասում եմ ես մնաք բարով։ Որպես փյունիկ կրակից կելնես, կելնես նոր գեղեցկությամբ ու փառքով վառ ու լուսավոր (ՎՏ)։

7. Ժամանակի, ժամանակաչափի պարագա. օրինակ՝ Ժամանակով կատուն ճոն էր (ՀԹ)։ Ժամերով կարող էր նայել։ Մինչև տարձավ մեկ ժամով։ Գիշերով որսի գնացին։ Երկու տարով բանակ է գընալու։ Շինանյութը շաբաթներով ուշացնում են։ Իր սենյակը մտնելով՝ տեսավ, որ իրերը վերադասավորված են (Սգր)։ Գյուղի սահմանն անցնելով՝ սկսեցինք առաջին լանջը բարձրանալ (Մ)։ Հայրենիքիդ խոր խոցերը համարում ես դարերով (ՀՀ)։ Դարերով տառապել է մեր ժողովուրդը (մամուլ)։

8. Նպատակի, հիմունքի, պատճառի պարագաները. օրինակ՝ Գործով գյուղ է գնացել։ Այդ օրը գործուղումով լենինականում էի (նպատակի)։ Դիրեկտորի հրամանով հեռացված Մ. Ս.-ն դատարանի վճռով վերականգնվեց։ Այդ ամբողջը բրիգադիրի սրտով ու ցանկությամբ կատարվեց։ Խառնվածքով բաղմասեր, բաղմակողմանի հետաքրքրությունների տեր էր Մահարին։ Սահակյանի առաջարկով հաստատվեց նախագահության կազմը (հիմունքի)։ Աշխատանքից հաճախ ուշանալով՝ զրկվեց պարգև հավելումից։ Բյուրոկրատ լինելով՝ նա չկարողացավ ճանաչել իր աշխատողներին (պատճառի) (Սգր) և այլն։

ներգոյական ոլով: Այս հոլովով արտահայտվում են.

1. Տեղի պարագան. օրինակ՝ Ինչան զարկեցին մեր քարվանն ազնիվ Հայոց լեռներում, Արևոտ լեռներում (ՀԹ): Պատանի հասակում թղթակցություններ է տպագրել ժամանակի պարբերականներում: Դեռ 1933-ին «Գրական թերթում» նա տպագրել է հոբելյանական հուշ Չարենցի մասին: Մահարին ծնվել է 1903 թվականին Վանում (Սգր): Հայրդ կովում, սիրտն ալեհույզ, արտում և՛ թուն, և՛ կրակ (ԱԹ): Լինեի չոբան սարերում հեռու (ՎՏ): Այս որքան ժամանակ է անցել, որքան շատ բան է փոխվել աշխարհում: Այս դպրոցում է սովորել նախագահ Կիմը: Ծառայողներից հետո գյուղի կենտրոնում հավաքվում էին ծերերը (ՄԳ):

2. Ժամանակի պարագան. օրինակ՝ Ներկա օրերում այլ ի՞նչ սև քնար, Սուր է հարկավոր կորիճի ձեռքին (Մն): Պատերազմում կորցրել էր իր միակ որդուն (Սգր): Վինաբանությունում ոչ ոքի չէր զիջում: Իր ողջ կյանքում նա գրքեր չգրեց, նրա տարերքը դասախոսությունն էր: Իր ապրած վաթսուն տարիներում հավատարիմ մնաց իր սկզբունքներին (Սգր):

3. Չևի պարագան: Այս հոլովով ձևի պարագա հազվադեպ է հանդիպում: Ահա մի երկու օրինակ՝ Մոռում կհաշվի (ԱԹ): Բորբ արևին իմ բորբ արտում ասում եմ ես մնաք բարով (ՎՏ): Նա խոսում է խոսում: Հիմնականում նա ճիշտ էր դատում: Իրականում նրա ասածը հակասական էր (Սգր):

ԿԱՊԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես ձևաբանությունից գիտենք, կապերը սպասարկու բառեր են, կապակցման միջոց և նյութական իմաստ ունեցող բառերից տարբերվում են նրանով, որ ունեն միայն քերականական նշանակություն, իմաստ: Կապերը, դրվելով նախադասության այս կամ այն անդամի վրա, ցույց են տալիս նրա պաշտոնը՝ կապելով լրացումը լրացյալի հետ:

Բառակապակցություններն ու նախադասության անդամները ներկայացնելիս մենք տեսանք, թե կապերն ինչ գործառություններ ունեն: Բայց դրանք ներկայացված են ցրված, այստեղ-այնտեղ: Այս վերնագրի տակ կենտրոնացնում, ի մի ենք բերում կապերի կիրառության մասին ասվածը:

Տարբերում ենք երկու հասկացություն՝ կապի լրացում և կապային լրացում: Կապի լրացումը կապի պահանջով արտահայտված խնդիրն է, իսկ կապային լրացումը կապ+խնդիր կառույցն է, կապարը: Այսուհետև խոսվելու է հենց այդ կապապարի՝ կապային լրացման կիրառությունների մասին:

Նախադասության մեջ կապային լրացումների (կապ+կապի խնդիր կառույցի) գործառությունը բխում է կապի քերականական իմաստից: Այսպես՝ անց, ժամանակ, հետո բառերն իրրև կապ ունեն ժամանակի իմաստ, նրանցով կազմված կապային լրացումը նույնպես այդ իմաստն ունի, ժամանակի պարագա է: Ներքո, տակ, դիմաց, մոտ բառերն իրրև կապ ունեն տեղի իմաստ, ուստի նրանցով կազմված կապային լրացումները նույնպես ունեն այդ իմաստը, տեղի պարագա են և այլն:

Կապերը լինում են մենիմաստ և բազմիմաստ: Մենիմաստ կապերը մեկ իմաստով են գործածվում, օրինակ՝ պատճառով, երեսից կապական բառերը պատճառի իմաստ ունեն, տակ, ներքո կապերը՝ տեղի, պայմանով կապական բառն ունի պայմանի իմաստ, իսկ նրպատակովը՝ նպատակի և այլն: Բազմիմաստ կապերը գործածվում են մեկից ավել իմաստներով, օրինակ՝ համար կապը գործածվում է թե՛ պատճառի, թե՛ նպատակի իմաստներով (զեկուցելու համար է եկել, ստելու համար պատժվեց), առաջ կապն օգտագործվում է թե՛ տեղի, թե՛ ժամանակի իմաստներով (տան առաջ և զեկուցումից առաջ), հանդերձ կապը թե՛ միասնության պարագայի իմաստով, թե՛ զիջման իմաստով: Օրինակ՝ («Ներս մտավ գրքերով հանդերձ» և «Խելացի լինելով հանդերձ վատ է սովորում»), վրա կապը՝ տեղի, ժամանակի և հանգման իմաստները, օրինակ՝ Գիրքը դնել սեղանի վրա, այդ խոսքի վրա ներս մտնել, հարձակվել հակառակորդի վրա և այլն:

Ըստ կապերի քերականական իմաստների էլ կապային լրացումները կատարում են պարագայի, խնդրի, որոշչի, սորոգելիի գործառություններ:

Պարագայական գործառություն: Կապային լրացումները նախադասության մեջ կատարում են՝ ա) տեղի պարագայի պաշտոն՝ վրա, դեպի, առաջ, առջև, մեջ, դիմաց, ներքո, միջև, ի վեր, ի վար, տակ, մոտ, մոտ, կողքը կապերով: Օրինակ՝ Խլաթի ճանապարհով վաճառականներ մարդիկ դեպի Հռոմների երկիրն էին գնում: Թռչուններն էին ուրախ ճախրում արևի շողերի մեջ: Արոտները ծավալվում էին մինչև դիմացի Արտոս լեռը վեհապանծ: Կուզենար այդ պատկերն իր մոտ ունենալ մշտապես (ԴԳ): Երեք շաբաթ անց Մինասը տիրացու Խաչատուրի մոտ այբուբենը հագիվ կարողացավ ճանաչել (ՌՊ): Հարեվանների առջև կխայտառակվենք (ՌՊ): Երկրորդ կարգի վագոններից մեկում, երկայն նստարաններից մեկի վրա երեսն ի վեր պառկած էր մի երիտասարդ ձմեռվա վերարկուի մեջ կոլորված (ՆԴ): Գլուխն հենել էր պատն ի վեր ցից դրած ճանապարհորդական բարձին, ձեռները ներս էր կոխել վերարկուի թևերի մեջ և նիրհում էր վագոնի հետ օ-

բորվելով (ՆԴ)։ Դուրսը, դահլիճի դռան մոտ, նրա դեմն ելավ նորից Բազենյանը։ Նրա աչքի առաջ կարծես թե քարացել էր այն խորհրդավոր շարժումը (ՆԴ) և այլն։

բ) Ժամանակի պարագայի պաշտոն՝ անց, ժամանակ, հետո, առաջ, ընթացքում, մինչև, միջև, սկսած, միջոցին, պահին, նախքան *կապերով։ Օրինակ՝* Երկու օր անց *զնփյուռ խաղաց ու մեղմ քամի փչեց դեպի ծով։ Այս խոսքերից հետո Համազասպ ու Սահակ եղբայրները ձեռքները վեր կարկառած՝ աղոթում էին։* Մինչ այդ՝ *Մերուժան վատանուն իշխանը ծնկաչոք դեպի ոստիկանը գնաց (ԴԳ)։* Վեց ամսվա մեջ *տիրացու Ստեփանի պատերի վրա ոչ մի ճիպոտ, ոչ մի տող, ոչ մի ֆալախկա չմնաց (ՌՊ)։* Մինչև այժմ *նա տուն չէր կառուցել։ Ամեն օր խանութը փակելուց հետո գրպանները լցրած տուն էր գնում (ՌՊ)։* Այս *անգամ նա տեսավ (ՆԴ)։* Ջրույցի ընթացքում *շատ բան պարզվեց։* Առավոտվանից սկսած *նա սպասում էր։* Նախքան *աշխատանքն սկսելը հագավ արտահագուստը (մամուլ)։*

գ) Հիմունքի պարագայի պաշտոն՝ արտահայտված քան, համաձայն, շնորհիվ *կապերով։ Օրինակ՝ Եղանակի* տեսության համաձայն *վաղն անձրև չի գալու։* Լոգարդի շնորհիվ *Երևխան փրկվեց խեղդվելուց։* Ըստ *դիրեկտորի* հայտարարության *Սարոյանը բարեխիղճ բանվոր է (մամուլ) և այլն։*

դ) Զիջման(հակառակ հիմունքի) պարագայի պաշտոն՝ արտահայտված՝ հակառակ, չնայած, չնայելով, ի հեռուստ, հանդերձ *կապերով։ Օրինակ՝ Արամը* խելացի լինելով հանդերձ *լավ չի սովորում։* Չնայած *անձրևային* եղանակին՝ *մենք որոշեցինք բարձրանալ սարը։* Հակառակ *ծնողների* ցանկության՝ *Սեդան որոշեց ամուսնանալ նրա հետ։* Ի հեռուստ հարևանի *նա նոր դաշնամուր գնեց (Սգր)։*

ե) Պատճառի պարագայի պաշտոն՝ արտահայտված պատճառով, համար, երեսից, հետևանքով *կապերով։ Օրինակ՝ Գուսանաց դասը ողբ ողբաց նրանց չարաչար* մահվան համար *(ԴԳ)։ Ամեն տեղից շուտով արտաքսվում էր* գողության *կամ մի ուրիշ* անառակ գործի համար *(ՌՊ)։* Քրոջ երեսից *եղբայրը տուժեց։* Վատ պարապելու, դասերից բացակայելու պատճառով *քննություն չկարողացավ հանձնել։ Այդ բոլորը կատարվեցին նրա թուլակամ* բնավորության հետևանքով *(մամուլ)։*

զ) Նպատակի պարագայի պաշտոն՝ արտահայտված համար, համար, ի, նպատակով *կապերով։ Օրինակ՝* Դրա՞ համար է *քեզ մեր աշխարհն ուղարկել (ԴԳ)։ Քաջությամբ ընդունենք մահը* հանուն Վասպուրական *աշխարհի մեր։ Օ՜ն, ուրեմն, նահատակ լինենք մեր քաղցրիկ* աշխարհի *ու ճշմարիտ* հավատի համար։ *Դա շատ բան է որոշում գալիք սերնդին ի տես (ԴԳ)։ Ի սեր* աստծո, *Մինաս ջան, զգուշ-*

եղիր (ՌՊ)։ Նրանք կռվում էին հանուն հայրենիքի *(մամուլ)։* Այդ նպատակով *նա թողեց քաղաքը և գյուղ գնաց (մամուլ)։*

է) Պայմանի պարագայի պաշտոն՝ արտահայտված դեպքում, պայմանով *կապային բառերով։ Օրինակ՝ Նա պիտի ճահիճների միջով անցներ,* հակառակ դեպքում *կնկատվեր ֆաշիստների կողմից։ Ասպիրանտուրա* ընդունվելու պայմանով *նա գյուղ գնաց աշխատանքի։*

ը) Ձևի և միասնության պարագաների պաշտոն՝ արտահայտված հանդերձ, իբրև, հետ, զուգընթաց, կերպով, համընթաց, պես, նման, որպես *բառերով։ Օրինակ՝* Եթե *տերը կամեցել է մեզ տեսնել* որպես անարատ զոհ՝ *ուրեմն թող ընդունելի լինի բարձրյալի կամքը (ԴԳ)։* Անզգալի կերպով *կանգ առավ (ՆԴ)։ Ներս մտավ* ընկերներով հանդերձ։ *Երկու մեքենաներ* իբար հետ *զուգընթաց առաջ էին սլանում։* Իբրև արծիվ *սլանում է դաշտ ու լեռ։ Աշիկն* ընկերների հետ *էր դաշտ գնացել,* ընկերների հետ *էլ վերադարձավ։*

թ) Չափի պարագայի պաշտոն՝ չափ, անգամ *կապերով։ Օրինակ՝* Աչքի չափ *գոռալ դիտի։* Մի թզի չափ *չի ուզում գիջել։* Տասն անգամ *ձևի, մեկ անգամ կորի։ Հարյուր* անգամ *առացի։ Որը* շատ անգամ *երկյուղի ու նախանձի արդյունք է լինում (ՆԴ) և այլն։*

Խնդրային գործառություն։ *Կապային լրացումները կատարում են՝*

ա) Ներգործման անուղղակի խնդրի պաշտոն՝ արտահայտված կողմից կապով։ Օրինակ՝ Մեռոնների կողմից *անուշադրության մատնված երիտասարդը մեղադրական աթոռին էր նստած (մամուլ)։ Թոշակի էին ուղարկում* գործընկերների կողմից *սիրված ու հարգված Մամյանին (մամուլ)։*

բ) Բաղդատման անուղղակի խնդրի պաշտոն՝ նման, պես, իբրև, որպես *կապերով։ Օրինակ՝ Նա մեր տանը իրեն հյուրի նման է պահում։* Վերի պես *մրմռում էր։ Արամը բաժակաճառ էր ասում* իբրև դեռասան, դեռասանի նման։

գ) Միջոցի անուղղակի խնդրի պաշտոն՝ արտահայտված միջոցով, ձեռքով *կապական բառերով։ Օրինակ՝* Եղբոր միջոցով *նամակ էի ուղարկում Նադիկին։ Այդ գրությունը* նամակատարի ձեռքով *է հանձնվել ձեզ։*

դ) Վերաբերության անուղղակի խնդրի պաշտոն՝ արտահայտված մասին, վերաբերյալ, առթիվ, նկատմամբ, հանդեպ, դեպի *կապերով։ Օրինակ՝ Անհրաժեշտ է* Երևխայի նկատմամբ *հոգատար լինել։ Զեկուցում կարդացին մեծ* հաղթանակի մասին։ *Դիմումներին* պատասխանելու վերաբերյալ *ընդունվեց նոր որոշում։ Ուրախացել էին տոնի առթիվ։* Դեպի ինչ *ունեցած սերս չի մարի («Գարուն»)։*

ե) Հանգման անուղղակի խնդրի պաշտոն՝ արտահայտված դեմ, ընդդեմ, վրա *կապերով։ Օրինակ՝* Թշնամու դեմ *պատերազմ էր գընում՝ սիգաճեմ նժույգ հեծած (ԴԳ)։* Վնասատուների դեմ *ժամանակին*

պայքարելը ապահովում է անվնաս բերք։ Երկու գնացքները դուրս եկան իրար դեմ հանդիման։ Երկու գնդացրորդ կռվի բռնվեցին ընդդեմ քսան ֆաշիստների (մամուլ)։

Անուղղակի խնդիրներ են նաև տեղ, տեղակ, փոխարեն, ի դեմս, հանձին, համեմատությամբ, համեմատ *կապերով կազմված կապային լրացումները, ինչպես՝ բաղդատման (համեմատ, համեմատությամբ), փոխարինման (տեղ, տեղյակ, փոխարեն) և այլն։*

Որոշչային գործառույթ։ *Կապային լրացումները լինում են նաև որոշիչներ՝ արտահայտված* մասին, վերաբերյալ, առթիվ, նրկատմամբ, նման, պես, դեպի *բառերով։ Օրինակ՝ Հետաքրքրությամբ լսվեց Չարենցի մասին զեկուցումը։ Նրանց առաջնորդում էր սերը դեպի հայրենիքը։ Վարդի նման աղջիկ է։ Հրեշտակի պես մայր է (Սգր)։ Գպրոց եկան տոների առթիվ երկօրյա հանգստից հետո (մամուլ)։*

Ստորոգելիական գործառույթ։ *Կապային լրացումները նախադասության մեջ լինում են նաև ստորոգելի՝ արտահայտված* պես, **չափ, նման,** վերաբերյալ, առթիվ *և այլ կապերով։ Օրինակ՝ Նա իր* հրոջ պես էր։ *Այս ծաղիկը* վարդի նման է։ *Զեկուցումը* Բաֆֆու մասին (վերաբերյալ) էր։ *Հավաքույթը* տոնի առթիվ էր։ *Գծի երկարությունը մի թզի չափ է և այլն։*

ՀԱՄԱՐՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲ.—Ակսել Բակունց
ԱրԱվ.—Արիդ Ավագյան
ԱԻ.—Ավետիք Իսահակյան
ԱլԱր.—Ալեքսանդր Արաքսմանյան
Ան. (Խոյ).—Ալեք Խոյունց
ԱՄ.—Ալեքսանդր Մատուրյան
Ա.—առած
ԱՃ.—Հրաչյա Աճառյան
ԱՇ.—Ալեքսանդր Շիրվանզադե
ԱՏ.—Արսեն Տերտերյան
ԱՔ.—Արտաշես Քալանթարյան
ԲՀ.—Բաղիշ Հովսեփյան
ԳԲ.—Գարեգին Բես
ԳՄ.—Գուրգեն Մահարի
ԳՍ.—Գեղամ Սարյան
ԴԳ (ԳԴ)—Դերենիկյան Գևորգ
ԴԴ.—Դերենիկ Դեմիրճյան
ԴՎ.—Դանիել Վարուժան
ԵՉ.—Եղիշե Չարենց
Թամ.—Հրանտ Թամրազյան
ՋԽ.—Զորայր Խարազյան
Հակ.—Հակոբ Հակոբյան
ՀՀայր.—Հայրապետ Հայրապետյան
ՀԹ.—Հովհաննես Թումանյան
ՀԿ.—Համլետ Կարճիկյան
ՀՀ.—Հովհաննես Հովհաննիսյան
ՀՄՍ.—Համայակ Սիրաս
ՀՇ.—Հովհաննես Շիրազ
ՀՊ.—Հակոբ Պարոնյան
ՀՍ.—Համո Սահյան
ՀրՄ.—Հրանտ Մաթևոսյան
ՀրՀ.—Հրաչյա Հովհաննիսյան
ՀՔ.—Հրաչյա Քոչար
ՂԱ.—Ղազարոս Աղայան
Մ.—Մուրացան
ՄԱ.—Մկրտիչ Արմեն
ՄարգՀ.—Մարզպետ Համբարձումյան
ՄԳ.—Մուշեղ Գալշոյան
ՄՆ.—Միքայել Նալբանդյան
ՆԴ.—Նար-Դոս
ՆՋ.—Նաիրի Զարյան
ՇԿ.—Շուշանիկ Կուրղինյան
ՊՀ.—Պիոն Հակոբյան
ՊՊ.—Պետրոս Պետրոսյան
ՊՍ.—Պարույր Սևակ
ՋԻվ.—Ջիվանի
ՌԴ.—Ռազմիկ Դավոյան
ՌՊ.—Ռաֆայել Պատկանյան
ՌՂ.—Ռաֆայել Ղազանչյան
ՌՊետ.—Ռոզա Պետրոսյան
ՍառԴ.—Սասուն Դրիգորյան
Սգր.—Սովետական գրականություն
ՍՋ.—Ստեփան Զորյան
ՍԽ.—Սերո Խանզադյան
ՍԿ.—Սիլվա Կապուտիկյան
ՍՆ.—Ստեփանոս Նազարյան
ՍՇ.—Սմբատ Շահազիզ
ՍտԱլ.—Ստեփան Ալաջաջյան
ՍտԿ.—Ստեփան Կուրտիկյան
ՎԹ.—Վահան Թոթովենց
ՎՓ.—Վրթանես Փափազյան
Բ.—Բաֆֆի
Փափ.—Վահրամ Փափազյան

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ., *Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965։*

Աբեղյան Մ., *Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906։*

Աբրահամյան Ս., *Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969, 1975։*

Աբրահամյան Ս., *Հայոց լեզու, շարահյուսություն, դասագիրք 7—8-րդ դասարանների համար, Երևան, 1984։*

Աբրահամյան Ս., Առաքելյան Վ., Քոսյան Վ., *Հայոց լեզու, բ մաս, Շարահյուսություն, Երևան, 1975։*

Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Բաղիկյան Խ., *Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Շարահյուսություն, Երևան, 1976։*

Աբայան Է., *Լեզվական աշխարհի ներքին կառավարումը և արտաքին վերաբերությունը, Երևան, 1981։*

Ադայան Է., *Լեզվաբանության ներածություն, Երևան, 1967։*

Անտոյան Հ., *Լիակատար քերականություն հայոց լեզվի, Ներածություն, Երևան, 1935։*

Առաքելյան Վ., *Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների խմաստային առանձները, Երևան, 1957։*

Առաքելյան Վ., *Հայերենի Շարահյուսություն, Ա, Բ, Երևան, 1958, 1964։*

Ասատրյան Մ., *Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, Երևան, 1983։*

Ասատրյան Մ., *Ժամանակակից հայոց լեզու, Շարահյուսություն, Ե., 1987։*

Բաղիկյան Խ., *Ժամանակակից հայերենի պարզ նախադասության շարադասությունը, Երևան, 1976։*

Բաղիկյան Խ., *Կոշտակը և նրա ուսուցումը, Երևան, 1982։*

Գաբեզիճյան Գր., *Ժամանակակից հայոց լեզու, Բարդ նախադասություն, Երևան, 1984։*

Գյուլբուդաղյան Ս., *Մխիթար նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1967։*

Գյուլբուդաղյան Ս., *Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1978։*

Իշխանյան Ռ., *Լեզվական վերլուծության սահմանը արդի հայերենի շարահյուսության մակարդակում (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1977, N 12)։*

Իշխանյան Ռ., *«Նախադասության անդամ» բառանման հարցի շուրջը («Պատմաբանասիրական հանդես», N 3, 1984)։*

Իշխանյան Ռ., *Արդի հայերենի շարահյուսություն, Ե., 1986։*

Հարությունյան Հ., *Անդեմ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1970։*

Հարությունյան Հ., *Կառավարումը ժամանակակից հայերենում, Երևան, 1983։*

Ղափանցյան Գր., *Ընդհանուր լեզվաբանություն, Երևան, 1939։*

Ճշմարիտյան Ժ., *Դերբայական դարձվածը արդի հայերենում, Երևան, 1961։*

Մարության Ա., *Դերբայական դարձված և նախադասության կողմնակի անդամներ, 1971։*

Մարության Ա., *Տրոհվող լրացումները արդի հայերենում, Երևան, 1975։*

Մաքսուդյան Է. Ս., *Բայանուն գոյականները ժամանակակից հայերենում, Երևան, 1984։*

Պառնասյան Ն., *Շարահյուսական հոմանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1970։*

Պառնասյան Ն., *Նախադասության քերականական կարգերը, Երևան, 1986։*

Պողոսյան Պ., *Հայոց լեզու (ոչ բնագիտների համար), Երևան, 1976։*

Ջահուկյան Գ., *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974։*

Սևակ Գ., *Հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 1979։*

Քոսյան Վ., *Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975։*

Քոսյան Վ., *Ժամանակակից հայերենի նախադասության վերլուծության հարցեր, Երևան, 1976։*

Атаян Э., Понятие элементарной синтаксической структуры, Е., 1964.

Грамматика современного русского литературного языка, М., 1970.

Попов Р. и др., Современный русский язык, М., 1978.

Современный русский язык. Синтаксис. под. ред. Е. М. Галкина-Федорук, М., 1957.

ԴՅՈՒԼԲՈՒԴԱՂՅԱՆ ՍԻՐԱՔ ՎԱՂԱՐՇԱԿԻ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԾՈՒԹՅՈՒՆ

(պարզ նախադասություն)

Հրատարակված է Մեսրոպյան համալսարանի Հայոց լեզվի ամբիոնը

Հրատարակչության խմբագիր՝ Է. Լ. Աղայան
Գեղարվեստական խմբագիր՝ Ն. Ա. Թովմասյան
Տեխն. խմբագիր՝ Հ. Ս. Ավագյան
Վերատեսող սրբագրիչ՝ Ս. Վ. Գազարյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3
• Հարահյուսական կարգավորներ 5
• Լեզու և խոսք 8
• Նախադասություն 9
• Հարահյուսական կապակցության միջոցները 14
• Կապակցության եղանակները 16
• Բառակապակցություններ 29
• Նախադասություն. Նախադասությունը որպես լեզվական միավոր 55
• Նախադասության տեսակներն ըստ հնչերանգի 64
• Նախադասության կառուցվածքային տեսակները 82
• Նախադասության անդամ 90
• Նախադասության գլխավոր անդամները. ենթակա 95
• Ստորոգյալ 101
• Ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը 111
• Միակազմ նախադասություններ 121
• Նախադասության երկրորդական անդամներ 139
Հոլովական անդամի լրացումներ 141
• Որոշիչ 141
• Հատկացուցիչ 155
• Բացահայտիչ 159
• Հայական անդամի լրացումներ 172
Խնդիրներ 174
• Բայի սեռի խնդիրներ 175
• Ժամանակի խնդիրներ 180
• Պարագաներ 185
• Գերբայական դարձված 198
• Անդամների լրացումներ 203
• Սահմանի լրացումներ 206
• Նախադասության հավելյալ (բացատրիչ) անդամներ 207
• Տրտմիչ լրացումներ 220
• Ձևակ 236
• Նոյանանի անորոշ և որոշյալ առումները 241
• Հարց ուսումնասիրելիք 244
Գ. Խոսքի մասերի հարակից միավորներ 249
Խոսքի մասեր 262
Հոլովները 272
Բայերի դասակարգումը 282
Համ[illegible] 287
Գրականություն 288

ԽԲ 754
Հանձնված է արտադրության 24.03.1987 թ.
Ստորագրված է տպագրության 27.01.1988 թ.
Չափս. 60×90 1/16։ Թուղթ № 1։
Հրատարակչական 16.8 մամուլ։ Տպագրական 18,25 մամուլ։
Տպաքանակ 3000։ Պատվեր 2139։ Գինը՝ 1 ռ. 30 կ.։
Երևանի Համալսարանի հրատարակչություն, Երևան, Մռավյան փ. № 1։
Издательство Ереванского университета, ул. Мравяна, № 1.

Երևանի Համալսարանի տպարան, Երևան, Աբովյան փ. № 52։
Типография Ереванского госуниверситета, Ереван, ул. Абовяна, № 52.